ՄԻՔԱՅԵԼ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԻՔԱՅԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Медиацентр им. И. Гаспринского
Симферополь
2022

УДК 821.19
ББК 84(2Рос=Арм)6
П 31

Издано при поддержке Государственного комитета по делам межнациональных отношений Республики Крым Государственным автономным учреждением Республики Крым «Медиацентр им. Исмаила Гаспринского» за счёт средств федерального бюджета и бюджета Республики Крым
Одобрено Консультативным советом по изданию социально-значимой литературы на родных языках при Государственном автономном учреждении Республики Крым «Медиацентр им. Исмаила Гаспринского»

Не подлежит коммерческому распространению

П 31 **Петросян М. А.**
Сборник сочинений. *Стихи, поэмы, рассказы, басни, афоризмы.* — Симферополь: ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского», 2022. — 408 с.
ISBN 978-5-6048170-6-3

В сборник вошли ранее опубликованные в книгах «Зов Арцаха», «Тоска рождается в дали», «За мостом», «Легенда о любви», «Родники рождаются с гор», в альманахе Союза крымских армянских писателей, а также новые стихи, четверостишия, басни, афоризмы, сказки, рассказы, поэмы М. Петросяна.

Сборник состоит из разных частей, в каждой из них произведения объединены на жанровой основе. Самая большая часть – это раздел «Стихотворения». За ним следуют «Четверостишия». Интересный раздел под названием «Карабахские мотивы», в котором собраны стихи и четверостишия на карабахском диалекте армянского языка. В разделе «Басни» помещены соответствующие произведения М. Петросяна. За разделом «Афоризмы» следуют «Поэмы». В последних трёх разделах помещены «Легенды», «Сказки» и «Проза» с соответствующими произведениями.

УДК 821.19
ББК 84(2Рос=Арм)6

© Петросян М. А., 2022
© ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского», 2022

ISBN 978-5-6048170-6-3

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Գրքիս լուսե էջերում կյանքիս ուղին է անցած,
Արցախ երկրի դարավոր պատմությունից՝ մի հատված:
Անտառներում զովասուն եղնիկի հետ եմ վազում
Ու սառնորակ աղբյուրի ջրով հոգիս զովացնում:
Գագաթներն եմ բարձրանում ճերմակահեր լեռների,
Ունկնդրում եմ ձորերում թավալ տվող գետերին:
Խաչքարերը մամռապատ գիրկս եմ առնում կարոտով,
Մոմ եմ վառում ես վանքում՝ տարված խնկի բուրմունքով:
Գրքիս լուսե էջերում ամեն ինչն է հայկական՝
Սուրբ Մաշտոցը հայատառ ու վանքերը հնամյա,
Ծիրանենին վարդագույն, նուռը՝ կարմիր զգեստով,
Հայկյա ոգին նախիրյան՝ ազատության տենչանքով:

Միքայել Պետրոսյան

ՆԱԽԱԲԱՆ

Ղրիմահայ գրողների միության և Ղրիմահայոց ընկերության ավագանու անդամ, վաստակաշատ գրող Միքայել Արամի Պետրոսյանը ղրիմյան ընթերցողին արդեն վաղուց է հայտնի իր չափածո և արձակ ստեղծագործություններով:

Մ. Պետրոսյանը ծնվել է 1942 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում: Վաղ մանկությունից վերապրել է հետպատերազմյան գյուղի բոլոր դժվարությունները՝ դեռ դպրոցական տարիքից մոր հետ աշխատելով կոլտնտեսային դաշտերում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, նա ուսումը շարունակեց Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումում, այնուհետև հեռակա կարգով ավարտեց Մինսկի թեթև արդյունաբերության ինստիտուտը: Երկու տասնամյակից ավելի աշխատեց Ստեփանակերտի «Ղարմետաքս» կոմբինատում՝ որպես արտադրամասի պետ:

Ամուսնացավ իր առաջին և միակ սիրո՝ Աքսենյայի հետ՝ նրա հետ կիսելով համատեղ կյանքի բերկրանքն ու երջանկությունը, ինչպես նաև՝ ճակատագրի բոլոր հարվածները: Ազնիվ և անձնվեր

ГАЗ ГК "МЕДЖЛИСИР им. И. Гасринского"

աշխատանքով տուն ու տեղ դրեց, չորս զավակ մեծացրեց: Աշխատանք, ընտանիք, երեխաների դաստիարակություն, հասարակական գործունեություն, ստեղծագործական պրպտումներ... Թվում էր՝ կյանքը կարգավորվել է, ընթանում է իր նորմալ հունով, սակայն ութսունականների վերջին և իննսունականների սկզբին տեղի ունեցան իրադարձություններ, որոնք արմատապես փոխեցին գրողի ճակատագիրը: Խորհրդային Միության փլուզում, Ղարաբաղյան շարժում, Արցախյան ազատագրական պատերազմ, որը մահ ու ավերածություն սփռեց չորսբոլորը: Ստիպված եղավ ողջ ընտանիքով լքել հայրենիքը: Հայտնվեց Ղրիմում ու ամեն ինչ նորից սկսեց, քանի որ կորցրել էր երեք տասնյակ տարիների ընթացքում վաստակած ամեն ինչ՝ տուն, ունեցվածք, աշխատանք... Ղրիմը դարձավ նրա երկրորդ հայրենիքը, սկսվեց մի նոր կյանք...

Միքայել Պետրոսյանը գրել սկսել է դեռ դպրոցական նստարանից: «Ես ամեն օր մի քանի բանաստեղծություն էի գրում, սակայն հաջորդ առավոտ, դրանք կարդալուց հետո, ոչնչացնում և սկսում էի նորերը գրել...», – կարդում ենք նրա «Աղբյուրները լեռներից են ծնվում» ինքնակենսագրական վիպակում: Ահա այսպես նա սկսեց իր երկար ու դժվարին վերելքը դեպի Պառնաս՝ տպագրելով բանաստեղծությունները տեղական լրագրերում և ստանալով դրական արձագանքներ ժամանակի հայտնի հայ բանաստեղծներից:

Ղրիմում սկսվեց ստեղծագործության նոր, ավելի բեղմնավոր շրջան: Վերջին քսան տարիների ընթացքում Մ. Պետրոսյանը հրատարակեց մի քանի ժողովածուներ՝ «Արցախի կանչը», «Կարոտը հեռվում է ծնվում», «Կամրջից այն կողմ», «Լեգենդ սիրո մասին», «Աղբյուրները լեռներից են ծնվում», որոնց մեջ զետեղված են նրա չափածո և արձակ ստեղծագործությունները: Բացի այդ, Մ. Պետրոսյանի առանձին գործեր հրապարակվել են Ղրիմահայ գրողների միության «Հայրենիքը սրտում» ալմանախում:

Մ. Պետրոսյանի գրական ստեղծագործությունը բազմաժանր է. բազմաթիվ և բազմաթեմա բանաստեղծություններ՝ նվիրված հայրենի եզերքին՝ Արցախ երկրին, որն ընդմիշտ գերել է բանաստեղծի սիրտն իր ձյունածածկ գագաթներով ու անդնդախոր կիրճերով, փրփրաբաշ գետերով ու զմրուխտ անտառներով, ինչպես նաև՝ նույնքան հարազատ ու գեղեցիկ մայր հայրենիքին՝ Հայաստանին: Հայրենասիրությամբ լի են հարազատ ժողովրդի անցյալի փառավոր ու ողբերգական էջերին, նրա երջանիկ ապագային նվիրված բանաստեղծությունները:

ՊԱՅՔԱՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԻՔԱՅԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Կյանքի բովով անցած, հազար ու մի ցավ և վիշտ տեսած բանաստեղծը, հոգով ու մարմնով կոփված, իմաստավորված, տարիների բարձունքից մի փոքր այլ հայացքով է նայում իրերին ու երևույթներին, այլ կերպ ընկալում ժամանակն ու տարածությունը, մարդու դերն ու նշանակությունը կյանքում՝ բարին հստակ զանազանելով չարից և անվերապահորեն նախապատվությունը տալով առաջինին: Ահա Պետրոսյան-բանաստեղծի կյանքի թերևս ամենակարևոր սկզբունքը:

Կյանքի փորձություններն ու ճակատագրի հարվածները, սակայն, չեն դաժանացրել ու կոշտացրել Միքայել Պետրոսյանի հոգին, չեն դարձրել նրան հոռետես: Նա մնացել է նույն բարի, հոգատար, սիրող ամուսինն ու հայրը, հայրենիքի և հարազատ ժողովրդի ցավով տառապող հայրենասերը, կարիքի և դժբախտության մեջ գտնվողին օգնության ձեռք մեկնող մարդը: Այդ մասին են վկայում նրա, հիրավի, մարդասիրական, հայրենասիրական, սիրով ու քնքշությամբ լի ստեղծագործությունները:

Այնպիսի բանաստեղծ, ինչպիսին Միքայել Պետրոսյանն է, չէր կարող իր ստեղծագործության մեջ ուշադրություն չդարձնել մանկական թեմային: Նրա ժողովածուներում փոքրիկ ընթերցողների համար նույնպես կան բանաստեղծություններ, որոնք, բացի գեղագիտական հաճույք պատճառելուց, նաև դաստիարակչական նշանակություն ունեն, դրանք հետաքրքիր և հաճելի է ընթերցել ոչ միայն երեխաներին, այլև մեծահասակներին:

Ծնունդով արցախցի բանաստեղծը երբեմն ստեղծագործում է հարազատ՝ ղարաբաղյան բարբառով, ինչը նրա երգիծական բանաստեղծություններին և քառյակներին տալիս է անկրկնելի փայլ և հնչեղություն, ազգային գունեղ կոլորիտ: Բացի այդ, Մ. Պետրոսյանը Ղրիմահայ գրողների միության այն եզակի սնդամներից է, ով գրում է բացառապես մայրենի լեզվով՝ հայերենով:

Հեռվում թողած հայրենիքի կարոտը կարմիր թելի պես անցնում է Մ. Պետրոսյանի ողջ ստեղծագործության միջով, սակայն նա չի դադարում հիանալ նաև դրախտային Ղրիմով, որն արդեն վաղուց դարձել է բանաստեղծի երկրորդ հայրենիքն ու նրա բանաստեղծական ոգեշնչման աղբյուրներից մեկը: Թերակղզու գեղեցկությունը նա հաճախ համեմատում է Ղարաբաղի բնության հետ, անկեղծ ուրախանում, որ, չնայած նրա բազմազգ լինելուն, տարբեր ժողովուրդներ խաղաղ գոյակցում են կողք-կողքի, միասին կառուցում և միասին էլ պաշտպանում իրենց ընդհանուր տունը՝ Ղրիմը:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Մ. Պետրոսյանի գրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն քառյակներն ու աֆորիզմները՝ հասցված փիլիսոփայության մակարդակի, էպիքական և լիրիկական պոեմները, լեգենդներն ու չափածո հեքիաթները:

Պոեզիայի հմուտ վարպետն ստեղծում է նաև արձակ գործեր, որոնք իրենց գեղարվեստական արժանիքներով չեն զիջում չափածո ստեղծագործություններին: Անչափ հետաքրքիր է ընթերցել նրա երգիծական մանրապատումները և, իհարկե, «Աղբյուրները լեռներից են ծնվում» ինքնակենսագրական վիպակը:

2022 թվականի հունվարի 7-ին Մ. Պետրոսյանը նշեց իր 80-ամյա հոբելյանը: Այս, ինչպես նաև նրա կեսդարյա ստեղծագործական ուղու կապակցությամբ, Ղրիմի Հանրապետության տարածաշրջանային հայկական ազգամշակութային ինքնավարության ղեկավարությունը, Ղրիմահայոց ընկերության ավագանին և Ղրիմահայ գրողների միությունը որոշեցին ամփոփել բանաստեղծի ողջ գրական ժառանգությունը մեկ գրքում՝ «Երկերի ժողովածու»-ում, որում ներառված են վերոնշյալ բոլոր գրքերը, ինչպես նաև՝ Մ. Պետրոսյանի, դեռևս չհրապարակված նոր ստեղծագործությունները: Դա, ինչ խոսք, արժանի նվեր է հոբելյարին, ով, չնայած իր պատկառելի տարիքին, երիտասարդական ավյունով շարունակում է ստեղծագործել, և մենք համոզված ենք, որ դեռ հնարավորություն կունենանք ընթերցելու անվանի գրողի նոր գրքերը:

Շնորհավորելով պանծալի հոբելյանի առթիվ՝ Միքայել Պետրոսյանին ցանկանանք քաջ առողջություն և ստեղծագործական նորանոր բարձունքներ, խաղաղ և անամպ երկինք գլխավերևում:

Ռուշան Փիլոսյան
Ղրիմահայ գրողների միության նախագահ,
«Նաշ Կռիմ» հանդեսի գլխավոր խմբագիր,
ՂՀ վաստակավոր լրագրող

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Մեր անծայրածիր սար ու դաշտերից
Մեզ մնացել է մի թիզ քարքարոտ,
Բայց հաց ենք քամել այդ լերկ քարերից,
Ծենքեր ենք հիմնել մկանուտ ձեռքով:

Մեր խեղճ գյուղերը քաղաք ենք դարձրել,
Կամուրջ ենք գցել անդունդի վրա,
Նոր ջրանցքների ակունքն ենք փորել,
Ու վարդ է բացվել քարերի վրա:

Մետաքս ենք քաշել մենք անգամ քարից,
Մռայլ ամպերից անձրև ենք քամել,
Հաճախ ենք զարկվել քար ու փշերին,
Եվ անհուն վշտից մեր սիրտն է ցավել:

Հարևաններից բարին չենք տեսել,
Մեր սերն ենք տվել, բայց սուր ստացել,
Ուրիշի հողից բո՛ւռ էլ չենք վերցրել.
Նրանք են ուժով մեզանից խլել:

Բայց երբ միացել, բռունցք ենք դարձել,
Մեր միտքն ու ուժն ենք իրար գումարել,
Միշտ էլ մենք կռվում հաղթող ենք եղել,
Մեզ թույլ կարծողին ծնկի ենք բերել:

Մենք հայ ենք ծնվել այս հողի վրա,
Մեր բառը՝ Մաշտոց խաչքարի վրա,
Կգա այն օրը՝ Արցախը վկա,
Մեր հին քարտեզը նոր աշխարհ կգա:

ГАУ РК "Медиатека им. Н.Расулзаде"

ՆՎԻՐՈՒՄ

Նռան պես սեղմեմ օրերը կյանքիս,
Հոգուս մեջ լցնեմ այն պռկեպռունկ,
Թևեր տամ նրան, թող հայրենիքիս
Լեռներում ճախրի՝ ինչպես մի կռունկ:

Կաթիլ առ կաթիլ թափվեմ երկնքից
Կանաչի կարոտ ժայռերի վրա,
Քարը թացանա սիրո երկունքից,
Ծիլ ու կանաչով հողը մայրանա:

Դու միշտ ինձ հետ ես՝ իմ երակներում,
Որտեղ էլ լինեմ՝ մոտիկ, թե հեռու,
Քո կախարդական ուժն է ինձ ձգում,
Իր չքնաղ տեսքով հոգիս է գերում:

ՀՈԳԻՆ

Եթե հոգիդ չի երազում,
Ամպերից վեր չի սավառնում՝
Էլ ի՞նչ հոգի.
Ի՞նչն է նրան վերև ձգում:

Թե չի հուզվում գարնան կանչից,
Քարի, ջրի ջերմ զրույցից՝
Էլ ի՞նչ հոգի.
Ի՞նչն է զատում նրան քարից:

Եթե մեկին նա չի սիրում
Ու չի տնքում հաճախ ցավից՝
Էլ ի՞նչ հոգի.
Էլ ինչո՞ւ է հոգի կոչվում:

Հայրենիքի ծով հոգսերից
Եթե բաժին չունի հոգիդ՝
Էլ ի՞նչ հոգի.
Անտաշ քար է ճամփի եզրին:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

ԱՐԱՔՍԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Արաքսից այն կողմ երբեք չեմ եղել,
Չեմ տեսել Վանը, Մուշն ու Էրզրումը,
Վշտից ծերացած Մասիսն եմ տեսել,
Որին տանջում է բիրտ գերությունը:

Սահմանից այն կողմ ոտքս չեմ դրել.
Կարոտ է աչքս մեր Սասնա հողին,
Բայց նոր ջարդեր եմ ես, ավա՜ղ, տեսել
Մեզ թշնամացած տարբեր ազգերից:

Բայց կգա ժամը և հայոց դատի,
Անփոփոխ ոչինչ աշխարհում չկա,
Ազատ կլինեն Սասուն ու Մասիս,
Ազատ կլինի հողն իմ պապական:

ՆՈՐ ՏԱՐԻ

Նո՛ր տարի է, Նո՛ր տարի՝
Հեղեղ լույսի և հույսի,
Ում հոգու մեջ երազ կա,
Թող այս տարի կատարվի:

Նո՛ր տարի է, Նո՛ր տարի.
Թող մեկը տուն հարս տանի,
Մեկն էլ ծննդատնից
Մի նոր բալիկ տուն բերի:

Նո՛ր տարի է, Նո՛ր տարի,
Բացիր սեղանը քո լի,
Թող էլ արցունք չլինի,
Անճարին դուռ թող բացվի:

Խաղաղ թող լինի տարին,
Կանաչ ծլի չոր քարին,
Էլ ոչ մի մայր իր որդուն
Ձենքը ձեռքին չտեսնի:

ГАУ РК "Медиацентр им. И. Касиринского"

ԿԱՐՈՏԱԽՏ

Ցերեկն այստեղ եմ՝ հեռու Ղրիմում,
Գիշերը՝ երազ իմ Ղարաբաղում,
Հենց այք եմ գցում բարձր սարերին՝
Մռավն ու Քիրսն են դիմացս կանգնում:

Եթե ձորակում աղբյուր եմ տեսնում՝
Սառնորակ, մաքուր մեր ջուրն եմ հիշում,
Մտքով մոլորված՝ շեղվում անտառում,
Հայրենիք տանող ճամփան եմ փնտրում:

Երբ մոմ եմ վառում սրբապատկերին՝
Քո անունն է միշտ կարոտ շուրթերիս,
Դու իմ օրրան ես, քաղցր հայրենիք,
Դու բալասանն ես իմ հիվանդ սրտի:

Կորած ընկերներ ու հարազատներ,
Ձեզ ինչպե՞ս նորից մեկ տեղ հավաքեմ,
Որ վերականգնենք շեները ավեր,
Մեր պապի շինած տանը քեֆ անենք:

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ

Ծնվում եմ ես ամեն անգամ,
Երբ աշխարհում հայ է ծնվում,
Իմ շուրթերին ճիչը մանկան
Հայերեն է միշտ ստացվում:

Մանկանում եմ ամեն անգամ,
Երբ մաշտոցյան բառն եմ կարդում,
Երբ հայերեն այբուբենը
Թոռնիկներն են իմ թոթովում:

Պար եմ բռնում ուրախության,
Երբ հարսանյաց քեֆն է թնդում,
Ու հարբում եմ գինով նռան,
Երբ պսակն է խաչով օծվում:

ГАУ РК "Национальный Институт Аспринского"

Մահանում եմ ամեն անգամ,
Երբ մի ջահել հայ է զոհվում,
Աչքը կարոտ հող ու ջրին՝
Իր աչքերն է հավետ փակում:

Թող ես օրը հազար անգամ
Լույս աշխարհ գամ մանկան ճիչով,
Ծեր պապի հետ լոկ մի անգամ
Ծածկվեմ հավերժ մեր սուրբ հողով:

ԻՄ ՂԱՐԱԲԱՂԸ

Իմ Ղարաբաղը մի այլ աշխարհ է,
Այն Աստծո տված ուրիշ նշխար է.
Ծաղկով, բերքով լի դրախտի անկյուն,
Մանկան շուրթերին մեղր ու շաքար է:

Իմ ղարաբաղցիք ուրիշ մարդիկ են,
Բարեհոգի և քաջ մարտիկներ են,
Մեր հող ու ջրի աչալուրջ պաշտպան,
Հավետ ծիսացող հայոց երդիկ են:

Իմ ղարաբաղցի աղջիկը նուշ է,
Մեռոնով լցված կենդանի կուժ է,
Հուժկու տղերքի թիկունքում կանգնած՝
Ընտանիք կապող հզոր կամուրջ է:

Իմ Ղարաբաղը կա ու կլինի,
Հայոց օրրանն էլ կա ու կլինի,
Թե դաշտավայրն էլ ջրով հեղեղվի՝
Մեր լեռնաշխարհը կա ու կլինի:

ԵՐԱՁԱՆՔ

Նորելուկ գարնան ջերմացնող շնչից
Անգամ կապուտակ երկինքն է հուզվում,
Եվ այդ հուզմունքը կաթիլներ դարձած,
Թափվում է կաթ-կաթ, ներծծվում հողում:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Расприского"

Ինչպես մանկան ճիչ՝ լույս աշխարհ եկած,
Որոտն է պայթում մռայլ ամպերում,
Այդ հզոր կանչից ծնվում է ահա
Ապրելու տենչը նույնիսկ չոր քարում:

Ա՛խ, երազո՛ւմ եմ՝ այս գարնան նման
Ես էլ գամ, անցնեմ, ապրեմ մի կարճ կյանք,
Միայն թե մի շյուղ թողնեմ մայր հողում՝
Այդ դալար շյուղով ապրեմ դարեդար:

ԾՆՆԴԱՎԱՅՐ

Այնտեղ՝ Արցախի բարձր լեռներում
Մնաց մի անմեղ ու ժիր պատանի,
Նա ծով երազներ ուներ իր հոգում
Եվ անմեղ մի սեր՝ մանուկ օրերի:

Մի զուլալ աղբյուր՝ խաշամով նախշած,
Մի ծաղկուն պարտեզ դրախտի նման,
Ապուպապերի կածաններ մաշված,
Որոնք տանում են լանջերը լեռան:

Մանկությանս հետ մաքուր իմ սերը
Մնաց աղբյուրի ակունքին մերված,
Ծառի փչակում պահված խնձորը
Հեռու մի այգում այդպես էլ մնաց:

Ինձ նման անմեղ իմ ընկերները՝
Ոմանք կես ճամփին, ոմանք ճամփից դուրս,
Թռան, հեռացան, ինչպես հավքերը՝
Տանելով անհոգ օրերս մանուկ:

Իմ մայր լեռներից ու մանկությունից
Մնաց լոկ սերս անցած օրերի,
Որ չտառապի սիրտս կարոտից,
Որ լույսը հույսի երբեք չմարի:

ГАУ РК "Медиатека им. М. Гаспринского"

ՎԵՐՀՈՒԾ

Մեր հին մառանում անուշ մրգերը
Բույր են տարածում, խելքամաղ անում,
Մեր թոնրում թխած հացի բուրմունքը
Հեռվից քաղցածին իր մոտ է կանչում:

Մեր աղբյուրները՝ զուլալ ու զանգակ,
Ծարավ անցորդին նոր շունչ են տալիս,
Մեր սեգ սարերը և ձորերն անտակ
Կապույտ Թարթառին ճամփա են տալիս:

Մեր սրբավայրը՝ Ինը մաս վանքը,
Հողում կիսաթաղ մամռոտ խաչքարը,
Աղբյուրի քարին մոռացված թասը.
Այդպես եմ հիշում իմ Մոխրաթաղը:

Խաղողի վազը՝ նորուկ հարսի պես,
Ողկույզ առ ողկույզ իր կուրծքն էր բացել,
Այդ ձգող ուժից ինչպե՞ս չհարբես,
Երբ քո արյան մեջ լուծվել է, մերվել:

ՄԱՏԱՂ ԼԻՆԵՄ

Մեր հին փայտե տաշտին մատաղ,
Մորս թխած հացին մատաղ,
Մեր աղբյուրի զուլալ ջրին,
Իմ առաջին սիրուն մատաղ:

Ինը մասի խաչին մատաղ,
Մռավ սարին, Քիրսին մատաղ,
Ղարաբաղցի ինչքան հայ կա՝
Էն ծուռ ու մուռ խոսքին մատաղ:

Մեր տան շեմի քարին մատաղ,
Անտեր թողած բաղին մատաղ,
Ե՞րբ կլինի, որ ձեզ տեսնեմ.
Ես էդ օրվա ծեգին մատաղ:

ГАУ РК "Медиацентр им. Р. Гаспринского"

Մեր մաշտոցյան տառին մատաղ,
Երգ ու պարին, խաղին մատաղ,
Ուր էլ լինեք՝ հա՛յ մնացեք,
Ես ձեր կարոտ հոգուն մատաղ:

ԹԱՐԹԱՌԻ ԱՓԻՆ

Թարթառի ափին՝ մի հին ջրաղաց.
Այնտեղ իմ պապը ջրաղացպան էր,
Մի քարե կամուրջ՝ ափերը կապած,
Նա անսանձ գետի լուռ պահապանն էր:

Մռավի շուրթից հոսող աղբյուրներ,
Որ քարափներին համբույր են տալիս,
Առվակին ծնկած ծարավ եղնիկներ՝
Խրտնում են անգամ փոքրիկ խշշոցից:

Ծաղկած ծառերը՝ հակված գետափին,
Ծաղկաթերթերն են տալիս ջրերին,
Ձուկը թռչկոտում, խոսել է ուզում,
Սակայն լոկ գետի աղմուկն է հնչում:

Այդ հին կամրջով՝ ձեռք-ձեռքի տված,
Ես ու դու անցանք մանկության ափը,
Հեռվում, ա՛խ, հեռվում՝ լեռներում մնաց
Իմ հայրենիքի երազկոտ հավքը:

ՈՉ ՄԻ ՍԱՀՄԱՆ

Ոչ մի սահման չի բաժանի
Արարատին իր մայր հողից,
Ու ոչ մի գետ չի բաժանի
Վանա լիճը մեր Սևանից:

Սերը սահման չի ճանաչում՝
Հազար պատնեշ թեկուզ լինի,
Իսկ ով սահման է կառուցում,
Աստված նրան կպատժի:

ГАУ РК "Национальная б-ка им. М.Е. Аспринского"

Ժամանակն է միշտ բաժանում
Մորը՝ սիրած իր զավակից,
Այդպես եղավ մեր Արցախում՝
Բաժանեցին հայրենիքից:

Ոչ մի սահման չի բաժանի
Միմյանց ձգող ափերն երկու,
Ամեն մի վերք շուտ կբուժվի,
Եթե քանդվեն կապերն ամուր:

ԱՄՊԵՐԸ

Դաժան հողմերից ամպերը չվում
Ու հեռանում են հայոց լեռներից,
Օտար երկնքում կաթիլ են դառնում,
Արցունքի նման թափվում են վերից:

Երբ միասին են ամպերը տխուր,
Օտար ափերում նոր ուժ են առնում,
Վերադառնում են նրանք հայրենիք,
Ու վարարում է գետակը աշխույժ:

Ամպե՛ր, հե՛յ ամպեր հայոց լեռների,
Լավ է ցող դառնալ ձեր հայրենիքում,
Քան թե սնունդ տալ օտար հողերին,
Ուր ոչ մի մշակ ձեզ չի սպասում:

Հայոց լեռներից ամպերը չվում
Ու սփռվում են ամբողջ աշխարհով,
Հայրենի դաշտն ու գետն են ցամաքում՝
Աչքը երկնքին՝ ամպի կարոտով:

ՊԱՏԳԱՄ

Երեք որդի ունեմ հիմա՝
Երեք սարեր՝ իրար հենված,
Երեք ծառեր՝ ծաղկավորված,
Ծիլ են տալիս ճյուղավորված:

ГАУ РК "Медиацентр им. М. Распринского"

Երեք օջախ կա ծխացող,
Հայի օջախ՝ Արցախի բույն,
Երեք զույգ ձեռք՝ դուռս բացող,
Տաճար պահող երեք պինդ այուն:

Չմոռանա՛ք, ի՛մ որդիներ,
Որ հայրենիք ունեք հեռվում.
Իմ պատգամն ու խնդրանքը ձեզ՝
Արմատ գցեք հայրենիքում:

ԳԱՐՈՒՆ

Մի տաք քամի եկավ հեռվից՝
Գարնան լուրը թևերին,
Հողը ժպտաց ու ճաք տվեց,
Ճամփա տվեց ծիլերին:

Շուրթը ճաքեց աղբյուրների,
Առուները հոսեցին,
Արցունքոտվեց այտը սարի
Արևի ջերմ համբույրից:

Քամին հասավ անտառներին՝
Դարձան ծառերն օրորոց,
Մերկությունից իր ամոթված՝
Հոնին հագավ դեղին շոր:

Մի խենթ պոետ՝ ոգեշնչված,
Թղթին հանձնեց գարունը,
Որ կոկոնվի վարդի նման
Գարնանային մեր սերը:

ԾԱՂԻԿԸ

Մի ծաղիկ տեսա փողոցում ընկած՝
Փոշին թերթերին, լքված բոլորից,
Մարդիկ անցնում են անհոգ ու ցրված,
Իսկ խեղճը արդեն թոշնում էր վշտից:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Գետնից վերցրեցի, թափ տվի փոշին,
Դրեցի ջրով ծաղկամանի մեջ,
Ժպիտը բացվեց նրա թերթերին,
Հոսեց ավիշը երակների մեջ:

Մարդի՛կ, մի՛ եղեք այդպես անտարբեր,
Ձեր ոտքերի տակ գուցե ծաղիկ կա,
Իսկ գիտե՞ք, արդյոք՝ կոկոնում ամեն
Հույսի, երազի որքա՛ն տենչանք կա:

ԵՐԿՈՒ ՀՍԿԱ

Այվազովսկի եղբայրների
հուշարձանի մոտ

Կանգնած են լուռ երկու հսկա
Մեր քաղաքի կենտրոնում,
Հայկի ազգից երկու եղբայր՝
Վաղուց հայտնի աշխարհում:

Մեկը ծովն է գերել վրձնով
Կտավներում հրաշալի,
Մյուսը լույս է սփռել խաչով՝
Տվել բազում գիտելիք:

Հեռու հողից հայրենիքի՝
Ղրիմյան այս քաղաքում,
Ինչպես երկճյուղ զորեղ կաղնի
Խոր արմատներ են գցում:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նվիրվում է Սիմֆերոպոլի
նոր եկեղեցու բացմանը

Օտար հողում հայը շինեց եկեղեցի.
Ղողանջեցին նոր տաճարի զանգերը զիլ,
Աղոթեցին, շարականներ սուրբ երգեցին,
Որ մենք մնանք հավատարիմ մեր հավատքին:

ГАУ РК "Медиацентр им. Р. Газиринского"

Սուրբ հայրերը եկեղեցին այս օծեցին,
Անուշաբույր խունկ ծխեցին՝ ըստ պատշաճի,
Եվ հովիվը իր տուն կանչեց զառնուկներին,
Որ հայ մնանք, որ չտրվենք մենք հորձանքին:

Աստծո տանը ես էլ մի զույգ մոմ վառեցի
Եվ ջերմեռանդ իմ աղոթքը մրմնջացի.
– Տե՛ր իմ, փրկիր մեզ փորձանքից, հալածանքից,
Վերադարձրու նախկին փառքը մեր պապերի:

Հազար անգամ օրհնյալ է ձեռքն այն արարող,
Որ կառուցեց հայի համար նոր սրբավայր,
Մենք կգնանք՝ նա կմնա որպես փարոս,
Որն իր լույսով մեզ բոլորիս պահում է հայ:

ՔԱՄԻ

Գարնա՛ն քամի, ա՛յ քամի,
Մի պահ կանգնիր, ի՛նձ լսիր.
Հենց որ հասնես հայրենիք
Հոգս, ջուրս համբուրիր:

Իմ անտեր տունը մտիր,
Փարվիր քանդված պատերին,
Մեղմիկ՝ ճյուղերը շոյիր
Անտեր թողած ծառերի:

Անցիր մեր հանդ ու դաշտով,
Հայոց ծաղկուն սարերով,
Խաչքարերին հնամյա
Իմ խոսքը տար աղոթքով:

Մտիր հայոց ամեն տուն,
Մանկան թշին համբույր տուր,
Ու պար բռնիր, խենթացած,
Թե հարսանիք, կնունք կա:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Վերադարձի՛ր դու ինձ մոտ
Ու մի լուր բեր նրանցից,
Քո մեկ խոսքին եմ կարոտ՝
Հայրենիքի բուրմունքին:

ՎԵՐԱԴԱՐՁ

Ահա մեր գյուղը՝
Հարազատ տունս,
Իմ օրորոցը,
Մանկական խաղս:

Այս հողն է կյանքս՝
Առաջին սերս,
Առաջին մեղքս,
Վառ երազներս:

Այս աղբյուրից եմ
Սառը ջուր խմել,
Սա Դերունց քերծն է,
Ուր շատ եմ թառել:

Սա Ինը մասն է՝
Հին եկեղեցին,
Ծռված խաչքարն է
Պապիս շիրիմին:

Այս կածաններն են
Դեպի սար տանում,
Վարար Թարթառն է
Ձորում փրփրում:

Այո, իմ գյուղն է՝
Տունն իմ ավերված,
Որն իմ պապերի
Ձեռքով էր շինված:

Այս տանն է վառվել
Իմ կյանքի մոմը,
Այստեղ եմ առել
Մոր կաթի համը:

Հիմա ես հեռու՝
Չար բախտի կամքով,
Սիրտս է ապրում
Հանդիպման հույսով:

ՀՈՒՇԵՐ

Թավ անտառներ իմ Արցախի՝
Դուք իմ բարձն եք օրորոցի,
Պատը ճաքած եկեղեցի՝
Ուր աղոթքի ես ծնկեցի:

Փոշոտ, ցեխոտ ճանապարհներ,
Ամպի քողով պատված լեռներ,
Ձորում զուլալ սառն աղբյուրներ,
Մանկան խաղեր՝ ո՞ւր եք կորել:

ГАУ РК "Медиацентр им. М. Расулзаде"

Մեր պապերի հին խաչքարեր,
Հեքիաթային մութ անձավներ,
Եոնիկների անմեղ աչքեր,
Սոխակների հրաշք երգեր:

Ծոգից նեղված ուլ ու գառներ՝
Ծառերի տակ լուռ մակաղած,
Կուժն ուսերին նազ աղջիկներ,
Որոնց մեջ էր սերս միակ:

Եկեք գոնե երազներում,
Փետուր դարձեք բարձիս ներսում,
Գիշերները ձեզ հետ լինեմ,
Ձեզնից կյանքի նոր ուժ առնեմ:

ԱՐՑԱԽ

Այնտեղ լեռները ուրիշ տեսք ունեն,
Վարար գետերը ուրիշ հևք ունեն,
Մեր արծիվները ուրիշ թև ունեն,
Նախշուն գորգերը ուրիշ հենք ունեն:

Այնտեղ ամպերը ուրիշ խաղ ունեն,
Գարնան վարդերը ուրիշ ցող ունեն,
Արևներն այնտեղ ուրիշ շող ունեն,
Դարերին հաղթած ուրիշ խաչ ունենք:

Թոնրահացն այնտեղ ուրիշ բույր ունի,
Հոնը անտառում ուրիշ գույն ունի,
Գազան ու թռչուն ուրիշ բույն ունեն,
Գինին ու օղին ուրիշ ուժ ունեն:

Մեր զինվորները ուրիշ թափ ունեն,
Թշնամիները վախ, սարսափ ունեն,
Մեր սահմանները ժեռ քարափ ունեն,
Երբ միասին ենք՝ ոչ մի վախ չունենք:

ГАУ РК "Музей им. И. Гаспринского"

ԹԹԵՆԻՆ

Մեր գյուղում թութը հասել է արդեն՝
Քամուց օրորվել, թափվել է գետնին,
Վերին ճյուղերին չամիչ է դարձել,
Մեղուն համտեսել՝ հարբել է հյութից:

Ափսո՛ս, մեր թութը հավաքող չկա,
Ծառերի տակին շալ պահող չկա,
Թափվում է հողին, կորչում խոտերում,
Քաղցր դոշաբը էլ եփող չկա:

Անխիղճներն, ավա՛ղ, տունս քանդեցին,
Հայրական տունս անտեր թողեցին.
Տխուր հառաչեց բակիս թթենին,
Կարոտով հիշեց իր խնամողին:

Հեռու մի գյուղում ես տուն ունեի,
Իմ պապի շինած օջախն ունեի,
Այժմ երբեմն իմ երազներում
Մեր թթենին է ինձ այցի գալիս:

ՂՈՂԱՆՋԵ՛Ք ԶԱՆԳԵՐ

Ղողանջե՛ք զանգեր հայ եկեղեցու,
Տարածե՛ք ձայնը տիրոջ հավատքի,
Թող որ սարսռա հոգին թշնամու՝
Կարծելով՝ ձայնն է Զենով Օհանի:

Ղողանջե՛ք, ինչպես արծվի կռինչ,
Որը հնչում է վտանգի պահին,
Ագռավները՝ շատ, արծիվները՝ քիչ,
Պահապան եղեք հայոց ճտերին:

Ղողանջե՛ք զանգեր, որտեղ էլ լինեք,
Աստծո տաճարը աղոթքի կանչեք,
Որտեղ հիվանդ կա ու հոգով տկար,
Թող բուժվի ցավից, չտխրի երբեք:

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

Ղողանջել եք դուք դարեր շարունակ
Ուրախության և տխուր պահերին,
Վտանգի պահին ռամիկ ու իշխան
Եղել են պաշտպան մեր տաճարներին:

Ղողանջե՛ք զանգեր հայ եկեղեցու,
Որ չմոռանանք մեր սուրբ մայրենին,
Թող հայից ծնված ամեն մի մանուկ
Խաչ ու մեռոնով այստեղ մկրտվի:

ՀԻՄՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ

Հազար ցավերով, կրակով անցած՝
Իմ հոգու աղբյուր՝ իմ հայոց տառեր,
Դարերի խորքից շանթերով կոփված՝
Մոր համբույրի պես օրհնված իմ բառեր:

Թշնամին ձևեց հայոց քարտեզը,
Քո բերդը միայն անառիկ մնաց:
Հողմերը տարան հայոց գահերը,
Քո գահը միայն զորավիգ մնաց:

Դու իմ անթերի, դու իմ հարազատ,
Մեսրոպ մեծ հայի մտքով ստեղծված,
Աշխարհասփյուռ հայերի արմատ,
Հային հայ պահող հրաշք իսկական:

Հազար ցավերով, կրակով անցած,
Իմ հայոց տառեր, հայոց այբուբեն,
Դու մեր շուրթերի աղոթքն ես օրհնած,
Մանկան առաջին բառն ես հայերեն:

ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

Մեր վանքերը, հի՛ն վանքերը,
Մամռոտ պատով սո՛ւրբ վանքերը,
Խաչը՝ ծռված, վերքերը՝ բաց,
Հին ու մաշված հայ տառերը:

ГАУ РК "Медиацентр им. К.Г. Аспринского"

Բազում դարեր կռվում հաղթած,
Լեռան վրա, խոր անտառում
Մի փառավոր անցյալ դարձած,
Իրենց խորունկ վերքն են լիզում:

Բիրտ թշնամու քանդած գմբեթ
Ու սուրբ խորան պատարագի,
Մինչև օրս կանգուն, հպարտ,
Խոսուն վկա հայոց փառքի:

Խաչքարերը՝ քաջ զորքի պես,
Պաշտպաններն են վեհ վանքերիդ,
Որ չթողնեն օտարին ներս,
Ու չդառնան վանքերն ավեր:

Մեր վանքե՛րը, հի՛ն վանքերը
Կարոտել են հայի ձեռքին.
Թող դողանչեն հայ զանգերը,
Եվ ամոքվեն վերքերը հին:

ԴՈՒ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Չեմ կարող քեզ տալ՝ ինչ դու տվեցիր,
Չեմ կարող մարել պարտքս ծովացած,
Ինձ շունչ ու հոգի, կյանք պարգևեցիր,
Դու իմ հայրենիք՝ հավերժ սրբացած:

Ինձ պես շատերին դու կյանք ես տվել
Քո մաքուր օդով, աղբյուրիդ ջրով,
Մայրական կանչով քո գրկին ես առել՝
Հազար ու մի ցավ լուռ դարմանելով:

Դու միակն ես, որ իմ մեջ կմնաս,
Իմ հեռու, մոտիկ, հարազատ երկիր,
Իմ կարոտ ու սեր՝ անվնաս մնաս,
Ծառ ու փորձանքից Աստված պահպանի:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՄԵՐ ՀԻՆ ՏՈՒՆԸ

Հե՛յ, ո՞ւր մնաց մեր հին տունը,
Չարի քանդած թռչնի բույնը,
Ծաղիկ կովի կաթն ու շոռը,
Հանդ-ծմակի մոշն ու մոռը:

Մեջքը ծռված պառավ նանը,
Սառն աղբյուրի մաքուր ջուրը,
Գինով լցված փայտե չանը,
Հայ հարսների նազուկ պարը:

Մեր սարերի ճերմակ ձյունը,
Աշնան կաթուկ կարմիր հոնը,
Բաղ ու բախչի համն ու բույրը
Ու առաջին տաք համբույրը:

Բաց-վարդագույն «Դերին քերծը»,
Վրան հպարտ կանգնած այծը,
Թոնրից հանած տաք-տաք հացը,
Պռոշը ճաք քաղցր դեղձը:

Մեր հին գորգի խաչով նախշը,
Մորս ձեռքով եփած ճաշը,
Նրա տխուր ախն ու վախը,
Երբ մատս էր մտնում փուշը:

ՀԱՅՈՑ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Երբ Աստված մարդուն կավից ստեղծեց,
Մոլորակն արդեն բնակեցված էր
Կենդանիներով անթիվ, անհամար:
Գիշատիչն անկուշտ, խոտակերն անմեղ
Ապրում էին ըստ այն օրենքների,
Որոնք բնության «ձեռքով» են ստեղծվել:
Գոյության պայքար և ուրիշ ոչինչ.
Թույլը՝ ուժեղին, իսկ փոքրը՝ մեծին
Պետք է ընդուներ իրեն որպես տեր,

ГАУ РК "Медиатека им. К. Гаспринского"

Քանի դեռ մարդը գահ չէր բարձրացել՝
Հնազանդեցնելու համար բոլորին:
Եվ Աստծո կամոք յուրաքանչյուր ազգ
Իր տեղը գտավ այս արևի տակ:
Մեկի բաժինը դաշտն ու անտառն էր,
Մեկ ուրիշինը՝ ավազ-անապատ,
Մեկն օվկիանոսի ջրերն էր ճողփում,
Մեկ ուրիշ ազգ էլ կղզում էր ապրում:
Հայի բաժինը մի քարաստան էր,
Որը Հայաստան-Արմենիա կոչվեց:
Աստված, կարծես թե, փորձում էր հային,
Սակայն նա չուներ ոչ մի հետին միտք,
Իր ստեղծածին նա շատ էր սիրում,
Ուզում էր փորձել, թե ինչպես կապրի
Մարդ արարածը այդ քարաստանում:
Տերն անհայտացավ կապույտ երկնքում՝
Հային թողնելով բարձրիկ լեռներում:

Ժամանակ անցավ: Աստված հետ եկավ,
Եկավ, ի՛նչ տեսավ երկրում հայերի՝
Տներ ավերակ, հազար դարդ ու ցավ,
Բան չէր մնացել իր ստեղծածից:
Տեսավ իր որդուն՝ խաչի դեմ ծնկած,
Աղոթք է անում, օգնություն հայցում:
Նայեց այդ մարդկանց Տերը զարմանքով՝
Այդ ինչպե՞ս մարդը կարող է ապրել
Չոր քարին կառչած, միայն հավատքով:
Խղճաց նա, այդքան աղետ տեսնելով,
Ուզեց մի ուրիշ երկիր նվիրել,
Որ ապրեն նրանք երջանիկ կյանքով:
Բայց արի ու տես՝ հայը դա չուզեց:
– Սա է, – ասաց նա, – իմ հայրենիքը:
Ասաց ու ժայռում արմատներ գցեց:
– Թե սիրում ես ինձ՝ թշնամությանը
Դու միայն վերջ տուր: Ես ունեմ երկու
Հզոր պաշտպաններ. դա իմ հավատն է՝
Ուսմունքը որդուդ, մեկ էլ՝ քո ընծան՝
Արարատ լեռը մեր բիբլիական:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Աստված զայրացավ, լեռները խառնեց,
Տներն ավերեց, որ թողնեն գնան,
Բայց հայը նորից ու նորից կրկնեց.
– Չեմ ուզում, – ասաց, – կմնամ այստեղ:
– Թե որ չես ուզում խորհուրդս լսել,
Ապրի՛ր քո խելքով, ինչպես որ կուզես,
Միայն իմացի՛ր՝ էլ ինձ չսպասես,
Տեղդ նեղ լինի՝ էլ ինձ չկանչես:
Ասաց Տերը և գնաց իր գործին՝
Հային թողնելով սեփական հույսին,
Որդու աղոթքին ու Մասիս սարին:

Եվ կրկին դարեր եկան ու անցան,
Երկրի վրայից ազգեր վերացան,
Բայց հայը մնաց անհաղթ, անսասան:
Որոշ բեկորներ, ափսո՛ս, պոկվեցին,
Տարբեր ազգերի մեջ հայտնվեցին,
Բայց չմոռացան խաչն ու Մասիսը:
Թշնամի ազգեր եկան, գնացին,
Իսկ հայը մնաց կառչած իր հողին,
Լոկ հեռվից բարի ձեռքեր պարզեցին.
Օգնեց օտարը, բայց ոչ դրացին,
Նա միայն կողքից քարտեզը կրծեց:
Այսպես դարեդար, այսպես քարեքար
Ապրում է հայը, հույս փայփայելով,
Որ կգա մի օր դատաստանն արդար,
Կյանքը կընթանա իր խաղաղ հունով:

ԻՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քարին հող ասող իմ հայ ժողովուրդ,
Լճին ծով ասող իմ հայ ժողովուրդ,
Մինչև ե՞րբ պիտի հույսերով ապրես,
Չարիքներ տեսած, իմ հայ ժողովուրդ:

Դու ոչ թե ցրված՝ ցրած ժողովուրդ,
Սուտ խոստումներից խաբված ժողովուրդ,
Բնության դաժան հարվածից կքված,
Փլատակներից փրկված ժողովուրդ:

ГАУ РК "Национальная библиотека им. Гаспринского"

Պատերազմներում հաղթած ժողովուրդ,
Պատերազմներում պարտված ժողովուրդ,
Դարերի խորքից՝ Սասնա ծռի պես,
Չարին դաս տվող իմ հայ ժողովուրդ:

Կգա այն օրը, իմ քաջ ժողովուրդ,
Ու հետ կբերես խլած հողերդ,
Տիգրան արքայի գծած քարտեզով
Հպարտ կքայլես, իմ հայ ժողովուրդ:

ՕԳՆԵՑԵ՛Ք

Աղոթում ենք մենք՝ հայացքներս վեր,
Կանչում ենք՝ օգնի՛ր, օգնի՛ր, Տե՛ր Աստված,
Բայց չենք մտածում, որ Աստված մեկն է,
Իսկ մենք՝ բազմաթիվ, մեր մեղքերը՝ շատ:

Ո՞ր մեկին օգնի մեր Տերն արարող,
Երբ բոլորս ենք օգնություն հայցում՝
Եվ աղքատը խեղճ, և հարուստը ցոփ,
Անհույս հիվանդը, անմեղը բանտում:

Մարդասպանն անգամ Աստված է կանչում,
Ոճիր է գործում՝ ներում հայցելով,
Տիրակալները պատերազմներում
Կյանքեր են զոհում՝ ներում հուսալով:

Կանչում ենք՝ օգնի՛ր, օգնի՛ր, Տե՛ր Աստված.
Ոչ ոք չի կանչում՝ թող որ քեզ օգնեմ,
Ով գիտի, գուցե, ինչ-որ մի ուժից
Դու էլ ես կախված՝ մեզ պես խեղճացած:

Ամենքս կյանքում գոնե մի անգամ,
Գոնե մի օրով, թեկուզ մեկ ժամով
Պիտ Աստված դառնանք՝ փրկենք տկարին,
Որ այս կարճ կյաքում չապրենք պարտքերով:

ГАУ РК "Национальная им. Х. Абаспринского"

ԵՍ ՄԵՐ ՏԱՐԵՐՔՆ ԵՄ

Ես մեր հայրենի տարերքն եմ ըմբոստ,
Նրա պես հաճախ քնքուշ եմ ու նուրբ,
Մեր ժայռերի պես քար եմ ես խրոխտ,
Բայց հայի համար անուշ եմ ու սուրբ:

Պատահում է, որ ամպում եմ մռայլ,
Սառչում եմ ցավից՝ վշտի կապանքում,
Մեկ մառախուղ եմ, մեկ՝ անձրև շռայլ,
Բայց պարզվում եմ և ծիածան կապում:

Հոգուս վարդերը բուրում են սիրով՝
Ցողոտ շուրթերով պատանու նման,
Ու երազների թևով են թռչում,
Կյանքը դառնում է դրախտ իսկական:

Հաճախ նեղվում եմ շոգից արևի,
Ու ճաքճքում է սիրտս կարոտից,
Բայց հոգուս մեջ կա ընձյուղ տենչանքի,
Որը սնվում է հույս ու հավատից:

Ես մեր հայրենի տարերքն եմ ըմբոստ,
Ես նրա հողն եմ՝ Հայաստան կոչվող,
Այդ հողի զավակ Արցախն եմ խրոխտ,
Նրա երազույն դրոշն եմ հաղթող:

ՄՏՈՐՈՒՄ

Աշխարհ ենք գալիս մենք Աստծո կամքով,
Մեզնից չի կախված՝ լինել, չլինել,
Այդ մենք չենք ընտրել երկիր ու ծնող,
Մեր ազգի բախտը մենք չենք որոշել:

Նույնիսկ հավատը մենք չենք որոշել.
Դա որոշել է մեր շրջապատը,
Մենք մեզ թշնամի երբեք չենք փնտրել
Եվ սուր չենք տվել մենք նրա ձեռքը:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Մեզնից կախված է՝ միայն մարդ լինել,
Ապրել, ինչքան որ Տերն է կամենում,
Բարի գործ անել, չարիք չգործել,
Ապրել միշտ պատվով մեր այս կարճ կյանքում:

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿ

Եկավ ու անցավ յոթ տասնյակ տարի՝
Երբեմն՝ դաժան, երբեմն՝ բարի,
Լավը քիչ էր, քան ես կուզենայի,
Սակայն բախտիս դեմ ո՞նց պայքարեի:

Մեր Տիրոջ կամքով կյանքս երկարեց,
Ճակատագիրն ինձ մեծ սեր նվիրեց,
Պոետի ձիրք ու հոգի պարգևեց,
Այդ սիրո պտուղ՝ զավակներ տվեց:

Աստված ինձ Արցախ-հայրենիք տվեց,
Բայց բախտս, ավա՛ղ, մի այլ բան ուզեց.
Անհուն ու խորին մի կարոտ ընտրեց՝
Ինձ տարավ հեռու Ղրիմում թողեց:

Բարին էր քիչ, թե չար ուժերը՝ շատ.
Չեմ ուզում ասել՝ դա լա՞վ է, թե՞ վատ,
Սակայն ես կյանքում ունեմ մի բաղձանք՝
Ինձնից հետո գեթ մի հետք թող մնա:

ԱՐԻ՛ ԱՊՐԵՆՔ ՀԱՅԱՎԱՐԻ

Արի՛ ապրենք մարդավարի,
Եթե հայ ենք՝ հայավարի,
Լինենք արի, լինենք բարի,
Հերն անիծենք չուզեցողի:

Արի՛ ապրենք հայավարի,
Ասենք, խոսենք հայավարի,
Թե հանդիպենք ձմռան կեսին՝
Ամռան նման թող ջերմ լինի:

ГАУ РК "Медиатека им. К.Гаспринского"

Թե նեղում է մեզ թշնամին,
Արի՛ կռվենք հայավարի
Ու չսպանենք անմեղներին՝
Չվերածվենք մարդասպանի:

Մեր պապերը հայ են եղել,
Հայավարի տուն են շինել,
Աղ ու հացով ու բաց սրտով
Հյուրերի հետ սեղան նստել:

Մենք էլ ապրենք հայավարի՝
Հանուն անվան մեր պապերի,
Որ չկորչի հայ անունը,
Մնա սրտում մեր թոռների:

Արի՛ ապրենք հայավարի՝
Թեկուզ ծայրում երկրագնդի,
Սատար լինենք հայրենիքին,
Որ նա վատ օր էլ չտեսնի:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Իմ յոթանասուն տարվա ընթացքում
Տասնյակ թագավոր տեսա այս կյանքում,
Ոչ մեկը խեղճին ձեռք էլ չէր մեկնում,
Իսկ մեկնած տեղը մեր բուկն էր լինում:

Մեկը դաժան էր, բիրտ ու արնախում,
Բայց նրա անվամբ մենք երդվում էինք,
Հարազատ հորն ու մորն էինք ծախում,
Միայն թե նրա շարքում լինեինք:

Երբ նա համբարձվեց մեկ ուրիշ աշխարհ,
Սուգը դեռ չանցած՝ նոր լուրեր եկան.
Դատարկ չմնաց Սովետի գահը,
Մեկի երազը դարձավ իրական:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Բայց նա իր տեղում երկար չմնաց՝
Մի ճաղատ մարդուկ գահընկեց արեց,
Մեր բախտի գահին այս ձևով բազմած,
Ստալին հսկային հակա համարեց:

Սա էլ աշխարհում մեզ խայտառակեց՝
Կոշիկը հանեց, սեղանին խփեց,
Եգիպտացորեն աճեցնել ստիպեց,
Հացը մոռացավ, զինվել սկսեց:

Բայց երբ որ տեսան՝ նա համը հանեց,
Բռնի գահընկեց նրան արեցին,
Մի կուզիկ ծերուկ իր հերթը խնդրեց.
Որոշ ժամանակ նրան հարգեցին:

Շատ շուտով խեղճը հոգին ավանդեց,
Մի ուրիշ հիվանդ ծերուկ հայտնվեց,
Ինչքան մեղալ կար՝ նա կրծքին կախեց,
Իր համար գոփեց ու շունչը փչեց:

Դրանից հետո ամեն ինչ փոխվեց.
Բծավոր գլխով մի ճիվաղ հայտնվեց,
Քանդեց եղածը, ամեն ինչ խառնեց,
Մեզ ազատություն իբրև թե տվեց:

Այս մեկն էլ գահին երկար չմնաց.
Դավադիրները նրան զցեցին,
Բայց նրանց բախտը երկար չժպտաց՝
Շուտով ոհմակը կալմեջ արեցին:

Մի ուտող-խմող զոռբա հայտնվեց,
Կոմունիստների հերը անիծեց,
Բոլոր ազգերին խառնեց, բաժանեց
Ու թշնամիներ իրար դարձրեց:

Շատ թագավորներ տեսա այս կյանքում,
Ոչ մեկը բարի ոչինչ չտվեց,
Նրանց բոլորին մի բան էր հուզում՝
Ինչո՞ւ ավելին մեզնից չգոփեց:

ГАУ РК "Национальная библиотека Гаспринского"

ԿՈՎՈՂՆ ՈՒ ԿՈՎԵՑՆՈՂԸ

Կռվողն ուրիշ է, կռվեցնողն՝ ուրիշ.
Այս երկուսին էլ Աստված է ստեղծել,
Կռվողն իր կյանքն է տալիս թանկագին,
Իսկ կռվեցնողը՝ մահ, ուրիշ ոչինչ:

Կռվեցնողն է միշտ բիրտ հրամայում,
Կռվողը զենք է իր ձեռքը վերցնում,
Կռվեցնողն անդուլ քարտեզ է գծում,
Կռվողի ոտքերն են քայլելուց ցավում:

Կռվեցնողն է, որ ճառում է բեմում,
Կռվողը՝ մրսում ցուրտ խրամատում,
Կռվեցնողը իր օգուտն է հաշվում,
Կռվողը՝ կյանքի գնով հատուցում:

Կռվողի որդին շուտ է որբանում,
Կռվեցնողինը լկտի է դառնում,
Կռվեցնողին են հաճախ կաշառում,
Կռվողին հերոս տղա են ասում:

Կռվեցնողին են պաշտոնի դնում,
Կռվողը միայն մեդալ է ստանում,
Կռվեցնողն, անշուշտ, արդար է լինում,
Կռվողը բանտում իր կյանքն է մաշում:

Կռվեցնողին են անեծքներ ուղղում,
Կռվողի մասին երգեր հորինում,
Կռվեցնողին են դամբարան կերտում,
Կռվողից միայն խաչքար է մնում:

ԿԱՐՈՏԻ ԳԻՆԸ

Երբ քեզ հետ էի՝ կարոտս չկար,
Այնքան հարազատ իմ սերը չկար,
Մի մարմին էինք, կարծես, մի հոգի,
Դա սովորական կյանք էր առօրյա:

ГАУ РК "Медиацентр им. Г. Аспринского"

Վաղ առավոտյան տանից դուրս գալիս՝
Քո մաքրամաքուր օդն եմ ես շնչում,
Հեռվից Մռավն է ինձ դիմավորում,
Արևն է ծոցից հանում, լույս տալիս:

Միշտ ինձ հետ էիր, իմ կյանքի իմաստ,
Ինչպես իմ մարմնի կարևոր մասը,
Ես չէի զգում դա այն ժամանակ,
Ինչպես չես զգում քո առողջ սիրտը:

Հիմա առանց քեզ ես շատ եմ փոխվել,
Քո ջինջ պատկերն եմ հեռվում ես թողել,
Հաճախ եմ հիշում այն քարը անշունչ,
Որին ես նստել, երազել եմ մունջ:

Ես չգիտեի իմ սիրո չափը,
Դու ես իմ կյանքի փրկության ափը,
Սրբություն ես դու, ամենափրկիչ,
Իմ անմոռաց սեր, իմ սեգ հայրենիք:

Ես չգիտեի, որ դաժան մարդիկ
Մեզ բաժանել են մայր հայրենիքից,
Որ առանց այդ էլ մասնատված հողը
Նորից տուժել է չարի ժանիքից:

Թեկուզ էլ չկա հայրենի տունս,
Նրան հիշելիս՝ փախչում է քունս,
Բայց միշտ ամուր է հույսի կամուրջը,
Քանի ազատ է իմ հայրենիքը:

Բայց ազատության գինը շատ մեծ էր՝
Բազում տղաներ նահատակվեցին,
Ավերակ դարձան բազմաթիվ գյուղեր,
Շատերն էլ օտար հողում մնացին:

Հիմա, երբ այդքան հեռու եմ քեզնից,
Հաճախ եմ թախծում՝ կարոտ քո տեսքին,
Կարոտում էի ծանր օրերին,
Երբ լքված էի զգում ամենքից:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Մարդի՛կ, մի՛ կորցրեք ձեր հայրենիքը,
Թշնամիները դա են ցանկանում,
Մի՛ այրեք երբեք այն կամուրջները,
Որ հայ մնալու երաշխիքն են սուրբ:

Հայրենիք լինի, թե սիրած էակ,
Նա է քո հոգու սերը անսահման,
Կարիքն ես զգում դու այն ժամանակ,
Երբ հասկանում ես՝ կորցրել ես նրան:

ԴԱ ՊԱՐԾԱՆՔ ՉԷ

Պածենում ենք, որ աշխարհում
Տասը միլիոն հայ է ապրում,
Ու որտեղ էլ ապրեն նրանք՝
Եկեղեցի, տուն են շինում:

Բայց դա ցավ է՝ ոչ թե պարծանք,
Հերիք եղավ վախից ցրվենք,
Մեր երկրից հեռու փախչենք,
Լեզուն միայն ուժով պահենք:

Մի բուռը թող հազար դառնա,
Հայերենը չմոռանա,
Բայց ոչ օտար հողում մնա,
Այլ հայրենիք վերադառնա:

Սփռված են խաչքարերը,
Կենդանի են հայ գրերը,
Լավ կլիներ՝ դրանց տերը
Վերադառնար իր օջախը:

ՁՈՐԵՐԸ

Բանաստեղծները լեռներն են գովում.
Նշում են լանջը, ձյունոտ գագաթը,
Ձորերի մասին՝ հաճախ մոռանում,
Հիշում են միայն ստվերն ու մութը:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Չէ՞ որ ձորից է սարը բարձրանում,
Առանց ձորերի չի ծնվի սարը,
Այնտեղ է նրա հիմքը ամրանում,
Նրա գլխին են թափվում քարերը:

Ամպը ձորից է ջուր տանում սարին,
Այնտեղ է քամվում մեր թափած կեղտը,
Նա է կուրծք տալիս աղբյուրին, գետին,
Այնտեղ են տանում ծարավ հետքերը:

Ինչքան էլ կյանքում վերև բարձրանանք,
Մի օր այնտեղից ցած ենք իջնելու,
Եկեք երբեմն էլ մենք ձորը հիշենք,
Թե պատճառ չունենք մենք ամաչելու:

ԹԱԽԻԾ

Նորից ըմպեցի բաժակդ դառնոտ,
Ո՛վ թախծի, վշտի մութ աստվածուհի,
Մշուշվեց նորից ճամփաս արևոտ,
Որը կարող էր հասնել անդունդին:

Քանի անգամ եմ աղոթել ծնկած,
Որ դու ինձ երբեք էլ այցի չգաս,
Չտաս քո գինին՝ թույնի հետ խառնած,
Ու իմ հոգու մեջ այդպես չարտասվես:

Բայց դու անգութ ես, հանգիստ չես տալիս,
Նորից ես գալիս, կանգնում իմ առաջ,
Կարծես երդում ես տվել ինքդ քեզ,
Որ ինձ ինչ-որ մի տանջանք պիտի տաս:

Բայց դու չես կարող, չես տիրի հոգուս,
Տարտամ հայացքով տխրություն անգութ,
Հոգիս ձգտում է միայն դեպի լույս.
Կհաղթահարեմ ամեն որոգայթ:

ГАУ РК "Национальная им. И. Насыринского"

ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Որոշ գաղտնիքներ երբեք չեն բացվում,
Դարերի խորքում թաղված են մնում՝
Գաղտնիք պետական, գաղտնիք անձնական,
Գաղտնիքներ, որոնք ծնվում են, մեռնում:

Գաղտնիք կա՝ մարդկանց մահից է փրկում,
Կա և այնպիսին, որ մահ է բերում,
Գաղնիք կա՝ բացվի՝ տներ կքանդի,
Կա և այնպիսին՝ դրանք կկանխի:

Յուրաքանչյուր ոք իր գաղտնիքն ունի,
Որը ոչ մեկին երբեք չի պատմի,
Ուզում ես տանջիր, նույնիսկ՝ սպանիր.
Հոգում կմնա, իր հետ կթաղվի:

Գաղտնիք պահելը շատ ծանր բեռ է,
Որը կարող է մարդկանց կործանել,
Երկիր ավերել և արյուն հեղել,
Բացվելիս՝ վեճ ու կռիվ բորբոքել:

Գաղտնիքը երբեք բարի չի լինում,
Նրան չար ուժն է լույս աշխարհ բերում,
Որը մարդու մեջ իր բույնն է հյուսում,
Ու շատ հաճախ էլ՝ նրա հետ մեռնում:

Եթե չես կարող գաղտնիքդ պահել,
Հաճախ կարող ես կյանքդ վտանգել,
Թե պատահմամբ է ականջդ լսել՝
Ավելի լավ է՝ լեզուդ քեզ պահես:

Եթե ուրիշի գաղտնիքը գիտես,
Ավելի լավ է խուլ, համր լինես,
Թե չէ քո գլխին փորձանք կբերես.
Այդ է դարերի փորձը ցույց տալիս:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

ՔՅԱՀՐԻՉ

Քյահրիզ ունեինք գյուղում՝ չորս ակով,
Տասը գուռերը շարվել են հերթով,
Ջուրը շատ մաքուր, սառն էր ու համով,
Մի ամբողջ գյուղ էր ապրում այդ ջրով:

Այգի, բոստան էր ջրում քյահրիզը,
Մարդ ու կենդանի՝ ծարավ հագեցնում,
Իսկ ամռան շոգին ժիր մանուկները
Լողանում էին հաճույքով ջրում:

Ամեն մի գուռը՝ նման մեծ թասի,
Հին այգիների գինու մի հնձան,
Տասը հորերը իրար միացած,
Վարար ու սառը մի աղբյուր դարձած:

Կանայք, աղջիկներ՝ կժերն ուսերին,
Ամռան թունդ տապին կամ ձմռան ցրտին
Ջուր էին տանում, ուրախ երգելով,
Քյահրիզ շինողին գովաբանելով:

Սիրող զույգերի հանդիպման դու վայր,
Հողին, բույսերին հյութ տվող դու մայր,
Ինչո՞ւ ես երգում տխուր դու հիմա՝
Սերը կորցրած աշուղի նման:

Դու իմ հին քյահրիզ, շուրթերիս պաղ ջուր,
Այժմ ցամաքող, սառնորակ աղբյուր,
Ակունքդ պետք է մաքրվի նորից,
Որ մաքուր, վարար դառնաս դու կրկին:

ԿԵՍՕՐԻՑ ՀԵՏՈ

Կեսօրից հետո արևն է թեքվում,
Լուռ ստվերներն են արևելք շրջվում,
Կեսօրից հետո մատներն են պրկվում,
Իրար միանում, բռունցք են դառնում:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Իսկ բռունցքի մեջ՝ հատիկ առ հատիկ,
Կյանքը դառնում է բյուրեղ մի փոքրիկ.
Ոմանց ափի մեջ՝ պոնկեպռունկ,
Ցավոք, շատերն էլ դատարկ են մնում:

Մինչև կեսօր են աճում բուսերը,
Մարդկանց սրտերում՝ մեծ սեր ու հույզեր,
Կեսօրից հետո ծաղկի նեկտարը
Դառնում է անուշ ու համեղ մեղր:

Կեսօրից հետո ափն է կուչ գալիս,
Մատներն են ծալվում՝ իրար միանում,
Երբեմն, ցավոք, ափն է շուռ գալիս՝
Ափի միջինը շաղ տալով հողում:

Արևամուտին աշունն է գալիս,
Մարդիկ անցածի մասին են խորհում,
Երբ վերածվում է բռունցքը ափի,
Աստված է միայն վճիռ կայացնում:

Եթե բռունցքը լիքն է փողերով՝
Բացվելիս քամին տանում է փութով,
Եթե բռունցքում սերմեր կան առողջ՝
Այգի է դառնում բերք ու բարիքով:

Մեկի բռան մեջ՝ չորացած արյուն,
Մյուսում՝ ջերմացած մի փոքրիկ թռչուն,
Շատերն ամոթից բուռը չեն բացում,
Քանզի բան չկա բռան հատակում:

Շատերն էլ ինձ պես երգեր են պահում,
Իրենց տողերում հոգին են դնում,
Երբ բուռն է բացվում, թևեր են առնում,
Մարդկանց սրտերում բներ են հյուսում:

ԵՍ ՈՒ ԱՍՏՎԱԾ

Եկանք, հասանք այս դարին
Ես ու Աստված միասին,
Նա իմ ճամփան է գծել,
Ես իմ ուղին եմ ընտրել:

ГАУ РК "Национальная библиотека имени Гаспринского"

Հազար ցավ եմ ես տեսել
Ճամփին, որ նա է տվել,
Որտեղ ընկել եմ քարին,
Ինձ հետ ցավ է նա քաշել:

Մանկուց ինձ դաս են տվել՝
Աստված չկա, չի եղել,
Բայց իմ հոգում ինչ-որ տեղ
Հակառակն եմ զգացել:

Մի անգամ էլ զգուշորեն
Ես ուսուցչին հարցրի.
– Մի՞թե անխելք են եղել
Պապերը մեր հայրերի,

Որ դարերով աղոթել,
Մեզ գիր, հավատ են թողել,
Չարքաշ կյանքով են ապրել,
Բայց ուրացող չեն եղել:

– Մեր պապերը անգրագետ,
Հետամնաց են եղել:
Ուսուցիչն ինձ ընդհատեց,
Նա հարցից էր վախեցել:

Մեր բոլորի պապերը՝
Հագած-կապած այրերը,
Մանուկին հայ են կնքել
Ու Տիրոջն են աղոթել:

Նույնիսկ կարմիր հեղեղը,
Ջնջել ուզեց հավատը,
Քարոզելով բոլորին,
Որ իրենք են մեր տերը:

Պատմության մեջ նա մնաց
Որպես ուսմունք սնամեջ,
Իսկ թոռնիկս նորածին
Խաչով կնքվեց պապիս պես:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Բազում ճամփա ենք անցել,
Բայց անհաղթ ենք մնացել,
Շատ ցեղեր են չքացել,
Ես ու Տերն ենք մնացել:

Եկանք, հասանք այս դարին՝
Ի հեճուկս դավերի,
Հավերժ է մեր ճիշտ ուղին
Մեր Տիրոջ հետ միասին:

ԱՄԱՆՈՐ

Մնաս բարո՛վ, ա՛յ հին տարի,
Կյանքիս մի ճյուղ, անգին տարի,
Մեկը ծնվեց, մյուսը մեռավ,
Լավ ու վատով անցավ տարին:

Բարով թող գա գալիք տարին,
Կյանքի ծովի ալիք տարին,
Թող ոչ մի նավ չխորտակվի,
Նոր կյանք բերի գալիք տարին:

Ոչ մեկը թող ցավ չտեսնի,
Ազգս նորից դավ չտեսնի,
Թե տխրություն պիտի լինի,
Թող ամեն ինչ հերթով լինի:

Թող կռունկը չմոլորվի,
Իր տուն դառնա, հյուսի բույնը,
Մեր պապերի հողն ու ջուրը
Չվող թռչուն էլ չտեսնի:

Բարով մտնես մեր հայրենիք,
Ցավը մնա որպես տեսիլք,
Ոչ մոտիկից, ոչ էլ հեռվից
Տխուր լուրեր էլ չլսվի:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

ԻՄ ԱՆՆՄԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Աղբյուր լինեմ քո սարում՝
Մի սալ քարի, ծառի տակ,
Եղնիկները կում առ կում
Ջուր վայելեն սառնորակ:

Լինեմ խիզախ մի արծիվ,
Ճախրեմ ի վեր լեռներից
Ու հիանամ քո տեսքով,
Իմ աննման հայրենիք:

Անտառ լինեմ քո գրկում,
Որ զովություն հողիդ տամ,
Իսկ ձմռանը՝ ջերմություն
Քո օջախում հյուրնկալ:

Ձեփյուռ լինեմ ես գարնան,
Շոյեմ ծառիդ ճյուղերը,
Բողբոջները թող բացվեն՝
Բերքով լինի աշունը:

Ամպեր դառնամ երկքում,
Պապակ հողիդ անձրև տամ,
Կեղտը քշեմ ես հեռու,
Այգիներիդ սնունդ տամ:

Ձմեռը գա՝ ձյուն դառնամ,
Իջնեմ սարին ու դաշտին,
Ծիլդ ցրտից պաշտպանեմ,
Գարունը գա՝ ջուր դառնամ:

Մշակ դառնամ քո դաշտում՝
Բահն ու բրիչն իմ ձեռքում,
Դառնամ արտ ու այգեստան,
Մանկան ձեռքում հաց դառնամ:

ГАУ РК "Медиатека им. М. Гаспринского"

Զինվոր դառնամ սահմանիդ,
Քո անդորրը պաշտպանեմ,
Որ չտեսնես դու ավեր,
Կրակ ու բոց սահմանիդ:

ԻՄ ՊԱՊԻ՛ ՏՈՒՆ

Իմ հայի՛ տուն, իմ պապի՛ տուն՝
Քար-քար նախշած, ձեռքով տաշած,
Դու իմ օրրան, իմ հոգու սյուն՝
Հայրենիքի հողում կանգնած:

Օրորոցում լաց եմ եղել,
Մանկությունս եմ քո մեջ ապրել,
Եվ տխրել եմ, և հրճվել,
Սիրուց արբած՝ երգ հորինել:

Պատշգամբից այգուս նայել,
Մռավ լեռան օդն եմ շնչել,
Ու երբեմ էլ՝ թաքուն ծնկել,
Տեր եմ կանչել, լուռ աղոթել:

Բայց մի օր էլ լուր ստացա,
Որ իմ պապի տունը չկա,
Ավերվել էր հիմնովին այն
Եվ դարձրել էր լուռ փլատակ:

Հասա այնտեղ. ինչ որ տեսա՝
Ամբողջ կյանքում չեմ մոռանա.
Պապիս տունը երկհարկանի
Վերածվել էր ավերակի:

Քարացել էր արցունքն աչքիս,
Վերացել էր պապիս տունը,
Ո՞ւմ պատմեի ցավիս մասին՝
Ավերակ էր ամբողջ գյուղը:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ

Հեռանում են հայրենիքից,
Հեռանում են հող ու ջրից.
Այնտեղ ծնվել ու սիրել են
Եվ հուզվել են «Մասիս» բառից:

Հեռանում են ոչ թե սրից՝
Հեռանում են հենց իրենցից՝
Նոր ստեղծած օրենքներից,
Դժվար կյանքից, նույնիսկ՝ մորից:

Հեռանում են ուրիշ երկիր,
Կարծես քիչ էր կորուստը մեր,
Հույսը դրած հեշտ ապրուստին,
Թողած հեռվում տուն, ընկեր, սեր:

Կին, երեխա թողած բախտին,
Իր ուղարկած չնչին փողին,
Խաչագող են հաճախ դառնում,
Քար են նետում մեր հավատին:

Տեսա մեկին՝ ինչ-որ գյուղում
Մահակն առած այծ էր պահում.
Կան և մարդիկ՝ խոզանոցում
Նրանց տակի կեղտն են քերում:

Չդիմացա, հարցրի նրան.
– Մի՞թե մեզ մոտ խոզ, այծ չկա:
Պատասխանեց գլուխը կախ.
– Եղբայր, հաշվիր, որ ե՛ս չկամ:

Եթե մի օր նա տուն դառնա,
Այծն ու խոզը այնտեղ թողած,
Կասի. «Գործ եմ ունեցել լավ,
Տան կարոտին չդիմացա»:

ГАУ РК "Медицинский им. М.Г. Асиринского"

Հայե՛ր, հայե՛ր, զգույշ եղեք,
Երբ օտարի հողում ապրեք,
Այդքան քաղցր դուք մի եղեք,
Թե չէ շուտով դուք կհալչեք:

Դուք մի եղեք շաքարի պես,
Կամ էլ՝ լուծվող աղի կտոր,
Օտար ջրում հեշտ է լուծվել,
Թե չլինես քարի կտոր:

Հայաստանից մի մեծ գիտակ
Հայ էր փնտրում աշխարհով մեկ,
Նրա պապը մի ժամանակ
Մեր երկրից էր արտագաղթել:

Նա չէր փնտրում հասարակ հայ՝
Պետք է լիներ նա գիտնական,
Մեծ նկարիչ կամ երգահան,
Ազգանունն էլ՝ զուտ հայկական:

Փնտրում ենք, որ հպարտանանք,
Ինչ-որ մեկին ապացուցենք
Կամ գտածով զարմացնենք,
Իբր, տեսեք, տաղանդ ունենք:

Իսկ հասարակ հայի մասին,
Թե ով է նա՝ չեն էլ ասի,
Մեծահարուստ մարդ է փնտրում,
Որ նրանից օգուտ քաղի:

Օտար հողում դու կհալչես,
Թե լեզվիդ տակ քար չպահես,
Ու այդ քարում հայոց բառի
Համն ու հոտը չպահպանես:

Անունով չէ, որ մենք հայ ենք,
Վերջի «յան»-ը ապացույց չէ,
Եթե այդպես իրոք լիներ,
Չինացուն էլ կասենք՝ հայ է:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Կպարծենանք քանակով մեր,
Հզորությամբ ու մեծ խելքով,
Ոչինչ, որ կարճ հասակ ունենք,
Քիչ էլ շեղ ենք աչքով-ունքով:

Հայե՛ր, հայե՛ր, զգո՛ւյշ եղեք,
Ուր էլ լինեք, հա՛յ մնացեք,
Ո՛չ աղ եղեք, ո՛չ էլ՝ շաքար,
Հայի լեզվով մարդ մնացեք:

Ոմանք արդեն հետ չեն գալիս,
Տուն ու տեղ են կազմում նորից,
Ու ծնվածն էլ, անկախ կամքից,
Ձեռք է քաշում հայերենից:

Բայց չարեչար սխալվում են,
Երբ կարծում են, թե հալչում ենք,
Ինչքան էլ որ քչանում ենք,
Լեռ ենք դառնում, ամրանում ենք:

Որտեղ էլ որ ապրի հայը,
Չի մոռանա իր արյունը,
Կգտնվի մի նոր Օհան,
Երբ վտանգվի հայի տունը:

ԱՅՆ ՏԱՐԻՆ

Նվիրում եմ պատերազմի տարիներին
Ստեփանակերտում զոհված անմեղ
բնակիչների հիշատակին

Շատ ցուրտ ձմեռ էր այն տարի մեզ մոտ.
Վառելիք չկար, ոչ էլ՝ հաց ու ջուր,
Շուշի քաղաքից Աստծո ամեն օր
Քաղաքի վրա կրակ էր թափվում:

Գնացել էի աղբյուրը՝ ջրի,
Միակ աղբյուրն էր ամբողջ քաղաքում,
Ու հանկարծ մի բան սուրաց շեշտակի.
Հրթիռը պայթեց դիմացի բակում:

ГАУ РК "Медиацентр им. Г. Аспринского"

Ծխով, փոշով ծածկվեց ամեն ինչ,
Ու հետևեցին ուրիշ հարվածներ,
Մի ողջ թաղամաս՝ կրակի գերի,
Ինչպես փրկվեցի՝ ես էլ չգիտեմ:

Իսկ երբ սև ծուխը ցրվեց վերջապես,
Մեկ էլ քիչ հեռվից ծկլթոց լսվեց,
Աղբյուրի կողքի տնից էր գալիս.
Իմ մոտ ընկերոջ տնից էր կարծես:

Ամեն ինչ թողած՝ հասա նրանց բակ.
Ավելի լավ էր, որ չտեսնեի.
Քանդված տան առաջ՝ հազուստ ու գլխարկ…
Խոսել կամ լացել՝ էլ ուժ չունեի:

Ջուրը մոռացած՝ շուտ հասա մեր տուն,
Այնտեղ՝ մեր բակում ցրվել էր ծուխը,
Մերոնք հարևան շենքի նկուղում
Թաքնվել էին՝ ինչպես բոլորը:

Այդպես ամեն օր՝ մի ամբողջ ձմեռ,
Որը դժոխք էր մեզ համար դարձել,
Մեր պուրակների բարձր ծառերից
Մնացել էին լոկ անճյուղ սյուներ:

Վաղուց է, ինչ մեր խանութը չկա,
Բայց եթե լիներ, ի՞նչ պիտի ծախեր,
Ո՛չ հաց կար, ո՛չ էլ՝ սննդամթերք,
Իսկ շորի մասին մտածողն ո՛վ էր:

Օդում հայտնվեց մի մեծ կործանիչ,
Քաղաքի գլխին պտտվեց փոքր-ինչ,
Թևի տակ պահած ռումբերը բոլոր
Նետեց շենքերին, քանդեց ամեն ինչ…

Ցուրտ էր այդ ձմեռ, քաղաքն էր սառել,
Ու թվում էր, թե մեր վերջն է եկել,
Հույսը սառել էր մարդկանց սրտերում,
Փրկություն էին ամենուր փնտրում:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Իսկ բազեները հայոց երկնքի,
Արհամարհելով մահվան վտանգը,
Իրար հետևից՝ նեղ կիրճով սարի
Իջնում էին ցած, որ ապրի հույսը:

Բերում էին միշտ զենք, մթերք, դեղեր,
Տանում՝ հիվանդներ ու վիրավորներ,
Ցավոք, քիչ չէին այն մարտիկները,
Որ հերոսացան՝ զոհելով կյանքը:

Քաղաքում ինչքան մանկապարտեզ կար
Դարձել էր անտուն մարդկանց ապաստան,
Մեր Շահումյանից ու Մարտակերտից
Շատերը փախան՝ թողած ամեն ինչ:

Բայց գարուն եկավ, փրկվեց քաղաքը,
Շուշին վերջապես ազատ շունչ քաշեց,
Ազատվեց մահից մեր հին Արցախը,
Որը օրրանն է հայի միշտ եղել:

Գնա, հե՛տ չգա էլ այդ սև տարին,
Թող անդորր իջնի մեր հող ու ջրին,
Թող էլ չտեսնենք մենք նման օրեր,
Թող էլ չունենանք նման կորուստներ:

ՍԻՐՈ ՔՆԱՐ

ԴՈՒ

Դու բույրն ես՝ քաղած իմ ալ վարդերի,
Դու ջուրն ես՝ խմած իմ աղբյուրների,
Քնքուշ հովերն ես իմ Մռավ սարի,
Քո ափի մեջ է իմ սիրտը գերի:

Դու՝ հազարի մեջ տուն տանող ճամփա,
Դու իմ օրերն ես այսօրվա, վաղվա,
Ափերը կապող կամրջի կամար,
Դու օրացույցն ես իմ ամենօրյա:

ГАУ РК "Медиацентр им. К. Гаринского"

Դու զարկն ես սրտիս, համբույրն ես շրթիս,
Դու համն ու բույրն ես մորական կաթի,
Իմ երազների, իմ սիրո հավքի
Թևին ուժ տվող մկանն ես մեջքի:

Դու բախտն ես անտես՝ ճակատիս գրված,
Դու թռչող գորգ ես մանկան հեքիաթում,
Ա՛խ, տարիները գալիս են, անցնում,
Բայց սիրտս նորից քեզնով է տարված:

ՍԻՐԵԼՆ ԱՅՆ Է...

Սիրելն այն է, երբ քեզ հանդիպելիս
Իմ երակներով հոսանք է անցնում,
Ձմեռն է գարուն դառնում քո տեսքից,
Եվ ծիածանն է շողում երկնքում:

Սիրելն այն է, երբ քեզ եմ ապասում,
Րոպեն տարի է դառնում, ժամը՝ դար,
Երբ հայտնվում ես, արևն է շողում,
Իսկ հեռանալիս՝ սիրտս է հանց քար:

Սիրելն այն է, երբ քո մի հպումից
Փթթում է նորից իմ կյանքի ծառը,
Ծաղիկն է թոշնում քո սառը խոսքից,
Ու ցամաքում է աղբյուրիս գուռը:

Սիրելն այն է, երբ վախ կա մի թաքուն,
Կորստյան ահ կա, ու խանդն է կրծում,
Հենց այդ պատճառով՝ քնած թե արթուն,
Կուզեի լինել միայն քո գրկում:

ՄԻԱՅՆ ՔԵԶԱՆԻՑ

Ժպիտն առել եմ միայն քեզանից,
Թախիծն առել եմ միայն քեզանից,
Կուզես հավատա, կուզես՝ ոչ, անգին,
Սերս առել եմ միայն քեզանից:

ГАУ РК "Медиатека им. М.Г. Аспринского"

Ծողերն առել եմ գարնան արևից,
Ցողերն՝ աստղալից գարնան երկնքից,
Երջանիկ սիրո համբույրն առաջին
Առել եմ միայն քո կույս շուրթերից:

Ամպերն առել եմ աշնան օրերից,
Իսկ ձյունը ճերմակ՝ ձմռան հողմերից,
Սիրտս կաշկանդող կոշտը սառույցի
Հալչում է միայն քո ջերմ հայացքից:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ Է ՍԵՐԸ

Աստված էլ, գուցե, սիրել է մեկին,
Այլ կերպ աշխարհն այս ինչպե՞ս կստեղծեր,
Քանզի առանց սեր չի ծնվում ոչինչ.
Բոցավառվել է սիրուց արևն էլ:

Եվ աստվածային սիրո կրակից
Կայծը թռել է, մտել հոգուս մեջ,
Ու բորբոքվում է քո մի հայացքից,
Հանգիստ չի տալիս գիշեր ու ցերեկ:

Ուզում եմ տեսքդ այնպես գովերգել,
Ինչպես չի գովել դեռ ոչ մի պոետ,
Ոչ մի պատանի այդպես չի սիրել
Պաշտած էակի հոգին առհավետ:

Իսկ եթե մեղք չէ սիրելը միմյանց,
Ուրեմն օրհնված է այն Տիրոջ կողմից,
Դու մի՛ վարանիր, իզուր մի՛ տանջիր,
Քո բախտը ես եմ՝ շեմիդ մոտ կանգնած:

ԱՂԲՅՈՒՐ ԷԻՐ

Աղբյուր էիր՝ ես մանուկ,
Խաղում էի քո կողքին,
Ծարավս էի հագեցնում
Քո կուսական ակունքից:

ГАУ РК "Медиацентр им. К. Гаспринского"

Քեզնից հետո բազմաթիվ
Նոր աղբյուրներ ես գտա,
Պղտորվեցին վաղ թե ուշ,
Քեզ պես զուլալ չգտա:

Աղբյուր էիր դու մաքուր,
Իսկ ես՝ մանուկ պարզունակ,
Դու մնացիր իմ հոգում,
Հեռվից կանչող իմ զանգակ:

ՇԱՏԵՐԻ ՊԵՍ

Դու մի՛ կանգնիր, անցիր-գնա
Շատերի պես անտարբեր,
Սրտիս գիրքը չես հասկանա,
Այն դեռ ոչ ոք չի բացել:

Պատահում է, որ շատ հաճախ
Ինքս ինձ չեմ հասկանում,
Դու էլ անցիր՝ գլուխդ կախ,
Սիրտս ես խոցում, բայց ինչո՞ւ:

Եթե կարդաս հոգուս գիրքը՝
Կիսատ թողած կփակես,
Իսկ քո սիրած լավ հեքիաթը
Իմ գրքի մեջ չփնտրես:

Դու մի՛ կանգնիր, անցիր-գնա
Շատերի պես անտարբեր,
Հազարներից մեկը կգա.
Ավա՛ղ, այդ մեկը դու չես:

ՆՎԻՐՈՒՄ

Աքսենյային՝ ծննդյան օրվա առթիվ

Հիսունհինգ ծաղկով ծաղկեփունջ դարձած՝
Իմ սեր առաջին, համբույր կուսական,
Մեր մայր Արցախի աղբյուրն ես զուլալ՝
Բերքից կռացած ծառը մայրական:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Քո չորս ճյուղերի հենարանն եմ ես,
Ու լուսաբացից մինչև երեկո
Ցապից պահպանող քո ստվերն եմ ես,
Քո արմատն եմ ես հողում քարքարոտ:

Մեղքերս ներող միակ սուրբն ես դու՝
Պղտորը մաքրող, զովություն տվող,
Լեռներից հոսող մեր Թարթառն ես դու՝
Երբեմն խաղաղ, երբեմն ըմբոստ:

Մեր ճամփան մեկն է՝ ուրիշը չկա,
Իմ ուղին միշտ էլ դեպի քեզ կգա,
Մեզը շատ շուտ է ցրվում լեռներում.
Անձրևից հետո ծիածան էլ կա:

ԳՈՂ ԱՂՋԻԿ

Դու գող ես եղել, ա՛յ սիրուն աղջիկ՝
Գարնան վարդերի գույնն ես գողացել,
Այտերդ գոհար, շուրթերդ փնջիկ
Արշալույսների ցողն է լվացել:

Դու գող ես եղել, ա՛յ սիրուն աղջիկ՝
Սարի եղնիկի քայլքն ես գողացել,
Արևի շողն է աչքերում քո ջինջ,
Աշնան զույգ նուռն ես քո ծոցում պահել:

Դու գող ես եղել, ա՛յ սիրուն աղջիկ՝
Մի խեղճ պոետի սիրտն ես գողացել,
Ավա՛ղ, քուն չունի նա գիշեր-ցերեկ,
Սիրուց խենթացած՝ գուսան է դարձել:

ՀԱՅԻ ԱՂՋԻԿ

Հայի աղջիկ, թուխ աղջիկ,
Սևիկ-մևիկ զույգ աչիկ,
Դու լեռներից ցած իջած
Կրակ բերող հրեշտակ:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Հայի աղջիկ, նուրբ աղջիկ,
Նամուս պահող սուրբ աղջիկ,
Հայ տղային արժանի
Տատի գործած գորգ աղջիկ:

Հայի աղջիկ, զարդ աղջիկ,
Վարդերի մեջ՝ թագ աղջիկ,
Ով քեզ թողնի, հեռանա,
Սրտում հավետ դաղ, աղջիկ:

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Գարնան առաջին ծաղկին է նման առաջին սերը,
Առաջին դասի զանգին է նման առաջին սերը,
Առաջին «կարմիր» հինգին է նման առաջին սերը,
Երբեմն էլ տխուր «երկու» է դառնում առաջին սերը:

Միշտ անմոռաց է մնում քո սրտում առաջին սերը,
Քո կյանքի գրքից երբեք չի ջնջվում առաջին սերը,
Անգամ մերժվածը քաղցր է հիշում առաջին սերը:
Քո արտասանած առաջին բառն է առաջին սերը,
Քո ճանապարհի առաջին քայլն է առաջին սերը,
Առաջին խմած գինու բաժակն է առաջին սերը,
Առաջին անգամ հարբած լինելն է առաջին սերը:

Գրքի էջերում չորացած վարդն է առաջին սերը,
Կույս շրթունքների քաղցր համբույրն է առաջին սերը,
Երբեմն գտած քո միակ զանձն է առաջին սերը,
Երբեմն էլ կորցրած ամենաթանկն է առաջին սերը:

ՍԻՐՈ ՊԱՀԸ

Երբ հոգիդ թևում, թռչել է ուզում,
Երբ դու չես խորշում նույնիսկ կարիճից,
Երբ քարն անհոգի՝ շնչել է ուզում,
Ուրեմն, անկասկած, սիրում ես մեկին:

ГАУ РК "Объединенный им. И. Гаспринского"

Երբ քունն աչքերիդ մոտիկ չի գալիս,
Երբ երազներդ քեզ հյուր չեն գալիս,
Երբ սիրտդ հուզվում, ալիք է տալիս՝
Ուրեմն սերդ մոտիկ չի գալիս:

Երբ բոլորի մեջ մեկին ես տեսնում,
Նրա մեջ վատը լավ է երևում,
Գահճոը աչքիդ բարդի է թվում.
Այդ սիրո ուժն է այդպես կուրացնում:

Եթե մերժումի խոսքեր ես լսում
Եվ իրականը տեսնել չես ուզում,
Հիասթափվում ես, ապրել չես ուզում,
Ուրեմն սրտում էլ սեր չես զգում:

ԵՐԳ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Ես աղբյուր էի վարար ու մաքուր,
Դու եղնիկի պես խմեցիր, փախար,
Պատկերդ հավերժ թողած իմ հոգում՝
Մի կում արեցիր ու սիրտս տարար:

Շատ սպասեցի, թե նորից կգաս,
Շոգից ծարաված՝ ինձ կկարոտես,
Գիշեր ու ցերեկ երգ ձոնեցի քեզ,
Բայց դու գնացիր՝ չկա՛ս ու չկա՛ս:

Լեռներում վազիր, ինչքան որ կուզես,
Իսկ երբ ծարավես՝ սպասում եմ քեզ,
Քայլերիդ ձայնին ես միշտ կսպասեմ,
Միայն թե ուրիշ աղբյուր չփնտրես:

Ես աղբյուր էի մաքուր ու վարար,
Դու եղնիկի պես խմեցիր, փախար,
Եթե ծարավես՝ դեպի ինձ վազիր,
Ա՛խ, դու ջրի հետ հանգիստս տարար:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ

Քո վարդի բույրը ինձ կխենթացնի,
Ո՛վ դու երազանք, իմ չքնաղ փերի,
Գիշեր ու ցերեկ կարոտ եմ տեսքիդ,
Գուսանը մեղք է, այդքան մի տանջիր:

Նայիր կարոտած իմ աչքերի մեջ,
Թող սերը մերվի մեր սրտերի մեջ,
Հազար ծաղիկ էլ փռվի իմ առաջ՝
Ընտրածս դու ես հազար ծաղկի մեջ:

Հեռու մի՛ գնա, արի՛, սիրելի՛ս,
Ես խենթանում եմ ստվերիդ տեսքից,
Գրկումս թող զգամ խփոցը սրտիդ,
Իմ սրտի զարկն էլ քեզ տամ, նազելի՛ս:

Քո մասին են լոկ իմ նոր երգերը,
Հազարների մեջ ես քեզ եմ փնտրում,
Ինչքան էլ եկար լինի գիշերը,
Արշալույսին եմ քո միշտ սպասում:

ԱՂՈԹՔ

Բռնեմ յարիս սիրուն կուռը,
Գնամ հասնեմ վանքի դուռը,
Սուրբ խորանի առաջ կանգնենք,
Մեր սերն օրհնի Տիրոջ աջը:

Ու դեռ տարին չբոլորած՝
Սերս դառնա հրաշք մանուկ,
Որ շատանա ազգը մեր հայ,
Հայրենիքն իմ հզորանա:

Տե՛ր, կատարիր իմ ուզածը,
Բարով թող գա իմ սիրածը,
Տունս լցվի մանկան ճիչով,
Մեզ ապավեն մեր սուրբ խաչը:

ГАУ РК "Национальная б-ка им. М. Горького"

Մայրս՝ տատիկ, հայրս՝ պապիկ,
Դառնանք ամուր մի ընտանիք,
Հայոց երկրին՝ բերք ու բարիք,
«Սփյուռք» բառն էլ թող չլինի:

ՍԵՐԸ

Դատարկ է օրն այն, երբ քեզ չեմ տեսնում,
Խուլ եմ ես օրն այն, երբ քեզ չեմ լսում,
Ճաքած շուրթերս՝ ծարավ համբույրիդ,
Առանց քեզ, անգի՛ն, ասես չեմ ապրում:

Ամպոտ է նույնիսկ արևոտ օրը,
Ասես սարերից իջել եմ ձորը,
Հարբածի պես եմ քայլում փողոցով,
Գերի ձկան պես ընկել եմ թոռը:

Չգիտես՝ ինչու գովում են սերը,
Նրան օրհում է նույնիսկ տերտերը,
Բայց մինչև կգա երջանիկ օրը,
Հիվանդանում են ջահել սրտերը:

Ինձ թվում է, թե ես եմ միակը,
Միայն իմ սիրտն է վառում կրակը,
Թեկուզ բոլորն են տանում այդ ցավը՝
Օդում թռչողը, գետնին քայլողը:

Սիրում է նույնիսկ վառ արեգակը,
Նրան գերել է մեր մոլորակը,
Նույնիսկ արփին է խավարում մեկ-մեկ,
Երբ ամպն է ծածկում սիրածի դեմքը:

Սիրտս արև չէ, դու մոլորակ չես,
Սակայն, սիրելի՛ս, դու ինձ հավատա՛,
Մեզ համար արև կդառնա սիրտս,
Եթե մոլորակ դառնաս ինձ համար:

ГАУ РК "Медиацентр им. М. Гасиринского"

ԵՐԱԶՈՒՄ

Երազում ինձ միշտ համբույր ես տալիս,
Երբ պատմում եմ քեզ՝ ասում ես. «Գիժ ես»:
Աչքերս եմ փակում՝ իմ գիրկն ես գալիս,
Ցերեկը՝ տեսնում, ինձնից փախչում ես:

Ա՛խ, դու մինչև երբ ինձ պիտի խաբես,
Գիշերները գաս՝ վզիս փաթաթվես,
Իսկ ցերեկները ասես. «Օտար ես».
Խիղճ ասած բառը մի՞թե չգիտես:

Արի՛, դու արա ճիշտ հակառակը՝
Երազում եղիր թեկուզ դահիճս,
Իսկ իրականում՝ միակ փրկիչս,
Հենց դա կլիներ ամենաճիշտը:

Ասա՛, սիրելի՛ս, ո՞րն է իմ մեղքը՝
Գնամ, մեղա գամ, վառեմ մոմերս,
Թե որ երազ ես՝ բավ է տանջանքը,
Թե իրական ես՝ մի մերժիր սերս:

Երազում ինձ միշտ համբույր ես տալիս,
Որտե՞ղ ես եղել խիղճ բաժանելիս,
Աչքերս եմ բացում՝ չկաս իմ կողքին,
Ինձ հետ մի՛ խաղա, մի՛ տանջիր հոգիս:

ՄԻ ՀԵՌԱՆԱ

Կարկաչում են աղբյուրները՝
Ինչպես սիրո համբույրները,
Մի՛ հեռանա դու ինձանից՝
Կթառամեն ծաղիկները:

Հալվեց սարի ճերմակ ձյունը,
Շուրթիս մնաց քո համբույրը,
Մի՛ հեռանա դու ինձանից,
Թող որ հալչի սրտիդ ձյունը:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Ամպը ամպին տվեց համբույր,
Համբույրդ տուր քո խնկաբույր,
Պետք չէ՝ կայծակ ծնվի մեզնից,
Թող որ ծնվի հրաշք մանուկ:

Կարկաչում են աղբյուրները,
Թող շատ լինեն համբույրները,
Մի՛ հեռանա, յա՛ր, ինձանից,
Թող ծով դառնան մեր գետերը:

Կա մի հրաշք, անունը՝ սեր,
Չեն դիմանում սրտերը մեր,
Չեն դիմանում քարեր ժեռ,
Անգամ ջուրը դառնում է սեր:

Քո անունը՝ ինձ համար սեր,
Տե՛ս, չլինես իմ սրտին բեռ,
Նեցո՛ւկ եղիր՝ ոչ ձգող կեռ,
Իմ ձմռանը գարուն դու բեր:

ԸՆԿԵՐՈՋՍ ՑԱՎԸ

Նվիրում եմ Ս. Խաչատրյանին

Քեզ ոչ մի անգամ ես չեմ համբուրել,
Չեմ գրկել, որ քո բույրը ըմբոշխնեմ,
Քո մարմնին մարմար՝ մատս չի դիպել,
Բայց քեզ սիրեցի, ինչո՞ւ՝ չգիտեմ:

Դու քո մարմինը այլոց տվեցիր,
Իսկ սերը ինչո՞ւ դու ինձ թողեցիր,
Թե հոգուդ խորքում ինձ էիր սիրում,
Ինչո՞ւ ես այժմ ուրիշի գրկում:

Գիտեմ՝ զղջում ես արածիդ համար,
Բայց այն ժամանակ սիրուս տեղ չկար,
Այժմ հեռու ես՝ ինչպես արեգակ,
Այս կյանքում չկամ, ավա՛ղ, քեզ համար:

ГАУ РК "Национальный центр им. Г. Гаспринского"

Օտարի պես ենք բարևում իրար,
Երբ հանդիպում ենք մենք պատահաբար,
Բայց ես լավ գիտեմ՝ քո հոգու խորքում
Ինչ ալիքներ են հոգիդ փոթորկում:

Կգա նոր սերը, կհաղթի նա քեզ,
Կմնաս որպես քաղցր մի երազ,
Դու՝ հեռո՛ւ, հեռո՛ւ, օտարի գրկում,
Իսկ մեկ ուրիշն էլ ինձ է լոկ սիրում:

ԻՆՉ Է ՍԵՐԸ

Սեր կա իսկական,
Սեր կա գրական,
Ճատերի համար՝
Միայն բեմական:

Սեր կա, որ կիրք է,
Սեր կա, որ կյանք է,
Ճատերի համար
Տուն քանդող զենք է:

ԼԵԶՈՒՆ ՈՒ ՍԻՐՏԸ

Լեզուն ասաց.
– Քեզ սիրեցի՛:
Իսկ սիրտն ասաց.
– Շտապեցի՛ր:
Լեզուն ասաց.
– Կյա՛նքս կտամ:
Իսկ սիրտն ասաց.
– Շա՛տ ստեցիր:

* * *

Բեմից երգում է.
– Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ,
Գրպանն է լցնում
Ու նորից խաբում:

* * *

Թե որ մեկին դու շա՛տ-շա՛տ ես սիրում,
Ճիշտ խոսի, թե սուտ՝ շուտ ես հավատում,
Սրտիդ ուզածը նրա մեջ ես գտնում,
Ուրիշի աչքով նայել չես ուզում:

ГАУ РК "Медиацентр им. К. Распринского"

ՉԻ ԹՈՇՆԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Առաջին սերը այն ձնծաղիկն է,
Որը բացվում է գարնան սկզբին,
Նրա թերթերին կիջնեն ցուրտ օրեր,
Աշունն է ժպտում միայն քչերին:

Եվ անմոռաց է առաջին սերը,
Սակայն քչերն են այն միշտ պահպանում,
Իսկ շատերի մոտ մնում է հուշը,
Բայց, ավա՜ղ, արդեն շատ ուշ է լինում:

Ամեն տարիքում սերը չքնաղ է,
Բայց առաջինը նուրբ է բոլորից,
Այն միշտ կրքոտ է, մաքուր ու անմեղ
Ու չի թառամում քո կյանքի ցրտից:

Առաջին սերը քո մանկությունն է՝
Արևից խաբված ծաղիկն առաջին,
Պահիր, պահպանիր՝ նա միայն քոնն է,
Ու շատ մի տրվիր վարդի փնջերին:

Առաջին սերը ծաղիկն է գարնան,
Թե անգամ այնտեղ համբույր էլ չկա,
Դա այն ծաղիկն է, որ հոգուդ մեջ է,
Եվ այն չի թոշնի, քանի ապրում ես:

ԻՍԿԱԿԱՆ ՍԵՐԸ

Իսկական սերը՝ առաջին սերն է.
Անմեղ ու մաքուր պատանու հույզեր,
Երբ կրքերը դեռ չեն սանձազերծվել
Երբ «սիրել» բառն է ամեն ինչից վեր:

Երբ տեսնում ես՝ նա ինչպես է քայլում,
Դու մոռանում ես նույնիսկ շունչ քաշել,
Երբ գիշերները, լուսնի փոխարեն,
Նրա պատկերն ես դու անվերջ տեսնում:

ГАУ РК "Медиатека им. К. Каспринского"

Երբ հարզատ է անունը դառնում,
Երբ ամեն հազուստ սազում է նրան,
Երբ փակ աչքերով այն տունն ես գտնում,
Որտեղ քո սիրած էակն է ապրում:

Երբ նստարանին կամ ծառի բնին
Նրա անունն ես դու միայն գրում,
Երբ գիրք ես բացում՝ դաս սովորելու,
Նրա պատկերն է հառնում էջերից:

Երբ շատ դժվար է քեզ արտասանել
Բառերի շարքը. «Ես սիրում եմ քեզ»,
Երբ ծանրությունը ոչ թե ուսիդ է,
Այլ լեզվիդ ծայրին՝ մի սար է ասես:

Երբ շուրթերն են լուռ՝ հայացքն է խոսում,
Նրան տեսնելիս՝ աչքերդ են փայլում,
Իսկ նրա մասին վատ խոսք լսելիս՝
Հարազատն էլ է թշնամի դառնում:

Երբ նրա մատին մատանի չկա,
Իսկ նրա սրտում ուրիշը չկա,
Երբ նա էլ քեզ պես գիշերներն անքուն
Քո մասին է լոկ անվերջ մտածում:

Երբ որ առաջին սիրո բառերը
Շարադրվում են նամակների մեջ,
Մինչև կհասնի քեզ պատասխանը,
Թվում է, կարծես, դարեր են անցել:

Դա է իսկական սերը պատանի,
Որ հոգուդ մեջ է՝ ջինջ, անապական,
Նրա հետ կապրես, թե մեկ ուրիշի՝
Անցած հուշերը կապրեն մշտական:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

* * *

Մեկին սիրեցի, իսկ նա ինձ մերժեց...
Տարիներ հետո, երբ հանդիպեցինք,
Աստծուն փառք տվի, որ իմ կինը չէ.
Շատ էր կնճռոտվել դեմքը սիրելի...

Իսկ երբ հայելում ինքս ինձ տեսա,
Հասկացա՝ ես էլ Ապոլոնը չեմ,
Ինձ սթափեցրեց ալեհեր ներկան,
Ափսոսեցի, որ նա իմ կինը չէ:

ՍԻՐՈ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելը շատ է վնաս մեր կյանքին,
Նա նախ տիրում է մտքիդ ծալքերին,
Հետո պղտորում քո անմեղ հոգին,
Գույներն է փոխում կյանքիդ պատկերի:

Գիշեր ու ցերեկ հանգիստ չի տալիս,
Սիրտդ դառնում է, ասես, անծանոթ,
Անկախ քեզանից՝ նրան տեսնելիս
Նրան ես նայում անթարթ հայացքով:

Նա գեղեցիկ է կամ էլ՝ ոչ այնքան,
Քեզ հրեշտակ է թվում երկնային,
Քո առաջարկը թե հանկարծ մերժի՝
Կույլ կգա ցավից ամեն մի մկան:

Սիրելը շատ է վնաս քո կյանքին,
Թե աղքատ հալով սիրես հարուստին,
Եվ քո ապագան հեշտ է գուշակել,
Թե ծակ գրպանդ՝ քո ձեռքը տանես:

Աչքերով սիրիր, ինչքան կարող ես,
Նույնիսկ թագուհուն՝ թե հնար ունես,
Անվնաս սերը հենց դա է, որ կա,
Ամենակարող եթե դու լինես:

ГАУ РК "Национальная б-ка им. М. Горького"

Սերը չի հարցնում հարուստ ու աղքատ,
Գալիս է, տիրում քեզանից անկախ,
Մինչև գլխի ես ընկնում՝ սխալ է,
Անբուժելի է դառնում նա հաստատ:

Այդ ցավին ոչ մի սպեղանի չկա,
Նույնիսկ երազում քեզ հանգիստ չկա,
Եթե սիրածիդ քո չափ խելքն ունի,
Էլ դրանից լավ ոչ մի ցավ չկա:

ՄԱՐԴԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՂԲՅՈՒՐԸ

Աղբյուրը լեռան կոնքից է ծնվում,
Ակունքում զուլալ, մաքուր է լինում,
Ափսո՛ս, որ այդպես հավերժ չի մնում.
Շատ շուտ է նրա ջուրը պղտորվում:

Եվ մարդ, և գազան, սողուններ բազում
Նրա ջրով են ծարավ հագեցնում,
Իսկ հետո իրենց կեղտն են լվանում՝
Պղծում, պղտորում, թողնում-հեռանում:

Աղբյուրը տխրում՝ առու է դառնում,
Մեկ քար է լիզում, մեկ տակ է տալիս,
Կեղտը ավազին, քարին է թողնում,
Հողին և բույսին նա կյանք է տալիս:

Շատ աղբյուրներ են ճամփին ցամաքում՝
Կյանք են պարգևում՝ իրենք մահանում,
Քչերն են միայն գետերով հոսում,
Իրենց երազած մեծ ծովն են թափվում:

Իսկ երբ վերջապես նրան են հասնում,
Արդեն դառնահամ, աղի են լինում,
Ալիք են տալիս, դեպի ափ ձգտում՝
Դեպի ակունքը բարձր սարերում:

ГАУ РК "Музей-усадьба И. Гаспринского"

ԳԱՐՆԱՆ ԱՆԶՐԵՎ

Թռավ կաթիլն ամպի թևից,
Ընկավ, կախվեց ծաղկաթերթից,
Խուտուտ տվեց մեղուն ծաղկին,
Նեկտարն առած՝ փախավ վախից:

Ամպը գոռաց ամբողջ ուժով,
Անձրև թափեց՝ ասես կժից,
Քամին ուժը փորձեց ծառի,
Գետն առվակին կանչեց ժողով:

Կայծակ զարկեց՝ ծառին հասավ,
Ու խաչ հանեց պառավ նանը,
Մարդ ու գազան փախան, պրծան,
Մի կերպ բնին հասավ հավքը:

Ամպը հոգնեց լաց ու կոծից,
Վառ արևի շողից հալվեց,
Ծիածանը թաց երկնքում
Սիրամարգի թևը պարզեց:

Հողից ելավ թեթև մշուշ,
Մանուշակը ժպտաց քնքուշ,
Վաղուց կարոտ տաք անձրևի՝
Հողը խմեց կուշտ ու անուշ:

Թող ամեն ինչ լինի տեղին,
Կարկուտ չգա դաշտ ու բաղին,
Աշնան բերքը առատ լինի.
Խաղաղ տարի հայոց հողին:

ԶՄԵՌԸ

Զմեռն եկավ, գրկեց ծառին,
Ճերմակ սավան փռեց հողին,
Տատը ելավ, նստեց թախտին,
Թելերն առավ, զոռեց ճաղին:

ГАУ РК "Медиатека им. Н. Г. Аспринского"

Կատուն նստեց տատի գոգին
Ու մռմռաց բեղի տակին,
Մուկը փախավ դրսի ցրտից,
Լիքը պարկը ծակեց տակից:

Շուտով գարուն կգա նորից,
Կանաչ ծիլը կելնի հողից,
Եթե մկան բախտը բերի՝
Դուրս կպրծնի կատվի ճանկից:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԱՐՈՏ

Քանի՛ անգամ եմ գալուդ սպասել,
Քանի՛ անգամ եմ քեզ դիմավորել,
Բացվող կոկոնդ շոյել, գուրգուրել,
Քեզ հետ նոր կյանքի հույս եմ փայփայել:

Ձմեռվա սառը տաղտուկից հոգնած,
Դու ինձ մոտ եկար՝ ինչպես դիցուհի,
Ինչպես առաջին սերն իմ անմոռաց,
Ջահել օրերի համն իմ համբույրի:

Քո ձնծաղիկն էլ առաջին՝ բացվեց՝
Ինչպես դեռահաս անմեղ աղջիկը,
Մանուշակների կապույտը բուրեց,
Վազի աչքերից կախվեց ջրիկը:

Անկախ ինձանից՝ սիրտս թրթռաց,
Դարձավ թևավոր, անցյալը հիշեց,
Մի պահ մոռացած տարիներն անցած,
«Պատանի» հոգիս բուռն ալեկոծվեց:

Մոտեցող գարուն, գալուստդ բարի,
Թող էլ չտեսնենք մենք ցավ ու արյուն,
Բոլորի սրտում բարին թող ծաղկի,
Թող սերը դառնա արագիլի բույն:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Մենք գրկաբաց ենք քեզ դիմավորել,
Դու մեր աշխարհը բարո՛վ ես եկել,
Ու թե արցունքի հետքը երևա՝
Տեսնենք՝ ժպտացող աչքից է կաթել:

Թող որ մայրանա հողը մեծ սիրուց,
Թող ձեռքն այլևս զենքեր չստեղծի,
Անհույս հիվանդին հույսի շող բացվի,
Գարունը բերի միայն աչքալույս:

ԵՍ ԳԼԱՔԱՐ ԵՄ

Վարար գետի մեջ ես գլաքար եմ,
Ոչ թե խիճ, ավազ, այլ ժայռաքար եմ,
Վիճում եմ անվերջ վարար գետի հետ,
Նրան զսպողը և փրկարարն եմ:

Իմ կոպիտ դեմքը ջրերն են հղկել՝
Դարձել եմ նրա քարը մատանու,
Իմ գլխով հազար հեղեղ է անցել,
Բայց մնացել եմ ես միշտ իմ տեղում:

Այդ ես եմ նրա երգը հորինում,
Գետն ընկնողն ինձ է իր ձեռքը մեկնում,
Գետը փրփրում, ափերն է լիզում,
Նրա սանձերն իմ ձեռքում եմ պահում:

Գետը չի հաշտվում համառ քարի հետ,
Ավազն է թողնում հազար ու մի հետք,
Փորում է հիմքս գիշեր ու ցերեկ,
Բայց ինձ շարժելը իզուր է, անխե՛լք:

Ձկների համար ես թաքստոց եմ,
Գորտերի համար բեմահարթակ եմ,
Մարդիկ իմ մեջքով անցնում են գետը.
Ես նրանց համար նաև կամուրջ եմ:

ГАУ РК "Медиацентр им. Ш. Аспринского"

Երբ խենթանում է գետը անձրևից
Կամ ծանծաղում է ամառվա տապից,
Ջրի հոսանքում ես մերթ կորչում եմ,
Մերթ մերկանում եմ մինչև գոտկատեղ:

Կանգուն եմ այսպես՝ համառ ու արի,
Արմատով կապված հայոց լեռներին,
Քանի հեղեղ էլ իմ գլխով անցնի՝
Պատնեշ կլինեմ չարին ու դավին:

Գարնանը պղտոր խենթին եմ զսպում,
Կանգնած եմ համառ՝ ինչպես ամրություն,
Իմ հիմքը խորն է, քանդել չի լինում,
Ամուր եմ՝ ինչպես հայոց պատմություն:

ԵՐԱԶԱՆՔ

Մեզ հետ է ծնվում մեր երազանքը,
Որը տեսնում է միայն մանուկը.
Առաջին փոքրիկ մեր խաղալիքը,
Տատիկի պատմած հրաշք հեքիաթը:

Հեռու խավարում այդ պայծառ լույսը,
Որի վրա ենք մեր հույսը դնում,
Բյուր աստղերի մեջ փնտրում ենք մերը,
Մեր Աստծուն էլ ենք այնտեղ որոնում:

Հույսը կյանքի հետ միակ կամուրջն է,
Սերը գտնելու հոգու անուրջն է,
Ընտանիք պահող թելի կծիկն է,
Երբ քանդվում է՝ դա սիրո վերջն է:

Թե չես երազում ինչ-որ տեղ հասնել,
Ուրեմն կույրի պես պիտի փնտրես,
Իսկ երբ վերջապես նրան ես հասել,
Հաճախ թվում է՝ այդ չես ցանկացել:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Բայց երազանքը նման է նռան.
Բռունցքում պետք է պինդ պահել նրան,
Հազարան բլբուլ հավքի է նման.
Մեկ էլ այն տեսար՝ ձեռքիցդ թռավ:

Պանդուխտի համար դա հայրենիքն է,
Սիրահար զույգի ճոխ հարսանիքն է,
Ծատերի համար փողի տոպրակ է,
Պաշտոն սիրողի միակ սանդուղքն է:

Մեր երազանքը մեզ հետ է ծնվում,
Մեզ վերջին պահին նույնիսկ չի լքում,
Նա լույս է դառնում այն աստղի ճամփին,
Որին ձգտել ես մանուկ օրերին:

ՊԱՐՏՔԸ

Մենք ծնված օրից պարտքերի մեջ ենք.
Պարտք ենք Տիրոջը, որ մենք ծնվել ենք,
Ու դրա համար պետք է աղոթենք,
Հավատանք նրան ու մոմեր վառենք:

Նա էլ իր հերթին ունի մի պահանջ՝
Մարդ լինել կյանքում ամենից առաջ,
Քո ամբողջ կյանքում հենց այդ պատճառով
Պարտքդ պիտի տաս լուռ ու անխոռով:

Մեր ծնողներին մենք նույնպես պարտք ենք՝
Նրանք են պահել ու պահպանել մեզ,
Զրկել են իրենց, որ մեզ հասցնեն,
Մեր երջանկությամբ են նրանք ապրել:

Մեզնից ծնվածին մենք նույնպես պարտք ենք,
Այդպես շարունակ պարտք ենք ու պարտք ենք,
Մեր հայրենիքին մենք նույնպես պարտք ենք.
Պետք է մենք զոհվենք, որ պարտքից պրծնենք:

ГАУ РК "Медиацентр им. И. Тапринского"

Սիրելու դեպքում պետք է պսակվենք,
Թե պսակվեցինք՝ պետք է տուն պահենք,
Ու այդ պարտքերը մարելու համար
Գիշեր ու ցերեկ պիտի աշխատենք:

Այդ անտեր պարտքից մենք պրծում չունենք.
Թե ճարահատյալ պարտքով փող վերցնենք՝
Մնացած կյանքում չենք կարող մարել
Եվ ավելի շատ կաղքատանանք մենք:

Խեղճ ինքնասպանին Աստված չի ներում՝
Այդ պատճառով են առանձին թաղում,
Քանզի իր պարտքը՝ կիսատ մնացած,
Ապրողներին է միայն ժառանգում:

Պարտքդ փակելու միայն մի ելք կա.
Թող որ աշխարհը քեզ միշտ պարտք մնա,
Որ եթե անգամ կյանքից հեռանաս,
Մեր Տիրոջ դուռը պարտքով չգնաս:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Նվիրում եմ Սիմֆերոպոլի
հայկական դպրոցի բացմանը

Շատ դժվար է օտար հողում
Քո մայրենի լեզուն պահել,
Բայց երբ ազգդ շատ ես սիրում,
Պետք է նրան արթուն պահել:

Միշտ պահպանեք հայոց լեզուն,
Նա մեր հացն ու ջուրն է մաքուր,
Նա մեր խաչն է, նա մեր սուրն է,
Նախնիների կտակն է սուրբ:

Եթե կորցնենք մեր մայրենին՝
Ի՞նչ պատասխան տանք այն հարցին,
Թե՝ ի՞նչ ազգ ենք, ո՞ր երկրից.
Կկարմրենք մենք ամոթից:

ГАУ РК "Меджлис имени И. Гаспринского"

Օտար լեզվով խոսել, գրել…
Դա պարծանք է, կասկած չկա,
Բայց հայերեն պետք է խոսել
Ու մտածել՝ չմոռանա՛ս:

ԿԱՔԱՎԸ ԵՐԳԵՑ

Կաքավը երգեց մեր սարի լանջին,
Ու ձայնը հասավ գարնան ականջին,
Հողը, կարոտած արևի պաչին,
Ուսից դեն նետեց ձյունե յափնջին:

Սերմը տաքացավ արթնացած հողում,
Զարմացած նայեց, թե ինչ կա դրսում,
Սկզբում ցրտից դողում էր, մրսում,
Արևին խնդրեց, որ անի մերսում:

Արևն ուղարկեց տաք շողի փունջը,
Արթնացավ արջը, քաղցր հորանջեց,
Ձմեռը տեսավ՝ եկել է վերջը,
Դեպ հյուսիսային որջն ուղևորվեց:

Գարունը տեսավ՝ չի բուրում հողը,
Մանուշակներին բուրմունք նվիրեց,
Մեղուն էլ տեսավ՝ քիչ է նեկտարը,
Թռավ, ծաղկի մեջ ոտքը թաթախեց:

Մշակը բացեց սև հողի կուրծքը,
Այգում ծիլ տվեց խաղողի վազը,
Հեռվից տուն եկավ չված թռչունը,
Գետն էլ սկսեց իր ախն ու վիշը:

Հոնին անտառում շտապեց ծաղկել,
Առվակի վրա լացեց ուռենին,
Անտառի մեջքը տաք քամին շոյեց,
Սինձ ու ձնծաղիկ դուրս եկան հողից:

ГАУ РК "Национальная им. М. Распринского"

Կռիվ սկսվեց մռայլ երկնքում.
Կառապանները կառքեր են վարում,
Հրե մտրակը ամպերն է ճեղքում,
Հզոր կայծակն է իր ուժը փորձում:

Աղջիկը հագավ զգեստը գարնան,
Տղայի սիրտը թրթռաց հանկարծ,
Ոսկե մատանի նվիրեց աղջկան,
Որ իր տուն տանի սերը երազած:

Ձոքանչը ասաց. «Նա լավ ազգից չէ»,
Անները պնդեց. «Նա քո թայը չէ»:
Տղան էլ տեսավ՝ ուրիշ ճար չկա,
Փախցրեց աղջկան՝ սիրում էր անչափ:

ԺԱՅՌԸ

Ասում են՝ ժայռը սիրտ չունի բնավ,
Նա ժայռ է միայն և ուրիշ ոչինչ,
Բայց ես չեմ ուզում հավատալ դրան.
Ժայռին աճել են և խոտ, և ծաղիկ:

Ասում են՝ ժայռը չոր է ու կոպիտ,
Քարը չի կարող արտասվել ցավից,
Չեմ ուզում լսել կարծիքներ անմիտ.
Ժայռը փայլում էր վաղորդյան ցողից:

Ասում են՝ ժայռը չի կարող սիրել,
Մարդուն է տրված միայն սերը սուրբ,
Չեմ կարող դրան հավատալ երբեք.
Նրա ծերպերում վարդեր կային նուրբ:

Ասում են՝ ժառը սիրտ չունի բնավ,
Ու նա բարկանալ չի կարող երբեք,
Դուք էլ ինձ նման փորձեք հավատալ.
Ժայռը, իմացե՛ք, կարող է ժայթքել:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

ՍԱՐՆ ՈՒ ԳԵՏԸ

Անցավ ձմռան ցուրտն ու բուքը,
Բացվեց սարի աչքն ու ունքը,
Ծաղկով պատվեց սարի լանջը,
Հավքը երգեց գարնան երգը:

Սարը քամուն իր մոտ կանչեց,
Ասաց. «Չոր է կոկորդս շատ,
Իջիր ձորը, գետից ջուր բեր,
Շա՛տ եմ խնդրում, թող պարտքով տա»:

Քամին հասավ գետի ափը,
Քաշեց գետի ջրի քափը,
Ջուրը դարձավ թեթև մշուշ,
Ձորից հասավ վերին տափը:

Սարը խմեց սառը ջուրը,
Քրտնեց շոգից, հանեց շորը,
Ձորում սաստիկ նեղվեց գետը,
Քամուն հանձնեց իր բողոքը.

– Սարին ասա՝ իր պարտքը տա
Եվ օրենքի կետը հարգի,
Ինչո՞ւ պիտի ինքը ծաղկի,
Ես ցամաքեմ, առու դառնամ:

Սարը գոռաց. «Ես պարտք չունեմ,
Թե իրեն տամ, ես ի՞նչ խմեմ,
Ամպ եմ շինել, դաշտ ուղարկել,
Ես այգիներ պիտի ջրեմ»:

Այնքան գոռաց՝ հերսից քրտնեց,
Այդ քրտինքն էլ լանջով հոսեց,
Հասավ գետին ու վարարեց,
Ափ ու քարին համբույր տվեց:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гасринского"

ԱՇՈՒՆ

Աշունը իր հետ թախիծ է բերում,
Ուզեմ, թե չուզեմ՝ ծառին եմ նայում,
Տերևաթափի վկան եմ դառնում,
Բոլորի առաջ կարծես մերկանում:

Դեղնած տերևը լացում է, շրշում,
Ասես ցավով է իր ծառից պոկվում,
Բաժանման ցավը ինձ էլ է պատում
Ուզեմ, թե չուզեմ՝ Տերյան եմ դառնում:

Իմ կյանքի այգում նույնպես աշուն է.
Օրերս են դեղնում տերևների պես,
Ու ծառս կանաչ, հագած բազում գույն,
Անխուսափելի ձմռանն է սպասում:

Սակայն դեռ ողջ է ծառն իմ ծերացած,
Արմատներս պինդ մայր հողն են գրկում
Նա չի վախենում ցրտերից ձմռան.
Գարուն կբացվի նորից իմ այգում:

ԻՆՉ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ես մեր այգու թութն եմ սիրում,
Ճաք պռոշով թուզն եմ սիրում,
Տաք ժայռերի դոշին կպած
Վայրի, թթու նուռն եմ սիրում:

Վազի քաղցր ճութն եմ սիրում,
Մանուկների ճիչն եմ սիրում,
Ընկուզենու ծառի տակի
Սառը ջրի շիթն եմ սիրում:

Այգիների բարն եմ սիրում,
Էն անկեզու քարն եմ սիրում,
Սիրահար եմ, ես ի՞նչ անեմ,
Իմ հայի աղջիկ յարն եմ սիրում:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

ԿՅԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԱՅՐՍ

Մայրս իր բաժին համեղ պատառը
Թաքուն դնում էր իմ ափսեի մեջ.
Ես կարծում էի՝ այն է պատճառը,
Որ նա չի սիրում միսը ճաշի մեջ:

Ի՜նչ իմանայի իմ տհաս խելքով,
Որ նույնիսկ լիներ վերջին պատառն էլ,
Ինքը չէր ուտի, ինձ կտար սիրով.
Ինչպե՞ս հասկանալ. պետք է մայր լինել:

Մոր ձեռքով տված մի կաթիլ ջուրը
Կյանք կպարգևի հիվանդ զավակին,
Կտա իր կյանքը, երջանկությունը,
Միայն զավակի ցավը չտեսնի:

Ինչքան հուսահատ նա պիտի լինի,
Որ որդուն թողնի բախտի դռանը,
Հետո իր համար լավ կյանք վայելի.
Նա՞ է մեղավոր, թե՞ դառը կյանքը:

Մայրը ազգ չունի կամ օտար լեզու,
Կարևոր չէ, թե մաշկն ինչ գույն ունի,
Բոլորի համար, բոլորին հասու
Մայրական բնազդ գոյություն ունի:

ԸՆԿԵՐՈՋՍ

Ս. Յախշինյանին՝
ծննդյան օրվա առթիվ

Նորից քեզ գտա, իմ բարի ընկեր,
Եվ մանկությունը ետ դուռը բացեց,
Տարավ դեպի գյուղ՝ անցյալի հուշեր,
Ընկերներ գտա ես՝ կորած քո մեջ:

ГАУ РК "Национальная библиотека Гаспринского"

Ցավով եմ նայում ճերմակ մազերիդ,
Որոնք նոսրացան քո կյանքի բովում,
Ձեռքս տանում եմ ես ակամայից
Ճաղատ իմ գլխին ու դառը խնդում:

Մենք ինչ-որ մի տեղ նույն բախտը ունենք՝
Անհայր մեծացանք, թիկունք չունեցանք,
Քարեր հարթելով՝ ճամփա բացեցինք,
Եվ թվում էր, թե պահն է՝ շունչ քաշել:

Բայց «Ոչ», – մեզ ասաց գուշակը դաժան, –
«Ինչ ունես՝ միայն դրան ես արժանի,
Սիրել ես, ունես ժառանգներ բարի»:
Նորից փորձության տարիներ եկան:

Պատերազմ տեսանք, տուն ու տեղ կորավ,
Կյանքը մեզ տարբեր երկրներ տարավ,
Մեր հայրենիքը մնաց շատ հեռվում,
Հարազատ մարդիկ զոհվեցին կռվում:

Տարիներ հետո նորից քեզ գտա,
Կարծես անցյալը ետ վերադարձավ,
Ժպտացինք իրար, փառք տվինք Աստծուն,
Որ կորցրածից մի մասնիկ գտանք:

Եղիր դու առողջ ու երկար ապրիր,
Թոռներիդ համար լավ պապիկ եղիր,
Կյանքիդ ընկերը միշտ կողքիդ լինի,
Մեզ էլ, ի՛մ ընկեր, դու մի՛ մոռացիր:

Ես ուրիշ նվեր չեմ կարող տալ քեզ,
Բայց իմ տողերը սրտանց են, անկեղծ,
Իմ բարի՛ ընկեր, իմ գտա՛ծ ընկեր,
Կցանկանամ, որ հարյուրի հասնես:

ՄԱՅՐՆ ԱՄԵՆ ԻՆՉ Է

Մայր ենք ասում՝ վերջ,
Էլ ուրիշ ոչինչ,
Նա լույս է անշեջ,
Տվել է մեզ շունչ:

ГАУ РК "Национальная библиотека Гаспринского"

Մայր ենք մենք ասում,
Սուրբ ենք հասկանում,
Մայր հող ենք ասում,
Նույնն ենք հասկանում:

Մայրը ազգ չունի,
Երբ զավակ ունի.
Աստվածամայր է,
Հզոր ուժ ունի:

Տոն է, թե տոն չէ՝
Դա կարևոր չէ,
Եթե մայրդ կա՝
Նա ամեն ինչ է:

ԲԱՐԻ՛ ՃԱՆԱՊԱՐՀ

Սերգեյ Ամիրջանյանին

Բարի՛ ճանապարի դեպի հայրենիք,
Իմ բարի՛ ընկեր, գրչակի՛ց ընկեր,
Գարուն է՝ զարթոնք հիմա շուրջը մեր,
Մեզանից զարնան շունչ տար հայրենիք:

Մայր Երևանի մայթով քայլելիս՝
Աշխատիր մի պահ մեր աչքով նայել,
Իսկ զոհվածներին պսակ դնելիս՝
Մեր կողմից նույնպես գլուխ խոնարհիր:

Ծիծեռնակները գարնանն են գալիս.
Նորոգիր բույնդ քո տան օճորքում,
Թող մենք էլ մի օր, Ղրիմը թողած,
Իրար հանդիպենք մայր հայրենիքում:

ԻՆՔՍ ԻՆՁ

Դու այս աշխարհում ի՞նչ տեսար, ասա՛,
Արամի որդի, Միքայել տղա,
Գովքի արժանի մի դրախտ է սա
Եվ փորձաղաշտ է՝ ով որ դիմանա:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Դժվար մանկություն՝ լի զրկանքներով,
Անհայր, կիսաորբ, սին երազներով,
Որ ամոքվում էր մանկան խաղերով,
Բավարարվում էր նվազագույնով:

Աչքդ բացեցիր՝ կողքիդ մայրդ չէր,
Նույնիսկ հարազատ քո արյունը չէր,
Բայց, ամեն դեպքում, նա քեզ չլքեց,
Իսկ հարազատդ քո հարևանն էր:

Պատճառը, գուցե, հորդ կորուստն էր,
Դժվար ապրուստի հուսահատ քայլն էր,
Իրավուք չունես, գուցե, դատելու,
Բայց դա ստացած առաջին վերքն էր:

Դառը մանկություն, չար հիվանդություն
Ու երես թեքած կեղծ ընկերություն,
Նույնիսկ՝ քեզ լքած մայր, եղբայրություն,
Թերի մնացած դպրոց, կրթություն:

Բայց եղավ հրաշք. Տերը քեզ օգնեց,
Քո աղոթքները վերջապես լսեց,
Մտքիդ լույս տվեց՝ դուրս գալ խավարից,
Ապրելու կամքդ ամենքին հաղթեց:

Դու այս աշխարհում ի՞նչ տեսար, ասա՛,
Դժվար ճանապարհ կտրեցիր-անցար,
Բայց բարի մի ձեռք օգնության հասավ՝
Ինչքան հաջողվեց՝ ուսում ստացար:

Նույնիսկ քո սիրուն դեմ էին մարդիկ,
Խանգարում էին՝ լինել երջանիկ,
Ստիպված էիք միանալ մի օր.
Դրանով միայն նրանց հաղթեցիք:

Տերը քեզ ո՛չ փառք, ո՛չ էլ փող տվեց,
Դրա փոխարեն մի գրիչ տվեց,
Իբրև հատուցում հազար զրկանքի՝
Գրելու շնորհ ու տաղանդ տվեց:

ГАУ РК "Музей-усадьба им. К. Гаспринского"

Հազար նպատակ՝ քո երազանքում,
Բայց քչով էիր դու բավարարվում,
Ինչ որ հաջողվեց, այն էլ արեցիր,
Կյանքը իրենն էր քեզ թելադրում:

Ում որ սիրեցիր՝ հետն ամուսնացար,
Քո դժվար ճամփով նրան էլ տարար,
Նա եղավ միայն քեզ հավատարիմ,
Բայց խղճիդ հանդեպ դու մեղք գործեցիր:

Ամեն ինչ, ասես, լավ էր ընթանում,
Հարմարվել էիր, չէիր դժգոհում՝
Կին, երեխաներ, աշխատանք, հարգանք,
Բայց փորձանքի ժամն ո՞վ է իմանում:

Պատերազմ եղավ՝ ինչպես մի հեղեղ,
Քշեց ու տարավ հարազատ տուն-տեղ,
Բայց ընտանիքիդ Աստված խնայեց,
Որոշեց տանել ապահով մի տեղ:

Նորից զրկանքներ, դժվար տարիներ
Օտարի հողում ու տարբեր ազգեր,
Հայրենիքը քո մնաց շատ հեռվում,
Հետդարձի ճամփան քեզ համար փակվեց:

Ընտանիքդ էր այնժամ կարևոր,
Ստիպված էիք դուք դառնալ բանվոր,
Կրակ վառեցիք կանաչ, թաց տեղում,
Մինչև չծխեց օջախը քո նոր:

Եվ փառք ու պատիվ քո զավակներին՝
Նրանք տեր դարձան ընտանիքների,
Ծնվեցին թոռներ՝ մեկը մեկից լավ,
Բայց քեզ հետ մնաց վերքը անցյալի:

Դա դաժան ցավն էր անմեղ աղջկադ
(Ինչ-որ մի վհուկ նրան անիծեց),
Եվ մինչև օրս՝ մոր համար տանջանք.
Երջանկությունդ թակարդն էր ընկել:

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

Բայց անտեսեցիր դու փորձանքները,
Տուն և աշխատանք գտար արժանի,
Դու նորից ձեռքդ վերցրիր գրիչը,
Լույս աշխարհ եկավ գիրքը առաջին:

Երբ թվում էր, թե ամեն ինչ լավ է,
Սրտի կաթված քեզ կյանքը «պարգևեց»,
Այս անգամ Աստված չուզեց քեզ տանել,
Ասաց. «Դեռ ապրիր, ժամանակը չէ»:

Նորից մի փորձանք քո ընտանիքում՝
Այս անգամ արդեն կնոջդ կյանքում,
Կարծես թե եղած տանջանքը քիչ էր՝
Մահվան վտանգն էր քո դուռը ծեծում:

Այս փորձանքից էլ, ասես, դուրս եկաք,
Բայց ամեն մի ցավ թողնում է մի հետք.
Եվ դու, և կինդ հաշմանդամ դարձաք,
Մյուս կողմից էլ՝ արդեն ջահել չեք:

Դու այս աշխարհում ի՞նչ տեսար, ասա՛
Արամի որդի, Միքայել տղա,
Քո երազանքը ա՞յս էր, դե՛ ասա,
Մի՞թե քո կյանքը հենց սա է, որ կա:

Դե լավ, հերիք է ինքդ քեզ տանջես,
Սա դեռ վերջը չէ, չհուսահատվե՛ս,
Էլի սեր երգիր, գովիր աշխարհը,
Մինչև քո պարտքը լրիվ չմարես:

ԲԺՇԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Գնացի մի օր սրտաբանի մոտ՝
Լսելու համար օգտակար խրատ,
Հույս ունենալով՝ կօգնի ինձ հաստատ:
Դուք էլ լսեցեք, թե նա ինչ ասաց…

ГАУ РК "Медиацентр им. И. Распринского"

Հմուտ բժիշկը խորհուրդ է տալիս.
– Սիրտդ հիվանդ է. քեզ պետք չէ վազել,
Հուզվել, լաց լինել կամ էլ ծիծաղել…
Խմիչքը մահ է, քեզ պետք չէ չծխել:

Տխուր պահերին՝ ո՛չ մի արտասուք,
Ծանրություն ու լող հակացուցված են,
Ցուրտը և շոգը վնասակար են,
Ցատկերին վե՛րջ տուր, թե չէ կհանգչե՛ս:

Յուղոտ պատառը վնաս է, չուտե՛ս,
Թթուն և կծուն լավ է չփորձե՛ս,
Առանց դեղերի տնից դո՛ւրս չգաս
Ու հեռախոսն էլ, տե՛ս, չմոռանա՛ս:

Դե, ցուրտ քամին էլ լավ չէ, իմացի՛ր,
Ծնչելիս՝ հանգիստ ու խորը շնչիր,
Նույնիսկ ուտելիս դու մի՛ շտապիր
Ու մեկ էլ տեսար՝ շունչդ փչեցիր:

Սիրով չզբաղվե՛ս՝ ջահելի նման,
Թե չէ կմնաս դու նրա գրկում,
Երազում անգամ եթե այցի գա՝
Քեզ հեռո՛ւ պահիր, և ո՛չ մի համբույր:

Եթե կատարես դու իմ խորհուրդը,
Կարող ես, գուցե, դեռ երկար ապրել,
Միայն թե թեթև լինի սնունդը,
Չափավոր մարդու կյանքը երկար է:

Մեռնելուց առաջ (հեռու քեզանից)
Ասա քո մոտիկ հարազատներին.
Թող քարը թեթև դնեն քո վրա՝
Ծանրը վնաս է սրտի հիվանդին:

ԿԱՄՐՋԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Կամրջից այն կողմ մեծ պապիս տունն է,
Ձորում հոսողն էլ մեր հալալ ջուրն է,
Գետի ափին էլ ջրաղացն է հին,
Որի հիմքերը սարի պես պինդ են:

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

Կամրջից այն կողմ հիմա սահմանն է,
Իսկ պահապանը մեր հայ զինվորն է,
Ցավո՛ք, այն կողմում մեր Շահումյանն է,
Իսկ մեղավորը էլի մեր բախտն է:

Կամրջից այն կողմ՝ մեծ պապիս տանը
Հիմնովին փոխվեց իմ կյանքի հունը,
Մտքիս կամրջով ուր էլ որ գնամ
Իրար եմ կապում անցյալն ու ներկան:

Որքան կարող եք՝ նորը կառուցեք,
Բայց հին կամուրջը երբեք չքանդեք,
Որ զուլալ մնա Թարթառի ջուրը,
Ու խաղաղ ապրի իմ ժողովուրդը:

ԾՈՎԱՓԻՆ

Նորից կանգնած եմ ահա ծովափին.
Քո չքնաղ տեսքի գերին եմ, Սև ծով:
Սիմեզում եմ տրվել հուշերին,
Հայացքս ծովին՝ հեռու եմ մտքով:

Պոետ չլինես՝ անշուշտ կդառնաս,
Այս չքնաղ տեսքով ինչպե՞ս չհիանաս:
Ալիքն է զարկվում ժայռոտ ափերին,
Մտքերս շեղում, անում է մաս-մաս:

Ծովը սխալը չի ներում երբեք,
Անփորձ լողորդնե՛ր, դուք զգո՛ւյշ եղեք,
Այն, ինչ ցամաքում կարող է ներվել,
Ծովում կարող եք կյանքով հատուցել:

Ծովը քամուց է հրաման ստանում,
Գժված, փրփրած քարերն է լիզում,
Նա գեղեցիկ է իր խենթության մեջ,
Եթե ափին ես՝ ոչ նրա գրկում:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Հիշեցի նորից Մեծ հայորդուն այն,
Որ ծովի մեջ էր գտել բնորդին,
Նրա «Իններորդ ալքը» ցասման
Հայի բողոքն է՝ ընդդեմ աշխարհի:

Ծովափնյա ժայռին թառած ճայերը
Կարծես զարմացած հարցնում են իրար.
– Որտեղի՞ց եկավ այս անծանոթը,
Որ խզմզում է՝ թուղթ, գրիչ առած:

Եվ ալիքները, իրար փեշ բռնած,
Զարկվում են ժայռին, կաթիլներ դարձած,
Քամուց խելագար՝ թռչում են վերև,
Ինչպես պատանի՝ մեծ սիրուց արբած:

ԻՆՉՈ՞Ի ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր դառն է եղել իմ մանկությունը,
Ուր լավ օրերը այնքա՛ն քիչ էին,
Որ մեկ-մեկ գիտեմ նրանց հաշիվը:

Ուր հայրս ծանր բեռով տուն չեկավ,
Դեմքս չտեսավ, չառավ գիրկը իր,
Նրանից մնաց մի լուսանկար,
Մնաց մի նամակ՝ ռազմաճակատից:

Հավատում էի սուտ երազներին,
Սովորում էի՝ գրքերին տրված,
Սինձ ու մրգերով փորս կշտացրած,
Ձիլ երգում էի. «Փա՛ռք հայրենիքին»:

Բայց ինչ էլ լինի, սիրում եմ անչափ
Այդ հողն ու ջուրը կյանքից առավել,
Ես աքսորված եմ զգում ինձ հիմա,
Քանզի հեռու եմ՝ իմ կամքից անկախ:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Պատճառը, գուցե, այն խենթ օրերն են,
Երբ սերը բացեց սրտիս դռները,
Կամ էլ աղբյուրի սառնորակ ջուրն էր՝
Հրաշք լեռները, մեր անտառները:

Դեռ օրորոցից իմ մանուկ հոգում
Մաղձ էր կուտակվում դառնությունից ծով,
Բայց իմ մեջ երբեք չդարձավ այն թույն,
Կյանքս զուլալվեց սիրո մեծ ուժով:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր քարից անգամ արյուն է ծորում,
Գուցե կարո՞տն է ամբողջ պատճառը,
Որ անգութ ճանկն է խրել իմ սրտում:

Դեռ անհիշելի ժամանակներում
Մեր ոտքի տակի հողը քանդեցին,
Մոլուցքով բռնված քոչվոր ցեղերը
Հայերի հետքը ջնջել ուզեցին:

Շատ օջախներում կրակը մարեց,
Բայց և անթեղվեց բոցն ազատության,
Դարերի խորքից հանկարծ դուրս հորդեց
Կուտակված լավան ու հրդեհ դարձավ:

Եվ վրա հասավ ժամը հատուցման,
Հայ զինվորը քաջ նժույգը թամբեց,
Կեղծիքն ու սուտը տվեց ոտնատակ,
Երբ համբերության բաժակը լցվեց:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Երբ այն հեղեղում քանդվեց իմ տունը,
Երբ դարձա ես էլ մի նոր գաղթական,
Ու փլվեց, ցրվեց իմ խաղաղ հույսը:

Սատանան հառնեց երկրի ընդերքից
Ու հազարավոր կյանքեր նա խլեց,
Բայց համառ, անհաշտ կամքը հայերի
Դիմացավ նաև այդ նոր հարվածին:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Հիմա, երբ հեռվից անցյալն եմ հիշում,
Ինձ հայրենիքից զրկված եմ զգում,
Նոր սերունդներ են այնտեղ մեծանում,
Երևի ինձ էլ քչերն են հիշում:

Ինչո՞ւ եմ սիրում ես այդ երկիրը,
Ուր չեն ընթերցում իմ գրվածքները,
Որոնք բոլորը նրանց մասին են՝
Մեր ապ ու պապից մինչև նորերը:

Բայց ես, խենթացած սիրահարի պես,
Նրան եմ ձգտում կարոտով անտես,
Աշխարհից թանկ է այդ մի բուռ հողը,
Թեև չար բախտը ինձ հեռու նետեց:

ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ԿԱՐ

Երազումս մեր աղբյուրը
Տխուր, մենակ լաց էր լինում,
Ինչպես եղնիկ ձագակորույս՝
Աչքից արցունք էր կաթկթում:

Քչքչում էր, ծորում բարակ,
Կորչում մամռոտ քարերի տակ,
Անտակ սափորս կարոտի,
Ա՛խ, չի լցվում գեթ մի կաթիլ:

Կանաչ մամուռ՝ գուռի շուրթին,
Վայրի դաղձը՝ առվի ափին,
Իսկ թևազարդ թիթեռները
Խենթ շուրջպարն են բռնել վերջին:

Ինձ թվաց, թե նրա ափին՝
Ծարավ չոքել եմ ես կրկին,
Երբ արթնացա հանկարծ քնից,
Աղի կաթիլ տեսա բարձիս:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

ԳԱՐՆԱՆ ՁԵՓՅՈՒՌ

Ձեփյուռն իջավ սարի լանջից,
Մեղուն թռավ ծաղկի գրկից,
Խուտուտ տվեց գառան դունչը,
Նրան կտրեց իր մոր կաթից:

Որտեղ գարնան պարտեզ բացվեց՝
Ծաղկափոշին խառնեց իրար.
Նշանվեցին ծառ ու ծաղիկ
Աշնան առատ բերքի համար:

Մառախուղը ցրվեց դաշտում,
Ծիլը ժպտաց մոր բարուրում,
Երբ ջերմացավ լեռան թուշը,
Ձյունը հալվեց հողի ծոցում:

Մի խենթ ջահել՝ սիրուց վառված,
Ձնծաղիկի փունջը գրկած,
Սպասում է իր սիրածին՝
Երազների նժույգ հեծած:

ԵՎՍ ՄԵԿ ԷՋ

Ահա ևս մի էջ շրջվեց,
Երեկվա օրն անցյալ դարձավ,
Ես մեկ տարով էլ ծերացա,
Մի նոր ցերեկ նորից բացվեց:

Անցած տարին ցավոտ էր շատ,
Կորցրի մարդկանց իմ հարազատ,
Վերջին ժամին ես չհասա,
Ի՞նչ անեի՝ հեռու էր շատ:

Լացե՞մ, թե՞ ոչ՝ օգուտ չկա,
Չորացել է արտասուքը,
Սև էր էջը իմ այդ տարվա.
Հարազատից մնաց հուշը:

ГАУ РК "Национальная б-ка им. Г. Распринского"

Բայց մի նոր էջ ես բացեցի,
Ուր անհայտն է լուռ ծվարել,
Թող այդ էջում միշտ լույս լինի,
Պետք է միայն լավին սպասել:

Բարո՛վ դու գաս, ա՛յ Նոր տարի,
Թող որ կորուստ էլ չլինի,
Խաղաղ լինի մեր երկիրը,
Թող ոչ մեկը «վա՛յ» չկանչի:

Դալար մնա ծառիս բունը,
Կողքիս լինի սիրած կինը,
Թող որ աճեն մեր ճյուղերը,
Տերև չընկնի մեր դռանը:

Ինչ վերքեր կան, թող որ փակվեն,
Աստված թոռներիս պահպանի,
Թող լույս բացվի մթության մեջ,
Կյանքը վայելք մեզ պարգևի:

Խաղաղություն իմ հին ազգին,
Որտեղ հայ կա՝ թող ողջ լինի,
Մի օր ձեր տանը հավաքվեք,
Էլ թշնամի թող չտեսնեք:

ԶՄԵՌԱՅԻՆ ԷՏՅՈՒԴ

Դրսում բուքն է մոլեգնում,
Ամռան մուռն է նա հանում,
Ճերմակ վերմակ է փռում՝
Չսառչի սերմը հողում:

Ձյունով ծածկված դաշտերում
Ծիկրակում է, ծիծաղում,
Լույսի շողեր գողացած՝
Թակարդներ է նա լարում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Նստում է ծառի ճյուղին՝
Քշում սոված ագռավին,
Որ չորացած պտուղ է
Փնտրում դատարկ ճյուղերին:

Ցերմությունից՝ կաթկթում,
Սառչում, սրինգ է դառնում,
Կախվում քթից տանիքի
Ու մեծ վտանգ է դառնում:

Ձույնն ու քամին միասին
Ինչեր ասես չեն անի,
«Վայը» եկավ ճամփորդի,
Թե որ նրան պատահի:

Բայց առանց ձյուն՝ ի՞նչ ձմեռ,
Ախր, տխուր կլիներ,
Եթե ձմեռ չլինի,
Չի գա ամառը նորից:

ՀԵՐՈՍ ՏՂԱՆԵՐ

Հորս՝ Արամ Պետրոսյանի հիշատակին

Ծերացել եք դուք, մեր հերոս տղերք,
Ու տարիները ալիք առ ալիք,
Ձեր քաջ դեմքերն են հաճախ ակոսել,
Ցավո՛ք, նոսրացան կուռ շարքերը ձեր:

Դուք ջահե՛լ տղերք՝ բեղը նոր ծլած,
Ձեզնից շատերը դեռ համբույր չառած՝
Մայրեր թողեցին՝ աչքը ձեր ճամփին,
Ու որբե՛ր, որբե՛ր՝ դեռ հայրիկ չասած:

Դաժան թշնամին երկիր էր մտել,
Սատանան էր ժանտ հոգում բույն դրել,
Իսկ հին ոսոխը, սահմանին կանգնած,
Սպասում էր դեռ՝ ժանիքը սրած:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Ելաք դուք, ինչպես պատնեշ հողմի դեմ,
Ու հերոսացաք օտար հողերում,
Բազմագլխանի հրեշին դարի,
Ծնկի բերեցիք իր նսեմ որջում:

Բայց ինձ պես ինչքա՛ն որբեր մնացին,
Քանի՛ խեղճ մայրեր լացից կուրացան,
Ձեզնից շատերը՝ անհայտ թե հայտնի,
Գյուղ ու քաղաքում լուռ արձան դարձան:

Սրտիս մեջ ցավն է ոռնում զայրագին,
Երբ խիղճը կորցրած ինչ-որ խառնածին
Չնչին գներով ձեր պարգևներն է
Գնում, վաճառում՝ փռած մայթերին:

Այսօր մեծ տոն է՝ Ինը մայիսի,
Ով որ խիղճ ունի, դա պետք է հիշի,
Աշխարհի համար՝ Մեծ Հայրենական,
Իսկ հայի համար՝ Բեռլին ու Շուշի:

Ծերացել եք դուք, մեր հերոս տղերք,
Ձեր խրոխտ քայլքը այլևս չունեք,
Փույթ չէ, թե կգա անխուսափելին,
Բայց հավատացեք՝ դուք էլ մահ չունեք:

Հա՛յր իմ, դու օտար հողում մնացիր,
Ինձանից «հայրիկ» բառը չլսեցիր.
Մենք՝ երեք որբեր, մեծացանք մի կերպ,
Մեր անձնագրում, սրտում մնացիր:

Քչերն են մնացել քո ընկերներից,
Որոք փրկվեցին մահվան ճանկերից,
Ու ամեն անգամ նրանց տեսնելիս՝
Ասես վերջապես ինձ մոտ ես գալիս:

Ա՛Խ, ԱՅԴ ՍԵՌԸ

Ա՛խ, այդ սեռը, կանանց սեռը,
Տղամարդկանց սրտի եռը,
Թույլ ուսերին՝ ողջ տան բեռը,
Մեր տան հացի սուրբ մերանը:

ГАУ РК "Национальная библиотека Татарского"

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Տղամարդկանց սրտի սերը,
Որ լավ գիտի մեր թույլ տեղը,
Միշտ զգում է չար վտանգը:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը.
Կյանք արարող, օրհնող ձեռքը,
Ներում է միշտ մեղքը որդու,
Իր ծուռ բախտից չի տրտնջում:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Տղամարդու սերն ու ցավը,
Հսկաներին հաղթող ուժը,
Մեր օջախի անմար ծուխը:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը,
Որից թույլ են գազանները,
Թե վտանգվեն զավակները,
Նա կփշրի կապանքները:

Ա՛խ, այդ սեռը, այդ թույլ սեռը.
Նրա կողքին ի՞նչ է լեռը,
Բայց քնքուշ է նրա սերը,
Ինչպես վարդի նուրբ թերթերը:

Ա՛խ, այդ սեռը՝ մայրիկ կոչվող,
Աստված ծնող, կյանք արարող,
Մեզ այնպիսի պարտք է տվել,
Որ այն մարել չենք էլ կարող:

ԱՔՍԵՆՅԱՅԻՆ

Ծննդյան օրվա առթիվ

Երեկ թռվռուն, սիրուն մի աղջիկ,
Մանուշակների բույրերի փնջիկ,
Իսկ այժմ՝ գրկին հրաշք մի թոռնիկ,
Աքսենյան նորից դարձել է փոքրիկ:

ГАУ РК "Национальная б-ка им. М. Гаспринского"

Էլ ի՞նչ ծերություն՝ տասը թոռ ունես,
Սարի պես թիկունք որդիներ ունես,
Մոռացիր մի պահ՝ ինչ ցավեր ունես,
Ուժեր հավաքիր, որ ծոռներ գրկես:

Մենք շտապելու ոչ մի տեղ չունենք,
Միայն տա Աստված՝ լավին սպասենք,
Ծննդյան օրը միասին նշենք
Եվ միմյանց միայն երկար կյանք մաղթենք:

ԱՇՈՒՆՆ Է ԳԱԼԻՍ

Ամպերը մաս-մաս արեցին լուսնին,
Տերևը դողաց ծեր ծառի ճյուղին,
Աշնան արևը, թուլացած ուժով,
Իր մոտ է կանչում չվող թռչունին:

Աշունն է փռում նախշուն գորգերը,
Իր նարինջ ձին է թամբել իգիթը,
Ու նորահարսի պես դողդղալով,
Անտառն է հանում վերջին հագուստը:

Ցրտից ցերեկը կուչ եկավ մթնում,
Ով որ սողում էր ամենուր դրսում,
Մտավ գետնի տակ ու անհայտացավ,
Իսկ ուշացածին ագռավն էր փնտրում:

Գետը բարակեց, ափից հեռացավ,
Նա էլ չէր շոյում ճյուղերն ուռենու,
Գորտը իր բույնն է փորում քարի տակ
Ու վերջին անգամ տխուր կռկռում:

Աշունն է գալիս՝ տրտում, գեղեցիկ,
Ու տխրություն է տիրում ամենուր,
Պետք է հավաքել բերքն ամբողջովին,
Որ տարին չանցնի դատարկ ու իզուր:

ГАУ РК "Меморіальний М. Гаспринського"

ԾԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա՛խ, ծերության մեջ էլ լավ բան չկա,
Սիրուց անհանգիստ մերժման ցավ չկա,
Մարդուն մաղթում են անհոգ ծերություն,
Բայց հոգսերն, ավա՛ղ, դառնում են բազում:

Հուշերն են միայն մեկ-մեկ շող տալիս,
Եղած ցավերից մի պահ խույս տալիս,
Թե որ ընտանիք ունես արժանի,
Քո սերունդների լավն է հույս տալիս:

ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

Չարը ծնվել է բարու հետ մեկտեղ,
Որտեղ բարին է, չարն էլ է այնտեղ,
Հենց որ բարին է սայթաքում հանկարծ,
Չարը իր գործերն է կատարում անշեղ:

Բայց պատահում է՝ չարն է սայթաքում,
Այնժամ բարին է շուտ ոտքի կանգնում,
Այդպես մեկմեկու հրում են հավերժ,
Բայց միշտ անբաժան ընկեր են մնում:

Քեզ համար կյանքում միշտ բարին ընտրիր,
Չարը միշտ էլ կա, նրան մի փնտրիր,
Բարի լինելով՝ չարին կհաղթես,
Նրա գրավիչ տեսքով մի տարվիր:

ՀԱՆՑԱԳՈՐԾԸ

Պարապությունից դարձա ոճրագործ՝
Ինքս եմ խեղդում անմեղ օրերս,
Հետո դառնում եմ անխիղճ մսագործ՝
Մաս-մաս եմ անում անմիտ ժամերս:

Հետո փորձում եմ դառնալ խոհարար.
Այդ բեկորներից հուշեր եմ եփում,
Հետո արածից գոհ, բավարարված,
Մոռացած տարիք՝ նորից եմ ապրում:

ГАУ РК "Национальная им. А. Гаспринского"

Պարապությունից դաժան բան չկա,
Երբ չկա մի գործ, որ օրդ վատնես,
Գող կամ հարբեցող՝ գենիդ մեջ չկա,
Ստիպված պետք է տաղեր հորինես:

Եվ այսպես, նորից դարձա հանցագործ,
Որ ծերություն սպանեմ իմ մեջ,
Հին երազներից՝ մի գլուխգործոց,
Կարծես հետ բերի կյանքը իմ ջահել:

ԱՐԻ՛, ԱՐԻ՛...

Արի՛, արի՛, շո՛ւտ արի,
Իմ հույսերը մի՛ մարիր,
Անձրև լինի, թե արև,
Սիրող սիրտը կսպասի:

Արի՛, ինչպես գարնան ցող,
Քո կարոտից՝ շուրթս չոր,
Թող մազերիդ ես հպվեմ
Քնքուշ-քնքուշ, ինչպես հով:

Թեկուզ մի քիչ խռով-մռով,
Ինձ մոտ արի լոկ սիրով,
Տե՛ս, չուշանա՛ս, սիրելի՛ս,
Ինձ չթողնես կարոտով:

ԳՐԻՉԸ

Գրիչ, դու գրիչ,
Դու իմ խեղճ գրիչ,
Դարձել ես գերի
Դու մարդու ձեռքին:

Թե բախտը բերի
Քո թողած հետքի՝
Ձեռքում տաղանդի
Կհաղթես չարին:

Խարդախի ձեռքով
Քո գրած տողը
Տներ կքանդի,
Երկիր կավերի:

Գրիչ, դու գրիչ,
Դու տողեր շարող,
Սիրո խոստումի
Մաքուր, անմեղ ճիչ:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Ցավոք, մերժումի
Կարճ տողեր անխիղճ:

Գրիչ, դու ձեռքին
Բիրտ տիրակալի
Ձենք ես սոսկալի:
Քո մի շարժումով
Բազում ազգեր ես
Դու քաշել սրի:

Գրիչ, դու գրիչ,
Լուրերի ցրիչ,
Երբեմն՝ չամիչ,
Երբմն՝ կարիճ,
Անգետի համար՝
Անանց մի ճահիճ,
Մի անխիղճ դահիճ:

Բայց ներկա դարում
Կոճակն է իշխում,
Մատի շարժումով
Երկիր են քանդում,
Մատի շարժումով
Բախտ է որոշվում,
Նույնիսկ կնիքը
Ճատ հեշտ է կեղծվում:
Մատի շարժումով
Միլիոն է դիզվում,
Նույնքան էլ՝ կորչում:
Մատի շարժումով
Մարդիկ են կորչում:
Կոճակը կյանքից
Քեզ հետ է հրում,
Աշխարհի բախտը
Անդունդ է տանում:

Բայց դու, իմ գրիչ,
Մտքերիս ցրիչ,
Դու շարունակիր
Խզմզել մի քիչ,
Ու շատ մի տխրիր,
Քանի կամ՝ գրիր:
Գրիչ, իմ գրիչ,
Ցավ ու վշտերի
Խավարից մի ճիչ,
Դու շարունակիր
Մնալ իմ ձեռքին:

ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄ

Մի տաղանդավոր, ջահել բանաստեղծ
Եվ մի նկարիչ, թուղթ, ներկեր առած,
Գարնան ծաղկունքին գնացին դաշտեր,
Որ ստեղծեն նոր տաղ ու մի նոր կտավ:

Տեսան գեղեցիկ ու կանաչ արտեր,
Մեղմիկ քամու հետ շոյվող ալիքներ,
Բայց նրանց ոչ թե դա էր գրավում,
Այլ այստեղ աճած բազում ծաղիկներ:

Բանաստեղծը նոր սիրո երգ գրեց,
«Կարմիր կակաչներ» կոչեց երգը այդ,

ГАУ РК "Медиацентр имени Расстригинского"

Իսկ նկարիչը՝ կակաչ ու շաղգամ
Իր նոր կտավում անմահացրեց:

Իսկ հողագործը, գերանդուն հենված,
Նայեց իր արտին, հոգով դառնացած,
Մտքում ինքն իրեն անչափ նախատեց,
Որ չի քաղհանել արտը վարակված:

ԱՄՊԵՐԻՆ

Կարկո՛ւտ, մի՛ գա ծաղկած ծառին,
Գնա՛, թափվի՛ր չոլ ու քարին,
Մեղք է, ախր, ծառը հղի,
Մի քարկոծիր հենց գարունքին:

Ամպե՛ր, եկե՛ք, ամպե՛ր, եկե՛ք,
Իրար գրկած դուք պա՛ր բռնեք,
Որոտացեք, ինչքան կուզեք,
Միայն կարկուտ դուք մի՛ բերեք:

Ամպե՛ր, եկե՛ք ու գնացե՛ք,
Ջերմ արևը դուք մի՛ փակեք,
Թող տաքանան հողն ու ջուրը,
Մեզ տաք անձրև ու ցող բերեք:

Թող որ սերմը ծիլ տա հողում,
Կանաչ մաղվի դաշտ ու սարին,
Թող ջերմանա քարը նույնիսկ,
Ձեզնով նա էլ կյանք է առնում:

ԲԱԿԻՍ ԾԱՌԵՐԸ

Տեսնես, կա՞ն հիմա բակիս ծառերը,
Թե՞ չորացել են տարիների հետ,
Կամ վառելիք են դարձել ճյուղերը,
Որոնց շվաքում մեծացել եմ ես:

Կամ էլ հատվել են մի չարի ձեռքով՝
Անտեր մնացած գառնուկների պես,
Իսկ տերը հեռվում՝ կարոտ երազով,
Փլված տան առաջ միշտ տեսնում է ձեզ:

ГАУ РК "Национальная библиотека имени Г.Распринского"

Ասում են՝ ծառը դարեր է ապրում,
Գուցե ծառերն իմ կանգուն են հիմա.
Բարի դրկիցս է նրանց խնամում,
Իսկ շվաքի տակ իր թոռն է նստած:

Թթի ծառերը մեղրահամ բերքով,
Ճյուղ ճյուղի գրկած, ինձ են օրորում,
Տանձն ու խնձորը մեռոնի հոտով
Խենթացնում են և հալչում բերանում:

Քանի՛ տուն ու բակ անտեր մնացին,
Որոնց տերերը էլ հետ չեն դառնա,
Օտար հողերում ծառեր տնկեցին,
Որ երազանքը իրականանա:

* * *

Էլ ի՞նչ լեռներ, երբ լանջերին եղնիկ չկա,
Էլ ի՞նչ ծովակ, երբ ջրերում էլ ձուկ չկա,
Էլ ի՞նչ մարդիկ, երբ սրտերում էլ սեր չկա,
Էլ ի՞նչ երգեր, երբ երգերում հոգի չկա:

Էլ ի՞նչ անտառ, երբ անտառում էլ որս չկա,
Էլ ի՞նչ քարեր, երբ նրանցից շենքեր չկան,
Էլ ի՞նչ դաշտեր, երբ դաշտերում վարդեր չկան,
Էլ ի՞նչ պոետ, երբ էլ սիրո խոսքեր չկան:

Էլ ի՞նչ եղբայր, երբ արյան մեջ էլ սեր չկա,
Էլ ի՞նչ լավ մարդ, երբ սրտի մեջ էլ խիղճ չկա,
Էլ ի՞նչ աղբյուր, երբ նրանից խմող չկա,
Էլ ի՞նչ աշուղ, երբ երգերը լսող չկա:

Էլ ի՞նչ մայրիկ, երբ ուրիշն է «բալե՛ս» կանչում,
Էլ ի՞նչ որդի, երբ ուրիշն է ծնող պահում,
Էլ ի՞նչ հովիվ, երբ քո հոտը գայլն է ուտում,
Էլ ի՞նչ երկիր, երբ աղքատ են մարդիկ ապրում:

Էլ ի՞նչ թևեր, երբ իր տերը էլ չի թռչում,
Էլ ի՞նչ շաքար, երբ բաժակում էլ չի հալչում,
Էլ ի՞նչ գրեմ, երբ տողերս էլ չեն կարդում,
Էլ ի՞նչ անեմ, երբ առանց գիր ես չեմ ապրում:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՏԻ

Հանուն հավատի մարդիկ են զոհվում,
Հանուն հավատի մարդկանց են զոհում,
Հանուն հավատի՝ անհավատ դառնում,
Այս կյանքից դժգոհ՝ ուրիշն են փնտրում:

Առանց հավատի մարդը գազան է,
Բայց կույր հավատը նույնպես գազան է,
Ազգերի միջև բիրտ գավազան է,
Հոգուն տիրելու մի խարազան է:

Հանուն հավատի անմահ են դառնում,
Հանուն հավատի հերոս են դառնում,
Հանուն հավատի՝ ծնող ուրանում,
Անհավատ դարձած, միլիոններ դիզում:

Հավատացյալի անարատ հոգում
Հավատն է միայն ու երկնայինը,
Գրպանը՝ դատարկ, հավատը՝ սրտում,
Հարստությունը՝ իր աղոթքները:

ՀԱՅԵ՛Ր, ՀԱՅԵ՛Ր...

Հայե՛ր, հայե՛ր, ես ձեր մաքուր ծոցում ծնված,
Հարազատներ՝ աշխարհով մեկ, ցավոք, ցրված,
Կարոտ ու ցավ ամեն մեկդ հոգում պահված,
Հազա՛ր ափսոս, որ շատերդ՝ լեզուն փոխած:

Հայե՛ր, հայե՛ր, հեռու և մոտ հարազատներ,
Հաստատ գիտեմ՝ դուք այդ կյանքը չեք երազել,
Պատահել է՝ ընտանիք եք մահից փրկել,
Վերադարձի դուռը երբեք դուք չեք փակել:

Հայե՛ր, հայե՛ր, զոնե ձեր մայր լեզուն պահեք,
Ձեր պապերի շիրիմները մի՛ մոռացեք,
Ձեր սերնդում այբուբենի տառը պահեք,
Հանդիպելիս միշտ հայերեն բարևեցեք:

ГАУ РК "Национальная ц. К. Гаспринского"

Հայե՛ր, հայե՛ր, դուք իրար միշտ ձեռք մեկնեցեք,
Ձեր մայր հողը պաշտպանողին թիկունք եղեք,
Թե չլինի ձեր մայր հողը՝ դուք էլ հայ չեք,
Կամաց-կամաց օտար հողում դուք կձուլվեք:

Հայե՛ր, հայե՛ր, կգա օրը՝ էլ չեք ցրվի,
Ձեր մատները՝ բռունցքի պես Մեծ Մհերի,
Իսկ քատեզը Տիգրան Մեծինը կլինի,
Գիրը՝ Մաշտոց, գերբը Մասիս սարը լինի:

Հայե՛ր, հայե՛ր՝ միլիոնատեր, թե աղքատ մարդ,
Հայրենիքում հիմա ապրող ամեն մի հայ
Ոտքերի տակ՝ մեր հայրենի հողն անարատ,
Իսկ դիմացը՝ որպես փարոս լեռն Արարատ:

Հայե՛ր, հայե՛ր՝ ինչպես չված կռունկները,
Դարձեք նորից դեպի դատարկ ձեր բները,
Որ ձեր հողում ծնվեն մեր հայ բալիկները,
Բավ է, ինչքան օտարներին տանք ձագերը:

ՈՐՈՆՈՒՄ

Կարծես չեմ սիրում, մոռացել եմ քեզ,
Բայց ինչո՞ւ, ասա, հազարների մեջ
Աչքերս քեզ են փնտրում մշտապես,
Ես քեզ չեմ կարող իմ սրտից հանել:

Իմ բախտն ուրիշ է՝ քոնից շատ հեռու,
Ուրիշն է արդեն տիրել իմ հոգուն,
Բայց իմ աչքերը չեն հանգստանում,
Նորից ու նորից քեզ են որոնում:

Փնտրում են, փնտրում անցած օրերը,
Հազարների մեջ՝ ծանոթ դեմքերը,
Նրանց գտնում եմ լոկ այն ժամանակ,
Երբ որ փակվում են կոպերս հոգնած:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Расулова"

Կարծես չեմ սիրում ու չեմ էլ սիրել,
Բայց իմ աչքերին ի՞նչ է պատահել,
Խելագարի պես միշտ փնտրում են քեզ.
Չէ՞ որ դու ուրիշ կյանքում ես եղել:

ՄՈԽՐԱԹԱՂ

Ծննդավայրս գյուղն է Մոխրաթաղ,
Հիմա հեռու է, սիրտս է մղկտում:
Խաղաղ ապրում էր լեռների գրկում,
Սակայն ավերվեց իմ գյուղը չքնաղ:

Նոր ծնունդ առած, ապրում է գյուղը,
Բայց ավերված է իմ պապի տունը,
Ապրում եմ հիմա հեռու Ղրիմում,
Ինչպես թռչունը՝ կորցրած իր բույնը:

Իմ մանկությունը այնտեղ է անցել,
Ծիծաղել եմ ես և տխուր լացել,
Այնտեղ եմ սիրո կարոտն իմ առել,
Հիմա ամեն ինչ երազ է դարձել:

Գյուղի քարտեզն է հոգումս դաջված՝
Ներքին ու վերին թաղերը ծաղկած,
Ղուզե ու Գյունե թաղերը նախշած,
Մեծ Մռավ սարը՝ արևավառված:

Ծոցս դեռահաս խնձորը լցրած,
Վազում եմ ուրախ՝ ինչպես ուլ խրտնած,
Բարձրանում Դերունց քարափը շիկնած,
Արթնանում քնից՝ թաց բարձը գրկած:

Ինձ պես քանի՛սը հեռացան գյուղից...
Գնացին՝ անդարձ, էլ ետ չեն գալու,
Կարոտ մնացին Քյահրիզի ջրին,
Իրենց պապերի դաշտ ու անտառին:

ГАУ РК "Медиацентр им. Ю. Гаспринского"

ՀԱՎԱՏԱ

Ապրում էի հանգիստ կյանքով,
Քնում էի ես անխռով,
Ինչո՞ւ եկար, ա՛յ դու անխիճ.
Իմ հանգիստը կորավ շուտով:

Թփրտում է սիրտս գժված՝
Ինչպես եղնիկ վախից խրտնած,
Ու անծանոթ մի զգացում
Դեպի քեզ է ձգում անսանձ:

Դու իմ բախտը շատ փոխեցիր,
Իսկ եթե դու ինձ սիրեիր,
Մենք բախտավոր կլինեինք.
Դու հավատա իմ խոսքերին:

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ես նոր չեմ ծնվել այս հողի վրա,
Մեկն եմ առաջին մարդ կոչեցյալից,
Երբ Աստուծո կամքով այս աշխարհ եկա,
Դարձա Մեծ Հայկի թիկնապահներից:

Մի անգամ չէ, որ ես հայ եմ ծնվել,
Հզոր Տիգրանի մեծ պետությունում
Անհաղթ բանակի զինվոր եմ եղել,
Որից թշնամին միշտ էր սարսափում:

Բազմաթիվ էին մեր աստվածները,
Ամեն մի աստված իր ուժը ուներ,
Իսկ տաճարներում մեր հին քրմերը
Աղոթում էին՝ տալով մեզ հույսեր:

Սեպագրերից տառեր եմ կոփել,
Ժայռերի վրա պատմություն թողել,
Բագրատունյաց մեծ արքա եմ եղել,
Մեր սահմաններն եմ անսասան պահել:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Քանի անգամ եմ ծնվել ու զոհվել,
Եղել եմ կռիվում հավատի փրկիչ,
Բայց իսպառ երբեք ես չեմ մահացել,
Ամեն մի դարում ապրել եմ փոքր-ինչ:

Դարեր ապրեցի իմ հայրենիքում՝
Եվ սուր բռնեցի, և հող վարեցի,
Տեսա հաղթանակ, նաև՝ պարտություն,
Դավաճանին՝ մա՛հ, փա՛ռք հերոսներին:

Իսկ երբ ուրացանք մեր հին սրբերին,
Աստված, միգուցե, խռովեց մեզնից,
Մենք Քրիստոսի խաչը ընտրեցինք,
Այն էլ մեզանից խլել ուզեցին:

Տեսա, թե ինչպես քոչվոր ցեղերը
Մաս-մաս արեցին մեր մեծ երկիրը,
Ինձ ստիպեցին փոխել հավատս,
Որ ես մոռանամ իմ հայ լինելը:

Վայրի ցեղերը՝ բիրտ, թափառական,
Ինձ բզկտեցին, նորից խաչեցին,
Դավեր նյութեցին, գանձեր խոստացան.
Ես լեռներիս պես կանգուն մնացի:

Աշակերտեցի Մեծն Մաշտոցին,
Հայ մանուկներին ուսուցիչ դարձա,
Օտար, խորթ լեզվից նրանց փրկեցի,
Սուրբ Խորանացու գրիչը դարձա:

Կռվեցի նաև օտարի համար,
Երբ իմ սեփական հողը չունեի,
Երբ կիսատ-պռատ կար մի Հայաստան,
Նույնիսկ դրանով պարծենում էի:

Բայց երբ ցանկացա ես ոտքի կանգնել,
Հողը սկսեց իմ տակ երերալ,
Շեներ, քաղաքներ ավերակ դարձան,
Աստված ցանկացավ իմ կամքը փորձել:

ГАУ РК "Национальная библиотека им. Г.Гаспринского"

Այդ ծանր լուծը ես թոթափեցի՝
Մեր պատնեշ դարձած օտարի դավը,
Դարձա նոր զինվոր, ելա պայքարի,
Եվ Արցախ որդին միացավ մորը:

Ներկայումս կա մի նոր Հայաստան,
Այն ծովից ծով չէ, այլ՝ փոքրիկ ոստան,
Բայց պատմությունը միշտ կրկնվում է,
Միայն թե կամքը լինի անսասան:

Ոսկոր չես խլի բորենու ձեռքից,
Եթե առյուծ չես, այլ փոքրիկ մի ձագ,
Բայց ես անմահ եմ, հավատացեք ինձ,
Առյուծի ձագը փոքր չի մնա:

Ամբողջ աշխարհում ցրված իմ ազգը
Մի օր կպարի Մասիսի շուրջը,
Այնժամ ես նորից կծնվեմ մորից,
Կդառնամ Մեծն Տիգրանի աջը:

ԻՄ ՂԱՐԱԲԱՂԸ

Իմ Ղարաբաղը փոքրիկ է այնքան,
Որ հոգուս մեջ է նա տեղավորվում,
Բարձր լեռներով, դաշտերով իր լայն,
Իր հերոսներով շնչում է, ապրում:

Իմ Ղարաբաղի քարտեզը փոքր է,
Բայց մոր գրկում է՝ մանուկի նման,
Իսկ հոր անունը փառապանծ Հայք է,
Էլ ուրիշ անուն իմ հոգում չկա:

Իմ Ղարաբաղը աշխարհի մասն է,
Մեծ է, թե փոքր, դա չէ կարևոր,
Նա երակներիս արյան անոթն է,
Նրա շնչով եմ ապրում ամեն օր:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Распринского"

Աշխարհում փոքր մայրեր չեն լինում,
Մենք ենք փոքրանում՝ դա մոռանալիս,
Թե որ արմատդ Արցախն է սնում,
Ուրեմն շյուղն ես Մայր Հայաստանի:

Ով որ չի ուզում ճանաչել նրան,
Մենք էլ չենք մուրում նրանց կարծիքը,
Կարևորն այն է, որ կա Հայաստան,
Կա ղարաբաղցու անկոտրում կամքը:

Իմ Ղարաբաղը փոքրիկ է այնքան,
Բայց նա ինձ համար աշխարհի չափ է,
Դարեր են անցել ու էլի կանցնեն,
Բայց նա հայերի ափն է փրկության:

ԿԵՍՕՐԻՑ ՀԵՏՈ

Կեսօրից հետո արևն է թեքվում,
Եվ ստվերներն են լուռ տեղափոխվում,
Ինչ առավոտյան մութ էր ու անհայտ,
Մինչև կեսօր է իր տեսքը բացում:

Կեսօրից հետո բույսը չի ծաղկում,
Մինչև կեսօր է ծիլը լույս տեսնում:
Մեր կյանքը գարնան օրվա է նման,
Մինչև կեսօր են տաղանդներ ծնվում:

Կեսօրից հետո պտուղն է հասնում,
Հովիվը հոտն է դեպի տուն դարձնում,
Իսկ մեր ուղեղում փորձ է կուտակվում,
Սերնդե-սերունդ իրար փոխանցվում:

Կեսօրից հետո մեր անցած ուղին
Խավարած ելավ ձոր ու քարափից,
Ու ստվերներն են մեզ հետապնդում,
Սնվում մեր թողած ճիշտ ու սխալից:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Կեսօրից հետո կա գեղեցկություն,
Թե որ արևդ ունի ջերմություն,
Սառույցն է հալվել մարդկանց հոգու մեջ,
Ու չեն հրդեհվել անտառներ ու տուն:

Կյանքիս արևն էլ կեսօրին թեքվեց,
Իմ ջերմությունից կյանքի ծառ աճեց,
Իսկ մայրամուտից հետո էլ, գիտեմ,
Որ աստղիս համար փոքրիկ տեղ բացվեց:

* * *

Կատուն ու շունը կապրեին սիրով,
Թե նրանց տերը սիրեր երկուսին,
Կապրեին նրանք կուշտ ու ապահով.
Կատուն չէր չանկռի, շունը չէր հաչի:

Բայց, ցավոք սրտի, իրական կյանքում
Շատերն ապրում են փողոցում, բակում,
Նրանք տեր չունեն, որ միշտ հաշտ լինեն,
Այդ պատճառով էլ անհաշտ են ապրում:

ՔԱՐԸ

Քարը հայ մարդու ընկերն է կյանքում.
Տուն և ամրոց է նրա համար դառնում,
Դառնում է սուրբ վանք ու զարդաքանդակ՝
Մեր հազարամյա պատմության վկան:

Դեռ մանկուց քարը նրա ձեռքին էր,
Պաշտպանվում էր նա պետք եղած դեպքում,
Մինչ մագաղաթին տառեր գրելը,
Հայը քարին էր իր գիրքը գրում:

Հայի ձեռքի մեջ նա դարձել է վարդ,
Բազմանախշ խաչքար՝ պատմության վկա,
Ամրոցի պատին, վանքի ճակատին
Մեր պատմությունն է գրված բովանդակ:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Մեր այբուբենն է՝ փորված ու դաջված
Բազալտի կամ էլ տուֆ քարի վրա,
Ոչ մի ազգի հետ մեզ չեն շփոթի.
Նա հոգու մեջ է, մասնիկն է արյան:

ԳԱՐՈՒՆԸ ՂՐԻՄՈՒՄ

Գարունը բացվեց նորից Ղրիմում,
Սառույցը հալվեց ոչ միայն հողում,
Այլև շատ վաղուց ջերմության կարոտ,
Իրենց հույս բերող մարդկանց սրտերում:

Այս բազմաչարչար հողով ղրիմյան,
Բյուրավոր ցեղեր եկան ու անցան,
Նրա ափերը լիզող ծովերում
Օտար շատ նավեր անհուշ տիրոմ դարձան:

Շատ դարեր առաջ այն օրհնված օրից,
Երբ ռուսը ոտքն իր դրեց այս ափին
Ու հավատ բերեց՝ խաչը փրկության,
Նոր կյանք նվիրեց այստեղ ապրողին:

Բազմալեզու են մարդիկ այս հողում,
Բայց ռուսերեն են միմյանց հետ խոսում,
Տարբեր ազգեր ու տարբեր կրոններ
Խաղաղ կողք-կողքի ապրում են դարեր:

Ղրիմը շատ է նման մեծ այգու,
Որտեղ բույսեր են բազմաթիվ աճում՝
Բուժիչ, հոտավետ, չքնաղ, բերքատու,
Մոլախոտն այստեղ էլ բոյ չի քաշում:

Շատ գարուններ է այս հողը տեսել,
Բայց այս գարունը ուրիշ է եղել,
Ինչպես նորոգված սրբապատկերում՝
Մայրը նորից է իր որդուն գրկել:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Խառնակիչները ինչքան էլ ձգտեն
Հավատը ընդդեմ հավատի հանել,
Հոր ձեռքը այժմ այնքան հզոր է,
Որ չար ուժերը կկորչեն անհետ:

Կուռ երակներով ավիշը հոսեց,
Եվ թերակղզում նոր կյանք սկսվեց,
Այս անգամ արդեն ամուր ու խորունկ՝
Դարերի համար մի նոր հիմք դրվեց:

Այս հողի համար բազմաթիվ ազգեր,
Մի բռունցք դարձած, կռիվ են տվել,
Երբ այն կոչվում էր Սովետի երկիր.
Նրանց սխրանքը պետք է պահպանել:

Թող որ այս հողը միշտ խաղաղ մնա,
Մանուկը երբեք էլ որբ չմնա,
Թող էլ չլինի նա կռվախնձոր,
Բոլորիս համար սրբատեղ մնա:

ԶՄԵՌԸ ԵԿԱՎ

Զմեռը եկավ, տարին ծերացավ,
Գարնան կանաչած ծառը մերկացավ,
Երգող թռչունը չվեց, հեռացավ,
Արևի ուժն էլ անչափ թուլացավ:

Հարսանիք եղավ, երբ սերը հաղթեց,
Կաթից կտրվեց մանուկը հասուն,
Զմեռ պապիկը եկավ հյուսիսից,
Եվ պակասեցին ծառերն անտառում:

Ես էլ ծերացա ևս մեկ տարով,
Դեղս շատացավ մի քանի տառով,
Նոր երեխաներ կծնվեն շուտով,
Նոր կյանք կբերեն առաջին ճիչով:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Էլ չկա անձրև, որոտ ու կայծակ,
Մուկն իր համար է փնտրում մի խոր ծակ,
Իր մոտ է կանչում վառարանը տաք,
Պաղպաղակի տեղ՝ թեյ խմենք տաք-տաք:

Տանիքից կախվեց մի սառը մահակ,
Գետը դարձել է մի առու բարակ,
Ժիր մանուկներին՝ դահուկ ու սահնակ,
Մեծերին էլ շիշ և օղու բաժակ:

Ամեն ինչ, գիտենք, որ անցողիկ է,
Եղյամը ձմռան նախշուն շաղիկն է,
Տան պատուհանին բացվող ծաղիկն էլ,
Ափսո՛ս, անհոտ է, բայց գեղեցիկ է:

Գարունը կգա կենդանի ուժով,
Կջերմանա հողն արևի ուժով,
Ձմռանը միայն քաղցր նինջ լինի,
Որ նոր գարունը բացվի ժպտալով:

ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Երբ լճանում է քո ներկա կյանքը,
Դեպի անցյալն է թռչում քո միտքը,
Լցնում է դատարկ ժամերն ու օրը,
Գրավում գլխիդ ամեն մի ծալքը:

Երբ զբաղված ես ներկա հոգսերով,
Անցյալը կուչ է գալիս, թմրելով,
Քո լավն ու վատը դարան են մտնում՝
Ներկա օրերը իրենց քաշելով:

Բայց պետք է ապրել ներկա օրերով,
Անցյալը հիշել միայն առիթով,
Հին սխալները որ չկրկնվեն՝
Նոր սխալներից շուտ խուսափելով:

ГАУ РК "Межрайцентр им. И. Сапринского"

Անմեղ մարդ չկա այս հին աշխարհում,
Բայց մեղքի չափը տարբեր է լինում,
Կեղծ է այն մարդը, որ երդում կուտի,
Լավ իմանալով, որ սուտ է խոսում:

ՋՈՒՐԸ

Ինչքան կեղտեր կան՝ լցնում ենք ջուրը,
Ջուրը՝ գետ դառնում, թափվում է ծովը,
Իսկ մենք ամռանը գնում ենք ծովափ,
Որ մարմիններից հանենք մեր ցավը:

Ասում են՝ ջուրը կեղտը չի վերցնում,
Նա ափ է նետում ու տիղմ է տառնում,
Բայց նա նետում է, ինչը չի լուծվում,
Իսկ լուծվող թույնը իր մեջ է մնում:

Ծով ու օվկիանոս՝ ձկներով հարուստ,
Մարդիկ թափում են թույները կեղտոտ,
Գիշեր ու ցերեկ ձկներ են որսում,
Փողեր են դիզում ու դառնում հարուստ:

Եկեք միշտ պահենք մաքուր մեր ջուրը,
Այնտեղ չթափենք մեր կեղտն ու թույնը,
Թող մաքուր մնա մեր բնությունը,
Որ մեզ չանիծի գալիք սերունդը:

ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բոլորս ունենք վատ սովորություն.
Մեկի մոտ շատ է, իսկ մյուսի մոտ՝ քիչ,
Թե չվերացնես, այն կդառնա թույն,
Ինքդ քեզ մաքրիր, որ դառնաս չամիչ:

ԲԱՐԴԻՆ

Բարդին մի ծառ է՝ բարձր, սլացիկ,
Նայողի աչքին՝ անչափ գեղեցիկ,
Բայց իրականում՝ անպտուղ, անհոտ,
Փայտն էլ անորակ՝ որպես շինանյութ:

ГАУ РК "Медиацентр им. И. Распринского"

Ծաղիկն անհոտ է, ամառվա ձյուն է,
Ով պերգիկ է՝ նրա համար թույն է,
Իսկ երբ ընկնում է քամուց կամ ցավից,
Նրա բունն անգամ չարիքի բույն է:

Իսկ մենք երգեր ենք նվիրում նրան,
Նրա պես ճկուն չենք տեսնում իրան,
Սիրած էակի հետ համեմատում,
Գեղեցկությունն ենք լոկ նրա գովում:

Բերքատու ծառը շատ չի բարձրանում,
Բայց մարդուն շատ է օգուտներ բերում,
Երգեր ու պարեր քիչ ենք նվիրում,
Բայց բժիշկներն են վիտամին գրում:

ՍՈՆՅԱ ԹՈՌՆԻԿԻՍ

Տասնամյակի առթիվ

Մենք մի սիրուն թոռնիկ ունենք,
Հրաշք աղջիկ, փոքրիկ ունենք,
Տասնամյակը նա բոլորեց՝
Սեպտեմբերին ուրախ տոնեց:

Թող հարյուրից տասը լինի,
Երջանկության թասը լինի,
Թե որ արցունք լինի աչքիդ,
Երջանկության պահին լինի:

Ծնողներդ հպարտ լինեն,
Որ այդպիսի զավակ ունեն,
Երջանիկ են պապիկ, տատիկ,
Որ այդպիսի թոռնիկ ունեն:

Հորով, մորով ու քրոջով,
Քաղցր, անուշ երազանքով,
Թող երջանիկ ապրես կյանքում
Ու հաջողակ քո գործերում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Թող Պետրոսյան ազգանունով
Ապրես միայն մեծ պարծանքով,
Մորդ նման՝ բարի հոգով,
Հորդ նման՝ մեծ խելքի ծով:

Հարազատներ ունես հեռվում,
Որոնք շատ են քեզ կարոտում,
Ուր էլ լինես, սիրի՛ր նրանց,
Քանզի սերն է մեզ մարդ պահում:

Հիմա ծեր է քո պապիկը,
Էլ չի թռչում՝ ինչպես հավքը,
Բայց հոգին է հավետ ջահել,
Նա կթռչի դեպի գիրկդ:

ԻՄ ԵՐԱՉ ԵՐԿԻՐ

Իմ երազներում՝ իմ երազ երկիր,
Իմ անցած կյանքի իմ մուրազ երկիր,
Դառնությամբ լեցուն իմ Արցախ երկիր,
Համը շուրթերիս իմ բեքմազ երկիր:

Քաղցրն ու դառը քեզնից եմ տեսել,
Սիրել-ատելը քեզնից սովորել,
Ինչ որ լավը կա, քեզնից եմ տեսել,
Վաղուց եմ վատը իմ մտքից ջնջել:

Մանկության անմեղ խաղերն եմ հիշում,
Մեր պարզ ջրերը, ցողերն եմ հիշում,
Մեր Մռով լեռը՝ նոր Մասիս դարձած,
Ա՛խ, քեզ կորցրած դաղն եմ ես հիշում:

Քանի ողջ եմ ես՝ քեզ եմ միշտ ձգտում,
Ուր էլ որ լինեմ, դու ես միշտ մտքում,
Երկիր հարազատ, երկիր իմ Արցախ,
Թող վերջին շունչս փչեմ քո գրկում:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Իմ գրած բոլոր տողերը քոնն են,
Նրա մեջ թողած մտքերը քոնն են,
Իմ երազների տեսիքլը քոնն է,
Մորից ծնվելու հրաշքը քոնն է:

Մանուկ ժամանակ՝ գիշերներն անքուն,
Տանձ ու խնձոր եմ թալանել թաքուն,
Ա՛խ, դրանց համը չեմ առել վաղուց,
Հիմա մեռոն է դարձել իմ մտքում:

Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, Արցա՛խ իմ չքնաղ,
Սրտիս մեջ մխող դաղ, ի՛մ Ղարաբաղ,
Թո՛ղ հավետ ապրեն հերոսները քո,
Որոնք զոհվեցին, որ մնաս անկախ:

ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

Հոգնած օրերի ծանր մտքերից,
Երբ քայլում էի ծառուղիներով,
Նրանք ինձ տարան՝ անկախ իմ կամքից,
Վանդակում փակված գազանների մոտ:

Երբ նրանց տեսա՝ հրաշք կատարվեց.
Հանկարծ հասկացա ես նրանց լեզուն,
Թե ինչ լեզվով են խոսում իրար հետ
Թռչուն ու գազան, զանազան սողուն:

Կապիկներն իրար գլխի հավաքված,
Քննարկում էին մի հարց կարևոր,
Մեկը նստել էր ճյուղին չորացած
Ու ճղճղում էր ամբողջ կոկորդով:

Նա համոզում էր իր լսողներին,
Որ միավորվեն, մի բռունցք կազմեն,
Գահընկեց անեն օրանգուտանգին,
Քանի որ շատ է ուտում բոլորից:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Тапринского"

Նրանց լսելով՝ ձանձրացա իսկույն,
Իսկ կարևորը՝ հասկացա մի բան.
Թե մարդ, թե գազան պայքար են մղում,
Որ տեղ ունենան այս արևի տակ:

Հետո մոտեցա հաջորդ վանդակին,
Որտեղ օձերն են վխտում թունավոր,
Լոկ նրանց տեսքից ես սարսռեցի
Եվ որոշեցի հեռանալ փութով:

Ահա եղնիկը. իր չքնաղ տեսքով
Ինձ է գրավում անմեղ աչքերով,
Իմ խիղճը տանջեց նրան նայելուց,
Կածես թե ես եմ գերել կենդանուն:

Արջերը անվերջ վանդակն են չափում,
Մի պատից դեպի մյուսը գնալով,
Հետո ձանձրացած՝ խոր քուն են մտնում,
Իրենց արածը զուր համարելով:

Առյուծ ու վագր՝ անչափ խեղճացած,
Ասես միտք ունեն ինձ ուտել հում-հում,
Եթե անտառում պատահեն հանկարծ.
Ամբողջ մարմնով սարսուռ է անցնում:

Ես որոշեցի արագ հեռանալ,
Որ շուտ ազատվեմ տհաճ հույզերից,
Եվ համոզվեցի, որ ուր էլ գնամ,
Չեմ ազատվելու իրական կյանքից:

ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂԸ

Լեռներին բազմած այս գյուղը չքնաղ
Հին Մոխրաթաղն է՝ լքված, մոռացված,
Մացառների մեջ՝ կորած շիրիմներ,
Խարխուլ պատերով հնամյա տներ:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Երկու լուռ վկա կանգուն պատերով՝
Եկեղեցին է փլված տանիքով
Եվ հին պալատը իշխան Եսայու,
Ճատ վաղուց պատված թփերով մոշու:

Մացառների մեջ կորած պատմություն,
Որ թաքնվել է օտարի աչքից,
Ժամանակն այստեղ կանգնել է վաղուց
Եվ չի պատրաստվում սկսվել նորից:

Դեպի արևելք Խաչխրատ վանքն է,
Հազիվ նշմարվող քարերի շարքն է,
Այն մի ժամանակ հին սրբավայր էր,
Որտեղ դարերով մատաղ էր օրհնվել:

Տների հետքը վաղուց է կորել,
Գերեզմանոցն է միայն մնացել,
Ծռված խաչերով տապանաքարերն
Արդեն վաղուց են անտեր մնացել:

Բայց հայատառ են քարերը այդ հին,
Պատված գեղեցիկ, հարուստ նախշերով,
Դժվար ընթերցվող բառերն անցորդին
Տանում են դեպի անցյալն հեռավոր:

Իսկ ձորում գետն է հոսում վարարուն՝
Ծուրթերը փրփուր, ջուրը կապտագույն,
Հորդ աղբյուրներից սնունդ է առնում.
Ծուրջն անտառներ են, ծառեր հաստաբուն:

Բեքատու ծառեր շատ վաղուց չկան,
Վայրենացել են, դարձել ինքնիշխան,
Դարձել են փշոտ ու մանրահատիկ,
Բայց համ ու հոտով՝ միշտ անմահական:

Ուխտատեղի է այժմ այդ վայրը,
Այդտեղ են բերում մարդիկ մատաղը,
Մոմեր են վառում հին եկեղեցում,
Տիրոջն են խնդրում՝ ներել մեղքերը:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Распринского"

Քանի՛ այդպիսի վայր ունի հայը,
Ավերակների ցավ ունի հայը,
Մեր սերունդները՝ մեզնից խելացի,
Հույս կա՝ չեն լքի էլ իրենց երկիրը:

ՆՌԱՆ ՊԵՍ Է ՀԱՅՐԵՆԻՔՍ

Հայրենիքս քաղցր նուռ է,
Քաղցրությունից ճաք է տվել,
Հատիկները ցած են թափվել
Ու սփռվել աշխարհով մեկ:

Ես այդ նռան մի հատիկն եմ,
Հանգրվանած օտար հողում,
Դժվար է ինձ ուժով ճզմել,
Հյութս իմ մեջ է միշտ եռում:

Դառնում նեկտար անմահական,
Որից ես եմ ըմպում միայն,
Ես հարբում եմ հայավարի,
Թռչում դեպի տուն հայրական:

Դալար մնա հայոց ծառը,
Քաղցր լինի նրա նուռը,
Թող ճաք չտա նրա բերքը,
Գինի դառնա, լցվի կուժը:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ինչպես սրբավայր՝ աղոթքը շուրթիս
Քայլեմ քո հողում՝ ոտքերս բոբիկ,
Ծարաված ծնկեմ աղբյուրիդ ակին,
Կարոտս առնեմ, լիանա հոգիս:

Բարձրանամ կանաչ լանջերը սարի,
Զովանամ թավուտ քո անտառներում,
Ու բռնած հետքը նեղ կածանների,
Ոտքերս լվամ Թարթառի ջրում:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Մտնեմ կիսաքանդ քո եկեղեցին,
Որ ավերել է մեր նենգ թշնամին,
Ծուռ տամ գլխովը իմ մատաղացուն
Ու համբույրս տամ սևացած շեմին:

Գտնեմ իմ պապի շիրիմը կորած,
Մամուռը սրբեմ նրա խաչքարից,
Իմ մոմը վառեմ, շատ վաղուց մարած,
Որ հանգստանա կարոտած հոգիս:

ԵՍ

Գիտեմ՝ կան բազում մարդիկ աշխարհում,
Որոնք թեթև են տանում այս կյանքը,
Նրանց չի հուզում ամեն մի մանրուք,
Միայն թե հանկարծ չտուժվի ինքը:

Ոմանք ապրում են լոկ նրա համար,
Որ ուտեն-խմեն ճոխ սեղաններից,
Աշխարհի կեսն էլ ավերակ դառնա –
Հոգ չէ՝ ի՛ր գլխից մազ չպակասի:

Պատահում է, որ հոգսերից կքված,
Ես նախանձով եմ նայում այդ մարդկանց,
Խորհում եմ՝ ինչո՞ւ այդպես չեմ ապրել
Ինչո՞ւ եմ իզուր կաշվից դուրս եկել:

Բայց այդ տևում է միայն րոպեներ,
Ինձ պաշարում են մտքեր ու հոգսեր:
Այդպես է մայրս ինձ աշխարհ բերել,
Այդ պատճառով եմ բարձր ճչացել:

Թե այնժամ խոսել կարողանայի,
Կասեի. «Մայրի՛կ, զուր ես ինձ ծնել»,
Բայց դա տրված է ինձ բնությունից,
Իմ բախտն է այդպես ճակատիս գրվել:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Լա՞վ է դա, թե՞ վատ. իմս հենց սա է,
Պապերից թողած իմ հողը սա է,
Հայերեն գրված իմ տողը սա է,
Եվ հոգսերի մեջ իմ տեղը սա է:

ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐ

Երբ մանուշակն է բացվում ամոթխած,
Փնջում եմ իսկույն սրտի թրթիռով,
Այն նվիրում եմ կնոջս սիրած,
Հոգիս լցվում է անհուն բերկրանքով:

Ընծաս համեստ է, սակայն գին չունի,
Անչափ մաքուր է, բարուր է մանկան,
Ես նրա տեսքից, անուշ բուրմունքից
Նորից դառնում եմ տասնյոթ տարեկան:

Մենք արդեն ծեր ենք՝ հեռու մեր հողից,
Բայց չենք կտրվել մեր հայրենիքից,
Ու ամեն գարնան ղրիմյան հողում
Մանուշակներ եմ փնջում ես նորից:

Թող գոնե այսպես պահենք անցյալը,
Որ չծերանա մեզ պես մեր սերը,
Այսպես ապրելով ես ամեն գարուն,
Մանուշակներ եմ դաշտից բերում տուն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՊԱՏԳԱՄ

Ի՛մ զավակներ, ի՛մ որդիներ,
Դուք իմ կյանքի սուրբ մասնիկներ,
Մեր վառ սիրո մանուշակներ,
Դուք իրական մեր երազներ:

ГАУ РК "Национальная библиотека им. И.Гаспринского"

Ամեն մեկդ՝ սար թիկունքիս,
Սրտիս թրթիռ ու լույս աչքիս,
Մեր լեռների մաքո՛ւր-մաքո՛ւր
Ու սառնորակ ջուրն եք շուրթիս:

Թոռնիկներ եք մեզ պարգևել,
Տոհմածառս է ճյուղեր տվել,
Աշխատեցեք միշտ հայ մնալ,
Թեկուզ օտար հողում ապրեք:

Ձեր մոր կաթը՝ սուրբ, անարատ,
Միշտ ձեզ հետ է՝ հանց Արարատ,
Եվ օրհնանքը Տեր Աստծո
Ամեն ցավին դեղ է հաստատ:

Թիկունք եղեք իրար դուք միշտ,
Եվ մի դատեք, թե ով է ճիշտ,
Ամուր պահեք պատիվը ձեր
Եվ միշտ իրար ձեռք մեկնեցեք:

ՄԵՆՔ

Ծերանում ենք ես ու դու
Տարիների բեռի տակ,
Հոգս ու ցավին ի հեճուկ՝
Մենք դեռ ունենք նպատակ:

Մենք էլ ջահել ենք եղել՝
Պարզ ու մաքուր սրտերով,
Սիրել ենք և պսակվել
Առանց զուռնա ու դհոլ:

Որդիներ ես դու ծնել,
Պահել՝ որպես լավ ծնող,
Հիմա օջախ են դարձել,
Իրենց տունն ու տեղն ունեն:

Հազար ցավ ենք մենք տեսել,
Տուն, հայրենիք կորցրել,

ГАУ РК "Медиацентр имени Гаспринского"

Բայց մեր Տիրոջ սուրբ կամքով
Մահից, սրից ենք փրկվել:

Դու մի՛ տխրիր, սիրելի՛ս,
Որ մի տարի էլ անցավ,
Թող որ դուռդ բացողը
Դեմքդ տեսնի միշտ անցավ:

ԴԱՎԻԹԻՆ

Ծննդյան օրվա առթիվ

Դու մեր սիրելի առաջին բալիկ,
Սիրուն ու թմբլիկ իմ փոքրիկ հրաշք,
Քո ծնված օրը ես դարձա հայրիկ,
Մայրդ նվիրեց ինձ անհուն բերկրանք:

Շատ երազանքներ քեզ հետ կապեցինք,
Քո մանկան ճիչով տունս լցրեցիր,
Շատ գիշերներ էլ արթուն մնացինք,
Մինչև մեծացար ու բոյ քաշեցիր:

Տարիներն անցան հավքերի նման.
Դպրոց ու բանակ, ապա՝ բարձրագույն,
Հետո դժվարին տարիներ եկան,
Որոնք բերեցին ցավ ու տխրություն:

Պատերազմ եղավ, ամեն ինչ խառնվեց,
Քո կյանքի գետն էլ թեքվեց ուրիշ կողմ՝
Մինչև Ղրիմի ափերը հասցրեց,
Մենք էլ ստիպված շտապ եկանք քո մոտ:

Այժմ դու ունես սիրուն բալիկներ,
Հարգանք ու պատիվ քո շրջապատում,
Թիկունքիդ կանգնած՝ սիրող եղբայրներ.
Ծնողներիդ ես օգնության հասնում:

ГАУ РК "Медиацентрум. М. Гаспринского"

ԱՇՈՏԻՆ

Իմ երկրորդ զավակ, բալիկ սիրելի,
«Աշոտ» անունը մենք քեզ տվեցինք,
Որ լինես խելոք, հզոր, հաղթական,
Ինչպես մեծ արքան հայոց աշխարհի:

Մեծացիր առողջ՝ մենք քո թիկունքին,
Եվ չմոռանս քո սարը Մռավ,
Որտեղ էլ ապրես՝ քեզնով պարծենանք,
Չթողնես երբեք դու մեզ ամոթով:

Իմ սիրուն բալիկ, աճի՛ր, մեծացի՛ր,
Երբ որ մեծանաս, մեզ մի՛ մոռացիր,
Միշտ խղճով ապրիր՝ բարի գործերով,
Ու պատգամներս դու մի՛ մոռացիր:

ԱՐՄԵՆԻՆ

Հիշում եմ նորից քո ծնված օրը.
Աշնան բուրմունքն էր տարածվել օդում,
Երբ ծննդատան մեծ պատուհանից
Մայրդ ցույց տվեց քո փոքրիկ դեմքը:

Կարծես երեկ էր՝ դեռ հինգ տարեկան,
Պայուսակն առած՝ դպրոց գնացիր,
Առաջին հինգը քո օրագրում.
Ա՛խր, այդքան շուտ դու ե՞րբ մեծացար:

Մեր տարիները թռչում են, գնում,
Մենք ծերանում ենք, դու՝ ջահելանում,
Բայց դու մեզ համար փոքրիկ ես մնում,
Թեկուզ մեր կյանքի հավքերն են թռչում:

Այժմ դու հայր ես, մենք՝ պապիկ, տատիկ,
Իսկ եղբայրներդ՝ երկու հորեղբայր,
Քո բալիկները հասակ են առնում,
Բայց Արմենչիկ ես մեզ համար մնում:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Распринского"

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ

ՊԱՊԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Թոռը հարցրեց իր պապիկին.
– Ինչո՞ւ է ծուռ վազի մեջքը:
Պապը ժպտաց բեղի տակին.
– Որովհետև թույն կա մեջը:

– Խաբում ես ինձ, սուտլի՛կ պապիկ,
Եթե թույն կա այդ վազի մեջ՝
Խաղողն ինչո՞ւ է անուշիկ, –
Թոռը պապին նեղը գցեց:

– Այո, մանչս, շատ է անուշ,
Բայց ամեն բան այս աշխարհում,
Եթե շատ է մնում տեղում,
Թթվում է և դառնում է թույն:

ԳԱԳԻԿԸ ԵՎ ՈՒԼԻԿԸ

Գագիկն ասաց ուլիկին՝
Նայելով սուր պոզերին.
– Այդ ինչե՞ր են քո գլխին,
Տո՛ւր ինձ՝ տանեմ խոզերին:

– Ի՞նչ ես ասում, ա՛յ Գագիկ, –
Ասաց տատը թոռնիկին.
– Առանց պոզեր՝ ի՞նչ ուլիկ,
Ինչպե՞ս իրեն պաշտպանի:

– Հա՛, տատիկ ջան, դու ճիշտ ես, –
Գագիկն ասաց ժպտալով.
– Բայց էլ ինձնից չխլես
Պարսատիկս պոզավոր:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Գևորիկը, նստած պապի ծնկներին,
Նայեց նրա արդեն ճերմակ մազերին:
– Պա՛պ ջան, այդ ի՞նչ ձյուն է նստել քո գլխին:
– Ծերացել եմ հազար դարդ ու ցավերից,
Ճերմակել են իմ մազերը, – պապն ասաց:
– Թող ես ներկեմ քո մազերը ալեհեր,
Որպեսզի դու նորից դառնաս շատ ջահել,
Ի՞նչ ես կիտել թավ հոնքերդ դու իզուր,
Մեծ բան հո չի պատահել, մի տխրիր դու:

ՃՈՃԱՆԱԿ

Ճոճանա՛կ, ի՛մ ճոճանակ,
Սիրում եմ ես քեզ անչափ,
Մեկ թռչում ենք մենք երկինք,
Մեկ հայտնվում ենք գետնին:

Քիչ էլ ոտքիս որ զոռ տամ,
Քեզ հետ լուսին կթռչեմ
Ու երկնքի աստղերը
Շատ մոտիկից կտեսնեմ:

Սակայն, ի՞նչ եմ ես ասում,
Բա այնտեղից ո՞նց տուն գամ,
Մինչև հասնեմ ես այնտեղ՝
Արդեն պապիկ կդառնամ:

* * *

Փոքրիկ շնիկ, ի՛մ Չալիկ,
Քայլում ես դու միշտ բոբիկ,
Կգնեմ քեզ տաք կոշիկ,
Որ չմրսի քո տոտիկ:

* * *

Թուխսը կանչեց ճտերին.
– Եկե՛ք, մտե՛ք թևիս տակ,
Որ չթրջվեք անձրևից,
Տոտիկներդ լինեն տաք,

ГАУ РК "Медиацентр им. Г. Аспринского"

Եվ ագռավը չտանի,
Պետոն քարով չխփի,
Եկե՛ք մեկ-մեկ, անշտապ,
Որ հաշիվը չխառնվի:

ԳՈՌՆ ՈՒ ԾԻՏԸ

Գոռը տեսավ՝ ծառի ճյուղին
Ծիտը թառել, ծլվլում է,
Նրան դիմեց նա խստորեն.
– Լսի՛ր, ա՛յ ծիտ, ամոթ չէ՞ քեզ,
Արդեն կարգին դու մեծ ծիտ ես,
Սակայն երեք տառ դու գիտես:
Արի՛, նստի՛ր դու իմ կողքին,
Դաս սովորենք մենք միասին,
Հետո թռի՛ր, ուր որ կուզես
Ու գեղգեղա սոխակի պես:

ՑԵԽՈՏ ԽՈԶԸ

Ցեխոտ խոզը խոխոռան
Մեր հին մառանը մտավ:
– Ի՞նչ ես անում, ա՛յ անպետք, –
Ասաց նանը իմ պառավ:
– Ցեխոտ դնչով, ոտքերով
Կեղտոտում ես ամեն ինչ,
Շուրջբոլորդ ջուր շատ կա,
Գնա՛, մաքրի՛ր քեզ մի քիչ:
– Որ ուրիշից տարբերվեմ,
Պետք է ցեխում թավալվեմ,
Ինչո՞ւ փոխեմ իմ վարքը, –
Ասաց գոռոզ խոզուկը:

* * *

Այծը եկավ՝ տոտիկ-տոտիկ,
Ու պատրաստվեց նա ցատկի,
Ուզեց թռչել առվից այն կողմ.
Թրջեց և դունչ, և փորիկ:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Արջը եկավ մռթմռթալով,
Մի ծառ գտավ մեղրահացով,
Մեղուները վրա հասան,
Խեղճը փախավ թոնթորալով:

* * *

Ծիտը եկավ ծվծվալով,
Ասաց. «Կո՛ւտ տուր, հավի՛կ քույրիկ»:
Առավ կտցին հատիկ-հատիկ
Ու լվացվեց ջրիկ-ջրիկ,
Թռավ բույնը իր սիրունիկ:

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Շունը եկավ ժրաջան,
Կատվին դիմեց մռմռան.
– Իջի՛ր ծառից, ե՛կ խաղանք,
Ի՞նչ ես եղել լեղաճաք:

Կատուն ծառից մռմռաց.
– Կորի՛ր, – ասաց նեղացած, –
Միայն քո այդ շան տեսքից
Հատած պոչս մրմռաց:

ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Մուկը դիմեց կատվին ագահ.
– Լսի՛ր, եղբա՛յր, ես քեզ մատաղ,
Արի ապրենք հաշտ ու խաղաղ,
Տերդ՝ հարուստ, մառանը՝ լի,
Ինչի՞դ է պետք մուկը փոքրիկ,
Երբ որ միշտ կա միսը գառան:
– Լա՛վ ես ասում, ա՛յ ճստճստան,
Կողմնակից եմ ես հաշտության,
Քեզ հետ խաղալ եմ լոկ ուզում,
Թող չլինի էլ գժտություն:
– Չէ՛, չեմ ուզում ես քո խաղը, –
Սարսափահար ասաց մուկը.
– Քո խաղերը վատ են մահից:
Ու վազելով մտավ բույնը:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

ԷՇԻ ԽՐԱՏԸ

Փութով գոմ մտավ էշի քուռակը
Ու լացակումած գանգատվեց հորը.
– Անունս փոխե՛ք, «էշ» էլ չեմ ուզում,
Ծաղր ու ծանակի են ինձ ենթարկում:
– Է՛հ, որդի՛ս, – ասաց իմաստուն հայրը, –
Որքան էլ փոխես ազգիդ անունը,
Թե էշ ես ծնվել՝ մեջքիդ է բեռը:
Գլխավորն այն է, որ մեզ չեն մորթում.
Լուռ համակերպվիր ու փառք տուր Աստծուն:

ԽԵՂՃ ԳԱՌԸ

Գառնուկն ասաց.
– Կուզենայի՝ գայլ չլիներ,
Միշտ կանաչ խոտ ու ջուր լիներ,
Հովիվը՝ միշտ կողքիս կանգնած,
Ծունն էլ՝ ականջը միշտ սրած:

Գայլն էլ ասաց.
– Կուզենայի՝ լիներ մի գառ,
Որ իմ փորը շուտ կշտանար,
Թե չէ, եղբայր, սա ի՞նչ կյանք է,
Քաղցից շուտով ես կմեռնեմ:

Արծիվն ասաց.
– Կուզե՞ս, գառնո՛ւկ, արի՛ թռչենք,
Իմ բույնը հյուր քեզ կտանեմ,
Ձագերիս հետ դու կխաղաս,
Մսիդ համը նրանք կառնեն:

Հովիվն ասաց.
– Ի՛նչ թմբլիկ գառ ունեմ ես.
Որդիս շուտով ինձ հյուր կգա,
Կպատրաստեմ լավ խորոված,
Հոտը կընկնի աշխարհով մեկ:

ГАУ РК "Медиацентр М. И. Гаспринского"

Առակն ասաց.
– Եվ հովիվը, և գայլն անկուշտ,
Եվ արծիվը՝ բոլորն անշուշտ
Մի միտք ունեն իրենց գլխում՝
Ե՞րբ են գառան միսն ուտելու:

ԵՐԿՈՒ ՄԱՆՉՈՒԿ

Խաղում էին երկու մանչուկ,
Մեկը՝ հորթուկ, մյուսը՝ իշուկ,
Իրենց համար տրտինգ տալով՝
Ուտում էին խոտ ու կաճուկ:
Մեկ էլ մայրը՝ գիժ հորթուկի
Կանչեց նրան, թե՝ տուն արի:
Ու նախատեց նրան երկար,
Որ էշի հետ էլ խաղ չանի:
– Ինչո՞ւ, մայրի՛կ, լավ իշուկ է,
Ի՞նչ անենք, որ քիչ փրչոտ է,
Նա ինձանից խոտ չի խլում,
Նույնիսկ մի քիչ ամաչկոտ է:
– Լսիր, – ասաց կովն իմաստուն, –
Մենք էշ չենք, այլ՝ կով կաթնատու,
Եթե ընկեր լինես էշին,
Բեռ կկրես դու քո մեջքին:
Կանչեց մայրը իր քուռակին.
– Թող հորթուկին և արի տուն,
Մենք հո կով չենք, մեզ չեն կթում:

ԾԱՌՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

– Ջո՛ւր եմ ուզում, ջո՛ւր…
Տնքում էր ծառը:
Տերևն էր թոշնում,
Տխուր սվսվում:
Երկինքը պարզ էր՝
Ո՛չ ամպ, ո՛չ անձրև,
Արևն էլ վառ էր՝
Ուզում էր խանձել:

ГАУ РК "Медиатека им. К.Г. Паустовского"

Մի փոքրիկ աղջիկ,
Մոր ձեռքը բռնած,
Ուրախ, երջանիկ
Նայեց զարմացած:
Գեղեցիկ ծառը
Թոշնել էր հանկարծ:
Նա լացակումած
Հարցրեց մորը.
– Ինչո՞ւ է լալիս
Այս սիրուն ծառը:
– Ջուր է նա ուզում, –
Ասաց մայրիկը:

Աղջիկը հանգիստ
Հանեց իր շիշը,
Որ ծառը ջրի.
Ամոքեց վիշտը
Ծարաված ծառի:
Ու ժպտաց ծառը՝
Ճյուղերը պարզած,
Աղջիկն էլ ուրախ՝
Մոր ձեռքը բռնած,
Անչափ գոհ, հպարտ
Քայլեց իր մոր հետ՝
Ծառի օրհնանքը
Տանելով իր հետ:

ԽՆՁՈՐԸ

Ծառից ընկավ խնձորը,
Գլորվեց, թռավ ձորը,
Ոզնին ուզեց բռնել այն՝
Չհասցրեց, ջուրն ընկավ:

Քամին տեսավ, ծիծաղեց,
Ոզնու փշերը շոյեց,
Ծառից խնձորներ պոկեց,
Դեպի ոզնին գլորեց:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Թեթևացան ճյուղերը,
Ոզնիները ժպտացին,
Իսկ ջուրն ընկած խնձորը
Ձուկն ու գորտը կիսեցին:

Գոհ մնացին բոլորը,
Իսկ մնացած խնձորը
Կերան Արան, Գոհարը,
Եվ կշտացան բոլորը:

ГАУ РК "Медцентр им. И. Гаспринского"

ՔԱՌՅԱԿՆԵՐ

ГАУ РК "Медицентр им. И. Гаспринского"

ՄԱՐԴՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

* * *

Մարդ կա՝ շատ քաջ է,
Մարդ կա՝ բարի է,
Մարդ էլ կա՝ սիրտը
Կարծր քարից է:

* * *

Մարդ կա՝ սիրով լի,
Մարդ կա՝ բույր ունի,
Մարդ էլ կա՝ լեզուն
Թույն է ու լեղի:

* * *

Մարդ կա՝ կարգին է,
Մարդ կա բանգի է,
Մարդ էլ կա, որ միշտ
Տներ քանդող է:

* * *

Մարդ կա՝ համեղ է,
Մարդ կա՝ անհամ է,
Մարդ էլ կա, որ հենց
Շան լակաման է:

* * *

Մարդ կա՝ բերքով ծառ է,
Մարդ կա՝ խելքի ծով է,
Մարդ կա, որի գլխում
Հավերժ խելքի սով է:

* * *

Մարդ կա՝ խելք ունի,
Մարդ կա՝ բերք ունի,
Մարդ էլ կա, որը
Լոկ շան բարք ունի:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

* * *

Մարդ կա՝ շատ ուժեղ է,
Մարդ կա՝ խելացի է,
Մարդ կա՝ ուժն ու խելքը
Միայն փողի մեջ է:

* * *

Մարդ կա՝ բերքատու է,
Մարդ կա՝ խաբրտու է,
Մարդ էլ կա, ավա՛ղ,
Տան մեջ գող կատու է:

* * *

Մարդ կա՝ եզ է,
Մարդ կա՝ տեզ է,
Մարդ էլ կա, որ
Տակաքար է:

* * *

Մարդ կա՝ նախշուն է,
Մարդ կա՝ աշուն է,
Մարդ էլ կա, ավա՛ղ,
Միշտ այլոց շուն է:

* * *

Մարդ կա՝ դայաղ է,
Մարդ կա՝ սայաղ է,
Մարդ էլ կա, կարծես,
Բաց վերքի աղ է:

* * *

Մարդ կա՝ բանակ է,
Մարդ կա՝ դանակ է,
Մարդ էլ կա, որ միշտ
Դատարկ օշնակ է:

* * *

Մարդ կա՝ համբալ է,
Մարդ կա՝ թամբալ է,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Մարդ էլ կա՝ հաճախ
Հարամ լափող է:

* * *

Մարդ կա՝ քաշող է,
Մարդ կա՝ տաշող է,
Մարդ էլ կա՝ դատարկ
Փուքսը փչող է:

* * *

Մարդ կա՝ տուն է,
Մարդ կա՝ շուն է,
Մարդ էլ կա, որ
Օձի թույն է:

* * *

Մարդ կա՝ հայելի է,
Մարդ կա՝ ածելի է,
Մարդ էլ կա՝ դեմքը
Միշտ կասկածելի է:

* * *

Մարդ կա՝ անուշ է,
Մարդ կա՝ նանուշ է,
Մարդ էլ կա, ավա՛ղ,
Միշտ աչքի փուշ է:

* * *

Մարդ կա՝ գրող է,
Մարդ կա՝ ջնջող է,
Մարդ էլ կա՝ միայն
Ծենքը քանդող է:

* * *

Մարդ կա՝ գայլ է,
Մարդ կա՝ ուլ է,
Մարդ էլ կա, որ
Ծակ կուլա է:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Մարդ կա՝ գեշ է,
Մարդ կա՝ էշ է,
Մարդ էլ կա, որ
Հոգու փուշ է:

* * *

Մարդ կա՝ խելքը օվկիանոս է,
Մարդկանց համար մի փարոս է,
Մարդ կա՝ նույնպես մեծություն է,
Բայց մարդկության կեղտափոս է:

* * *

Մարդ կա՝ բարեխոս,
Մարդ կա՝ չարախոս,
Մարդ կա՝ սուս ու փուս,
Տուն քանդող, անխոս:

ԿԱՏԱԿ ՔԱՌՅԱԿՆԵՐ

Մատաղ լինեմ քո ջանին,
Մի պաչիկ տուր քո յարին,
Կանցնեն ջահել օրերը՝
Պաչը պետք չէ պառավին:

* * *

«Չէ» մի՛ ասա, «չէ» մի՛ ասա,
Սրտիս կանչին «չէ» մի՛ ասա,
Թե չես սիրում, ա՛յ անհոգի,
Երազիս մեջ այցի մի՛ գա:

* * *

Զոքանչ ունեմ՝ հանց փերի,
Ասես գազան է վայրի,
Հենց որ ստվերն իմ տեսնի,
Ձեռքը փայտին կմեկնի:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Քարը հողից է ծնվում, ամրանում,
Նրա ցավից է սեղմվում, քարանում,
Դա է պատճառը, որ հայոց հողում
Այդքան բարձր են լեռները լինում:

* * *

Տարիներս թևին տվին ու թռան,
Երազներս քամու թևին ո՞ւր թռան.
Հե՛յ, սպասե՛ք, թալան հո չէ՞, եղբայրնե՛ր,
Գրածներս գոնե թողեք ինձ մնան:

* * *

Եթե մուրճ կա ձեռքիդ այսօր,
Մեխ մի՛ կարծիր մարդկանց բոլոր,
Լա՛վ իմացիր՝ քեզնից վերև
Մի մի մուրճ էլ կա ամենազոր…

* * *

Լողալ չգիտի, բայց ծովն է մտնում,
Առանց փամփուշտի որսի է գնում,
Աչքերն են ուզում՝ ուժը չի պատում,
Իսկ ուրիշներին չեղածն է պատմում:

* * *

Ա՛խ, թռչում են օրերս,
Չեն հարցնում կարծիքս,
Մինչև գլխի եմ ընկնում,
Ճերմակում են մազերս:

* * *

Մատիդ մատանի տեսա,
Իմ սերը կորած տեսա,
Այդ ի՛նչ արիր, շա՛ն աղջիկ՝
Հույսերս մարած տեսա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Մեկը տասը տղա ուներ,
Մեռավ՝ վրան լացող չուներ,
Մեկն էլ մի կաղ աղջիկ ուներ,
Բայց այդ կաղը տասին արժեր:

* * *

Սարի լանջին՝ աղբյուր մի պաղ
Սիրած յարի համբույր մի լավ,
Ափսո՛ս, հուշեր նրանք դարձան,
Ու երբեմն գալիս են հյուր:

* * *

Հե՛յ, հե՛յ, կանչեմ սարերին,
Հա՛յ, հա՛յ՝ անցած օրերին,
Ջա՛ն, ջա՛ն ասեմ՝ կարոտած
Իմ առաջին համբույրին:

* * *

Ամեն մի վարդի ձեռքդ մի՛ մեկնիր,
Ուրիշի ծաղկուն պարտեզ մի՛ մտիր,
Քո այգում բացված շուշանը լավ է,
Քան թե դրախտի վարդերը ընտիր:

* * *

Մի կյանք կուզեմ ես ապրել
Այս անցավոր աշխարհում
Ու նրանով կյանք ծնել,
Քանի մահ կա աշխարհում:

* * *

Ա՛խ, ինչքա՛ն լավ է, երբ գիտես՝ ճամփիդ
Ոչ մի վառ ծաղիկ դու չես տրորել,
Ու քար ես դրել հայրենի պատին՝
Ոչ թե շինածն ես քանդել, ավերել:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

* * *

Մի՛ տրորիր կանաչը,
Մի՛ տրորիր կակաչը,
Մի՞թե, ո՛վ մարդ, չես լսում,
Նրա ողբն ու հառաչը:

* * *

Ի՞նչ կա քո սև աչերում,
Քո այդ քաղցր բառերում,
Որ դու այդպես ինձ տանջում,
Սիրտս մտնել ես ջանում:

* * *

Աչքեր ունես գրավիչ,
Մեջը՝ շաքար ու չամիչ,
Ով էլ լինի իմ տեղը,
Կմոռանա ամեն ինչ:

* * *

Աղջիկ ես դու քնքուշ նազով,
Սրտեր կայրես քո հայացքով,
Մի տղա կա. քո այդ սիրուց
Սիրտը դարձավ սիրո մեծ ծով:

* * *

Աղբյուր ես դու, ես՝ ծարավ,
Խմեցի՝ ջուրն ինձ այրեց,
Զովանալու փոխարեն՝
Աչքերիս քունն էլ փախավ:

* * *

Ամենքին ժպիտ դու մի՛ նվիրիր,
Ժպիտիդ գինը դու լավ իմացիր,
Քո ժպիտը միշտ քաղցր չի լինի,
Անմեղ հոգիներ կթունավորի:

* * *

Դու մի՛ վախեցիր ոչ մի տանջանքից՝
Ոչ մի կրակից ու ոչ մի սրից,

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Դու մի՛շտ վախեցիր, որ վերջում քեզնից
Մեր արդար Տերը հաշիվ պահանջի:

* * *

Կբուժվի կյանքում ստացած վերքը,
Կանցնի, կգնա, դու անհոգ մնա,
Ավելի վատ է խեղճի անեծքը,
Որը քո կյանքում անհետք չի մնա:

* * *

Եթե սիրեցիր խեղճ ու աղքատին՝
Կյանքում կքնես միշտ չոր տախտակին,
Թե անսեր առնես կուշտ ու հարուստին՝
Աչքդ կմնա փայտե չոր թախտին:

* * *

Հարևանս թող լավ ապրի,
Օգնենք իրար ամեն պահի,
Լավ է, որ նա հարուստ լինի,
Որ իմ քչին աչք չդնի:

* * *

Հավքի նման օրս թռավ,
Կյանքս առավ, հեռու տարավ,
Այսօր՝ ջահել, վաղը ծեր եմ,
Հասկացա, երբ նա հուշ դարձավ:

* * *

Հնում բոբիկ էր քայլում քահանան,
Իսկ այժմ ունի շքեղ մեքենա,
Թող Աստված ների և ինձ, և նրան,
Նման քարոզիչ լավ է չունենալ:

* * *

Մի թափեք աղբը բակում, փողոցում՝
Ո՛չ ձեր կերածը, ո՛չ չկերածը,
Որ հետո չապրենք մենք աղբանոցում,
Ու նորից ուտենք մեր իսկ նետածը:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Այդ ե՞րբ եկավ, ե՞րբ անցավ
Կյանքս՝ ինչպես մի երազ,
Անցավ հազար ցավ ու դավ,
Մնաց քաղցր մի մուրազ:

* * *

Ես էլ կանցնեմ շատերի պես՝
Աննկատ ու առանց դավ,
Բայց մտքերս, արի ու տես,
Գրքերիս մեջտեղ գտան:

* * *

Քանի՞ կյանք եմ ապրել ես.
Ո՛չ դու գիտես, ո՛չ էլ ես,
Քանի՞ մարմին՝ մի հոգով,
Աստված գիտի, բայց ոչ ես:

* * *

Կա՞ հանդերձյալ կյանք կամ, զուցե, չկա՞.
Մեր ուղեղներում պատասխան չկա,
Նրա փոխարեն հույսն է լուռ նստած,
Թե իբր այնտեղ դարդ ու ցավ չկա:

* * *

Քաղցրն ու դառը, համեղն ու թթուն
Միշտ հարկավոր են ապրելու համար,
Պատահում է, որ քաղցրն է սպանում,
Իսկ բուժման համար պետք է օձի թույն:

* * *

Բարին ու չարը բոլորիս մեջ կան,
Նայած գենի մեջ որից ինչքան կա,
Հաճախ շատ բարուց ծնվում է չարիք,
Բայց չարիքից է, որ բարին միշտ կա:

* * *

Լավ ու վատ մարդիկ աշխարհում չկան,
Բոլորս մեկ ենք, թե շեղում չկա,

ГАУ РК "Национальная б-ка им. Х. Гаспринского"

Եթե բույսի տակ կավ է կամ էլ քար,
Քաղցր ծիրանն էլ սալոր կդառնա:

* * *

Դու գնա, մեռիր, որ քեզ շատ սիրեմ.
Հաճախ այդպես է կյանքում պատահում,
Կեղտոտ փողերից մի քիչ նվիրում
Ու ազգի համար հերոս են դառնում:

* * *

Թե հետք ես թողել քո հայրենիքում,
Իզուր չես ապրել դու այդ սուրբ հողում,
Հողը հարազատ, սիրասուն մայր է,
Իր որդիներին նա չի մոռանում:

* * *

Ո՛չ ծնվելն է քո կամքով,
Ո՛չ՝ գնալն այս աշխարհից,
Հարուստ լինես, թե աղքատ՝
Մարդ ապրելն է քո կամքով:

* * *

Այո, տխուր է միշտ մայրամուտը,
Քեզ սպասում է գիշերը խավար,
Բայց թե չլինի այդ մայրամուտը,
Չի բացվի նորից առավոտը վառ :

* * *

Գետը ձգտում է շուտ հասնել ծովին,
Դեմ է այդ մտքին մայր հողը ծարավ,
Իր գիրկն է ուզում առնել սիրածին,
Որ բերք ու բարիք բերի լույս աշխարհ:

* * *

Ես անցվոր շող եմ իմ ապրած դարում,
Ծագած Հայաստան կոչված աշխարհում,
Իմ ջերմությունից կոկոնն է բացվում,
Հողն է ջերմանում, ծիլն է բոյ քաշում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Արդեն վաղուց է դադարել տեղալ
Գարնան անձրևը կյանքիս լեռներում,
Իսկ ես չեմ ուզում դադարել հուսալ,
Ձնհալի հույսով այգի եմ տնկում:

* * *

Վերին թաղից եկավ հովը,
Սիրտս հանկարծ մեղմ թրթռաց,
Ա՛խ, երևի իմ սիրածը
Արթնացել է՝ սիրուց հուզված:

* * *

Գարուն եկավ մեր սարերում,
Աղջիկները կարճ են հագնում,
Խենթանում են տղաները,
Աղջիկներին դա չի հուզում:

* * *

Անձրև, մի գա այդպես վարար,
Յարիս գալու ժամն է հիմա,
Թող գա՝ քաղցր համբույր առնեմ,
Հետո թափվիր որքան կուզես:

* * *

Մեկը շուշան է փնտրում դաշտի մեջ,
Սակայն քաղում է սիրտ դաղող եղինջ,
Քանի դեռ սերը խորն է սրտի մեջ,
Եղինջը աչքին՝ վարդ է դաշտի մեջ:

* * *

Աղբյուրի ջուրը խմեմ քո բռով,
Դիմացս լինի մեր սարը Մռով,
Թեկուզ աշխարհը ինձնից նեղանա,
Միայն թե յարս չլինի խռով:

* * *

Սիրողին թվաց՝ ինքն է շատ սիրում,
Ու իր տեսածը ոչ ոք չի տեսնում,

ГАУ РК "Национальная библиотека им. К. Гаспринского"

Ով դեմ է խոսում՝ իսկույն նեղանում,
Վատն ուզողին է բարեկամ կարծում:

* * *

Ապրում եմ այժմ Ղրիմում,
Հոգիս այնտեղ է՝ Արցախում,
Ինչքան էլ այստեղ ճոխ ապրեմ՝
Հոգիս քաղցած է միշտ մնում:

* * *

Շատ լավ բան է խմիչքը,
Լիքը բաժակն է կիրքը,
Բայց հենց նրան տրվեցիր՝
Արագ կառնի քո խելքը:

* * *

Ասում են, թե կեղտ է փողը,
Բայց այդ կեղտն է փողը լցնում,
Անգամ եթե հաշվում ես այն,
Մատներդ ես շուտ-շուտ լիզում:

* * *

Մի հայրենիք կա հեռվում,
Որից կարոտս է եռում,
Երազներում՝ ես այնտեղ
Անցած օրերս եմ փնտրում:

* * *

Տարիներս հավքի պես
Տարան ջահել օրերս,
Լավն ու վատը թևերին՝
Տարան, տվին ամպերին:

* * *

Հաճախ նստում եմ, հաշվում,
Լավ օրերս եմ ջոկջկում,
Այդ մեծ պարկում իմ կյանքի
Միայն մեկ բուռ է մնում:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

* * *

Ես՝ ծեր կաղնի անտառում,
Փչակիս մեջ՝ մեղվաբույն,
Մեղրից ես հյութ եմ քամում,
Բայց կացնով են ինձ փնտրում:

* * *

Սարի բարձունքից հպարտ գոռացի.
– Ես հա՛յ եմ, հա՛յ եմ...
Բարձր սարերը արձագանքեցին.
– Ես հա՛յ եմ, հա՛յ եմ...

* * *

Չասված մտքերս նետում եմ անփույթ
Աղբարկղի մեջ, ինչպես անպետք նյութ,
Գուցե նրանց հետ այն անցաթուղթն է,
Որը կտաներ հաղթական բարձունք:

* * *

Գյուղից հարս բերին՝ իբրև անարատ,
Քաղաքի բարքից՝ լրիվ անտեղյակ
Բայց շուտով հարսը դարձավ շատ գիտակ,
Իսկ քաղաքացիք՝ կյանքից անտեղյակ:

* * *

Ինչպես որ կասեր Օմար Խայամը,
Գինին է բերում բերանի համը,
Բայց շատ խմելուց քո երիկամը
Մոռանալ կտա քո ախորժակը:

ԴԱՌԸ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

* * *

Կռիվն սկսվեց, շատ տներ քանդեց,
Ավազակներն էլ հերոսներ դարձան,
Ով որ անմեղ էր՝ ամեն ինչ կորցրեց,
Աթոռակռիվ ուժգին սկսվեց:

ГАУ РК "Медиацентр им. М.Гаспринского"

* * *

Մենք թաքուն էինք մեր հողը հիշում,
Գրում կամ երգում ու վշտից լացում,
Հիմա դա ոչ ոք էլ չի արգելում,
Բայց դե դրանից ոչինչ չի փոխվում:

* * *

Մենք ամբողջ ուժով գոռում ենք, ճչում,
Մեր հարյուր տարվա եղեռնն ենք հիշում,
Բայց չենք հասկանում կամ էլ չենք ուզում
Հավատալ՝ ուժն է ճիշտը որոշում:

* * *

Արդարությունը սրով էր լուծվում,
Իսկ այժմ փողն է աշխարհին տիրում,
Մենք չունենք փող և ատոմային ռումբ,
Այդ իսկ պատճառով մեզ չեն պաշտպանում:

* * *

Խելացին ու գործազուրկը գնում են երկրից,
Մեր գյուղերն ու քաղաքները անտեր են մնում.
Իսկ գազազած շունը անվերջ հաչում է ընից,
Բայց, փա՛ռք Աստուծո, դեռ մնում է նստած իր որջում:

* * *

Գիտեմ՝ ասածիս էլ լսող չկա,
Բայց դե ի՞նչ անեմ՝ հոգումս մուռ կա,
Ես ինքս գրեմ, ինքս էլ կարդամ,
Գուցե թե մի օր ուրիշն էլ կարդա:

* * *

Թե որ բարձրացավ աշխատավարձդ,
Վա՛յ, կրկնապատվեց քո տնավարձը,
Թե ավելացավ մի քիչ թոշակդ,
Իսկույն թանկացան շուկան ու դեղը:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Երբ ես փոքր էի, քիչ բան գիտեի,
Երբ հասունացա, շատ բան փնտրեցի,
Երբ որ ծերացա, այնժամ հասկացա,
Որ ինչքան գտա, նույնքան էլ կորցրի:

* * *

Այն ի՞նչն է, ասեք, որի սկիզբը
Տեսել եք, սակայն բան չեք հասկացել,
Երբ տեսնեք վերջը, համոզված եղեք՝
Չեք հասկանալու դարձյալ իմաստը:

* * *

Ծովը ծարավ է քաղցր ջրերի,
Խենթ սիրահարը՝ քաղցր համբույրի,
Սիրուց մերժվածը, հոգով դառնացած,
Միշտ սպասում է խոսքին զղջումի:

* * *

Արևը թեքվեց դեպի մայրամուտ,
Հետևում լույս է, իսկ առջևում՝ մութ,
Հետևում կյանք էր՝ լավ կամ ոչ այնքան,
Առջևում մի բան՝ բոլորիս անհայտ:

* * *

Փող է հարկավոր՝ գլխարկ գնելու,
Որը պատիվ է մարդուն բերելու,
Գլխարկը միշտ էլ բարձր է գլխից,
Թեև գլուխն է փող աշխատելու:

* * *

Վատ երազ է տեսել մուկը՝
Ջուր է լցվում իր ծակ բույնը,
Իսկ դռանը, թարսի նման,
Չորացել է կատվի բուկը:

* * *

Մեծ ժողով էր անտառում՝
Գայլերն էին հավաքվել,
Դա ժողով չէր հասարակ՝
Ոչխար էին բաժանում:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

* * *

Տանձը ուզեց
Անկախ լինել՝
Ընկավ ծառից,
Վերցնող չեղավ՝
Սառավ ցրտից:

* * *

Ամրացնող է մեխի թափը՝
Կարճ է, թե ոչ նրա չափը,
Բայց թե գլխին դու չխփես,
Նա չի կապի իրար փայտը:

* * *

Երբ ջահել էի՝ երազում էի,
Ամպերից վերև թևածում էի,
Իսկ հիմա արդեն ես երազում եմ,
Որ այդ տարիքում նորից լինեի:

* * *

Գետը միշտ կուզեր հոսել դաշտերով,
Ծառեր, ծաղիկներ ջերմ համբուրելով,
Քան խոր կիրճերով մեծ ծովին հասնել,
Հազար կեղտ ու ցավ իր մեջ առնելով:

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԸ

* * *

Այն, ինչ նախկինում աղքատն էր ուտում,
Հիմա մոդայիկ բան է քաղաքում,
Աղքատի խաշն ու հացը ժենգալով
Սեղանի զարդ են հիմա համարում:

* * *

Պատռված շորով ջահել տղային
Միշտ ծաղրում էին՝ աղքատ կոչելով,
Հիմա չես ջոկի հագուստի տեսքից՝
Տղա՞ է, թե՞ կին՝ ճղված շալվարով:

ГАУ РК "Медиатека им. М. Гаспринского"

* * *

Ծխող կանանց վրա միշտ խեթ են նայել,
Նրանց կոչել են կամ ջադու, կամ ծուռ,
Հիմա շատ ջահել հարս ու աղջիկներ
Սկեսրոջ մոտ են ծխախոտ վառում:

* * *

Հնում տերտերը բոբիկ էր քայլում,
Հիմա թանկարժեք «Պեժո» է վարում,
Պսակ օրհնելը լոկ կոպեկներ էր,
Արդ դոլարով է վարձը նա առնում:

* * *

Հարուստը միշտ էլ ձիով է շրջել,
Աղքատը՝ ոտքով, կոշիկ է մաշել,
Ինչպես էլ շրջեն աղքատ ու հարուստ՝
Վերջում ձեռքով են բոլորին տանում:

* * *

Երբ դու քայլում ես կոկիկ ասֆալտով
Կամ էլ գյուղական ցեխոտ ճամփեքով,
Ոտքիդ տակ նայիր՝ չհայտնվես փոսում,
Քանզի ոչ միշտ են փոսերը լցնում:

* * *

Գյուղը դատարկվեց, քաղաքը լցվեց,
Քաղաքում տաքուկ ջերմոց կառուցվեց,
Բայց բերքի համը իսպառ վերացավ,
Երբ որ գյուղացին այնտեղ գրանցվեց:

* * *

Թե ծառ ես տնկում՝ բերքատու տնկիր,
Վայրի ծառերը առանց քեզ կաճեն,
Թե երգ ես գրում, նոր միտք տարածիր,
Որ քեզնից հետո ուրիշը երգի:

ГАУ РК "Медиацентр им. Ю. Гаспринского"

* * *

Հերոսներ պետք են ամեն ժամանակ,
Ամեն մի երկիր իր հերոսն ունի,
Նրանք ծնվում են հենց այն ժամանակ,
Երբ որոշվում է ապրել-չապրելը:

* * *

Մի բաժակ ջուրը կյանքը կփրկի,
Բայց ջրով երբեք կենաց չենք խմում,
Մի բաժակ օդին հույսեր է փշրում,
Եթե վերջինն է դատարկվող շշի:

ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

* * *

Հարբում է նա գիշեր-ցերեկ,
Չի տարբերում մեկ ու երեք,
Մոռանում է խեղճը հաճախ,
Թե որտեղ էր ինքը երեկ:

* * *

Հարբեցողը միշտ «ութեր» է գրում,
Աչքին ցերեկը գիշեր է թվում,
Ինչ որ գլխում է՝ այն լեզվի ծայրին,
Հիմար է դառնում նույնիսկ խելացին:

* * *

Որքան էլ ասես թունդ հարբեցողին,
Նա չի հասկանա, քանզի տհաս է.
Հարազատ որդուն սոված կթողնի,
Իսկ փող տվողին կասի՝ տղաս է:

* * *

Խմելիս միշտ քո չափը ճանաչիր,
Ինչ կա սեղանին՝ քոնը մի՛ կարծիր,
Հարբած վիճակում երբեք մի՛ փորձիր
Քացով տալ այլոց վաստակած հացին:

ГАУ РК "Медицинский И. Гаспринского"

* * *

Թե ընտանիքում
Հարբեցող մարդ կա,
Նույնն է՝ ծառի մեջ
Կրծող որդ շատ կա:

* * *

Սատանան եկավ,
Ծշի մեջ նստեց,
Նրա մեջ մտավ,
Ով իրեն բացեց:

* * *

Օղին ասաց. «Ես ուժեղ եմ,
Մարդուն մժեղ կդարձնեմ,
Ով ինձ շատ թունդ սիրահարվեց,
Կմոռանա և տուն, և տեղ»:

* * *

Ես օղին եմ, օղին եմ՝
Չկա ինձնից հզոր զենք,
Եթե առյուծ էլ լինես,
Մեկ է, ես քեզ կհաղթեմ:

ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Ախր, շա՛տ ես գեղեցիկ,
Կուզեմ թշիդ տալ պաչիկ,
Բայց վախենամ՝ իմ թուշը
Դառնա կապույտ ապտակից:

* * *

Շատ սիրեցի քաղցր մեկին,
Ասես մեղր էր թասի միջին,
Բայց դեռ չառած համը նրա,
Մեղրը տվին շան լակոտին:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Բոյդ, բուսաթդ՝ ամեն ինչ տեղին,
Մագնիսդ կպավ սրտիս լարերին,
Էլ պրծում չունեմ էդ ձգող ուժից,
Ստվերի նման՝ անբաժան քեզնից:

* * *

Զմեռ լինի, թե ամառ՝
Դու գարուն ես ինձ համար,
Ծիածանվի մեր սերը,
Դառնա սիրավառ կամար:

* * *

Եթե սիրում ես դու արդեն մեկին՝
Քունդ կփախչի գիշերվա կեսին,
Ապրեիր, էլի՛, հանգիստ քո կյանքով,
Որ քացով չտաս դատարկ վերմակին:

* * *

Թե սիրեցիր, իսկ նա՝ ոչ,
Հաշվիր՝ ընկույզ գտար փուչ,
Մի քչփորիր երազում՝
Որդ կգտնես նրա մեջ:

* * *

Ջա՛ն, ջա՛ն ասի քեզ մտքում,
Համբույր տվի քեզ մտքում,
Պարզվեց՝ նույնն ես մտածել,
Բայց ուրիշն էր քո մտքում:

* * *

Հոգիս ասաց. «Սիրի՛ր, ինչքան կարող ես»:
Աչքս ասաց. «Նայի՛ր, ինչքան կարող ես»:
Բայց տարիքս սաստեց, ասաց. «Հալիվո՛ր,
Հայ-հայդ անցել, լոկ վայ-վայդ է մնացել»:

ГАУ РК "Медиацентр им. А. Гаспринского"

* * *

Երբ ջահել էի՝ մի ջերմ համբույրից
Ցավն իսկույն կանցներ: Իսկ երբ ծերացա,
Փորձեցի դեղով բուժել ցավերս.
Ավա՛ղ, համբույրն էր հրաշքը միայն:

* * *

Կռացար, որ ջուր խմես,
Ա՛խ, չռվեցին աչքերս,
Բացված կուրծքդ հմայեց,
Հեռուն տարավ մտքերս:

* * *

Շորորում ես՝ հանց նավակը ծովում,
Ես քամի դառնամ, խուտուտ տամ ծոցում,
Ալիքները թող քեզ բերեն ափն իմ,
Որ ճաշդ եփես մեր խոհանոցում:

* * *

Թուշդ՝ ինչպես շիկնած խնձոր,
Կուրծքդ ճերմակ՝ կլոր-կլոր,
Աղջի, հերիք խեղճ ջահելին
Տանես ճամփով ոլոր-մոլոր:

* * *

Թե քարացել է հողը՝ կմեռնի,
Թե ճահճացել է ջուրը՝ կմեռնի,
Եթե չեն հիշում կենդանի մարդուն,
Ուրեմն՝ չկա՛, մեռել է վաղո՛ւց:

* * *

Ջուրը քարին դում* կդարձնի,
Կինը մարդուն մոմ կդարձնի,
Սովը կատվին մուկ կդարձնի,
Սուտն էլ մկանն ուղտ կդարձնի:

---

* Դում – ավազ

ГАУ РК "Медиатека им. Ю. Гаспринского"

* * *

Ազատությունը գազանի պես է,
Բայց լավ է, եթե նա գիշատիչ չէ,
Խոտակերների բանը միշտ բուրդ է,
Երբ ազատ կյանքը վանդակի մեջ է:

* * *

Փորձն ու խելքը միասին
Մարդուն դարձնում են հասուն,
Տգիտությունն է միայն
Դարձնում նրան անասուն:

* * *

Գազանն ինչքան էլ ձեռնասուն լինի,
Ներսում արթուն է գազանը միշտ էլ,
Հենց արյան կանչը գլուխ բարձրացնի՝
Գազան կդառնա տնային շունն էլ:

* * *

Բարեկամ է շունը մարդուն,
Թե համարես քեզ բարեկամ,
Թե շան պես ես վերաբերվում,
Նա դառնում է շուն իսկական:

* * *

Յուրաքանչյուր ցավ իր բուժումն ունի,
Լոկ ծերության դեմ ոչ մի դեղ չկա,
Կարող է բուժել քեզ միայն հոգիդ,
Եթե ջահել ես դու պահում նրան:

* * *

Առյուծն ու արջը մի օր վիճեցին,
Թե ով է հարուստն ամբողջ անտառի,
Բայց հաշվի չառան կարծիքը փղի,
Որի մեջքին է քսակը փողի:

* * *

Բութ մարդկանց հաճախ ենք ծաղրում,
Բայց ոմանց հենց դա է ձեռնտու,

ГАУ РК "Музей им. Р. Аспринского"

Նրանք մեզ էշի տեղ են դնում
Ու դրանից լիուլի օգտվում:

* * *

Աստված թող հեռու պահի վրեժից,
Եթե գալիս է սիրած կնոջից,
Հզոր թշնամիդ կարող է ներել,
Բայց կինը երբեք չի հանի մտքից:

* * *

Եթե կնոջդ հաշվին ես ապրում՝
Նրան «ջա՛ն» ասա դու ամեն վայրկյան,
Իսկ եթե ինքդ ես դրամ աշխատում,
Կեսը տուր նրան՝ նորից ասա «ջա՛ն»:

* * *

Վատ լուրն արագ է թռչում գնդակից,
Թեկուզև այն գա աշխարհի ծայրից,
Ճիշտն անհրաժեշտ է միշտ ապացուցել,
Իսկ սուտը դրա կարիքը չունի:

* * *

Ինչ մտքիդ մեջ կա, դա է լոկ քոնը,
Ինչպես թռչունը սեփական բնում,
Իսկ հենց որ լեզվիդ կանգնեց քո միտքը,
Լեզուդ մտքիդ է թշնամի դառնում:

* * *

Էշը միշտ էշ է՝ լինի դա բակում,
Մի կորած գյուղում, թե մեծ քաղաքում,
Թե խելքին փչեց՝ կանգնում է, զոռում,
Բոլորն էլ աչքին էշ են երևում:

* * *

Մարդ կա՝ իր տեսքով վագր է իսկական,
Վտանգի պահին մկան է նման,
Մարդ էլ կա՝ տեսքով շատ է աննշան,
Վտանգի պահին վագրը կդողա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гостринского"

ԴԱՐԱԲԱԳՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Հայրենիքն իմ՝ Ղարաբաղ,
Գյուղն հարազատ՝ Մոխրաթաղ,
Ազգս ու ծուպս՝ մինչև պապ
Տերտերներ են եղել սաղ:

* * *

Մի հարս բերինք՝ թազա, թազա,
Ոնց թոնրի հաց՝ թաժա, թաժա,
Դու մի ասա՝ սկեսրոջ համար
Թազա հարսը երկրաշարժ ա:

* * *

Մատաղ լինեմ խնձոր դոշիդ,
Էդ հոշնած պիլոր թուշիդ,
Աղջի՛, մեղք եմ, թո՛ղ մի անգամ
Համը առնեմ նուռ պռոշիդ:

* * *

Զոբանի կերը մածուն ա,
Կով քթողի փսացուն ա,
Ինքը՝ սարում, յարը՝ տանը՝
Մտքում նրա տաք ծուցում ա:

* * *

Լոդրը քնեց ծառի տակեն,
Ղուշը եկավ նստեց ծառեն,
Նշան փռնեց, ծրտեց կլխեն,
Թռչեց, քյնաց իրա պանին:

* * *

Քաղցր նոռնը՝ թոշը կարմուր,
Մեչը՝ գյուլուլ քանի հարուր,
Տեսքը, ասես, տոշ ա պիլոր,
Ծառն էլ ջահիլ ախճիգ մաքուր:

* * *

Ջբումս պահեմ խնձորը,
Նորից քյնամ մեր ծորը,
Թա վար յարս ինձ մոտ կյա,
Պիրածս տամ, պաչեմ թոշը:

ГАУ РК "Медиацентр им. Р. Гаспринского"

* * *

Մենակ եզով վար չի ինիլ
Չորուկ ծառով բար չի ինիլ,
Ինչքան էլ որ շատ փող ինի՝
Փողով սիրած յար չի ինիլ:

* * *

Ափսո՛ս, բաղը բար չտվեց,
Սերմը հողումը ծիլ չտվեց,
Ինչքան էլ որ չրչրվեցի,
Իմ յարը ինձ պաչ չտվեց:

* * *

Փսակվելը ծանր լուծ ա,
Սմեն վզետ հլորված ա,
Ինչքան կուզես տու հոռ արա,
Ճպատը հազիր կացած ա:

* * *

Իմացալ ըմ՝ իմս տու ըս,
Լուսս, մթենս, կյանքս տու ըս,
Հի՞նչ իմանամ, թա փսակվեմ
Վզես տիրած չաթուն տու ըս:

* * *

Ճղարանց ծորը հեռու ա,
Հղեն էլ շատ ծռմծոռ ա,
Բայց քու տված մի լավ պաչը
Ինձ համար սուրբ մեռոն ա:

* * *

Մռավ սարը կանաչ ա,
Յարս հմընչ համաչ ա,
Մի կերպ թոշան պչեցի՝
Իմ արևը չամիչ ա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Ցեխուտ գոմշից տու հեռու կաց՝
Հաքվովը քեզ ցեխուտ կանե,
Փողով սիրուց տու հեռու կաց,
Մի օր պատեն քեզ դեմ կանե:

* * *

Մե՞տրտ ա ախպուրեն ծորը,
Թոշը կարմիր էն խնձորը,
Խնձորեն համը քեզ մնա,
Ինձ չտաս էտ խակ շլորը:

* * *

Նա մինչև մարթի քյինալը
Սուս ու փուս ար, հմաշկուտ ար,
Հենց որ քցեց կնգա շալը,
Ճրաղաց ար, թունդ կարկուտ ար:

* * *

Մութ քշերից տու մի վախիր
Ու լղանաք տու մի փախիր,
Քշերն ըսկի էլ մեղք չոնի,
Տու փիս մարդուց միշտ վախեցիր:

* * *

Ի՞նչ անեմ, թա մադար ըս,
Վենը կլխավ խաթա ըս,
Թա վար տանեմ մեր տոնը,
Տանս քաղցր կյաթա ըս:

* * *

Սիրտը մի պարզ աղպուր ա,
Քար մի նետեք անտեղի,
Ինչքան էլ որ պարզ ինի,
Տիղմը վերև կհանի:

* * *

Մարդը առանց հայրենիք՝
Առանց հարսի հարսանիք,

ГАУ РК "Медиацентр им. К. Гаспринского"

Դափ ու զուռնան նվագում,
Ուրիշի պարն ես պարում:

* * *

Տու ինձ հետի թառլան ղուշ ըս,
Սիրո պողը քցիր տոշս,
Քու մեր ասաց.«Մեր թայը չըս».
Տեռավ հունցը աշկես փոշը:

* * *

Կաճ մի կեցեր քու էտ դերյան,
Օրիշները, ա՛խ, կտեհնան,
Կլխես վերթը տուրուր կկյա,
Թա քու մասին փիս կխոսեն:

* * *

Ես՝ շինացի, տու՝ քաղքեցի,
Հի՛նչ կրակ ա՝ քեզ սիրեցի,
Ծերունք դեմ ըն մերոնց շենին,
Իսկ մերունք էլ՝ ծեր քաղաքին:

* * *

Սրտես մեչին տու մեծ դաղ ըս,
Համ կյարուքվա անգին շաղ ըս,
Քեզ մատաղ ա տոնս, տեղս,
Տու իմ բաղի ծաղկած ծառն ըս:

* * *

Խնձոր ըմ պահալ ջուրումս,
Տանեմ՝ օտե սիրած յարս,
Թաքուն պահեմ նրա մորից,
Թե չէ վայը կգա կլխիս:

* * *

Ես ուսանող, տու ուսանող,
Փսկվեցինք առանց ծնող,
Շուտով կինի մեզ մի խոխա,
Հո՞ւ կինի մեր խոխան պահող:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Քյնամ քաղեմ սարի խոռնը,
Բաղը մտնեմ, քաղեմ նոռնը,
Հայբեն լցնեմ, քցեմ կոռնս,
Քյնամ թակեմ յարիս տոռնը:

* * *

Քու աշկերը՝ հունցը ճրաք,
Տոշիդ մեչը՝ բաղչու մարաք,
Մինչև աշունք եկ տիմանանք,
Վեր փսակվենք, մի ջան տեռնանք:

* * *

Հանդից քաղեմ մնեշակ,
Յարիս անուն՝ Մնեշակ,
Երկու ծաղիկ մի հոտով՝
Հոտը շնչեմ մի սաղ կյանք:

* * *

Ես քեզ տեսա՝ մետքս շաղվեց,
Իմ սաղ ջանը փշքաղվեց,
Քեզ նմանեն ես տեսալ չըմ,
Ասես կյանքիս լուսը պացվեց:

* * *

Ճղուպուր, ճղուպուր,
Ծառեն յրա շատ պեցուր,
Սլբանակավ, քարավ տուր,
Թա խիճիճ ա, պիր, ինձ տուր:

* * *

Մեր հանդերում հարյուր բաղ կա,
Ամեն ծաղկում մաքուր շաղ կա,
Թա սիրածը ուրիշին տան,
Ջահել սրտում թաքուն դաղ կա:

* * *

Հրսանիք ա՝ տաշ ու տուշ,
Հարսնեն անունն ալ՝ Անուշ,

ГАУ РК "Медиацентр им. К. Гаспринского"

Ջահել փսեն աշկը լուս,
Իսկ չուզողի աշկը փուշ:

* * *

Թա վար վերթնը մեչան ա,
Ճար ու ճուրը հեչան ա,
Ցավն ու չոռը մոտիկից
Քեզ թվում է՝ խաչան ա:

* * *

Գայլին իզուր չասես՝ քուչի՛,
Նա հո շուն չէ՝ իզուր հաչի,
Թե զենք չունե պատահողը,
Լավն են ա, որ թողնի, փաղչի:

* * *

Քաղաքում փեչը գազավ են վառում,
Իսկ շենում փեղը էշով են պերում,
Գազը կտրվեց՝ քաղաքում սով ա,
Սաղ ինի էշը՝ խոտով ա ապրում:

* * *

Հարը հնձի, մարը փնջի,
Խոխան օտե, մեշկը պնդի:
Ապան նստե, չիբուխ քաշի,
Տատին թիլավ գուլբա նախշի:

* * *

Ղարաբաղի բարբառը,
Հունցը վարար Թարթառը,
Մեր հադերի կեղտերը
Քշի ներքի հանդերը:

* * *

Մեր բարբառի խոսքը բարդ ա,
Տաշվող քար չի ու շատ սարթ ա,
Ղարաբաղցին բարի մարթ ա,
Բայց դուզյախա, կողքը հաստ ա:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Ապան մատաղ քեզ, բալես,
Մեր օջախը վառ կանես,
Հազար լեզու էլ գյիդաս,
Մեր հայ լեզուն թարգ չանես:

* * *

Տանս ծառեն թազա ճողնը,
Պարարտ ինի տակե հողը,
Թող պռոկը ցորտ չտանե,
Բարը չոտե շոնն ու կյուլը:

* * *

Ղարաբաղցին անմար պող ա,
Թա փչեցին՝ կրակ ու ծոխ ա,
Միշտ վառ պահե մեր օջախը,
Վեր թշնամին վախից դոռա:

* * *

Ես քյնացող, տու մնացող,
Կյանքդ ապրես անմնացորդ,
Ոսկու տեղակ գիրք եմ թողնում,
Որ հայերեն կարդա թոռդ:

ՄԵՐ ՇԵՆԸ

Շենիս անունը Մոխրաթաղ,
Մի դրախտ ա ծռաբաղ,
Տառնամ նորից մի խոխա,
Պեպիգ վազ տամ թաղե-թաղ:

Մեր Ինը մաս եղցին սուրբ ա,
Ապ ու պապի շինած տորք ա,
Հազար անգամ մեզ կտորեն,
Մինն էլ մնա, հաշվի զորք ա:

Մեր Հենգ շենի ճղպրոտը,
Դերուն ծորը, Խաչ խռատը,
Վերը ասեմ, վերը թողեմ,
Սահման չոնե թռչող մետքը:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

Քիշերները նրանց հետ ըմ,
Առավոտը աշկս պանում,
Ղուշու նման ծերքաս թռչում,
Թեփուռներն ա ծեռքիս թողում:

Իմ առաչին ջահիլ սերը,
Աշկից հեռու թաքուն տեղը,
Վար չտեսնան իզուր տեղը,
Շառավ չտան անմեղ տեղը:

Հիմա էլ կա իմ հին շենը,
Թորքի ծեռքավ քանդած տոնս,
Շատ ըմ հեռու, ուժս պակաս,
Բայց այնտեղ է ուշքս, մետքս:

ԿԱՏԱԿ ԵՐԳ

Մայրիկին՝ զույգ սապոգներ,
Աղջկան էլ՝ չուլկիներ,
Խեղճ հայրիկին՝ տրեխներ,
Այն էլ չունի տրխատան.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը փլավ կուտի,
Աղջիկը՝ սերը կաթի,
Իսկ հայրիկը անոթի՝
Փիփերթ անյուղ, անալի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկին՝ կինո, թատրոն,
Իսկ աղջկան՝ ինտերնետ,
Իսկ խեղճ հայրիկը անքուն
Մաքրում է գոմ, հավաբուն.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկին՝ տաք խորոված,
Իսկ աղջկան՝ հավ եփած,
Հայրիկը, ճարը կտրած,

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Թերմացքին էլ է պատրաստ.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը «Նիվա» կուզի,
Իսկ աղջիկը՝ լիմուզին,
Հայրիկի սայլն է շատ հին,
Ձի էլ չունի, որ լծի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը գնաց Սևան,
Իսկ աղջիկը՝ Երևան,
Հայրիկը փայտի գնաց,
Որ ձմռանը տաքանան.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկին՝ կրեպդեշին,
Իսկ աղջկան՝ կրեմպլին,
Էժան շալվար հայրիկին,
Գոտի չունի, որ կապի.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

Մայրիկը՝ պարապ նստած,
Աղջիկը՝ սիրած գրկած,
Հայրիկի շալվարն է ծակ,
Իսկ ծակն էլ՝ ձեռքով ծածկած.
Դարդ ու բալա է, ցավ ու կրակ է:

ГАУ РК "Медиацентр им. Гаспринского"

ԱՌԱԿՆԵՐ

ГАУ РК "Медицентр им. И. Гаспринского"

ԳԱՅԼԻ ՊԱՐՏՔԸ

Ձմեռվա կեսին մի գայլ կար սոված.
Ձոռով քարշ տալով ոտքերը հոգնած,
Գնում էր դանդաղ՝ լեզուն դուրս հանած,
Ցրտից դողալով, աչքերը հոգնած:

Մեկ էլ ի՛նչ տեսավ՝ առյուծը նստած,
Ահագին մի եզ առաջին դրած,
Հանգիստ լափում է՝ դունչը արնոտած,
Իսկ չորս բոլորը՝ ոսկորներ ցրված:

Խեղճ գայլի դնչից փսլինքը ծորաց.
Էլ չդիմացավ ու մոտիկ գնաց,
Առյուծը մի պահ դժգոհ մոլտաց,
Բայց քանի կուշտ էր՝ սոված ժպտաց:

Գայլը ուժերը մի կերպ հավաքեց,
Նրանից պարտքով մի ոսկոր խնդրեց:
Առյուծին, ասես, խնդրանքը հուզեց,
Բայց, նախ և առաջ, մի պայման դրեց.

– Մսոտ ոսկորը հալալ լինի քեզ,
Բայց որ չուրանաս՝ օրենք կա այսպես,
Թաթդ թանաքում պիտի թաթախես
Ու ա՛յ էս թղթին քո թաթնահետք թողնես:

Բայց ի՛նչ իմանար անգետը սոված,
Թե այդ թղթի մեջ ինչ է հորինված,
Նա բրդոտ թաթը մի լավ թաթախեց,
Որտեղ ցույց տվին՝ այնտեղ հուպ տվեց:

Հետո առյուծից անչափ գոհացած՝
Նստեց թփի տակ, ոսկորը կրծեց,
Փափուկ խաշամին գլուխը դրեց,
Հոգնած ու դարդոտ աչքերը փակեց:

ГАУ РК "Национальная им. К. Гаспринского"

Անցավ մեկ տարի: Մի օր էլ հանկարծ
(Ոչ բարով լիներ այդ օրը բացված)
Աղվեսը բերեց մի ծրար կնքված,
Ասաց. «Առյուծի մոտից է բերված»:

Գայլը նոր հիշեց պարտքը մոռացած,
Բացեց ծրարը՝ մնաց շվարած.
Այնտեղ այնպիսի՛ հաշիվ էր գրված,
Որից մեր խեղճի մարմինը դողաց:

Աղվեսը թուղթը նրանից վերցրեց,
Ակնոցը դրեց, ուշադիր կարդաց,
Հետո նա գայլին զարմացած դիմեց.
– Ինչո՞ւ ես այդպես դողում դու հուզված:

Եզ ես պարտք վերցել՝ մեծ ու գիրացած,
Թաթնահետքդ, ահա, ներքևում դրված,
Թե՞ կարծում էիր՝ նվեր է տրված
Կամ էլ քո պապի կտակն է թողած:

– Ա՛յ աղվես եղբայր, սո՛ւտ է անկասկած,
Ոչ թե մի եզ էր, այլ՝ ոսկոր կրծած,
Այս մեկ տարվա մեջ ոսկորը հանկարծ
Ինչպե՞ս եզ դարձավ, այն էլ՝ գիրացած:

– Մի՞թե չգիտես՝ դա տոկոսն արեց,
Թող տունը քանդվի, ով դա հնարեց,
Այդ պինդ թակարդը որին էլ բռնի,
Հաշվիր, որ մորթին նրա կհանի:

Խոր ցավից ոռնաց գայլը կատաղած.
– Բողոք կգրեմ վերևներն, – ասաց:
– Ո՞ւմ պիտի գրես, ա՛յ ծալը պակաս,
Վերևում նրա եղբայրն է նստած:

Մեկը օրենք է գրում հորինված,
Մյուսն էլ իր օգտին կիրառում է այն:
Այնպես որ, հերիք լացես ու ոռնաս,
Ինչ էլ որ անես, պարտքդ պիտի տաս:

ГАУ РК "Национальная библиотека им. Н. Гаспринского"

Ի՜նչ աներ գայլը, սար ու ձոր ընկած,
Քանի՛ գառ տվեց տոկոսի դիմաց,
Այդպես էլ հսկա պարտքը չմարեց.
Ոսկորը եկավ ու բկին կանգնեց:

Մի օր էլ, պարտքից ու կյանքից հոգնած,
Իր ժառանգներին պարտքի տակ թողած,
Ոտքերը ձգեց, հոգին ավանդեց,
Մեզ էլ այսպիսի մի առակ թողեց:

«ԲԱՐԵՐԱՐ» ԳԱՅԼԸ

Մի նիհար մայր էշ իր քուռակի հետ
Կանաչ խոտի տեղ կածուկ էր ուտում,
Ժառանգն էլ անհոգ տրտինգ էր տալիս.
Իրեն աշխարհի տերն էր նա զգում:

Մեկ էլ մի կուշտ գայլ նրանց դեմ կանգնեց,
Մորն ու քուռակին ուշադիր զննեց,
Ու մինչ խեղճերը կուչ եկան վախից,
Վերջինս հանգիստ ճառել սկսեց.

– Վա՛յ, խեղճ իշուկներ, ինչքա՛ն եք սոված,
Աշխարհս լիքը խոտ է ու հաճար,
Իսկ դուք փշեր եք ուտում դառնահամ,
Մի՞թե ձեր տերը դաժան է այդքան:

Ա՛յ, այն բլրից դեն շատ է կանաչը,
Ես չեմ հասկանում՝ ո՞րն է արգելքը,
Կերե՛ք, գիրացե՛ք, ի՛նչ է ձեր հալը,
Կուզե՞ք՝ ես հիմա ցույց տամ այդ տեղը:

Մի՛ հավատացեք սուտ բամբասանքին,
Թե մենք գազան ենք ու ձեր թշնամին,
Օրենքը մեկ է բոլորիս համար,
Ու մենք՝ ենթակա ամեն մի տառին:

ГАУ РК "Национальная им. Х. Таспинского"

Թաթս դնում եմ մեր սուրբ օրենքին,
Երդում եմ տալիս ձեր մեծ ու փոքրին,
Որ այսուհետև, քանի դեռ ես կամ,
Ոչ ոք չի դիպչի ձեր հատիկ մազին:

Էշերը ճառից սաստիկ հուզվեցին,
Գայլի ցույց տված տեղը վազեցին
Եվ, ճիշտ որ, կանաչ բացատ ճարեցին,
Ուրախ ու զվարթ անուշ արեցին,
Օրհնեցին նրանք գայլին մեծահոգ
Ու երբ կշտացան, տուն դարձան անհոգ:

Արջը տեսավ այդ ու խիստ մտահոգ
Դիմեց բարերար գայլին ինքնագոհ.
– Լսի՛ր, գայլ եղբայր, այդ դու ո՞ր օրից
Բժիշկ ես դարձել էշերի ցավին,
Այդքան բարություն, ասա, որտեղի՞ց,
Թերթերն են գրում նույնիսկ քո մասին:

– Գնա քո բանին, մի՞թե կարծում ես,
Խելքս է պակաս կամ հիմար եմ ես,
Այսօր ես կուշտ եմ, իսկ նրանք՝ սոված,
Վաղվա համար եմ մտածում այդպես:

Թող որ գիրանան նրանք օր-օրի,
Իմ կերակուրը խոտ չէ կամ գարի,
Ու կգա մի օր, թող Աստված չանի,
Սոված կմնամ, այնժամ ո՛վ գիտի…

ՇՆԻԿԻ ԽԱՂԸ

Մի փոքրիկ շնիկ նստել էր բակում.
Անգործ էր՝ պոչի հետ էր նա խաղում:
Մի թափառական շուն քմծիծաղեց,
Ու հանդիմանեց՝ կես կատակ, կես լուրջ.
– Ինչո՞ւ ես այդպես պոչիդ հետ խաղում,
Մեր ազնիվ ցեղն ես դու խայտառակում,
Բան ու գործ չունե՞ս՝ անցորդին կծիր,

ГАУ РК "Национальная библиотека им. М.Г. Аспринского"

Եթե չես կարող՝ հետևից հաչիր,
Գնա մի կատու բռնիր ու գզիր,
Քո բռնած գործից գոնե ամաչիր:
– Գնա քո բանին, ինձ հետ գործ չունես,
Քո խորհուրդները լավ է քեզ պահես,
Ես այդ բոլորը վաղուց եմ փորձել,
Դրա արդյունքը ես շատ լավ գիտեմ:
Փորձեցի կծել՝ քացի ստացա,
Կատվին բռնեցի՝ չանկռեց իմ դունչը,
Լավ է՝ պոչիս հետ ես միայն խաղամ,
Քան արնոտ դնչով ցավից վնգստամ:

ՍԱՏԱՆԱՅԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մի չար սատանա գնում էր դաշտով,
Հետն էլ՝ ժառագը՝ պոչավոր մի ճուտ,
Սովորեցնում է հայրը եռանդով
Ու քարոզում է իր ուսմունքը սուտ:

Հենց այդ ժամանակ մի խեղճ գյուղացի՝
Մահակը ձեռքին, կովն առաջն արած,
Տանում էր դաշտը կանաչ արոտի,
Դա էր ապրուստի միջոցը միակ:

Մեկ էլ այս կովը հանկարծ վեր ցատկեց,
Սկսեց վազել, ցավից բառաչել,
Տերն ուզեց բռնել, բայց չհաջողվեց,
Ու գյուղավարի մի լավ հայհոյեց.

– Ա՛յ սատանայի հերը անիծվի՛,
Ի՞նչ եղավ հանկարծ էս անասունին,
Ո՛չ օձ կա, ո՛չ գայլ, որ նրան կծի,
Այս ի՞նչ փորձանք է օրը կեսօրին:

Սատանի ճուտը, սաստիկ զարմացած,
Դիմեց իր հորը՝ ցույց տալով նրանց.
– Հայրիկ, այդ մարդը գի՞ժ է, թե՞ հարբած,
Ինչո՞ւ է նա մեզ այդպես հայհոյում:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

Նրանցից հեռու՝ գետի այս կողմում,
Մենք զբոսնում ենք հանգիստ, զրուցում:
Իսկ հայրը ուրախ ժպտում է որդուն,
Նրան է դիմում՝ գոհ իր արածից.

– Հիմա կմեկնեմ, իմ խելոք բալիկ.
Թեև այստեղ ենք՝ գետի այս կողմում,
Մատս այնտեղ է՝ կովի պոչի տակ,
Այդ պատճառով է նա մեզ անիծում:

Առակս այն է՝ հեռու, թե մոտիկ,
Թե վատություն են քեզ ուզում անել,
Դու սատանայի դասը միշտ հիշիր,
Այնժամ կիմանաս՝ ով է այդ արել:

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆԸ

Մի մեղվապահի գլուխը խառն էր՝
Իր մեղվանոցն էր անտեր մնացել,
Փեթակներում էլ կյանքը եռում էր,
Նրանցից մեկում կռիվ էր ընկել:

Մի խումբ մեղուներ՝ իրար միացել,
Ընդդիմություն են փեթակում կազմել,
Քննադատելով ընդունված կարգը,
Իրենց ղեկավար մեղու են ընտրել:

Բզզոց ու տզզոց փեթակի ներսում,
Իրար հակասող ճառեր են ասում.
– Պետք է վերջ դնել կախվածությանը,
Մենք ազատ, անկախ փեթակ ենք ուզում:

Ինչո՞ւ աշխատենք մենք ամբողջ տարին,
Իսկ մեղվապահը լցնի իր փորը,
Մինչև ե՞րբ պիտի տուրք տանք օտարին,
Մի՞թե հերք չէ մեզ ազատ բոռը:

ГАУ РК "Национальная им. И. Гаспринского"

Մի խումբ հավաքվեց, ջոկվեց բոլորից,
Թռավ, հեռացավ մեծ մեղվանոցից
Եվ հարյուրամյա կաղնու փչակում
Նոր փեթակ ստեղծեց՝ հեռու ամենքից:

Անցավ ժամանակ: Փեթակը աճեց,
Նեկտար հավաքեց ու մեղր շինեց,
Նույնիսկ փախուստի օրը նշեցին՝
Մեծ անկախության տոն հռչակեցին:

Բայց ուրախ կյանքը երկար չտևեց,
Երբ անուշ մեղրի հոտը տարածվեց.
Անտառի բոլոր բնակիչների
Ախորժակն իսկույն նա խիստ գրգռեց:

Բոլորին պատեց մեծ ուրախություն՝
Դա լիներ գազան, սողուն կամ թռչուն,
Միայն մի միտք էր բոլորին տանջում՝
Ո՞ր ճանապարհն է տանում մեղրատուն:

Սև, ծեր ագռավը թառեց մեծ ծառին,
Գտավ աշխատող ճանճերի ուղին,
Լավ հետազոտեց՝ բնից մինչ գետին,
Ու լուրը հասավ արջի ականջին:

Արջն էլ շտապեց դեպի փչակը,
Մեղրահոտն առավ՝ ուրախ մռթմռթաց,
Ծառի բնի մեջ խրեց ճանկերը,
Վերև բարձրացավ զգույշ, անշտապ:

Մեղրաճանճերը վտանգն զգացին
Եվ արջի վրա խմբով գնացին,
Խեղճը հազիվ էր թաթը ներս խոթել,
Երբ նրան ծառից ցած գլորեցին:

Սկյուռ, կզաքիս եկան գիշերով,
Գողացան մեղրից՝ թաքուն կամ զոռով,
Մժեղ ու մրջյուն, զեռուններ բազում
Ծառը բարձրացան թոռով ու ծոռով:

ГАУ РК "Национальная библиотека им. Гаспринского"

Խեղճ մեղուները ցավի մեջ ընկան,
Ազատությունը թանկ նստեց նրանց,
Եվ չկար մեկը, որ լիներ պաշտպան.
Աշունը եկավ, ու ցրտերն ընկան:

Կերը պակասեց, բոռը շատացավ,
Անտառում հազար ու մի դարդ ու ցավ,
Իսկ ազատության մեծ քարոզիչը
Նոր փեթակ ճարեց, թռավ, հեռացավ:

Վերջապես մի օր անտառապահը
Գտավ անտառում մեղվի փչակը,
Հանեց փչակից, բերեց մեղվանոց,
Ու նոր շունչ առավ կորած փեթակը:

Ազատությունը, իհարկե, լավ է,
Թե պաշտպան չունի, անպայման ցավ է,
Հաղթելը հեշտ է, քան պաշտպանվելը,
Մանավանդ, եթե չորս կողմը դավ է:

ԷՇԻ ՄԵՂՔԸ

Անտառ էր մտել մի հզոր վարակ,
Բոլորի կյանքն էր հավաքել բուռը:
Թռչուն ու գազան լուրը իմացան,
Բոլորին պատեց մահվան սարսուռը:

Անտառում հարգված մի քանի գազան
Առյուծ արքային արագ լուր տարան.
Թանկ ընծաներով դուռը գնացին,
Որ դեղ ու դարման գտնի վարակին:

Առյուծն էլ երկար-բարակ մտածեց,
Արքային վայել որոշում հանեց.
Ամեն մի ցեղից նա մեկին ընտրեց,
Բոլորին շտապ ժողովի կանչեց:

ГАУ РК "Молодежный центр им. И. Гаспринского"

Առյուծը ելավ, բարձր տեղ նստեց,
Վտանգի մասին բոլորին պատմեց,
Հետո մեկ առ մեկ գահի մոտ կանչեց,
Նրանց կարծիքը իբր թե լսեց:

Վերջում էլ մի բու՝ կյանք տեսած, ճաղատ,
Աչքերը՝ մեծ-մեծ, բառերը՝ հատ-հատ,
Նա գլուխ տվեց արքա առյուծին,
Իր կարծիքն ասաց հավաքվածներին.

– Եղբայրնե՛ր, քույրե՛ր տարբեր ցեղերի,
Պատճառը մեղքն է մեզանից մեկի,
Դա հաստատում է դիրքը աստղերի.
Իսկ թե ով է նա, թող ինքը պատմի:

Առյուծը գովեց նրա ելույթը,
Հրաման տվեց. «Բոլորդ հերթով
Իմ առջև ծնկե՛ք, պատմե՛ք ձեր մեղքը՝
Ինձնից ոչ մի բան չթաքցնելով:

Առաջինը ես կսկսեմ պատմել,
Թե ինչ մեղքեր եմ մինչ այսօր գործել»:
Պատմեց, թե քանի եղնիկ է կերել,
Բայց արդարացավ՝ քաղցած է եղել:

Դե, ո՞վ էր գժվել՝ դա մեղք անվաներ,
Բոլորն ասացին. «Օրինական է,
Անտառը քոնն է, արա ինչ կուզես,
Այստեղ մեղք չկա՝ ապացուցված է»:

Հետո գայլն եկավ ամաչկոտ տեսքով,
Պատմեց, թե ինչպես կոտորեց մի հոտ,
Բայց նա բաժին էր հանել առյուծին,
Վերջինս նրան համարեց հերոս:

Եվ այսպես հերթով թռչուն ու գազան
Պատմեցին անկեղծ ու մեղա եկան,
Նույնիսկ սև օձը, որ մարդ էր խայթել,
Անմեղ համարվեց և արդարացվեց:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Распутинского"

Վերջապես հերթը հասավ խեղճ էշին,
Որը ժողով էր եկել պատահմամբ,
Ականջները կախ լսեց բոլորին:
Առյուծը դիմեց նրան ձայնով բամբ.

– Հը՛, դո՞ւ ինչու ես գլուխդ կախել,
Առա՛ջ եկ, պատմիր՝ ի՞նչ մեղք ես գործել,
Ինձ թվում է, թե պատճառը դու ես,
Մաքուր անտառը դու ես վարակել:

– Եղբայրներ, քույրեր, ի՛նչ մեղք, ձե՛զ դուրբան,
Բայց որ նեղում եք՝ կպատմեմ մի բան.
Տիրոջս արտն եմ մտել մի անգամ
Ու կանաչ արտից պոկել մի բերան:

Ասաց, թե չասաց՝ հայ-հարայն ընկավ,
Առյուծը տեղից հանկարծ վեր թռավ.
– Դու ամոթ չունե՛ս, հիմա՛ր անասուն,
Մենք կերել ենք, բայց սոված ենք եղել
Ու չենք զբաղվել թալանով քեզ պես:

Հենց որ առյուծը վճիռ կայացրեց,
Ամբողջ ոհմակը հարձակման անցավ.
Էշին գցեցին ու հոգին առան,
Արևը խեղճի ընդմիշտ խավարեց:

Դրանով ցավը վերացավ, թե ոչ,
Չիմացավ, ավա՛ղ, անտառում ոչ ոք,
Տուժեցին միայն էշն ու իր տերը,
Մյուսներն էլ դարձան ավելի խելոք:

ԱՐՋԸ ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

Մի անգամ արջը, հոգնած իր կյանքից,
Հասավ քաղաքի գազանանոցին,
Լսեց աղմուկը նա գազանների,
Որոշեց տեսնել ցեղակիցներին:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Մի կերպ սողոսկեց ցանկապատից ներս,
Հանդիպեց նրանց երես առ երես,
Տեսավ՝ փակված են վանդակների մեջ,
Ու գազան սիրտը բրդոտի փափկեց:

Բայց երբ նկատեց, որ նրանց առաջ
Ուտելիքով լի ամաններ շատ կան,
Յուրաքանչյուրին՝ իր սիրած կերը,
Ծողացին նրա ճպռոտ աչքերը:

– Ա՛խ, ի՛նչ լավ կյանք է՝ իսկական դրախտ.
Գլխներին՝ տանիք, տակը՝ փափուկ թախտ,
Ուտելիքը՝ ծով, կյանքը՝ ապահով,
Ապրիր՝ չեմ ուզում՝ ահա քեզ լավ բախտ:

Կամաց մոտեցավ մի քանի արջի,
Որոնց մայր լեզուն նա մանկուց գիտեր:
– Ինչի՞ց եք դժգոհ, եղբայրներ բարի,
Որ մռթմռթում եք դուք օր ու գիշեր:

Հապա ինձ նայեք՝ քնձռոտ, սոված,
Կարոտ եմ նույնիսկ ոսկորի հոտած,
Անձրևին, շոգին՝ ընկած սար ու ձոր,
Կերածս՝ կաղին կամ փտած խնձոր:

Նրա համոզիչ խելացի ճառին
Պատասխանեց մեկն՝ արցունքն աչքերին.
– Ասածդ ճիշտ է, բայց մենք ի՞նչ անենք,
Կարոտն է տանջում այստեղ բոլորին:

Ճաղերից այս կողմ դու պետք է լինես,
Որ լավ հասկանաս ցավը մեր սրտի,
Քո նիհար, սոված, բայց ազատ կյանքին
Գիշեր ու ցերեկ ձգտում է հոգիս:

– Դե որ այդպես է՝ տեղներս փոխենք,
Քանի մարդ չկա՝ կողպեքը բացենք,
Դու գնա անտառ, ինչպես ուզում ես,
Ես էլ վանդակում կփորձեմ ապրել:

ГАУ РК "Национальная библиотека имени Гасринского"

Ասացին՝ արին. ոչ արջավարի,
Կասեի, նույնիսկ, քաղաքավարի,
Խոստացան իրար՝ մեկ ամիս հետո
Նորից հանդիպել առանց վկայի:

Հաջորդ առավոտ զազանապահը
Զարմանքով տեսավ՝ բաց է վանդակը,
Բայց առաջվա պես տեղում էր արջը,
Միայն փոխվել էր արտաքին տեսքը:

Մի գիշերվա մեջ նիհարել էր շատ,
Հազիվ էր քայլում, վրան հալ չկար,
Անասնաբույժին կանչեցին շտապ,
Ասաց. «Բան չկա, սնունդն է պակաս»:

Եվ հայտնվեցին արջի ամանում
Եփած կարտոֆիլ, միս, մեղր, բանան.
Կարծես ամեն ինչ լավ էր սկզբում,
Բայց շուտով փոխվեց կարծիքը նրա:

Այցելուները՝ և ծեր, և մանուկ
Իրեն են նայում չտեսի նման,
Կերի փոխարեն քարեր են նետում,
Կարծես ուզում են դառնալ արջասպան:

Մի պառավ կին էլ ձեռքով «չանչ արեց»,
Երեսին թքեց, մի լավ անիծեց:
Գիշերներն էր լոկ քիչ հանգստանում,
Խեղճն ամեն վայրկյան օրերն էր հաշվում:

Մեկ ամիս չանցավ. կաղ ու սևերես
Անտառի արջը պայմանը խախտեց,
Մի կերպ հետ եկավ իր նախկին տեղը,
Մեղավոր ձայնով ծեր արջին խնդրեց.

– Ների՛ր, ցեղակի՛ց, արարքիս համար,
Այս ի՞նչ փորձանք է իմ գլխին եկել,
Գնա՛, տե՛ր կանգնիր անտառիդ ազատ,
Ես էլ ետ դառնամ իմ վանդակը նեղ:

ГАУ РК "Национальная б-ка им. М. Гаспринского"

Խոստանում եմ, որ քեզ կեր կպահեմ,
Մեկ-մեկ էլ կգաս՝ կարոտս կառնեմ,
Իմ աչքով տեսած անտառի կյանքը
Չեմ ուզում նույնիսկ երազում տեսնել:

– Ի՞նչ է պատահել, մեր բրդոտ ախպեր,
Ինչո՞ւ ես նորից ետ վերադարձել,
Ինչո՞ւ ես կաղում, հիվանդացե՞լ ես, –
Հարցրին նրան այս ու այն կողմից:

– Դե պատմեմ՝ լսեք գլխիս եկածը,
Ասես կատարվեց սրտիս ուզածը,
Նոր էի հասել անտառի ծայրը,
Երբ վրա տվին բոռն ու մոծակը:

Նրանցից փախա և մտա շամբուտ.
Քամի սկսվեց՝ անձրև ու կարկուտ,
Մի քարանձավում ապաստան գտա,
Անձրևից հետո փոքր-ինչ չորացա:

Քիչ հանգստացա. փորս բողոքեց,
Ու սովոր ժամին ուտել պահանջեց:
Անձրևն ավարտվեց, ես մտա անտառ,
Ինչ որ պատահեց՝ ստիպված կերա:

Անտառում միսը չորս հատ ոտք ունի,
Նրան բռնելու հույս էլ չունեի.
Դեռ բախտս բերեց, որ լավ աշուն էր,
Կաղնու, հաճարի պակաս չունեի:

Մի օր էլ կաղնու մի բարձր ծառից
Մեղրի հոտ առա, վեր մագլցեցի,
Հենց որ մոտեցա մեղրոտ փչակին,
Մեղրաճանճերը դունչս խայթեցին:

Բայց ախորժակը հաղթեց կարճ խելքին,
Թաթս մեկնեցի, որ հասնեմ մեղրին,
Մեկ էլ խմբովին ինձ վրա տվին.
Թարսի պես ոտքս դրի չոր ճյուղին:

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

Դրանից հետո շատ բան չեմ հիշում…
Միայն հասկացա՝ ներքև եմ թռչում,
Մեկ էլ որ նորից աչքս բացեցի,
Ծառերը շուրջպար էին սկսել:

Չգիտեմ՝ ինչպես հասա մի գետի,
Թռա ջրի մեջ, խորը սուզվեցի,
Երբ մեղուները թողին, հեռացան,
Դուրս եկա ջրից, փռվեցի ափին:

Մի օր էլ հոգնած, մի քիչ պառկեցի,
Ծների հաչոց, աղմուկ լսեցի,
Թվաց՝ ծանոթ է ձայնը շների,
Խաբվեցի, ավա՜ղ, ուշ ընկա գլխի:

Տրաքոց լսվեց. մի շեկլիկ աղվես
Ասաց. «Արջ ախպեր, դու ի՞նչ է, խո՞ւլ ես,
Որսորդն է գալիս, քո մորթին փրկիր,
Թե չէ պատրաստի ձմեռվա քուրք ես»:

Նոր գլխի ընկա, որ բանս բուրդ է,
Էլ չնայեցի՝ քար է, անդունդ է,
Փախա ու պրծա վաղաժամ մահից,
Երբ ուշքի եկա, արդեն մթնել էր:

Այսպես օրերով ես թափառեցի,
Փոշմանած գլխիս թաթով խփեցի,
Բայց դուք մեր համառ ցեղը հո գիտեք.
Հետ վերադառնալ դարձյալ չուզեցի:

Մի օր էլ տխուր մտքերով տարված,
Ձորն էի իջնում՝ մի կածան գտած,
Մեկ էլ ոտքիս տակ մի բան շրխկաց.
Ոտքս հուպ տվեց թակարդն անիծված:

Ցավից գոռացի, տեսա ճար չկա,
Ոտքս ջարդելով՝ մի կերպ դուրս պրծա,
Թքեցի ազատ անտառի վրա,
Այդպես ստիպված դեպի ձեզ եկա:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Վանդակի արջը ինքն էլ էր նեղված,
Թեկուզ միշտ կուշտ էր՝ չէր վազում հոգնած,
Բայց նա սովոր չէր այդպիսի կյանքի,
Կամավոր, ուրախ, թողեց ու գնաց…

Անտեղյակ մարդիկ թող լավ իմանան՝
Դա գազան լինի, թե մարդ մեզ նման,
Թե կյանք ես ուզում ազատ ու անկախ,
Պետք չէ մտածել արջերի նման:

ՓՐԿԱՐԱՐԸ

Մի անգամ հզոր արքա առյուծը
Ընկնավ որսորդի փորած խոր հորը,
Դուրս գալու հնար չկար ու չկար,
Որքան էլ ցատկեց ու ճանկռեց հողը:

Մռնչաց, կանչեց հպատակներին,
Որ գան դուրս հանեն իրենց արքային,
Խոստացավ՝ ով որ իրեն ազատի,
Արքայի գահը նա կժառանգի:

Առյուծի կանչին եկան բոլորը՝
Եվ գիշատիչը, և խոտակերը,
Եվ սողունները, և թռչունները,
Նույնիսկ՝ գետնի տակ ապրող խլուրդը:

Դե, հանաք բան չէր, իրենց արքան էր,
Նույնիսկ հովազը, որ նրան դեմ էր,
Եկավ տեսնելու՝ մտքում խնդալով,
Հուսալով՝ գահի թեկնածուն ինքն է:

Երբ հավաքվեցին խոր հորի շուրջը,
Լռության կոչեց տեղակալ արջը.
– Ով որ մի կոնկրետ առաջարկ ունի,
Թող հանգամալից այդ մասին պատմի:

Ես մի այսպիսի առաջարկ ունեմ.
Պետք է անտառում մի մեծ ծառ գտնել,
Տապալել, հետո բերել հորի մոտ,
Ներքև իջեցնել, արքային հասցնել:

ГАУ РК "Медиацентр им. И.Распринского"

Նրա ասածը դուր չեկավ այնքան.
– Քո ասած ծառից մոտերքում չկա,
Իսկ ինչպե՞ս պետք է այստեղ բերենք այն,
Դա փղի գործն է, այստեղ փիղ չկա:

Երբ խոսքը տրվեց նախարար գայլին,
Նա ասաց. «Ես մի ելք գիտեմ շատ պարզ.
Պետք է հող լցնել վերևից դանդաղ,
Արքան էլ հանգիստ դուրս կգա փոսից»:

Արքան լուռ լսեց դաժան խորհուրդը,
Մռնչաց ահեղ՝ թափ տալով պոչը.
– Դու ի՞նչ է, հիմա՛ր, հին ո՞խն ես պահում,
Որ ինձ կենդանի թաղել ես ուզում:

Աղվեսն էլ աչքը գցեց հովազին,
Ասաց, որ պետք չէ հանել արքային.
– Մենք կեր կբերենք, կլցնենք փոսը.
Պետք չէ կորցնել հույսն ապագայի:

– Ճիշտ է, – պաշտպանեց հովազն աղվեսին:
– Մեկ է, փրկություն չկա էլ նրան,
Այդ փոս փորողը ուր որ է կգա,
Ավելի լավ է՝ ընտրենք նոր արքա:

– Ամո՛թ ձեզ, – ասաց բարի խլուրդը, –
Մի օր ինքներդ կընկնեք այդ փոսը:
Ինքս կհանեմ արքային հորից,
Եվ ինձ էլ կօգնեն մեր խլուրդները:

Ասաց ու կորավ փխրուն հողի տակ,
Նրան միացավ մի մեծ գումարտակ,
Մի քանի ժամում հասան առյուծին,
Բայց դա թունել չէր, այլ նեղլիկ մի անցք:

Չնայած դրան, առյուծը գոհ էր,
Որ գոնե մեկը օգնության հասավ,
Այդ նեղլիկ անցքը չէր կարող մտնել,
Բայց լույսի շողից հույսը հետ եկավ:

ГАУ РК "Национальная им. М. Гаспринского"

– Մի՛ հուսահատվիր, – ասաց խլուրդը, –
Ընկեր տղերքը հետ կտան հողը,
Մինչև առավոտ կփորենք հաստատ,
Կվերադառնաս նորից քո տեղը:

Վերևից տեսավ՝ ինչումն է բանը,
Արջն էլ ճանկերը՝ ինչպես սուր բահը,
Խրեց անցքի մեջ. լայնացավ անցքը,
Օգնության եկավ և նապաստակը:

Նույնիսկ մի մրջյուն՝ որպես կամավոր,
Այդ դժվար գործում՝ վարպետ կարևոր,
Աշխատեց, որքան ներում էր ուժը,
Եվ անցքը դարձավ մեծ ու լուսավոր:

Աղվեսը տեսավ գործի ընթացքը,
Փոխեց լիովին նախկին կարծիքը,
Սկսեց գովել փրկարարներին,
Իբր, ինքն էլ է գործի մասնակից:

Մինչև առավոտ փրկության անցքը
Մեծացավ, հասավ առյուծի լայնքին,
Ու նա սողեսող մի կերպ վեր ելավ.
Փրկվեց արքայի կյանքը թանկագին:

– Ուռռա՛, – գոչեցին հավաքվածները, –
Տեսեք՝ միասին ինչե՛ր ենք անում:
Ավելի բարձր գոչեցին նրանք,
Ովքեր արքայի մահն էին ուզում:

Կազմակերպիչը՝ համեստ խլուրդը,
Գնաց իր գործին՝ թափ տալով հողը,
Իսկ կաչաղակի գործը շատացավ,
Թռավ, տարածեց սենսացիոն լուրը:

Այդ դեպքից հետո արքա առյուծը
Ճիշտ գնահատեց խլուրդի գործը.
Խոսքը կատարեց՝ նոր պաշտոն տվեց,
Արգելվեց նաև այդ ցեղի որսը:

ГАУ РК "Национальная библиотека Гасринского"

Բոլոր մասնակից փրկարարներին
Տվեց նվերներ՝ իրենց արժանի,
Նույնիսկ օգնության եկած մրջյունին
Ձմեռվա պաշար տվեց լիուլի:

Հովազը դարձավ նոր ընդդիմություն,
Աղվեսն էլ մնաց իր հին պաշտոնին,
Բոլորը, կարծես, շատ գոհ մնացին,
Խլուրդի պատվին երգ հորինեցին:

Գայլը միացավ ընդդիմությանը՝
Չէր ուզում հարկ տալ արքա առյուծին,
Արջը, որ իզուր շատ չփնթփնթա,
Մինչև թոշակը վարեց պաշտոնն իր:

Լինի մեզ խրատ առյուծի դեպքը,
Կարծիք չկազմենք՝ տեսնելով դեմքը,
Հաճախ քո աչքում աննշան մեկը
Կարող է դառնալ կյանքիդ փրկիչը:

Շատ է պատահում և հակառակը,
Բայց չմոռանանք պատահած դեպքը,
Լինի դա առյուծ, թե ուրիշ մեկը.
Բոլորին պետք իմ այս առակը:

ԴՐԱԽՏԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

Դրախտի մուտքի մոտ հերթ էր գոյացել,
Նոր հրաման էր եկել վերևից,
Թե դրախտում ես դու ուզում ապրել՝
Տեղեկանք է պետք բնակավայրից:

Պատասխան էր պետք՝ ինչպես մարդկանցից,
Այնպես էլ բոլոր կենդանիներից,
Որոնք այդ մարդուն եղել են դրկից
Կամ էլ՝ գործընկեր և աշխատակից:

«Դրախտի դուռը այնժամ կբացվի,
Երբ ես դրական կարծիք կունենամ,

ГАУ РК "Медиацентр им. Г. Распринского"

Այդ նպատակով հրեշտակներին
Ես նրանց մոտ եմ ուղարկում հիմա»:

Տիրոջ կամքն էր սա. հրեշտակները
Թռան շտապով, մտան ամեն տուն,
Եվ առաջինը նրանց պատահեց
Բակում վազվզող կատաղի մի շուն:

Նրանց հարցմունքին՝ իր տիրոջ մասին,
Նա ափսոսանքով հաչեց տխրագին.
– Իմ տերն արդար էր և անչափ բարի,
Միշտ լիքն էր լինում ամանն իմ լափի:

Ճիշտ է, մի անգամ ինձ քացով խփեց,
Դա էլ իմ մեղքով այդպես պատահեց.
Գիշերը գայլ էր փարախը մտել,
Պատճառը այն էր՝ ինձ քունն էր հաղթել…

Կատվին էլ հարցին՝ մռմռաց տխուր.
– Մեռնողը մեռավ, ի՞նչ պատմեմ իզուր,
Նա ինձ չէր սիրում և անմեղ տեղը
Պոչիցս բռնում, շպրտում էր դուրս:

Ինձ հայհոյում էր, մորս՝ անիծում,
Թե՝ պարապ նստում, մուկ քիչ եմ բռնում,
Մի հարցնող լինի. «Ողորմի հոգուդ,
Էս դարում ո՞վ է անշահ աշխատում»:

Հավի փոխարեն աքլորը խոսեց.
– Էդ ողորմածը մեր տունը քանդեց,
Նա իմ հավերի ձվերն էր ուտում,
Նրանց մորթում էր ու ագահ լափում:

Հողը թող չասի նրան ոչ մի բան,
Նույնիսկ քելեխին տասը հավ կերան,
Իմ բախտը բերեց, որ քավթառ էի,
Թե չէ գլուխս շանը կտային:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Табринского"

Ինձ նախանձում էր, որ հարեմ ունեմ,
Ես ի՞նչ մեղք ունեմ, որ նա տկար էր,
Երբ կանչում էի առավոտ ծեգին,
Պատասխանում էր. «Չոռ այդ քավթառին»:

Էշն էր պակասում, նա էլ դժգոհեց.
– Այդ անաստվածն ինձ չգնահատեց,
Հեծնում էր, բզում, կողերիս խփում,
Լավ է՝ վերջապես հոգին ավանդեց:

Կովն ու ոչխարը պասիվ մնացին.
Ո՛չ դժգոհեցին, ո՛չ էլ գովեցին,
Հրեշտակներն էլ իրենց լսածը
Քննարկեցին ու վճիռ կայացրին:

Դրանից հետո գնացին անտառ,
Որպեսզի տեսնեն, թե ինչ բողոք կա,
Գայլն առաջինը նրանց պատահեց,
Դժգոհությունն իր նա այսպես հայտնեց.

– Ես շատ լավ գիտեմ այդ անաստվածին,
Քանի անգամ եմ պրծել թակարդից,
Հենց փորձում էի մոտենալ հոտին,
Պրծում չունեի նրա շներից:

Թող որ դժոխքի բաժին նա դառնա,
Որ տանջող վերքս մի քիչ հովանա,
Թե չեք հավատում, հարցրեք աղվեսին,
Այդ մարդու մասին նա շատ բան գիտի:

Աղվեսին գտան՝ նստած ծառի տակ,
Անուշ էր անում մի խեղճ նապաստակ.
Անչափ զգույշ է աղվես քույրիկը,
Փորձեց իմանալ՝ ինչումն է բանը:

Ու երբ իմացավ, որ նոր օրենք կա,
Հարցրեց. «Ցուցակում գազանն՞ր էլ կան»:
Խոսեց շատ զգույշ՝ հեռուն նայելով.
– Դե՛, մարդ էր էլի նա սովորական:

ГАУ РК "Национальная им. М. Гаспринского"

Մի հարցնող լինի՝ ո՞վ մեղք չի գործում,
Ճիշտ է՝ իր կինը մորթիս էր սիրում,
Դե ես էլ՝ նրա թմբլիկ հավերին,
Այդ մարդն անմեղ էր՝ այդպես եմ կարծում:

Հրեշտակները հենց որ հեռացան,
Կատաղած գայլը աղվեսին ասաց.
– Ինչո՞ւ այդ մարդուն պաշտպան կանգնեցիր,
Նրա արարքը ինչո՞ւ մոռացար:

– Հիմա՛ր անասուն, դու չե՞ս հասկանում՝
Ինչու համար են հարցուփորձ անում,
Ախր, մի օր էլ մեզ համար կգան,
Ես իմ մեղքերի թիվը չեմ հիշում…

Գրի առնելով բոլոր փաստերը՝
Հրեշտակները բարձրացան երկինք,
Տերը որոշեց, որ տվյալ մարդը
Արժանի է լոկ Աստծո դրախտին:

ԴԱՎԱՃԱՆ ՇՈՒՆԸ

Շունը փախել էր գյուղից, տիրոջից,
Մի մեծ ոհմակ էր գտել գայլերի:
– Ինձ էլ ընդունեք ձեր ընտանիքը,
Ուզում եմ լինել ձեզանից մեկը:

Հերիք է տիրոջ շահը պաշտպանել,
Եվ դրա դիմաց ոսկոր ստանալ,
Միշտ նախանձել եմ ձեր կյանքին ազատ,
Կաշխատեմ ցեղին արժանի լինել:

Ուշադիր լսեց նրան ավագը,
Թե ինչ է հաչում թոկից փախածը,
Հայացքը լուսնին՝ ոռնաց մտահոգ,
Ու հետո հայտնեց նա իր կարծիքը.

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

– Քո շան հաչոցից բան չհասկացա,
Գայլերի լեզուն պիտի սովորես,
Շան լեզուն պահիր գործերի համար,
Այն դեռ պետք կգա որսի ժամանակ:

Մենք քեզ կընդունենք մեր մեծ ոհմակը,
Բայց լավ իմացիր մեր սուրբ պայմանը.
Որսի չգնալ մեզանից թաքուն,
Սա է չգրված գայլի օրենքը:

Ընդունեց շունը պայմանը դաժան,
Ուրիշ ելք չուներ հիմար գլուխը,
Սկսեց ոռնալ գայլերի նման,
Ու որսի գնալ մոտիկ գյուղերը:

Ամռանը՝ ոչինչ, հաջող էր որսը
Եվ անպակաս էր թարմ, համեղ միսը,
Բայց եկավ ահա ձմեռվա ցուրտը,
Կարոտով հիշեց նա իր ոսկորը:

Մի ցուրտ գիշեր էլ ոռնում էր բուքը,
Դատարկ էր, սակայն, գայլերի փորը,
Ոչ միս ունեին, ոչ՝ կրծած ոսկոր,
Ոհմակը եկավ սոված շան բույնը:

– Կամ մեզ կտանես քո տիրոջ գոմը,
Ցույց կտաս՝ որն է նրա թույլ կողմը,
Կամ էլ հերիք է մեր հաշվին ապրես,
Կթափենք հիմա քո ճարպոտ փորը:

Ուզեր, թե չուզեր՝ շունը ճար չուներ.
Թե խիղճ էր գոնե մի քիչ մնացել,
Նա մահվան ահից դա էլ կորցրեց.
Իր տիրոջ տունը բոլորին բերեց:

Քանի որ գիտեր ամեն ծակուծուկ,
Նրանք գոմ մտան լուռ ու աննշմար,
Պատը քանդեցին թաթերով հուժկու,
Խեղճ ոչխարները վախից կուչ եկան:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Այնքան չկերան, որքան խեղդեցին,
Վերջում էլ՝ մի-մի դմակ բերանում,
Անտառի կողմը արագ սուրացին՝
Տիրոջը տալով վնասներ բազում:

Սակայն, թարսի պես, հենց վերջին պահին
Նոր շունը հասավ, բռնեց մի գայլի,
Մի լավ գզգզեց՝ մինչ տիրոջ գալը,
Որը զարմանքով նայեց այդ գայլին:

Նայեց, ճանաչեց իր շանը կորած,
Շտապ հետ քաշեց շանը կատաղած,
Կապկպեց գայլի ոտքերը արնոտ՝
Իր մեծ կորուստը իսպառ մոռացած:

– Մի սրան նայեք՝ ուրացող շանը.
Քեզ պահեմ, շահեմ, հաց տամ դռանս,
Դու ոհմակ բերես, քանդես իմ տունը.
Քեզ ինչպե՞ս պատժեմ՝ հովանա սիրտս:

Ցավից, ամոթից շունը կաղկանձեց.
– Կյանքս խնայիր, – գլխիկոր խնդրեց:
Բայց այնքան մեծ էր տիրոջ ցասումը,
Որ մահից էլ վատ պատիժ մտածեց:

– Ես քեզ կներեմ, բայց մի պայմանով.
Մեղքդ ընդունիր քո հոժար կամքով,
Ցույց տուր՝ որտեղ է ոհմակի որջը,
Որտեղ են ապրում իրենց ողջ ցեղով:

– Ա՛խր, ա՛յ իմ տեր, նրանք ինձ կուտեն,
Ինչպե՞ս ես նրանց գաղտնիքը բացեմ:
– Ինչպես ցույց տվիր իմ գոմի տեղը,
Նրանցն էլ մատնիր, թե չէ կսպանեմ:

Տեսավ՝ ճար չկա, լուռ համաձայնեց,
Գայլերի որջի տեղը ցույց տվեց,
Ինքն էլ, իբր թե, վիրավոր ու կաղ,
Գնաց գայլերի ոհմակին խառնվեց:

ГАУ РК "Национальная библиотека Гаспринского"

Մյուս առավոտ՝ կերած ու խմած,
Դեռ չէր արթնացել ոհմակը քնած,
Մի խումբ որսորդներ ձորը փակեցին,
Գայլերի վերջը այդպես տվեցին…

Ոչ այնքան հեռու սատկած գայլերից՝
Բզկտված մի շունն ոռնում էր ցավից,
Գայլերը նրան պատառոտեցին.
Արժանի պատիժ շուն-դավաճանին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՏԱՌՈՒՄ

Իրարանցում էր անտառում դարձյալ –
Ընտրությունների օրն էր մոտենում,
Կենդանի, թռչուն, սողուն թե մոծակ
Փորձում են հաղթել այդ ընտրարշավում:

Թեկնածուների ստվար բանակը
Ջանք ու եռանդ չէր խնայում բնավ,
Գործի դրվեցին այն մեթոդները,
Որ կապահովեն նրանց հաղթանակ:

Ամբողջ անտառը ոտնակոխ արին,
Ամեն ծառի տակ ճառեր հնչեցին,
Ամեն մեկն, անշուշտ, գովեց իր ցեղը
Ու երդվեց՝ կրծքին դնելով թաթը:

Գայլը զոռ տվեց իր չորս ոտքերին,
Մտավ ամեն բուն, էլ որջ չթողեց,
Ուշադիր լսեց ամեն ընտրողի,
Խոստացավ բոլոր հարցերը լուծել:

– Ձեր բարօրության համար,– ասաց նա,–
Համոզված եղեք, ամեն ինչ կանեմ,
Մի կտոր հացը ձեզ հետ կկիսեմ,
Ձեր վաստակածը ձեզ էլ կմնա:

ГАУ РК "Национальная им. М. Гаспринского"

Աղվեսը քնքուշ, խորամանկ ձայնով
Ասաց. «Ինձ տվեք ձայները բոլոր,
Եթե ինձ ընտրեք ձեզ պատգամավոր,
Ամեն օր տաք ճաշ կուտեք դուք հավով»:

Արջն էլ իր հերթին չամաչեց ստել,
Ասաց, որ պետք է օրենքով գործել,
Խախտողին պետք է օրենքով դատել,
Կաշառակերին՝ խիստ պատիժ ընտրել:

Խոտակերները ծեր եղջերուին
Ընտրեցին որպես իրենց թեկնածու,
Սա էլ ուզում էր փորձված առյուծին
Վերադարձնել իր նախկին փառքին:

Սակայն զուր անցան ջանքերը նրա,
Առյուծների դարն անցել էր վաղուց,
Թե կաշառեցիր՝ կստանաս մանդատ,
Հակառակ դեպքում՝ չարչարվում ես զուր:

Սուտ-սուտ խոստումներ տվեցին անթիվ,
Թերթ ու գովազդով անտառը լցվեց,
Քարոզ կարդացին, շողոքորթեցին,
Մինչև ընտրություն ձգեցին այդպես:

Իսկ ընտրողները շվարել էին
Ու չգիտեին՝ որին ընտրեին,
Եղջերուն ասաց. «Ի՜նչ տարբերություն,
Մեր քրտինքով են բոլորն էլ ապրում:

Հենց որ վերջանան ընտրությունները,
Նորից կդառնան մեզ որսողները»:
Շատերն, իհարկե, չհամոզվեցին,
Սակայն փողերը սև գործն արեցին:

Շատ ակտիվացան և սողունները,
Ու հարմար էին նրանց դիրքերը,

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Распинского"

Ում որ ուզենան՝ կարող են խայթել,
Իբր, իրենք են դեմոկրատները:

Գայլը կհաղթեր, թե արջը ծուռթաթ,
Անտառի կյանքում ոչինչ չէր փոխվի,
Սոխակը պետք է դայլայլեր զվարթ,
Աղվեսը պետք է խեղդեր հավերին:

Ընտրությունները շուտով կայացան:
Քվեաթերթիկներն սկսեցին հաշվել,
Կենդանի, սողուն՝ վաղուց մահացած,
Դարձան ներկայիս ակտիվ ընտրողներ:

Ամեն ինչ եղավ օրենքով, ազնիվ,
Դա վկայեցին լրագրերն անթիվ,
Կողքի անտառից եկած դիտորդը
Հաստատեց արդար ընտրության փաստը:

Ընտրությունների արդյունքում պարզվեց՝
«Գայլերի ռոմակ» կուսակցությունը
Բոլորից շատ է ձայներ հավաքել,
Այժմ տոնում է իր հաղթանակը:

Արջն էլ հավաքեց մեծ ընդդիմություն,
Գոռաց, պահանջեց նա արդարություն,
Խոտակերները՝ բոլորին միշտ դեմ,
Գերադասեցին այս անգամ լռել:

Նրանք գիտեին, որ զուր է վիճել,
Անցյալը նորից հետ բերողը չեն,
Եթե դեմ գնան գիշատիչերին,
Իրենց վիճակը կվատթարացնեն:

Գայլերից մեկը դարձավ նախագահ.
Սա էլ երդվեց, թե կգործի արդար,
Երկու տեղակալ ընտրեց ռոմակից.
Մեկը սանիկն էր, մյուսը՝ խնամին:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Անտառում, իրոք, ոչինչ չփոխվեց՝
Բացի օրենքի նոր «պաշտպաններից»,
Ընտրողների մոտ ծագեց նույն հարցը.
– Ինչի՞ համար էր այսքան աղմուկը:

ՍՏՈՒԳՈՂԸ

Մեծահարուստի որդին եկավ տուն,
Ասաց. «Հայրի՛կ ջան, վատ են գործերը,
Գալու է մի նոր, անկաշառ տեսուչ,
Ասում են՝ վա՛յ նրան, ով կընկնի ճանկը»:

Իսկ փորձված հայրը ասաց. «Իմ որդի,
Ուշադիր նայիր, տես՝ բերան ունի՞»:
Որդին զարմացած դուրս գնաց, եկավ,
Ասաց. «Եկողը ունի մեծ բերան»:

– Հանգիստ կաց, որդի՛ս, դու մի վախեցիր,
Թե բերան ունի, ամպայման կուտի,
Սկզբում, անշուշտ, չեմուչում կանի,
Հետո կուլ կտա, աչքն էլ չի թարթի:

ՋՐԱՂԱՑՊԱՆԸ

Կար մի ջրաղացպան՝ գծուծ ու ժլատ,
Աղունի հարկը վեցնում էր նա շատ,
Կշեռքը դրած հենց մուտքի առաջ՝
Պակաս չէր վերցնի ցորենի մի հատ:

Իսկ երբ ծերացավ, ու մահն էր շատ մոտ,
Իր միակ որդուն նա կանչեց իր մոտ
Եվ վերջին անգամ նրան խրատեց,
Իրար կապելով բառերը մի կերպ.

– Իմ ջրաղացը ես հանձնում եմ քեզ,
Ինձ պես՝ մարդկանց հետ բարի կլինես,
Որ ինձ հիշելիս ասեն.«Ողորմի»,
Չխայտառակե՛ս անունս բարի:

ГАУ РК "Национальная б-ка им. Н. Баратынского"

Հոր մահից հետո տղան մտածեց,
Հոր պատգամները լավ իրագործեց,
Կշեռքը շուտով նա բակից հանեց,
Ջրաղաց տանող կամրջին դրեց:

Մարդիկ այդ տեսան ու շատ զարմացան,
Ասացին.«Որդին անցավ իր հորից,
Հայրը խիղճ ուներ՝ ողորմի՛ նրան,
Բակում էր վերցնում հարկը ջաղացի»:

Որդին այդ լսեց և ուրախացավ,
Որ հոր պատգամը իրական դարձավ,
Մի տարի չանցած՝ հարկը բարձրացավ,
Ողորմի տվող մարդիկ շատացան:

ԱՂՎԵՍԻ ՖԵՐՄԱՆ

Ծեկլիկ աղվեսին բարի լուր բերին.
«Հավաբուծական մեծ ֆաբրիկայի
Նոր տնօրեն են քեզ նշանակել»:
Աղվեսը լսեց, սկսեց լացել:

– Ինչո՞ւ ես լացում, – հարցրեցին նրան, –
Մի՞թե ուրախ չես մեր բերած լուրով:
– Չէ՛, ի՞նչ եք ասում, – աղվեսը ասաց, –
Սա ուրախության արտասուք է լոկ:

Անցավ մեկ տարի երջանիկ օրից,
Ու ժողովուրդը ապշեց զարմանքից,
Երբ աչքով տեսավ, որ հավերն այդքան
Բազմացան, քանակն անցավ միլիոնից:

– Ա՛յ աղվես եղբայր, մենք կարծում էինք,
Որ այդ ֆաբրիկան դատարկ կտեսնենք,
Ահը որտեղի՞ց, այս ի՞նչ հրաշք է,
Դու բարգավաճող ֆերմեր ես դարձել:

ГАУ РК "Медиацентрум. И. Гаспринского"

– Ժամանակի հետ ես էլ եմ փոխվել,
Հիմա դարձել եմ սեփականատեր,
Այժմ բազմաթիվ խանութներ ունեմ,
Պատգամավորի թեկնածու եմ ես:

Իսկ աճի համար շնորհակալ եմ
Դարերում թրծված մեր աղաթներին...
Գոհ եմ վերևի մեծ ծանոթներից
Եվ հորն արժանի իմ ժառանգներից:

Ինչո՞ւ իմ ձեռքով քանդեմ իմ տունը,
Երբ որ պալատ է դարձել ծակ բույնը,
Մեծ ամառանոց՝ հենց ծովի ափին,
Կողքիս թիկնապահ՝ հին ծանոթ շունը:

ГАУ РК "Медцентр им. И. Гаспринского"

ԻՄԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՄԱՐԴՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

* * *

Եթե մենք մեկին էշ ենք անվանում,
Որ շատ համառ է ու չի հասկանում,
Վիրավորում ենք անմեղ կենդանուն,
Նրա մեջ մեզ ենք կարծես թե տեսնում:

Որքան էլ խելոք կամ փորձված լինենք,
Երբեմն էշի պես ենք մեզ պահում,
Մի կոպիտ սխալ կամ անզգույշ քայլ,
Այդ պահին ենք լոկ զգում, որ մարդ չենք:

* * *

Մարդ կա՝ թուշդ կպաչի,
Իսկ երբ գնաս՝ հետևիցդ կհաչի:

* * *

Մարդ կա՝ ջերմեռանդ խաչն է համբուրում,
Բայց հանուն փողի կաշիդ է մաշկում:

* * *

Եթե ասում ես. «Մարդ եմ մեծատառով»,
Ուրեմն քեզ փոքրատառ ես համարում:

* * *

Մարդ կա՝ կենացդ կխմի,
Ընկար՝ արյունդ կքամի:

* * *

Պատահում է՝ շանը մարդու չափ են սիրում,
Պատահում է՝ մարդուն շան տեղ էլ չեն դնում:

* * *

Ով ձեռք է մեկնում նեղն ընկած մարդուն՝
Աստծո օրհնանքը նրա աղ ու հացին:

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаприндского"

Իսկ ով քացով է ընկածին խփում,
Թող արժանանա մեր Տիրոջ պատժին:

* * *

Նա, ով ապրում է ուրիշի հաշվին,
Հաճախ է փոխում իր օձի կաշին:

* * *

Ով ուրանում է իր հոգու պարտքը,
Նա մոռանում՝ ինչ է պատիվը:

* * *

Թե մարդ իմանա՝ ինչ է սպասվում,
Չարիք չի գործի երբեք իր կյանքում:

* * *

Մարդ կա, որի ձեռքերն են ուժեղ, մարդ էլ կա,
որի ուղեղն է ուժեղ: Սակայն այս երկուսը մեկ
մարդու մեջ հազվադեպ են պատահում:

* * *

Ամեն մարդու հոգու մի անկյունում
որևէ արարած կա թաքնված.
դա կարող է լինել գիշատիչ կամ սողուն,
թռչուն կամ ձուկ և այլն…
Դրանց բոլորին զսպած պահում է մարդը:
Իսկ երբ չի կարողանում զսպել, ապա
նրանցից մեկը կամ մի քանիսը
դուրս են պրծնում վանդակից:
Այնժամ անպայման չարիք է պատահում:

* * *

Քաջարի մարդուն արծիվ են ասում,
իսկ նրա քանդած տները չեն հաշվում:

* * *

Գիտուն չէ, ավա՛ղ, կուզիկ պառավը,
Բայց լավ է հիշում գլխին եկածը:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

* * *

Գազանը քաղցած ժամանակ է
վտանգավոր, իսկ մարդը՝ կուշտ:

* * *

Ամեն մարդու կյանք՝ գիրք չկարդացված,
Ճակատագրի կամքով է գրված.
Մեկը՝ հատորներ, ուրիշը՝ մի էջ,
Բայց կան հատորներ՝ կորչում են անհետ,
Իսկ կյանքի մի էջ ապրում է հավետ:

* * *

Մարդու կյանքը ջրի պես է,
այն պետք է մշտապես շարժման մեջ լինի,
հակառակ դեպքում ճահճանում է և
դադարեցնում իր գոյությունը:

* * *

Մարդու ճակատագիրը գրվում է
մինչև նրա կյանքի վերջը և մնում է
անտեսանելի ու անընթեռնելի,
քանի դեռ նա կենդանի է:
Մահվանից հետո աշխատում են այն կարդալ՝
ամեն մեկը յուրովի. դա վերաբերում է
միայն նշանավոր անհատներին:

ԽՐԱՏԱԲԱՐՈՅԱԿԱՆ

Հին հարազատներն ու բարեկամները
քո տան հիմքն են, իսկ նորերը՝
հավաքած քարերով շարված պատերը:
Երբ պատերը ճաքում են, կարելի է
դրանք նորոգել՝ նոր քարերով շարել,
բայց հիմքը չի կարելի քանդել:

* * *

Թերություններիդ վրա ինքդ ծիծաղիր,
Չար լեզուների բերանը փակիր:

ГАУ РК "Медиатека им. Я. Гаспринского"

* * *

Թե թևեր չունես՝ նմանվես ղշին,
Թայդաշ մի ընտրիր անծանոթ էշին:

* * *

Եթե պարտք վերցնես քո բարեկամից,
Նրան կկորցնես դու միանգամից:

* * *

Եթե չունես դու քո «ես»-ը՝
Միշտ ապրում ես՝ ինչպես տիզը:

* * *

Թե չես հավաքել դեռ աշնան բերքը,
Ճատ մի շռայլիր տանդ եղածը:

* * *

Կատակը պիտ լինի տեղին,
Որ չկպչի ցավոտ տեղին,
Չես ճանաչում դիմացինիդ՝
Խոսքը պահիր լեզվիդ տակին:

* * *

Եթե չլսես մեծի խորհուրդը՝
ճամփադ միշտ խորդուբորդ կլինի:

* * *

Սիրել կարող ես երկնքի ղշին,
Բայց լավ է առնես քո թայ ու թուշին:

* * *

Լավ է թեթև բան ուտել ու քիչ,
քան շատ ուտել՝ ինչպես գիշատիչ:

* * *

Պետք չէ ուրիշների հաջողությունները կրկնել,
աշխատիր չկրկնել ուրիշների սխալները,
այնժամ կհասնես այն նպատակին, որին ձգտում ես:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

* * *

Հաջողությունը կիսով չափ կախված է մեզանից,
իսկ մնացածը պատահականություն է:
Անհաջողության պատճառները մեր թույլ տված
սխալներն են, որոնցից օգտվում են մեր հակառակորդները:

* * *

Թե բնությունից է կախված բարիքդ,
Միշտ լավ պահպանիր՝ ինչ ունես տանդ:

* * *

Սերը միակ հիվանդությունն է,
որով ինքդ ես ուզում վարակվել:
Իսկ ատելությունն այդ հիվանդությունից
մնացած հետևանքն է, որը բուժվում է միայն
սիրով կրկնակի հիվանդանալու ճանապարհով:

* * *

Բարի գործերը թեթև կերակուրներ են,
որոնք հեշտ են մարսվում և օգտակար են:
Իսկ չար գործերը ծանր կերակուրներ են,
որոնք գիշերները չեն թողնում հանգիստ քնել:

* * *

Եթե մուրճ կա քո ձեռքում՝
Մեխ խփելն է քո մտքում,
Բայց աքցանն ես մոռանում:
Եթե մեխը ծուռ գնաց,
Հանելը հեշտ չի լինում:

* * *

Ամեն աղբով մի լցրու ուղեղդ,
որպեսզի հետո չփնտրես խելքդ:

* * *

Լավ է պլոկվի քո մեջքի կաշին,
Քան հույսդ դնես դրացու էշին:

ГАУ РК "Медиацентр им. М. Распринского"

* * *

Թե հույսդ դնես ձմեռվա տաքին,
Անհույս կմնա քո միակ մաքին:

* * *

Կյանքում ամենադժվար բանը
վատ սովորությունը վերացնելն է,
որը մեկի մոտ ուժեղ է արտահայտված,
մյուսի մոտ՝ թույլ: Սակայն այդ թույլը
հաճախ ավելի վտանգավոր լինում է,
քանզի այն վնասում է ոչ միայն քեզ,
այլև քո շրջապատի մարդկանց:
Այն վերացնելով՝
թեթևացնում ես մեղքերիդ բեռը:

* * *

Շատ հերոսներ կան,
որ պետք է ժամանակին գոհվեն,
որպեսզի նրանց հերոսացնողները,
ելնելով իրադրությունից, հետագայում,
երբ դեռ ողջ են, նրանց չնսեմացնեն,
նույնիսկ դավաճան չհամարեն:

* * *

Այն ամենը, ինչ գեղեցիկ է,
Հոգու վրա միշտ ազդեցիկ է,
Բայց ափսո՛ս, որ թափանցիկ չէ,
Ներսում եղածը տեսանելի չէ,
Վաղ լինի, թե ուշ՝ այն անցողիկ է:

* * *

Ասում են, թե գեղեցկությունն է փրկում աշխարհը,
Բայց պատահել է, որ հենց նա է քանդել աշխարհը:

* * *

Մուրացկանին հաց տվեցին,
Նա մռթմռթաց քթի տակին.
– Ինչո՞ւ այսքան քիչ տվեցին:
Իսկ ագռավը, թառած ճյուղին,

ГАУ РК "Музей-усадьба И. Гаспринского"

Աչքը հառեց փափուկ հացին,
Խլեց հացը, տվեց թևին:

* * *

Աղքատի որդին միշտ երազում է շատ փող աշխատել,
իսկ հարուստի որդին երազում է այն մասին,
թե ինչպես փող կորզի ուրիշներից:

* * *

Գիտելիքը հարստացնում է մարդու ուղեղը,
բայց՝ ի հաշիվ նրա անհոգ օրերի:

* * *

Երբ երիտասարդ ես,
տարվում ես երազանքներով,
Երբ ծերանում ես,
երազանքները փոխարինվում են հուշերով:

* * *

Հարբեցողի գլխի պարունակությունն
ուղիղ համեմատական է նրա գրպանի
պարունակությանը. երբ գրպանում
փողը քիչ է, գլխում էլ խելքն է նվազում:
Պատահում է և հակառակը:

* * *

Ճիշտ չէ, երբ ասում են,
թե փողը երջանկություն չի բերում:
Փողն էլ կարող է երջանկացնել մարդուն,
եթե այն ազնիվ ճանապարհով է ձեռք բերվել:
Բայց հարցը նրանում է, որ փողի բացակայությունը
կարող է դժբախտացնել մարդուն:

* * *

Վաճառողն իր օգուտն է հաշվում, իսկ գնողը՝ կորուստը:

* * *

Շատ բան է հաճախ հակասում առողջությանը,
Բայց առողջությունը ոչ մի բանի չի հակասում:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

* * *

Հարուստը աղջիկ տվեց աղքատին,
Ուրեմն գտավ ձրի ծառային:

* * *

Աղքատ էի, փող չունեի,
Քնում էի ես շատ հանգիստ,
Հարստացա, փող ունեցա,
Գիշեր-ցերեկ անքուն էի:

* * *

Շատ իմաստուն մտքեր սկզբում
համարվում են հիմարություն,
իսկ շատ հիմարություններ
ընդունվում են որպես իմաստուն մտքեր:

* * *

Ջուրը հոսելով է մաքրվում,
Խոսքը՝ ժամանակի ընթացքում:

* * *

Վիրավորանքը նման է խփած մեխի.
խփելը հեշտ է թվում: Իսկ երբ ծուռ է
գնում, հանելը շատ դժվար է.
փչանում են և մեխը, և խփած տեղը:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

* * *

Այն լեշն է ուտում արծիվը հաճախ,
Որ ոչ մի ագռավ իրեն թույլ չի տա:

* * *

Արծիվների թռիչքը բարձր է լինում,
Բայց շատերին է այն մահ բերում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Հաճախ արծիվն այնպիսի բան է ուտում,
Որ ագռավն ամոթ կիամարի:

* * *

Արծիվները բարձր են թռչում,
Վերևից որսը լավ է երևում:

* * *

Վայ այն որսին, որին արծիվն է տեսել.
Հազարից մեկն է փրկվում նրանից:
Գաղտնիքն այն է՝ որսը չգիտի,
Որ մահը վերևից է գալիս:

* * *

Արծիվները ծառերի փչակներում բույն չեն դնում:
Նրանք ապրում են ժայռերի ծերպերին,
որպեսզի ձագերը մանկուց սովորեն բարձունքում
ճախրել: Արծիվները որդերով ու ճիճուներով
չեն կերակրում իրենց ձագերին, վերջիններս սնվում են
որսի թարմ մսով, որպեսզի երբ մեծանան,
միշտ արծիվ մնան, այլ ոչ թե լեշակեր անգղ:

* * *

Էշերին հարցրին.
– Ո՞րն է լավ խոտը:
Նրանք զոռացին.
– Փշոտ կածուկը…

* * *

Ինչո՞ւ է էշը միշտ լինում համառ.
Նա միշտ կարծում է, թե ինքն է արդար:

* * *

Կատաղած ձիուն սանձելն ավելի հեշտ է,
քան համառ էշին համոզելը:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

* * *

Էշերը միշտ էլ շատ բարձր են զոռում,
Նրանք այդպես են իրենց համոզում:

* * *

Թե զոռոցն էշի քեզ դուր է գալիս,
Ուրեմն նրան որդի ես գալիս:

* * *

Ուրիշների կարծիքն էշերի մասին նույնն է,
ինչ էշերի կարծիքն ուրիշների մասին:

* * *

Էշը տիրոջից մարդկություն չի սովորում,
բայց երբեմն պատահում է հակառակը:

* * *

Ինչքան էլ հզոր լինի առյուծը,
պետք է իմանա՝ ում հետ է գործ բռնում:

* * *

Մժեղներն աղվեսի տեղը նեղեցին,
մտքում փառք տվեց նա հզոր առյուծին:

* * *

Երբ առյուծը սոված է՝
էշի միսը օրհնած է:

* * *

Վագրի ու կատվի ձագերն իրարից
չեն տարբերվում, քանի դեռ նրանց աչքերը
փակ են: Իսկ երբ բացվում են աչքերը՝
կատվի որսը մուկն է, վագրինը՝ եղնիկը:

* * *

Կեղանիների շատ տեսակներ կան, որոնք մթության մեջ
են միայն լավ տեսնում, սակայն դա չի նշանակում, թե
նրանք սիրում են մութը: Նրանք, պարզապես, լուսավոր
տեղերում ապրողներից ու նրանց հալածանքներից են
խուսափում, ինչը վտանգավոր է նրանց կյանքի համար:

ГАУ РК "Медицинского им. И. Распринского"

ՃԱՆԱՉԻՐ ԹՇՆԱՄՈՒԴ

Թշնամիդ ասաց. «Քեզ շատ եմ սիրում»,
Ուրեմն քո դեմ թակարդ է լարում:

* * *

Թշնամիդ հանկարծ դարձավ սիրալիր,
Նոր խարդախություն շուտով սպասիր:

* * *

Եթե թշնամիդ քթի տակ ժպտաց,
Ուրեմն թակարդ լարեց ոտքիդ տակ:

* * *

Երբ սպանում ես թշնամուն, ապա
պատրաստ եղիր պաշտպանել զավակիդ:

* * *

Կապիկները ծառերի վրա են իրենց ապահով են զգում,
ճիճուները՝ հողի տակ, գազանները՝ անտառներում,
Իսկ դավաճանն ու թշնամին՝ քթիդ տակ:

* * *

Թե որ չունենաս ներքին թշնամի,
Քամին արտերիդ կարկուտ չի բերի:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՊՈԵՄՆԵՐ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

I

Տիգրանի մասին քիչ գիտենք, ավա՛ղ.
Նա կյանք է ապրել՝ լի սխրանքներով,
Ամենահզոր հայ արքան էր նա,
Որը Հայաստան ուներ՝ ծովից ծով:

Նա մի թիզ անգամ երկրից չի զիջել,
Իր խելքով, բազկով Մեծ Հայք է ստեղծել,
Նա շատերին է իրեն ենթարկել,
Ոչ մի պարտություն կյանքում չի կրել:

Իսկ ես կփորձեմ դարերը ճեղքել,
Միգուցե, մեղք եմ գործում դրանով,
Այս հին լեգենդը իմ լեզվով պատմել՝
Մեր հին պատմության էջը բացելով:

Իմ համբերատար, բարի ընթերցող,
Լսիր լեգենդը՝ դարերից եկող,
Միգուցե, կարդաս դու քո թոռներին,
Երբ քուն չի գալիս նրանց աչքերին:

II

Հայոց աշխարհի մեծ տիրակալը,
Անծայր հողերի, ծովերի տերը
Թվում էր՝ պետք է երջանիկ լիներ,
Բայց նա էլ ուներ իր հոգու ցավը:

Մեր հզոր արքան հրաշք կին ուներ.
Մի գեղեցկուհի՝ նման հրեշտակի,
Բայց արի ու տես՝ նա զավակ չուներ,
Որ այդ ամբողջը մի օր ժառանգի:

Զոհեր մատուցեց նա աստվածներին,
Պարգևներ հանձնեց քրմապետերին,
Որ օր ու գիշեր լուռ աղոթեին՝
Մի ժառանգ ծնվի հայոց արքային:

ГАУ РК "Национальная библиотека им. И.Г.Чавчавадзе"

Ու մի գիշեր էլ քնած Տիգրանին
Հանկարծ հյուր եկավ փերին երկնային,
Նա պատասխան էր բերել արքային
Մեծ աստվածների որոշման մասին.

– Ուշադի՛ր լսիր, արքայի՛ց արքա,
Այս հույժ կարևոր վճիռը վերին,
Միշտ պետք է հիշես, եթե մոռանաս՝
Ահավոր փորձանք կբերես գլխիդ:

Դու մեկն ես խնդրում՝ յոթը կունենաս,
Քո կրտսեր որդուն, սակայն, մեզ կտաս,
Հենց որ լրանա նրա յոթ տարին,
Որդուդ կդնես զոհասեղանին:

Ես վաղը այցի կգամ քեզ նորից,
Ժամանակ ունես՝ նստիր, մտածիր.
Կամ յոթը զավակ (թող մեկն էլ զոհվի),
Կամ էլ անժառանգ կյանքդ վայելիր:

Ասաց ու բացեց ճերմակ թևերը,
Դարձավ աղավնի ու թռավ երկինք:
Արքան արթնացավ այս հրաշք քնից,
Մնաց շվարած, ու փախավ քունը:

«Այս ի՞նչ հրաշք էր, – հարցրեց ինքն իրեն, –
Մի՞թե գերագույն աստվածն ինձ գթաց,
Յոթ զավակ, ասաց, այն էլ՝ տղաներ»:
Եվ արթուն մնաց մինչև լուսաբաց:

Հաջորդ առավոտ կանչեց վեզիրին,
Ասաց, որ բերի աստղագուշակին՝
Մեկնելու համար տեսած երազը,
Դա պիտի լիներ, սակայն, հույժ գաղտնի:

Վեզիրը՝ խոնարհ արքայի կամքին,
Նրա մոտ բերեց աստղագուշակին,
Նա էլ խոնարհվեց Մեծն Տիգրանին՝
Լուռ սպասելով առքայի խոսքին:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

– Հիմա կպատմեմ քեզ երազը իմ,
Թող քեզնից բացի ոչ ոք չիմանա
Այդ զարմանալի երազի մասին,
Դու պետք է մեկնես իմաստը նրա:

Ծերունին լսեց նրան ուշադիր.
Նա պետք է լուծեր դժվար մի խնդիր,
Այդ պատճառով էլ խնդրեց արքայից
Մեկ օր ժամանակ, որ ճիշտ զուշակի:

Անցավ մեկ օրը, նա եկավ պալատ,
Ասաց, որ ունի պատասխան պատրաստ,
Նրանք երկուսով երբ առանձնացան,
Գուշակը մեկնեց երազը նրա.

– Իմ ամբողջ կյանքում չեմ տեսել երբեք,
Որ այդպես ճշգրիտ լինեն աստղերը,
Դա նրանց կամքն է, պիտի կատարեք,
Թե չէ փորձանքի կգա երկիրը:

Կամ յոթից մեկին դու պիտի զոհես,
Կամ էլ անժառանգ ու անհետք մեռնես:
Բայց կամքը քոնն է, արքայից արքա,
Այնպես որոշիր, որ չփոշմանես:

Ի՞նչ աներ արքան՝ պատմե՞ր կնոջը,
Որ լսեր նրա ազնիվ կարծիքը,
Թե՞ գաղտնի պահեր երկար տարիներ,
Մինչև կծնվեր իր որդին կրտսեր:

Տիգրանը չուզեց պատմել կնոջը,
Թող որ կատարվի կամքն աստվածների,
Չէ՞ որ կմնա վեց առողջ զավակ,
Որոնք կլինեն շուրջը իր գահի:

Հաջորդ գիշերը, երբ նա քնած էր,
Այս նույն երազը նորից կրկնվեց.
Փերին վերջնական մի կարծիք խնդրեց,
Արքան դրական պատասխան տվեց:

ГАУ РК "Национальная библиотека Гафуринского"

III

Ամիսներ հետո՝ մեծ երջանկություն,
Զավակն անդրանիկ լույս աշխարհ եկավ՝
Մի հրաշք տղա՝ վարսերով գանգուր,
Ցնծում էր ամբողջ Հայքը հնամյա:

Արքան խնջույքի սեղան էր բացել,
Հարուստ ու աղքատ պալատ էր կանչել,
Եվ քառասուն օր, քառասուն գիշեր
Քեֆ էին անում բոլորը այսպես:

Երջանիկ էին՝ արքան կնոջ հետ,
Իսկ տխրությունը կորել էր անհետ,
Բայց հազար գործով գլուխը խառն էր՝
Երազը նրան թվաց անհեթեթ:

Դրանից հետո՝ իրար հետևից
Արու զավակներ նվիրեց կինը,
Վերջապես ծնվեց յոթերորդ որդին,
Ահա և եկավ հատուցման պահը:

Անցած տեսիլքը նորից կրկնվեց,
Երազում դարձյալ փերին հայտնվեց,
Արքային դիմեց պարտատիրոջ պես,
Վստահ ու հանգիստ նա այսպես խոսեց.

– Ահա և անցավ տրված ժամկետը,
Այժմ դու ունես յոթ արու զավակ,
Իրականացավ քո երազանքը,
Այժմ եկել է ժամը հատուցման:

Դու պետք է դնես զոհասեղանին
Քո կրտսեր որդուն՝ առավոտ ծեգին,
Դու պարտավոր ես զոհել տղային.
Այդպես է հաճո մեծ աստվածներին:

Վեր թռավ արքան իր պառկած տեղից,
Կարծես թե օձ էր կախված իր վզից,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Թվաց՝ երկինքը փուլ եկավ գլխին,
Գոռաց, սարսափած ահավոր վշտից:

Ամբողջ պալատը իրարով անցավ:
«Հզոր արքային ի՞նչ է պատահել,
Նա, որ աշխարհը ոտքի տակ առավ,
Ինչի՞ց է, արդյոք, այդքան վախեցել»:

Տիգրանը երկար մնաց առանձին,
Հետո նա իր մոտ կանչեց թագուհուն,
Տեսնելով տխուր դեմքը Տիգրանի՝
Վատ զգացումից ցավ զգաց հոգում:

– Ի՞նչ է պատահել իմ տիրակալին,
Ի՞նչդ է ցավում, ասա՛, սիրելի՛ս,
Ասա՛, մի՛ պահիր քո ցավն ինձանից,
Կուզե՞ս՝ հենց հիմա կանչեմ բժշկին:

– Ո՛չ, իմ թագուհի, ուրիշ է ցավս,
Պատճառը մեկն է՝ տեսած երազս,
Ես չէի ուզում այդ մասին խոսել,
Բայց այժմ ուշ է քեզնից թաքցնել:

Ու պատմեց արքան ամբողջ եղածը.
Տարիներ առաջ տեսած երազը,
Երկիր ուղարկված փերու ասածը,
Աստղագուշակի մեկնությունները:

IV

Լսեց թագուհին այդ պատմությունը,
Կարծես դաշույնով սիրտը խոցեցին,
Ինչպե՞ս հավատար, որ իր զավակը,
Իր անմեղ որդին արդ պետք է զոհվի:

– Տե՛ր իմ, միգուցե, դա լոկ երազ է,
Կամ չար ուժերը դավեր են լարում,
Կգնամ տաճար, ծնկած կաղոթեմ,
Դու քեզ մի՛ տանջիր, ես շատ եմ խնդրում:

ГАУ РК "Национальная им. М. Гаспринского"

Գաղտնիքը, սակայն, արագ տարածվեց,
Ամբողջ պալատն էր այդ մասին խոսում,
Ում լուրը հասավ՝ լսեց, սարսափեց,
Եվ բոլորն էին խղճում թագուհուն:

Զոհաբերության սև օրը հասավ.
Քրմերը պետք է զոհ մատուցեին,
Շքախմբի հետ քրմապետն եկավ
Ու պահանջեց, որ շուտ տան տղային:

Հզոր Տիգրանը՝ արքայից արքան,
Որ շատերին էր ենթարկել իրեն,
Աստվածների դեմ անզոր դուրս եկավ,
Որոշումն, ավա՛ղ, պետք է կատարեր:

Ինձ լսողները պետք է հավատան.
Արքա Տիգրանը ամեն ինչ արեց,
Որդու փոխարեն շատ բան խոստացավ,
Բայց աստվածների գութը չշարժեց:

Այնժամ թագուհին՝ արքայից թաքուն,
Բոլորից թաքցրեց իր կրտսեր որդուն,
Ստրուկից ծնված մի երեխայի
Դեմքը ծածկեցին, հանձնեցին քրմին:

Տաճարի առջև՝ մի հոծ բազմություն,
Կենտրոնում՝ ինչ-որ փատե շինություն,
Իսկ նրա վրա՝ մի զոհասեղան.
Այստեղ քրմերն են տեր ու տիրական:

Եվ հաջորդ օրը՝ արևածագին,
Թանկագին զոհին գլխից վեր պահած,
Թափորը հասավ զոհասեղանին.
Հոծ բազմություն էր այնտեղ հավաքված:

Սև զգեստներով ողբասացները
Սկսեցին իրենց սև լացն ու կոծը.
Մազերն են փետում, երեսն են ճանկռում,
Հարազատի պես ողբում են, ողբում:

ГАУ РК "Национальная библ. Гаспринского"

Իսկ ճերմակ հագած ծեր քրմապետը՝
Ձեռքերը պարզած դեպի արևը,
Ծնկեց ու սկսեց այդ օրվա ծեսը,
Իսկ ժողովուրդը կրկնեց տեսածը:

Տիգրանը գնաց այդ տխուր ծեսին՝
Արքայական սև շորերը հագին,
Սրտի մորմոքով հրաժեշտ տվեց
Իր կրտսեր որդուն՝ անտեղյակ դավից:

Կրտսեր որդու հետ փակված պալատում՝
Թագուհին անվերջ ժամերն էր հաշվում,
Նա սպասում էր ծեսի ավարտին,
Կարծում էր՝ գաղտնիքն իր չի իմացվի:

Նա իր ամուսնուն չասաց ոչ մի բան,
Որդուն մի գաղտնի սենյակում պահեց՝
Կարծելով, թե դա արարք է արդար,
Հանուն իր որդու՝ մեծ հանցանք գործեց:

V

Ոչ ոք չգիտեր այդ քայլի մասին,
Նաժիշտն էր միայն տեղյակ գաղտնիքին:
Ճերմակ սավանում փաթաթված զոհին,
Քրմերը յուղով արդեն օծեցին:

Բայց հանկարծ անամպ երկինքը մթնեց,
Պտուտահողմը սավանը թռցրեց,
Բացվեց դալուկ դեմքն անմեղ տղայի,
Եվ մայր թագուհու գաղտնիքը բացվեց:

Արքան՝ անտեղյակ, աղմուկը լսեց,
Շտապ քայլերով նրանց մոտ վազեց,
Բայց մի հրեշտակ նրան հայտնվեց
Եվ աստվածների անեծքը գուժեց.

– Դու քո խոստումը դրժեցիր, Տիգրա՛ն՝
Որդուդ փոխեցիր մեկ ուրիշի հետ,

ГАУ РК "Медиацентр им. И. Гасринского"

Ուշադի՛ր լսիր որոշումն արդար,
Արդ անիծված է քո տոհմը հավետ:

Ավա՛ղ, ոչ մեկը քո ժառանգներից
Քեզանից հետո գահիդ չի նստի,
Առաջին զոհը որդիդ կլինի,
Որին մեզանից թաքցնել ուզեցիր:

Կդավաճանեն որդիներդ քեզ,
Սեփական ձեռքով նրանց կսպանես՝
Մինչև մեղքերդ դու լրիվ քավես:
Ասաց հրեշտակն ու սլացավ վեր:

Տիգրանը, ապշած այս հայտնությունից,
Շտապ մոտեցավ հավաքվածներին,
Հասավ կիսաբաց զոհասեղանին
Եվ չհավատաց նա իր աչքերին:

Այնտեղ պառկածը կրտսեր որդին չէր՝
Իրեն անծանոթ ինչ-որ ստրուկ էր,
Ահեղ Տիգրանը՝ աշխարհակալը,
Ցայրութից, ցավից բռնեց գլուխը:

– Ո՞վ համարձակվեց՝ ինձանից թաքուն,
Սա ի՞նչ զազրելի դավադրություն է,
Դե՛, արագ ինձ մոտ կանչեք թագուհուն,
Պետք է իմանամ՝ ում ձեռքի գործն է:

Երբ որ թագուհուն հասավ այդ լուրը,
Իր հանցանքը նա այնժամ հասկացավ,
Ուզում էր փրկել իր որդու կյանքը,
Բայց պատճառ դարձավ մեծ դժբախտության:

Ելք չգտնելով՝ դժբախտ թագուհին
Ինքնասպան եղավ. նա թույն ընդունեց,
Լավ հասկանալով՝ ինչ սարսափելի
Եվ անուղղելի արարք է գործել:

ГАУ РК "Национальная им. Н. Гаспринского"

VI

Խոր վիշտն էր պատել հզոր արքային,
Նա ծունկ էր դրել տաճարի քարին,
Ներում էր խնդրում մեծ աստվածներից,
Քանզի ամենն այս դեմ էր իր կամքին:

Բայց չհամոզեց նա աստվածներին,
Նրանց վճիռը ի կատար ածվեց:
Եվ այդ օրվանից ամեն ինչ փոխվեց,
Աստվածներն, ավա՜ղ, հեռացան մեզնից:

Տարիներ անցան, արքան ծերացավ,
Բայց չար անեծքը նա չմոռացավ,
Եվ ահա մի օր իր որդին ավագ
Հոր հետ խիստ վիճեց, տնից հեռացավ:

Արքա հոր վրա նա զորքով գնաց,
Որ ինքը բազմի հորական գահին,
Բայց շուտով պարտվեց՝ գահին չհասած՝
Դավաճան որդուն ոչնչացրեցին:

Երկրորդ որդին էլ նույնը կրկնեց,
Երկրին ու գահին նա տիրել ուզեց,
Եղբայրների հետ գժտվեց ու կռվեց,
Հենց այդ պատճառով նա էլ գլխատվեց:

Տիգրան Մեծ արքան ծերացավ վշտից,
Նա ելք էր փնտրում, խնդրում աստղերից:
Մի օր վերջապես՝ խղճալով նրան,
Թողություն տվին նրա մեղքերին:

– Մենք կներենք քեզ, որ մեզ խաբեցիր,
Որպեսզի քավես դու քո մեղքերը,
Չորս որդիներիդ հողդ բաժանիր,
Ամեն մեկի հետ կիսիր քո գահը:

Յուրաքանչյուրին խստիվ պատվիրիր,
Որ նրանք չորսն էլ քաղաք կառուցեն,

ГАУ РК "Медиацентр им. И.Гаспринского"

Քաղաքները թող իրար նմանվեն,
Եվ Տիգրանակերտ դրանք անվանիր:

Այսպես էլ վարվեց Տիգրան Մեծ արքան,
Չորս տղաներին նա արքա կարգեց,
Թագ տվեց նրանց, բայց և պատվիրեց,
Որ ամեն մեկը հիմնի նոր քաղաք:

Դառը անցյալից շատ դասեր առած՝
Չորս տղաները՝ արքաներ դարձած,
Չորս նոր քաղաքներ արագ հիմնեցին
Եվ Տիգրանակերտ նրանց կոչեցին:

VII

Տասնյակ դարեր եկան ու անցան,
Հին աստվածները մեզնից հեռացան,
Հավատով լցված՝ մեր Տերը եկավ.
Մեծ տերությունից արդեն հետք չկար:

Բաժան-բաժան էր եղել Մեծ Հայքը.
Հին քաղաքներից պատեր մնացին,
Իսկ թափառական ցեղերը վայրի
Մաս-մաս արեցին հայոց աշխարհը:

Մենք ընդունեցինք խաչը մեր Տիրոջ,
Բայց մեր դեմ ելավ չարակամ ուժը
Լոկ այն պատճառով, որ մեր հավատը
Չուզեցինք փոխել մեզ խորթ հավատով:

Չորս Տիգրանակերտ, չորսն էլ՝ գեղեցիկ.
Նրացից մեկը՝ Տիգրիսի ափին,
Մեկը՝ Արցախում՝ շատ մոտ Աղվանքին,
Եվս երկուսը՝ գերի օտարին:

Այն, որ կառուցվեց Արցախի հողում,
Երկար ժամանակ անհայտ էր մնում,
Մինչև ազատվեց օտարի լծից.
Արդ պեղումներ են այնտեղ կատարվում:

ГАУ РК "Институт им. М. Гаспринского"

Մեր չորս վեհաշուք, մեծ քաղաքներից
Լոկ մեկն ազատվեց արդ գերությունից,
Դեռ պետք է մաքրել օտարի կեղտից
Երեք հնամյա քաղաք հայրենի:

ԱՆՏԱՌԱՊԱՀԻ ԱՂՋԻԿԸ

Նախերգանք

Այս պատմությունն իմ լոկ մի դրվագ է
Հայ ժողովրդի դարավոր գրքից,
Այն իմ պապերի փառավոր կյանքն է,
Արդար պայքարն է՝ հանուն մեր ազգի:
Շատ դարեր առաջ Արցախ աշխարհում
Հզոր մելիքն էր ապրում Խաչենի՝
Հին Մոխրաթաղի ամրոց-պալատում,
Որ վերածվել է արդ ավերակի:
Շքեղ պալատից բան չի մնացել,
Մոշու թփեր են ամենուր աճել,
Իսկ կոլխոզային ձիգ տարիներին
Անասունների գոմ էր նա դարձել:
Բազում թշնամիք՝ մոլի հաճույքով
Շքեղ պալատը քանդեցին հերթով,
Վերջակետ դրին կոմունիստները՝
Պալատի ներսում հորթեր պահելով:
Այդպես էլ անհետք կմնար բերդը,
Չէր հիշվի անգամ կառուցման տեղը,
Եթե վերջապես իր ծանր նիրհից
Հանկարծ չարթնանար արցախահայը:
Հայի կառուցած այս բերդի մասին
Ոչ բոլորն, ավա՛ղ, մեր երկրում գիտեն,
Նույնիսկ տեղացիք «մահլա» են կոչել՝
Որ թուրքերեն է՝ դա է մնացել:
Մոխրաթաղում եմ ծնվել, մեծացել,
Բազում անգամ եմ եղել այդ վայրում,
Բայց մի տող անգամ ես չէի տեսել,
Որ գրված լիներ պատմության գրքում:
Տարիներ հետո, երբ հասունացա,

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Պատմության գաղտնի էջերը մտա,
Հին ու խունացած գրքեր կարդացի,
Իմ հայրենիքը ես նորից գտա:
Ահա մի հին էջ պատմության նախնյաց,
Որը, թվում է՝ հեքիաթ է շքեղ,
Ինչն է իրական, ինչը՝ հորինված,
Ընթերցո՛ղ, փորձիր ինքդ գուշակել:

I

Ծոսի անտառում՝ Մռավի դիմաց,
Անտառապահի տնակ կար կանգնած,
Մելիք Եսային՝ առյուծն անվեհեր,
Այդ տարածքների մեծ տիրակալն էր:

Անտառապահը մի դուստր ուներ՝
Մի չքնաղ եղնիկ՝ հայացքով քնքուշ:
Երկուսով էին ապրում տնակում.
Մայրը վաղուց էր դստեր որբ թողել:

Մելիք Եսային միշտ որս էր անում
Թարթառի ձորի թավ անտառներում,
Անտառապահին՝ նա որսից հետո
Միշտ հյուր էր գնում՝ որսած ավարով:

Ճաշակում էին միասին նրանք
Համեղ ուտեստներն ու կարմիր գինին,
Հաշվի չառնելով նման պահերին,
Թե ով է տերը, իսկ ով է ծառան:

Իսկ երբ գիշերն էր փռվում ձորերում,
Մի ուրիշ կյանք էր ասես սկսվում.
Բվեճն էր կանչում, պախրան՝ բառաչում,
Ձորում Թարթառն էր անվերջ որոտում:

Մելիքն էլ՝ հոգնած՝ թինկ տված թախտին,
Ընկնում էր գիրկը քաղցր հուշերի,
Հանգստանում էր մարմինը նրա՝
Ներդաշնակվելով հոգու անդորրին:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

II

Հանդիպում

Տարիներ անցան… Մելիքը վաղուց
Ծոսի անտառը որսի չէր գնում,
Անտառապահն էլ՝ առաջվա նման,
Իր դստեր հետ էր ապրում տնակում:

Մինուճար որդի ուներ մելիքը,
Նոր էր բոլորել տասնութը նրա,
Դեռ նոր էր ծլել բեղ ու մորուքը,
Ու ջահել գլխում դեռ շատ քամի կար:

Եվ ահա մի օր մելիքի որդին՝
Ստանալով հոր օրհնանքը բարի,
Որսորդների հետ անտառ է գնում՝
Իր բազկի ուժը այնտեղ փորձելու:

Հասնելով անտառ՝ որսի շներով,
Ճեփորի կանչով, հարայ-հրոցով
Որսին քշում են դեպի որսորդը,
Որն էլ իր հեթին խոցում է նետով:

Մելիքի որդին, տարված իր որսով,
Վիրավոր վիթի արյան հետքերով
Աննկատ հասավ փայտե տնակին,
Հետո զարմացած մեխվեց նա շեմին:

Վիթը պառկած էր տնակի առաջ,
Ծանր էր նա շնչում՝ աչքերը փակած,
Իսկ կիսով չափ բաց դռնից տնակի
Տղային նայեց մի հրաշք աղջիկ:

Տղան՝ մոռացած իր որսի մասին,
Մոտեցավ նրան արագ քայլերով,
Զարմանքով նայեց չքնաղ էակին,
Հետո հարցրեց կերկերուն ձայնով.

ГАУ РК "Медиацентр им. Н. Гаспринского"

– Դու իրակա՞ն ես, թե՞ ինձ է թվում,
Գուցե, տեսելի՞ք ես այս մութ անտառում,
Եթե երազ չես, թույլ տուր մոտենալ,
Դիպչել քեզ ձեռքով՝ զգալ, հավատալ:

Աղջիկը մի պահ մնաց շվարած.
Նայեց եղնիկին, որսորդին կանգնած,
Բայց հանկարծ դարձավ սառը և դաժան,
Դարձավ տղային ու կտրուկ ասաց.

– Ո՞վ ես դու, տղա՛, ո՞ւմ հպատակն ես,
Ինչո՞ւ ես մտել դու այս անտառը,
Ես պարտավոր չեմ քեզ պատասխանել,
Ա՛յ, հայրս կգա՝ կտաս քո հարցը:

Որս անելն այստեղ խիստ արգելված է,
Այդ իրավունքը լոկ տերը ունի,
Օրենք խախտողը միշտ պատժվում է, –
Ասաց աղջիկը՝ զայրացած սաստիկ:

– Մի՞թե այդպես եք դուք դիմավորում
Անծանոթ հյուրին, – հարցրեց տղան.
– Ինչո՞ւ՝ հոգնած և մոլորված մարդուն
Մի բաժակ ջուր էլ չես առաջարկում:

Աղջիկը մի պահ շփոթվեց հարցից,
Ներս մտավ տնակ, ջուր լցրեց կժից,
Գավաթը մեկնեց ջահել որսորդին,
Հազիվ զսպելով հուզմունքը ներքին:

Հենց այդ ժամանակ հեռվից լսվեցին
Ձիերի խրխինջ ու մարդկանց ձայներ,
Ապա զինավառ մի խումբ որսորդներ
Եկան, տեղ հասան, իջան ձիերից:

Ջահել որսորդին երկար գովեցին,
Նրան կոչեցին արծիվ սրատես,
Ապա տեսնելով աղջկան շեմին՝
Նրանցից մեկը փորձեց կատակել.

ГАУ РК "Музей-заповедник им. И. Гаспринского"

– Ա՛յ քեզ հաջող որս՝ եղնիկ և օրիորդ…
Սակայն տարիքով ավագ մի որսորդ
Կատակասերին զսպեց խստորեն.
– Ավելի լավ է լեզուդ քեզ պահես,

Նա մինուճարն է անտառապահի՝
Մեծ բարեկամը մելիք Եսայու,
Ես շատ վաղուց եմ նրան ճանաչում,
Նա ոչ թե եղնիկ՝ ձագ է հովազի:

– Ծողե՛ր, աղջի՛կս, դու մի՛ շփոթվիր,
Մոռացե՞լ ես ինձ, հապա լա՛վ նայիր,
Ես մեր մելիքի շատ հին ծառան եմ,
Երևի արդեն շատ եմ ծերացել:

– Վա՛յ, Արշակ քեռի, մի՞թե այդ դու ես,
Ախր անցել է երկար ժամանակ,
Եկե՛ք, համեցե՛ք, տուն մտեք, խնդրեմ,
Շուտով հայրիկս մեզ կմիանա:

Ծողերի տեսքը երիտասարդին
Շատ էր գրավել ու հիացրել,
Հազիվ էր զսպում թրթիռն իր սրտի,
Սիրո կրակն էր սիրտը հրդեհել:

Ահա և եկավ հայրը աղջկա,
Բոլոր հյուրերին ողջունեց ուրախ,
Նա ամուր գրկեց որդուն մելիքի.
– Մի՞թե այդ դու ես, Արմա՛ն սիրելի:

Ինչպե՞ս է ապրում մեր տեր մելիքը,
Նա մեր անտառում վաղո՛ւց չի եղել,
Լսել էի, որ փոքր-ինչ տկար է,
Հուսով եմ՝ լավ է առողջությունը:

Աստծո աջը միշտ անպակաս լինի
Մեր տիրոջ գլխից, որդուն պահպանի:
Դե՛ լավ, տղանե՛ր, ընթրիքի ժամն է,
Շո՛ւտ կրակ վառեք՝ միսը խորովենք:

ГАУ РК "Национальная библиотека Гаспринского"

Այսպես կատակով սեղան զցեցին…
Իսկ երկու հոգի, իրարից անկախ,
Դարձան ինքնամփոփ, փոքր-ինչ տխրեցին.
Նրանց հոգու մեջ փոխվեց ինչ-որ բան:

Ահա և եկավ մեկնելու պահը,
Բոլորը ուրախ հրաժեշտ տվին,
Միայն տխուր էր փոքր-ինչ Արմանը.
Ներքուստ նա դեմ էր այդ բաժանումին:

Արմանը հորը ամեն ինչ պատմեց,
Ասաց, թե ուր էր հասել եղնիկը,
Իր տեսած աղջկան նկարագրեց,
Ու պարզաբանեց՝ Ավոն է հայրը:

– Տղա՛ս, միգուցե, սիրահարվե՞լ ես,
Որսի գնացիր՝ ինքդ որս դարձար,
Ես այդ աղջկան դեռ մանկուց գիտեմ,
Մի՞թե նա արդեն օրիորդ է դարձել:

Գիտե՞ս, Արման ջան, թե ո՞վ է հայրը,
Այդքան հասարակ անտառապահը,
Կար մի ժամանակ՝ կալվածքի տեր էր,
Բայց դեպք պատահեց, ու կյանքը փոխվեց:

Քաջարի մարդը փակվեց ինքն իր մեջ,
Սակայն քչերը գիտեն այդ մասին,
Նա ազնվական, պատվավոր մարդ էր,
Քաջարի զինվոր, բարեկամն իմ հին:

Թե հավանել ես դու այդ օրիորդին,
Հորից կխնդրեմ ես ձեռքը նրա,
Ավոյի հետ էլ դառնանք խնամի,
Գուցե դրանով վշտին իր վերջ տանք:

– Հայրի՛կ, չգիտեմ՝ ինչ պատասխանել,
Պետք է աղջկա կարծիքն էլ հարցնել,
Նրա մեջ վայրի եղնիկն է խոսում,
Մեր հանդիպումը ես լավ եմ հիշում:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Արմանի հայրը ծիծաղեց ուրախ.
– Հա՛, ես լավ գիտեմ՝ աղջիկ է անվախ,
Լա՛վ, արի այսպես պայմանավորվենք՝
Երկուսով նրանց տուն մենք այցելենք:

Ես կզրուցեմ հոր հետ առանձին,
Իսկ աղջկա հետ դու բախտդ փորձիր,
Ես համոզված եմ, որ լավ կլինի,
Թե պայման դնի՝ դու համաձայնվիր:

III

Ավոն զարմացած՝ ջերմ դիմավորեց,
Այցի առիթը նա չհարցրեց,
Մինչև Շողերը սեղան կգցեր,
Մելիքը հեռվից զրույց սկսեց:

Երկու հայրերը զրուցում էին՝
Գինու թասերը հաճախ պարպելով,
Իսկ ջահելները դեռ լռում էին՝
Տնակի շուրջը հանգիստ ճեմելով:

Հետո Շողերը պատմեց իր կյանքից,
Ասաց՝ մեն-մենակ հաճախ է տխրում,
Արմանն էլ պատմեց իր նիստ ու կացից,
Որից աղջիկը բան չէր հասկանում:

Բայց հետզհետե մտերիմ դարձան,
Խոսք ու հայացքով իրար հասկացան,
Արմանը հուզվեց, էլ չդիմացավ,
Ասաց, թե ինչու նրանց հյուր եկան:

– Այդ ի՞նչ ես ասում, դու խե՞նթ ես, ի՞նչ է,
Եկել ես մեր տուն, որ ինձ ծանակե՞ս.
Ես մի գյուղացի համեստ աղջիկ եմ,
Մի՞թե դու լուրջ ես ասում իսկապես:

ГАУ РК "Национальная б-ка им. Г. Гаспринского"

– Չէ՛, ի՞նչ ես ասում, մի՞թե կարող եմ,
Ա՛խ, այն օրվանից, ինչ քեզ տեսել եմ,
Գիշեր ու ցերեկ մտքիս մեջ դու ես.
Այդ մասին հորս արդեն պատմել եմ:

Լրջացավ հանկարծ Շողերի դեմքը,
Զգաց՝ կատակ չէ նրա ասածը,
Նա երկար լռեց, ապա հարցրեց.
– Դրա մասի՞ն է նրանց զրույցը:

– Այո՛, Շողե՛ր ջան, բայց քոնն է կամքը,
Թե համաձայն չես, ասա մտքինդ,
Մենք կբաժանվենք՝ դեռ չմիացած,
Կամ էլ կլսեմ երջանիկ խոսքդ:

Շողերն, իհարկե, շատ էր հավանում
Բոյ ու բուսաթով որդուն մելիքի,
Բայց զսպեց իրեն, ասաց կամացուկ.
– Ես կենթարկվեմ հայրիկին կամքին:

Եթե որոշի, որ ճիշտը դա է,
Ես էլ կբացեմ քո առաջ սիրտս,
Բայց լավ իմացիր, ինչ էլ որ լինի,
Մենակ չեմ թողնի սիրելի հորս:

Երբ վերադարձան ծնողների մոտ,
Տեսան Ավոյին՝ նստած մտահոգ,
Մելիքն էլ նրան բան էր համոզում,
Իսկ Ավոն տխուր, լուռ մտածում էր:

Թեման փոխեցին՝ նրանց տեսնելով,
Երկուսով ուրախ՝ զույգին ժպտացին,
Ավոն աղջկան մոտ կանչեց սիրով
Ու պատմեց նրան, թե ինչ խոսեցին:

– Լսի՛ր, աղջի՛կս, բան պիտի ասեմ,
Բայց վերջին խոսքը քոնն է լինելու,
Իր միակ որդու՝ Արմանի համար
Մեր տեր մելիքը ձեռքդ է խնդրում:

ГАУ РК "Музей-заповедник им. М. Гаспринского"

Գիտես՝ ինչքան եմ, անգին, քեզ սիրում,
Մազդ չեմ փոխի ոչ մի գանձի հետ,
Բայց դե ի՛նչ անեմ, վաղ լինի, թե ուշ,
Քեզ անհրաժեշտ է ընտանիք կազմել։

Ո՞վ կարող է քեզ արժանի լինել՝
Մեր քաջ Արմանը, նա քեզ է ընտրել,
Թե համաձայն ես նրան կին լինել,
Ասա՛, համարձակ կարող ես խոսել։

Ծողերը միայն գլխի շարժումով
Հաստատեց՝ այո, նա համաձայն է,
Մելիքը խոսեց դրանից հետո,
Իր օրհնությունը երկուսին տվեց։

Այսպես, անտառի փոքրիկ տնակում
Երկու սրտերը միահյուսվեցին,
Չորս բաժակների գինին էր շողում,
Երջանկացնում էր սիրող զույգերին։

IV

Հարսանիք

Տուն վերադարձան մելիքն ու որդին,
Երջանիկ մայրը նրանց էր սպասում,
Առաջ էր ընկել լուրը նրանցից՝
Արդեն գիտեին, թե ինչ է սպասվում։

Մելիքն արտակարգ հարսանիք արեց՝
Ճոխ սեղաններով, բազում հյուրերով,
Ուրախ երգերով, կայտառ պարերով.
Նման հարսանիք վաղուց չէր եղել։

Իսկ ներկաները՝ տոնական հագնված,
Առոք ու փառոք թախտերին բազմած։
Գինին է փրփրում մեծ գավաթներում,
Ջահել զույգին են բարիք ցանկանում։

ГАУ РК "Медиацентр им. М. Гаспринского"

Պալատից մինչև հին եկեղեցի
Գեղեցիկ գորգեր ճամփին փռեցին,
Հավաքվածները ծափ ու ծիծաղով
Հարս ու փեսային դիմավորեցին:

Խնկի բուրմունքն էր սար ու ձոր բռնել,
Իսկ փոքրիկները ժայռին են թառել,
Կարծես ուզում են թևին տալ, թռչել,
Ինչպես արծիվի նորաթուխ ճտեր:

Ինչպես հեքիաթում՝ յոթ օր, յոթ գիշեր
Մեծ հարսանիք էր պալատում շքեղ,
Մոտիկ գյուղերի բնակիչներին
«Սիրո ճաշ»՝ մատաղ բաժին հանեցին:

Ճերմակամորուս տերտերը՝ խաչով
Կարգն էր կատարում պսակադրության.
Օրհնեց երջանիկ զույգին աղոթքով,
Ամենայն բարիք, լավ կյանք ցանկացավ:

V

Խաղաղ կյանքի վերջը

Իսկ հարսանիքից հետո՝ մելիքը
Անտառապահին կանչեց պալատն իր,
Համոզեց՝ թողնել մենակյաց կյանքը,
Հրամանատար դառնալ իր զորքին:

Ավոն փորձառու, հին զորական էր,
Մելիքի հետ էլ արդ բարեկամ էր,
Ամեն օր աղջկան կարող էր տեսնել.
Էլ ի՞նչ պատճառով մելիքին մերժեր:

Ամեն ինչ, կարծես, լավ էր ընթանում.
Խաղաղություն էր երկրում տիրում,
Կառուցում էին, վար ու ցանք անում,
Օջախներն էին իրենց շենացնում:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Բայց խաղաղ կյանքը շուտով ընդհատվեց,
Ամպեր կիտվեցին երկրի գլխին,
Եվ սուրհանդակը վատ լուրեր բերեց
Մեր բազմաչարչար մայր Հայաստանից:

Թշնամիները՝ ինչպես մորեխներ,
Անդրկովկաս են ահա ներխուժել,
Հայոց լեռներում՝ կատաղի մարտեր,
Եվ շուտով այստեղ կարող են հասնել:

Արցախը լսեց, արագ բռունցքվեց,
Հինգ մելիքների ժողով գումարվեց,
Խոսք եղավ՝ ինչպես կռվին պատրաստվել,
Ու նրաց վեճը տաքացավ, սրվեց:

Վերջում որոշում կայացրին այսպես.
«Պետք է թշնամուն նամակ ուղարկել,
Պետք է ամեն կերպ ժամանակ շահել
Ու խաղաղ դաշինք նրա հետ կնքել:

Թե Փանահ խանը պահանջներ ունի,
Թող մելիքներին նա պատասխան տա,
Ամեն ինչ կտանք, միայն՝ մի պայման՝
Թող նրա զորքը Արցախ չմտնի»:

Գերազանցում էր թշնամու զորքը
Արցախի բոլոր զինված ուժերին,
Պետք էր խուսափել, կանխել կռիվը,
Բայց պետք էր կռվել, եթե մերժեին:

Բայց այդ հավաքին Շուշվա մելիքը
Չեկավ, ասելով՝ հիվանդ պառկած է,
Բայց հետո պարզվեց՝ այլ էր պատճառը՝
Նրա հոգու մեջ վախն էր բույն դրել:

Փանահը մեժեց հայ մելիքներին,
Ասելով՝ պետք է շուտ զինաթափվեն,
Լինեն հպատակ պարսից մեծ շահին,
Հակառակ դեպքում՝ կոչնչացվեն:

ГАУ РК "Мегапакский имени Гаспринского"

VI

Պատերազմ

Այդ ոհմակին այլ ցեղեր միացան՝
Քոչվոր, վայրենի թաթարներ, քրդեր,
Որոնք բույն էին դրել Մուղանում,
Հիմա էլ դարձան վարձկան զինվորներ:

Գիշեր ու ցերեկ չորս մելիքները
Ամրացնում էին իրենց դիրքերը,
Ընտանիքներին տարան լեռները,
Ամուր փակեցին բոլոր կիրճերը:

Իսկ Շահնազարը՝ բոլորից գաղտնի,
Տեղեկացրել էր արդեն պարսիկին,
Որ համաձայն է նրա պայմանին
Եվ Շուշվա բերդը նրան կհանձնի:

Լուրը կայծակից արագ տարածվեց՝
Դավաճանել է Շահնազարն իրենց,
Ստոր ոսոխին կանչել է Շուշի՝
Առանց գիտության չորս մելիքների:

Դա մեծ հարված էր հայի թիկունքին,
Խիստ վրդովված էր մելիք Եսային,
Բայց մելիքները մյուս մարզերի
Հաստատ մնացին իրենց երդումին:

Ում բազկում ուժ կար, սուր բռնել գիտեր,
Աղեղ գործածել կամ քարեր նետել,
Ինչպես լինում է նման պահերին,
Մի մարդու նման զինվոր գրվեցին:

Մելիք Եսային կանչեց Ավոյին,
Պետք էր պաշտպանել նոր ընտանիքին,

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Եվ որոշեցին, որ Ջրաբերդում
Նրանք կլինեն միշտ իրենց կողքին:

Արմանը թողեց պալատը շքեղ,
Ու Շողերի հետ գնաց Ջրաբերդ.
Ամուսինները զենքերը վերցրին
Ու պատրաստվեցին ահեղ մարտերին:

Օդը շիկացավ ամպրոպից առաջ,
Մարդիկ էլ դարձան քչախոս, մռայլ,
Զգացվում էր, որ մեծ ցավ է գալիս,
Որը կանխելը դժվար է անչափ:

Սելջուկն անարգել Շուշի էր հասել,
Մահն էր թևածում երկրում հայի,
Թալան ու ավեր և արյան հեղեղ,
Մոխիր էր դառնում հողը Արցախի:

Բայց նպատակին նրանք չհասան,
Հայոց ուժերը իրար միացան,
Այստեղ ու այնտեղ ծուղակ սարքեցին,
Թշնամու զորքին մեծ վնաս տվին:

Իսկ բազմաքանակ զորքը սելջուկի
Ջրաբերդին էր ընդհուպ մոտեցել,
Այստեղ է մեր սուրբ Դադիվանքը հին,
Որը Արցախի շատ մեծ պարծանքն է:

Հզոր, անառիկ ամրոցներ կային
Թրղի ու Թարթառ գետերի ափին,
Չորս մելիքները՝ թիկունք թիկունքի,
Դարձան մի ամուր բռունցք հայերի:

Մելիք Եսայուն օգնության եկավ
Մեծ Գյուլիստանի հայկական զորքը,
Խաչենից եկան,Դիզակից հասան,
Իսկ Զանգեզուրից՝ հեծելազորը:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Հասկանալի էր, որ Փանահ խանը
Ուզում է տիրել ամբողջ Արցախին,
Իսկ դրա համար առաջին հերթին
Պետք է գրավեր նա Ջրաբերդը:

Մինչ ատամները զինված թշնամին,
Դաշտերից հասավ բարձր լեռները,
Հաճախ էր զորքը կանգ առնում ճամփին,
Քանզի շատ ծանր էր զենք ու զրահը:

Սովորել էին նրանք դաշտերին՝
Հույսը միշտ դրած հարբած փղերին,
Իսկ այստեղ լեռ ու կիրճերից բացի
Նույնիսկ տափարակ չկար մի փոքրիկ:

Իբրահիմ խանը նամակ էր հղել
Մեծ Փանահ խանին, որ ինքը եկել
Ու դեմ է առել հզոր ամրոցին,
Խնդրում է շտապ նոր զորք ուղարկել:

«Անհավատների դիրքերն ամուր են,
Ծանր զենքերը չեն գործում այստեղ,
Լեռներ մագլցող զորք է հարկավոր,
Ուղարկիր նաև բաբաններ հզոր»:

Բայց մինչ Փանահից օգնություն կգար,
Պարսիկի գլխում ուրիշ մտքեր կար՝
Հային կաշառել, ժամանակ շահել,
Բարեկամության մեծ խուստումներ տալ:

Բայց համոզվելով, որ չի ստացվում,
Մեծ հարձակման է զորքը պատրաստվում,
Գաղտնի փորձում է նեղ կիրճը մտնել,
Ուր նրան մահն էր արդեն սպասում:

Հանգիստ սողում էր զորքը պարսիկի.
Ոչ մի տեղ հետքը չկար հայերի,

ГАУ РК "Национальная б-ка им. Г.И. Гаспринского"

Բայց երբ որ հասան կիրճի նեղ մասին,
Քարերի հեղեղ թափվեց վերևից:

Սկզբում փակվեց ճամփան նահանջի
Հսկա քարերով՝ խառնված խիճին,
Իսկ առաջապահ զորքը պարսիկի
Դեմ առավ հատած հսկա ծառերին:

Դեռ չէր սթափվել զորքը ոսոխի՝
Նետերի տարափ տեղաց վերևից,
Որը հնձում էր ցեղերին վայրի,
Խուճապի մատնում հակառակորդին:

Տեսնելով՝ չկա իրեն փրկություն,
Ցած դրեց զենքը խեղճացած զորքը
Հաղթական «ուռռա»-ն ցնցեց լեռները,
Իսկ հետո տիրեց ծանր լռություն:

Արմանը մոտ էր Ծողերի ջոկին,
Տղան չէր կտրում աչքը կնոջից,
Միշտ մոտ էր վազում դադարի պահին
Եվ խորհուրդներ էր անընդհատ տալիս:

Երբ չհաջողվեց բերդը գրավել,
Որին դժվար էր նույնիսկ մոտենալ,
Խանը որոշեց բերդը պաշարել.
Պետք էր սպասել, մինչև ծնկի գան:

Սակայն զուր էին նրա ջանքերը՝
Երկու մուտք ուներ անառիկ բերդը,
Գաղտնի գետնուղին իջնում էր գետը.
Այնտեղից էին հենց բերում ջուրը:

Պարենի կարիք նրանք չունեին.
Հոգացել էին այդ վաղուց մասին,
Գյուղերից փախած բնակիչները
Բերդ էին բերել, ինչ որ ունեին:

ГАУ РК "Национальная им. М.Г. Аспринского"

Արդեն աշուն էր. օրն էր կարճանում,
Իսկ պաշարումը շատ էր ձգձգվում,
Իբրահիմ խանը զորքի մի մասը
Տարավ Պարտավ՝ իր մշտական որջը:

Իր ճանապահին քարուքանդ արեց
Ու հրի մատնեց մի չքնաղ պալատ՝
Մելիք Եսայու դղյակն ավիրեց,
Մելիքն իմացավ ու վրդովվեց շատ:

Բոթը Եսայուն բերեց մի գուժկան.
Մելիքն Արմանին հրաման տվեց՝
Արնախում, դաժան ոսոխին պատժել,
Որ ցավը սրտի փոքր-ինչ մեղմանա:

VII

Արմանի ջոկը ծանոթ գետնուղով
Դուրս եկավ ափը վարար Թարթառի,
Նա գետի ափով ցած իջավ փութով,
Եվ չնկատեց նրան թշնամին:

Ծողերը չուզեց բերդի մեջ մնալ,
Ծպտվեց, գաղտնի ջոկին հետևեց,
Եվ միայն հետո Արմանն իմացավ,
Թե որքան համառ կնոջ է սիրել:

Բայց ուշ էր արդեն բերդ վերադառնալ,
Մի լավ նախատեց ու սաստեց նրան,
Նաև ուրախ էր նա հոգու խորքում,
Որ կողքին նման կին ունի խիզախ:

Առավոտ ծեգին՝ արևը չելած,
Ջոկը կանգ առավ՝ պալատ չհասած,
Մոտակա բլրից նայեցին ներքև.
Պալատի վրա սև ծուխ էր կանգնել:

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Քար լռություն էր տիրում այդ վայրում,
Ու չէր նկատվում որևէ շարժում,
Ջոկն իջավ բլրից, հասավ պալատին.
Վերածվել էր այն լուռ ավերակի:

Պալատի շուրջը երկար շրջեցին.
Գոնե գտնեին կենդանի մեկին,
Որը կպատմեր եղածի մասին,
Սակայն շուրջբոլոր՝ լռություն վայրի:

Ոչ հեռու մի հին եկեղեցի կար՝
Սև պատերն էին միայն մնացել,
Բայց, ա՛յ քեզ զարմանք, մարդկային մի ձայն
Դիմացի ժայռի խցերից լսվեց:

Երգում էր ինչ-որ մեկը հայերեն
Կամ աղոթում էր խցում բարձրաձայն.
Տղերքը շուտով այդ խցին հասան,
Պարզվեց՝ սևազգեստ աբեղա է ծեր:

Վախից ու ցավից կուչ էր եկել նա,
Կցկտուր էին բառերը նրա,
Երբ ջուր տվեցին, մի կտոր էլ՝ հաց,
Սկսեց պատմել նա լացակումած.

«Անցյալ շաբաթ էր՝ աղոթքի ժամին,
Մեկը լուր բերեց, որ նենգ թշնամին
Գալիս է զորքով անթիվ, անհամար.
Եվ ով հասցրեց՝ փախավ, հեռացավ:

Շատ կարճատև էր մարտն անհավասար՝
Պալատը հսկող ջոկատը պարտվեց,
Նահատակվեցին զինվորները հայ,
Ես կարողացա քարայրում թաքնվել:

Նրանք, պալատը վառելուց առաջ,
Կողոպտեցին այն, սրբեցին իսպառ.

ГАУ РК "Медиацентр им. Гаспринского"

Տարան զարդերը և կահկարասին,
Նույնիսկ մթերքը իրենց հետ վերցրին:

Հետո շրջակա գյուղերը մտան,
Գերեվարեցին կանանց ու մանկանց,
Իսկ մնացածին սրի քաշեցին,
Այդպես շեները ամայացրեցին»:

Արմանը լսեց այս պատմությունը,
Եվ նրա սիրտը կծկվեց ցավից,
Հետո նա վերցրեց փոքրիկ ջոկատը,
Շտապեց գտնել թշնամիներին:

Գյուղերից փախած շինականները՝
Տեսնելով հայոց ջոկատը զինված,
Կամավոր կերպով միացան նրանց,
Որպեսզի լուծեն իրենց վրեժը:

Իրիկնադեմին հասան թշնամուն.
Նա կանգ էր առել Քամքաշի ձորում,
Եվ վրաններում՝ անթիվ, անհամար
Զորքը փորձում էր քիչ հանգստանալ:

Անմտություն էր օրը ցերեկով
Հարձակում գործել փոքրաթիվ զորքով,
Որոշեցին, որ ձորում կսպասեն,
Մինչև մթնշաղ ժամանակ ունեն:

Երկար խորհեցին, թե ինչպես անեն,
Որ անսպասելի լինի գրոհը,
Թշնամուն հարված այնպես հասցնեն,
Որ ուշքի չգա անգութ ոսոխը:

Մի զինված ջոկատ ընտրեց Շողերը,
Այն վրանները՝ լուռ պիտի մտներ,

ГАУ РК "Национальная им. К. Гаспринского"

Պետք է ձիերի հարցերը լուծեր՝
Թամբերը կտրեր, ազատ արձակեր:

Ծպտված շորերով, տղերքը թաքուն
Հասան ձիերին, դաշույններով սուր
Թամբերը բոլոր արագ կտրեցին,
Բոլոր ձիերին ազատ թողեցին:

Հենց նույն ժամանակ՝ ջահերը վառած,
Բլրի լանջերից ջոկատն իջավ ցած,
Աղմուկ, աղաղակ բռնեց սար ու ձոր,
Ու կոտորած էր գնում ահավոր:

Քամքաշի ձորը դարձավ մի դժոխք՝
Ձիերի խրխինջ, սպանդ անողոք,
Մինչ պարսիկները ուշքի կգային,
Գետը արյունից ներկվել էր կարմիր:

Խաբված, կարծելով, մեծ զորք է գալիս,
Ճողոպրում էին բոլորը մահից,
Ձուր էր գոռգոռում խանը կատաղած,
Տեսավ ճար չկա՝ դիմեց փախուստի:

Մինչև լուսաբաց տևեց կռիվը,
Երբ լույսը բացվեց, պարզվեց արդյունքը.
Շատ քչերն էին մահից փրկվել,
Մեծ կորուստներ էր թշնամին տվել:

VIII

Վրեժ լուծեցին ստոր ոսոխից,
Բազմաթիվ ձիեր բռնագրավեցին,
Հետևակն արդեն դարձավ այրուձի,
Որ համալրվեց մոտիկ գյուղերից:

Դա արդեն ոչ թե ջոկատ էր փոքրիկ,
Այլ մեծաքանակ ու փորձված մի զորք,

ГАУ РК "Национальная библиотека им. Гаспринского"

Ի վիճակի էր երկիրը մաքրել
Կեղտից, որ մարդիկ ապրեն երջանիկ:

Մի քանի օր անց հասան Զրաբերդ...
Պարսիկը կրեց շատ մեծ պարտություն,
Նա խուճապահար փախուստի դիմեց՝
Մոռանալով, որ բերդն է պաշարում:

Ցնծությունն այնքան մեծ էր Արցախում,
Որ տարածվել էր բոլոր տներում,
Իսկ Մռավ սարի ձյունոտ գագաթը
Բյուր ժպիտներից արագ էր հալչում:

Պարտության լուրը հասավ և խանին,
Կատաղեց ցավից հարամ թշնամին,
Գլխատեց փախած զորականներին,
Քանզի չեն հաղթել նրանք գյավուրին:

Ուրիշ ելք չկար, զուր էր մտածել,
Պետք չէր զորքերը կորստի մատնել,
Ու նամակ գրեց Իբրահիմ խանին,
Թե հայերի հետ պետք է հաշտվել.

«Պետք է մասնատել այդ մելիքներին,
Մելիք Եսայուն դու սիրաշահիր,
Պարագլուխը նա է՝ իմացի՛ր,
Բայց առանց արյան բռիդ մեջ պահիր:

Մելիք են եղել, թող մելիք մնան,
Միայն թե հարկը ժամանակին տան,
Ժամանակ կգա, կգտնենք ելքը,
Երբ դառնան անհաշտ՝ իրար վերջ կտան»:

Կարդաց նամակը Իբրահիմ խանը,
Թե ինչ է գրում պարսից մեծ խանը:

ГАУ РК "Национальная библиотека им. А. Гаспринского"

Թեկուզ իր ներսում վրեժն էր եռում,
Բայց գտավ՝ ճիշտ է իր տիրոջ կամքը:

Բանագնացներ ուղարկեց նա բերդ,
Մելիք Եսայուն՝ մի նամակ-ուղերձ,
Որ նա մոռանա, ինչ որ եղել է,
Թող որ այսուհետ բարեկամ լինեն.

«Մեր հզոր խանը, ալլահը վկա,
Գտնում է, որ դուք և ձեր ժառանգը
Եղել եք մելիք, մելիք կմնաք,
Միայն դուք նրա հարկը պիտի տաք:

Այսուհետև մենք պաշտպան կլինենք
Քեզ և քո եղբայր հայ մելիքներին,
Մեծ խանի կամքով ամբողջ Արցախում
Իրար հետ կապրենք հաշտ ու առանց քեն»:

Բանագնացների մեծ խումբը շուտով,
Դրոշներ պարզած, մեծ նվերներով
Եկավ ու հասավ Ջրաբերդի մոտ,
Մելիքն ընդունեց խմբին հարգանքով:

Ընդունեց, կարդաց նամակը խանի,
Ժամանակ խնդրեց, որ պատասխանի,
Իր մոտ ժողովի կանչեց բոլորին՝
Արցախի տերեր մեծ մելիքներին:

Նամակն ուշադիր նորից կարդացին,
Քանի որ պետք է պատասխան տային,
Մի մասը պնդեց, որ թակարդ է դա,
Իսկ մյուսները դրական գտան:

Վերջապես խոսեց մելիք Եսային,
Խնդրեց ուշադիր լինել բոլորին.

ГАУ РК "Национальная библиотека им. А. Гаспринского"

– Քանի որ հարցը շատ է հրատապ,
Մեր պատասխանը միասին կտանք:

Գիտեմ՝ խարդախ է խանը պարսիկի
Բայց պետք է հաշտվենք մենք այն մտքի հետ,
Որ նա ուժեղ է իր զենքով, զորքով,
Մայր հայրենիքից մենք կտրված ենք:

Մայր Հայաստանում նույնպես կռիվ է,
Ու դրա վերջը ոչ ոք չգիտի,
Մեզ ժամանակ է հարկավոր շահել,
Որ կարողանանք ուժեր հավաքել:

Նա սեպի նման մեր մեջ է խրվել,
Մեզանից մեկին իր կողմն է քաշել,
Այո, հաղթեցինք ճակատամարտում,
Սակայն վերջնական մենք դեռ չենք հաղթել:

Գիշեր ու ցերեկ մեծ մելիքները
Մոռացել էին՝ ինչ բան է քունը,
Որոշում էին բախտը Արցախի,
Նրանք ահա թե ինչ որոշեցին.

«Թող խաղաղ մնա հայոց Արցախը,
Թող էլ չզոհվի և ոչ մի զինվոր,
Մենք պետք է դաշինք կնքենք հենց այսօր,
Պետք է պահպանենք հարազատ հողը»:

IX

Որոշ ժամանակ ամեն ինչ լավ էր,
Ճողերն էլ շուտով պիտի ազատվեր,
Մի քանի ամսից ծնվեց նոր ժառանգ.
Ողջ ընտանիքը ցնծության մեջ էր:

Մելիք Եսային արդեն շատ ծեր էր,
Բոլոր գործերը որդուն էր թողել,

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Ավոն էլ շուտով՝ այդ դեպքից հետո
Մեր այս աշխարհին հրաժեշտ տվեց:

Բոլոր վանքերում դպրոցներ կային,
Մաշտոցյան տառեր մանուկը գրեց,
Ավեր գյուղերը շենացան նորից,
Ամեն ինչ այսպես մի քիչ խաղաղվեց:

Սակայն քնած չէր թշնամին երկրում,
Ամուր նստած էր Շուշվա բերդերում,
Հին պարիսպներն իր ձևով էր նախշել,
Մզկիթն էր իր սուր գագաթը ցցել:

Մի խարդախ միտք կար օտարի գլխում,
Որ հայոց խոսքն էր նա աղավաղում,
Բոլոր հայկական տեղանունները
Իրենց լեզվով են անվանափոխում:

Շոշն անվանեցին Շուշի դալա-բերդ,
Քարավաճառը՝ ինչ-որ Քելբաջար,
Ու հայկական շատ գյուղ ու տեղանուն
Օտար լեզվով էր միայն անվանվում:

Դա հին ու խարդախ սովորություն էր,
Ամեն տեղ, կարծես, իրենց տարածքն էր,
Որտեղ քոչվորը վրան էր դնում,
Համարում էր, որ դա հենց իր հողն է:

Այլազգիները իրենց տոներին,
Որպեսզի հաճո լինի ալլահին,
Հայի արյունը պիտի հեղեին,
Հայ աղջիկներին առևանգեին:

Դրա պատճառով՝ մշտական կռիվ,
Այստեղ ու այնտեղ՝ ընդհարում անթիվ,
Ու այդպես երկար տարիներ, դարեր
Այդ հողը երբեք չունեցավ հանգիստ:

ГАУ РК "Национальный им. К. Гасиринского"

X

Գարուն էր հայոց երկրում կրկին,
Լեռներում ձյունն էր սկսել հալչել,
Միայն Մռավի սուր գագաթներին
Ձմեռն իր դիրքը չէր ուզում զիջել:

Այդ օրը տոն էր հայոց տներում,
Բոլորը Զատկի օրն էին նշում,
Ամենուր՝ վանքում կամ եկեղեցում
Շարականներ են բոլորը երգում:

Ժիր մանուկները հոլ էին խաղում,
Իսկ ծնողները՝ ժպտում, զրուցում,
Նվերներ տալիս, իրար ողջունում,
Մայր եկեղեցում մոմ էին վառում:

Փոքրիկ Վարդանը՝ Արմանի որդին,
Խաղում էր դաշտում բոլորի նման
Տարված իր խաղով, փոքր-ինչ հեռացավ,
Իսկ դայակները չնկատեցին:

Հանկարծ մեծ տոնի եռուն ժամանակ
Մի գոռոց լսվեց շատ ողբերգական.
– Ամա՛ն, թուրքերը տղային տարան,
Հասե՛ք, շատվոր են, սարերը փախան:

Շողերը հեռվից աղմուկը լսեց,
Սիրտը մղկտաց ահավոր ցավից,
Նա դեռ չգիտեր, թե ում են տարել,
Վարդան կանչելով՝ ձին հանեց գոմից:

Արմանը նոր էր հին վերքը բուժել,
Երբ լսեց լուրը, խենթացավ ասես,
Սուրը հանելով՝ թռավ նետի պես.
Մի ստվար ջոկատ նրան հետևեց:

ГАУ РК "Национальная б-ка им. М. Гаспринского"

Բայց այդքան հեշտ չէր հասնել գողերին,
Որոնք վաղ կազմած պլան ունեին,
Գիտեին արդեն՝ ում են փախցնելու,
Ուր են տանելու, ինչ են անելու:

Շողերը հանկարծ նկատեց հեռվից,
Որ մի հովիվ էր իջնում վերևից,
Մոտեցավ նրան, տեսավ, որ հայ է,
Հարցրեց՝ չի՞ տեսել նա օտարներին:

Հովիվը նրանց ցույց տվեց կիրճը,
Ուր որ քիչ առաջ մտել էր խումբը,
Այնտեղ արշավեց հայերի ջոկը
Եվ կտրեց կիրճի նեղացող ելքը:

Շողերն իր ջոկով թփերում պահվեց,
Հետախույզներին առաջ ուղարկեց,
Պետք էր իմանալ՝ նրա՞նք են, թե՞ ոչ,
Ինչը քիչ հետո արդեն հաստատվեց:

Նեղ ոլորանում երևաց խումբը՝
Մանուկին ձիու թամբին կապկպած,
Չէին կասկածում ավազակները,
Թե կարող էին հետևել իրենց:

Իսկ երբ մոտեցան հայերի խմբին,
Շրջապատեցին նրանց չորս կողմից,
Սրի քաշեցին արագ մի մասին,
Վարդանին առան նրանց ճանկերից:

Շողերի հոգում վրեժն էր եռում,
Փոքրիկ Վարդանին սեղմեց իր գրկում,
Բայց չնկատեց, որ մի ավազակ
Աղեղն էր լարել իրենց թիկունքում:

Բայց չհասցրեց նետը արձակել՝
Ընկավ Արմանի սրի հարվածից,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Վերջինս նոր էր կռվի վայր հասել
Եվ նկատել էր նրան դեռ հեռվից:

Աչքերը բացեց փոքրիկ Վարդանը՝
Ազատված իրեն ճնշող կապանքից,
Սկսեց լացել, երբ տեսավ մորը,
Եվ դեմքը փայլեց երջանկությունից:

Ավազակներից մեկին բռնեցին
Եվ ջոկատի հետ ամրոց բերեցին,
Բռնված գերին պատմեց ստիպված,
Որ դա պատվերն էր Պարտավի խանի:

Լավ իմանալով՝ ում ժառանգն է նա,
Խանը ուզում էր փրկագին վերցնել,
Բայց այդ արարքը թանկ նստեց վրան.
Մեծ խանը շատ խիստ պատժեց նրան:

Խանը ուզում էր սուտ սիրաշահել,
Հային մշտապես նիրհի մեջ պահել,
Իսկ այդ արարքը դեմ էր իր շահին,
Այդ պաճառով էլ վրդովվել էր խիստ:

Նա մի նամակով դիմեց մելիքին,
Որը նեղված էր խանի արարքից,
Շողոքորթ ձևով երկար կյանք մաղթեց,
Հավերժ բարեկամ իրեն ձևացրեց:

Այդպես էր գրում, բայց գործնականում
Թուրք ու թաթար էր նա հեռվից բերում
Եվ նոր հողեր էր անընդհատ զավթում,
Նրանց քանակն էր մշտապես աճում:

Այսպես շատ դարեր եկան ու անցան,
Արցախը դարձավ օտար Ղարաբաղ,

ГАУ РК "Национальная им. А. Гаспринского"

Թուրք ու պարսիկի հետ կռիվ տվինք,
Աղիանքը դարձավ մոգոնած Աղվանք:

Դրանից հետո դեռ շատ բան փոխվեց.
Չկար ո՛չ սուլթան, ո՛չ խան, ո՛չ մելիք,
Արցախում հայը դարձյալ հայ մնաց,
Մնաց մի լեզու, մի Մայր Հայաստան:

ГАУ РК "Медцентр им. И. Гаспринского"

ԼԵԳԵՆԴՆԵՐ

ГАУ РК "Медицентр им. И. Гаспринского"

ԳԱՐՈՒՆԸ ՄՌԱՎՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

Ահա Մռավը՝ քունը թոթափած,
Արցախի հողում նոր սահման դարձած,
Գարնանը ձյունե զգեստն է փոխում,
Զմրուխտ կանաչով զուգվում-զարդարվում:

Ճերմակ գլխաշոր կապած գագաթին՝
Քրտինքն է ծորում շիկնած ժայռերից,
Վտակներ դարձած՝ դեպի ձոր վազում,
Որտեղ աղմկոտ Թարթառն է հոսում:

Իսկ խոռոչներում՝ գագաթին մոտիկ,
Որտեղ լոկ քոչվոր ամպերն են լողում,
Նույնիսկ ամառվա կրակոտ շոգին,
Սառույցը տեղ-տեղ լրիվ չի հալչում:

Զմեռվա ճերմակ վերմակը նետած
Ու ջերմ արևի խուտուտից զարթնած,
Լեռան լանջերը նոր զգեստ հագան,
Որ դիմավորեն գալուստը գարնան:

Եվ երբ կանաչեց լեռների կուրծքը,
Հովիվն էլ բացեց փարախի դուռը
Ու հոտը քշեց դեպի սարերը –
Լսվեց նոր ծնված գառան մայունը:

Տափարակներում՝վրանների շուրջ
Ժիր մանուկներն են ուրախ վազվզում,
Սարվոր կանայք էլ՝ զրույցով աշխույժ
Օջախ են վառում ու լավաշ թխում:

Իսկ ալպիական լանջերին ծաղկուն
Ոչխարի հոտը՝ իր ներիներով,
Հանգիստ, անվրդով արոտ է անում,
Տարված հովիվի սրինգի ձայնով:

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Табринского"

Ներքևում փռված վայրի դաշտերից
Եղնիկ ու քարայծ՝ իրար հետևից
Սարն են բարձրանում՝ արոտ անելու.
Ամեն շշուկից խրտնում են, փախչում:

Մեկ էլ կեսօրին ամպի մի ծվեն,
Հանդարտ բազմելով լեռան գագաթին,
Մագնիսի նման ձգում է իրեն
Մռայլ ու թխպոտ ամպերի զորքին:

Հանկարծ՝ շամփրող կայծակից հետո
Լսվում է սարսուռ պատող մի որոտ,
Իսկ հետո զարնան անձրևն առաջին
Մաքրում է վերջին բծերը ձյունոտ:

Բարձր լեռները շատ գեղեցիկ են,
Բայց բնությունն այդ շատ խաբուսիկ է,
Եթե ուզում ես հասնել բարձունքին՝
Իմացիր՝ դա շատ մեծ քաջություն է:

I

Մռավ լեռան վրա մի խառնարան կա,
Լցված սառնորակ ու մաքուր ջրով,
Դարձել է փոքրիկ ու խորունկ լճակ,
Որը հայտնի է Սև լիճ անունով:

Գիտնականները այն կարծիքին են,
Որ հրաբուխի խառնարանում խոր
Ափերի հալված ձյունն է կուտակվել,
Դարձել է մի լիճ շատ խորհրդավոր:

Բայց կա հին զրույց, դարերից եկած,
Լիճ է գոյացել ոչ թե ձնհալից,
Այլ արցունքներից ջահել աղջկա՝
Վշտացած մահից իր սիրած յարի:

Այդ լճի ափը շատ զառիթափ է,
Ասես թե քարե մի մեծ գավաթ է,

ГАУ РК "Национальный центр им. И. Гаспринского"

Որից չի կարող ոչ մի մարդ ըմպել,
Քանի որ գիտեն՝ դա մի թակարդ է:

Իսկ թե սխալմամբ ամռան շոգ օրին
Որևէ գազան ջրի մոտ իջնի,
Նրան փրկություն այլևս չկա.
Հոսող ավազը ներքև կքաշի:

Հենց լճի վրա, ինչպես ուրվական,
Մի ժայռաբեկոր՝ ասես թե ծնկած,
Սգավոր մի կին գլուխն է կախել՝
Ջրիմուռներ են ծամերը արձակ:

Նրա վարսերից ջրեր են ծորում
Ու թափվում լճի խոր բաժակի մեջ,
Ասես թե ջուր չէ, այլ աղի արցունք,
Որ գիշեր-ցերեկ լճակն է լցվում:

II

Ասում են՝ իբր մի ջահել հովիվ,
Տարված գեղեցիկ աղջկա սիրով,
Նրան տանում է լեռան գագաթը,
Որ նա հիանա բնապատկերով:

Նրանք՝ ձեռք-ձեռքի՝ վերևում կանգնած,
Ասես ափի մեջ աշխարհը պահած,
Հիանում էին տեսարաններով,
Ոտքերի տակի վիհը մոռացած:

Ու հանկարծ տղան՝ ներքև նայելով,
Թեք լանջի վրա վարդեր նկատեց,
Ցանկացավ իջնել, որ քաղի դրանք՝
Իր քաջությունը ասես ցույց տալով:

Աղջիկը խնդրեց, որ նա դա չանի,
Բայց տղան արդեն իջել էր ժայռից,
Վարդերը փնջել ու հետ էր գալիս.
Եվ խիճը սահեց ոտքերի տակից:

ГАУ РК "Национальная библиотека им. И.Г.Аспринского"

Ինչքան էլ տղան փորձեց պայքարել
Ու նեցուկ փնտրել սահող ոտքի տակ,
Նրա պայքարը ոչինչ չտվեց.
Անդունդը նրան իր գիրկը առավ:

Աղջիկը ճչաց, օգնություն կանչեց,
Բայց խեղճի կանչը ոչ ոք չլսեց,
Այդպես ավարտվեց կարճատև մի սեր,
Որի գարունը նոր էր սկսվել:

III

Ասում են՝ իբր վշտից ցնորված,
Այդպես էլ մնաց աղջիկը ծնկած,
Քարացավ, դարձավ մի սև ապառաժ՝
Անդունդի վրա գլուխը կախած:

Նրա արցունքից անհատակ ձորում,
Մի լիճ գոյացավ շատ խորհրդավոր,
Ու դեռ ծփում է լեռների գրկում,
Այցելուներին միշտ հիացնելով:

Եվ ամեն գարուն լճի ափերին
Բացվում են շատ նուրբ, գեղեցիկ վարդեր,
Որոնք գերում են ամեն տեսնողի,
Սակայն չի հասնում նրանց ոչ մի ձեռք:

IV

Իսկ Մռավ լեռը՝ նոր սահման դարձած,
Այժմ Արցախն է կիսում ստիպված,
Այնտեղ հայորդիք՝ ձմեռ թե ամառ,
Ասես սարեր են՝ սարերին բազմած:

Սահմանից այն կողմ մեր Շահումյանն է,
Մանուկից խլված, մեր կտոր հացն է,
Հայի պապական ու շեն գյուղերում
Այժմ օտարն է նստում, վեր կենում:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Երկրորդ Մասիսն է դարձել Մռավն իմ,
Նորից է կիսվել երկիրն իմ արի,
Բայց կգա օրը, և նենգ թշնամուց
Մենք ետ կխլենք մեր հողը գերի:

ԼԵԳԵՆԴ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Մի բերդ կա շատ հին՝ հայոց Արցախում՝
Թարթառի ափին, լեռներին հենված,
Ավեր, անխնամ, մարդկանցից հեռու,
Ճաքած պատերը՝ թփերով պատված:

Շուրջը խաչքարեր՝ նախշերը մամռոտ,
Զարդարված հայոց տառերով, խաչով,
Այդ քարերի տակ ննջում են խաղաղ
Մեր սուրբ պապերը դարեր շարունակ:

Ներքևում փրփրած գետն է որոտում,
Լիզում, ողորկում ժայռերն ափերի,
Ինչպես հրեղեն ձի՝ մեկ ծառս է լինում,
Մեկ փշրվում է՝ զարկվելով քարին:

Հին բերդի շուրջը՝ թավուտ անտառում,
Հսկա կաղնիներն ուս ուսի տված,
Մերթ ծափ են տալիս, մերթ խուլ հառաչում,
Հին-հին հեքիաթներ են պատմում միմյանց:

Խանդից կուրացած՝ արու եղջերուն
Իր ախոյանին մարտի է կանչում,
Նստած ուրիշի լքված հին բնում՝
Ծեր կկուն մեկի տարիքն է հաշվում:

Ու այս բոլորին հսկում է արթուն
Մեր Մռավ լեռը՝ թագը Արցախի,
Մեկ ժպտում է նա, մեկ էլ՝ մռայլվում,
Ասես հիշելով օրերն անցյալի:

ГАУ РК "Национальная им. М. Распринского"

Հին բերդից հեռու՝ բացատում փոքրիկ
Հսկա կաղնու տակ տապանաքար կա,
Ոչ խաչ կա վրան, ոչ անուն, ոչ թիվ.
Հենց այդ մասին է տխուր լեգենդն այս:

Դարեր են եկել, դարեր անցկացել
Այս խոր ձորերով, այս սեգ սարերով,
Սակայն զրույցն այս մեզ էլ է հասել՝
Սերնդեսերունդ միմյանց պատմելով:

I

Երբ մթնշաղն է իջնում ձորերում,
Քարանձավներից մթին ու խոնավ
Տխուր ու հուզիչ մի երգ է հնչում,
Որ փոթորկում է անգամ սիրտը քար:

Աղջկա երգը

Հե՛յ-հե՛յ, ո՞ւր ես դու,
Իմ սիրած տղա,
Քո յարն է կանչում,
Դու նրան խղճա:

Արի՛, իմ անգին,
Փրկի՛ր խավարից,
Լինենք միասին՝
Հեռու բոլորից:

Մրսում եմ, ցուրտ է
Այս քարանձավում,
Առ ինձ քո գիրկը,
Շա՛տ եմ աղաչում:

Աղջկա երգի թախծոտ մեղեդին
Քամին տանում է մութ-մութ ձորերով,
Դիպչում է երգը ժայռերի կրծքին՝
Ամեն մի ծերպում արձագանք տալով:

ГАУ РК "Медиацентр им. И.Гаспринского"

Գնա՛նք միասին, ի՛մ բարի անցորդ,
Թեժ խարույկ վառենք փոքրիկ բացատում,
Ես քեզ կպատմեմ մի հին պատմություն
Մի տխուր լեգենդ անսահման սիրո:

II

Լուսինը կամաց սահեց լեռներում
Եվ բերդի գլխից երկինք բարձրացավ,
Իրար ձայնեցին պահակներն արթուն,
Ու մի շուն հաչեց ստվերի վրա:

Թեկուզ գիշերը կիսվել էր արդեն,
Բայց արթուն էր դեռ տերը Արցախի,
Մտքերը դաժան, մտքերը խավար
Քունն էին փախցրել հոգնած աչքերից:

Մի թափառական ու նենգ թշնամի
Խուժել է հայոց հողը սրբազան,
Որ կրկին անգամ երկիրն ավերի,
Դարձնի մեզ ստրուկ ու կամակատար:

Նամակ է եկել երեկ արքայից,
Որ պատրաստ պահի զորքը Արցախի,
Պետք է ապահով լինել թիկունքից,
Ո՞վ գիտի՝ ինչ կա մտքում խարդախի:

Նա երկար նայեց Տիրոջ պատկերին,
Խաչ հանեց դեմքին, ապա մրմնջաց.
– Տե՛ր իմ, փրկի՛ր մեզ այս նոր չարիքից,
Որ դարձյալ եկավ, մեր դուռը թակեց:

Մինչ բեկը, տխուր մտքերով տարված,
Ննջեց՝ թեքելով գլուխը բարձին,
Այգում՝ կաթնագույն լույսով ողողված,
Երկու ստվերներ իրար ձուլվեցին:

– Հետևում են մեզ, էլ մի՛ գա, Արամ,
Ստոր կուզիկը մի օձ է խարդախ,

ГАУ РК "Медиацентр им. И. Каспринского"

Կմատնի իսկույն, եթե մեզ տեսավ,
Շատ եմ վախենում, մի՛ գա, քե՛զ մատաղ:

– Ա՛խ, ինչ ես ասում, Հասմի՛կ, ի՛մ անգին,
Մի՞թե կարող եմ առանց քեզ ապրել,
Կուզե՞ս՝ հե՛նց վաղը դիմեմ հայրիկիդ,
Չէ՞ որ թշնամուց իր կյանքն եմ փրկել:

– Լավ ես ճանաչում դու հորս, ավա՛ղ,
Նա անսասան է՝ ինչպես քարաժայռ,
Թե խոսք է տվել Ատոմ իշխանին,
Ապա կնության ինձ կտա հաստատ:

Սև ամպը ծածկեց դեմքը լուսնյակի,
Ցավը բույն դրեց տղայի սրտում.
– Իսկ դու չես մերժի նրան, երևի,
Չէ՞ որ ես չունեմ իշխանի կոչում:

– Դու խենթ ես, Արա՛մ, և անչափ խանդոտ,
Եթե սիրեի ես ուրիշ մեկին,
Մի՞թե գիշերով կգայի քեզ մոտ,
Քեզնից կառնեի համբույրն առաջին:

Մի ծռված ստվեր կորավ խավարում,
Փակվեց ինչ-որ դուռ՝ խուլ ճռնչալով,
Աղջիկը ահից կուչ եկավ տեղում՝
Հոգում մոտալուտ վտանգն զգալով:

III

Երբ Արցախ երկրում արթնացավ արփին,
Սեգ լեռան լանջը ողողվեց լույսով,
Թռչուններն իրենց քաղցր համերգով
Ողջույն հղեցին դաշտ ու անտառին:

Մայր եկեղեցու բարձր գմբեթից
Մեղմիկ ղողանջեց զանգը արծաթե,
Մշուշը՝ համբույր առած ցողերից,
Երկնքի մովում շուտափույտ հալվեց:

ГАУ РК "Музей им. М. Гаспринского"

Լուսինն էլ կորավ արևի շողից՝
Իր հետ տանելով գիշերվա շունչը,
Հովիվը զատեց գառնուկն իր մորից
Ու հոտը քշեց լեռների լանջը:

Բեկը դեռ նոր էր քնից արթնացել.
Հանկարծ դռան մոտ տեսավ կուզիկին,
Նա շատ զարմացավ, բարկացած դիմեց.
– Ի՞նչ է պատահել, շտապ զեկուցի՛ր...

– Անպակաս լինի տերը իմ գլխից,
Ավելի լավ էր՝ լեզուս պապանձվե՛ր,
Աչքս կուրանա՛ր, որ չտեսնեի,
Թե այս գիշեր ինչ դեպք է պատահել:

– Ի՞նչ ես մռթմռթում քթիդ տակ, հիմա՛ր,
Ի՞նչ է պատահել, դե՛ արագ խոսիր:
– Տե՛ր իմ, ռամիկը՝ ռամիկի որդին
Թաքուն այգիդ է այս գիշեր մտել
Ու հանդիպել է օրիորդ Հասմիկին:

Տեղից վեր թռավ բեկը վրդովված...
– Ճի՞շտ ես դու ասում, աչքո՞վդ տեսար,
Թե՞ մեղք ես գործում, ասա՛, անիծված,
Ի՞մ աղջիկն էր դա, թե՞ ինչ-որ ծառա:

Մի՞թե կարող եմ տիրոջս խաբել,
Հաստատ նրանք են՝ մոտիկից տեսա,
Ամբողջ գիշերը սեր են խաղացել,
Խաչով եմ երդվում, տե՛ր իմ, հավատա:

– Թե ինձնից բացի մեկին պատմեցիր,
Լեզուդ կկտրեմ, շներին կտամ:
Իսկ հիմա արագ աչքիցս չքվիր
Ու էլ չերևաս, մինչև ձայն չտամ:

Բեկը մռայլված քայլեց սենյակում՝
Հոգին խռովված մտքերից դաժան,

ГАУ РК "Медиацентр им. Гаспринского"

Հավատալ լուրին նա չէր ցանկանում.
Կուզը՝ թույնով լի, որտեղի՞ց եկավ:

Կարծես թե քիչ են ցավեր արտաքին,
Հիմա էլ այստեղ՝ հենց իր պալատում
Ծառաներ անգամ դարձել են լկտի,
Տիրոջ պատիվն են արդեն աղտոտում:

Ծափ տվեց բեկը՝ ներս մտավ ծառան.
– Դստերս կանչիր՝ ուզում եմ տեսնել,
Թող չձգձգի՝ ինձ մոտ գա շտապ.
Ուրիշ ոչ մեկին մոտս չթողնե՛ս:

Հասմիկը նոր էր քնից արթնացել,
Երբ հայտեցին, որ հայրն է շտապ կանչում.
«Տեսնես այսքան վաղ ի՞նչ է պատահել», –
Հարցրեց ինքն իրեն՝ տագնապը սրտում:

Լվացվեց, զուգվեց, ինչպես վայել է,
Շտապեց վերև՝ իր հոր օթյակը,
Բայց սիրտը ահից իսկույն նվաղեց,
Երբ տեսավ՝ ինչպես ծլկեց կուզիկը:

Նրան տեսնելով՝ հայրը քիչ փափկեց,
Ասես մոռացավ բամբասանքը նենգ,
Անհուն քնքշանքով աղջկան գրկեց
Ու զգուշությամբ հեռվից սկսեց:

– Վատ երազներ եմ տեսնում, աղջիկս:
Այն օրից, երբ քո մայրը մահացավ,
Ասես դատարկվեց աշխարհը շուրջս,
Ես քեզնից բացի՝ չունեմ սփոփանք:

Տարիներ առաջ՝ գիտես այդ մասին,
Ատոմ իշխանին ես խոստացել եմ,
Որ երբ լրանա քո տասնութ տարին՝
Պետք է նշանվես նրա որդու հետ:

ГАУ РК "Национальная библиотека им. М. Гаспринского"

Իսկ հիմա, հարկավ, պահը եկել է,
Ես իմ խոստումը պիտի կատարեմ,
Փեսացուդ կտրիճ, ջահել իշխան է,
Ամբողջ Սյունիքն է նրան պատկանում:

Ես կուզեմ՝ լինես հարուստ, բախտավոր,
Չէ՞ որ քո մայրը այդ է ցանկացել,
Ինձ համար էլ է դա շատ կարևոր,
Բայց կցանկանամ քո խոսքը լսել:

Կրակին նետված կանաչ ճյուղի պես՝
Թոշնեց ժպիտը աղջկա դեմքին,
Սիրտը նվաղեց, լեզուն կարկամեց,
Ասես թե մարեց լույսը աշխարհի:

– Ա՛խ, ների՛ր, հայրի՛կ, – հազիվ շշնջաց, –
Եթե իմ կամքն ես ուզում իմանալ՝
Քո որոշումը ինձ դառնացրեց,
Դժվարանում եմ ես քեզ հասկանալ:

Եվ հետո, հայրիկ, ուզում եմ ասել՝
Ինձ դուր չի գալիս իշխանի որդին,
Հանուն մայրիկի սուրբ հիշատակի՝
Թող ինքս ընտրեմ ինձ կյանքի ընկեր:

Հայրը խոժոռվեց աղջկա խոսքից.
– Այդ ի՞նչ ասացիր, ի՞նչ է, հիվա՞նդ ես,
Թե՞ խելքդ է առել սատանան քեզնից,
Մի՛ լռիր իզուր, խոսի՛ր վերջապես:

Այդ ո՞ր իշխանն է քո սրտին տիրել,
Որ պետք է դրժեմ ես իմ խոստումը,
Միգուցե ճի՞շտ է ականջիս հասել,
Որ քո ընտրյալը ինչ-որ դարբին է:

– Այո՛, իշխան չէ, ցավոք, նա ծնվել, –
Հասմիկը հորը մեղմ պատասխանեց.
– Նա, վտանգելով իր կյանքը ջահել,
Թշնամու սրից քո կյանքը փրկեց:

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

– Այո, եղել է այդպիսի մի դեպք.
Նա դրա համար պարգև ստացավ,
Իսկ այժմ ինքն է ինձ հասցնում վերք,
Որն անսպասելի թիկունքից եկավ:

Հասկացիր, դուստրս, դու՝ իշխանուհի,
Ամուսին ընտրես ինչ-որ ռամիկի՞,
Ինչպե՞ս ես նայեմ մարդկանց աչքերին
Ու ի՞նչ պատասխան ես տամ Ատոմին:

Դու պետք է ապրես շքեղ պալատում,
Մի՛ նսեմացրու քեզ ու քո տոհմին,
Իսկ այդ ռամիկը կփտի բանտում,
Որ ապերախտ է ու այդքան լկտի:

– Մի՛ արա, հայրի՛կ, աղաչում եմ քեզ,
Ես եմ մեղավոր՝ ինձ պատժիր միայն,
Այդպիսի ցավին ես չեմ դիմանա,
Վերջ կտամ կյանքիս՝ վկա է Աստված:

– Եթե չես ուզում, որ նրան պատժեմ,
Ուրեմն մոռացիր անունը նրա,
Իսկ մնացածը ինքս կորոշեմ...
Եվ իմ ասածը դու մի՛ մոռանա:

IV

Հրաման տվեց բեկը, որ գնան
Ու պալատ բերեն ծեր զինագործին.
Վերջինս եկավ, բարևեց խոնարհ՝
Լուռ սպասելով իր տիրոջ խոսքին:

– Լսի՛ր, Բաղդասար, քեզ շատ եմ հարգում,
Պատվարժան մարդ ես, սակայն քո որդին
Ինձ պատվազրկեց քեզ հետ միասին, –
Բեկը ցասումից տեղը չէր գտնում:

– Ի՞նչ է պատահել, տե՛ր իմ, ասացե՛ք,
Ո՞ր մեղքիս համար եղա անպատիվ...

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Անկեղծ զարմացած՝ ծերունին ցնցվեց,
Նա անտեղյակ էր անցած դեպքերին:

– Ի՞նչ ես ձևացնում, թե անտեղյակ ես.
Հարգանք ու պատիվ որդիդ մոռացավ,
Գիշերը թաքուն այգիս է մտել,
Քանի՞ գլուխ ունի ուսերին, ասա՛:

Անմեղ աղջկաս արեց խելքամաղ,
Ի՞նչ է, իշխա՞ն է նա ուզում դառնալ,
Մրոտ խրճիթը՝ ճոխ պալա՞տ դարձնել.
Թե՞ նա Աստծուն է լրիվ մոռացել:

Կապը կտրածին պիտի կախեի,
Սակայն, քանի որ քեզ շատ եմ հարգում,
Որդուդ ներում եմ, թող բերդից չքվի,
Թե չէ կփտի մթին զնդանում:

V

Արամն իմացավ վճիռը բեկի,
Որը դաժան էր՝ մահվան հավասար,
Բայց բիրտ ուժի դեմ ինչպե՞ս պայքարի.
Ու փոթորկվում էր հոգին հուսահատ:

Իսկ վճռական գիշերը վերջին
Փռել էր խավար սավանը գետնին,
Արամը պետք է վճիռ կայացներ,
Բայց ինչպե՞ս նորից սիրածին տեսներ:

Եվ անտեսելով մահվան վտանգը՝
Նորից նա անցավ պարիսպը այգու,
Ապա կոնչաց՝ ինչպես բվեճը.
Ազդանշանն էր դա նրանց թաքուն:

Հասմիկը արթուն՝ մոմի լույսի տակ
Աղոթք էր անում, հատակին չոքած,
Լսելով ծանոթ նշանը հստակ,
Սենյակից զգույշ դուրս եկավ կամաց:

ГАУ РК "Национальная библиотека им. М.Горького"

Իրար գրկեցին՝ ջերմ համբուրվելով.
– Ինձ տար այստեղից՝ ուր որ դու կուզես, –
Ասաց աղջիկը՝ դառն արտասվելով.
– Միայն ինձ մենակ, անհույս չթողնես:

– Լսի՛ր ինձ, Հասմի՛կ, եթե սիրում ես,
Արի՛ միասին սարերը փախչենք,
Այնտեղ շատ մոտիկ ծանոթ ունեմ ես,
Իսկ մնացածը հետո կորոշենք:

– Ես քեզ հետ կգամ, ուր էլ որ գնաս,
Ինձ պետք չէ կյանքը այս ճոխ պալատում,
Եթե կողքիս չես, իմ աննման յար,
Մեկ է, ինձ կզգամ ես մութ զնդանում:

Ու որոշեցին, որ լուսաբացին
Կթողնեն բերդը ու կհեռանան,
Հետո համբույրով լուռ բաժանվեցին,
Ու ստվերները խավարում կորան:

VI

Վաղ լուսաբացին երկու սիրահար,
Նժույգներ հեծած, հեռացան բերդից
Դեպի հեռուներ, դեպի ապագան՝
Բախտ որոնելու՝ հեռու մարդկանցից...

Բայց բերդում արդեն իրարանցում էր,
Ինչ-որ մի պահակ տեսել էր նրանց,
Ու բեկը արագ հրաման տվեց՝
Հետ բերել նրանց՝ կենդանի, մեռած:

– Ա՛խ, իմացել են, կհասնեն, Արա՛մ, –
Ճչաց աղջիկը ձայնով հուսահատ:
– Քի՛չ էլ դիմացիր, – աղաչեց տղան.
– Մեզ էլ չեն հասնի, թե կամուրջն անցանք:

Հասան Թարթառին, որ միշտ փրփրած,
Ափերն է ծեծում կապված ցուլի պես,

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Գետի աղմուկից ձիերը խրտնած,
Ծառս եղան, ապա թռան նետի պես:

Խումբը նրանց դեռ հեռվից նկատեց
Եվ սուրաց առաջ՝ մոլուցքով տարված,
Տարածությունը արագ կրճատվեց.
Ահա, ուր որ է կհասնեն նրանց:

Արամը տեսավ՝ շուտով կհասնեն,
Աղջկան դիմեց. «Ցա՛ծ իջիր ձիուց,
Ափսո՛ս, չենք փրկվի, արդեն հասնում են,
Թաքնվի՛ր այնտեղ՝ մթին անձավում:

Իսկ ես կսպասեմ նրանց հենց այստեղ,
Թե կռվել կուզեն՝ կգտնեն մահը,
Կամ էլ կփորձեմ համոզել նրանց՝
Չփակեն իզուր մեր ճանապարհը»:

Խումբը կանգ առավ նրան շատ մոտիկ.
– Արա՛գ, զենքդ տո՛ւր, – ղեկավարն ասաց, –
Գիտենք՝ քաջ ես դու, վախ չունես մահից,
Սակայն չե՞ս տեսնում՝ ջոկ է քո դիմաց:

– Ի՞նձ ձերբակալել, ո՞վ է այն քաջը,
Որ պիտի գերի դարբին Արամին,
Բայց դե վկա է այն աղն ու հացը,
Որ կիսել եմ ես ձեզ հետ միասին:

Հե՛տ դարձեք, տղե՛րք, բեկին ասացեք,
Որ մեզ չեք հասել ու չեք էլ տեսել,
Ու լավ կլինի՝ արյուն չթափենք,
Ինչո՞ւ եք ուզում մեղքի տակ ընկնել:

Բայց չլսեցին նրա խնդրանքը,
Առաջ մղվեցին՝ մեկի դեմ տասը:
Զարկվող սրերի խուլ արձագանքը
Ալիք առ ալիք լցվում էր ձորը:

ГАУ РК "Национальная им. Е. Гаспринского"

Արամը ձիուց ցած զցեց մեկին,
Մահացու հարված չէր ուզում նա տալ,
Նիզակով հրեց ևս երկուսին,
Ոչ ոք չէր կարող նրան մոտենալ:

Բայց մեկը հեռվից աղեղը լարեց,
Ու նետը թռավ, հասավ թիկունքին,
Կողքից հարվածել մյուսը փորձեց,
Բայց պատասխանը ստացավ գլխին:

Թեկուզ հսկա էլ լիներ Արամը,
Բայց նետի վերքը նեղում էր դաժան,
Ու թուլանում էր նրա բազկի զարկը
Վերջին ուժն արդեն լքում էր նրան:

Աղջիկը, թաքնված մութ քարանձավում,
Զգաց, որ իր քաջ յարին է կորցնում,
Մահն անտեսելով, բարձրացավ ժայռին
Ու բարձր ձայնով դիմեց բոլորին.

– Է՛յ, սպասեցե՛ք, լսեցե՛ք դուք ինձ,
Եթե լոկ մազին դիպչեք Արամի,
Կնետվեմ ձորը՝ վերջ ամեն ինչին,
Իսկ դուք պատասխան կտաք հայրիկին:

Իսկույն դադարեց մարտն անհավասար,
Չինվորներն աղջկա ձայնից ազդված,
Հեռու քաշվեցին դարբին Արամից՝
Հազիվ պահելով սանձը ձիերի:

Բայց ուշ էր արդեն... Վիրավոր տղան
Սահեց ձիուց ցած՝ արյուն քամելով,
Դուրս ելավ ձորից չոր ձեռքը մահվան
Եվ ամուր բռնեց սուր մագիլներով:

Աղջիկը վազեց, գրկեց Արամին,
Ճչաց, համբուրեց, գուրգուրեց նրան

ГАУ РК "Национальная б-ка им. Гаспринского"

Ու վերջին ճիգով սիրածը յարին՝
– Հասմի՛կ, – շշնջաց ու մարեց անձայն…

Խենթացավ անհուն ցավից Հասմիկը,
Դաշույնն Արամի շտապով վերցրեց
Եվ մի հարվածով սիրտն իր մխրճեց,
Հետո լուռ ընկավ, գրկեց դիակը:

Հազար մահ տեսած զիվորներն անգամ
Չդիմացան և լուռ արտասվեցին,
Սիրո մեծ ուժը ցնցեց ամենքին,
Բոլորը տեղում վշտից քարացան:

Գույժն ամրոց հասավ՝ դժբախտի հորը,
Ահավոր ցավից բեկը տապալվեց,
Մազերն էր փետում տղայի մայրը,
Ու ամբողջ բերդը սգի մեջ սուզվեց:

Ու որոշեցին՝ առանց քահանա,
Անաղոթք, անիսաչ թաղել երկուսին,
Քանզի Հասմիկը եղավ ինքնասպան.
Դա հակասում էր Աստծո օրենքին:

Մոտակա ժայռից մի քար կտրեցին,
Փոքր-ինչ տաշեցին, դարձրին շիրմաքար,
Վրան ոչ անուն, ոչ թիվ գրեցին,
Որ դժբախտ սերը շուտով մոռանան:

Դարեր են անցել, իսկ պատմությունն այս
Դարձել է սիրո լեգենդ-հուշարձան,
Ու դեռ կպատմեն, որ սերն իսկական
Չի մարի երբեք, վկա է Աստված…

ГАУ РК "Национальная библиотека им. М.Горького"

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ՀԵՔԻԱԹ ՁԱՔԱՐ ԱՐՔԱՅԻ ՄԱՍԻՆ

I

Վաղո՛ւց, շա՛տ վաղուց, դարերում անցյալ
Հայոց աշխարհում կար մի տիրակալ:
Թշնամին նրա ահից դողում էր,
Իր ազգի համար աստված էր, որ կար:

Բարի էր հոգով և արդարադատ,
Ուներ իր երկրում նույնիսկ մի աղքատ,
Հզոր բանակով՝ իր սահմանը փակ,
Ջրերը՝ մաքուր, իսկ բերքը՝ առատ:

Մի խոսքով, դրախտ: Սակայն այդ երկրում
Կողպեք չէր դրվում և ոչ մի դռան,
Համաճարակներ չէին պատահում,
Եվ ապրում էին մարդիկ շատ երկար:

Սահմանից այն կողմ շատ վայրի ցեղեր՝
Քոչվոր, խաշնարած, անկրոն, տգեղ,
Շատ են ցանկացել այդ հողին տիրել,
Երկիր են մտել՝ ինչպես սև հեղեղ:

Ձգտել են տիրել այդ երկրին ուժով,
Բայց միշտ փախել են նրանք ամոթով:
Այդպիսի բանակ աշխարհը չուներ,
«Պարտություն» բառը արքան չգիտեր:

Այդ հրաշք երկրի մեծ տիրակալը
Ուներ սիրելի, խաղաղ ընտանիք.
Ձքնաղ մի տիկին՝ պալատի զարդը,
Որին սիրում էր ամբողջ Մեծ Հայքը:

Ողորմած Աստված ամուսիններին
Երեք քաջ որդի սիրով պարգևեց,
Եվս մեկ ընծա սիրասուն զույգին՝
Մի հրաշք աղջիկ վերջապես ծնվեց:

ГАУ РК "Национальная библиотека им. Н. Гаспринского"

Ամեն մի որդին մի շնորհք ուներ.
Ավագը հանգիստ ու խելացի էր,
Միջնեկը բազում լեզուներ գիտեր,
Կրտսերը ձեռքով լեռներ կշրջեր:

Դուստրն էլ տանը մորն էր միշտ օգնում,
Իսկ երբ մենակ էր՝ երգում էր անուշ:
Սոխակը նրա երգն էր ուսանում,
Սարերի ձույնն էր նուրբ ձայնից հալչում:

II

Օրերից օր արքան որոշեց
Հեռու անտառում հանգիստն անցկացնել,
Որտեղ կարող էր նաև որս անել,
Քանի որ հարուստ որս կար միշտ այնտեղ:

Բայց անվտանգ չէր անտառը այդ մութ.
Պատմում էին, թե մի խուլ անձավում
Մի չար կախարդ է թակարդներ լարում,
Միայնակ մարդկանց իր որջում փակում:

Մինչև գնալը՝ արքան ցանկացավ
Իր ընտանիքին սիրով հրաժեշտ տալ,
Բոլորի դեմքին թախիծ էր իջել,
Ինչը Զաքարին շատ զարմացրեց:

– Սիրելինե՛րս, ինչո՞ւ եք տխուր,
Ես ընդամենը որսի եմ գնում,
Եկել եմ՝ բարի ճանապարհ մաղթեք,
Ես մի քանի օր կբացակայեմ:

Բայց տղաները չէին նահանջում
Ու միաբերան նույնն էին ասում.
– Մե՛զ էլ տար քեզ հետ, շատ ենք աղաչում,
Մենք, ի՞նչ է, վա՞տ ենք նշանին խփում:

ГАУ РК "Национальная М. И. Гаспринского"

– Ո՛չ, իմ զավակներ, չեմ կարող տանել,
Դուք ավելի շատ պալատում եք պետք,
Խոստանում եմ՝ շուտ կվերադառնամ,
Անտառից եղնիկ կբերեմ ընծա:

III

Արքան խմբի հետ հասավ որսատեղ
Բաժանեց մարդկանց՝ այստեղ ու այնտեղ,
Ամեն մի որսորդ իր դարանն ընտրեց
Ու համբերատար սկսեց սպասել:

Որսաշներն ու մի քանի ծառա
Դեպ որսորդները որսին քշեցին,
Այդ պահին փոխվեց շուրջը ամեն ինչ,
Լռություն տիրեց անտառում հանկարծ:

Մթնեց անտառը գիշերվա նման,
Քամին մութ ամպեր բերեց հյուսիսից,
Անձրև ու կարկուտ տեղաց երկնքից,
Ու փոթորիկը տևեց շատ երկար:

Որսը խափանվեց. ամեն ոք հարմար
Ապաստան գտավ իր անձի համար,
Արքան էլ մտավ ինչ-որ մի անձավ,
Որպեսզի փրկվի ահավիրքից այդ:

Իսկ երբ անձրև ու կարկուտ դադարեց,
Անձավից դուրս գալ արքան շտապեց,
Բայց ճամփան փակեց ժայռի մի կտոր,
Ու մթնեց շուրջը, կորավ ամեն շող:

Օգնության կանչեց, բայց լսող չկար,
Փնտրեց ուրիշ ելք՝ բայց շուրջն էր խավար:
Նա ուսապարկից կայծքարը հանեց
Եվ գոտուց կախված սրին հարվածեց:

ГАУ РК "Меркенского им. К. Гаспринского"

Կայծերը թռան մթան մեջ չորս կողմ,
Հանեց բաճկոնը, վառեց ինչպես ջահ,
Ու առաջ գնաց որսորդն անհողդողդ՝
Սուրը ձեռքի մեջ միշտ պատրաստ պահած:

Տեսավ՝ անձավը ուրիշ ելք չունի,
Բայց ինչ-որ տեղից հոսանք կար օդի,
Որոշեց տեսնել, թե ուր կտանի.
Գուցե դեպի ելք մի ուղի գտնի:

Նա առաջ գնաց ջահի թույլ լույսով,
Մութ քարանձավից դուրս գալու հույսով.
Շատ գնաց, թե քիչ՝ ելք որոնելով,
Հեռվում մի ճրագ տեսավ առկայծող:

Այն, ինչ որ տեսավ, սաստիկ զարմացավ.
Մի ջադու պառավ նրա դեմ ելավ,
Առանց պատճառի չանչ արեց ձեռքով,
Պտտվեց տեղում՝ թուքը շաղ տալով:

– Այս ի՞նչ ես անում դու իմ անտառում,
Իմ շահած-պահած եղնի՞կն ես որսում,
Քո գլխին այնպես մի խաղ ես խաղամ,
Որ արդեն հարյուր տարի չեմ անում:

– Լսի՛ր, կլռե՞ս, թե՞ ոչ, ա՛յ պառավ,
Ասա մի տեսնեմ՝ ի՞նչ է կատարվում,
Ես երկրի տերն եմ, անունս՝ Զաքար,
Ուզածդ ի՞նչ է, շատ մի փնթփնթա:

– Դու ինձ մոտ կապրես՝ ինչքան ուզենամ,
Մինչև տասն անգամ քնեմ, վեր կենամ,
Եվ պետք է անես՝ ինչ որ կամենամ,
Թե չէ դու հավետ այստեղ կմնաս:

Զաքարը ուզեց բռնել պառավին,
Բայց սա իր շուրջը պտտվեց կրկին,

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

Դարձավ սև չղջիկ ու կախվեց պատից,
Հետո հեռացավ ու կորավ աչքից:

Նորից հայտնվեց… Զաքարին ասաց.
– Գնա՛ անձավով այնքան ժամանակ,
Մինչև չգտնես զանձերս կորած,
Որոնք իմ ժլատ քույրը գողացավ:

– Բայց որտե՞ղ փնտրեմ ես քո քրոջը,
Երբ չորսբոլորն է անթափանց խավար:
– Գնա, մինչ հասնես խարույկին դու վառ,
Հենց նրա մոտ է իմ քրոջ որջը:

Մեր արքան մնաց շվարած կանգնած,
Ուզեր, թե չուզեր՝ նա առաջ գնաց
Խավար անձավում՝ սուրը միշտ պատրաստ,
Մտքում խնդրելով, որ օգնի Աստված:

IV

Նրան մենք թողնենք խավար անձավում,
Տեսնենք՝ անտառում ի՞նչ է կատարվում:
Այստեղ արքային փնտրեցին երկար,
Սակայն ոչ մի հետք, ավա՛ղ, չգտան:

Անհաջող որսից տուն վերադարձան,
Կայծակի նման լուրը տեղ հասավ,
Իսկ երբ պալատում բոլորն իմացան,
Սկսվեց սուգ ու շիվան իսկական:

Կինը լացելով՝ հարայ էր կանչում,
Իսկ որդիները իրենց սենյակում
Իրար հետ՝ տխուր դեպքն են քննարկում,
Իրենց հոր մահին չեն էլ հավատում:

Ավագը ասաց, թե համոզված է,
Որ հայրը ողջ է, տեղն է, սակայն, նեղ

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Միջնեկը պնդեց. «Նա խավարում է»,
Կրտսերն էլ ասաց. «Քարայրի մեջ է»:

Ու որոշեցին երեք եղբայրներ,
Որ պետք է գնալ ու հորն ազատել,
Բայց պետք է գաղտնի ամեն ինչ անել,
Թե չէ մայրիկը հաստատ կարգելեր:

Առավոտ ծեգին երեք եղբայրներ
Ճանապարհ ընկան լեռները հեռու,
Քանի որ տեղը ստույգ հայտնի չէր,
Իրենց հետ վերցրին որսորդական շուն:

Նրանք միասին որսի գնացին,
Բոլորն իրար հետ հասան ժայռերին,
Բայց հենց այստեղ էլ հետքերը կորան,
Անձավի տեղը մի փլվածք տեսան:

Շունը հոտոտեց թափված քարերը,
Վնգստաց կամաց, լիզեց թաթերը:
– Պետք է ազատել քարայրի մուտքը, –
Ասաց ավագը, ցույց տալով ժայռը:

Բահ ու քլունգով շուտ գործի անցան,
Բայց հենց թվաց, թե ինչ-որ բան գտան,
Քարերը նորից շարժվեցին արագ,
Փակեցին ելքը, հետքերը կորան:

Տեսան ճար չկա, հետ եկան պալատ,
Մորը պատմեցին՝ տխուր, հուսահատ,
Մայրը որոշեց խորհուրդ հավաքել,
Իմաստուններին նա իր մոտ կանչեց:

V

Եկավ իմաստուն այրերը երկրի,
Մեկը իրերը զննեց Զաքարի

ГАУ РК "Национальная библиотека имени М. Гаспринского"

Ու ծանրակշիռ իր խոսքը ասաց՝
Դանդաղ շոյելով մորուքը ճերմակ.

– Սա վատ նշան է, սիրելիներս,
Վկա եմ բերում տարիքս, փորձս,
Մի սև հրեշն է արթնացել քնից,
Նա է փորձանքը բոլորիս գլխին:

Նա վախենում է արևի լույսից,
Եվ խավարից լոկ ուժ ստանում,
Որպեսզի փրկենք Զաքար արքային,
Պետք է խարույկներ վառել անձավում:

Եթե ուզում եք անձավը բացել՝
Բահով, քլունգով դա չի ստացվի
Այդ գործի համար շատ մեծ ուժ է պետք,
Այդ ուժը փնտրեք խորքում մեծ ծովի:

– Ասա մեզ, խնդրեմ՝ ո՞ր ծովում փնտրենք,
Այդ ծովի խորքը ինչպե՞ս մենք սուզվենք:
Ծերունին միայն հետևյալն ասաց.
– Գնացեք Սև ծով, ջրահարս բռնեք:

Իսկ տղաները ծովափ գնացին,
Վրան խփեցին մի հարմար վայրում,
Գիշեր ու ցերեկ հերթով հսկեցին.
Մեծ հրաշքի են նրանք սպասում:

Մենք տղաներին թողնենք ծովափին,
Եվ մտքով հասնենք խորքը անձավի,
Ուր մեր հերոսը, լսելով չարին,
Փնտրում է նրա գանձերը անգին:

VI

Շատ փնտրեց, թե քիչ՝ ինքը կիմանա,
Վերջապես տեսավ մի լուսե կամար,

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

Որի մյուս կողմում անանց ճահիճ կար,
Ճահճի մեջտեղում՝ կղզյակ մի հարմար։

Կղզյակի վրա կար փայտե տնակ,
Նրա չորս կողմը՝ ջահեր անհամար,
Իսկ այդ տնակում՝ բարձերին թիկնած,
Մի պառավ կին կար՝ գլխին սև լաչակ։

– Է՛յ, ո՞վ կա այդտեղ, – կանչեց Զաքարը,
Քեզ բարևում է քո ավագ քույրը,
Նա պահանջում է՝ տալ իր գանձերը,
Քանի արթուն է. չի տանում քունը։

– Ո՞վ համարձակվեց խախտել հանգիստս,
Ի՞նչ գանձ է ուզում, գժվե՞լ է քույրս,
Դե գնա՛, կորի՛ր՝ չտեսնի աչքս,
Թե չէ՝ վե՛ր կացա՝ կտեսնես ուժս։

– Դու մի բարկացիր, ո՛վ գեղեցկուհի, –
Ասաց Զաքարը, որ սիրաշահի.
– Ես գիտեմ, որ դու անչափ բարի ես,
Եվ համոզված եմ, որ ինձ չես մերժի։

– Ինձ հազար տարի ոչ ոք չի տեսել
Ու գեղեցկուհի ինձ չի անվանել,
Դու առաջինն ես ինձ մոտ հյուր եկել,
Այդ պատճառով է քո բախտը բերել։

Իմ քրոջ գանձը, իհարկե, կտամ,
Բայց ինչպե՞ս, ասա, ճահիճը անցնեմ,
Ինքդ կարող ես՝ արի, կսպասեմ,
Ուզում եմ խելքդ և ուժդ փորձել։

Զաքարը, կանգնած ճահիճի եզրին,
Մի ելք էր փնտրում՝ հասնել կղզյակին,
Իսկ նենգ պառավը՝ նստած իր թախտին,
Ուրախանում էր՝ զոհ իր արարքից։

ГАУ РК "Национальная библиотека им. К. Гаспринского"

Զաքարը գետնին մի գերան տեսավ,
Գցեց ճահճի մեջ՝ նման կամրջի,
Եվ երկար փայտով հրելով նրան,
Անվնաս հասավ պառավի շեմին:

Կախարդ պառավը տեսավ՝ ճար չկա,
Հանեց մի քսակ ու տվեց նրան:
– Տար տուր քրոջս՝ աչքը լիանա,
Բայց լավ իմացիր, նա չի գոհանա:

Զաքարը վերցրեց ծանր քսակը,
Վերադարձավ և հանձնեց քրոջը,
Սա բացեց, նայեց, համրեց եղածը,
Թռավ, պտտվեց տնակի շուրջը:

Հետո թուք ու մուր թափեց, բղավեց.
– Ասա՝ մի տեսնեմ, քեզ ո՞նց հաջողվեց,
Ինչպե՞ս քրոջս քար սիրտը փափկեց,
Ուզում ես ի՞նձ էլ նրա պես խաբել:

Բայց լավ իմացիր, ա՛յ դժբախտ էակ,
Ինձ կծառայես այնքան ժամանակ,
Մինչև որ լույսը մտնի գետնի տակ,
Հասնի տնակիս ու վառի կրակ:

Քեզ կտամ մի նոր առաջադրանք,
Թե որ կատարես, ո՛վ գերի իմ քաջ,
Էլ չես ունենա դու ոչ մի տանջանք,
Կբացեմ դուռը դեպի լույս աշխարհ:

Խավարի հզոր, մեծ տիրակալը
Ինձ նետել է այս ժայռերի խորքը,
Կախարդել է նա ու փոխել դեմքս,
Պահակ է կարգել, որ պահեմ գանձը:

Թե կարողանաս հաղթել դու նրան,
Ժայռերը այնժամ կբացվեն միայն,

ГАУ РК "Национальная библиотека им. Г.Аспринского"

Բարին կհաղթի, ու մենք դուրս կգանք,
Այս է գաղտնիքը, ուրիշ ելք չկա:

Բայց ես լավ գիտեմ, որ դու չես կարող
Հաղթել հրեշին ամենակարող,
Դրա համար էլ՝ ինձնից քեզ խորհուրդ՝
Սպասիր միայն դրսից օգնություն:

– Դու ճանապարհը ցույց տուր, թե գիտես,
Իմ բազկի ուժը դու դեռ չգիտես,
Կփորձեմ խաթրով հասնել ուզածիս,
Իսկ թե չստացվի՝ իմ Աստված ու ես:

Ասաց Զաքարը և ճամփա ընկավ՝
Դեպի անհայտը, դեպի մահ ու դավ:
Իսկ մեր մտքերը քամու հետ թռան,
Հասան լույս աշխարհ, ծովին կապուտակ:

VII

Այնտեղ Զաքարի քաջ տղաները
Վրան են խփել, լարել ցանցերը,
Գիշեր ու ցերեկ՝ հոգու մեջ հույսեր,
Թե ջրահարսին մի օր կբռնեն:

Անցան շատ օրեր ու շատ գիշերներ,
Բայց ջրահարսը չկար ու չկար,
Բռնած ձկները, որոնք անպետք են,
Հետ՝ ծովն են նետում, որ ազատ լողան:

Վերջապես մի օր վաղ լուսաբացին,
Երբ որ ցանցերը ծովից հանեցին,
Տեսածը նրանց շատ զարմացրեց.
Հրաշք աղջիկ են նրանք որսացել:

Ասել՝ աղջիկ էր, այնքան էլ ճիշտ չէ,
Կիսով չափ աղջիկ, կիսով չափ ձուկ էր,

ГАУ РК "Национальная им. Г. Гаспринского"

Ու դա դեռ քիչ է՝ նա խոսել գիտեր,
Ձեռքերը պարզած, նրանց կաղաչեր.

– Բա՛ց թողեք դուք ինձ, ջահե՛լ իշխաններ,
Ինչ որ ուզում եք՝ ես կկատարեմ,
Կսուզվեմ, ծովից կհանեմ գանձեր,
Միայն բա՛ց թողեք, թե չէ կմեռնեմ:

Երբ տղաները քիչ սթափվեցին,
Այդ ջրահարսին դեպքը պատմեցին,
Որ իրենց պետք է ուժը ջրածին,
Որը կհաղթի հզոր ժայռերին:

– Օ՛, ձեր պահանջը խիստ դժվարին է,
Նույնիսկ ինձ համար անհնարին է,
Դա խորքերում է ու մոտ դժոխքին,
Բայց ես կխնդրեմ ծերուկ կրիային:

Միայն նա է, որ այնտեղ կհասնի
Ու ձեր ուզածը ծովից կհանի,
Բայց զգույշ եղեք ու պահեք գաղտնի,
Մինչև ձեր ուզած տեղը չհասնի:

Եվ տղաները լսեցին նրան,
Հանեցին ցանցից ծովի թագուհուն,
Ու երբ հայտնվեց ծովում կապուտակ
Ասաց. «Սպասե՛ք յոթ գիշեր անքուն»:

Անցավ սպասման յոթ օր ու գիշեր,
Տղերքը դարձան արդեն անհամբեր,
Նրանց թվաց, թե իրենց խաբել է,
Իզուր են նրան շուտ հավատացել:

Բայց յոթ օր հետո, գիշերվա կեսին,
Ինչ-որ խուլ ձայներ ծովից լսվեցին,
Այն ալեկոծվեց ու խփեց ափին
Ու ծովից հանեց հսկա կրիային:

ГАУ РК "Национальная им. М. Гаспринского"

Նա մեջքին ուներ երկաթե ճամպրուկ
Ու նրա մեջ էլ, ինչպես ձմերուկ,
Սև գույն ունեցող ահագին մի բան,
Ամուր կապված էր պարաններով այն:

Վախով, զարմանքով հանեցին բեռը,
Կրիան վերջապես հանեց գլուխը,
Ասաց, թե ինչպես պայթեցնել ժայռը,
Տվեց գործելու գաղտնագրերը:

Առած թանկագին ավարը փնտրած
Ու արագավազ ձիերը հեծած,
Ուղևորվեցին նրանք դեպի տուն,
Ուր թախծոտ մայրն էր նրանց սպասում:

VIII

Իսկ այնտեղ՝ հսկա լեռների խորքում
Արքա Զաքարը գնում է, գնում,
Վերջապես հսկա մի շենք նա տեսավ,
Բայց իր տեսածից բան չհասկացավ:

Ասել՝ ամրոց է՝ նման չէ բնավ,
Ոչ էլ շքեղ է պալատի նման,
Հսկա մի ժայռ է երկաթյա դռնով,
Իսկ դռան առաջ՝ հրեշներ անթիվ:

Բազմագլխանի, կանգնած կողք-կողքի,
Շարվել են նրանք պահակների պես,
Հսկա պոչերով՝ նման օձերի,
Իսկ գլուխները՝ անճոռնի ու մեծ:

Զաքարը ուզեց կանչել տիրոջը,
Բայց հանկարծ եկավ մեծ, բրդոտ արջը,
Ու խոսեց, ինչպես կխոսեր մարդը՝
Թաթով քորելով դունչն ու ականջը.

ГАУ РК "Национальная б-ка им. И. Гаспринского"

– Լսի՛ր, մարդ եղբայր, ինձ պես դժբախտին,
Որ չարժանանաս դու էլ իմ բախտին,
Մի կանչիր նրան, այդ սև հրեշին,
Թե չէ կարթնանա, ու վա՛յ քո օրին:

Ես էլ քեզ նման կտրիճ եմ եղել,
Բայց արի ու տես՝ ինչ օրն եմ ընկել,
Հենց որ քեզ տեսնի՝ չի թողնի խոսես,
Կասի. «Ինչո՞ւ ես քունս խանգարել»:

Հենց որ դու ասես՝ եկել եմ՝ կռվեմ,
Նա հրեշներին կհանի քո դեմ,
Դու հրեշներին կհաղթես՝ գիտեմ,
Նա կախարդներին կուղարկի քո դեմ:

Նրանք չեն կռվում ազնիվ ու արդար,
Այլ կախարդում են անեծքներով չար,
Ու դու կդառնաս ինչ-որ մի գազան,
Ինչպես որ ինքս այս օրին հասա:

Դու պետք է անես այնպիսի մի բան,
Որ եթե դևը քնից արթնանա,
Չար կախարդները քնած էլ մնան՝
Ինչքան էլ գոռա, հրամաններ տա:

– Դե, որ այդքանը գիտես իսկապես,
Հապա ինչո՞ւ ես այդ օրը ընկել:
– Դե, որովհետև ինքս էլ քեզ պես
Լավ խորհուրդներին ականջ չեմ դրել:

Այդ կախարդները քնած են հիմա:
Մի քիչ որ գնաս՝ այնտեղ աղբյուր կա,
Այն քնաբեր է, նմանը չկա,
Դիր դու նրանց մոտ մի մեծ ջրաման:

ГАУ РК "Медиатека им. И.Г. Гаспринского"

Քնից կարթնանան, կխմեն թասից,
Հարբածի նման կքնեն նորից,
Իսկ մնացածը կախված է քեզնից,
Թե որ հաղթեցիր՝ դուրս կգաս ժայռից:

Արքա Զաքարը նրա ասածն արեց,
Հետո ամրոցի դեմ-դիմաց կանգնած,
Ինչքան ուժ ուներ՝ տիրոջը կանչեց.
– Էյ, քնկոտ տանտե՛ր, հերիք է քնես:

Այդ հզոր կանչը արձագանք տվեց,
Ու հսկա դուռը ճռռոցով բացվեց,
Այնտեղից հսկա մի դև դուրս եկավ,
Տեսնելով մարդուն՝ անչափ կատաղեց:

– Ո՞վ ես, հողեղեն դրսի աշխարհի,
Ինչո՞ւ ես եկել անպատեհ ժամի,
Հենց որ փչեցի՝ շունչդ կմարի,
Քանի դեռ ուշ չէ, աչքիցս կորիր:

– Ես քեզ մոտ եկա բարի մտքերով,
Իսկ դու արթնացել ու սպառնում ես:
Եկա խնդրելու, ոչ թե կռվելու,
Բայց թե ուզում ես՝ փորձենք ուժերս:

Դևը կատաղեց, փչեց ինչպես բուք,
Փոշին բարձրացավ, պատեց ամենուր,
Թռան օդի մեջ քար, ավազ ու մուր,
Բայց Զաքար արքն մնաց իր տեղում:

Երբ որ վերջապես դադարեց փչել,
Կարծեց՝ խեղճ մարդը կորել է անհետ.
Բայց նոր էր փոշու շղարշը ցրվել,
Տեսավ, որ մարդը տեղից չի շարժվել:

ГАУ РК "Национальная ИГ аспринского"

Վերցրեց մոտ ընկած ահռելի մի քար,
Նետեց նոր ուժով՝ ինչքան ձեռքում կար,
Ու կպած տեղից կայծեր դուրս թռան,
Թվաց, թե մարդուց հետք էլ չմնաց:

Բայց նայեց, տեսավ, որ բան դուրս չեկավ,
Պահակ վիշապին տվեց հրաման,
Սա տեղից ելավ, պոչը թափ տալով,
Յոթ երախներից կրակ նետելով:

Հսկա մողեսի հզոր ճանկերով
Նա ուզեց բռնել անվախ արքային,
Բայց գլուխները Զաքարի սրով
Թռան մարմնից՝ յոթն էլ մի զարկով:

Դևը տեսավ, որ ուրիշ ճար չկա,
Նա կախարդներին կանչեց, որ մոտ գան,
Բայց նրանք, հարբած ու փռված գետնին,
Տեղներից նույնիսկ շարժվել չուզեցին:

Նորից ու նորից մռնչաց չարը,
Բայց երբ որ զգաց՝ մոտիկ է մահը,
Մինչև Զաքարը կհաներ սուրը,
Ներս սողաց բույնն իր ու փակեց դուռը:

IX

Մի պահ մենք թողնենք իշխանին մենակ,
Ու եղբայրների ջոկին միանանք,
Որոնք բեռն իրենց ձիերին բարձած,
Վերջապես սարի անձավին հասան:

Քանի որ արդեն գիշերն էր իջնում,
Իջան ձիերից մոտիկ բացատում
Ու որոշեցին քնել վրանում,
Որ վաղ առավոտ լինեն անձավում:

ГАУ РК "Медиацентр им. И.Г. Аспринского"

Ննջեցին նրանք, երբ հաղթեց քունը,
Տեսան մի երազ՝ երեքն էլ նույնը,
Նրանց մոտ եկավ այն նույն ծերուկը,
Որ օգնեց՝ գտնել փրկարար ռումբը:

Խոսեց, շոյելով միրուքը ճերմակ.
– Ապրե՛ք, որ գտաք հզոր ականը,
Բայց այն ավերիչ ուժ ունի այնքան,
Որ ավերակներ կսփռի շուրջը:

Այո, կբացվի ելքը անձավի,
Սակայն ձեր հայրը նույնպես կտուժի,
Հզոր, ավերիչ ալիքը նրա
Բոլորիդ, անշուշտ, կմատնի մահվան:

Միայն մի ելք կա այս դրությունից,
Այն պետք է միայն անձավում պայթի,
Հենց չարի բնում, որ նրան ջնջի,
Այնժամ այդ չարին բարին կհաղթի:

Այդ նպատակով՝ սարը բարձրացեք,
Մեծ լեռան խորքը տանող ացք գտեք,
Ականը զգույշ ներքև իջեցրեք
Ու դնի դռան առաջ այն դրեք:

Ձեր հայրն այնտեղ է՝ ողջ է, անվնաս,
Բայց օգնություն է հարկավոր նրան,
Դևը մտել է խառնարանը մեծ,
Ոչ մեկի սուրը չի հասնի այնտեղ:

Ականը դրեք այդ դռան առաջ,
Ավազով ծածկեք, որ լինի անշարժ,
Շտապ բարձրացեք պարանով կախած,
Որքան կարող եք, հեռացեք արագ:

ГАУ РК "Национальная библиотека им. К. Гаспринского"

Դևը կտեսնի, որ աղմուկ չկա,
Դուռը կբացի, նորից դուրս կգա,
Հենց ոտքը դնի ականի վրա,
Այդ հսկա լեռը վրան փուլ կգա:

Տեսած երազից սաստիկ զարմացած,
Քնից արթնացան տղաները մեր,
Իրար պատմեցին երազը տեսած,
Ու որոշեցին, թե ինչպես վարվել:

X

Առավոտ ծեգին սարը բարձրացան,
Նրա գագաթին մի նեղ անցք գտան
Ու որոշեցին՝ երկուսը մնան,
Մեկը իջնի ցած՝ ականը վերցրած:

Երկար ու ամուր մի պարան գտան,
Փոքր եղբորը ամուր կապեցին,
Վերջինս վերցրեց բեռը թանկագին,
Ականը գրկած, զգույշ ցած իջավ:

Փոքրիկ, բայց անվախ մեր Աժդահակը
Վերջապես հասավ հորի հատակը,
Տեսավ, որ հայրը նստած է քարին,
Ձեռքի ափերը հենած կզակին:

– Հայրիկ, – կանչեց նա և առաջ գնաց…
Հայրը տղային նայեց զարմացած,
Որդին ամեն ինչ իր հորը պատմեց
Եվ բացատրեց, թե ինչպես վարվել:

Ձաքարը զգույշ ականը վերցրեց,
Տարավ ու դրեց դևի դռան տակ:
Հետո շատ արագ վերև բարձրացան,
Որպեսզի հեռու վտանգից փախչեն:

ГАУ РК "Медиатека им. И. Гаспринского"

Երբ բավականին հեռացան սարից,
Գետինը ցնցվեց հզոր պայթյունից,
Փոշին ու ծուխը բարձրացան վերև,
Ծածկեցին իսկույն երկինք ու արև:

Իսկ երբ շղարշն այդ վերջապես ցրվեց,
Շատ հետաքրքիր տեսարան բացվեց,
Սարը պայթյունից հետո չքացել
Եվ անծայրածիր մի դաշտ էր դարձել:

Մեր հերոսները՝ ուրախ, երջանիկ
Տուն վերադարձան բարի լուրերով,
Ամբողջ երկիրը շունչ քաշեց հանգիստ
Եվ շարունակեց ապրել անխռով:

Չարը պարտվեց, և հաղթեց բարին,
Ես էլ ավարտեմ հեքիաթն իմ երկար,
Երեք մեծ խնձոր ընկավ երկնքից.
Բոլորդ էլ գիտեք՝ ում բաժին հասավ:

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

Կա մի հին հեքիաթ՝ հեռու անցյալից,
Որը լսել եմ իմ նախնիներից,
Ինչ մոռացել եմ՝ ինքս եմ հնարել.
Այժմ ուզում եմ այն ձեզ էլ պատմել:

Երկու որբ եղբայր՝ աղքատ ու անտեր,
Մի տուն ունեին՝ անգույք, կիսավեր,
Մեկ էլ՝ ծերացած մի անուժ տատիկ,
Որ նրանց գլխին ավելորդ բեռ էր:

Եղած-չեղածը մի նիհար այծ էր,
Որի տվածը մի բաժակ կաթ էր,
Այդ միակ այծը ամեն օր հերթով
Հանդ էին տանում, որ նա չսատկեր:

ГАУ РК "Национальная библиотека им. Гаспринского"

Այդ եղբայրներից մեծն էր խելացի,
Մյուսը, ցավոք, խելառի մեկն էր,
Հակառակվում էր, ինչ ասում էին,
Խեղճ եղբոր հոգին լրիվ հանում էր:

Օրերից մի օր խելառ եղբայրը
Արոտի տարավ մինուճար այծը,
Իսկ մեծ եղբայրը՝ տատին խնամում,
Լուռ կատարում էր իրենց տան գործը:

Փոքր եղբայրը՝ Հայկազ անունով,
Մահակը ձեռքին, անկապ սուլելով,
Այծը հանդ տարավ՝ տանձի ծառի մոտ,
Շատ ուրախացավ՝ վերև նայելով:

Վայրի տանձենու բերքը հասել էր,
Կաթուկը փորձեց՝ այն շատ համեղ էր,
Շտապ մագլցեց նա ծառի ճյուղին
Ու սկսեց խրատել մինուճար այծին.

– Լսի՛ր, պոզավո՛ր, տանձը թափ կտամ.
Եթե ուտելիս տեսնեմ քեզ հանկարծ,
Վիզդ կկտրեմ, չփորձես անգամ,
Ես իմ ասածը կանեմ անպայման:

Ասաց ու արեց. ցատկեց ճյուղից ճյուղ,
Ու պտուղները՝ ինչպես հորդ կարկուտ,
Թափվեցին գետնի կանաչ խոտերին,
Դե, անգետ այծն էլ համտեսեց մի կուշտ:

Հայկազը ծառից իսկույն ցատկեց ցած,
Այդ տեսարանից փրփրեց, կատաղեց:
– Այդ ի՞նչ ես անում, անլեզու հայվան, –
Ասաց, գրպանից դանակը հանեց…

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

Խեղճ այծը՝ վերջին տանձը բերանում,
Հայկազը արդեն կաշին էր քերթում.
– Քեզ զգուշացրի, որ տանձը չուտես,
Դու ես մեղավոր, ես ի՞նչ մեղք ունեմ:

Մորթազերծ այծը շալակը գցած,
Թափ տված տանձը տոպրակում դրած,
Տուն վերադարձավ հարուստ ավարով՝
Իր արած գործից հպարտ, գոհացած:

Ավագ եղբայրը եղածը տեսավ,
Բայց դե ի՞նչ աներ, ճարը չգտավ,
Ստիպված փոքրի հետ նոր պայման կնքեց,
Որ ինչ-որ բանով դա օգնի գոնե:

– Լսի՛ր, ա՛յ անխելք, մենք քո պատճառով
Ուտելիք չունենք, չենք ապրի տանձով,
Լավ է՝ մեր պառավ տատիկին նայես,
Ես էլ հանդ գնամ, հնձով զբաղվեմ:

– Շա՛տ լավ, մեծ եղբայր, քո ցավը տանեմ,
Բա քո ասածը ո՞նց չկատարեմ,
Դու հանգիստ գնա, քո գործին նայիր,
Կտեսնես, թե ո՛նց կնայեմ տատին:

Առած մանգաղը՝ մեծը դաշտ գնաց,
Հայկազն էլ հիվանդ տատի մոտ մնաց:
– Տատի ջան, կուզե՞ս ջուր դնեմ տաք-տաք,
Իսկ դու տաշտ մտիր ու հանվիր կամաց:

Հենց ջուրը եռաց վառվող կրակին,
Հայկազը կանչեց իր ծեր տատիկին.
– Հիմա ես անուշ ջուր լցնեմ վրադ,
Իսկ դու օճառը քսիր մարմնիդ:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Դե, մեր Հայկազի ասածն արած է,
Տեսավ, որ ջուրը լավ եռացած է,
Իսկույն վերցրեց ու առանց խառնուրդի
Դույլը շուռ տվեց գլխին պառավի:

Խեղճը մի ծպտուն անգամ չհանեց,
Ինչպես նստել էր, այնպես էլ խաշվեց,
Իսկ մեր Հայկազը՝ շատ գոհ արածից,
Սրբիչը բերեց ու տվեց տատին:

Բայց տեսավ՝ տատից ձեն ու ձուն չկա,
Մոտեցավ, նայեց խեղճին կուչ եկած,
Բերանը՝ լայն բաց, աչքերը՝ չռած,
Կարծեց՝ տատիկը ժպտում է ուրախ:

Հայկազը տեսավ ու շատ զարմացավ
Ու մեծ եղբորը սև լուրը տարավ,
Թե. «Բա չես ասի՝ մեր տատին նստած,
Այնքան ծիծաղեց, ծիծաղից մեռավ»:

Ավագ եղբայրը շտապ տուն եկավ,
Ինչ էր կատարվել՝ իր աչքով տեսավ:
– Ա՛յ գժի մեկը, այս ի՞նչ ես արել,
Ես էլ չեմ կարող, դե՛, հերիք եղավ:

Դե, ինչպես հարկն է, հարազատ տատին
Մեծ պապի կողքին հողին հանձնեցին,
Ու մեծ եղբայրը ասաց կրտսերին,
Որ էլ չի ուզում ապրել միասին:

– Արի՛ բաժանվենք առանց վեճ ու ծեծ,
Վերցրո՛ւ այս տնից՝ ինչ ինքդ կուզես,
Գնա՛, քեզ համար ապրի՛ր առանձին,
Գուցե քո խելքով մեկին կգտնես:

ГАУ РК "Медиацентр им. И.Г. Сапринского"

Իսկ Հայկազը մեր ընկավ դես ու դեն,
Սակայն մի կարգին բան չընկավ աչքին,
Մաշված կարպետը իր համար ընտրեց,
Իսկ մնացածը եղբորը թողեց:

Իսկ մեծ եղբայրը հին տունը ծախեց,
Եղած գումարը գրպանը դրեց,
Այդպես երկուսով լուռ ճամփա ընկան,
Ճամփան անծանոթ մի երկիր բերեց:

Հասած-չհասած՝ անձրև սկսվեց,
Կարկուտն էլ հետը հա՛ վրա տվեց,
Ո՛չ ծառ կար, ո՛չ թուփ պատսպարվելու,
Եղբայրներն շտապ ելք էին փնտրում:

Հայկազը իսկույն կարպետը հանեց,
Մի տեղ կուչ եկավ ու վրան գցեց,
Երբ մեծ եղբայրը խնդրեց, որ տեղ տա,
Հայկազը, իբրև, նրան չլսեց:

Իսկ երբ անձրևը շուտով դադարեց,
Հայկազը ելավ կարպետի տակից,
Տեսավ եղբորը՝ փռված ցեխի մեջ,
Անշունչ՝ փայտացած անձրևից, ցրտից:

Հայկազը տեսավ՝ եղբայրը «չկա»,
Նրա գրպանից հանեց ինչ որ կար,
Հետո փաթաթեց դեռ թաց կարպետում
Ու կանչեց, ինչքան ուժ կար կոկորդում.

– Կարպե՛տ եմ ծախում, էժա՛ն եմ ծախում,
Ով որ ուզում է, նվեր եմ անում…
Որտեղից որտեղ հենց այդ կողմերով
Մի քարավան էր անցնում անխռով:

ГАУ РК "Медиацентр им. К. Гаспринского"

Այդ ձայնի վրա՝ նառ ուղտին նստած,
Ծեր ուղտապանը մնաց զարմացած,
Թե մեն ու մենակ այդ անապատում,
Այդ անմարդ վայրում ի՞նչ են վաճառում:

Սակայն կանգնեցին ու մոտ գնացին,
Տեսան՝ մեր գիժը նստել է քարին,
Նախշուն կարպետը՝ փաթաթած երկար,
Գնորդ է կանչում՝ ձեռքը ականջին:

Մարդիկ մոտ եկան ու նրան հարցրին.
– Քանի՞ ոսկի ես ուզում կարպետին:
– Քանիսը որ տաք՝ ես դեմ չեմ լինի,
Ես էլ չեմ կարող տանել իմ ուսին:

– Մենք այդ կարպետին հինգ ոսկի կտանք,
Միայն թե բացիր՝ նախշերը տեսնենք,
Դու քո ոսկին առ ու՝ բարի ճամփա,
Մենք էլ մեր ճամփով գնանք, տեղ հասնենք:

Լռեց ու ոչինչ չասաց Հայկազը,
Իսկ գնորդն այստեղ փոքր-ինչ կասկածեց,
Ուզեց իր աչքով տեսնել նախշերը,
Ու փաթաթածը նա լրիվ բացեց:

Հանկարծ մեռելին նա հայտնաբերեց,
Տեսավ, զարմանքից աչքերը չռեց:
– Մարդու դիակ է մեջը փաթաթված:
Գոռաց, բոլորին ձեռքով մոտ կանչեց:

Հավաքված մարդիկ մեռելը տեսան,
Մեր գիժ Հայկազին ոտքի տակ առան,
Սաղ տեղ չթողին, այնքան ծեծեցին,
Բայց տեսան՝ գիժ է, հետո կանգ առան:

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

Իսկ երբ Հայկազը քիչ ուշքի եկավ,
Իր ծեծողներին նա հարցմունք արավ.
– Բա նման դեպքում ի՞նչ պիտի ասել:
– Ա՛յ հիմար, կասեն՝ եղբայրս մեռավ:

Ճամփից քիչ հեռու մի փոս փորեցին
Ու մեծ եղբորը հողին հանձնեցին,
Հետո խղճալով անտուն հիմարին՝
Թույլ տվին, որ նա միանա խմբին:

Գնացին նրանք, մինչև որ մթնեց,
Ու քարավանը ստիպված կանգնեց,
Մի քիչ ուտելիք Հայկազին տվին,
Նա կերավ, հետո պառկեց ու քնեց:

Իսկ մյուս օրը արևածագին
Մի խումբ ավազակ վրա տվեցին
Սրով, թվանքով, հարայ-հրոցով,
Նա, ով չփախավ, սրի քաշեցին:

Հայկազը տեսավ, որ բանը բուրդ է,
Մտավ մի մեծ պարկ, որ իրեն փրկի,
Մի ավազակ էլ կարծեց՝ ավար է,
Բարձեց մի ուղտի, որ իր հետ տանի:

Երբ որ թալանը լրիվ վեջացավ,
Եղած ավարը իրենցը դարձավ,
Ավազակների խումբը շտապով
Հեռացավ ուրախ գոռում-գոչյունով:

Երեկոյան դեմ հասան մի անձավ,
Եղած ավարը այնտեղ թաքցրին,
Բայց արդեն մութ էր՝ պարկը չտեսան,
Մնաց աննկատ, դրսում թողեցին:

ГАУ РК "Национальная библиотека им. К. Гаспринского"

Գիշերվա կեսին, երբ շրջապատում
Ամեն ինչ լռեց, Հայկազն սկսեց
Զգույշ իր պարկը ներսից շոշափել,
Հետո դանակով այն հանգիստ կտրեց:

Դուրս գալով պարկից՝ Հայկազը տեսավ,
Որ այն պարկի մեջ, ուր ինքը մտավ,
Փող ու ոսկի էր կիսով չափ լցված,
Ծոցն ու գրպանը լցրեց ու փախավ:

Հասավ մի խոր ձոր, պահ մտավ այնտեղ,
Երկար սպասեց, մինչև որ մթնեց,
Հետո երբ զգաց, որ շատ է սոված,
Դուրս եկավ ձորից, ուտելիք փնտրեց:

Շատ գնաց, թե քիչ, հեռվում լույս տեսավ,
Դեռ վախը սրտում՝ կամաց մոտեցավ,
Տեսավ մի խրճիթ ու դուռը ծեծեց,
Եվ ներսից մեկը կամացուկ հարցրեց.

– Ո՞վ ես, ձայն հանիր՝ շուտ, ի՞նչ ես ուզում,
Ամենքի համար դուռը չեն բացում:
Հայկազը լացով աղաչեց, խնդրեց.
– Ներս թողեք մտնեմ, սառել եմ ցրտից:

Դուռը ճռռալով վերջապես բացվեց,
Պարզվեց՝ տանտերը մի մարդ էր տարեց,
Որը տեսնելով մեր խեղճ Հայկազին,
Շատ մեղքը եկավ, տուն հրավիրեց:

– Նստի՛ր, ա՛յ ախպեր, սոված կլինես,
Հետո քո գլխի եկածը կասես:
Հայկազը վերջին դեպքերը պատմեց,
Տանտերն էլ լսեց ու նրան խղճաց:

ГАУ РК "Национальная библиотека им. К. Ласпринского"

Տեսավ, որ հյուրի ծալը պակաս է,
Բայց նրա բախտը միշտ անպակաս է,
Մինչև առավոտ էլ բան չխոսեց,
Իսկ առավոտյան վերջապես ճամփեց:

Շատ գնաց, թե քիչ՝ ինքը կիմանար,
Վերջապես մի մեծ քաղաք նա հասավ,
Մեծ բնակավայր չէր տեսել երբեք,
Արմանք-զարմանքը «խելոքին» պատեց:

Բազմաթիվ մարդիկ ու բարձր տներ,
Ամեն բարիքով լցված խանութներ,
Մեկ էլ մի զինվոր՝ ինչ-որ թուղթ ձեռքին,
Դեպի պալատ էր կանչում ամենքին:

Մաղկանց հոսանքին տրված՝ նա գնաց,
Վերջապես հասավ մի հրապարակ,
Մեկը բարձրաձայն տխուր լուր գուժեց,
Թե. «Թագավորը» այն աշխարհ գնաց:

Հանկարծ բոլորը իրարով անցան,
Սև հագած կանայք բարձր լաց եղան,
Իսկ տղամարդիկ՝ մռայլ ու տխուր,
Շրջում էին, ծխամորճ վառած:

Ճիշտը որ ասենք, Հայկազը հիմար
Մեռնողի համար այնքան չէր տխրում,
Նա շուրջբոլորն էր նայում զարմացած,
Քանզի այդքան մարդ չէր տեսել կյանքում:

Բայց տես, թե հետո էլ ինչ կատարվեց,
Բախտն այս անգամ էլ Հայկազին ժպտաց,
Այդ երկրում մի հին օրենք կար գրված,
Որը Հայկազին տիրակալ դարձրեց:

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

Ժառանգաբար չեն դառնում թագավոր
Այս երկրում: Կա մի օրենք անսովոր.
Նա է ընտրվում, ով առաջինն է
Ոտք դնում քաղաք և շատ հարուստ է:

Երբ հարցմունք արին, թե ով կլինի,
Ու հերթը հասավ «խելոք» Հայկազին,
Հացրին, թե արդյոք ինչքան փող ունի,
Դե նա էլ հանեց թալանած ոսկին:

Երբ ընտրող մարդիկ այդ ոսկին տեսան,
Նրան շտապով մեծ պալատ տարան,
Անկախ նրանից՝ հիմար, թե խելոք,
Գլխին թագ դրին ու ծնկի եկան:

Հայկազը տեսավ, որ շրջապատում
Իրենից բացի խելոք մարդ չկա,
Միմոսին ընտրեց իրեն օգնական,
Նոր օրենքներ էր նրա հետ գրում:

Նա հրամայեց, որ բռնեն-բերեն
Ավազակներին ու խմբապետին,
(Որ ժամանակին գերեցին իրեն),
Ասելով տեղը, թե ինչպես գտնեն:

Երբ հրամանը շուտ կատարեցին,
Այդ ավազակին զոռով բռնեցին,
Արքայի կամոք շղթան հանեցին
Ու գահի առջև ծնկի բերեցին:

Սա չոքեց գետնին ու ներում խնդրեց,
Արքան իմաստուն ոչ միայն ներեց,
Այլ ծաղրածուի խորհուրդը լսեց,
Շատ զարմանալի հրաման տվեց.

ГАУ РК "Медиацентр им. Ивлампиева"

– Ես քեզ չեմ կախի ու չեմ բանտարկի,
Մի նոր պաշտոնի ես քեզ կդնեմ՝
Ներքին գործերի նախարար երկրի,
Բայց մի պայմանով՝ ինչ հիմա կասեմ:

Ինչքան ավազակ կա հիմա երկրում,
Կբռնես մեկ-մեկ, որ նստեն բանտում,
Ինչո՞ւ թալանել ու սրի քաշել,
Երբ մարդիկ կտան՝ ինչ մենք ենք ուզում:

Մեծ ճամփաների մեծ ավազակը
Չէր կարող պահել վախն ու զարմանքը,
Ուրախանալու փոխարեն խնդրեց,
Որ լավ կլինի՝ վիզը թոկ գցեն:

– Ա՛խր, տե՛ր արքա, լավ է ինձ կախես,
Քան թե ինձ այդպես դաժան պատիժ տաս,
Չէ՞ որ բոլորն էլ իմ ընկերներն են,
Թե որ բռնեցին՝ ինձ կանեն մաս-մաս:

– Ես քեզ տալիս եմ մեծ պաշտոն ու զորք,
Ծովափին՝ շքեղ, մեծ առանձնատուն.
Իսկ եթե մերժես՝ մաս-մաս կանեմ քե՛զ՝
Ինչպես կատաղած շանն են սատկացնում:

Ուզեր, թե չուզեր հին ավազակը,
Ընտրեց պաշտոնը ու դարձավ նա պետ:
Օգնական դարձան խմբապետերը,
Էլ ո՞վ կարող էր ճամփեքը կտրել:

Թե խելոք էլ կար՝ լռեց ստիպված,
Երբ որ օրենքում հենց դա է գրված՝
Թալանել հարկով, այլ ոչ թե ուժով,
Ինչ որ կար երկրում՝ իրենց էր տրված:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Դե, ի՞նչ կլինի երկրի վիճակը,
Եթե մեծ արքան լինի Հայկազը:
Տեսավ՝ թալանի էլ բան չմնաց,
Հարևան երկիր ուղարկեց զորքը:

– Գնացեք, բերեք՝ ինչ ունեն-չունեն,
Զոհվածին՝ մեղալ երկաթե տվեք,
Իսկ ապրողները թող երգեն, պարեն,
Բոլոր երգերն էլ իմ մասին լինեն:

Այսպես շատ երկար ապրեց Հայկազը,
Մինչև որ եկավ իր մահվան ժամը,
Մարդիկ այդ ծանր քնից արթնացան,
Իրենց սխալը այնժամ հասկացան:

Իսկ իմ հեքիաթը հասավ ավարտին,
Երեք հատ խնձոր երկնքից ընկավ,
Մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին,
Երրորդն էլ խելառ Հայկազին հասավ:

ГАУ РК "Медиацентр им. И.Гасринского"

ԱՐՁԱԿ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ГАУ РК "Медицентр им. И. Гаспринского"

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Արցախցիները սրամիտ, զվարճախոս, կատակասեր ու հնարամիտ ժողովուրդ են, այլ կերպ ասած՝ «Բառի համար գրպան չեն մտնում»:

Բացառություն չեն կազմում իմ ծննդավայր Մոխրաթաղի բնակիչները՝ հատկապես մարդկանց մի խումբ, որոնց կատակների, սրամիտ պատմությունների մասին ամբողջ շրջանն էր խոսում: Այդ կատակների մի մասը տպագրվել է «Աղբյուրները լեռներից են ծնվում» գրքում: Տվյալ ժողովածուում ուզում եմ շարունակել սկսածս գործը՝ իմ ընթերցողին ներկայացնել արցախյան երգիծական մանրապատումների մի շարք, որն իմ կարծիքով, արժանի է ուշադրության:

Հեղինակ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԱՂՈՆ

Աշնանային մի երեկո մի խումբ ջահելներ՝ պարապությունից ձանձրացած, որոշում են գողության գնալ հարևան Մեծ շեն գյուղի բոստանները: Նրանց մեջ էր նաև հանրահայտ զվարճախոս Վաղոն, որը նոր էր մտել կուսակցական կազմակերպության շարքերը:

Գողությունն անհաջող է անցնում, միջադեպի բոլոր մասնակիցները բացահայտվում և վարչական տույժի են ենթարկվում, իսկ Վաղոյի հարցը՝ որպես կուսակցական կազմակերպության անդամի, դրվում է կազմակերպության վարչության ժողովում: Այն հարցին, թե ինչո՞ւ է գնացել գողության, նա պատասխանում է. «Ընկե՛ր կոմունիստներ, ճիշտ է, իմ արարքը քննադատելի է, սակայն մյուս կողմից էլ ես հաշվի եմ առել այն հանգամանքը, որ կեսգիշերին վեց-յոթ մարդու ես չէի կարող թույլ տալ՝ ինքնագլուխ բոստան մտնել և իրենց սրտի ուզածն անել՝ ցանկապատ քանդել, ձմերուկն ու վարունգն անտեղի ոտքի տակ տրորել: Էլ չեմ ասում այն մասին, որ եթե որևէ գործ է արվում մի քանի հոգով, ապա նրացից մեկը պարտադիր կոմունիստ պետք է լինի, որ հսկի մյուսներին: Կարծում եմ, դուք չեք ժխտում իմ այս կարծիքը»:

Վաղոն նկատողություն է ստանում, բայց եղածը կոծկելու համար գործին ընթացք չեն տալիս՝ հաշվի առնելով վերևից եկած հրահանգը:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

ԽՆՁՈՐԸ

Սիմոնը հովիվ էր: Ամռանը սարերում էր լինում, ձմռանը՝ չոլերում, տանը համարյա չէր լինում:

Տարիներ անց, երբ Սիմոնն արդեն մեծ տղա էր, ծնողները նրան ամուսնացնում են համագյուղացի մի աղջկա հետ:

Հարսանիքից հետո Սիմոնը նորից սար է գնում: Նրա ավագ հովիվ-ընկերը՝ Սիմոնին շնորհավորելուց հետո նկատում է, որ վերջինս այնքան էլ նորապսակի տրամադրություն չունի:

– Ա՛յ տղա, ուրախանալու փոխարեն, ինչո՞ւ ես դեմքդ թթվեցրել: Հը՞, կարմիր խնձորը համտես արեցի՞ր,– կատակում է ընկերը:

– Հա՛, համտես արեցի, բայց պարզվեց, որ մինչ այդ ոշերը քո ասած խնձորն արդեն համատես էին արել, լավ էլ կտցել էին,– տխուր պատասխանում է Սիմոնը:

Քիչ լռելուց հետո ընկերը փորձում է նրան մխիթարել:

– Բան չկա, ա՛յ տղա, ես դրանից վատն էլ եմ տեսել: Երբ ամուսնացա, պարզվեց, որ իմ փայ խնձորը ծառից որդնած եմ պոկել, դեռ մի կենդանի որդ էլ մեջը:

– Վա՛,– զարմանում է Սիմոնը,– հետո ի՞նչ արեցիր:

– Ի՞նչ պիտի անեի: Մնացած խնձորը կերա, իսկ այդ որդն էլ հիմա դպրոցում է սովորում: Մերոնք ստիպեցին լռել, որ չխայտառակվենք գյուղում, համ էլ կինս վատը դուրս չեկավ՝ եփող, թափող, մեծին հարգող: Այնպես որ, ոշի կտցածն ի՞նչ է, որ տխրել ես: Եթե դուշը կտցել է, ուրեմն խնձորը քաղցր է եղել: Չոբան տղա ես, ի՞նչ էիր կարծում՝ պոկած խնձորդ երկաթի՞ց է, որ ուրիշները չկարողանան կտցել, – Սիմոնին հանգստացնում է ընկերը:

ԻՄ ՊԱՊԸ

Իմ պապին ես չեմ տեսել: Նա մահացել է իմ ծնվելուց մեկ տարի առաջ: Բայց նրա մասին հետաքրքիր շատ պատմություններ եմ լսել: Նա գյուղի միակ գրագետ մարդն էր այն ժամանակներում՝ Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդող և հաջորդող տարիներին: Նա բարձրագույն իրավաբանական կրթություն էր ստացել Թիֆլիսում: Մարդկանց խնդրանքով դիմումներ էր գրում ցարական իշխանություններին: Համագյուղացիները պատմում էին, որ համարյա բոլոր դիմումներին դրական պատասխան էր տրվում, քանզի շատ գրագետ և ճիշտ էին դրանք ձևակերպված:

ГАУК "Медицинский ун. им. Гарегина Нжде"

Միևնույն ժամանակ նա մեր տարածաշրջանի անտառային տընտեսության պետն էր:

Ես մի անգամ նրա թողած փաստաթղթերի մի մեծ փաթեթ եմ գտել ձեղնահարկի մութ ու նեղ անկյուններից մեկում: Դրանք բազմաթիվ կնիքներով ու ստորագրություններով հաստատված փաստաթղթեր էին, հավանաբար՝ շատ կարևոր:

Ես այն ժամանակ շատ փոքր էի և չէի հասկանում, թե դրանք ինչ փաստաթղթեր էին: Բոլորը տվեցի մորս, ասելով, որ գտել եմ: Դա մոտ քառասունութ թվականին էր, երբ ես վեց տարեկան էի: Ստալինյան ռեժիմը դեռ գործում էր:

Ցավոք, մայրս դրանք ոչնչացրեց՝ վախենալով, որ դրանց մեջ կարող են այնպիսի փաստաթղթեր լինել, որոնք եթե ընկնեն իշխանությունների ձեռքը, ապա հետևանքները կարող են վատ լինել: Բայց որքան ես հիշում եմ, այնտեղ ոչ մի վտանգավոր փաստաթուղթ չկար. դրանք միայն տեղեկություններ էին անտառային տնտեսության սահմանների մասին: Սակայն մորս վախն այնքան էր մեծ, որ նա շտապել էր այրել դրանք:

Միայն տարիներ հետո նա պատմեց, որ բոլշևիկները բազմիցս հարցաքննել էին արդեն ծեր իմ պապին, խուզարկել էին տան բոլոր անկյունները, որպեսզի որևէ հանցանշան գտնեն՝ նրան մեղադրանք ներկայացնելու համար: Սակայն ոչինչ չէին գտել՝ ոչ ոսկի, որն, իհարկե, չէր էլ կարող լինել ոչ հարուստ ծառայողի տանը, ոչ էլ որևէ հակաբոլշևիկյան փաստաթուղթ, որը հեռատես պապս հավանաբար վաղուց ոչնչացրել էր: Նա առաջիններից մեկն է եղել, որ որդիներին խորհուրդ է տվել՝ դիմում գրել և ընդունվել կոլխոզի շարքերը: «Էս խմորը շատ ջուր է քաշելու, միակ փրկությունը դա է», – ասել է նա:

Ես չեմ ուզում խորանալ այս պատմության մեջ, բայց քանի որ խոսքը երգիծանքի և հումորի մասին է, մի բան պատմեմ պապիս՝ Դավիթ Տեր-Պետրոսյանի մասին: Նա շատ սրամիտ մարդ է եղել, և նրա իմաստուն կատակներից մի քանիսը մնացել են համագյուղացիների հիշողության մեջ: Ահա դրանցից մեկը:

Երբ հեղափոխությունը հասավ մեր գյուղ, բնակչության մեծամասնությունը չէր հասկանում, թե դա ինչ բան է: Եվ ահա մի առավոտ, երբ պապս իր ոչխարները տանում, հանձնում է հովիվ Խաչատուրին՝ արոտի տանելու համար, վերջինս պապիս հարցնում է.

ГАУ РК "Центр им. А. Гасприндского"

– Ա՛յ Դավիթ, դու կարդացած մարդ ես, կարո՞ղ ես ինձ բացատրել, թե այդ հեղափոխությունն ինչ է և ինչ կարելի է սպասել նոր իշխանություններից:

Պապս մի փոքր մտածում է և պատասխանում.

– Քեզ ինչպե՞ս բացատրեմ, որ հասկանաս: Այս ոչխարի հոտը տեսնո՞ւմ ես. համարիր, որ դա ժողովուրդն է: Իսկ հիմա պատկերացրու, որ քո տեղը նոր հովիվ են նշանակել: Սա էլ, որպեսզի մի նոր բան արած լինի, հոտի առջևից ոչ թե ների ու առողջ ոչխարներին է տանում, այլ կաղ ու կուղերին, լղարներին, որ լավ խոտը նրանք ուտեն և ուր ցանկանան, այնտեղ էլ հոտն իրենց հետևից տանեն: Հասկացա՞ր, Խաչատուր:

– Ախր էդ ո՞նց կլինի, Դավիթ ջան, բա կաղ ու կուղերը հոտը կարո՞ղ են հեռու տանել: Համ էլ, մեկ է, կամաց-կամաց ուժեղներն առաջ կընկնեն…

– Տեսնում եմ՝ հասկացար, Խաչատուր, բայց իմ ասածը մոռացիր, ուրիշներին էլ չպատմես, թե չէ Սիբիրում ոչխար չեն պահում,– ասում է պապս:

* * *

Խորհրդային իշխանության առաջին տարիներին կոմունիստները փակում են գյուղի եկեղեցին, իսկ տերտերին, որը պապիս եղբայրն էր, ստիպում են հրաժարվել իր կարգից ու մորուքը խուզել: Նա գալիս է եղբոր մոտ՝ խորհրդի: Պապս էլ խորհուրդ է տալիս եղբորը. «Ա՛յ մարդ, ողջ աշխարհն է շուռ եկել, իսկ դու քո մորուքի մասին ես մտածում: Քո հավատը մազի՞ մեջ է, թե՞ գլխումդ: Մազը որ այդքան լավ բան լիներ, մարմնի վրա ամեն տեղ չէր աճի»:

* * *

Տատս ու պապս իրար հետ շատ սիրով են ապրել, բայց դժբախտաբար տատս շուտ է մահացել, և որոշ ժամանակ անց պապս հարևան գյուղից մի այրի կին է բերել տուն: Շատ չանցած, երբ պապս հիվանդացել է, այդ կինը թողել է ու հեռացել: Այն հարցին, թե նա ինչու է հեռացել, պապս պատասխանել է. «Եթե երկրորդ կինը քեզնից ջահել է, նման է վայրի կատվի. ամանում եղած սերուցքը կուտի, ամանն էլ շուռ կտա, կփշրի, հետո կփախչի անտառ»:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

ՄԻ ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ

Ռաֆիկը հովիվ էր. օրերով հանդերում էր լինում, տանը՝ հազվադեպ: Ծնողները որոշում են նրան ամուսնացնել համագյուղացի մի համեստ և, մեղմ ասած, ոչ այնքան գեղեցիկ աղջկա հետ: Վերջինս արդեն վաղուց հասունացել էր, իսկ ուզողներ չկայի՛ն ու չկայի՛ն: Ռաֆիկն այդ աղջկան համարյա չէր տեսել, բայց ծնողներին դա չխանգարեց, որ ձմռան մի երեկո գնան աղջկան ուզելու: Դե, այն տարիներին գյուղում էլեկտրականություն չկար, աղջկա տան ճրագի լույսի տակ էլ հազիվ էին մեկմեկու դեմքը տեսնում: Միգուցե, աղջկա հայրը ճրագի լույսը մի քիչ նվազեցրել էր, որպեսզի աղջկա դեմքը, որն առանց այդ էլ կիսով չափ ծածկված էր, կիսամութում լավ չերևա: Մի խոսքով, աղջկա ու ծնողների համաձայնությունն առնելով՝ որոշում են հարսանիքի օրը: Աշնան մի օր էլ զուռնա-դհոլով հարսանիք են անում ու հարսին բերում են տուն:

Առավոտյան Ռաֆիկը, կյանքում միգուցե առաջին անգամ, հասկանալի պատճառներով տեղից ուշ է վեր կենում և անկողնում նոր միայն տեսնում է նորահարսի դեմքը: Սկսում է ծնողներին մեղադրել, որ իրեն խաբել ու տգեղ աղջկա հետ են ամուսնացրել: Ինչ անում են, չեն անում, Ռաֆիկին չեն կարողանում համոզել, որ տեր կանգնի կնոջը: Գյուղում չխայտառակվելու համար՝ Ռաֆիկի ծնողները խնդրում են պապին, որ նա համոզի տղային՝ հաշտվելու իր բախտի հետ: Պապս չի մերժում. իր մոտ է կանչում Ռաֆիկին և հարցնում.

– Էսի՛ր, Ռաֆի՛կ, դու ինձ ասա, սովորաբար առավոտյան ե՞րբ ես վեր կենում, իսկ երեկոյան՝ տուն գալիս:

– Դե, առավոտյան՝ դեռ լույսը չբացված, երեկոյան՝ երբ մթնում է,– պատասխանում է հովիվը:

– Ասա ձերոնց դեմքը ցերեկով չես տեսնում, էլի՛…

– Այո, այդպես է:

– Եթե այդպես է, էլ կնոջդ գեղեցկությունն ինչի՞դ է պետք: Ցերեկը լույսով նրան չես տեսնում, իսկ գիշերը բոլոր կանայք էլ միատեսակ են, էլ գեղեցիկն ու տգեղը ո՞րն է…

– Է՛, ասում ես, էլի՛: Ասենք թե, ես ցերեկը չեմ տեսնում, իսկ գյուղացիք էլ չե՞ն տեսնում: Չե՞ն ասի՝ Ռաֆիկը կո՞ւյր էր, որ այդքան գեղեցիկ աղջիկներին թողած՝ գնաց դրան ուզեց:

ГАУ РК "Издательский дом "Крымский"

– Ա՛յ տղա, խելքդ գլուխդ հավաքիր, մի քիչ մտածիր. եթե կինդ գեղեցիկ լինի, ուրիշների աչքը միշտ վրան կլինի: Այ տեսնո՞ւմ ես, բեկի տղան ամբողջ օրը պարապ-սարապ թափառում է, հենց գեղեցիկ հարս է տեսնում, հետևից է ընկնում: Եթե ուզածին չի հասնում, նրա ամուսնուն ծանոթի միջոցով ցարի բանակ է քշել տալիս, իսկ հետո, վաղ թե ուշ, իր ուզածին հասնում է: Բացի այդ, Ռաֆի՛կ ջան, մի երկու տարուց հետո երեխա կբերի, ու դեմքն էլ կդառնա բոլոր կանանց նման:

Ռաֆիկը լսում է իմաստուն խորհուրդը, վերջապես համոզվում ու հաշտվում է կնոջ հետ:

* * *

Մի անգամ պապս տեսնում է, որ համագյուղացի Սիմոնը՝ էշին նստած, նոր տրեխներ ու շորեր հագած, ճանապարհ ընկած գնում է:

– Այդ ո՞ւր ես գնում, Սիմո՛ն: Ինձ թվում է, թե հեռու բարեկամի տուն հարսանիքի են հրավիրել,– հարցնում է նա:

– Չէ՛, Դավիթ ջան, Շուշի եմ գնում: Երեկ այնտեղից մարդ էր եկել, ասում էր, որ այս երկու օրն այնտեղ էշերի վազքի մրցույթ է լինելու: Ում էշը հաղթի, շատ մեծ պարգև են տալու: Դե ես էլ մտածեցի, որ իմ էշը գյուղում ամենաողջաղն է, ձիու նման արագ է վազում, գնամ, գուցե առաջին տեղ գրավեմ, պարգևի փողով էլ առևտուր կանեմ ու տուն կգամ:

– Ա՛յ մարդ, այստեղից Շուշի երկու օրվա ճամփա է, այդ անասունը մեղք չէ՞: Լավ չէ՞ր լինի, որ դու մենակ գնայիր, էշը ինչի՞դ է պետք,– խորհուրդ է տալիս պապս:

Ասում են՝ Սիմոնը շատ է վիրավորվում պապիցս, բայց փոշմանում ու հետ է դառնում ճամփից:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԼԵՌՆԵՐԻՑ ԵՆ ԾՆՎՈՒՄ

Նվիրում եմ կնոջս՝ Աքսենյային, որն իմ անցած կյանքի ճանապարհին միակ հավատարիմ ընկերս է եղել, իմ երջանիկ ու դառն օրերի կիսողը:

Ես փառք եմ տալիս Աստծուն, որ իրականացավ մանկությանս օրերի երազանքը՝ ինձնից հետո թողնելու իմ համեստ ստեղծագործությունները, այն հույսով, որ դրանք երբևիցե կգնահատվեն ըստ արժանվույն՝ գոնե իմ հայրենի բնօրրանում՝ Արցախում, որն ինձ հետ է ընդմիշտ, և որի հետ կապված եմ հավերժական սիրով:

Հեղինակ

ГАУК "МЕЖДУНАРОДНЫЙ ЦЕНТР Н. ГАСПРИНСКОГО"

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այն, ինչ պիտի ընթերցեք, սիրելի՛ իմ ընթերցողներ, նպատակ չունի պատմելու իմ կենսագրությունը, թեև գրվածքս հաճախ զուգակցվում է բոլոր այն իրադարձություններին, որոնք այս կամ այն կերպ կապված են իմ ապրած կյանքի ճանապարհի հետ: Դրանք իմ հիշողությունների շղթայի միացման օղակներն են կազմում և ընթանալու են միասին:

Հիրավի, չգիտեմ՝ այն ինչի մասին պիտի պատմեմ, կուններնա՞ արդյոք շատ թե քիչ գրական արժեք այն բոլոր ընթերցողների համար, ովքեր կուզենան կարդալ մի ամբողջ սերնդի կյանքի բաց թողնված էջերը, կարդալ ա՛յն մարդկանց մասին, որոնք ո՛չ առասպելական հերոսներ են, ո՛չ էլ ժամանակակից նշանավոր դեմքեր, որոնց մասին շատ է գրվում, որոնք շատ են մեծարվում, այլ իմանալ նրանց մասին, որոնց ուսերին էր այդ ժամանակահատվածի ծանր բեռը:

Պատմությունս սկսվում է հետպատերազմյան ժամանակներից և շարունակվում մինչև Արցախի ազատագրական պայքարը, նրա հաղթանակն ու ցավալի կորուստները: Դուք իրազեկ կդառնաք այն բոլոր դեպքերին, որոնց ականատեսն ու մասնակիցն եմ եղել ես, ինձ հետ կվերապրեք այդ տարիների ուրախություններն ու դառնությունները, կընկալեք առանձին մարդկանց հումորն ու սրախոսությունները, որոնց պարզության մեջ հաճախ խոր իմաստ կա: Մի խոսքով՝ սա պատմություն է հասարակ մարդկանց կյանքի մասին:

Իմ պատմությունն սկսվում է իմ ծննդավայրից՝ մի գյուղից, որն իրավամբ կարելի է համարել այդ ժամանակի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գյուղի տիպական օրինակ: Իհարկե, կային և առաջավոր գյուղեր, բայց դրանք ամեն մի շրջանում մեկ-երկուսն էին, որոնց ղեկավարներին պարգևատրում էին զանազան շքանշաններով: Բայց դրանք մատների վրա կարելի էր հաշվել և հարկավոր էին մարզի ու Ադրբեջանի ղեկավարներին՝ վերադասների աչքին թոզ փչելու համար: Իսկ հիմնականում, բոլոր գյուղերի ու գյուղացիների ապրելակերպը նույնն էր, և այդ մասին դուք կիմանաք գրքի առաջին մասում:

Հետո մենք կանցնենք մի ճանապարհ, որը կտանի դեպի երջանիկ ուսանողական տարիները՝ մինչև Ստեփանակերտ, և ինձ հետ իրազեկ կդառնաք հայոց պատմության ամենանշանակալի էջերից մեկին, նրա սկզբին ու ընթացքին, այն բոլոր իրադարձություններին,

ГАУ РК "Национальная библиотека им. А.С. Пушкина"

որոնք տեղի ունեցան 1988-ից մինչև 1992 թվականի վերջը, երբ ստիպված թողեցինք մեր սիրելի հայրենիքը և հասանք Ղրիմ՝ Սիմֆերոպոլ:

Կաշխատեմ չձանձրացնել ձեզ, իմ սիրելի՛ ընթերցողներ, այն հույսով, որ դուք կլինեք իմ ամենաանաչառ քննադատն ու հովանավորը: Դե՛, ուրեմն, բարի՛ գալուստ դեպի անցյալ…

ԳԼՈՒԽ Ա

ՄՈԽՐԱԹԱՂ

Մոխրաթաղ գյուղն Արցախի հին գյուղերից մեկն է հայոց պատմական Խաչենի մելիքությունում, ներկայումս՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան:

Նախկինում գյուղը եղել է ներկայիս գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու, Ինը մաս եկեղեցու շրջակայքում: Այն կառուցվել է 1881 թվականին՝ ավելի վաղ կառուցված եկեղեցու հիմքերի վրա: Դա են վկայում եկեղեցու շրջապատի պարիսպների ու ճգնախցերի հետքերը, ինչպես նաև՝ նրա մոտ գտնվող գերեզմանոցի խաչքարերը, որոնք բազմաթիվ են, ու նրանց վրայի հին հայերենով փորագրված գրառումները վկայում են, որ այս հողերը անհիշելի ժամանակներից են հայկական եղել: Ոչ հեռու, դեպի հյուսիս՝ Խաչ խրատ մատուռի ավերակներն են, Տավարավանքը, ինչպես նաև մելիք Իսրայելի պալատը՝ կառուցված 1771 թվականին, որի պատերը դեռ կանգուն էին՝ պատված մոշի ու մասրենու թփերով: Վերջին ժամանակներում այն օգտագործվում էր որպես անասնագոմ:

Պատմագիրների կողմից դեռ շատ գաղտնիքներ չեն լուսաբանված, սակայն հուսով եմ, որ անկախությունից հետո կսկսվի դրանց ուսումնասիրությունը: Վերջին անգամ եկեղեցին տեսել եմ 1992 թվականի գարնանը, երբ թշնամու արձակած հրթիռը քանդել էր տանիքը, և քարերը թափվել էին ներս: Վերջին անգամ համբուրեցի եկեղեցու վիրավոր խաչը՝ հույս չունենալով, որ երբևիցե նորից կտեսնեմ այն:

Նոր Մոխրաթաղն ինչ-ինչ պատճառներով տեղափոխվել է դաշտերին ու այգիներին մոտ: Անհայտ է, թե գյուղն ինչու է կրում Մոխրաթաղ տխուր անունը: Տարեց գյուղացիների մի մասը պնդում է, թե Մոխրաթաղ է անվանվել, որովհետև մի քանի անգամ հրդեհվել է թշնամիների կողմից և մոխրի վերածվել, իսկ մյուսների կարծիքով՝

ГАУ "Институт истории НАН Р.Т. Гадринского"

գյուղի անունը կապված է թոնիրներից և վառարաններից հանված մոխրի հետ, որը նախկինում շաղախվում էր, ու նրանով ծածկում էին տների տափակ կտուրները՝ անձրևից պաշտպանվելու համար: Այդ պատճառով էլ դրսից եկողները կատակով գյուղն անվանել են Մոխրաթաղ: Շատ անգամ են փորձել փոխել գյուղի անունը, հատկապես՝ ջահելները: Նույնիսկ ժողովներ են գումարվել, բայց գյուղի անունը ինչպես եղել է Մոխրաթաղ, այդպես էլ մնացել է:

Գյուղի կենտրոնում է գտնվում նրա ամենահին կառույցը՝ 1883 թվականից կանգուն եկեղեցին: Դրսից ոչ այնքան գրավիչ, բայց ներսից հոյակապ ամրակուռ կամարներով, խաչաքանդակներով ու խորաններով մի գեղեցիկ կառույց է, որը սակայն շատ ուրիշների նման իր նպատակին չի ծառայել, այլ օգտագործվել է որպես պահեստ, իսկ հետո՝ ակումբ, մինչև նոր ակումբի կառուցումը:

Գեղեցիկ է իմ հայրենի գյուղը՝ թաղված մրգատու այգիների մեջ: Մի կողմից Մռավ ու Քաչալ սարերն են՝ ծածկված թավ անտառներով, որոնք հասնում են մինչև գյուղի ծայրամասերը: Դեպի արևելք Մուղանի տափաստանն է, որը ձգվում է մինչև հորիզոն, ուր պարզկա օրերին փայլում են Կովկասյան լեռնաշղթայի ձյունոտ գագաթները:

Անկրկնելի գեղեցիկ է գյուղը՝ առանձնապես գարնանային առավոտներին, երբ արևն սկսում է բարձրանալ հորիզոնից: Նրա շողերը նախ՝ Մռավի դեռևս չհալված ձյունոտ գագաթներն են շիկնեցնում, հետո, ինչպես վարագույր՝ մութը սրբելով իջնում են ցած, մինչև հասնում են Դվլիոողի լեռների գագաթները: Այնուհետև, սահելով Դերունց քերծի լանջերով, վարդագույն են ներկում գյուղի դիմացի Վարդոտ կոչվող խաղողի այգիները, որոնց այգեբաժան մասրենու և վայրի վարդերի բույրը, Ջոլոոտի ու Քյահրիզի այգիների խնձորենիների ու տանձենիների, սալորենիների, բալենիների բույրի հետ խառնված, տարածվում է գյուղի վրա:

Գյուղի աջ ու ձախ կողմերում, մի քանի կիլոմետրի վրա Հոռաթաղ, Մեծ շեն, Կուսապատ, Մաղավուզ գյուղերն են՝ իրենց հիասքանչ բնությամբ, ու Մարտակերտ շրջկենտրոնը, որն ասես վերջակետ է դնում շրջանի լեռնային մասին:

Գյուղի բնակչությունը կազմված էր տասնյակից ավելի համայնքներից կամ, ինչպես իրենք էին անվանում՝ ազգերից՝ Դերունց, Տուպունց, Ավագանց, Ջրջառանց, Յաղուբանց և այլն: Այդ համայնքներն այս կամ այն կերպ սերտ կապեր ունեին միմյանց հետ: Այնպես որ՝ ամբողջ գյուղը մի մեծ ընտանիք էր. միասին աշխատում

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

էին, հարսանիք անում, կռվում ու հաշտվում, բամբասում, բայց նեղն ընկած տեղը՝ մոռանում ամեն մի անախորժություն և ձեռք էին մեկնում միմյանց:

Ինչպես հայկական մյուս գյուղերը, մերն էլ մի ընդհանուր ընտանիք էր, որտեղ մարդիկ դարերով հազար ու մի փորձություններով անցել ու մերվել էին իրար, այլապես չէին դիմանա բազմաթիվ թշնամական արշավանքներին:

Գյուղից քիչ հեռու՝ Հինգ շեն կոչվող գյուղատեղերն են, որոնցից մնացել է լոկ հին գերեզմանոցը՝ իր կիսաթաղ խաչքարերով, որոնք թաղվել են մացառուտների ու մոշու թփերի մեջ: Բնությունը, կարծես տեսնելով մարդկանց աններելի անտարբերությունը, ինքն էր պաշտպանում մեր նախնիների հիշատակը: Այստեղ խաչքարերն անտառամեջ բացատներում ամենուր են՝ հսկա, դարավոր ընկուզենիների տակ, որոնք, թեև ճղակոտոր ու բերք տալուց հոգնած, բայց շարունակում են ապրել ու դիմանալ անհիշելի ժամանակներից: Նախկին բերրի այգիների տեղում՝ վայրի տանձի ու խնձորի ծառերն են և հատապտուղներից ծանրացած թփերը:

Մենք՝ պատանի բնասերներս, շատ էինք շրջում ոչ միայն այդտեղ, այլև մեր գյուղը շրջապատող շատ ուրիշ պատմական հուշարձաններով՝ Երեք մանկունք, Դաղիվանք, Խաթրավանք, Սուրբ Աստվածածին, այցելում էինք մեր մյուս սրբավայրերը՝ աշխատելով ճանաչել դրանք: Մենք գրի էինք առնում նրանց տապանաքարերի ու պատերի վրայի փորագրված հայատառ արձանագրությունները. պետք է ասել՝ շատ դժվարությամբ, որովհետև դրանք փորագրված էին գրաբարով, իսկ մեզ ոչ ոք չէր սովորեցրել մեր այդ հին հայերենը: Մեր գրառումներն ու գտած հին իրերը տալիս էինք դպրոցի տնօրենին, որն էլ հանձնում էր դրանք շրջանի ու մարզի թանգարաններին:

Կուզեի նշել մեր ջոկատի անդամների անունները, քանի որ նրանցից շատերի կյանքն ընդհատվեց մանկության ու պատանեկության տարիներին, զոհվեցին Արցախյան պատերազմի ժամանակ, իսկ մյուսների հետ այլևս չհանդիպեցի հետագայում: Ահա նրանք՝ Ջեյմս, Սլավիկ, Համայակ, Էդիկ, Վալերի, Համլետ, Գաստելլո ու էլի շատերը:

Պատերազմի նախօրեին գյուղն ուներ մոտ երեք հարյուր ծուխ, միջնակարգ դպրոց, մշակույթի օջախներ, վարչական շենքեր և այլն: Մի խոսքով, ժամանակակից զարգացող մի գյուղ էր: Ցավոք, շատ տներ քանդվեցին ու այրվեցին պատերազմի ժամանակ, նրանց հետ՝ նաև իմ հայրական տունը…

ГАУ РА "Медиацентр Института Истории"

Այդ մասին հետո, իսկ այժմ վերադառնանք 1949 թվականի սեպտեմբերի մեկը, որից սկսվեց իմ գիտակցական կյանքը՝ առաջին անգամ դպրոց հաճախելով:

Այսօրվա պես հիշո՛ւմ եմ այդ օրը…

ԴՊՐՈՑ

Մորս՝ Աստղիկի կարած չթե գույնզգույն կտորներից նախշած պայուսակը՝ թոբրակը ճիտս գցած, որի մեջ մեծ եղբորս հին այբբենարանն էր, մի-երկու տետր, ապակյա թանաքաման, որի մեջ կապույտ մատիտի քերվածքից պատրաստած թանաքն էր և «լապատկա» անվանված գրչածայրով գրիչ ու մի-երկու մատիտ:

Եվ այսպես՝ գիտությունը նվաճելու իմ հաստատ որոշմամբ, պարուսինե նոր ոտնամանները հագած, ուրախ ու զվարթ մտա առաջին դասարան:

Գյուղի դպրոցը միհարկանի երկար շինություն էր՝ հին եկեղեցու պատին կպած, բաղկացած յոթ դասասենյակներից և ուսուցչանոցից: Դպրոցի տանիքը կղմինդրածածկ էր, որի ջարդվածքներից անձրևաջուրը կաթկթում էր մեր նստարանների վրա, իսկ ձմռանը դասարանները տաքացվում էին թիթեղյա վառարաններով. վառելիքն էլ աշակերտների կողմից կուտակված փայտն էր, որը խիստ հսկողությամբ պահվում էր դպրոցի ետնամասում գտնվող փայտանոցում՝ հսկա կողպեքն էլ վրան, իսկ նրա տիրակալն էլ հավաքարար Իսկուհին էր, առանց որի տաշեղ անգամ դուրս չէր հանվում:

Դպրոցը յոթնամյա էր, որն ավարտելուց հետո աշակերտներն ուսումը շարունակում էին հարևան գյուղերի դպրոցներում:

Ամեն օր, վաղ առավոտյան, անձրև լիներ, թե արև կամ սառնամանիք, երեխաները կտրում-անցնում էին չորս-հինգ կիլոմետր ճանապարհ, որն աշնանն ու ձմռանը սաստիկ ցեխոտ էր: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երեխաներից շատերը, մեղմ ասած, վատ էին հագնված, հասկանալի կլինի այն ժամանակվա աշակերտների վիճակը: Բայց նշեմ, որ դա քիչ էր ազդում նրանց վրա, ովքեր իսկապես ուզում էին շարունակել ուսումը, իսկ մի մասն էլ ճանապարհը ծռում ու խաղում էր՝ մինչև մյուսների վերադարձը, և դպրոցից նրանց հետ վերադառնում էր տուն: Այդ երեխաներից շատերը չէին վերջացնում ուսումը, իսկ հաջողակները, ավարտելով դպրոցն, ընդունվում էին բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական հաստատություններ, ու այդ տղաները արձա-

ГАУ РСМ "Национальная библиотека им. Г.Г. Гастрагского"

կուրդների ժամանակ հպարտ՝ «հոլիդեյ» անդրավարտիքներով ու քիթը սուր ոտնամաններով, զարմացնում էին գյուղացիներին: Իսկ աղջիկներն էլ իրենց կարճ, հազիվ մինչև ծնկները հասնող «յուբկաներով» քայլում էին գյուղամիջյան միակ փոշոտ ճանապարհով, խուսափելով ոտքի տակ ընկնող քարերից, որ չփշրեն բարձրակրունկ կոշիկների «նալած» սուր ծայրերը: Շրջկենտրոն գնալու համար, երբ ավտոբուս չէր լինում, թառ բարձրանալ ցանկացող հավերի նման պտտվում էին բեռնատար մեքենայի շուրջը, մինչև որ թափքում կանգնած տղաները, նրանց ձեռքերից բռնելով, տիկնիկի նման վեր էին բարձրացնում և նույն ձևով էլ իջեցնում:

Կասեի, որ ծնողներն այնքան էլ ուշադրություն չէին դարձնում մեր ուսուցման վրա, այն պատճառով, որ օր ու գիշեր աշխատում էին կոլխոզի դաշտերում և երեկոյան, ծանր աշխատանքից հոգնած, տուն էին վերադառնում: Մանավանդ կանայք, որոնք այդ բոլորից հետո տան հոգսերը պիտի քաշեին: Այնպես որ, մեր դասերը կամ տնային առաջադրանքները ոչ ոք չէր ստուգում. կամ եթե ստուգեին էլ՝ ի՛նչ պիտի անեին: Մեր ժամանակ նրանց հիմնական մասն անգրագետ կամ կիսագրագետ էր՝ բացառությամբ ուսուցիչների ու մի քանի ղեկավարների. նրանց մեջ էլ կային մարդիկ, որոնք չորրորդ դասարանի կրթություն ունեին, բայց ընտրվում էին ղեկավար պաշտոնների՝ ուրիշ թեկնածու չլինելու պատճառով: Գրագետները փախչում էին քաղաք, ավելի ճիշտ՝ այնտեղից չէին վերադառնում բուհերն ավարտելուց հետո: Այնպես որ, աշակերտներից շատերի ծնողները նրանց առաջադիմության մասին իմանում էին միայն ծնողական ժողովների ժամանակ, որից հետո երեխաներից մի քանիսը, ժողովի արդյունքից ելնելով, հարված էին ստանում վզակոթերին՝ գումարած ծնողների թոնթորանքը: Դրանով էլ՝ վատ սովորելու համար նրանց պատիժը վերջանում էր: Ես, պարծենալ չլինի ասելը, լավ էի սովորում, միայն այդ «անտեր» թվաբանությունն ինձ համար մինչև վերջ էլ մնաց, մեղմ ասած, անցանկալի առարկա: Էդ չոր հաշիվներն ինձ համար պատիժ էին, բայց մնացած առարկաներից «գերազանց» էի ստանում:

Շատ էի սիրում գրքեր կարդալ: Մինչև հիմա էլ հիշում եմ իմ առաջին գիրքը, որն ընթերցել եմ. դա Ղազարոս Աղայանի «Ծիտիկի խինդը» գրքույկն էր: Ասեմ՝ այդ ժամանակ ուսուցիչները շատ մեծ հարգանք էին վայելում գյուղում: Մենք՝ աշակերտներս, եթե նույնիսկ դասերից հետո կամ հանգստի օրերին խաղալիս նրանց տեսնում էինք փողոցում, աշխատում էինք, մեղմ ասած, խուսափել

ГАУ "Национальная библиотека РА им. Г. Гарегина Нждехского"

այդ հանդիպումից: Հաստատ գիտեինք, որ հաջորդ օրը մենք պիտի առաջինը գրատախտակի մոտ կանչվեինք, և վայը եկել էր, թե դասը սովորած չլինեինք. լավագույն դեպքում կքաշեր ականջդ կամ էլ քանոնով կհասցներ վզակոթիդ: Իսկ ուսուցչուհիները, չգիտես ինչու, սիրում էին կսմթել թուշդ. այդ պատժից ես էլ էի ստանում՝ դասը երբեմն խանգարելու համար: Իհարկե, ոչ բոլորն էին այդպես վարվում. կային և բարի, կիրթ ուսուցիչներ, օրինակ՝ ընկեր Եղիազարյանը, որի՝ տնօրեն դառնալուց հետո, շատ բան փոխվեց մեր դպրոցում:

Ուսուցիչների անխղճության մասին կուզեի մի օրինակ բերել: Ցուրտ ձմեռ էր: Աշակերտներից մեկն առաջին դասից ուշացել էր: Մտավ դասարան՝ ցրտից կապտած ձեռքերը թևերի տակ սեղմած, թաց տրեխներով, որոնց տրխատանների (կապիչների) վրա սառած ձյունը, կամաց-կամաց հալվելով, կաթկթում էր հատակին: Ոտքերն իրար քսելով՝ մնացել էր կանգնած՝ աչքը դասարանի կենտրոնում ճարճատող տաք վառարանին, և սպասում էր ուսուցչի թույլտվությանը: Վերջապես ուսուցիչը, շրջվելով նրա կողմը, ոտից գլուխ չափելով, հարցնում է.

– Ինչո՞ւ ես ուշացել դասից:

Աշակերտը, ցրտից կապտած, մի կերպ պատասխանում է.

– Այծերը տարել էի չոբանին հանձնելու, ներողություն եմ խնդրում, թո՛ւյլ տվեք նստեմ:

– Մինչև դասդ անգի՛ր չարտասանես՝ չե՛ս նստելու:

Աշակերտն ստիպված՝ կակազելով սկսում է.

Այսքան ու-ուրախ կյանքը մ-մեր
ԸնկերՍտալինն է տ-տվել,
Կդառնամ ես պ-պիոներ
Ու արժանի առ-առավել…

– Լա՛վ, տեղդ թա՛զնիր, մյուս անգամ տե՛ս՝ չուշանաս,– թույլատրում է ուսուցիչը քթի տակ՝ ասես լավություն անելով:

Մի օր էլ, ավելի ճիշտ՝ 1953 թվականի մարտի 5-ին, առաջին դասը նոր սկսած, հանկարծ դասարան ներխուժեց հավաքարար Արմենուհին և հեկեկալով գուժեց ընկեր Ստալինի մահը, որի մասին քիչ առաջ հայտարարվել էր ռադիոյով: Դա ամպրոպի նման մի բան էր բոլորի համար, ու ոչ ոք չէր հավատում դրան: Բոլորն

ГАУ РК "Медиацентр имени Тельмана"

սկսեցին լաց լինել, բայց, թարսի պես, իմ լացը չէր գալիս և, անհարմար զգալով, գլուխս դրեցի նստարանին ու մատով թուքս քսեցի աչքերիս՝ ուրիշներից չտարբերվելու համար: Բոլորը դուրս թափվեցին դպրոցի բակ, որտեղ ելույթ ունեցավ դպրոցի տնօրենը՝ կրկնելով Լևիտանի հաղորդումը: Նա վշտով ցավակցեց մեզ և հայտարարեց, որ երկրում սուգ է հայտարարված՝ ընկեր Ստալինի մահվան կապակցությամբ, ուստի երկու օր դասեր չեն լինելու: Մենք խոր վշտով գնացինք տուն: Մայրս, ինձ տեսնելով, խիստ զարմացած հարցրեց, թե ի՞նչ է պատահել, հո հիվանդ չե՞մ: Ես տխուր պատմեցի եղածը: Նա սկզբում խիստ զարմացավ, բայց քիչ հետո սկսեց թոնթորալ.

– Դե՛ ջհաննամը թե մեռել է, քարը փորին թող լինի, դրա համար ինչո՞ւ ես տխրում: Նրա գյոռը շները քաշ-քաշ անեն, նրանից, վնասից բացի, ի՛նչ լավ բան ենք տեսել, որ հիմա տխրեմ: Դրանցից առաջինը՝ Լենին կոչվածը, հորս մուլքը խլեց ու տարավ, իրեն էլ կուլակ սարքեց ու Սիբիր քշեց, սա էլ հորդ ու հորեղբորդ տարավ կռիվ, գլուխները կերավ: Նալո՛գը տուր, ձո՛ւն տուր, բո՛ւրդը տուր: Էլ ո՛ր մեկն ասեմ: Ի՞նչ լավ օր ենք քաշել նրանցից, որ տխրեմ: Համ էլ, արխային մնա, նա գնաց՝ մի ուրիշը կգա, ընդեղ օչերե՛դ ա:

Ես նրա վրա բարկացա.

– Ա՛յ մեր, կամա՛ց խոսիր, լսող կլինի, ամո՛թ է,– իսկ նա թե.

– Ավելի լավ է, գնա մեր ուլերը բեր: Ա՛յ, եթե գայլերը նրանց կերան, դա կլինի մեր դժբախտությունը: Հա՛, չմոռանա՛ս շորերդ փոխել, նոր գնալ:

Մի որոշ ժամանակից հետո լուր տարածվեց, թե Մոսկվայից փակ նամակ է եկել՝ խիստ գաղտնի, որը քննարկվում էր կուսակցական ժողովներում: Այդ նամակում մեր նոր ղեկավարները քննադատում էին Ստալինին՝ նրան մեղադրելով հազար ու մի մեղքերի համար:

Սկզբում ոչ ոք դրան չէր հավատում, բայց երբ թերթերում կարդացինք այդ մասին, նոր կամաց-կամաց մեր առաջնորդ ընկեր Ստալինը դարձավ ուղղակի Ստալին, այն էլ՝ ժողովրդի թշնամի: Մի որոշ ժամանակից հետո Սիբիրից տուն վերադարձավ բոնդր (տակառագործ) Ներսեսը, որին քառասնական թվականներին աքսորել էին՝ որպես հակա և խառնակիչ, միայն այն բանի համար, որ նա, իբր թե, ինչ-որ տեղ ասել էր, թե Ստալինի հրամանները մինչև մեզ չեն հասնում, այլ մնում են Բաքվում:

ГАУ РА "Национальный центр им. К. Тер-Мелкумова"

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷԻՆՔ ԱՊՐՈՒՄ

Գյուղի եկեղեցին այդ ժամանակ ծառայում էր որպես ակումբ և միաժամանակ՝ որպես գրադարան: Ակումբի դահլիճը՝ դա երկու շարքով շարված նստարաններն էին, որոնք դռան կողքից հասնում էին մինչև բեմը, որի կեսից էլ ծաղկավոր չթե վարագույրը ծածկում էր հետնամասում գտնվող մի ոչ մեծ տարածություն, իսկ վերևում խաչաձև մի փոքր պատուհան կար, որտեղից մենք՝ երեխաներս, ներս էինք սողոսկում, առանց տոմս գնելու՝ կինո տեսնելու հույսով:

Երկու կողմերի պատերին քաղբյուրոյի անդամների մեծադիր գունավոր նկարներն էին, որոնց քանակությունը փոփոխվում էր՝ կախված նրանից, թե ո՛ւմ են հեռացրել կամ նրա տեղն ո՛ւմ են նշանակել, իսկ բեմի վերևում, իհարկե, հայր Ստալինի մեծադիր նկարն էր, որ կախված էր մինչև նրա մահը:

Ակումբում տարին մի քանի անգամ ժողովներ ու միտինգներ էին լինում, որից հետո մենք՝ աշակերտներս, համերգներ էինք տալիս առանց երաժիշտների, քանի որ գյուղում նրանք այդ ժամանակ չկային: Բարձր դասարանի աշակերտներից մեկը ուղղակի առանց բառերի երգում էր՝ «դիլդիլ էր անում», որի երաժշտության տակ էլ մենք պարում էինք ու երգում, երբեմն՝ փոքրիկ ներկայացումներ ցուցադրում: Նույնիսկ երբեմն էլ մասնակցում էինք շրջանային և մարզային ստուգատեսներին: Մեծահասակները նույնպես երբեմն պիեսներ էին կազմակերպում՝ ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ՝ դրանով, ասես, ցանկանալով լրացնել այն ահռելի բացը, որն առաջացել էր մայր հայրենիքից կտրված լինելու պատճառով:

Տարին մեկ անգամ ակումբում հաշվետու-ընտրական ժողով էր գումարվում, որը տեղի ունեցող բոլոր ներկայացումներից ամենահետաքրքիրն էր: Մեզ՝ երեխաներիս, թույլ չէին տալիս մասնակցելու, բայց մենք առիթը բայց չէինք թողնում՝ ներս սողոսկելու համար, իմանալու, թե ինչ է կատարվում այնտեղ: Նախնական ճառը մեզ ամենևին էլ չէր հետաքրքրում, քանի որ այն գովասանքների մի շարան էր՝ ուղղված կուսակցությանն ու կառավարությանը, որը ննջող ու հոգնած, խեղճ ժողովականների համբերությունը շահագործելով՝ ընթերցում էր զեկուցողը: Դրանից հետո շրջանից եկած կուսքարտուղարը սկսում էր սուր քննադատության ենթարկել կոլխոզի նախագահին՝ արած ու չարած մեղքերի համար, և առաջարկում էր անբավարար համարել նրա կատարած աշ-

ГАУ РА "Национальная библиотека"

խատանքը: Երբ ժողովի մասնակիցները, հասկանալով՝ ինչն ինչոց է, ձեռքերը բարձրացնելով՝ կողմ էին քվեարկում, պարզ էր դառնում, որ գործող նախագահի «երգը երգված է»: Դրանից հետո սկսվում էր այն, որն արժեր լսել. սկսվում էին ելույթները, և խոսք էր խնդրում ոչխարաբուծական ֆերմայի վարիչ՝ հայտնի կատակաբան Վաղոն:

– Ընկե՛ր քարտուղար,– սկսում էր նա,– ես մի կոնկրետ հարց ունեմ. դուք հաստա՞տ եք որոշել Սարգսյանին հանել իր պաշտոնից: Եթե այդպես է, ապա ես մի քանի խոսք ունեմ ուղիղ նրա ճակատին ասելու, իսկ եթե ոչ՝ ուրեմն նրանից լավ նախագահ չկա:

Ժողովականները ծափահարում ու ծիծաղում են, իսկ նա շարունակում է.

– Ա՛յ ժողովուրդ, լսեցե՛ք մինչև վերջ: Երբ Սարգսյանին ընտրեցինք նախագահ, նա ո՛չ տուն ուներ, ո՛չ էլ տեղ, իսկ հիմա, փա՛ռք Աստծո, նա լավ ապրուստ ունի, իր համար նոր տուն է կառուցել, եղբորն է օգնել, նույնիսկ՝ զոքանչին է հարևան գյուղից տեղափոխել այստեղ, հողամաս հատկացրել ու տուն կառուցել: Իսկ հիմա նա սկսել է մեր դիմումները դրական ստորագրել և օգնել: Հիմա ես իմ կարճ խելքով մտածում եմ, որ նոր եկողն էլ պիտի սկսի իրենից, ու մենք էլի կմնանք «ղրաղից» նայող: Մեր ճանապարհները կմնան ցեխի մեջ կորած, ֆերմայի կովերը՝ լղար, իմ տրեխներն էլ՝ ծակ:

Ժողովի նախագահողը, մի կերպ լռեցնելով ծիծաղից թուլացած ներկաներին, խոսքը տալիս է արաբաչի Լևոնին, որն ասես շարունակում է նախորդին:

– Ընկերնե՛ր, ա՛յ դուք ասում եք, որ մեր արտերը վատ են աճում ու քիչ բերք տալիս. դրան ես համաձայն չեմ: Օրինակ՝ երեկ մեքենայով անցնում էի Մարտակերտի դաշտերով, նայելիս զահլես գնաց. արտերի գույնը միանման՝ բեդռանգ կանաչ էր, մի բոյի, ժամանակից շուտ բարձրացած ու հասկակալած: Իսկ երբ հասա մե՛ր արտերին, հոգիս ուղղակի լիացավ. ի՛նչ գույն ասես, որ այնտեղ չկա. է՛լ կարմիր, է՛լ դեղին, դե, մեկի բոյն էլ ինձ նման լոլոզ, իսկ մյուսինը՝ գլդղլ Մուխանի բոյին: Դե, մեր ջահել ագրոնոմն էլ մեր արտերի վրա երևի ծաղիկների նոր սորտեր է փորձարկում՝ դիսերտացիա պաշտպանելու համար:

Դահլիճը նորից ծիծաղից պայթում է…

Այո՛, այստեղ չափազանցություն չկա, այդպիսի հումորով էին քննադատում մեր գյուղացիները, բայց այդ հումորն իրականում շատ ավելի կծու և դառն էր, քան սովորական քննադատությունը:

ГАУ ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԲԱՄԲԱԿԱՀԱՎԱՔ

Մեր գյուղացիների հիմնական զբաղմունքը հացահատիկի մշակումը, այգեգործությունը, անասնապահությունն ու բամբակագործությունն էր:

Այդ աշխատանքներից ամենածանրը բամբակի պլանտացիաների մշակումն էր: Այդ դաշտերը բավականին հեռու էին՝ գյուղից մոտ քառասուն կիլոմետր, որտեղ օրնիբուն գյուղացիների մեծ մասը վաղ գարնանից մինչև ուշ աշուն աշխատում էր, նրանց հետ էլ՝ իմ մայրը:

Դա մի տանջալի աշխատանք էր, որը կարելի է համեմատել բրազիլական կինոսերիալների մեջ՝ հարուստների պլանտացիաներում աշխատող սևամորթների աշխատանքի հետ. իհարկե՝ ոչ այդքան դաժանաբարո ու ստրկատիրական, բայց իր բնույթով համարյա ոչնչով չտարբերվող, հիրավի, ծանր աշխատանք էր: Ամառային կիզիչ արևի տակ, առավոտ ծեգից մինչև ուշ երեկո, կտրված տուն ու տեղից՝ հիմնականում կանայք, մշակում էին այդ անիծյալ բույսը, որը հողից ծլելուց հետո պահանջվում էր ջրել, փխրեցնել, նոսրացնել, ձեռքերով բույսերից ջոկել «սոբկա» կոչվող զզվելի թրթուրները, որոնք անողոքաբար խժռում էին բույսի տերևները: Ձեռքերով էին ջոկում, որովհետև այդ ժամանակ դեռ թունաքիմիական ու մեխանիկական միջոցները շատ քիչ էին կիրառվում ու ցածր մակարդակի վրա էին: Բամբակահավաքի ժամանակ մոբիլիզացվում էր ողջ շրջանի բնակչությունը՝ սկսած չորրորդ դասարանի աշակերտներից, մինչև աշխատելու ընդունակ ծեր մարդիկ: Փակվում էին դպրոցներն ու շատ հաստատություններ, մինչև բամբակի վերջին կնգուղը կհավաքվեր դաշտերից: Մենք՝ աշակերտներս, սարսափելի շոգին, կիզիչ արևի տակ, ճերմակ կիսապարկերը գոգնոցների տեղ գոտկատեղերից կապած, բամբակ էինք հավաքում: Ո՛չ ծառ, ո՛չ էլ արևից պատսպարվելու որևէ թուփ կար: Խմելու ջուրը մեզ էր հասցվում փայտյա մեծ տակառներով, որոնք բեռնատարից գլորում էին գետնին: Ո՛չ մի սպասարկում. ով ինչպես կարող էր, օգտվում էր ջրից. նույնիսկ հասարակ բաժակներ անգամ չկային: Ուտում էինք՝ ինչ մեզ համար գյուղից ուղարկում էին մեր հարազատները: Պատահում էր՝ ջուրը ուշ էր տեղ հասցվում, քանի որ այն բերվում էր շրջկենտրոնից, և մենք, ստիպված, մեր ծարավը հագեցնում էինք ոռոգման համար դաշտերի մոտ հոսող պղտոր առուներից, որոնք մինչև մեզ հասնելը անցնում էին ադրբեջանական գյուղերով ու Միրբաշիր քաղաքի արվարձաններով՝ իրենց մեջ

ГАУ РК "Издательский дом "Гарнизон"

կլանելով վարակահարուստ կեղտը: Մենք, իբրև պաշտպանվելու միջոց, օգտագործում էինք մեր թաշկինակները որպես ֆիլտրեր: Դա, իհարկե, չէր փրկում վարակներից, որոնցից զերծ չմնացի նաև ես՝ շատ ծանր հետևանքներով…

Հավաքած բամբակը մենք լցնում էինք մեծ պարկերը, որոնք երեկոյան տեղափոխվում էին մթերման կայան: Այստեղ փոքրիկ օթևաններ կային՝ տևական աշխատողների համար: Մթերակայանում մեր պարկերում եղած բամբակը կշռում էին, հանում ինչ-որ մտացածին տոկոսներ՝ խոնավության դիմաց, իսկ մնացածը գրվում էր մեր անվան դիմաց՝ հետագայում դրա համար մեզ վճարելով կիլոգրամը երեքից հինգ կոպեկ, որը շատ չնչին գին էր այն տանջալի աշխատանքի համար, որը մենք կատարում էինք: Միջին աշակերտը, նայած տարիքի ու կարողության, օրական հավաքում էր երեսունից ութսուն կիլոգրամ բամբակ, իսկ մեծահասակները՝ նույնիսկ մինչև հարյուր կիլոգրամ և ավելի: Դրա համար էլ շրջանում կային սոցիալիստական աշխատանքի հերոսներ, ինչպիսիք էին մեր գյուղից՝ Սոնյա Բալուղյանը ու Հոռաթաղից՝ Հեղուշ Լալայանը:

Աղջիկներին գիշերները տեղավորում էին օթևաններում, իսկ տղաներին՝ ուղղակի մեր հավաքած բամբակի շեղջերի մեջ՝ ուրիշ տեղ չլինելու պատճառով: Գիշերները մեծահասակ չարաճճի տղաները հազար ու մի օյիններ էին խաղում մեր գլխներին՝ քնած տեղներս կծու պղպեղ էին քսում մեր շրթունքներին կամ մեր ոտքերն էին կապկպում և այլն: Դրա հետևանքով կռիվներ, տուրուդմփոցներ էին լինում: Երբեմն էլ փորձում էինք գիշերները փախչել դաշտից տուն, բայց շատ ժամանակ մեզ բռնում ու հետ էին բերում: Այդ պատճառով զրկվում էինք նաև տանջանքով աշխատած այդ մի քանի կոպեկից:

Դաշտերում եղած ժամանակներից մի զավեշտական դեպքի մասին կուզենայի պատմել…

Մեր աշակերտներից՝մի քանի տղաներ մի օր դաշտում մի աղվեսի ձագ էին բռնել ու կատակով՝ խեղճ աղվեսի վզին մետաղալարով ամրացված տոպրակի մեջ մի նամակ էին պինդ փաթաթել՝ հետևյալ տեքստով. «Սույն աղվեսը բաց է թողնվում Ֆրունզեի անվան կոլտնտեսության դաշտերում աշխատող մի խումբ աշակերտների կողմից դեպի հարևան Շովթլանլու ադրբեջանական գյուղի հավերի ֆերման՝ նոսրացում կատարելու համար»:

Գրում են ու, իրենք էլ, իհարկե, չիմանալով, թե դրա հետևանքն ինչ կարող է լինել, խեղճ ձագին ազատ են արձակում: Դու մի ասա,

ГАУ им. Ивана Ильинского

էդ անտեր աղվեսը մեծանալով՝ իսկապես հարևան ադրբեջանական գյուղի հավի ֆերմայի գլխին «շան օյին է բերում»՝ իր ցեղակիցների հետ ոչնչացնելով ահագին քանակությամբ հավեր: Բայց մի օր էլ նրան դարանակալում ու սպանում են և զարմանքով նրա վզից հանում մեր տղաների «նամակը»: Չկարողանալով կարդալ հայերեն գրվածը՝ նամակը տանում են Մարտակերտ: Այստեղ այն կարդալով՝ մնում են զարմացած, բայց գործը դրանով չի վերջանում: Ադրբեջանցիները բողոք են գրում միլիցիա՝ պահանջելով պատժել մեղավորներին, որոնց գտնելը դժվար չէր, քանի որ, պարզվում է՝ բոլոր «մեղավորների» անունները և նույնիսկ ստորագրությունները գրության տակ կային: Մի խոսքով, այդ անմեղ կատակը քիչ էր մնում փորձանք դառնար: Լավ էր, որ գտնվեցին ողջամիտ մարդիկ՝ որոնք կոծկեցին եղածը՝ երեխաների անչափահաս լինելու պատճառաբանությամբ:

ԴԺՎԱՐ ՏԱՐԻՆԵՐ

Դժվար էր ապրուստն այդ տարիներին. գյուղացիներն իրենց տանջալի աշխատանքի դիմաց ստանում էին ինչ-որ քանակությամբ մթերք՝ ցորեն, գարի, պանիր, որն անյուղ լինելու համար՝ կատակով եզան պանիր էին անվանում: Գյուղացիները փող չէին ստանում, այլ՝ աշխօր: Միայն տարին մեկ կամ երկու անգամ միանվագ վճարներ էին լինում, այն էլ՝ զանազան պետական պարտքերը փակելու համար: Բացի դրանից, հարկերը բազմաթիվ էին՝ հողի հարկ, ձու, բուրդ, մազ: Մի խոսքով՝ դա թալան էր պետական մակարդակով: Հարկահանները գյուղից չէին հեռանում: Հիշում եմ, որ մենք ոչխար չէինք պահում, բայց մեզնից բուրդ էին ուզում, որը մենք չէինք հանձնել այն պարզ պատճառով, որ չունեինք: Բայց դա հարկահանին ու գյուղսովետին չէր հետաքրքրում: Մի օր՝ վաղ առավոտյան, մեր տուն եկան գյուղսովետի նախագահն ու հարկահանը և, բրդի փոխարեն, իմ վրայի վերմակի միջի բուրդը թափեցին ու տարան՝ մորս անեծքներին ու իմ լացին անտարբեր: Հիմա, այսքան տարիներից հետո, ես չեմ կարողանում հասկանալ նրանց՝ այդ աստիճանի դաժանության ու ամեն կերպ ղեկավարների աչքում ակտիվիստ երևալու մոլուցքը:

Դա երևի անհավատալի թվա նրանց, ովքեր չեն տեսել ու չեն ապրել այդ ժամանակներում, բայց ինչ որ գրում եմ, դա, ցավոք, իրականություն է: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար կա-

ГАУ РК "РЕСПУБЛИКАНСКИЙ ЦЕНТР ПАТРИОТИЧЕСКОГО"

սեմ, որ շատ բան էր կախված տեղի իշխանավորներից ու նրանց մարդկայնության չափից: Բարեբախտաբար, տարիների այդ վիճակը կամաց-կամաց թեթևացավ, բայց այդ բոլորին փոխարինելու եկավ մարդկանց թալանելու մի նոր խարդախ միջոց՝ պետական մակարդակով. դա փոխառության տոմսերն էին, որոնք ստիպողականորեն բաժանում էին բոլորին՝ աշխատավարձի չափից ելնելով: Այդ փոխառության թղթերը կուտակվել էին բոլորի տներում: Տարին մի քանի անգամ, իբև թե, խաղարկություն էր տեղի ունենում, ու արդյունքները տպագրվում էին թերթերում, բայց դա ժողովրդի աչքին թոզ փչելու միջոց էր, ուրիշ ոչինչ: Շահած գումարն այնքան չնչին էր, որ ոչ մի արժեք չուներ: Այդ թղթերը մարվեցին շատ ու շատ ուշ, երբ դրանք արժեզրկվել ու մարդկանց միլիոնավոր ռուբլիներն անդարձ կորել էին: Ժողովուրդն, իհարկե, բացարձակ չէր բողոքում: Ասենք՝ ո՞ւմ դեմ կամ ո՞ւմ բողոքեր: Հատ ու կենտ համարձակներն էլ, բերանից անզգույշ խոսք թռցնելու պատճառով, իրիկունը տանն էին քնում, իսկ գիշերը «սև մեքենան» նրանց տանում էր անհայտ ուղղությամբ: Ասենք՝ ի՛նչ անհայտ ուղղություն. բոլորն էլ գիտեին, որ այդ ուղղությունը Սիբիրն է: Բավական էր երեք կոմունիստների գրավոր վկայությունը, որ անմեղ մարդը հայտնվեր «սև ցուցակում»՝ «հակա» պիտակով:

Գյուղացիներին անձնագիր չէին տալիս, այլ՝ տեղականք: Երևի, դա արվում էր, որպեսզի քաղաք չփախչեն, եթե նույնիսկ որևէ մեկին դա շատ էր անհրաժեշտ:

Բամբակի դաշտերից տուն վերադառնալուց հետո սկսվում էին դասերը, իսկ հանգստյան օրերին գնում էինք անտառ՝ դպրոցի համար փայտ բերելու, ասես՝ կոլտնտեսության ղեկավարությունը չէր կարող մի-երկու սայլ փայտ մթերել դպրոցի համար. չէ՞ որ իրենց երեխաներն էին այնտեղ սովորում: Մենք պիտի էշերին բարձած փայտ բերեինք, ամենքս՝ մեկ խորանարդ մետրի չափով:

Գյուղից քիչ հեռու կղմինդրի արտադրության արտելն էր, որտեղ մոտիկ գտնվող կավահողի հումքով կղմինդր էր արտադրվում, որն այդ ժամանակ շատ էր հարկավոր՝ շրջանի և մարզի գյուղերի հողածածկ տների կտուրները ծածկելու համար:

ԱՐՏԵԼԸ

Արտելը ոչ միայն կղմինդր, այլև կուժ, կուլա, սափորներ, ջրախողովակներ էր արտադրում: Այնտեղ աշխատում էին շատ հմուտ

ГАУ "Институт языка, литературы, истории им. Г. Ц. Цадасы"

վարպետներ, առանձնապես՝ բրուտներ: Մենք՝ դպրոցի աշակերտներս, հաճախ էինք էքսկուրսիա գնում այնտեղ և հիանում նրանց աշխատանքով, հետևում էինք, թե ինչպես է նրանց մատների տակ կավացեխը վերածվում հրաշագեղ սափորների ու կժերի: Դա, հիրավի, հրաշքի նման մի բան էր և մեծ վարպետություն էր պահանջում:

Նրանց համար, ովքեր չգիտեն այդ աշխատանքի պրոցեսը, կցանկանայի փոքր-ինչ ծանոթացնել դրան, թերևս նրա համար, որ այդ հարգված ու գեղեցիկ արհեստը մեզ մոտ հիմա չկա և, արդյո՞ք այն երբևէ կվերականգնվի՝ չեմ կարող ասել:

Մոտակայքում գտնվող կավահողի հանքից կավը փորում, տեղում մաղում, հետո՝ տեղափոխում էին արտել, որտեղ այն լցվում էր մեծ, կլոր ավազանի մեջ, վրան ջուր էին լցնում: Երկու ծանրաքարշ ձիեր պտտեցնում էին հսկա թիակները, և կավը հունցվում էր խմորի պես: Դրանից հետո՝ հունցած կավը տեղափոխվում էր հաստոցների մոտ ու, մամլիչների տակ սեղմվելով՝ կղմինդրի էր վերածվում: Հետո հում արտադրանքը տեղափոխվում էր չորանոց, այնտեղից էլ՝ թրծման վառարան: Այստեղ, փայտածուխը հատուկ ռեժիմով այրելու միջոցով, կղմինդրը և մնացած արտադրանքը թրծվում էր ու կարծրանում: Մի քանի օրից հետո՝ արդեն պատրաստի արտադրանքը հանվում ու տեսակավորվում էր:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մշակութային միջոցառումներ գյուղում շատ քիչ էին լինում, բացի կինոնկարների ցուցադրումից, որոնք բերվում էին շրջկենտրոնից: Ամռանը հեշտ էր. կինոցուցադրման սարքը բերվում էր մեքենայով, քանի գյուղ տանող ճանապարհները չոր էին: Իսկ անձրևներն ու ձյունն սկսվելուց հետո, մեր ճանապարհներն անանցանելի էին դառնում՝ խոր ու սոսնձի պես կպչուն ցեխի պատճառով: Ճանապարհի կեսին մնացած, մինչև անվադողերի կեսը խրված մեքենային օգնության էր գալիս կինոմեխանիկ Ժորայի՝ Դոկա անունով ավանակը, որն էլ կինոյի սարքավորումներն իր մեջքին դրած՝ տեղափոխում էր մինչև գյուղ:

Մեզ՝ երեխաներիս, ոչ բոլոր կինոնկարներն էին թույլատրում դիտել: Կինոյի ազդագրերի տակ, փակագծերի մեջ երբեմն գրված էր լինում. «Մինչև տասնվեց տարեկանների մուտքն արգելվում է»: Մյուս պատճառը փողի բացակայությունն էր, որը մեր գրպաններում հազվադեպ էր հայտնվում: Այն ժամանակ ֆիլմերում երբեմն

ГАУ РС "Издательский дом Академия наук РС(Я)"

ցուցադրվող անմեղ համբույրները, որոնց պատճառով մեզ ներս չէին թողնում, ներկայիս էրոտիկ տեսարանների հետ համեմատած, մանկական խաղեր էին:

Ցուցադրման ժամանակ շատ հաճախ լույսերը հանգչում էին: Դա այն ժամանակ սովորական մի բան էր. էլեկտրագիծն անցնում էր աղրբեջանական մի աննշան գյուղակով, որտեղ սակայն ենթակայան էին տեղադրել: Նրանք էլ, երբ խելքներին փչում էր, հայկական գյուղերն անջատում էին հոսանքից, ու դրա համար ոչ ոք նրանց չէր պատժում: Երբ անջատում էին էլեկտրականությունը, մենք՝ երեխաներս, օգտվելով առիթից, ներս էինք խցկվում ակումբ ու թաքնվում նստարանների արանքում կամ էլ մեծ սեղանների սփռոցների տակ, մինչև նորից հոսանքի գալն ու կինոյի սկսվելը, որից հետո կամաց-կամաց դուրս էինք գալիս մեր թաքստոցներից ու անմեղ տեսքով նստում ազատ մնացած տեղերում: Այդ «պարտիզանական» գործողություններին, իհարկե, ես էլ էի մասնակցում: Ճիշտն ասած՝ մեկ-մեկ բռնվում էինք, ու հավաքարար Արմենուհին կամ էլ ակումբի վարիչ Սերյոժան դուրս էին վռնդում մեզ: Պատահում էր՝ ավելի մեծահասակ տղաները ձմռանը փակում էին վառարանի ծխնելույզը: Երբ ծուխը հետ էր տալիս ու լցվում ակումբը, ստիպված բացում էին դուռն ու պատուհանները. մենք հենց դրան էլ սպասում էինք… Ախր, ի՞նչ անեինք, շատ էինք ուզում մենք էլ կինո տեսնել, իսկ փող չունեինք:

ՄԵՐ ՈՒՏԵՍՏՆԵՐԸ

Վաղ գարնանը, երբ հողն սկսում էր տաքանալ, առաջինը ձնծաղիկն էր փոխում ձյունից նոր ազատված գորշ հողի դեմքը, հետո՝ խնջլոզը, ու մենք՝ մանուկներս, փոքրիկ բրերով (մի ծայրը տաշած փայտ) զինված, հանդ էինք դուրս գալիս, ուր արևոտ տեղերում արդեն իր նեղլիկ ու երկար տերևներն էր փռել խնջլոզը: Փորում էինք նրանց տակը, հանելով և հավաքելով հողի տակ թաքնված փոքրիկ սոխուկները, տուն էինք բերում ու եփում: Դա մեր գարնանային առաջին կանաչ կերակուրն էր՝ հասարակ, բայց համեղ, մանավանդ, երբ եփելուց հետո նրա վրա ավելացնում էին գինու քացախ ու մի քիչ սխտոր: Ու այդպես՝ առանց յուղի, ինչպես փիփերթն են եփում, տաքացրած թոնրի հացի հետ, այն անզուգական կերակուր էր դառնում: Ապրիլի սկզբին անտառում խաշամի տակից կռմզուկն (սնդրիկ) էր իր սուր ծայրով դուրս ելնում: Այն, չնայած որ մի քիչ

ГА "Национальная б-ка Армении им. А.Г. Гасратяна"

դառնահամ է, բայց շատ յուրահատուկ համ ունի և, թարմ վիճակում ուտելուց բացի, պահածոյացվում էր ու ձմռանը դառնում սեղանի զարդը:

Սկսվում էր Ղարաբաղի «ժնգյալավ հացի» բաղկացուցիչ մասը կազմող բանջարի, կնձմնձուկի, թրթնջուկի, ճոճռուկի, խազազի և շատ ու շատ ուրիշ վայրի կանաչեղենի ժամանակը, որոնցով լիքն են հանդերը, և որոնք թվարկելու համար շատ էջեր են հարկավոր: (Ես կանաչիների անվանումները նշում եմ մեր բարբառով, ինչպես մանկուց եմ լսել: Հայաստանի և Ղարաբաղի տարբեր շրջաններում նրանց անունները տարբեր են հնչում, իսկ գրականության մեջ՝ նրանցից շատերի անվանումները մեր որ բարբառից են վերցրված՝ չեմ կարող ասել): Նոր-նոր կանաչող մացառուտներում ծնեփակն էր սկսում բարձրանալ, և մենք, մատներս արնոտելով, փշոտ թփերի տակից քաղում էինք այն ու, թևերիս տակ դրած, տուն գալիս: Ես այնքան էի հմտացել դրանք հավաքելու գործում, որ անգիր գիտեի աճելու վայրերը և քաղելու ժամանակը: Մեր հանդերում այնքան մորի, մոռ ու մոշ կա, որ կարող է գործարանների հումք լինել: Մայիսին արտերում կակաչն էր բարձրանում ու ծաղկում: Բայց մինչև ծաղկելը, մենք՝ մանուկներս, նրա փափուկ ընձյուղներն էինք քաղում, որոնք շատ քաղցր են ու համով: Նրանց կտրված ցողուններից կարմիր հյութով ներկվում էին մեր ձեռքերն ու շրթունքները, որոնք մաքրելն այնքան էլ հեշտ չէր: Այդ կակաչը մեր հանդերում երկու տեսակի է՝ քաղցրահամ և դառը: Մենք, իհարկե, հավաքում էինք քաղցրները: Բացի այդ, համարյա ամեն մի տնամերձ հողամասում գյուղացիները կակաչ էին ցանում, և երբ այն հասունանում էր, հաճախ էր դառնում մեր զոհը. մենք շտապ-շտապ բացում էինք նրանց հասուն կոկոնները և պարունակությունը լցնում բերաններս: Այն ժամանակ մենք չգիտեինք, որ կակաչը նարկոտիկ բույս է, և խեղճ կակաչից ինչ վտանգավոր թույն կարելի է պատրաստել: Այդ կակաչի պատճառով մի անգամ քիչ էր մնում կյանքից զրկվեի:

ԴԵՊՔ

Մի անգամ ընկերոջս հետ գնացինք «Հինգ շեն» հանդամասը՝ կակաչի կամ, ինչպես մենք էինք անվանում՝ տոպի ընձյուղները ճաշակելու ու տեսանք, որ տրակտորը վարում է դաշտը: Մենք ցանկացանք գնալ՝ տրակտորիստից թաքուն նստել նրա գութանները

ԳԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

պահող սոնիների վրա: Ասելն ու անելը մեկ եղավ: Մենք տրակտորի հետևից վազելով՝ բարձրացանք գութանների ու նրանց պահող անիվի արանքում գտնվող երկաթի վրա և այդպես մի քանի անգամ պտույտ գործեցինք դաշտում՝ մեծ հաճույք ստանալով: Բայց այնպես պատահեց, որ հաջորդ ոլորանի ժամանակ ես ընկա գութանի ու այն պահող անիվի արանքը, և այլևս ոչինչ չեմ հիշում: Աչքերս բացեցի այն ժամանակ, երբ տրակտորիստն ինձ գրկած տանում էր դեպի մոտակա աղբյուրը: Սկզբում ցավ չէի զգում, բայց արդեն աղբյուրի մոտ, երբ նա լվաց իմ արյունոտ դեմքն ու շոշափեց մարմինս, որը լրիվ հողի ու փոշու մեջ կորած էր, ուժեղ ցավ զգացի ոտքիս մեջ: Ինձ թվաց, թե մեռնում եմ, ու սկսեցի լացել: Ինձ ձիով հասցրին մեր տուն: Գյուղի միակ բժիշկը՝ «փերշել» (ֆելդշեր) Զինավորն էր, որը մանրազնին մարմինս ստուգելուց հետո, եկավ այն եզրակացության, որ շատ լուրջ վախենալու առիթ չկա, և միայն ոտքս է կոտրվել: Պարզվում է՝ բախտս բերել էր, որ չեմ ընկել գութանի տակ, այլ նրա ու նրան պահող անիվի արանքը, և հենց դա էլ փրկել էր իմ կյանքը: Տրակտորիստի խնդրանքով՝ ինձ հիվանդանոց չտարան, որ նրան չմեղադրեին այդ դեպքի պատճառով: Ու կամաց-կամաց տնային պայմաններում առողջացա:

ՄԵՐ ՀԱՆԴԵՐԸ

Ես մանկուց անգիր գիտեի մեր գյուղի բոլոր հանդամասերը, որոնք բազմաթիվ են, ու ամեն մեկն ունի իր անունը, որը դեռ նախահեղափոխական ժամանակներից էր մնացել: Հանդերն հիմնականում կոչված էին իրենց տերերի անուններով: Կոլեկտիվացումից հետո նրանք անցել էին կոլտնտեսությանը, բայց անունները մնացել էին՝ Ճղարանց տափ, Դերունց ծոր, Աթանի բաղ, Ըսլանանց բոստան և այլն…

Դեռ այն ժամանակ դրանց տերերը շատ վաղուց չկային, բայց անունները մնացել են մինչև հիմա: Իսկ ամենամեծ այգիները՝ Ղզլջոտը, Քեմքեշն ու Վարդոտն էին: Այդ այգիներում այնքան խաղող, թուզ և այլ մրգեր ու բանջարեղեն կար, որ հավաքելուց հետո էլ, մինչև առաջին ձյունը, կարելի էր ձմեռվա պաշար հավաքել: Մորս՝ Փառանձեմի հետ դեռ մանկուց շատ եմ շրջել այդ հանդերում: Հաճախ նա ինձ տանում էր իր հետ: Նա կոլխոզի այգիներում ու դաշտերում, մյուս կանանց հետ միասին, տղամարդուն վայել

ГАУФР "Университет им. А. Тарасова"

աշխատանքներ էր կատարում՝ վար ու ցանք, հունձ և այլն: Իսկ ես վազվզում էի ինձ համար, երբեմն էլ փոքրիկ կուլայով սառը ջուր էի բերում աղբյուրից՝ դրա համար ստանալով նրանց օրհնանքը:

Մորս հետ աշխատում էին արդեն հասակն առած կանայք, որոնցից շատերը հետաքրքիր կյանք էին ունեցել: Կեսօրին, երբ հանգստի ժամն էր, նրանք ճաշի էին նստում միասին՝ շրջան կազմած: Ամեն մեկն իր խուրջինի կապերն էր քանդում և հանում տնից բերած ինչ-որ մի ուտելիք՝ խաշած կարտոֆիլ, թթու դրած վարունգ ու կաղամբ, մյուսը՝ աշխօրի դիմաց ստացած անյուղ պանիր, խաշած ձու և, իհարկե՝ թոնրի հաց, որը շատ ժամանակ, չգիտես ինչու, չոր ու երեսը բորբոսնած էր լինում: Բայց երբ այն, երկար ճիպոտի ծայրին ամրացնելով, տաքացնում էին շրջանի կենտրոնում մարող կրակի շեղջի վրա, հետո ջուր ցանում վրան ու փաթաթում փալասի մեջ, քիչ հետո դառնում էր փափուկ ու համով, ասես հենց նոր էր թոնրից հանվել:

Մոտիկից հոսող մաքո՛ւր-մաքո՛ւր առվակի ափերից անանուխ, բանջար, կնձմնձուկ ու ջրակոտեմ էինք քաղում, և գետնին սփռված ճաշկերույթը դառնում էր արքայական:

Ճաշից հետո թեք էին ընկնում արդեն մարող կրակի շուրջը, որի շեղջի մեջ կարտոֆիլն էր խորովվում և մատուցվում ճաշի վերջում՝ որպես երկրորդ ճաշատեսակ:

Մի քանիսը հոգնած ննջում էին, իսկ մյուսներն սկսում էին զրույցն անցած-գնացած դեպքերից՝ բոլշևիկների գալուց մինչև գանգատը ջահել մի հարսից, որը յոլա չէր գնում սկեսրոջ հետ կամ էլ «ձախ գնացող» մեկի մասին: Հետո հանկարծ հիշում էին Հայրենական պատերազմում զոհված ու անհայտ կորածներին, որոնք մեր գյուղից հարյուր հիսուն հոգի էին: Երբ հերթը հասնում էր դրան, խեղճ-խեղճ նայում էին իմ կողմը, ու ես հասկանում էի, որ նրանց մեջ էր նաև իմ հայրը, որի անունը չէին տալիս՝ երևի խղճալով ինձ: (Իմ հայրը՝ Արամ Պետրոսյանը, պատերազմ էր զորակոչվել 1941-ի հոկտեմբերի վերջին՝ իմ ծնվելուց երեք ամիս առաջ՝ չտեսնելով իր վերջին երեխայի դեմքը: Միայն շատ տարիներ հետո՝ 2011 թ. իմացանք, որ նա Ղրիմում է կռվել ու գերվել 1942-ի հունիսին ու զոհվել նույն թվականի հոկտեմբերի16-ին Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներից մեկում): Բայց դե միայն ես չէի անհայր մնացել. նրանցից ամեն մեկը որդի, ամուսին, եղբայր ու հարազատ էր կորցրել: Չկար մի տուն, որը կորուստ չունենար:

ГАУ РК "Национальная библиотека им. Пушкина"

Երբ դպրոցական արձակուրդներն սկսվում էին, մենք՝ երեխաներս, ուլերն ու գառներն արածեցնելու էինք տանում գյուղին մոտիկ հանդերը: Նրանք անուշ-անուշ արածում էին, իսկ մենք զանազան խաղեր էինք խաղում: Կեսօրին քարերով ու ջրիմուռներով փակում էինք Թեղուտի ձորում հոսող գետակի հոսանքը՝ ստեղծելով փոքրիկ լճակ, ուր մենք լողալ էինք սովորում: Հետո պառկում էինք տաք սալաքարերի վրա: Հունիսին հասունանում էր թութը՝ Ղարաբաղի քաղցր ու համեղ, մեղրաբույր թութը, որը մագնիսի պես ձգում էր մեզ, ինչպես ծաղիկը՝ մեղվին:

ՂԱՐԱԲԱՂԻ ԹՈՒԹԸ

Երբ թութը հասնում էր, մենք ամեն կերպ ձգտում էինք ներս սողոսկել թթի այգիները, որոնք խիստ հսկողության տակ էին՝ բարձր փշե ցանկապատով պատած: Փայտյա երկար եղաններով (յաբա) զինված պահակները թույլ չէին տալիս չթափված ծառերին մոտենալ: Բայց մենք ծակ ու ծուկ էինք ճարում ու ներս խցկվում այգի: Թութ հավաքելու համար ձեռքերիս ունեցած ծառի կեղևից պատրաստած ամաններով (կոթ) բարձրանում էինք թթի ծառերի ամենաբարձր կատարները և, կապիկի ճարպկությամբ ճյուղից ճյուղ անցնելով, ընտրում էինք ամենահասուն պտուղները, ճաշակում ու կոթերի մեջ էինք հավաքում՝ միևնույն ժամանակ հետևելով, որ պահակները չնկատեն մեզ: Հակառակ դեպքում, եթե նրանք մեզ հայտնաբերեին, մեր անզգույշ շարժումների հետևանքով, ապա կիջեցնեին ծառից, լավագույն դեպքում՝ յաբաներով մեր հետույքներին հասցնելով, դուրս կվռնդեին այգուց՝ խլելով մեր հավաքած թութը:

Թութը, բացի քաղցրահամ պտուղ լինելուց, ունի նաև շատ ու շատ օգտակար և բուժիչ հատկություններ. նրա հյութից քաղցր «բեքմազ» (դոշաբ) էին պատրաստում, որն օգտագործվում էր ստամոքսի խոցի, թոքերի, լյարդի և այլ շատ ուրիշ հիվանդությունների բուժման համար, փրկում էր դաբաղով հիվանդացած անասուններին: Մի խոսքով՝ բնական և անփոխարինելի մի դեղամիջոց:

Դոշաբի պատրաստումը բարդ գործընթաց է. սկսվում է նրանից, որ եփման համար ընտրվում է ամենահասուն և ընտիր թութը: Այն լցնում են պղնձյա մեծ՝ երեք-չորս դույլ տարողությամբ կաթսայի մեջ, եփում, մինչև որ թթի գույնը դառնում է մուգ շագանակագույն: Հետո այն քամում են՝ լցնելով կաթսայի մեջ: Եփում են թույլ կրակի վրա՝ անընդհատ խառնելով թանձրացող հյութը, միևնույն

ГАУ РК "МЕМЕМОРИАЛ им. Н. Гаспринского"

ժամանակ հավաքելով քափը, որն, ի միջի այլոց, շատ քաղցր է ու համեղ: Հյութը եփվում է մինչև թանձրանալը՝ դանդաղ ծորալով խառնող շերեփի ծայրից: Բայց դոշաբի որակը շատ է կախված եփող վարպետի հմտությունից, որը լավ գիտի, թե երբ պիտի կաթսան կրակից վերցվի, որ ստացվի որակով արտադրանք: Եփելը մի քիչ շուտ կամ ուշ դադարեցնելու դեպքում այն կարող է դառնալ անորակ, և բոլորին չէ, որ վստահում էին այդ գործը:

Թութն ունի նաև մեկ ուրիշ՝ շատ կարևոր արժանիք ևս. դա օղու թորումն է: Շատերը գիտեն, թե ինչ է ներկայացնում իրենից թթի օղին, բայց չգիտեն, թե ինչպես է այն պատրաստվում: Դրա համար էլ, ես կուզենայի մի քիչ ծանոթացնել այդ գործընթացին: Մեծ կտավների ծայրերից բռնած՝ ջահել աղջիկներն ու հարսները պտտվում էին հսկա թթենիների բնի շուրջ՝ լսելով ծառի վրայի «թափչու» հրահանգները, թե ո՛ր ճյուղի տակ պահեն կտավը, որ թութը չթափվի գետնին: Երբ պտուղներն այնքան էին հավաքվում կտավում, որ այն ծանրությունից գետնին էր քսվում, թութը հնարավորին չափ մաքրում էին ճյուղերի կտորներից, տերևներից, մանր-մունր միջատներից և լցնում փայտյա տակառիկների մեջ: Ջահել տղաները թութը դրանցով տեղափոխում էին և լցնում այգու կենտրոնում գտնվող ծածկոցների տակ շարված հսկա՝ մի քանի հարյուր լիտրանոց տակառների մեջ: Քիչ հեռու տեղադրված էին օղու թորման սարքավորումները: Հավաքված թութը՝ մոտ տասը-տասներկու օր տակառներում եռալուց ու թթվելուց հետո, լցնում էին հերմետիկ փակվող մեծ պղնձյա կաթսաների մեջ, որոնց տակ կրակ էր վառվում: Ջրախառն թութը եռում էր, ու գոլորշին, անցնելով անընդհատ հոսող սառը ջրով հովացվող խողովակներով, դուրս էր գալիս արդեն որպես օղի և բարակ շիթով հոսում էր դույլի մեջ: Սկզբում հոսում էր սպիրտը, հետո աստիճանաբար թուլանալով, սպիրտայնությունը պակասում էր, և այդ ժամանակ էլ դադարեցվում էր թորումը: Այնտեղ աշխատում էին շատ հմուտ վարպետներ, որոնք ճիշտ ժամանակին կարողանում էին որոշել, թե երբ է անհրաժեշտ դադարեցնել թորումը: Նրանք այդ անում էին առանց որևէ սարքի օգնության՝ ժառանգաբար իրար փոխանցվող հմտությամբ: Թե ո՛ւր էր գնում, ավելի ճիշտ՝ ուր էր կորչում տոննաներով թորած օղին, չեմ կարող ասել, միայն գիտեմ, որ չնչին մասն էր բաժանվում գյուղացիներին: Մնացածն, ըստ լսածների, իբր թե, ուղարկվում էր Մոսկվա՝ Կրեմլ:

ГАУ РК "Национальный исторический архив"

Տարիներ հետո թթի ծառերը հատվեցին նույն այդ Մոսկվայից եկած հրամանով՝ իբր ալկոհոլի դեմ պայքար: Առանձնակի արգելքի տակ էր ինքնաթոր օղին, որը մինչև օրս էլ պատրաստվում է բնական մաքուր հումքից ու, ինչպես արդեն նշել եմ, շատ բուժիչ հատկություններ ունի և, իմ կարծիքով, ավելի մաքուր է, քան գործարանայինը: Այդ սխալ հրամանի պատճառով հարյուրավոր հեկտար թթի այգիներ են հատվել: Նույն հրամանով հատվեցին նաև շատ ու շատ խաղողի այգիներ, և գյուղատնտեսությունը կրեց ահռելի և անդառնալի կորուստներ:

ՇԵՐԱՄԻ ՈՐԴԸ

Թթի ծառի բազմաթիվ օգտակար հատկություններից մեկն էլ նրա տերևների մեջ է, որոնք շերամի որդի անփոխարինելի ու միակ կերակուրն են: Շերամի որդը, թթի ծառի տերևները բացվելուն պես, ստիպողական կերպով բաժանվում էր գյուղացիներին: Ստիպողական, որովհետև ընդամենը քառասուն օր ապրող այդ ազահ թրթուրը հասցնում է խժռել թթի ծառերի տերևների մեծ մասը: Մի գրամ նախնական կշիռ ունեցող որդի չափաբաժինը, օր օրի ավելանալով, գրավում էր գյուղի բոլոր ազատ շենքերը, նույնիսկ՝ կոլխոզի ֆերմաները: Օրը չորս անգամ պետք էր կերակրել, նրա «տակը փոխել»: Մենք՝ երեխաներս, օգնում էինք ծնողներին թթենու թարմ շիվերը, էշերի, սայլերի ու մեքենաների վրա բարձած, հանդից տուն տեղափոխելու գործում: Որդերն սկզբում մրջյունից էլ մանր են լինում, բայց, արագ աճելով, ավելի շատ տեղ են զբաղեցնում ու ավելի շատ կեր պահանջում: Մեկ ամիս ու տասը օրում նրանց երկարությունը հասնում է մոտ հինգ-վեց սանտիմետրի, և աստիճանաբար նրանց ներսում կուտակվում է ապագա մետաքսաթելի հեղուկը: Մի քանի օրից սկսվում է բոժոժի գործումը: Դա, հիրավի, բնության հրաշքներից մեկն է:

Հասունացած որդն իր համար ընտրում է հարմար տեղ, որը մենք նախօրոք ապահովում էինք՝ տեղադրելով նրանց արանքում շաղգամի տերևներից և մի քանի այլ բույսերից պատրաստած փնջեր: (Ի միջի այլոց՝ շերամի որդը շատ զգայուն է և ամեն բույսի վրա չի բարձրանում՝ իր բոժոժը հյուսելու): Որդն սկսում է իր բերանից հեղուկ դուրս թողնել, որն ակնթարթորեն վեր է ածվում մետաքսաթելի: Մի քանի օրում նա լրիվ փակում է իր շուրջը՝ շարունակելով հույսել, մինչև իր մեջ կուտակված հեղուկի

ГАУЗЕК "Музей-усадьба В. И. Аспринского"

վերջանալը: Բայց դրանով նրա կյանքը չի ավարտվում. նա բոժոժի ներսում որդից վերածվում է թիթեռի: Եթե կարճ ժամանակում բոժոժը չի ջերմամշակվում, ապա թիթեռի վերափոխված որդը ծակում է բոժոժն ու դուրս գալիս, իսկույն ևեթ ձու դնում: Այնպես որ՝ հավերժական կյանքի մասին կրոնական որոշ ուղղություններ, ոչ այնքան անհիմն կերպով, հենց այդ պրոցեսն են օրինակ բերում: Բոժոժի հետագա ճակատագրի մասին կպատմեմ հետո…

ԱՆԱՄՆԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Այժմ այն արատավոր երևույթի մասին, ինչպիսին էր գողությունը, ավելի ճիշտ՝ անասնագողությունը մեր գյուղում:

Գիշերները մեր համագյուղացի մի քանի քրեական հանցագործեր, նախօրոք համաձայնության գալով ադրբեջանցի իրենց հանցակիցների հետ, գողանում էին գյուղացիների անասունները՝ թաքցնելով ու իրացնելով դրանք շուկաներում: Գյուղացիների բազմաթիվ բողոքներն անհետևանք էին մնում, քանի որ շրջանային միլիցիայի որոշ աշխատակիցներ իրենց թևի տակ էին առել այդ հանցագործներին՝ իհարկե իրենց բաժինն ունենալով այդ իրացումներից:

Հիշում եմ մի այսպիսի դեպք: Գյուղացիներից մեկը, որն այդ «հերոսությունների» ակտիվ մասնակիցներից էր, վերջապես բռնվում է հանցանքի վայրում ու դատապարտվում մի քանի տարվա բանտարկության: Ասես, ամեն ինչ ճիշտ է, և գյուղացիները գոնե միառժամանակ կազատվեն ավազակություններից, բայց բանն այն էր, որ ուղղիչ գաղութը գտնվում էր մեր գյուղից ոչ հեռու՝ Շահբուլախ ադրբեջանական գյուղակի մոտ: Այնտեղ գտնվող դատապարտվածներից շատերը մեկ անգամ չէ, որ հայտնվում էին գաղութում և, ինչպես ժողովուրդն է ասում՝ «մշտական գրանցում ունեին»: Այդ դեպքից շատ չանցած՝ նորից սկսվեց անասնագողությունը: Մի օր էլ գյուղի հովիվը «հարայ տալով» գյուղ է վազում և անհավատալի մի բան է ուզում բացատրել իրեն շրջապատած մարդկանց: Նրա պատմելով՝ կեսօրին ինքը ծառի տակ ննջելիս է եղել, ոչխարի հոտն էլ, արևից նեղված, մակաղել է ստվերում: Մեկ էլ շան հաչոցից աչքերը բացում ու զարմանքով տեսնում է, որ երկու հոգի, մի ոչխար բռնած, քաշում են դեպի թփերը: Ինքը շանը քսի տալով ու հարայ կանչելով՝ ուզում է ազատել ոչխարին: Բավականին մոտենալով գողերին՝ հովիվը ճանաչում

ГАУ РК "Национальная библиотека имени Пушкина"

է նրանցից մեկին, բայց աչքերին չի հավատում. դա հենց մեր այն նույն գյուղացին էր, որին մի քանի ամիս առաջ բանտարկել էին: Գյուղացիներն, իհարկե, չեն հավատում նրան ու նախատում են՝ ասելով. «Ա՛յ սարսաղ, երևի աչքիդ է երևացել: Ինչպե՞ս կարող է բանտում նստած մարդն ազատ գալ ու օրը ցերեկով գողություն անել»: Բայց հետագայում պարզվում է, որ հովիվը ճիշտ էր ասել. ինքը՝ գողն էր հարբած ժամանակ պատմել, որ բանտապահներն այդպիսի սրիկայություններ հաճախ էին կատարում: Գաղութում գտնվող հանցագործների հետ համաձայնության գալով՝ նրանց ուղարկում էին «գործուղման»՝ իրենց համար անասուն գողանալու: Փոխարենը՝ նրանց «քաղցր աչքով էին նայում» ու ծանր աշխատանքի չէին ուղարկում: Նրանց հաշվարկն էլ հենց դա էր, որ գողին ճանաչելու դեպքում էլ ոչ ոք չի հավատա ականատեսի խոսքերին:

Դպրոցական արձակուրդների ժամանակ գնում էինք օգնելու կոլխոզին՝ խոտհարքից հետո հնձած խոտը դաշտերում հավաքելու: Իսկ կեսօրին մեկ-մեկ գնում էինք կոլխոզի բոստանները՝ կանաչի, վարունգ, սոխ, լոլիկ խնդրելու՝ ճաշին ուտելու համար: Մեզ տեղեկանք էր տրվում բրիգադիրի կողմից՝ բոստանչուն ներկայացնելու համար, որ նա մեզ հատկացնի որոշակի քանակության մթերքներ: Դե՛, մենք էլ մեր կողմից հաճախ վարպետորեն կեղծում էինք տեղեկանքում նշված քանակությունը՝ մեր օգտին, իհարկե՝ ավելին ստանալու համար: Պատահում էր, որ ինքներս էինք կեղծ տեղեկանք գրում, ստորագրությունը կարմիր թանաքով դնելով, իսկ որպես կնիք օգտագործում էինք կեսից կտրված գլուխ սոխը՝ թանաք քսելով մակերեսին: Դա բավականին նման էր ստացվում կնիքի գծերին, և բոստանչին, հալած յուղի տեղ ընդունելով մեր սարքած կեղծ տեղեկանքը՝ բավարարում էր մեր պահանջը:

ՏԱՆԻ ՔԵՌՈՒ ՈՏՔԸ

Մեր գյուղում մի բոստանչի կար՝ Տարիել անունով, որին բոլորը Տանի էին անվանում: Նա բարի ու կատակասեր մարդ էր: Երբ մոտն էինք գնում, մի փունջ կանաչ սոխ խնդրելու, նա կատակում էր.

– Բալա՛ն կծեմ, սոխը հլա խակ ա, մաղձ կա մեջը, ուտելու բան չի: Ա՛յ, որ մեծանա՝ կգաք:

– Ա՛յ Տանի քեռի, սոխի մաղձը ո՞րն է, – ծիծաղում էինք մենք՝ իմանալով, որ կատակում է:

– Ա՛ խոխեք, դե՛ սոխը՝ կանաչ թե հասած, մաղձ է էլի՛,– ասում էր նա ու ծխախոտից դեղնած բեղի տակ ժպտում:

ГАУ РК "Медиатека имени Гаспринского"

Մեկ-մեկ նստում էինք նրա մոտ՝ հոլիկի շվաքում, ու նա, մեր խնդրանքով, հետաքրքիր պատմություններ էր պատմում՝ իր հետ պատահած, վաղուց անցած-գնացած դեպքերից:

Մի անգամ ես նրան հարցրի, թե ինչո՞ւ է կաղում և երբվանից: Տանի քեռին հանկարծ տխրեց և տնքաց:

– Ա՛յ որդիք, դա շատ վաղուց էր: Ես ռուսական բանակում էի ծառայում, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Մենք խրամատում, թշնամուց մի հարյուր մետր հեռավորության վրա, սպասում էինք հրամանի: Մեկ նրանք էին հարձակվում՝ մենք էինք փախչում, մեկ էլ մենք էինք հարձակվում՝ նրանք էին փախչում, ու այդպես շարունակ:

– Տանի քեռի՛, չեն ասի՝ փախչում էինք, ասա՝ նահանջում էինք,– նրան ուղղել ուզեց տղաներից մեկը:

– Մի՛ խանգարի, ա՛յ խոխա, մտքիս թելը մի՛ կտրի: Դուք՝ չգիտեմ թե ոնց, իսկ մենք փախչում էինք: Բա ի՞նչ անեինք, մնայինք, որ մեզ կոտորեի՞ն: Հա՛, էն էի ասում, մի օր մեզ մոտ եկավ մեր հրամանատարը: Անունն էլ մինչև հիմա հիշում եմ՝ «վաշե բլագարոդիե Իվան Սերգեևիչ» էին կոչում: Շատ լավ մարդ էր՝ բարեսիրտ, հասկացող: Էս անգամ նա հրամայեց՝ ելնել սվինամարտի թշնամու դեմ: Դե՛, հրամանը մնում է հրաման, պետք էր ենթարկվել: Մենք «ուռա՛» գոչելով՝ առաջ նետվեցինք, նեմեցն էլ, իրենց լեզվով «ուռա՛» կանչելով, ելավ մեր դեմ: Սվինը առաջ պարզած՝ վազելով բոլորի հետ առաջ գնացի: Դե՛, իմ բոյը, տեսնում եք էլի՛, հրացանի ու սվինի բոյն ինձնից մի թիզ բարձր էր: Ուրեմն, էն էի ասում՝ մեկ էլ տեսնեմ՝ դիմացս հայտնվեց մի հսկա նեմեց՝ բոյն իմ երկու չափի, աչքերն արյուն կոխած, բեղերը ցից: Սա, կարծես հակառակի պես, բոլորին թողած՝ հենց ինձ վրա է գալիս: Վա՛յ, տունս քանդվեց՝ անցավ մտքովս, էս շան որդին ինձ «տոչնո» կսպանի: Ուզեցի կրակել՝ չստացվեց. փամփուշտ չկար հրացանիս մեջ, թե ինչ՝ չեմ հիշում: Արդեն ո՛ւշ էր, մնացել էր մի քանի քայլ: Ուրիշ ճար չգտնելով՝ հրացանս գցեցի ու գոռացի՝ ցույց տալով կուրծքս. «Է՛յ, բրատ, սուդա նելիզա, (ձեռքի շարժումով չէ՛ ասացի), հետո ցույց տվեցի ոտքս՝ պրաշու վո՛տ սուդա… Է՛ս հերն օրհնածը հանկարծ զարմացած կանգ առավ, հետո ծիծաղեց ու սվինը խրեց ոտքիս փափուկ մասի մեջ, ինձ գցեց մի կողմ ու գնաց առաջ…

Մենք երկար ժամանակ ծիծաղից թուլացել էինք: Հետո, երբ մեզ հավաքեցինք՝ հարցրինք.

ГАУ РСО "Издательский дом "Гастрономъ"

– Հետո՞, հետո՞ ինչ եղավ, քեռի՛ Տանի:

– Դե՛, հետո ինչ պատմեմ, ցավից ուշաթափվեցի և աչքերս բացեցի լազարեթում՝ մերոնց մոտ: Ինձ բուժեցին, մի մեդալ էլ դոշիցս կախ տվին՝ «Զա խրաբրստ», ու տուն բաց թողեցին՝ որպես հաշմանդամ: Աստվա՛ծ հոգին լուսավորի՛, լավ նեմեց էր: Բա ի՛նչ եք կարծում, թշնամու մեջ էլ կարող են լինել բարի մարդիկ: Նրա շնորհիվ է, որ սաղ եմ մնացել, տուն-տեղ, էրեխեք ունեմ ու ապրում եմ մինչև հիմի:

ԳՅՈՒՂԻ ՄԱՐԴԻԿ

Քանի որ տղամարդիկ պատերազմից հետո քիչ էին մնացել գյուղում, դաշտային աշխատանքների մեծ մասն ընկնում էր կանանց ուսերին: Երբ ես փոքր էի, մայրս շատ ժամանակ ինձ իր հետ դաշտ էր տանում՝ աշխատանքի վայրերը, ու ես իմ աչքով եմ տեսել, թե ինչպես էին նրանք մանգաղով հնձում ցորենի ու գարու արտերը, ցանում ու փխրեցնում բոստաններն ու այգիները, հասկ հավաքում, անասնապահությամբ, թռչնաբուծությամբ զբաղվում և այլն: Մինչև հիմա էլ հիշում եմ Սառա բիբուն՝ տղամարդու ուժով այդ երբեմնի գեղեցիկ կնոջը, Մարիամ տոտային, Հայկանուշ տոտային, որը հետագայում իմ զոքանչը դարձավ: Հիշողությանս մեջ են մեր հարևան Վարդանուշ աքան՝ շերամի որդի աճեցման ամենափորձված մասնագետը, և էլի ու էլի շատ շատերը, որոնք մորս հետ միասին տղամարդու գործ էին կատարում հանդերում՝ տան հոգսերին գումարած:

Գյուղում մնացած տղամարդիկ, որոնք հիմնականում պատերազմից հրաշքով ողջ վերադարձած հաշմանդամներ էին ու բեղերը նոր ծլող մի քանի տղաներ, որոնք չէին կարողացել շարունակել ուսումը դպրոցում և, ընտանեկան ծանր պայմաններից ելնելով, մեծերի հետ աշխատում էին, կատարելով ծանր աշխատանքներ՝ անասնապահություն, խոտահարք, հունձ, գութանով վար՝ այն տեղամասերում, ուր խիստ թեքության պատճառով տրակտորները չէին կարողանում աշխատել և այլն: Այդ մարդկանցից մի քանիսի անունները կուզենայի նշել: Մինչև հիմա իմ աչքի առաջ է Գլմանց Մուխանը՝ աժդահա հասակով մի մարդ, որը օրը չորս թոնրի հաց էր ուտում, բայց փոխարենը՝ աշխատելիս էլ չորս մարդու չափ էր աշխատում: Խոզարած Էմիրը, որը գյուղում հազվադեպ էր լինում, որովհետև կոլխոզի խոզերն էր պահում՝ աշնանն ու ամռանը անտառում, իսկ ձմռանը՝ չոլերում: Մակին, Համբարձին, Սահակը,

ГАЗАРКИ ИМЕНИ Г. ГАЗАРИНСКОГО"

Արշակը, Գուրգենը և այլն: Դրանք այն մարդիկ էին, որոնք տարել էին այդ ժամանակների ծանր հարվածները, բայց շարունակում էին մաքառել իրենց սերունդների համար:

Գյուղում շատ աշխատանքներ կատարվում էին ձեռքով, քանի որ, ինչպես նշել եմ, շատ դաշտեր գյուղի շրջապատում խիստ թեքությունների վրա էին: Տղամարդիկ ու նրանց հետ էլ կանայք մանգաղներով հնձում էին արտերը, սայլերով ու մեքենաներով դրանք տեղափոխում կալերը, որտեղ «մոլոտիլկայով» ու եզներին լծված կամերով կալսում էին հնձած բերքը: Կամը՝ դա կաղնե փայտից պատրաստված, հատուկ ձևով իրար ամրացված տախտակներ են, որոնց ներքևի մասում, հատուկ ծակոտիների մեջ կարծր քարատեսակներ էին պինդ ամրացվում (կայծքար), որոնք հասկերից հանում էին հացահատիկը: Կամերը քաշում էին լծված եզներն ու ձիերը, իսկ կալսողը, կանգնած կամի վրա, ուղղություն էր տալիս եզներին և միևնույն ժամանակ ծառայում որպես ծանրություն կամի վրա, մյուս աշխատողները քամուն էին տալիս հաշանը՝ տարանջատելով հացահատիկը դարմանից: Մենք՝ երեխաներս, գնում էինք կալերը և նստում կամերի վրա: Դա միևնույն ժամանակ և՛ հաճույք էր մեզ համար, և՛ օգնություն կալսողներին, քանի որ մենք լրացուցիչ ծանրություն էինք տալիս կամին, և դրա համար նրանք դեմ չէին մեր օգնությանը:

ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԸ

Ամռանը՝ դպրոցական արձակուրդների ժամանակ, մենք՝ պատանի պիոներներս, կազմակերպում էինք արշավներ դեպի մեր պատմական վայրերը՝ ոգևորված Վախթանգ Անանյանի «Սևանի ափին» գրքի պատանի հերոսների արարքներից: Մեր բնասերների ջոկատը կազմված էր մոտ տասը հոգուց և բավականին լավ կազմակերպված էր: Ունեինք ջոկի հրամանատար, կոմիսար, դրոշակակիր և այլն: Այդ բոլորն այնքան լավ էր կազմակերպված, որ դրան սկսեց լրջորեն վերաբերվել դպրոցի տնօրենը, և մեր արշավների ժամանակ գտած զանազան իրեր, որոնք բերում էինք պատմական հին հուշարձաններից, նա հանձնում էր մարզային երկրագիտական թանգարանին: Իմ ընկերների հետ ես շատ եմ եղել մեր շրջանի պատմական հին հուշարձաններում, շրջել նրանց վաղուց անտեր մնացած ավերակներում, զարմացել ու հիացել մեր պապերի ստեղծած այդ հրաշքներով, փորձել կարդալ հայատառ

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Табризского"

գրառումներն ու երբեմն էլ, թաքուն չորս կողմս նայելով, երեսիս խաչ հանել, այնպես, որ ընկերներս չտեսնեն, թե չէ կծիծաղեին ինձ վրա, թեև ներքուստ համոզված էի, որ նույնն էլ նրանք են անում: Խնդրում եմ, մեզ չմեղադրեք դրա համար՝ ժամանակներն էին այդպես…

Մեր շրջանը հարուստ է բազմաթիվ հնամյա «բացօթյա» թանգարաններով՝ Երեք մանկունք, Խուտուրավանք, Դադիվանքի համալիր, Ջրաբերդ և այլն: Ես եղել եմ իմ ընկերների հետ այդ բոլոր սրբավայրերում և հպարտ եմ դրա համար:

«ՈՉ ԱՆՄԵՂ» ԱՐՇԱՎՆԵՐ

Այդ գովելի արարքների հետ, պետք է խոստովանել՝ կատարում էինք, մեղմ ասած, «ոչ անմեղ» արշավներ դեպի կոլխոզի այգիները: Սողոսկում էինք ամենուր՝ խաղողի ու մրգատու այգիների փշե ցանկապատների անցքերով, ծոցներս լցնում խնձորով ու տանձով և այգիների մյուս բարիքներով: Այդ արշավներն իրագործում էինք օրվա բոլոր ժամերին, նույնիսկ՝ երեկոյան ժամերին, երբ մեզ կինո կամ ուրիշ միջոցառումների չէին թողնում՝ փող չունենալու պատճառով: Այդ ժամանակ էլ սկսվում էին մեր «ելույթները»: Դրանք ակտիվանում էին հատկապես աշնանը, երբ հասունանում էր այգիների բերքը: Այդ առիթով մի զավեշտական դեպք կուզենայի պատմել: Գնացել էինք մեր հերթական թալանին կոլխոզի այգիները: Ծոցներս լիքը ավարով՝ վերադառնում էինք գյուղ: Որպեսզի խուսափենք հանդիպումներից՝ որոշեցինք մեր ավարն իրացնել ոչ ավել, ոչ պակաս գյուղի գերեզմանոցում, որն այն ժամանակ ցանկապատ չուներ, և կածաններ էին անցնում գերեզմանաքարերի արանքով: Մենք հարմար տեղավորվեցինք հին գերեզմանաքարերի վրա և սկսեցինք խժռել ավարը: Ամեն ինչ, ասես, հաջող էր, երբ հանկարծ մեզանից մեկը՝ ամենակատակասերը, տեղից վեր կացավ, հանեց գլխարկը և սկսեց.

– Բարի երեկո՛, մեր հարգելի պապե՛ր ու տատիկնե՛ր…

Խոսքը դեռ չավարտած՝ մեզանից քիչ ներքև, մթան մեջ հանկարծ մի ուրվական երևաց՝ փայտի նման մի բան ձեռքին ու խոսեց.

– Բարի երեկո՛, տղանե՛ր, էս կեսգիշերին ի՞նչ գործ ունեք այստեղ:

Մենք սարսափից քարացանք: Հիշում եմ, որ իմ և մյուսների մազերն էլ փշաքաղվեցին, ու կորցրինք խոսելու ընդունակությունը՝ լեզուներս կապ ընկավ: Իսկ ուրվականը մեզ էր մոտենում՝ մտրակը ձեռքին: Վերջապես նա այնքան մոտեցավ, որ մենք ճանաչեցինք

ГАЛУСТ ГРИГОРЯН ПРИНТ

«ուրվականին». դա սայլապան Թալիշ դային էր, որը, ինչպես հետո իմացանք, լծկանը տարել էր գիշերային արոտի ու վերադարձին, լսելով մեր ողջույնը, ուղղակի պատասխանել էր: Իմանալով իսկությունը՝ նա խիստ բարկացավ.

– Ա՛յ շան լակոտներ, բա դուք սկի՞ աբուռ չունեք, հը՞, բա որ սրտերդ ճաքեր, ի՞նչ պիտի անեինք:

Մեր սրտերը չճաքեցին, բայց կամաց-կամաց ուշքի գալով, մեկս մյուսից թաքուն, ստուգում էինք մեր վարտիքները: Մենք շատ խնդրեցինք Թալիշ քեռուն, որ նա այդ ամոթալի պատմությունը ուրիշ տեղ չպատմի: Բայց այդ դեպքը մեզանից մեկի բերանբացության պատճառով տարածվեց գյուղում, և ջահելները երկար ժամանակ առիթը բաց չէին թողնում՝ մեր «քաջագործության» վրա ծիծաղելու:

ԳՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Այդ ժամանակներում երկար տարիներ գյուղխորհրդի նախագահն էր կիսագրագետ մի մարդ՝ չորրորդ դասարանի կրթությամբ, սակայն ինքնակրթությամբ շատ զբաղվելով՝ կարողացել էր աչքի ընկնել իր կազմակերպչական ունակություններով և նույնիսկ՝ ընտրվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր ու համագումարում անձամբ տեսել էր Ստալինին: Դա էլ բավական էր, որ գյուղացիները նրա հանդեպ մեծ հարգանք ունենային: Պատմում էին, որ երբ նա վերադարձել էր Մոսկվայից, նրան արժանավայել դիմավորելուց հետո, խնդրել են պատմել իր տպավորությունները համագումարից և ընկեր Ստալինի մասին, որին նրանք միայն նկարներում էին տեսել, ու նա սկսել է պատմել.

– Դե՛, էստեղից որ ճանապարհվեցինք, մեր մարզից երեք հոգի էինք, հետո Բաքվից մեզ միացան շատերը, և հինգ օրում հատուկ գնացքով հասանք Մոսկվա: Այնտեղ մեզ շատ լավ դիմավորեցին ու տարան հյուրանոց, որը շատ մեծ շենք էր: Մյուս օրը մեզ տարան համագումարների պալատ, ցույց տվեցին մեր նստելու տեղերը: Բացի մեզանից, շատ ու շատ դեպուտատներ կային՝ տարբեր ազգերից:

– Հետո՞, հետո ի՞նչ եղավ, – անհամբեր հարցրին նրան:

– Դե՛, հետո, երբ մեր ղեկավարները եկան, մենք ոտքի կանգնեցինք ու սկսեցինք ծափահարել շատ երկար ժամանակ: Քիչ հետո ընկեր Ստալինը եկավ: Մենք նորից ոտքի կանգնեցինք և, «ուռա՛» կանչելով, երկար, շա՛տ երկար ծափահարեցինք, մինչև նա ձեռքի շարժումով մեզ ասաց, որ հերիք է: Ժողովի նախագահողը

ГАУ Республики РМ "М. Гаспринского"

զեկուցման համար խոսքը տվեց ընկեր Ստալինին. մենք նորից վեր կացանք մեր տեղից ու ծափահարեցինք: Նա սկսեց իր ճառը՝ երկար ու հանգամանալի, ու արանքում, երբ լռում էր, մենք նորից էինք ծափահարում:

– Իսկ ինչի՞ մասին էր խոսում Ստալինը,– հետաքրքրվեցին լսողները:

– Դե՛, ես ի՛նչ իմանամ՝ ինչի՛ մասին էր խոսում: Նա ռուսերեն էր իր ճառը կարդում,– սրտնեղած պատասխանում է նա,– էսա՛ գազեթում կտպեն, ձեզ համար կկարդամ, էլի՛…

Չէր կարելի մեղադրել խեղճ պատգամավորին, որ ռուսերեն չգիտեր: Գյուղում շատ քչերը գիտեին այդ լեզուն: Եղած գրագետներին տարել էին կռիվ, ու նրանք զոհվել էին այնտեղ, իսկ գյուղում միայն ռուսերենի ուսուցիչն ու Ռուսաստանում ապրածները շատ թե քիչ գիտեին այն:

Մեր գյուղում հումորով շատ մարդիկ կային, որոնց ասածները մնում են իմ հիշողության մեջ մինչև օրս: Ահա նրանցից մի քանիսը…

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀՈՒՄՈՐԸ

Մի անգամ Վաղին (համագյուղացիներն այդպես էին անվանում նրան), որը սարերում հովիվ էր և ամիսներով տան երես չէր տեսնում, լուր է ստանում գյուղից, թե կինը հիվանդացել է, ծանր վիճակում տեղափոխել են շրջանային հիվանդանոց, ու նա ամուսնուն է ուզում տեսնել: Վաղին անհանգստացած թողնում է հոտն ու շտապ հասնում հիվանդանոց: Կինը նրան խնդրում է, որ վերջինս գնա բուժող բժշկի մոտ և իմանա ախտորոշումը, որը չգիտես ինչու իրենից թաքցնում են: Վաղին այդպես էլ անում է. մտնում է բժշկի մոտ և ասում, որ ինքը Մանուշակի ամուսինն է և ուզում է իմանալ կնոջ հիվանդության ախտորոշումը: Բժիշկը նրան բացատրում է, որ անալիզները ցույց են տվել, որ հիվանդի մոտ քաղցկեղ է հայտնաբերվել, և խորհուրդ է տալիս տանել Երևան՝ նորից ստուգելու, որովհետև իրենք համապատասխան սարքավորումներ չունեն: Է՛ս տնաշենի տղա Վաղին էլ, որ գաղափար չուներ, թե ինչ սարսափելի հիվադության մասին է խոսքը, գալիս է կնոջ մոտ:

– Հը՛, Վաղի՛, բժիշկն ի՞նչ ասաց,– հարցնում է կինը:

– Հե՛չ, բան էլ չկա,– անտարբեր ասում է Վաղին,– բժիշկն ասում է՝ ռակ է, պիտի գնանք Երևան ստուգելու…

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Гаспринского"

Լսելով սարսափելի լուրը՝ խեղճ կինն ուշաթափվում է:

– Արա՛, դու հո՛ աննորմալ չես,– նրա վրա են հարձակվում հիվանդասենյակի հիվանդները,– բա՛ այդպիսի լուրը հիվանդի երեսին կասե՞ն:

– Խի, դա փի՞ս հիվադություն է,– շվարած ասում է Վաղին:

Բարեբախտաբար, Երևանում այդ ախտորոշումը չի հաստատվում, ու հիվանդը լավանում է և հետագայում ինքն է պատմում իր գլխի եկածն ու բոլորի հետ ծիծաղելով՝ ասում.

– Է՛դ թաղվածը, որ այդպիսի բան ասաց, այրող մի դող անցավ միջովս, ու ամբողջ մարմինս ասես եռաց. գուցե և դրանից էր, որ հիվանդությունս անցավ, ո՛վ գիտի…

Մի անգամ անտառում Վաղինակի եղբոր վրա արջ է հարձակվում ու ջարդում կողերը: Նրան տեղափոխում են հիվանդանոց: Մի ծանոթ, հանդիպելով Վաղինակին, հարցնում է եղբոր առողջության մասին: Վերջինս պատասխանում է.

– Փա՛ռք Աստուծո, հիմա բաբաթ է, բայց հիմա էլ արջի դրությունն է վատ. շրջանի սաղ որսորդները նրա հետևից են ընկել, որ սպանեն,– ասես ափսոսանքով ասում է նա:

Վաղոյի տղան նշանվել էր հարևան գյուղացի մի աղջկա հետ, բայց հազվադեպ էր այցելում նրան: Հայրը նախատում է.

– Ա՛յ, շան տղա, երբ ես քո մորն ուզում էի, նրան այնքան էի սիրում, որ երբ նրանց հայաթում իրենց էշը զռռում էր, ես հեռվից ուրախանում էի ու մտքումս ասում. «Ձա՛ն, ձայնիդ մատաղ, Մանիշակենց էշն է, ի՞նչ քաղցր ձայն ունի»: Իսկ քեզ պիտի ստիպենք, որ գնաս նշանածիդ տեսության, ձեզանից ի՞նչ ընտանիք…

Սաշա անունով մի տղա կար մեր գյուղում: Նա ամուսնացել էր հարևան գյուղից մի, մեղմ ասած, ոչ գեղեցիկ աղջկա հետ: Սաշային հանդիպելով՝ վարորդ Ալբերտը նրան հանդիմանում է.

– Արա Սաշա՛, որ ուզում էիր ամուսնանալ, ինչո՞ւ ինձ չէիր ասում: Ես քեզ համար մեր գյուղի կավահողից մի այնպիսի աղջիկ կարող էի ծեփել, որ հարյուր անգամ քո բերածից լավը կլիներ, հո՛ ես ուրիշը չեմ, քո բարեկամն եմ, էլի՛: Ինչո՞ւ ես մեր գեղեցիկ գյուղի տեսքը փչացնում, հը՞:

Մի անգամ տաքսու վարորդ Մանասը շրջկենտրոնից գյուղ տանող ճանապարհին մի համագյուղացի կնոջ հանդեպ բռնաբարության փորձ էր կատարել և դատապարտվել չորս տարվա բանտարկության: Այդ դեպքից քիչ անց, փայտով բեռնված էշն առաջն արած՝ Փառանձեմ մայրիկը անտառից տուն էր դառնում:

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Մեկ էլ է՛դ անշնորհք էշը, ճանապարհին մի էգ էշ տեսնելով, սկսում է զռռալ ու դեպի նրա կողմը վազել: Տերն այդ տեսնելով՝ մահակով հարվածում է էշին ու նախատում.

– Ա՛յ հիմար անասուն, բա դու չե՞ս լսել, որ այդ գործի համար օրենքը չորս տարի է տալիս, ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել, ինձ առանց է՞շ ես թողնելու…

ԶՄԵՌԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Զմռանը գյուղ տանող և գյուղամիջյան ճանապարհներին մի այնպիսի ցեխ էր գոյանում, որ մարդիկ երկարաճիտք կրկնակոշիկներով հազիվ էին ճեղքում սոսնձի պես ձյունախառն ցեխը, իսկ մեքենաները, որոնց վարորդները համարձակվում էին շրջկենտրոնի ասֆալտապատ ճանապարհից բարձրանալ դեպի գյուղ, մնում էին ճանապարհի կեսին, ու նրանց տրակտորներով կամ եզներով հազիվ էին քաշում մինչև գյուղ:

Գյուղամիջյան ճանաարհների երկայնքով տնկած սյուներից այստեղ-այնտեղ կախված լապտերների աղոտ լույսը երեկոյան ժամերին հազիվ էր լուսավորում միայն կենտրոնական ճանապարհները, իսկ մյուսներում այնպիսի խավար էր տիրում, որ ինչպես ասում են՝ մատդ կողքիդ կանգնածի աչքը կոխեիր, չէր տեսնի: Երբ երեկոներն ինչ-որ միջոցառում էր տեղի ունենում, ձեռքի էլեկտրական մարտկոցներով լապտերների կամ էլ նավթավառիչների օգնությամբ էին մարդիկ, խուսափելով ջրափոսերից, ակումբ հասնում:

Քառասնական թվականների վերջերին էր, ես փոքր երեխա էի, բայց լավ եմ հիշում, որ մեր տունը գտվում էր գյուղի կենտրնում, իսկ գյուղխորհրդի ու կոլխոզի վարչության շենքերը հենց մեր տան կողքին էին: Մեկ էլ տեսար՝ զզիր Զենին Մոսունց Միրզայի տան կտուրից կանչում էր գյուղի մյուս ծայրում գտնվող մի գյուղացու.

– Գուգե՛ն, հե՛ Գուգե՛ն, նախագահը կանչում է, շուտ արի՛… Լսեցի՞ր…

Եթե պատասխան չէր լսվում, նորից էր կանչում և ավելացնում.

– Ա՛ թաղված, քա՞ռ ես, ինչո՞ւ չես պատասխանում…

Մինչև հիմա հիշում եմ այդ սևազգեստ կնոջը՝ Զենի անունով, որը գյուղի անփոխարինելի զզիրն էր երկար ժամանակ: Նա զիլ և ուժեղ ձայն ուներ, որը գյուղի մի ծայրից մյուսն էր հասնում: Զմռանը, երբ խիստ ցուրտ էր լինում, նա գալիս էր մեր տուն՝ վառարանի մոտ ձեռքերը տաքացնելու և անիծում էր գյուղխորհրդի նախագահին.

ГАУ "ЛИТЕРАТУРНЫЙ МУЗЕЙ Ш. И. ЧАРЕНЦА"

– Սև կառեթում դնեմ նրան, թող Աստված նրան քոս տա, բայց եղունգ չտա, որ ջանը քորի: Է՛դ թաղվածն ինձ ուղարկում է Ալիսանի հետևից, որը գյուղի ծայրում է, ու երբ նա գալիս է, է՛դ թաղվածն ինձ նորից ուղարկում է նրա մյուս եղբոր հետևից. կարծես չէր կարող երկուսին էլ միասին կանչել, ու էս կեսգիշերին ձյուն ու ցեխով պիտի նորից գնամ գյուղի ծայրը…

Ձմռան երեկոներին հարևաններով հավաքվում էինք մեկի տանը, և գիշերները կարճացնելու համար մենք՝ ջահելներս, զանազան սեղանի խաղեր էինք խաղում, իսկ մեծահասակները հետաքրքիր բաներ էին պատմում անցած-գնացած օրերից: Այդ պատմություններից շատերը մինչև օրս հիշում եմ, առանձնապես՝ Մարգարիտ տատիկի պատմածները, որոնք գունագեղ ու շատ հետաքրքիր էին:

Մարգարիտ տատը գյուղի առաջին ուսուցիչներից էր: Նրա ամուսինը վաղուց էր մահացել, իսկ միակ որդուն պատերազմ էին տարել, ու նա այդպես էլ չէր վերադարձել: Ինչպես իմ հայրը՝ նա էլ էր անհայտ կորած համարվում, բայց խեղճ կինը մինչև իր վերջին շունչն սպասում էր որդու վերադարձին: Նրա տնից հաճախ էր լսվում միայնակ մնացած կնոջ ողբը՝ հատկապես Հաղթանակի օրը՝ Մայիսի 9-ին: Իմ մանկական հոգու վրա այնքան էր ազդել նրա վիշտը, որ մի գիշեր երազում տեսա՝ իբր նրա որդին վերադարձել է տուն, և մայր ու որդի վերջապես հանդիպել են իրար: Առավոտյան երազս պատմեցի մորս, նա էլ պատմել էր Մարգարիտ տատին: Մյուս օրը, մեկ էլ տեսնենք, վաղ առավոտյան նա, մի հավ գրկած, եկավ մեր տուն և, ինձ կանչելով, ասաց.

– Բալա՛ջան, քո անմեղ խելքիդ ու տեսած երազիդ մատաղ լինեմ: Հալբաթ քո բերանով՝ որդիս ինձ խաբար է ուղարկել, որ կենդանի է: Է՛ս հավը մատաղ է, չմերժես, քե՛զ մատաղ: Այսուհետև իմ դուռը քո առաջ միշտ բաց է:

Ես մնացել էի շվարած ու չգիտեի՝ ինչ պատասխան տամ: Մայրս իմ տեղը նրան շնորհակալություն հայտնեց և հետո ինձ բացատրեց, որ մատաղն Աստծունն է ու մերժել չի կարելի:

Ինչպես նշեցի, ձմռան այդ երեկոներին զրույցների թեման հետ էր գնում մինչև բոլշևիկների գալն ու այն մասին, թե ինչպես են նրանք կուլակաթափ արել մեր գյուղի բեկին ու ընտանիքի հետ աքսորել Սիբիր: Նրա եղած-չեղած հարստությունը երկու կովը, երկու լծկան եզներն ու երկհարկանի տունն էր, որը կոմսոմոլները հիմնահատակ քանդել էին՝ քարերի կույտի վերածելով: Ձավեշտականն այն էր, որ շատ տարիներ հետո հենց այդ քարերով ու այդ տեղում նոր

ГАУ РСО "Издательский дом "Растрепанного"

ակումբի հիմքն է դրվել: Մինչ այդ՝ քարերին ոչ մի գյուղացի ձեռք չէր տվել՝ վախենալով տիրոջ անեծքից: Ակումբը կառուցելուց հետո՝ նրա առջևի փոքրիկ հրապարակում դրվեց գյուղի առաջին բոլշևիկ Պատվական Վարդանյանի կիսանդրին՝ այն մարդու, որն աքսորել էր բեկին:

Վաթսունական թվականների սկզբին ականատես եղա մի դեպքի. պարզվեց, որ բեկի ընտանիքից մեկը՝ տղան, կենդանի է մնացել: Օրերից մի օր նա եկավ գյուղ և երբ տեսավ, որ իրենց տան տեղն ուրիշ շենք է կանգնած ու, այդ էլ քիչ էր՝ շենքի առաջ էլ իրենց թշնամու արձանն է դրված՝ վրդովմունքից չգիտեր՝ ինչ աներ: Սկսեց հայհոյել և քարեր նետել դեպի արձանը: Մի կերպ նրան զսպեցին ու խորհուրդ տվեցին հեռանալ, թե չէ դրանից ոչ մի լավ բան դուրս չէր գա, մանավանդ որ խորհրդային իշխանությունը դեռ գոյություն ուներ, և նա ստիպված հեռացավ:

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Իմ ընտանիքի տոհմածառը շատ խորն արմատներ ունի: Անհիշելի ժամանակներից նախապապս մեր գյուղի առաջին քահանան է եղել, ու սերնդեսերունդ այն փոխանցվել է իր ժառանգներին: Վերջին քահանան մեր գյուղում պապիս եղբայրն է եղել՝ տեր Հայրապետը, որին բոլշևիկ կոմսոմոլները ստիպեցին հրաժարվել իր կարգից ու սափրվել, իսկ եթե նա չսափրեր մորուքը, ապա սպառնացել են, որ նրա որդիներին ո՛չ գործ կտան, ո՛չ էլ կոլխոզ կընդունեն ու գյուղից էլ կաքսորեն:

Տեր Հայրապետն ստիպված տեղի է տվել: Պատմում էին, որ երբ կոմսոմոլները շատ են նեղել նրան, վերջինս եկել է եղբոր՝ իմ պապի մոտ՝ խորհուրդ հարցնելու: Իսկ պապս միակ գրագետ մարդն էր գյուղում այդ ժամանակ: Նա Թիֆլիսում ռուսական կրթություն էր ստացել և իրավաբանի որակավորում ուներ, որը նրան իրավունք էր տալիս ունենալու իր սեփական կնիքը, որը ցարի ժամանակ ամեն մարդ չէր կարող ունենալ: Ես իմ աչքով եմ տեսել և ձեռքս առել այդ կնիքը, որի վրա գրված էր «Դավիթ Տեր-Պետրոսյան»: Ափսո՜ն, որ այն կորավ անհայտ պայմաններում: Շարունակեմ պատմությունս: Ուրեմն այսպես. տեր Հայրապետը գալիս է պապիս մոտ՝ խորհուրդ հարցնելու:

– Եղբա՛յր ջան, ախր է՛դ կոմսոմոլներն իմ տեղը շատ են նեղել: Ի՞նչ անեմ, ինձ ստիպում են մորուքս խուզել, թե չէ՝ վատ կլինի…

ГА "Национальная б-ка Н. И. Гаторского"

– Ա՛յ եղբայր, բա դու չե՞ս տեսնում, թե ինչ է կատարվում աշխարհում. որ ասում են, դու էլ սափրվիր, էլի՛, մազը ոչինչ չի որոշում, որ լավ բան լիներ, ամեն տեղ չէր բուսնի, – կես կատակ, կես լուրջ խորհուրդ է տալիս եղբայրը: Տեր Հայրապետն ստիպված սափրում է մորուքը, բայց շուտով դարդից հիվանդանում ու մահանում է: Դրանով էլ վերջանում է մեր տոհմի և մեր գյուղի հոգևոր կյանքը:

Մի անգամ ես հարցրի մորս, թե՝ արդյո՞ք բեկն այդքան հարուստ էր, որ նրան աքսորեցին: Նա պատասխանեց.

– Ա՛յ որդի, ի՛նչ հարուստ, ի՛նչ բան: Նրա կոչումն էր բեկ. մեջտեղը բան չկար: Քաղաքից որ մի հյուր էր գալիս նրանց տուն, գալիս էին մեր ինքնաեռը տանելու, որը միակն էր գյուղում: Նա հասարակ մարդ էր. մի «նոքար» ուներ, որի հետ նա հավասար աշխատում էր և էդ նոքարին այնքան էր լավ վերաբերվում, որ շատերը կուզեին նրա տեղը լինել: Հիմիկվա մեր շատ ղեկավարներ հազար անգամ նրանից հարուստ են, բա ինչո՞ւ նրանց Սիբիր չեն քշում…

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՐ

Իսկ կյանքը շարունակվում էր՝ վերափոխվելով, ու ես էլ նրա հետ հասակ էի առնում: Մանկությունս, ինչքան էլ այն դառն ու դժվարին էր, չեմ մոռացել: Մանկությանը փոխարինեց պատանեկությունը՝ իր հետ բերելով մաքուր ու զուլալ մի զգացմունք՝ անկրկնելի ու անմոռանալի սերը: Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում, քանի որ իմ առաջին սերը չմնաց հեռվում՝ որպես քաղցր հուշ: Այն մինչև օրս ինձ հետ է՝ հոգեպես և ֆիզիկապես… Ցավոք, դա հազվադեպ է պատահում, և ես հպարտ եմ, որ կնոջս հետ միասին կարողացանք դիմանալ բազմաթիվ փորձությունների ու պահպանեցինք մեր սերը:

Գյուղից քիչ հեռու մի հիասքանչ այգի կար, որը «Քյահրիզի բոստաններ» էին անվանում: Մայրս մի քանի տարի այդ այգու պահակն էր, իսկ ես համարյա ամեն օր այնտեղ էի գտնվում՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Այգու ցանկապատն էի նորոգում փշե մացառներով, ջրում լոբու, վարունգի ու մյուս բույսերի մարգերը: Ազատ ժամանակ նստում էի այգու ծառերի տակ ու գիրք կարդում: Կարդում էի հափշտակված. առանձնապես ինձ գերում էր պոեզիան՝ սկսած հայ մեծ բանաստեղծներից, մինչև հայերեն թարգմանված և մեր գրադարանի դարակներում եղած աշխարհի հայտնի բանաստեղծների ստեղծագործությունները: Կարդալն ինձ համար մոլուցքի պես մի բան էր, առանց որի չէի պառկում և

ГАУ РК "Национальная библиотека им. И.Г. Чавчавадзе"

շատ ժամանակ գիրքը կրծքիս վրա էի քնում՝ դրա համար մորս արդարացի թոնթորանքը վաստակելով: Ամենասիրելին, իհարկե, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր՝ իր արտաքուստ պարզ, բայց շատ խորն ու իմաստուն տողերով՝ սկսած «Շունն ու կատուն»-ից մինչև անկրկնելի «Անուշ»-ը: Նրա շատ ստեղծագործություններ անգիր գիտեի: Եվ նա եղավ իմ առաջին ուսուցիչն ու ոգևորողը: Նա, ասես, իմ անփորձ ու անմեղ ձեռքը բռնեց և ստիպեց գրել իմ առաջին բանաստեղծությունը, սովորեցրեց դիմագրավել ինձ պատահած կյանքի դաժան հարվածներին, ներշնչեց այս աշխարհին մի լավ բան թողնելու գաղափարը: Այժմ արդեն չեմ հիշում իմ գրած առաջին քառյակները՝ իհարկե սիրո թեմաներով, թեև ես դեռ չգիտեի՝ ինչ է այն իրականում: Հիշում եմ միայն, որ տողերս նմանեցնում էի դասականների հայտնի ստեղծագործություններին՝ փոխելով մի քանի բառ, համարելով, որ նրանք այդպես պիտի գրեին: Պատկերցնո՞ւմ եք իմ միամտության չափը, որ համարձակվում էի այդպիսի հիմարություններ անել: Բայց, բարեբախտաբար, դա երկար չտևեց, և ես պատռեցի իմ այդ «գլուխգործոցները» ու սկսեցի ինքս հորինել փոքրիկ բանաստեղծություններ: Դրանք ինձ սկզբում դուր էին գալիս, բայց հաջորդ օրն ընթերցելով, պատռում էի առանց ափսոսալու, նորը գրում: Այդպես կամաց-կամաց այն ինձ տարավ մի ճանապարհով, որով շատերն են գնում, սակայն քչերին է հաջողվում դա համարել կյանքի նպատակ ու հասնել որոշակի հաջողությունների: Այդ ճանապարհն ինձ տարավ մի ուրիշ աշխարհ՝ լի հազար ու մի դժվարություններով ու հիասթափություններով: Ճանապարհ, որն սկզբում այնքան դյուրին ու հարթ էր թվում, բայց, ընթերցելով ինձ հայտնի համարյա բոլոր գրողների, առանձնապես՝ հայ գրողների ինքնակենսագրությունները, համոզվեցի, որ ես չարաչար սխալվում էի. նրանք համարյա բոլորն էլ շատ դժվար ճամփա են անցել, մինչև ճանաչման են հասել ու գնահատվել՝ ապրելով նյութական ծանր պայմաններում, սպասելով մի բարի հովանավորի, որը կօգնի տպագրել իրենց ստեղծագործությունները, ենթարկվելով գրաքննադատների ու իրենց ժամանակի իշխանությունների դաժան հալածանքներին: Նույնիսկ ժամանակակից տաղանդավոր բանաստեղծների՝ Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի և մյուսների շատ ստեղծագործություններ չէին տպագրվում, առանձնապես եթե դրանք Արևմտյան Հայաստանին, Մասիս սարին ու Ղարաբաղին էին վերաբերվում: Էլ չեմ ասում Ղարաբաղի գրող-

ГАУ "ЦЕНТР ИМЕНИ М. Т. ЛОРИСА-МЕЛИКОВА"

ների վիճակի մասին, որոնք, ինչպես Պարոնյանը կասեր՝ «բանտի մեջ՝ բանտում» էին ապրում: Նրանց ոչ միայն չէին աջակցում այն ժամանակվա մարզային իշխանությունները, այլև, ենթարկվելով Ադրբեջանի իշխանությունների հրամաններին, հաճախ էլ հենց իրենք էին հալածում նրանց՝ մեղադրելով ազգայնական մտածելակերպի և մայր հայրենիքին նվիրված իրենց գրվածքների համար: Նրանցից «ամենավտանգավորներն», ինչպիսիք էին Բագրատ Ուլուբաբյանը, Բոգդան Ջանյանը, Ժան Անդրյանը, ստիպված հեռացան Ղարաբաղից, հակառակ դեպքում կարող էին նրանց հանդեպ ավելի դաժան միջոցներ ձեռնարկել:

Իմ պատանի հոգում օր օրի ավելի էր աճում սերը դեպի մայր հայրենիքը, և արյան կանչով ատելություն էր կուտակվում նրանց դեմ, ովքեր գերագույն նպատակ էին դրել՝ հայի ոտքը կտրել իր հարազատ Արցախից՝ շրջափակման մեջ պահելով այն: Ղարաբաղի մտավորականության սերուցքն ստիպված հեռանում էր իր պատմական հայրենիքից:

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Արդեն հասուն պատանի էի, երբ ինձ հետ պատահեց բնության անխուսափելի հրաշքը՝ իմ սրտում ծագեց առաջին սերը: Դա անցողիկ ու ժամանակավոր մի բան չէր կամ էլ՝ հմայվածություն, այլ մաքուր ու անարատ, միակ և անփոխարինելի զգացմունք էր: Մեր՝ առաջինը և, ի երջանկություն ինձ, նաև վերջինը, քանի որ, չնայած բազմաթիվ խոչընդոտների, մենք կամք ունեցանք պահպանելու այն և հասնելու մեր նպատակին՝ մինչև ծերություն: Այո՛, դա այն հազվագյուտ դեպքերից է, երբ առաջին սերն անցողիկ երազ չի մնում, այլ դառնում է իրականություն:

Աքսենյան գանգուր, սև մազերով աղջիկ էր, որը փոքրուց շրջկենտրոնում էր ապրել և ընտանիքի հետ նոր էր տեղափոխվել հայրենի գյուղ: Մեր առաջին հանդիպումները նրա հետ Քյահրիզի՝ «երեք ակնով աղբյուրի» մոտ էին, որտեղից նա հաճախ էր գալիս ջուր տանելու: Մեր մտերմությունն աստիճանաբար վերածվեց սիրո՝ փոխադարձ ու մաքուր զգացմունքի:

Ես չեմ ցանկանում իմ սիրո մասին պատմել, բայց հետագա իմ պատմությունն այս կամ այն կերպ առնչություն կունենա դրա հետ:

Ես ավելի ու ավելի շատ էի զբաղվում բանաստեղծություններ գրելով: Պատահում էր՝ օրը տասը-տասներկու բանաստեղծություն

ГАУ Институт им. И.Г.Эфендиева

էի գրում, հետո, շատերը չհավանելով, պատռում ու դեն էի գցում ու նորից գրում: Դե՛, երիտասարդ, սիրահարված տղա էի, ու գրածներիս մեծ մասը, հասկանալի է, սիրո թեմայով էր: Չգիտեի բանաստեղծություն գրելու տարրական կանոնները: Միայն գիտեի, որ վերջավորությունները պիտի իրար բռնեցնել, և վերջ: Բայց մտքերը գալիս էին ու գալիս: Նույնիսկ գիշերվա կեսին արթնանում և երազում հորինվածներս գրի էի առնում: Հետագայում ավելի հմտանալով՝ սկսեցի գրել հաջողված բաներ: Դրանցից շատերը կարդում էի ընկերներիս մոտ, որոնք սկզբում չէին հավատում, որ դրանց հեղինակը ես եմ, բայց համոզվելով դրանում, շատ էին հավանում և խորհուրդ էին տալիս գրածներս ուղարկել «Պիոներ կանչ» թերթին, բայց ես չէի համարձակվում: Ընկերներիցս շատերի սիրո նամակների հեղինակը ես էի ու երբեմն չափն անցնում էի նրանց գովելու մեջ: Իհարկե, լավ ճանաչելով իրար, աղջիկները գլխի էին ընկնում, թե ով է գեղեցիկ քառյակների հեղինակը, և գործին օգնելու տեղ՝ հակառակն էր ստացվում: Հիշում եմ՝ մի անգամ, երբ ընկերոջս փոխարեն հերթական սիրո նամակն էի գրել, ու մենք սպասում էինք պատասխանի, հասցեատեր աղջիկը, ինձ տեսնելով փողոցում՝ ծիծաղելով կատակեց.

– Ա՛յ տղա, որ նամակը գրում ես, վերջում քո անունը գրիր, է՛լի, ինչո՞ւ ես խեղճ տղայի անունը գրում…

Ես, իհարկե շփոթված, ժխտեցի իմ հեղինակ լինելը, բայց եղածը եղած էր, ու դրանից հետո աշխատում էի նման բան չանել, որովհետև ինձ արդեն բացահայտել էին:

Իմ պատանեկության տարիներին սիրո նամակներ համարյա բոլորն էին գրում և իրենց սերը նամակով էին հաղորդում սիրեցյալին՝ ընկերուհու կամ ընկերոջ միջոցով, չնայած՝ հաճախ հենց միևնույն դասարանում էին սովորում, նույնիսկ մի նստարանի էին նստում: Ներկայիս երիտասարդներին դա, իհարկե, ծիծաղելի կթվա, քանի որ նրանք ապրում են ուրիշ կյանքով ու այլ բարոյական չափանիշներով: Իսկ իմ հասակակիցները լավ գիտեն, որ դա իսկապես եղել է: Եվ գիտե՞ք ինչ՝ ես ամենևին էլ չեմ ափսոսում, որ այդ ժամանակներում եմ ծնվել, երբ համեմատում եմ օր օրի վերացող մեր բարի, զուցե և միամիտ բարոյականության ընկալումն այն բանի հետ, որ ներկայիս ինֆորմացիայի այս քաոսի մեջ կորչում է մարդուն մարդ պահելու համար այնքան կարևոր մաքուր, իսկական, ազգային նկարագիր ունեցող բարոյականությունը: Այդ կորստի հետևանքն է, որ հոգեպես հարուստ մարդը վերածվում է մի

ГАУГК "ЛИТЕРАТУРНЫЙ ИНСТИТУТ"

ուրիշ տեսակի՝ առանց հոգևոր արժեքների, փողի ու շվայտության գերի մի էակի, որը, չնայած իր մտքի հզոր թռիչքին, չի նկատում, որ իր ընտրած ճանապարհը տանում է դեպի այն եզրագիծը, որը չէր ցանկանա տեսնել մեր Արարիչը, ու թող Աստված փրկի մեզ այդ անորոշությունից:

ԱՌԱՋԻՆԸ

Երբեք չեմ մոռանա գարնանային այն օրը, երբ իմ առաջին բանաստեղծությունը տպագրվեց Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» հայերեն թերթում: Այն նվիրված էր Յուրի Գագարինի տիեզերք թռչելուն և բաղկացած էր չորս տնից: Ապրիլյան այդ օրն անձրև էր մաղում և, ձանձրույթից խուսափելով, ես դուրս եկա գյուղամեջ, ուր սովորաբար հավաքվում էին գյուղի տղամարդիկ և զրուցում զանազան թեմաների շուրջ՝ սկսած գյուղի նորություններից մինչև երկրի վերջին իրադարձությունները, որոնք տպագրվում էին թերթերում: Երբ տեղ հասա, այնտեղ՝ խանութի սրահում շատ մարդ էր հավաքվել՝ պատսպարվելով անձրևից: Երբ մոտեցա, նրանք մի տեսակ զարմացած հայացքով նայեցին ինձ, ասես առաջին անգամ էին տեսնում: Իրար մեջ ցածր ձայնով համաձայնության գալով՝ ինձ մոտեցավ ուսուցիչ Գրիգորյանը և հարցրեց.

– Միշա՛, մի բան հարցնեմ, ճիշտը կասե՞ս:

Ես զարմացած անսպասելի հարցից՝ պատասխանեցի.

– Իհարկե՝ այո, իսկ ի՞նչ է պատահել:

– Դու «Կոմունիստ» թերթին նյո՞ւթ ես ուղարկել, այսինքն՝ բանաստեղծություն…

Ես անսպասելիությունից շփոթվեցի, մինչև վերջ չիմանալով, թե ինչ է կատարվել, ու ցածրաձայն, ասես հանցագործության մեջ էի բռնվել, պատասխանեցի՝ այո: Հանկարծ բոլորն սկսեցին ինձ շնորհավորել ու գովել: Սկզբում ես չէի հասկանում, թե վերջապես ինչ է կատարվում: Այո՛, ես իսկապես բանաստեղծություն էի ուղարկել թերթին՝ նվիրված Գագարինին, բայց չէի հավատում, որ այն կտպագրվի, քանի որ դրանից առաջ նրանց ուղարկել էի հայրենասիրական մի քանի բանաստեղծություն, բայց հույսս կորցրել էի, որ դրանք կտպագրվեն: Հավաքվածների կասկածը ցրելու համար՝ ես արտասանեցի իմ գրածը: Բոլորը ծափահարեցին ու շնորհավորեցին ինձ, իսկ ես, նրանցից առնելով թերթը, գժի պես փախա տուն ու հազար անգամ կարդացի իմ առաջին

ГАУ Республиканская библиотека "Ленинского"

տպագիր գրվածքը: Մեկ տարի հետո ես մեկնեցի Երևան՝ ուսումս շարունակելու:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ես պետք է ընդունվեի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, բայց չհաջողվեց: Չհաջողվեց ոչ թե այն բանի համար, որ չկարողացա ընդունելության քննությունները հանձնել, այլ անձնական լուրջ պատճառներով: Ես քննություն հանձնեցի Էլեկտրամեխանիկական տեխնիկումում՝ ջերմատեխնիկի մասնագիտությամբ, այն հույսով, որ հետագայում կհասնեմ իմ նպատակին…

Ես արդեն ուսանող էի: Չնայած հազար ու մի դժվարություններին, որոնցով անցա սովորելու ընթացքում, դրանք երջանիկ տարիներ էին: Առաջին անգամ էի իմ երազած ու սիրած քաղաքում, հիանում ու հպարտանում էի նրա վարդագույն, գեղեցիկ շենքերով, շքեղ, անգերազանցելի հրապարակով, օպերայի և բալետի հոյակապ պալատով: Մի խոսքով, անչափ հիացած էի Հայաստանի հինավուրց մայրաքաղաք Երևանով:

Առաջին ուսանողական տարին ես վարձով էի ապրում, և տունը հենց Մատենադարանի մոտ էր. իմ աչքի առաջ էր քանդակվում Մեսրոպ Մաշտոցի արձանը: Ամեն օր, դասերից վերադառնալիս, կանգնում ու երկար նայում էի, թե ինչպես են վարպետները գիպսե նախօրինակից բազալտե հսկա ժայռակտորը վեր ածում անմահ մի ստեղծագործության: Չեմ կարող իմ երախտագիտությունը չհայտնել մորաքրոջս աղջկան՝ Քնարիկ Դավթյանին: Նա բժշկուհի էր, աշխատում էր Ֆիզիոլոգիայի ինստիտուտում, հմուտ թերապևտի համբավ ու հարգանք ուներ: Նրան շատ բաներով եմ պարտական և շատ եմ ափսոսում, որ չկարողացա ոչնչով երախտահատույց լինել այդ մեծ հոգով մարդուն: Այդ տարիներին էր, որ կառուցվեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, դրվեց Սայաթ-Նովայի հուշարձանը, տեղի ունեցավ առաջին ուսանողական ցույցը՝ պահանջելով մեր հողերի վերադարձը:

Այդ տարիներին էր, որ «Ավանգարդ» թերթում տպագրվեցին բանաստեղծություններս, և ամենագլխավորը՝ կայացավ իմ հանդիպումը մեծ բանաստեղծ Պարույր Սևակի հետ:

Դա շատ անսպասելի և մի փոքր էլ զավեշտական դեպք էր: Գնացել էի «Ավանգարդ» թերթի խմբագրատուն՝ խմբագիր Փոշոտյանի

ГАУ "ЦЕНТР ИНФОРМАЦИИ ИМ. Е.ЧАРЕНЦА"

հետ հանդիպման, որը մորաքրոջս աղջկա շնորհիվ խոստացել էր ծանոթանալ իմ գրվածքներին և իր կարծիքը հայտնել:

Երբ ներս մտա նրա գրասենյակ, տեսա՝ երեք տղամարդ նստած վիճում էին ինչ-որ թեմայի շուրջ: Ներողություն խնդրեցի խանգարելու համար և ցանկացա դուրս գալ ու դուռը փակել: Բայց նրանցից մեկը՝ անսովոր դեմքով, որն առանձին նստած էր փոքր բազկաթոռին, ոտքը ոտքին գցած, ինձ նայելով՝ զարմացած հարցրեց.

– Սպասի՛ր, ա՛յ տղա, ո՞ւր ես փախչում, ո՞ւմ մոտ ես եկել, ի՞նչ գործով:

Ես կանգ առա և ամաչելով ասացի, որ ընկեր Փոշոտյանի մոտ եմ եկել՝ ձեռքիս տետրը թիկունքիս ետևում թաքցնելով:

– Հա՛, հասկացանք, մի՛ գնա,– շարունակեց նույն տարօրինակ դեմքով մարդը, որն ինձ շատ ծանոթ թվաց, բայց որտեղից՝ չէի կարողանում մտաբերել:

– Ի՞նչ ես լռել, ա՛յ մարդ, տղան քո մոտ է եկել,– ասաց նա՝ շրջվելով դեպի սեղանի մյուս ծայրին նստածին: – Ընդունի՛ր նրան, իսկ եթե մենք խանգարում ենք, կարող ենք գնալ:

– Ի՞նչ ես ասում, Պարո՛ւյր, ճիշտ հակառակը. գուցե հենց դուք եք հարկավոր, եթե սա այն տղան է, որին բժշկուհին է ուղարկել,– վերջապես խոսեց Փոշոտյանը: – Ինչքան գիտեմ՝ նա բանաստեղծություններ է գրում: Լավ կլիներ՝ աչքի անցկացնեիր ու քո կարծիքն ասեիր: Տղան ղարաբաղցի է, նոր է եկել, ուսանող է, միգուցե նրանից մի բան դուրս գա, ո՛վ գիտի, – կատակեց նա:

– Հա՛,– հանկարծ աշխուժացավ տարօրինակ դեմքով մարդը, – ևս մի զոհ մեր գրականությանը: Տո՛ւր տետրդ, մի՛ ամաչիր, մեկ էլ տեսար մի հետաքրքիր բան գտանք այնտեղ,– շարունակեց կատակել նա:

Ես մնացել էի սառած, բոլորովին չէի սպասում այդպիսի ընթացքի, և մինչ նա աչքի էր անցկացնում իմ «գլուխգործոցները», ես սպասում էի՝ ինչպես մեղավորը դատարանի առջև: Փոշոտյանն ինձ ձեռքով նշան արեց նստելու, բայց ես մնացի կանգնած՝ սպասելով ավելի շատ մերժումի խոսքերի, քան դրական կարծիքի: Դեռ չգիտեի, թե ով է իմ գրվածքների կարդացողը. եթե իմանայի, չգիտեմ, թե ինչ կլիներ ինձ հետ:

Արագ աչքի անցկացնելուց հետո, նա փակեց տետրը, ապա նորից բացեց այն ու կարդաց բարձրաձայն.

ГАУ РА "Национальная библиотека"

Մենք քարից անգամ մեռաքս ենք քաշել,
Ամպերից զոռով անձրև ենք քամել,
Սայթաքել հաճախ լերկ քարի վրա,
Սակայն մեր ցավը մենք ենք ամոքել:

Նա տետրը վերադարձրեց ու, ինձ դիմելով, ասաց.

– Սկզբի համար վատ չէ՛, տղա՛ ջան, ես լավ գիտեմ, որ Ղարաբաղում տաղանդավոր մարդիկ շատ են եղել ու կան: Իսկ քեզ խորհուրդ կտամ շատ աշխատել գրածներիդ վրա. մեջդ կայծ կա, բայց աշխատիր այն կրակ դարձնել, այլապես կմարի հողմերից, որոնք միշտ կփչեն հակառակ ուղղությամբ: Հա՛, մի բան էլ՝ երբ մի բան է գալիս գլուխդ և գրի ես առնում, այդ նույն օրը մի կարդա, այլ՝ մյուս օրը: Կարդա՛, պատռի՛ր ու նորից գրիր, և այդպես մի քանի անգամ, մինչև գրածդ հասունանա: Ես, օրինակ, մի տասն անգամ պատռում եմ,– ասաց ու քա՛հ-քա՛հ ծիծաղեց:

Նրան միացան մյուսները, բայց հետո հանկած լռեցավ ու ասաց.

– Շարունակի՛ր գրել…

Նստածներից մեկն ինձ դիմելով՝ հարցրեց, թե ի՞նչ ժամանակակից գրողների գիտեմ, և ես ասացի իմ իմացածների անունները՝ իհարկե նշելով Հովհաննես Շիրազին ու Պարույր Սևակին: Նրանք աշխուժացան ու հարցրին.

– Օրինակ, եթե Սևակը մեզանից մեկը լիներ, կճանաչեի՞ր:

Ես շփոթված նրանց էի նայում, ու հանկարծ հայացքս կանգ առավ նրա վրա, և սիրտս սկսեց ավելի արագ բաբախել: Այո, նա էր՝ մեծ բանաստեղծը. ինչպե՛ս ես չկարողացա ճանաչել այդ անսովոր դեմքով, խորաթափանց աչքերով, ոտքը ոտքին գցած մարդ-հանճարին, որն արժանի համարեց կարդալ իմ գրածը և գնահատական տալ: Ես ամոթից քիչ էր մնում գետինը մտնեի. ախր գրքի նկարին շատ չէր նման…

Վերջապես «բացահայտված» Սևակը հանդիմանեց նրանց.

– Ի՞նչ եք տղայի հոգու հետ խաղում, նա միայն նկարով գիտեր ինձ, որտեղից իմանար, որ ինձ նման տգեղը կարող է Սևակի նման հայտնի մարդը լինել,– ասես հասկանալով ինձ՝ ժպտալով ասաց նա: – Իսկ դու մի՛ նեղացիր մեզանից, եթե կատակը չընդունես՝ բանաստեղծ չես դառնա:

Ես չեմ հիշում, թե ինչպես դուրս թռա խմբագրությունից ու հասա պուրակ, նստեցի նստարանին և երկար ժամանակ ուշքի չէի գալիս ստացած տպավորությունից:

ГАУФК "МЕЛИКСЕТ ДЕ Ш. Г. ГЕОРГИЕВСКОГО"

Հիշում եմ՝ մի օր լսեցի, որ պոլիտեխնիկական ինստիտուտում ուսանողները հանդիպում են կազմակերպել Հովհաննես Շիրազի հետ, և մենք ընկերոջս՝ Արտաշեսի հետ որոշեցինք անպայման մասնակցել այդ հանդիպմանը: Բայց պարզվեց, որ դա այնքան էլ հեշտ չէր, քանի որ երբ տեղ հասանք, դահլիճում ասեղ գցելու տեղ չկար, ու մենք մի կերպ ներս խցկվեցինք միջանցք: Սպասում էինք Շիրազի գալուն, իսկ նա ուշանում էր: Մենք արդեն անհանգստանում էինք, երբ վերջապես նա եկավ և մեր բուռն ծափահարությունների ուղեկցությամբ, գլխի՝ առյուծի բաշի պես ալեհեր մազերը մի քիչ ցրված, բարձրացավ բեմ: Մենք լսեցինք նրա երկար հայրենասիրական ելույթը, որը երբեմն ընդհատվում էր ծափահարություններով: Հիշում եմ, որ ուսանողներից մեկը նրան նվիրված ոգեշունչ մի բանաստեղծություն ընթերցեց, որից հետո Շիրազը, շնորհակալություն հայտնելով, հարցրեց նրա անունը: Երիտասարդը պատասխանեց, որ անունը Ջիվան է: Շիրազը մռայլվեց ու ասաց.

– Լա՛վ տղա ես, լավ էլ գրում ես, բայց ափսոս, որ անունդ հայկական չէ: Երբ ենք վերջապես սովորելու մեր երեխաների անունները մերը՝ հայկականը դնել: Ինչո՞ւ ոչ մի ուրիշ ազգ իր երեխայի անունը Հայկ կամ Վարդան չի դնում, մտածե՛ք այդ մասին…

Ուսանողական առաջին տարին շատ դժվար էր ինձ համար՝ առանձնապես նյութական տեսակետից: Ուսանողական թոշակը քսան ռուբլի էր, որը հազիվ էր բավարարում գրենական զանազան պիտույքներ գնելուն, բայց քանի որ պետք էր տան վարձ տալ, սնվել և այլն, ես ստիպված աշխատանք էի փնտրում՝ դասերից ազատ ժամանակ փող վաստակելու համար: Վերջապես կարողացա աշխատանքի ընդունվել՝ որպես գիշերային պահակ: Գիշերները պահակ էի կանգնում, իսկ ցերեկը՝ դասերի գնում: Մի օր էլ, երբ արդեն հանրակացարանում ինձ տեղ էին հատկացրել, սենյակ վազեց Արտաշեսը, որի հետ միասին էինք ապրում, և ասաց, որ ռադիոյով իմ բանաստեղծություններն են կարդում: Շտապ միացրինք ընդունիչը, բայց ցավոք, լսեցինք միայն վերջին տան արտասանությունն ու մեկնաբանությունը՝ այնպիսի գովասանական խոսքերով, որ, ճիշտն ասած, ես սկսեցի կասկածել, թե խոսքն իմ մասին է: Բայց երբ հաղորդավարը վերջում ասաց, որ բանաստեղծությունն ամբողջությամբ տպագրված է «Ավանգարդ» թերթում, ես իսկույն

ГАУ РК "Национальная библиотека"

դուրս թռա չորրորդ հարկի սենյակից, աստիճաններից շատերի վրայից ցատկելով հասա թերթերի կրպակին: Գնեցի «Ավանգարդի» վերջին համարը, բացեցի էջերը և, իսկապես, այնտեղ զետեղված գտա իմ բանաստեղծություններից մեկը: Ես «յոթերորդ երկնքում էի». չէ որ դա այն բանաստեղծություններից մեկն էր, որին ծանոթացել էր Պարույր Սևակը: Նշանակում է, որ իզուր չեմ շարունակել գրելը, և դա ինձ նոր լիցք հաղորդեց ու վստահություն ներշնչեց իմ բանաստեղծական ունակությունների հանդեպ: Այդ օրը լավ եմ հիշում. 1967 թվականի ապրիլի 11-ն էր: Ահա այդ բանաստեղծությունը.

Ժայռը

Ասում են՝ ժայռը սիրտ չունի բնավ,
Նա ժայռ է միայն և ուրիշ ոչինչ,
Բայց ես չեմ ուզում հավատալ դրան.
Ժայռին աճել են և խոտ, և ծաղիկ:

Ասում են՝ ժայռը չոր է ու կոպիտ,
Քարը չի կարող արտասվել ցավից,
Չեմ ուզում լսել կարծիքներ անմիտ.
Ժայռը փայլում էր վաղորդյան ցողից:

Ասում են՝ ժայռը չի կարող սիրել,
Մարդուն է տրված միայն սերը սուրբ,
Չեմ կարող դրան հավատալ երբեք.
Նրա ծերպերում վարդեր կային նուրբ:

Ասում են՝ ժառը սիրտ չունի բնավ,
Ու նա բարկանալ չի կարող երբեք,
Դուք էլ ինձ նման փորձեք հավատալ.
Ժայռը, իմացե՛ք, կարող է ժայթքել:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ամառային արձակուրդներին վերադարձա գյուղ: Նորից երկար սպասումից հետո հանդիպեցի Աքսենյային: Իրար շատ բան ունեինք

ГАУ РК "Национальный им. И. Гаспринского"

պատմելու ու որոշելու: Պարզվեց, որ նրա հարազատները, որոնք ի սկզբանե դեմ էին մեր կապին, ստիպում էին նրան ամուսնանալ ուրիշի հետ՝ օգտվելով նրանից, որ ես Երևանում էի ու չէի կարող արգելք լինել դրան: Մի խոսքով, մեր սիրո դեմ դավադրություն էր կազմակերպվում: Դե՛, մենք էլ որոշեցինք մեր ձևով լուծել այդ հարցը:

ՓԱԽՈՒՍՏ

Մենք որոշում կայացրինք՝ չկորցնել այդքան տարվա մեր մեծ սերն ու, հետևանքների մասին անգամ չմտածելով, որոշեցինք ամուսնանալ՝ առանց որևէ մեկին զգուշացնելու: Դե, ջահել էինք, առանց երկար-բարակ խորհելու, պայմանավորվեցինք միասին հեռանալ գյուղից: Մյուս օրը, հենց մեր սովորական ժամադրության վայրում հանդիպեցինք ու հեռացանք մեր գյուղից դեպի Տոնաշեն, որտեղ մորս կողմից պապիս ու քեռիներիս տներն էին: Գյուղը, որ պիտի գնայինք, բավականին հեռու էր մերից, բայց մենք դա ամենևին չէինք զգում: Իրար ձեռք բռնած, գնում էինք՝ հազար ու մի երազանքներով լի ապագայի պլաններ կազմելով:

Բնությունը մեր շուրջը հիասքանչ էր: Մենք կածաններով, հարյուրավոր կեռմաններով թավուտ անտառի ծառերը շրջանցելով՝ իջնում էինք դեպի Թարթառ գետի հունը, որի աղմուկը դեռ հեռվից էր գալիս և ամեն քայլի հետ ավելի ու ավելի էր ուժեղանում:

Մեր շուրջն անտառ էր: Դարավոր կաղնիներն, իրենց մամռոտ ու կուռ բազուկներով իրար գրկած, ծածկել էին արևի լույսը: Ճանապարհի կողքերից վախեցած վեր էին թռչում խայտաբղետ փետուրներով տարբեր թռչուններ ու կորչում թավուտներում:

Վերջապես հասանք կամրջին, որը սրբատաշ հսկա քարերից կամարված մի հոյակապ շինություն է: Այն, ասես, մի պահ սանձում էր լեռներից գահավիժող, ափերի ժայռերը լիզող զժված գետը: Ի միջի այլոց, այդ կամուրջը կառուցել է իմ պապը՝ Սարգիս Հայրապետյանը, որի մասին գրառում կա կամրջի կամարին: Ափսո՛ս, որ կառուցման թիվը չեմ հիշում: Գետը պղտոր էր ու վարարած. երևի սարերում անձրև էր տեղացել ու գժվեցրել նրան: Հսկա ալիքները՝ փրփուրը բերանին, ափերի գլաքարերին զարնվելով, պտույտ էին տալիս մի պահ, ապա գահավիժում ու կորչում կամրջի տակ, այնտեղից դուրս հորդում նոր ուժով և շարունակում իրենց ճանապարհը: Ես շատ անգամ էի անցել այդ կամրջով, և ինձ համար դա սովորական

ГАУ РК "Национальная библиотека Республики Татарстан"

բան էր, բայց Աքսենյան շատ էր վախեցած այդ տեսարանից, քանի որ առաջին անգամ էր այն տեսնում: Բայց իմ ձեռքից բռնած՝ նա անվարան գնաց առաջ: Անցնելով կամուրջը՝ մենք ասես հետևում թողեցինք անցած կյանքը՝ բռնելով դեպի անհայտ ապագա տանող մի ճանապարհ, որն Աստծո կամքով մենք անցանք միասին՝ հաղթահարելով հազար ու մի փորձություն:

Գետի ափին մի փոքրիկ գյուղ կա, որին Գետին գոմեր են անվանում: Այն ավելի շուտ Տոնաշենից պոկված մի քանի տներ էին, որոնք երևի կառուցվել էին գետի հունի մոտ գտնվող այգիները մշակելու, ինչպես նաև՝ գետի վտակների վրա գործող ջրաղացների պատճառով, որոնք դարեր շարունակ ապահովում էին շրջակա գյուղերի պահանջմունքները՝ էլեկտրականության բացակայության և, նույնիսկ, այն լինելու տարիներին: Մինչև Տոնաշեն մի քանի կիլոմետր էր մնացել: Ճանապարհը զառիթափ, քարքարոտ ու խորդուբորդ էր, բայց մենք դա չէինք զգում: Վերջապես հասանք գյուղ: Քանի որ մորաքրոջս տունը գյուղի ծայրամասում էր, հենց այնտեղ էլ մտանք:

Տնեցիները մեզ տեսնելով՝ շատ ուրախացան ու զարմացան, բայց իմանալով ճշմարտությունը, մեզ մի քիչ հանդիմանելուց հետո, շնորհավորեցին և կանչեցին քեռուս և մյուս բարեկամներիս: Մի քանի օր մնալով այդտեղ՝ վերադարձանք գյուղ՝ արդեն որպես ամուսիններ: Մյուս օրը՝ 1964 թվականի հունիսի տասնվեցին, զազգում հաստատեցինք մեր ամուսնությունը: Աքսենյայի հարազատները, փաստի առաջ կանգնելով, հաշտվեցին եղածի հետ, ու այդ աշնանը մենք մեկնեցինք Երևան: Աքսենյան ընդունվեց մանկավարժական ուսումնարանի գրադարանային բաժին՝ հեռակա ուսուցմամբ, իսկ ես շարունակեցի ուսումս տեխնիկումում:

Բազում դժվարություններ մենք հաղթահարեցինք՝ մինչև ուսանողական տարիների վերջը, որի մասին չեմ ուզում խորանալ, դա մի առանձին պատմություն է:

1967 թվականի օգոստոսին, ստանալով դիպլոմ, որոշեցի աշխատանքի անցնել Ստեփանակերտում, ավելի ճիշտ՝ «Ղարմետաքս» կոմբինատում՝ որպես շոգեուժային տնտեսության պետ:

«Ղարմետաքս» կոմբինատը Ղարաբաղի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունն էր: Այնտեղ ընդունվել՝ աշխատելու որպես ամենապատասխանատու տեղամասի պետ՝ մեծ վստահություն էր ինձ նման անփորձ երիտասարդի հանդեպ, բայց

ГАУК "Национальная библиотека им. М. Горького"

իմ ավելի քան քսան տարվա աշխատանքով ես ապացուցեցի, որ ընտրությունն արդարացի էր:

ԳԼՈՒԽ Բ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ: «ՂԱՐՄԵՏԱՔՍ» ԿՈՄԲԻՆԱՏ

1967 թվականի օգոստոսի մեկին աշխատանքի անցա «Ղարմետաքս» կոմբինատում: Սկսվեց իմ կյանքի մի նոր, մեծ շրջան, որը տևեց ուղիղ քսանհինգ տարի՝ մինչև այն օրը, երբ սկսվեց Արցախի ազատագրական պատերազմը:

«Ղարմետաքսը», ինչպես նշեցի, ամենախոշոր ձեռնարկությունն էր մարզում: Ես կուզեի մանրամասն պատմել նրա մասին, քանի որ կոմբինատն այժմ, ցավոք, գոյություն չունի: Շուշի քաղաքից արձակած առաջին իսկ հրթիռները քարուքանդ արեցին ու այրեցին արտադրական շենքերը, և ոչ ոք չփորձեց անգամ հանգցնել հրդեհը, քանի որ քաղաքում այդ ժամանակ ո՛չ լույս կար, ո՛չ ջուր և ոչ էլ վառելիք՝ հրշեջ մեքենաների համար: Բայց դրա մասին՝ հետո:

«Ղարմետաքս» կոմբինատը բաղկացած էր երեք հիմնական արտադրամասերից՝ կարժական, ոլորման և գործվածքային, որոնք իրենց հերթին ունեին մի շարք ենթաբաժիններ: Բացի այդ, կոմբինատի ռիթմիկ աշխատանքն ապահովելու համար կային մեխանիկական և էներգետիկայի բաժիններ, որոնք ղեկավարում էին Ռ. Սևումյանը, որը հետագայում դարձավ վերջին տնօրենը, Թ. Տերտերյանը և ես՝ շոգեուժային տնտեսության պետը: Այդ բաժինների շնորհիվ էր, որ ապահովվում էր ամբողջ կոմբինատի աշխատանքը: Կուզեի մանրամասն նկարագրել մետաքսե գործվածքի արտադրության պրոցեսը՝ այն ընթերցողների համար, որոնք պատրաստի մետաքսե նուրբ գործվածքը միայն վաճառասեղաններին են տեսել կամ հագել, իսկ թե ինչպես է այն գործվածք դառնում՝ շատ քչերը գիտեն:

Ղարաբաղի մետաքսը հայտնի է շատ վաղուց. այդ պատմության մասին գիրք կա տպագրված՝ Անդրանիկ Զախարյանի հեղինակությամբ (ի միջի այլոց, նա մոտիկ ազգականն է հայտնի հրապարակախոս Զորի Բալայանի): Այդ գրքում Զախարյանը տալիս է շատ արժեքավոր տեղեկություններ: Միայն այն կասեմ, որ նշանավոր «Մետաքսի ճանապարհը» անցնում էր հենց Ղարաբաղով և ոչ միայն անցնում էր, այլև նրա հանգրվաններից մեկը Շուշին էր:

ГАУ РА "Национальная библиотека Армении им. К. Постанджяна"

Դեռ անցած դարերում Քարին տակ և Խնձորեստան գյուղերում մետաքս էր արտադրվում, իսկ Շուշիում մետաքսագործական ֆաբրիկա կար, ուր գործվում էր Ղարաբաղի մաքուր ու նուրբ մետաքսե կտորը: Իսկ մետաքսե գործվածք ստանալու պրոցեսն հետևյալն է. մետաքսաթելի հումքը՝ բոժոժը, մենք մթերում էինք այն ժամանակվա մարզի հինգ շրջաններից, բայց դա շատ քիչ էր՝ բավարարելու համար կոմբինատի պահանջները, դրա համար էլ բոժոժի հիմնական մասը մենք ստանում էինք Միջին Ասիայից և Ադրբեջանի մի քանի շրջաններից: Հարյուրավոր տոննաներով, համապատասխան մթերապահեստների անբավարարության պատճառով, ամռան ամիսներին բոժոժի երեսուն կիլոգրամանոց պարկերը խոտի դեզերի պես դարսվում էին կոմբինատի ազատ տարածքներում՝ ծածկվելով բրեզենտե ծածկոցներով: Բոժոժը նախ տեսակավորվում էր, ապա՝ տեղափոխվում կարժական արտադրամաս, որը շատ աշխատատար, ծանր ու դժվարին աշխատանք է, կասեի՝ տանջալի: Հարյուրավոր բանվորուհիներ, հին հաստոցների մոտ կանգնած, կաթսայատնից մատակարարվող շոգու և եռման ջրի խառնուրդը լցնում էին չուգունե թասերի մեջ, հետո հատուկ չափաբաժիններով բոժոժը լցնում եռման ջրի մեջ, որը եփվելով սոսնձազրկվում էր: Բանվորուհիները, բոժոժից գտնելով շատ բարակ ու նուրբ թելի ծայրը, այն միացնելով մի քանի ուրիշ բոժոժների թելերի հետ, հագցնում էին հաստոցի հատուկ հարմարանքներին, որոնք էլ, իրենց հերթին, փաթաթում էին թելը հատուկ լիսեռների վրա՝ մինչև բոժոժի վերջին շերտին հասնելը, ապա լցնում էին նոր չափաբաժին, և այդպես շարունակ: Ստացված հումքը, որոշ պրոցեսներ անցնելով, տեղափոխվում էր ոլորման արտադրամաս:

Կարժական արտադրամասում, ինչպես նշեցի, ամենածանր աշխատանքն էր կատարվում: Ամբողջ ութ, իսկ երբեմն էլ տասը ժամ ոտքի վրա կանգնած, ձեռքերը գերտաք ջրի մեջ, որից շատ տհաճ հոտ էր փչում, բանվորուհիներն աշխատում էին ու դրա դիմաց ստանում չնչին աշխատավարձ: Բացի դրանից, կարժողուհիներից, չնայած տարբեր միջոցներով լվացվելուն, միևնույն է, մի քանի մետրից տհաճ հոտ էր զգացվում: Դեպքեր են եղել, երբ այդ պատճառով ամուսիններ են բաժանվել: Ոլորման արտադրամասում, նախնական ջերմամշակումից հետո ստանալով հումքը, այն տեղադրում էին ոլորող հաստոցների վրա, որոնց միջոցով, ըստ պահաջարկի, ստանում էին համապատասխան հաստության ու ոլորվածության թել: Դրանից հետո այն տեղափոխվում էր գործվածքային արտա-

ГАЗУРК "МОСКВИЧ" ИМЕНИ А.С.ПУШКИНА

դրամաս, ուր պատրաստվում էր հենքը, սոսնձավորումն ու կոճավորումը: Այնուհետև, գործվածքային հաստոցների վրա սկսվում էր Ղարաբաղի հայտնի մետաքսի գործումը: Կոմբինատն ուներ այնպիսի փառապանծ աշխատանքային հերոսներ, ինչպիսիք էին՝ Մ. Հովսեփյանը, Ք. Առաքելյանը, Ս. Սարինյանը, Ս. Օրբելյանը, Ռ. Պետրոսյանը և այլոք:

Այո՛, փառավոր կոլեկտիվ ուներ «Ղարմետաքս»-ը, որն՝ իմ այնտեղ աշխատելու ժամանակ, ղեկավարում էին Ս. Սիմոնյանը, Ս. Խաչատրյանը, Կ. Ավագյանը, Ռ. Աթայանը, Ռ. Սևումյանը (վերջին տնօրենը): Իսկ վերջին ժամանակներում կուսակցական կազմակերպության քարտուղարը Ռոբերտ Քոչարյանն էր, որը դարձավ Արցախի ազատագրական պայքարի ղեկավարներից մեկը, հետագայում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, ապա՝ նախագահը: Բայց դա հետո էր:

Ռոբերտն անմիջական ու ընկերասեր մարդ էր, բայց միևնույն ժամանակ՝ խստապահանջ: Դա հաճոյախոսություն չէ և ոչ էլ այլ բան, ուղղակի այդ գրում եմ, որովհետև երկար տարիներ աշխատել ենք իրար հետ, բազում անգամ մասնակցել զանազան միջոցառումների, և լավ գիտեի նրան: Ասում են՝ ժամանակները և հանգամանքները փոխում են մարդուն ու նրա բնավորությունը, բայց համոզված եմ՝ ոչ այս դեպքում:

Հինգ հազարանոց կոլեկտիվը երկհերթ աշխատօրվա ընթացքում արտադրում էր հազարավոր մետր գործվածք՝ հիմնականում մետաքսաթելով: Ցավոք, այդ հսկա կոմբինատի աշխատանքի արդյունքը Խորհրդային Միության մասշտաբով մնում էր ստվերում, որովհետև երկար տարիների ընթացքում Ադրբեջանի ղեկավարությանն ուղղված մեր խնդրանքը՝ ունենալ սեփական ներկման արտադրամաս, միշտ էլ մերժվում էր: Պատճառը մեկն էր՝ թույլ չտալ, որ Ստեփանակերտի անունը տարածվի ու նշանավոր դառնա: Ամեն օրվա արտադրանքը մեքենաներով տեղափոխվում էր ադրբեջանական Շեքի քաղաքը, որտեղ պատրաստի կտորը ներկվում էր ու հետո պիտակի վրա գրվում՝ «Պատրաստված է ք. Շեքիում»: Արդյունքում ստացվում էր, որ կտորը պատրաստած Ստեփանակերտի անունը ոչ մի տեղ, ուր առաքվում էր գործվածքը, չէին էլ իմանում:

Բացի իմ հիմնական աշխատանքից, ես շատ ակտիվ էի ու բազմաթիվ հասարակական աշխատանքներ էի կատարում՝ կուսկազմակերպության քարտուղարի տեղակալ, ժողովրդահսկողության

ГАУ РК "Национальная библиотека им. Г. Сундукяна"

փոխնախագահ, Ջրում խեղդվողների փրկության միության նախագահ, մասնակցում էի կոմբինատի թատերական ինքնագործ խմբի ելույթներին: Մի խոսքով, այնքան էի զբաղված այդ բոլորով, որ տան հոգսը մեծամասնությամբ ընկել էր կնոջս վրա՝ առանձնապես երեխաների ուսման ու խնամքի հոգսը: Այդ հասարակական աշխատանքներից միակ ձևականը Ջրում խեղդվողների փրկության միությունն էր, որ ինձ պարտադրվել էր, չնայած իմ այն արդարացմանը, որ ես ինքս լողալ չգիտեմ: Ինձ համոզեցին, որ դա պարտադիր չէ, և իմ պարտականությունն այն էր, որ ժամանակին հավաքեմ անդամավճարները և հանձնեմ քաղաքային միությանը: Դա նույնիսկ զավեշտական էր: Բանն այն էր, որ դա միակ ցուցանիշն էր, երևի, որ Ղարաբաղն անվիճելի կերպով գրավում էր առաջին տեղն Ադրբեջանում, իսկ Բաքուն՝ վերջինը, քանի որ ջրում խեղդվողներ մեզ մոտ չկային մի ամենապարզ պատճառով. որտե՞ղ պիտի խեղդվեին այդ դժբախտները, երբ ջուր չկար, որ մարդիկ խմեն, ուր մնաց թե խեղդվեին, եթե նույնիսկ շատ ցանկանային: Այսպիսով՝ հարյուր տոկոսով «կամավոր-ստիպողական» ձևով հավաքվում էր անդամավճարը, իսկ խեղդվողներ չկային, ուստի մենք միշտ առաջին տեղում էինք և ամեն տարի, որպես ակտիվ «փրկարարներ», պարգևատրվում էինք հուշանվերով ու փոխանցիկ դրոշով: Մի անգամ նույնիսկ կանչել էին Բաքու՝ զեկույցի…

Ջրի հարցն ամենացավոտներից էր ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ մարզի համար: Չնայած Ստեփանակերտի աջ ու ձախ կողմերի ձորերով վարար գետեր էին հոսում, բայց մինչև վերջին մի քանի տարիները ջուրը քաղաք էր մատակարարվում ինքնահոսի, առանց ֆիլտրացման: Հաճախ տների ծորակներից հոսող սրճագույն ջրի մեջ ջրիմուռներ և գորտերի թաթիկներ էին հայտնվում: Եղած ջրի մոտ հիսուն տոկոսն օգտագործում էր մետաքսի կոմբինատը: Իսկ շրջանների դրությունն ավելի վատ էր: Օրինակ, Մարտակերտի շրջանի ամենաջրառատ գետը Թարթառն է, սակայն շրջանի գյուղերից ոչ մեկը նրա ջրից չէր օգտվում, քանի որ նրանից հոսող արհեստական ջրատարներն այնպես էին նախագծված, որ ոչ մի հայկական գյուղի հողամասի միջով չէին անցնում, այլ ջուր էին մատակարարում՝ ադրբեջանական Միրբաշիրի և Աղդամի շրջանների դաշտերը ոռոգելու համար:

Այժմ վերադառնանք կոմբինատին: Այդ հսկա ձեռնարկությունն այն տարիներին ոչ մի կերպ չէր կարողանում կատարել վերևից արհեստականորեն նշանակված անիրական պլանը, որը

ГАУ РК "ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА"

որոշում էր Բաքվում նստած նախարարը: Այդ շինծու պլանները տրվում էին միայն ու միայն այն պատճառով, որ պլանը կատարելու դեպքում աշխատավարձի հավելյալ վարձատրություն չվճարվի, իսկ Շեքիի կոմբինատը, որը մեր արտադրանքով էր աշխատում, միշտ կատարում էր պլաններն ու դրա համար ստանում բարձր աշխատավարձ: Բացի այդ, կատարվում էին և ուրիշ խարդախություններ: Օրինակ՝ ստացվող բոժոժի որակը որոշվում էր ոչ թե մեզ մոտ, այլ Շեքի քաղաքում, և դրանից օգտվելով, Ադրբեջանի բոժոժ մթերող շրջանների մթերակայանների տերերն, իրենց մոտ ընդունված կարգով, կաշառում էին որակ որոշողներին, և արդյունքում՝ մեզ հանձնվող երրորդ կարգի բոժոժը հաշվվում էր առաջին կարգի: Ըստ այդմ էլ, մեզնից պահանջում էին առաջին կարգի արդյունք, որը փաստորեն հնարավոր չէր ստանալ: Բոլորը գիտեին այդ մասին, բայց ապացուցել հնարավոր չէր, քանի որ հետքերը շատ հեռու էին տանում, և ովքեր պիտի բացահայտեին այդ խարդախությունը, իրենք էլ մասն ունեին դրանից:

Մենք Աքսենյայի հետ սկզբում ապրում էինք վարձով և առանց որևէ տարրական հարմարությունների. մի հին, կիսաջարդված մահճակալ, որը մեզ էր տրամադրել տան տերը, լուցկիների ֆաներայից պատրաստված մի արկղ, որը ծառայում էր որպես սպասքի պահարան, մի անկողին, որը գյուղից էինք բերել: Իսկ զգեստապահարանի փոխարեն՝ պատին խփված մի քանի մեխեր, և այդ ամբողջ «հարստությունը»՝ վեց քառակուսի մետր մի նկուղային տնակում: Բայց դա մեզ չէր խանգարում երջանիկ զգալ: Հետո կամաց-կամաց ամեն ինչ իր տեղն էր ընկնում: Ծնվեց մեր առաջին երեխան՝ Դավիթը, ու մեզ բանվորական հանրակացարանում սենյակ տրամադրեցին: Կամաց-կամաց, երկուսով աշխատելով, տուն-տեղ ստեղծեցինք: Ինչպես ասում են՝ «կանաչ խոտին կրակ էինք վառել», ու այդ կրակը չմարեց: Քաղաքում մոտիկ բարեկամ չունեինք, բացի հորաքրոջս տղայից՝ Ռաֆայել Դավիդովից, որը շատ բանիմաց ու խելացի մարդ էր և շատ բանով էր օգնել մեզ՝ առանձնապես սկզբնական շրջանում, երբ դրա կարիքը շատ էինք զգում:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՌՕՐՅԱՆ

Ստեփանակերտը վաթսունական թվականների վերջերին, բացի մետաքսի կոմբինատից, ուներ նաև մի քանի ձեռնարկություններ՝ էլեկտրատեխնիկական, գորգագործական, կահույքի, կարի և մի

ГАУ РК "Национальный архив Республики"

քանի մանր արտադրություններ: Բայց յոթանասունական թվականներին, երբ Բաքվից հատուկ հանձնարությամբ մարզկոմի քարտուղար նշանակվեց Բորիս Կևորկովը, ամեն ինչ փոխվեց: Նա ազգությամբ հայ էր, բայց իր գործունեությամբ շատ ավելի մեծ վնասներ հասցրեց Ղարաբաղին, քան Ադրբեջանական ԽՍՀ կոմկուսի բոլոր ղեկավարները: Իր նշանակման առաջին իսկ օրերից նա սկսեց հալածանքը հայ մտավորականության դեմ: Նպատակը մեկն էր՝ ոչնչացնել այն ամենն, ինչը նրան թվում էր ազգայնական, ավելի կոնկրետ՝ հայկական: Այդ բոլորը նա անում էր կոպիտ, բռնապետական ձևով:

Այդ տարիներին Ղարաբաղից հեռացան, ավելի ճիշտ՝ վտարվեցին շատ մտավորականներ, որոնց շնորհիվ մարզում զգացվում էր հայաշունչ ոգին: Այդ բոլորն արվում էր նախօրոք լավ մշակված ծրագրով՝ թոզ փչելով մարդկանց աչքերին: Կառուցվեց մսի նոր կոմբինատ և նրան կից մսի թափոնների վերամշակման արտադրություն, որից այնպիսի սարսափելի հոտ էր փչում, որ մետաքսի կոմբինատում և հարակից թաղամասերում հնարավոր չէր մաքուր օդ շնչել: Քաղաքացիները, տարիներ շարունակ չունենալով սեփական արտադրության մսամթերք, այսինքն՝ երշիկեղեն, սկզբում ուրախ էին, որ վերջապես իրենցը ունեն, այլ ոչ թե ուրիշ տեղից բերվող անորակ, անհայտ ծագումով՝ հոտած երշիկեղենը: Կառուցվեց կոշիկի բավականին մեծ արտադրողականությամբ նոր գործարան: Առաջին հայացքից, կարծես, ամեն ինչ լավ էր, բայց հաշվարկն արված էր շատ հեռանկարային. նոր արտադրություններ կառուցվում էին, հաշվի առնելով պոտենցիալ աշխատուժի առկայությունը, բայց քաղաքը փոքր էր, և աշխատուժը հազիվ էր բավարարում մետաքսի կոմբինատի և մյուս արտադրությունների պահանջմունքները: Բանվորների պակասը լրացնելու պատրվակով՝ Բաքվի հրահանգով շրջակա ադրբեջանական գյուղերից ավտոբուսներով անասնապահ ադրբեջանցիներին տեղափոխում էին քաղաք, նրանք էլ աստիճանաբար մերվում էին քաղաքին: Նոր գործարանների կառուցումն էլ ավելի էր խթանում այդ շարժը: Նրանց համար կառուցվում էին հանրակացարաններ և բնակելի տներ, և այսպիսով արագորեն աճում էր ադրբեջանցի բնակչության տոկոսը քաղաքում, որը մինչ այդ ընդամենը յոթ տոկոս էր կազմում, իսկ սկսած յոթանասուն թվականից, այն աճում էր անշեղ կերպով: Հարց է ծագում՝ ո՞ւմ էր պետք կոշիկի ֆաբրիկայի բացումը, որի հումքն Ադրբեջանի կոշիկի գործարանների թափոններն էին, և

այնտեղ արտադրված կոշիկները ոչ ոք չէր գնում՝ անորակ լինելու պատճառով: Ֆաբրիկայի տարածքից անընդհատ ծուխ էր բարձրանում: Դա խոտանված արտադրանքն էին վառում, որոնք հարյուրավոր զույգերով էին հաշվվում: Գործարանի «վարպետներն» ադրբեջանցիներ էին, հավաքագրված բանվորներից շատերը՝ նույնպես, որոնց անորակ կարված արտադրանքը մնում էր պահեստներում:

Մարզի բոլոր շրջաններում կիրառվում էր նույն մեթոդը՝ փոխել մարզի էթնիկական հարաբերությունը՝ հօգուտ ադրբեջանցիների: Դա Ադրբեջանի ղեկավարների հիմական նպատակն էր: Նրանք ցանկանում էին այդ անել հենց հայի ձեռքով՝ հանձինս Կևորկովի: Տեսնելով, որ դա իրենց հաջողվում է՝ սկսվեց ադրբեջանցի մասնագետների տեղավորումը քաղաքի ու մարզի շրջանների կարևոր օղակներում՝ մարզկոմում, հիվանդանոցներում, գործարաններում և այլն:

Սկսվել էր մեծ շինարարություն՝ բնակելի տների կառուցման ոլորտում: Դա, իհարկե, ուրախացուցիչ էր տասնյակ տարիներով հերթագրված մարդկանց համար, բայց դա ևս չէր կատարվում մեծ հոգատարության պատճառով. արտահերթ բնակարաններ սկսեցին տրամադրվել ադրբեջանցիներին՝ «հրավիրված մասնագետ» լինելու քողի տակ, բացի այդ՝ քաղաքի բոլոր ծայրամասերում հողամասեր էին հատկացնում նրանց՝ տներ կառուցելու համար: Ստեփանակերտն առանց այդ էլ շրջապատված էր ադրբեջանաբնակ փոքրիկ գյուղերով, որոնք աճում էին մեծ արագությամբ, իսկ վերջին այդ «միջոցառումների» հետևանքով քաղաքն սկսեց առնվել կրկնակի օղակի մեջ, որի դառն արդյունքը մենք տեսանք ազատագրական շարժման հենց առաջին օրերին…

Բաքվից շաբաթական կես ժամ հայկական հեռուստահաղորդումներ էին տրվում, որի միայն անունն էր հայկական: Բացվում էր էկրանը, և հաղորդավարը, հայերեն լեզվով բարևելով, անցնում էր նորություններին՝ թե որ շրջաններում է հաջող ընթանում բամբակահավաքը, թե ուր է գնացել Հեյդար Ալիևը, ինչպես է հանդիպել Բրեժնևի հետ, նրա՝ Թուրքիա կատարած այցելության մանրամասնությունները, իսկ մեր մարզի մասին համարյա ոչինչ չէր ասվում: Նորություններից հետո հաղորդավարն ուրախ ժպիտով հայտարարում էր, որ հիմա կլսեք համերգ՝ Զեյնաբ Խանլարովայի կատարմամբ, և դրանով էլ «հայկական» հաղորդումն ավարտվում էր:

ГАУ РА "Национальная библиотека Армении им. Г. Гарегина Нжде"

Ութսունական թվականների ավարտին վերջապես սկսեց գործարկվել մարզի հեռուստակայանը, որը տեղադրված էր Շուշիում և փորձում էր հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն հաղորդումներ կազմակերպել, բայց հենց սկսվեց հակամարտությունը, այն սկսեց ծառայել հայերի դեմ ակտիվ պրոպագանդային, այսինքն՝ հենց դրա համար էլ այն ստեղծվել էր:

Ամեն տարի ավելացվում էր ռուսական դպրոցների քանակը քաղաքում՝ ի հաշիվ հայկականների: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է ասել, որ դրանում կար նաև հայ բնակչության մեղքը: Կար մի զորեղ պատճառ, որի համար շատերը ձգտում էին իրենց երեխաներին անպայման ռուսական դպրոց ուղարկել, որովհետև դպրոցն ավարտելուց հետո, բացի Երևանի բուհերն ընդունվելու հեռանկարից, ուրիշը չունեին, իսկ այնտեղ այնքան էլ գրկաբաց չէին ընդունում նրանց՝ մինչև վերջին դեպքերը: Պետք էր ապրել Ղարաբաղում այդ տարիներին՝ զգալու համար այն հզոր ճնշումը, որը մենք էինք զգում մեզ վրա: Եվ մենք ընտրում էինք չարյաց փոքրագույնը՝ երեխաներին տալ ռուսական կրթություն, որը նրանց տալիս էր բացարձակ առավելություն՝ խորհրդային ցանկացած բուհ ընդունվելու համար:

Արցախում այդ ժամանակ ոչ մի գործող եկեղեցի չկար, ոչ մի նոր ծնված երեխա չէր կնքվում, քանի որ ո՛չ կնքող կար, ո՛չ էլ՝ կնքելու տեղ: Հազվադեպ պատահում էր, որ երեխային տանում էին Էջմիածին՝ կնքելու, բայց դա ոչ բոլորը կարող էին անել, մյուս կողմից՝ խորհրդային համակարգն ասես հենց մեզ համար էր ստեղծված: Մեր կողքին ապրող ադրբեջանցիները, ինչպես անցած դարերում, իրենց երեխաներին թլպատում էին անխտիր, և ոչ մի կառավարություն այդ չէր արգելել, փոխարենը՝ քրիստոնեական ծիսակատարություններն արգելված էին, առանձնապես՝ Ղարաբաղում: Մենք՝ Ստեփանակերտում ապրողներս, որևէ դեֆիցիտ ապրանք գնելու համար, գնում էինք մոտ տասնհինգ կիլոմետր հեռու գտնվող այն ժամանակ ադրբեջանաբնակ Աղդամ քաղաքը, ուր շուկայում ամեն ինչ կարելի էր գտնել:

Ստեփանակերտում գործող միակ խոշոր մշակութային կենտրոնը Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնն էր, որտեղ աշխատում էին հայ թատրոնի անվանի դերասաններ Մարգո Բալասանյանը, Միքայել Հարությունյանը, Սուրեն Համզոյանը, Ժաննա Գալստյանը, որն Արցախյան պատերազմի կին

ГАУ РК "Национальная библиотека"

հերոսուհիներից առաջինն էր: Այդ ժամանակ թատրոնը հազիվ էր իր գոյությունը պահպանում՝ չնայած որ կոչվում էր պետական: Որևէ ֆինանսական ներդրում Բաքվի կողմից համարյա չէր կատարվում: Նա իր գոյությունը պահպանում էր քաղաքի բնակչության ջանքերի շնորհիվ, որի օգնությամբ էլ կարողացան պահպանել Ղարաբաղի վերջին մշակութային օջախներից մեկը: Գոյություն ունեին նաև մարզային և շրջանային ինքնագործ թատերական, երգ ու պարի խմբեր: Ստեփանակերտում լույս էին տեսնում «Սովետական Ղարբաղ», «Մետաքսագործ» լրագրերը, ինչպես նաև՝ շրջանային թերթեր: Ակտիվ գործում էր Գրողների միությունը, որի կազմի մեջ մտնող բանաստեղծների և արձակագիրների շնորհիվ էլ ազատության ձայնն Արցախում երբեք չլռեց: Նրանք առաջինն էին, որ իրենց ձայնը բարձրացրին ընդդեմ Ադրբեջանի կառավարության քաղաքականության: Հայ մտավորականությունը՝ առաջին հերթին այնպիսի գրողներ, ինչպիսիք են՝ Վարդան Հակոբյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Արմեն Հովհաննիսյանը, Միքայել Հովհաննիսյանը և մյուսները՝ անվանի գրող և հրապարակախոս Զորի Բալայանի գլխավորությամբ, միջուկն էին կազմում այն խմբի, որը դարձավ ապագա շարժման հիմնական ուժը:

Քաղաքի և շրջանների սննդամթերքի մատակարարումը կատարվում էր Բաքվից կամ Կիրովաբադի պահեստներից՝ ժամկետանց, անորակ մթերքներով: Թարմ տավարի միսը մեր մսի կոմբինատից տանում էին Բաքու, փոխարենը մեզ ուղարկում անհայտ թվականներից սառեցված միս: Կարագի համար հերթերը կանգնած էին գիշեր ու ցերեկ, իսկ ձեթի փոխարեն ստանում էինք բամբակի սերմերից քամված ինչ-որ խառնուրդ: Շշերի պարունակության կեսը նստվածք էր՝ երկար ժամանակ պահեստներում մնալու պատճառով: Դեռ մեր բախտը բերում էր, որ խոզի միսը Ղարաբաղից չէր արտահանվում և միակ մսամթերքն էր, որ ազատ կարելի էր գնել խանութներում, դա էլ այն պատճառով, որ ադրբեջանցիները խոզի միս չեն ուտում:

Տարին մեկ անգամ, արհմիության ջանքերով, էքսկուրսիա էր կազմակերպվում դեպի Երևան, որի նպատակը «Արարատ»-ի ֆուտբոլային խաղերից գոնե մեկին ներկա լինելն էր ու ամենակարևորը՝ սննդամթերք, առանձնապես՝ կարագ, երշիկեղեն ու հագուստ գնելն էր:

Ես, իհարկե, անպայման օգտվում էի այդ առիթից ու միանում գնացողներին: Ճանապարհը շատ երկար էր և անցնում էր ադրբե-

ГАУ РК "Национальная библиотека"

ջանական մի շարք բնակավայրերով: Առավոտ ծեգին ճանապարհվելով՝ երեկոյան էինք տեղ հասնում՝ անցնելով մոտ ութ հարյուր կիլոմետր: Մինչդեռ կար ավելի կարճ ճանապարհ՝ որը միտումնավոր կերպով չէր գործում:

Այդ ճամփորդությունների ժամանակ զանազան զավեշտական դեպքեր էին պատահում, որոնցից մի քանիսը կցանկանայի պատմել:

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մի անգամ՝ սովորականի պես մեկնում էինք Երևան, և մեզ միացավ տարեց մի փականագործ՝ Չերքեզ անունով: Հայ մարդ էր՝ ձիգ կեցվածքով ու երկար բեղերով: Նա նստել էր առջևի նստարանին և մեկ-մեկ դիտողություն էր անում ջահելներին, եթե նրանք, անեկդոտներ պատմելիս, անվայելուչ արտահայտություններ էին անում: Շատ չէինք հեռացել քաղաքից, երբ դեմ առանք քոչվոր ադրբեջանցի անասնապահների, որոնք գարնանը Հայաստանի սարերի արոտատեղերն էին քոչում՝ զբաղեցնելով ամբողջ ճանապարհը: Մի ոչխարի հոտը փոխարինում էր մյուսին: Շատ դժվար էր վարորդներին անցնել նրանց միջով, մանավանդ, երբ նրանք գնում էին մեքենային համընթաց: Մի խոսքով, Չերքեզը հորդորում էր ջահելներին, որ նրանք իջնեն ավտոբուսից ու ոչխարների միջով ճանապարհ բացեն մեզ համար, բայց ոչ ոք չուզեց իջնել: Չերքեզը ջղայնացած դիմեց վարորդին, որ դուռը բացի, և ինքը, իջնելով մեքենայից, սկսեց դես ու դեն քշել ճանապարհը փակած ոչխարներին, իսկ առավել համառներին, բրդերից բռնելով, մի կողմ էր քաշում: Մեկ էլ հանկարծ շան բարձր վնգստոց ու հաչոց լսեցինք, հետո էլ՝ Չերքեզի բղավոցը: Մեքենան կանգնեց, ու մենք բոլորս դուրս թափվեցինք ավտոբուսից, և ի՞նչ տեսնենք՝ Չերքեզը, հագի նոր կոստյումը վերից վար պատռված, կանգնած է ոչխարի հոտի մեջ, գոռում է և հայհոյում ու հետո էլ՝ մեզ մեղադրում կատարվածի համար: Դու մի ասի, էս խեղճ մարդը, հովիվի ահռելի բրդոտ գամփռը շփոթելով ոչխարի հետ, բռնել է նրա մեջքից՝ ուզենալով մի կողմ քաշել: Դե, հետևանքը հասկանալի է: Ու դեռ բախտը բերել էր, որ գայլախեղդը անսպասելիությունից մի կողմ էր ցատկել, թե չէ՝ ով գիտի, թե ինչ կպատահեր:

Ոչ այն է՝ ծիծաղեինք, ոչ այն է՝ կարեկցեինք խեղճ Չերքեզին: Մի կերպ կարգի բերեցինք նրան ու հետ ուղարկեցինք տուն, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը, բայց մինչև տեղ հասնելը չէինք կարողանում մեր ծիծաղը զսպել:

ГАЛУСТ ГАЗАРЯНЦ ИМЕНИ "Мисакомского"

Մի անգամ էլ նորից գնում էինք Երևան: Ճանապարհին երկու գյուղացի կանգնեցրին ավտոբուսը՝ խնդրելով որ իրենց էլ հասցնենք Երևան, բայց բանն այն էր, որ նրանք տասը պարկ նուռ էին ուզում տեղափոխել: Վարորդը, մեր համաձայնությունը առնելով, որ մի քիչ փող աշխատի, թույլատրեց նրանց, որ բարձեն պարկերը նստարանների արանքում: Նրանցից մեկը նստեց առջևում, իսկ մյուսը՝ հետնամասում, երևի նրա համար, որ աչքի առաջ ունենան իրենց ապրանքը:

Դե, քանի որ ճանապարհը շատ երկար էր, ձանձրույթից շատերը ննջում էին, բացի վերջին շարքում նստած տղաներից, որոնք քարտ էին խաղում: Գյուղացիները՝ համոզվելով, որ իրենց ապրանքին վտանգ չի սպառնում, մեզ նման սկսեցին ննջել: Որոշ ժամանակ անց իմ հետևի նստարանից մեկը կամաց հրեց ինձ, միևնույն ժամանակ մատը բերանին դնելով, հասկացրեց, որ լռեմ, ապա, ի զամանս ինձ, բուռս խոթեց մի մեծ նուռ ու հետո՝ այդպես շարունակ: Ես, իհարկե, գլխի էի ընկել, թե ինչ է կատարվում, և իմ դատարկ ճամպրուկն աստիճանաբար ուռեց, հետո՝ իմ կողքի նստածինը, ու այդպես, մեկս մյուսին փոխանցելով, լցվեցին համարյա բոլորի ճամպրուկները: Մեզնից շատերը խիստ դեմ էին դրան, բայց գերադասեցին լռել, որովհետև, եթե նռան տերերը գլխի ընկնեին, ապա լուրջ դեպքեր կարող էին տեղի ունենալ: Բանն այն էր, որ հետևում նստած տղաները, նռան պարկերից մեկի տակը ծակելով, աննկատ սկսել էին կամաց-կամաց դատարկել այն: Պարկի տարողությունը պակասելու հետևանքով՝ մյուս պարկերը, որոնք իրար էին հենված, թեքվում էին, իսկ տերերը, ոչինչ չկասկածելով, կարծում էին, թե ճանապարհի խորդուբորդ լինելուց են թեքվում պարկերը, և իրենց շատ հանգիստ էին զգում:

Երբ վերջապես տեղ հասանք, գյուղացիները շուկայի մոտ սկսեցին իրենց պարկերն իջեցնել ավտոբուսից: Երբ վերջացրին իջեցնելը, սկսեցին նորից ինչ-որ բան փնտրել ավտոբուսում և իրար հետ վիճել: Ամեն տեղ ստուգելով՝ ոչինչ չգտան ու սկսեցին իրար մեղադրել այն բանում, որ պարկերից մեկը երևի թողել են բեռնման տեղում: Հետո դիմեցին վարորդին՝ եղածը բացատրելով: Վարորդը, որը կատարվածից բոլորովին անտեղյակ էր, բարկացած հարցրեց նրանց.

– Ձեր պարկերը բարձելիս՝ համրե՞լ եք:

– Հա, բա ի՛նչ ենք արել…

ГАУ РК "Национальная академия наук Республики Армения"

– Ես դրանից հետո մեքենան որևէ տեղ կանգնեցրե՞լ եմ, մինչև տեղ հասնելը:

– Չէ՛, չես կանգնեցրել:

– Բա որ չէ՛, մեզնից ի՞նչ եք ուզում, մեղքը ձերն է:

Նրանք, ներողություն խնդրելով, հեռացան, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը՝ ծիծաղից թուլանալով: Վարորդն, իմանալով ինչն ինչոց է, սկսեց նախատել տղաներին, բայց չհրաժարվեց ստանալ իր բաժինը:

Իհարկե, արդարացնելու չէր տղաների արածը, բայց եղածը եղած էր:

Մի անգամ էլ նորից Երևան պիտի գնայինք, ու մի սևագործ բանվոր՝ Առաքել անունով, ցանկություն հայտնեց մեզ հետ գալ: Մենք, իհարկե, չկարողացանք մերժել, որովհետև գնացողների ցուցակը մենք չէինք կազմում, և հետո էլ, դրանում ոչ մի զարմանալի բան չկար այն ժամանակ: Բայց բանն այն էր, որ մենք այդ անգամ գնում էինք ֆուտբոլ նայելու՝ «Արարատի» խաղը «Ճախտյորի» հետ, որը որոշիչ էր, ու թե ինչ է անելու Առաքելը, որն առանց մեզ ոչ մի քայլ չէր անի, դա էր մեզ մտահոգում: Մի խոսքով, մի կերպ տոմսեր գտնելով՝ մենք, Առաքելին էլ հետներս առած, մտանք մարզադաշտ: Դեռ խաղը չսկսած՝ երբ ֆուտբոլիստները մեր ծափահարությունների ներքո խաղահրապարակ դուրս եկան, Առաքելը հարցրեց, թե նրանցից որոնք են «Արարատի» խաղացողները, և տղաներց մեկը կատակով ասաց՝ կարմիր հագածները, թեև իրականում հակառակն էր: Խաղն սկսվեց, ու ֆոտբոլասերների գոռում-գոչյուններից ստադիոնը թընդաց: Թարսի պես, առաջին գնդակը հյուրերը խփեցին, ու դրժգոհ հանդիսատեսները դեռ իրենց վրդովմունքը չէին հասցրել արտահայտել, երբ էս Առաքելը, կարծելով թե «Արարատն» է գոլ խփողն ու, ցանկանալով հաճոյանալ մեզ, ցատկեց տեղից և «ուռա՛» գոչեց: Բոլորը կատաղած թեքվեցին նրա կողմը, ու հետևից մի մոլի ֆուտբոլասեր խփեց խեղճ Առաքելի գլխարկին, որը թռավ հեռու: Մենք շրջապատողներին մի կերպ բացատրեցինք, որ նա շփոթել է: Նրանք, կարծես, համոզվեցին, ու խեղճ Առաքելն էլ մինչև խաղի վերջը, որը «Արարատի» հաղթանակով ավարտվեց, կրկնում էր մեր ամեն մի շարժումը: Մենք խաղից հետո, իհարկե, խիստ հանդիմանեցինք այն տղային, որի հիմար կատակը կարող էր վատ վերջանալ, բայց եղածը եղած էր: Խնդրեցինք, որ երբ վերադառնանք, Առաքելն ուրիշին չպատմի կատարվածը, բայց ինչպես ասում են՝ «մախաթը պարկում չես թաքցնի»: Կոմբինատում շատ շուտ

ГАУ ЦГА "МАЛОЕ ЖАЛОВАНЬЕ"

իմացան այդ մասին և Առաքելին ձեռ էին առնում՝ «Արարատի» բալեյչիկ» պիտակը կպցնելով:

Շոգեուժային տնտեսությունում, որն իմ անմիջական ենթակայության տակ էր, աշխատում էին շատ վաստակաշատ ու փորձված աշխատողներ՝ փականագործներ, հնոցապաններ՝ Գ. Սարուխանյանը, Գ. Բալայանը, Ա. Բաղդասարյանը, որը, միևնույն ժամանակ, լավ երաժիշտ էր: Նա, ցավոք, քաղաքի հրթիռակոծության ժամանակ զոհվեց հենց իր բակում: Կային և շատ ու շատ ուրիշ մարդիկ, որոնք արժանի են հիշվելու, բայց ես ընտրեցի նրանցից մեկին, որին արտաքուստ ուշադրություն չէին դարձնում և նույնիսկ ծուռ աչքով էին նայում, քանի որ անցած պատերազմի ժամանակ գերության մեջ էր եղել…

ՄԱՄԻԿՈՆԻ «ՄԵՂՔԸ»

Արտաքուստ նա ոչնչով չէր տարբերվում մյուսներից. իր աշխատանքը կատարում էր բարեխղճորեն, բայց կար մի բան, որը նրան հեռու էր պահում մյուսներից: Դա առանձնապես զգացվում էր Մայիսի 9-ին՝ Հաղթանակի տոնական տարեդարձի ժամանակ: Այդ օրերին Հայրենական պատերազմի մասնակիցներն ինչքան շքանշաններ ու մեդալներ ունեին, կախում էին կրծքերին ու մասնակցում իրենց պատվին կազմակերպված միջոցառումներին, որոնց ժամանակ նոր մեդալներ էին ստանում, բացի Մամիկոնից, որը նույնպես պատերազմի մասնակից էր, բայց հենց պատերազմի սկզբից գերվել էր ֆաշիստների կողմից՝ մինչև մեր զորքերի կողմից ազատագրվելը: Բայց նրա ուրախությունը երկար չի տևել, որովհետև նրան ազատելուց հետո նստեցրել են մի այլ գնացք, որը նրան տարել է Սիբիր, այս անգամ արդեն՝ երկար տարիներով:

Իմ կարծիքը նրա մասին սկզբում նույնն էր, ինչ որ մյուսներինը, բայց մի օր այն լրիվ փոխվեց, երբ մենք մենակ էինք մնացել բանջարանոցներում, որտեղ հարևաններ էինք: Այդ օրը նա պատմեց իր կյանքի պատմությունը…

«Դա պատահեց 1941-ի աշնանը: Պատերազմն սկսվելուց մի քանի ամիս անց ինձ կանչեցին զինկոմիսարիատ: Առանց նույնիսկ հարազատներիս հետ հրաժեշտ տալու՝ մեզ նստեցրին մեքենայի թափքում և տարան մինչև երկաթգծի Եվլախ կայարանը: Այնտեղ մեզ հաշվառեցին, հետո նստեցրին բեռնատար վագոն, որտեղ ինձ նման հայ տղաներ էին՝ շրջաններից բերված: Ամբողջ երկու օր ու

ГАУ РК "Национальный архив им. И. Гасприринского"

գիշեր գնում էինք կարճ դադարներով, մինչև որ հասանք ինչ-որ կայարան, որտեղ մեզ, նորից անվանակոչելով ու ոչխարների նման համրելով, նստեցրին բեռնատար ավտոմեքենաներն ու տարան անհայտ ուղղությամբ: Երեկոյան կողմ վերջապես մենք հասանք, ինչպես հետո իմացանք, Հյուսիսային Կովկասի գյուղերից մեկի լքված մի դպրոց: Այնտեղ մեզ ընդունեց տարեց մի կապիտան, որը մեզ շարքի կանգնեցնելով, առաջնորդեց շենքի ներսը և բացատրեց, որ մենք գտնվում ենք նախաճակատային գոտում, հետո հրամայեց, որ գնանք բաղնիք, և միայն դրանից հետո կստանանք զինվորական հագուստ, իսկ հաջորդ օրվանից կսկսվեն մեր զինվորական պարապմունքները: Ես կյանքումս հրացան չէի բռնել և կարծում եմ՝ ինձ հետ եկածներից շատերը՝ նույնպես: Դե՛, հրացան որտեղի՞ց. դպրոցը նոր էի ավարտել, աշխատում էի կոլխոզի ֆերմայում՝ որպես տավարած ու պատրաստվում էի հաջորդ տարի հեռակա ուսուցմամբ գյուղատնտեսական ինստիտուտ ընդունվել: Ի՛նչ իմանայի, թե ճակատագիրն ինչ օյին կբերի իմ գլխին:

Ամբողջ գիշեր չկարողացանք քնել: Սկզբում՝ երեկոյան, հեռվից հրանոթների որոտ էինք լսում, հետո՝ ինքնաթիռների ու տանկերի հոնդյուն: Բայց քանի որ մեզ հրամայված էր շենքից դուրս չգալ, մենք, կուչ եկած մեր «նառերի» վրա, ինչպես հավերը՝ թառին, սպասում էինք հրամանի: Առավոտյան, երբ լույսը բացվեց, պատուհանից նայեցինք և այն ինչ տեսանք դրսում, սարսափեցրեց մեզ: Դպրոցի բակում, որը մեր կացարանն էր՝ գերմանացիներ էին, տանկեր, մոտոցիկլներ, իսկ ավտոմատները ուսերից կախած զինվորները շրթհարմոն էին նվագում ու հռհռալով մեզ մատով ցույց տալիս իրար, երևի լավ իմանալով, որ մենք անզեն ենք ու անզոր նույնիսկ փախչելու: Հետո մեզ դուրս հանեցին, շարք կանգնեցրին, հաշվեցին, հարցրին, թե կոմունիստ մեր մեջ կա, թե՝ ոչ: Իմանալով որ չկա՝ մեզ՝ մոտ հիսուն հոգու, մի քանի զինվորներով ու շներով շրջապատված, քշեցին մեզ համար անհայտ ուղղությամբ:

Օրերով քայլում էինք սոված ու ծարավ՝ անիծելով մեր բախտը: Ախր, գոնե մեզ հրացան տային, որ մենք կարողանայինք մեզ պաշտպանել ու հերոսաբար զոհվել, թե չէ ի՞նչ կարող էին անել մի խումբ անզեն, անփորձ պատանիներ անծանոթ վայրերում: Մեզ սկզբում այնքան էլ խիստ չէին հսկում. երևի լավ տեղեկացված էին, որ փախչելու տեղ չունենք: Մի անգամ գիշերը փախանք՝ օգտվելով խիստ մառախուղից, բայց երբ լույսը բացվեց, տեսանք, որ շրջապատում ո՛չ անտառ կա և ո՛չ էլ՝ լեռներ, որ կարողանայինք

ГАУ РК "Национальная библиотека им. Пушкина"

թաքնվել: Ուր նայում էինք, անծայրածիր տափաստան էր: Վերջապես մի գյուղ տեսանք, գնացինք և ծեծեցինք դռները, բայց ոչ ոք չբացեց. մեզ տեսնելիս՝ բոլորը վախով թաքնվում էին: Վերջապես մի ծեր կին կիսաբացեց դուռը, մի բոքոն սև հաց ու կաթ տվեց ու ասաց, որ գերմանացիներն իրենց զգուշացրել են, որ եթե պարտիզաններին կամ փախած գերիներին օգնեն, ապա բոլորին կգնդակահարեն, դրա համար էլ բոլորը վախենում են: Մենք ո՛չ քարտեզ ունեինք, ո՛չ էլ կողմնացույց և չգիտեինք, թե որտեղ ենք գտնվում: Մի խոսքով, մի քանի օր սոված ու ծարավ անծանոթ վայրերում թափառելուց հետո, գերմանացիները նորից գտան մեզ և բոլորիս դաժանորեն ծեծելուց ու մի քանի հոգու գնդակահարելուց հետո, նստեցրին բեռնատար վագոններ և տարան դարձյալ անհայտ ուղղությամբ:

Շաբաթներ հետո մեզ իջեցրին ինչ-որ կայարանում, բաժանեցին խմբերի ու տարան ինչ-որ մի գործարան և հրամայեցին ապրանքներ բեռնել ու բեռնաթափել: Եվ այսպես՝ օրեր, ամիսներ, մինչև մեր զորքերը ազատագրեցին մեզ: Չեմ կարող պատմել այն բոլոր տանջանքների մասին, որ մենք կրեցինք այդ ընթացքում, երբ օրը տարի էր թվում, տարին՝ դար: Այդ օրը, երբ մեզ ազատագրեցին, մեր ամենաերջանիկ օրն էր: Պարում էինք, իրար գրկում, շնորհավորում: Բայց մեր ուրախությունը երկար չտևեց: Մեզ մեկ առ մեկ հարցաքննեցին, հետո մոտ հարյուր հոգու լցրին ապրանքատար վագոնները, ինչպես ֆաշիստներն էին արել, ու գնացքը մեզ տարավ Սիբիր՝ Մագադան: Պարզվեց, որ ես հայրենիքի դավաճան եմ, և ինձ դատապարտեցին ութ տարվա բանտարկության՝ չնայած իմ անկեղծ ցուցմունքներին, թե ինչպես եմ գերի ընկել: Ինձ չհավատացին՝ ասելով, որ ես աշխատել եմ գերմանացիների համար ռազմական գործարանում:

Հիմա, նույնիսկ այսքան տարիներ հետո, ինձ ծուռ աչքով են նայում, թեև վաղուց արդարացրել են և բացահայտել իսկությունը: Մտածում, մտածում ու չեմ հասկանում, թե ո՞րն է իմ մեղքը, որ ինձ ջահել, թռվռուն հասակում մեր տնից տարան, առանց զենք տալու ձեռքս, ինչպես կասեին՝ «սկուտեղի վրա» ուղղակի գերի հանձնեցին թշնամիներին, հետո իբրև ազատեցին գերությունից և, փոխանակ ինձնից ներողություն խնդրեն իմ տանջանքների համար, Սիբիր աքսորեցին: Եվ դրանից հետո, ասա՛ տեսնեմ՝ ինչպե՞ս հավատամ, որ աշխարհում արդարություն կա»:

Նրա պատմածից հետո իմ կարծիքը լրիվ փոխվեց Մամիկոնի մասին:

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ "Գագիկ Գրիգորյան"

ԻՍԿ ԿՅԱՆՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Շաբաթը մեկ անգամ գյուղ էի գնում՝ մորս այցելության: Նա չէր ուզում քաղաք գալ, բայց ամռան ամիսներին ես գնում էի գյուղ, ուր ամեն ինչ կամաց-կամաց փոխվում էր. նոր տներ էին կառուցվում, նոր ընտանիքներ կազմվում: Իմ մանկության ընկերներից մի քանիսը վթարի ու զանազան հիվանդությունների զոհ էին դարձել վաղուց, մյուսները, Երևանում բուհերն ավարտելուց հետո, տարբեր տեղերում աշխատանքի էին անցել, ամուսնացել: Նրանցից Սլավան մեր գյուղի կոլտնտեսության նախագահն էր, Ջեմսը՝ սովխոզի տնօրենը, Էդվարդը՝ ավտոդպրոցի տնօրենն էր, Սերգեյը՝ ատամնաբույժ և այլն: Մի խոսքով, ամեն մեկը գտել էր իր տեղն այս կյանքում:

Մեկ-մեկ հավաքվում էինք, հիշում անցած օրերը, և մենք մեր ընկերությունը պահեցինք մինչև Արցախյան պատերազմը, որից հետո կորցրի բոլորի հետքերը:

Աշխատում էի օրնիբուն, միևնույն ժամանակ՝ իմ բանաստեղծություններով թղթակցում թերթերին, մասնակցում էի կոմբինատի ինքնագործ թատերական խմբի ներկայացումներին, որ տրվում էին մարզի շրջաններում: Արդեն նոր ու հարմարավետ բնակարան էի ստացել: Ծնվեց իմ երկրորդ որդին՝ Աշոտը, հետո՝ Արմենը, իսկ վերջում՝ աղջիկս՝ Նարինեն: Տարիները թռչում էին հավքերի նման, ու օրերի թոհուբոհի մեջ չէի նկատում, թե ինչ խելահեղ ժամանակներ են մեզ սպասում: Զարմանալի բան է երիտասարդությունը. ես ինձ աղքատ չէի զգում. թեև ճոխ կյանքով չէինք ապրում, բայց իմ ու Աքսենյայի աշխատավարձը մեզ բավականացնում էր՝ քանի երեխաները փոքր էին, հետո ես, ստիպված, հավելյալ աշխատավարձի համար՝ հիմնական աշխատանքից հետո և ազատ օրերին աշխատում էի տարբեր ձեռնարկություններում, ու ապրում էինք բարվոք վիճակում:

Ինչպես նշել եմ, ես կոմունիստական կուսակցության շարքերն էի ընդունվել: Դա շատերի համար արդեն ոչ թե համոզմունք էր, այլ այն, որ եթե կուսակցական չես, ապա պատասխանատու պաշտոն հազիվ թե ստանաս, և զուր կլինեին առաջ գնալու քո բոլոր ջանքերը:

Մի օր էլ ինձ կանչեցին մարզկոմ և հայտնեցին, որ հաշվի առնելով իմ ակտիվ աշխատանքը՝ որպես պրոպագանդիստ, կարծիք կա՝ եթե ես դեմ չեմ, ինձ ուղարկել Մոսկվա՝ կուսակցության ղեկավարների համար հատուկ ուսումնական դասընթացների՝ երկու տարի ժա-

ГАБРИЕЛЯНЦ ИМ. И. ГАСПРИНСКОГО"

մանակով: Ինձ երկու օր ժամանակ տվեցին մտածելու և պատասխանելու համար:

Աքսենյայի հետ երկար մտածելուց հետո՝ որոշեցինք համաձայնել, չնայած որ երկու տարի տան ու երեխաների հոգսը լրիվ նրա վրա էր ընկնելու: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուսուցումն ավարտելուց հետո ինձ սպասում էին կուսակցական բարձր պաշտոններ՝ դրանից բխող շատ հետևանքներով, առաջին հերթին բնակարան ստանալու լավ հնարավորությամբ՝ ուրախությամբ համաձայնությունս տվեցի ու սկսեցի պահանջվող փաստաթղթեր հավաքելու գործը:

Բայց պատահեց մի դեպք, որն ի չիք դարձրեց այդ բոլոր ծրագրերը: Բանն այն էր, որ կոմբինատի կուսակցության կազմակերպության այն ժամանակվա քարտուղարն այդ ուսուցմանն ուղարկելու համար ուրիշ թեկնածու ուներ, բայց քանի որ այդ ժամանակ արձակուրդում էր, նրան փոխարինողը, այդ մասին չիմանալով, իմ թեկնածությունն էր առաջ քաշել, որը հաստատվել էր քաղկոմում: Մնում էր մարզկոմի հաստատումը, որտեղ, սովորաբար, չէր մերժվում, քանի որ նման բաներն առանց իրար հետ համաձայնեցնելու չէին կատարվում: Կոմբինատի կուսկազմակերպության քարտուղարը, արձակուրդից վերադառնալով և իմանալով այդ մասին, պատճառներ էր փնտրում խանգարելու համար, և պատճառը գտնվեց անսպասելիորեն:

Այդ օրերին Երևանից մեզ մոտ գործուղման էր եկել մի երիտասարդ մասնագետ՝ ավտոմատ սարքավորումներ տեղադրելու համար, և ես շատ էի մտերմացել նրա հետ: Գործուղումը վերջանալուց հետո հրաժեշտ տալիս՝ նա ինձ երկու նկար նվիրեց, մեկը՝ Անդրանիկ զորավարինն էր, իսկ մյուսը՝ Վարդան Մամիկոնյանինը, որի համար ես շնորհակալ եղա և նկարները դրեցի գրասեղանիս վրայի ապակու տակ: Ես, իհարկե, անգամ չէի կասկածում, որ այդ նկարները կարող են պատճառ դառնալ, որ ինձ մարզկոմում մերժեն ուսուցման մեկնելու հարցում: Այդ մասին ես իմացա մարզկոմի մի պատասխանատու աշխատողից, երբ գնացի իմանալու, թե երբ եմ ճանապարհվելու: Նա ուղղակի չասաց պատճառը, միայն խորհուրդ տվեց. «Եթե ուզում ես կուսակցական դպրոց գնալ, ուրեմն սեղանիդ վրա ավելորդ բաներ մի պահիր…»:

Ես չհասկացա նրա ասածի իմաստն ու խնդրեցի բացատրել: Նա էլ իր հերթին խնդրեց, որ ոչ ոքի չասեմ ու, որպես գաղտնիք, հայտնեց, որ մարզկոմին տեղեկացրել են, որ դու, իբրև թե, «նացիոնալիստ» ես ու կապեր ունես Հայաստանի նույնանման ինչ-որ կազմակերպության

ГАУ РК "Национальная библиотека Татарстана"

հետ: Որպես ապացույց՝ վկայություն են տվել իմ սեղանի վրայի նկարների մասին: Ես անսպասելիությունից մնացել էի շվարած: Որտեղի՞ց նրանք կարող էին իմանալ դրանց մասին, կամ ի՞նչ կապ ունեն նկարներն այս բոլորի հետ: Հետո միայն հիշեցի, որ մեր քարտուղարն էր եկել իմ աշխատասենյակ՝ իբր շնորհավորելու ինձ՝ ուսման մեկնելու կապակցությամբ և կատակելով ասել էր. «Ուսումդ ավարտելուց հետո իմ տեղն ես զբաղեցնելու»: Այդ ժամանակ ես դրան ուշադրություն չէի դարձրել, մյուս կողմից էլ՝ ո՛վ իմանա, գուցե մեկ ուրիշն է այդ ստոր քայլը կատարել: Ի՛նչ իմանայի, որ հայ մարդը կարող է հայի հանդեպ այդպիսի բան անել… Բայց եղածը եղած էր և, ո՛վ գիտե, գուցե հենց դա էր բարին, քանի որ կոմունիստական կուսակցությունն ավարտեց իր գոյությունը՝ իր փլատակների տակ թողնելով ու ոչնչացնելով մի ամբողջ սերնդի ապագան:

Հետագայում՝ նոր նշանակված կուսքարտուղար Ռ. Քոչարյանի ու տնօրեն Մ. Ավանեսյանի երաշխավորությամբ ես ուսումս շարունակեցի Մոսկվայի թեթև արդյունաբերության ինստիտուտի Մինսկի մասնաճյուղում՝ հեռակա ուսուցմամբ:

ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ

Այժմ ես ցանկանում եմ պատմել այդ ժամանակվա Արցախի ժողովրդի հոգևոր կյանքի մասին:

Բոլշևիկներն իրենց աստվածուրաց գաղափարի ամենահաջողված տեղամասը կարող էին համարել Ղարաբաղը, որտեղ նրանց գալուց ի վեր փակվել էին բոլոր եկեղեցիները՝ վերածվելով պահեստների, խավագույն դեպքում՝ ակումբների, իսկ մեծամասնությամբ՝ ուղղակի փակված ու լքված էին: Եթե Հայաստանում գոնե կար Մայր եկեղեցին, ուր մարդիկ կարող էին իրենց նորածին երեխաներին մկրտել, աղոթել և այլն, ղարաբաղցին վաղուց մոռացել էր այդ մասին: Միայն երբեմն մատաղ էին անում մեր լքված սրբավայրերում, այն էլ՝ ոչ թե կրոնական տոներին, այլ, օրինակ, եթե մեկը ծանր հիվանդ էր, հարազատներն այս կամ այն սրբերին մատաղ էին խոստանում ու հաջողության դեպքում՝ ոչխար, ուլ կամ աքլոր էին մորթում՝ համբուրելով եկեղեցու մուտքի քարերը: Այդ էլ՝ ոչ բոլորը, այլ հիմնականում ծեր մարդիկ, որոնք կորցնելու կամ վախենալու ոչինչ չունեին: Դրանք ուղղակի քեֆեր էին՝ ոգելից խմիչքներով:

ГАУ ИК "МЕДИАЦЕНТР ИМ. М. ЛАЗИЯНА"

Մոլլաներն իրենց բարձր տեղն ունեին հասարակության մեջ, ու առանց նրանց ոչ մի հարսանիք կամ թաղում չէր կատարվում: Մինչդեռ մեր «հոգևորականը» զազսի քարտուղարն էր: Իմ հասակակիցներից ոչ մեկը մկրտված չէր, որոնց թվում և ես: Ղարաբաղի բազմաթիվ եկեղեցիներից շատերը կա՛մ փլված էին, կա՛մ փլուզման եզրին էին կանգնած: Չնայած որ նրանցից շատերի պատերին ցուցանակ էր փակցված՝ «Ծինությունը պահպանվում է պետության կողմից», բայց դա ուղղակի ցուցամոլություն էր, և ոչ մի պահպանություն էլ չկար: Ո՞վ պիտի պահպաներ, Ադրբեջանի կառավարությո՞ւնը, որը հենց հակառակն էր անում: Ղարաբաղցին, որը զտարյուն հայ է, և որը Հայաստանում առաջիններից մեկն էր ընդունել քրիստոնեությունը, որի հողում է գտնվում հայ մեծ արքայից արքայի մայրաքաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը, բոլշևիկների կամքով դատապարտված էր հոշոտման:

Այո՛, ցավոք, մենք մոռացել էինք Աստծո անժխտելի գոյությունը և նրան հիշում էինք միայն այն ժամանակ, երբ տեղներս նեղ էր լինում: Սակայն տիրոջ կամքով այժմ վերածնված Արցախի հողում նորից են լսվում մեր եկեղեցիների զանգերն ու մկրտվող երեխաների լացը:

ԹԱՔՈՒՆ ՀԱՎԱՏՔ

Այսպիսի մի զավեշտական դեպք էր տեղի ունեցել բոլշևիկների գալուց հետո, երբ շատ ակտիվ կերպով նրանք պայքարում էին կրոնը արմատախիլ անելու համար:

Գյուղացիներից մեկը, չնայած ագիտացիայի շնորհիվ կոմունիստական կուսակցության շարքերն էր անցել, բայց հոգու խորքում մնացել էր հավատացյալ. բոլորից թաքուն հաճախ գնում էր գյուղից հեռու գտնվող հին եկեղեցին ու, չոքելով թափուր խորանի առջև, աղոթում էր: Նա այդ անում էր խիստ գաղտնի՝ պատճառ բռնելով, իբր գնում է փայտի, էշն առաջն էր անում ու գնում հին եկեղեցու մոտակա անտառը: Էշը կապում էր ծառից, ինքը, չորս կողմ նայելով, թաքուն մտնում էր եկեղեցի, իր աղոթքն անում, հետո դուրս գալիս, փայտը բարձում էշին ու գալիս տուն: Ու այսպես՝ երկար ժամանակ, մինչև որ գյուղացիներից մեկը նկատել էր նրա տարօրինակ արարքը և հայտնել գյուղի կուսկազմակերպության քարտուղարին: Վերջինս

ГАУ РК "Мелитополь Ц.И. Гельфанда"

ցանկանում է կուսակցության երդմնազանց անդամին բռնեցնել «հանցանքի» վայրում:

Գյուղացին, սովորականի նման, իբր գնում է փայտի, հասնում է եկեղեցի ու ներս մտնում, չոքում խորանի առջև, երեսին խաչ հանում ու մեկ էլ բեմի վրայի հայելու մեջ տեսնում է, որ երեք հոգի ներս են մտնում: Այլ ելք չգտնելով՝ որոշում է խորամանկել ու, փոխելով աղոթքի տեքստը, սկսում է. «Ընկե՛ր Աստված, եթե դու իսկապես գոյություն ունես և ամենազոր ես, ապա խնդրում եմ՝ արի՛ և միացիր մեզ, որ էդ կուլակների վերջը տանք, երկար կյանք տուր ընկեր Ստալինին, որ նա ջախջախի կապիտալիստ շներին: Նորից եմ խնդրում ու պահանջում, որ մեզ թիկունք լինես ու պինդ պահես մեր գյուղի ղեկավարներին՝ հանո՛ւն մեր լուսավոր ապագա կոմունիզմի, ամե՛ն»: Այդ «աղոթքը» լսելով՝ կոմունիստները սուսուփուս հետ են դառնում, ու հետո կուսակցական ժողովում քարտուղարը, գովելով այդ գյուղացուն, ասում է.

– Ընկերնե՛ր, թեկուզև մեր կոմունիստ ընկերը հետամնացություն է ցուցաբերել ու եկեղեցի հաճախել, բայց նա նույնիսկ Աստծուն է ընկեր անվանում և առաջարկում միանալ մեզ: Ահա՛ թե ինչ կոմունիստ ունենք մենք, եկե՛ք ծափահարենք նրան:

Այս պատմությունը ես լսել եմ մի գյուղացուց, որն, իր պատմելով, ականատես է եղել այդ դեպքին և, միգուցե, հենց ինքն է եղել այդ «ակտիվ» կոմունիստը:

Հումորը՝ հումոր, բայց այն փաստը, որ մեր սերնդին դաստիարակել էին կոմունիստական ոգով, ջնջելով մեր մտածելակերպից ամեն մի հավատք, բացի կոմունիստականից, դա անժխտելի փաստ է:

Իմ տոհմածառում, մինչև բոլշևիկների գալը, բոլորն էլ հոգևորականներ են եղել և հավատով ու նվիրվածությամբ ծառայել են Աստծո մեր հավատքին, ու դրա համար էլ մեր տոհմը կոչվում է Դերունց կամ Երիցանց: Եվ հիմա, տարիներ հետո հաճախ մտածում եմ, որ գուցե իմ՝ հավատքին նվիրված նախնիների օրհնության շնորհիվ է, որ ես իմ ընտանիքի հետ փրկվեցի վերահաս շատ վտանգներից, և բոլորս կենդանի մնացինք այդ պատերազմում, թեև՝ ոչ լրիվ անվնաս:

Ես և իմ հասակակիցները, ինչպես արդեն ասացի, անհավատ էինք, ավելի ճիշտ՝ այդպես էին մեզ դաստիարակել: Մենք չէինք գիտակցում, թե ինչ մեծ դեր ունի հավատքը հայապահպանման գործում: Միայն արդեն հասուն տարիքում զգացի հոգու խորքում այն հզոր ուժը, որը կարող է տալ իսկական հավատքը: Այնժամ միայն զգացի, որ կորցնելով հավատքը, կորցնում ես ամեն ինչ: Դե,

ГАУ ЕРЕВАНСКИЙ ГУМ. ГАСПРЯНСКОГО"

ի՞նչ իմանար կամ որտեղի՞ց իմանար այն ժամանակվա դարաբաղցի պատանին, թե ինչ է քահանայով կնունքը, պսակն ու թաղումը, ինչ է մեռոնն ու օրհնությունը: Այդ մասին մենք միայն կարդացել էինք պատմավեպերում՝ որպես անցած-գնացած մի բան: Երբ առաջին անգամ եղա Էջմիածնի Մայր տաճարում, տեսա և լսեցի պատարագը, այն էլ՝ լուսահոգի կաթողիկոս Վազգեն Առաջինի ներկայությամբ, այդ բոլորն ինձ վրա մոգական ազդեցություն ունեցավ: Զարմանքը, երկյուղածությունն ու հպարտությունը պարուրել էին ինձ: Սիրելի իմ ընթերցողնե՛ր, ձեր ներողամտությունն եմ հայցում այս բոլոր մանրամասնությունները նկարագրելու համար, բայց այդ անում եմ միայն այն պատճառով, որ հասկանալի լինի, թե ինչ աստիճանի էին հասցրել դարաբաղցուն, որ հենց նա առաջինը ելավ պաշտպանելու իր հավատքն ու հողը, ոչ թե նյութական կամ այլ պատճառներով, ինչպես որոշ պատմաբաններ ուզում են անտեղյակներին հրամցնել:

Հիմա, երբ ես Ղրիմում եմ ապրում, երբեմն այլ ազգության մարդիկ ինձ հարցնում են, թե ինչու սկսվեց հայ-ադրբեջանական պատերազմը. «Չէ որ միասին ապրել եք, աշխատել, ուրախացել ու տխրել, ի՞նչ էիք կորցրել, որ դարձաք թշնամի և սկսեցիք իրար սպանել»:

Այդ հարցին շատ դժվար է սպառիչ պատասխան տալ մեր պատմությանն անծանոթ մարդուն, որ նրան հասկանալի լինի պատճառը, բայց, ճիշտն ասած, համոզված էլ չեմ, որ նա կարող է ամբողջությամբ հասկանալ: Սակայն նրանք, ովքեր շատ թե քիչ ծանոթ են մեր պատմությանը, և այդպիսիք քիչ չեն, հասկանում են մեզ և մասնակցում են ապրիլի 24-ի մեր հանրահավաքներին և երթերին: Պատահական չէ, որ Ղրիմի Ինքնավար Հանրապետությունը ճանաչել է Հայոց մեծ Եղեռնի օրը, որպես «Հայ ժողովրդի ողբերգության զոհերի հիշատակի օր»:

Իսկ այժմ ես շարունակեմ իմ պատմությունն այն մասին, թե ինչ կյանքով էինք ապրում մինչև 1988 թվականը, որից սկսվում է պատմական մի նոր ժամանակաշրջան՝ վերածնունդ, որը գարնան հեղեղի պես իր ճանապարհին քշեց ու տարավ կեղտը և, ցավոք սրտի, նաև ծաղիկներ՝ անմեղ զոհեր ու հերոսներ, որոնց շնորհիվ Արցախն ազատագրվեց, և միացան մոր ու մանկան ձեռքերը: Շատ մարդկային զոհեր՝ անմեղ ու մեղավոր, շատերի համար՝ օտարության ցուպ, ինչպես իմ դեպքում՝ կորցնելով այն ամենը, ինչ երկար տարիների քրտնաջան աշխատանքով էր ձեռք բերվել: Սակայն այդ բոլորն անխուսափելի էր և անհնար էր իրագործել

ГАУ РК "Национальный архив Крыма"

առանց մեծ կորուստների, որովհետև դարերով կուտակված օտարի կեղտը մաքրելու համար մեծ հեղեղ էր պետք, որը և տեղի ունեցավ:

Իսկ այժմ կսկսեմ մի նոր էջից, որտեղ կպատմվի բոլոր այն դեպքերի մասին, որոնք տեղի ունեցան 1988-ի փետրվարից մինչև այն օրը, երբ, անկախ իմ կամքից, ընտանիքիս հետ հայտնվեցի Ղրիմում:

ԳԼՈՒԽ Գ

ՊԱՏԵՐԱԶՄ

Նախքան արցախյան ազատագրական պայքարի սկիզբը նկարագրելը՝ եկեք անդրադառնանք անցյալին՝ այն ընթերցողների համար, ովքեր լավ ծանոթ չեն հայոց Արցախի պատմական անցյալին: Որպեսզի պարզ լինի, որ այն ամենը, ինչ տեղի ունեցավ այնտեղ, պատահականություն չէր, այլ պատմական արդարության հաստատում, և Աստված այս անգամ թույլ չտվեց, որ Արցախում էլ կատարվի այն, ինչ տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում:

ՄԻ ՔԻՉ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լեռնային Ղարաբաղի կամ, ավելի ճիշտ՝ Արցախի պատմությունն սկսվում է անհիշելի ժամանակներից: Ինչպես նշում է պատմահայր Մովսես Խորենացին, դեռևս հինգերորդ դարի սկզբում Արցախը գտնվում էր պատմական Հայաստանի կազմի մեջ Երվանդունիների թագավորության ժամանակներից՝ Ուրարտուի կործանումից հետո: Այդ փաստը հաստատում են նաև հռոմեական պատմագիրները: Տիգրան Մեծ արքայից արքան, մեր թվագրության 95-96 թվականներին, իր ամենամեծ ու ամենագեղեցիկ քաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը, կառուցել է հենց Արցախում:

Մեր թվագրության 387 թվականին, երկարամյա պատերազմներից հետո, Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, բայց հայոց Արցախը մնաց անկախ՝ ստեղծելով իր իշխանությունը՝ Աղվանքը՝ ի պատիվ Հայկ նահապետի թոռներից մեկի՝ Աղվանի: Նրա տերությունը տարածվում էր Հայոց լեռներից մինչև Սև ու Կասպից ծովերը: Չորս հարյուր տասը թվականին Արցախը Հայաստանի մշակութային կենտրոնն էր՝ Շուշի բերդաքաղաքով:

ГАУ РК "МОЖАЙСКИЙ ИНТ. И. А. ПРИНСКОГО"

Հենց այդ ժամանակներում էլ սկսվում է քրիստոնեական տաճարների ու եկեղեցիների կառուցումը: Այստեղ է Մեսրոպ Մաշտոցը հայատառ առաջին դպրոցներից մեկը բացել, այստեղ է տպվել հայկական առաջին «Կանոնագիրք»-ը:

Միջին դարերում, ֆեոդալական մասնատվածության պատճառով, Արցախում կազմվեցին մի քանի մելիքություններ: Բայց Արցախի մելիքները, չնայած իրար մեջ եղած տարաձայնություններին, որոնք ծագում էին թշնամիների հրահրմամբ, արտաքին ռազմական վտանգների դեպքում միշտ միացել են և պաշտպանել իրենց հողը օտարների հարձակումներից:

Արտաքին հզոր թշնամիներին դիմագրավելու համար Արցախի մելիքությունները միացան Ռուսական կայսրությանը, ու նորից Շուշին դարձավ Արցախի կենտրոնը՝ ընդհուպ մինչև քսաներորդ դարի սկիզբը:

Հազար ինը հարյուր տասնհինգից քսաներկու թվականներին, երբ Օսմանյան Թուրքիան իրականացնում էր իր ոճրագործությունը, սպանդի ենթարկելով հայ ժողովրդին, Արցախում նույնպես թուրք-թաթարական հրոսակներն իրենց սև գործն էին կատարում: 1920 թվականին Արցախը, առանձնապես Շուշին քանդվեց ու ավերվեց՝ հատկապես հայոց թաղամասերը, որոնք գտվում էին քաղաքի բարձրադիր մասում: Դավադիր թուրքերը, որոնք բնակվում էին քաղաքի ներքևի թաղամասերում, խիստ գաղտնի կերպով հրաման էին ստացել ոչնչացնել տեղի հայ բնակչությանը և քաղաքն ազատել նրանցից: Գիշերվա քողի տակ նրանք հարձակվեցին իրենց հարևան ու դրկից հայերի տների վրա: Նրանք հանգիստ քնած էին ու չէին էլ կասկածում, որ իր հարևանը, որն ամեն առավոտ «սալամ» էր ասում՝ բարի ժպիտը դեմքին, վաղուց էր իր դաշույնը սրել ու հարմար պահի էր սպասում. և այդ պահը եկավ: Այդ սարսափելի օրերի մասին ինձ պատմել է հորաքրոջս արդեն ծերացած ամուսինը՝ Բեկլար քեռին, որը ծնվել էր Շուշիում, մանկությունն անցկացրել այնտեղ ու ականատես է եղել այդ դեպքերին:

Նա պատմում էր, որ մի օր նրանց տուն է եկել մի ադրբեջանցի, որն իր հոր խանութում բանվոր էր աշխատում, և որին ժամանակին հայրը շատ է օգնել ամեն ինչով: Նա շատ հուզված է եղել և, իր հոր հետ առանձնանալով, երկար զրույց է ունեցել: Եվ իր մայրն էլ, որ սովորաբար չի խառնվել տղամարդկանց զրույցին, նույնպես միացել է նրանց:

ГАУ РА "Национальный Парк Мармарика"

«Ես ութ տարեկան էի, իսկ եղբայրս՝ վեց,– պատմում էր նա,– մենք միայն լսում էինք, թե ինչպես մայրս լացելով ծնկներին էր խփում, իսկ հայրս անընդհատ ծխում էր ու հարցուփորձ անում ադրբեջանցուն: Հետո իմացանք, որ ադրբեջանցին եկել էր իմաց տալու, որ շուտով բոլոր հայերին կոտորելու են, և ասում էր՝ փախե՛ք քաղաքից, եթե կարող եք, շատ շուտ:

Սկզբում հայրս չէր հավատում դրան, բայց շտապ իջնելով քաղաք ու վերադառնալով, ասաց, որ ամեն ինչ ճիշտ է, շատ հայեր արդեն փախչում են քաղաքից: Մենք շտապ, թողնելով հորս խանութը, մեր գեղեցիկ տունը, որից համարյա չկարողացանք մեծ բան տանել, մի ֆայտոն վարձելով, գիշերվա կեսին թողեցինք Շուշին և բազմաթիվ փորձություններից հետո հասանք Թիֆլիս: Մյուս օրը Շուշին, ավելի ճիշտ՝ նրա հայոց թաղամասերը վառվեցին: Ով չէր հասցրել փախչել, սպանել էին հրազենով, սրով, մահակով, քարով: Քաղաքի հինգ հազար հայ բնակչության կեսին էր միայն հաջողվել փախչել այդ սպանդից: Ավերվեցին հայոց դպրոցները, տպարանը, թատրոնը, պղծվեցին եկեղեցիները»:

Այդ ամիսներին ոչ միայն Շուշին, այլև Արցախի հարյուրավոր հայ գյուղեր նույն բախտին արժանացան:

Հազար ինը հարյուր քսանմեկ թվականին բոլշևիկները Ղարաբաղը ճանաչեցին Հայաստանի կազմում՝ որպես նրա մի մասը, բայց դա երկար չտևեց ու Ստալինի կամքով այն սկուտեղի վրա հանձնվեց Ադրբեջանին՝ փոխարենը ստանալով նավթ, որն այն ժամանակ (և ինչու միայն այն ժամանակ) ավելի թանկ էր, քան մարդկանց կյանքը:

Իսկ 1923 թվականին Ղարաբաղին տրվեց ինքնավար մարզի կարգավիճակ, սակայն իրականում ոչ մի ինքնավարություն էլ չկար. դա թղթի վրա գրված մի ձևակերպում էր, որն այդպես էլ մնաց՝ չգիտես ում աչքերին թոզ փչելու համար:

Ասել, որ Արցախը հաշտվել էր դրա հետ, շատ սխալ կլինի, քանի որ բազմիցս փորձեր են արվել փոխել այդ որոշումը՝ Արցախը մայր Հայաստանին միացնելու համար, սակայն ամեն անգամ ստալինյան հզոր աղացը ոչնչացրել է այդ հուսահատ ճիգերը՝ համարելով «նացիոնալիստական» շարժում: Այդ գործում նույնիսկ չնչին դրսևորման համար մարդիկ դաժանաբար պատժվում էին: Միայն Ստալինի մահից հետո հնարավոր եղավ այս կամ այն ձևով հիշեցնել այդ մասին:

Ղարաբաղցի հայտնի գրողներ Բագրատ Ուլուբաբյանը, Բոգդան Ջանյանը և մյուսներն առաջիններից էին, որ իրենց

ГАУ РК "Национальная библиотека им. К. Тахирова"

գրվածքներում ու հրապարակախոսություններում բարձրացրին Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը: Բայց դեռ կենդանի էր կոմունիստական քաղաքականությունը, և ամեն մի ազատ խոսք ստանում էր խիստ անհանդուրժողական պատասխան: Այդ հալածանքների հետևանքով բազմաթիվ մտավորականներ, բանտարկման վտանգի սպառնալիքից խուսափելով, թողեցին Արցախը և տեղափոխվեցին Հայաստան: Այնտեղ նույնպես նրանք չդադարեցրին պայքարը, չնայած որ այնտեղ էլ նրանց գրկաբաց չէին ընդունել, և ցենզուրան ամեն մի խոսք քամահրում էր, եթե չէր համապատասխանում կոմունիստական իդեալներին: Բայց վերջապես սասանվեց կոմունիստների իշխանությունը, և օր օրի ավելի ու ավելի էր զգացվում ազատության մոտակա շունչը, հատկապես՝ գորբաչովյան կարճատև, բայց շատ նշանակալից կառավարման ժամանակ, երբ, ինչպես ասում են՝ «Ջինը, սափորից դուրս գալուց հետո, չուզեց նորից մտնել այնտեղ»: Հայտնի հրապարակախոս Զորի Բալայանի սուր ու փաստերով ապացուցված հոդվածները ձեռքից ձեռք էին անցնում ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Ղարաբաղում: Որոշ վայ-պատմաբաններ փորձում էին ամեն կերպ հերքել ճշմարտությունը, բայց անցել էին այն ժամանակները, երբ ճնշվում էր ազատամտությունը: Ինչպես ասում են՝ «Քաչալը, որ ճար անող լինի, իր գլխի ճարը կտեսնի»: Այնտեղ այնպիսի հեղափոխություն էր կատարվում, որ փոխելու էր ոչ միայն մեր, այլև Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների ճակատագիրը:

Ինչի՞ց սկսվեց ազատագրական պայքարն Արցախում: Բազմաթիվ գրողներ, գիտնականներ, պատմաբաններ կանդրադառնան այդ թեմային, դիսերտացիաներ կպաշտպանեն, նույնիսկ պատմավեպեր կգրեն:

Բայց իմ ուզածը բոլորովին ուրիշ է՝ պատմել այն, ինչ իրականում է տեղի ունեցել, իմ աչքի առաջ, և թե ինչ տանջանքների ու փորձությունների միջով է անցել իմ ընտանիքը՝ Արցախի ու Շահումյանի հազարավոր ընտանիքների նման: Իմ պատմածի մեջ կաշխատեմ ոչ մի չափազանցություն չանել, այլ պատմել իրականությունը:

ГАУ РС(Я) "Медиацентр им. Н. Гастелло"

ՍԿԻԶԲԸ

1987 թվականի սկզբներին Ստեփանակերտում և Ղարաբաղի մյուս շրջաններում սկսվեց ստորագրությունների հավաքումը՝ Ղարաբաղը Հայաստանին միացնելու նամակի տակ՝ ուղղված ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին՝ հայ ժողովրդի դարավոր ձգտումը բավարարելու պահանջ-խնդրանքով: Պետք է նշել, որ այդպիսի ստորագրահավաքներ էլի էին եղել, սակայն, բնականաբար, այդ ջանքերն իզուր էին անցել՝ հասկանալի պատճառներով: Բայց այս անգամ, կարծես, ինչ-որ հույսեր կային՝ կապված Մոսկվայում կատարվող հայտնի իրադարձությունների հետ, ինչպես նաև այն լուրերի, որ, իբր թե, հայտնի գիտնական ակադեմիկոս Աղամբեկյանի գլխավորությամբ կազմավորվել է մի խումբ, որը համոզում է Կրեմլին՝ դրական լուծում տալ այդ հարցին: Խոսում էին նաև այն մասին, որ իբրև թե կա նախնական համաձայնություն, և այդ հարցը որոշվելու է ոչ թե քաղաքական նկատառումներով, այլ տնտեսական՝ ելնելով Հայաստանի և Ադրբեջանի շահերից: Նույնիսկ, իբրև Ադրբեջանի կառավարությունը դեմ չէ դրան:

Թե ինչքանով էին ճիշտ կամ սխալ այդ լուրերը, չեմ կարող հերքել կամ հաստատել, բայց կասեմ, որ դրանց շատ քչերն էին հավատում, մանավանդ այն բանին, թե իբր Ադրբեջանի կառավարությունը համաձայն է դրան: Մենք՝ ղարաբաղցիներս, շատ լավ գիտենք, որ հազիվ թե նրանք իրենց ամենահամեղ պատառը ձեռքից գցեն: Պետք է անկեղծորեն ասեմ, որ տեղի ադրբեջանցիները ոչ մի բողոք կամ դժգոհություն այդ լուրերին չէին արտահայտում, այլ ընդհակառակը, նրանցից շատերը մեր հարցերին՝ թե ի՞նչ կարծիքի են, բոլորն էլ գոնե մեր ներկայությամբ ոչ մի վատ բան դրա մեջ չէին տեսնում: Բայց մթնոլորտն օր օրի շիկանում էր: 1987 թվականի հոկտեմբերին ադրբեջանցիները Շամխորի շրջանի Չարդախլու հայկական գյուղաքաղաքի բնակիչներին ստիպեցին թողնել իրենց հարազատ գյուղը: Երևանում և Ստեփանակերտում սկսվեցին բողոքի առաջին ցույցերը: Մենք գիտեինք, որ քաղաքում մեր մտավորականության մի քանի առաջամարտիկներ կազմակերպել էին «Կռունկ» ծածկանունով մի խումբ, որը նպատակ ուներ միավորելու Արցախի ժողովրդին՝ վրա հասնող անխուսափելի սպառնալիքներին դիմակայելու համար: Արցախի ժողովուրդն այդ խմբի շնորհիվ, բարեբախտաբար, ժամանակին կարողացավ

ГАУ РК "УЧРЕЖДЕНИЕ ИМЕНИ ГЕЙДАРА АЛИЕВА"

միանալ մի գաղափարի շուրջ՝ սովետների իշխանության փլզումից հետո միանալ Մայր Հայաստանին՝ լավ գիտակցելով, որ այս անգամ սխալվելու իրավունք չունի: Խաղաքարտի վրա էր դրված հայ ժողովրդի մի ստվար մասի լինելու կամ չլինելու հարցը, իսկ, ավելի ճիշտ՝ ամբողջ հայ ժողովրդի հետագա ճակատագիրը:

Վերջապես եկավ 1988 թվականի փետրվարի քսանը: Այդ օրն իմ հիշողության մեջ կմնա՝ որպես անջնջելի վառ իրադարձություն:

ԳՈՐԾԱԴՈՒԼ

Այդ առավոտ շուտ էի արթնացել, որովհետև նախորդ օրվա ինձ տրված հրահանգով՝ ժամը 9-ին պետք է կանգնեցնեի կաթսայատան աշխատանքը, որը նշանակում էր կանգնեցնել ողջ կոմբինատի արտադրամասերը: Այդ օրը «Ղարմետաքս» կոմբինատի ողջ կոլեկտիվը մի մարդու նման պիտի դուրս գար հրապարակ՝ պաշտպանելու մեր մարզային պատգամավորների գործունեությունը: Ազդանշանը պետք է լիներ հենց կաթսաների աշխատանքի դադարեցումը, որը և կատարվեց իմ կարգադրությամբ:

Ուղիղ ժամը իննից տասը րոպե պակաս ես կարգադրեցի փակել գազի մատակարարման փականները, միաժամանակ անջատվեց նաև էլեկտրական հոսանքը: Հսկա կոմբինատի հաստոցների աղմուկը, որը լսվում էր անգամ քաղաքից դուրս, լռեց: Բանվորներից շատերն, իհարկե, գիտեին, թե դա ինչ է նշանակում, բայց թե ինչո՞վ այդ ամենը կվերջանա՝ ոչ ոք չգիտեր: Հազարավոր բանվորներ ու բանվորուհիներ դուրս եկան փողոց: Նրանց միացան քաղաքի մյուս արտադրությունների ու ձեռնարկությունների աշխատողները: Եվ ժողովուրդը գետի պես հորդեց դեպի հրապարակ, որտեղ մարզային խորհրդի ու մարզկոմի շենքերն էին: Այդ օրը պիտի տեղի ունենար մարզային խորհրդի պատգամավորների արտահերթ նիստը, այդ օրը Արցախի ժողովրդի ներկայացուցիչներն առաջին անգամ բացարձակ կերպով պիտի հաստատեին ժողովրդի պահանջը՝ «Միացում Մայր Հայաստանի՛ն»:

Մարզային կուսկազմակերպության առաջին քարտուղար Բորիս Կևորկովը գռեհիկ ու դաժան մարդ էր: Նրա ո՛չ անունն էր հայի, ո՛չ ազգանունը և ոչ էլ, առավել ևս՝ արարքները: Կևորկովը հրամայել էր արգելել մարզային պատգամավորների նստաշրջանը և միլիցիայի աշխատողներին կարգադրել փակել հրապարակի մուտքը ժողովրդի առաջ՝ թույլ չտալով մտնել հրապարակ: Նա լրացուցիչ

ГАУ РК "Национальный архив Гасринского"

օգնություն էր խնդրել նաև Բաքվից, և այնտեղից անմիջապես մարզկենտրոն ուղարկվեց ՕՄՕՆ-ի մի կատաղած ռոմակ: Փակվել էին դեպի Ստեփանակերտ տանող շրջանային ճանապարհները՝ թույլ չտալով շրջանների պատգամավորներին հասնել քաղաք, որպեսզի այդպիսով չապահովվի գումարման՝ որոշում ընդունելու համար անհրաժեշտ քվորումը: Մի խոսքով, ամեն ինչ արվել էր տապալելու համար մարզային խորհրդի նիստը: Ի պատիվ մեր շրջանային խորհուրդների պատգամավորների, պիտի ասեմ, որ նրանք կարողացան, հաղթահարելով արգելքները, զարտուղի ճանապարհներով հասնել հրապարակ, բայց մարզխորհրդի նիստերի դահլիճի մուտքը փակել էին ՕՄՕՆ-ի զինվորները: Այդ տեսնելով՝ ժողովուրդը ալիք տվեց, խորտակելով նրանց արգելքը և կենդանի պատ կազմելով, ճանապարհ բացեց պատգամավորների համար: Բռունցքները վեր պարզած՝ հրապարակ ներխուժած ժողովուրդը վանկարկում էր՝ մի-ա-ցո՛ւմ, մի-ա-ցո՛ւմ: Վերջապես բացվեցին մարզային կուսկոմիտեի փակ դռները, և Կևորկովի գլխավորությամբ մի քանի հոգի կանգնեցին հրապարակի տրիբունայում: Առաջինը խոսեց Կևորկովը և ասաց, որ մարզային պատգամավորների սեսիան անօրինական է, և որ մարզային կոմկուսի կոմիտեն չի հաստատի նրանց որոշումը: Նա հորդորում էր ժողովրդին՝ վերադառնալու իրենց աշխատանքին, իսկ մեղավորներին սպառնում էր պատժել՝ չենթարկվելու համար: Այնուհետև նա խոսքն ուզեց տալ մարզկոմի և քաղկոմի մյուս անդամներին, որոնք նրա հետ դուրս էին եկել տրիբունա, բայց ժողովուրդը չթողեց նրանց ելույթ ունենալ և առաջ մղվեց՝ գոչելով՝ դավաճա՛ն, Հուդա՛, ծախվա՛ծ և այլն: Կևորկովը, վախենալով ժողովրդի ցասումից, շտապեց մտնել մարզկոմի շենքը, իսկ նրա հետ եկողների մեծամասնությունը գնաց մասնակցելու սեսիայի աշխատանքներին:

Ժողովուրդն ավելի էր շատանում հրապարակում: Բոլորն սպասում էին սեսիայի արդյունքներին, իսկ այն ուշանում էր: Մեկ-մեկ ինչ-որ մեկը դուրս էր գալիս այնտեղից և իրարամերժ լուրեր բերում, որից ժողովուրդն ավելի էր հուզվում ու դառնում անհամբեր: Նույնիսկ թույլ չէին տալիս, որ պատգամավորները գնան ընդմիջման: Ժողովուրդը պահանջում էր՝ մինչև որոշումը չընդունվի, ոչ մի պատգամավոր ոչ մի տեղ չի գնա:

Վերջապես ներսից բուռն ծափահարություններ լսվեցին, և պատգամավորները, դուրս գալով ժողովրդի առաջ, կարդացին մարզային սեսիայի որոշումը, որտեղ ասվում էր. «Ընդառաջելով Ղարաբաղի

ГАУФК "МУЗЕЙ ИСТОРИИ ГАРАБАГСКОГО"

հայ ժողովրդի պահանջին՝ Մարզային պատգամավորների խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց՝ բավարարել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պահանջը և միջնորդել Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների, ինչպես նաև՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջ՝ ընդառաջելու ժողովրդի խնդրանքին և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերաենթարկել Հայաստանի Հանրապետությանը» (ես միայն այդ որոշման միտքն եմ նշում. ամբողջական տեքստը դժվար չէ գտնել):

Տեսնեիք, թե ի՜նչ աննախադեպ ուրախություն, գրկախառնություն, ծափ ու ծիծաղ էր տիրում հրապարակում: Այն ժամանակ մենք դեռ չգիտեինք, թե ինչ կհետևի դրան, չգիտեինք, որ այդ պատմական որոշումը դեռ սկիզբն է երկար ու դաժան պայքարի:

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Սեսիայից ընդամենը երկու օր հետո Ստեփանակերտից մոտ երեսուն կիլոմետր հեռու գտնվող ադրբեջանական Աղդամ քաղաքից մի մեծ խառնամբոխ ոտքով ճանապարհ ընկավ դեպի Ստեփանակերտ՝ «կարգ ու կանոն» հաստատելու նպատակով, սակայն ճանապարհին, հայկական Ասկերան ավանին չհասած, նրանց կանգնեցրեցին միլիցիան ու տեղի բնակչությունը: Այստեղ էլ տեղի ունեցավ հայ-ադրբեջանական առաջին ընդհարումը, ընկավ առաջին հայ զոհը՝ Ասկերանի շրջանային միլիցիայի աշխատակիցը: Ստեփանակերտցիներն այդ դեպքից խիստ անհանգստացած՝ դուրս եկան փողոց, իրենց բողոքի ձայնը բարձրացնելու այդ արարքի դեմ՝ չիմանալով, որ դա միայն սկիզբն էր:

Մոսկվան վերջապես անհանգստացավ կատարվող դեպքերից, և քաղբյուրո գումարվեց այդ հարցը լուծելու համար: Գորբաչովը, կտրականապես դեմ լինելով ամեն մի շարժման, որ սպառնում էր ԽՍՀՄ ամբողջականությանը և կարող էր «վարակիչ» լինել մյուսների համար, իր ելույթում մեզ անվանեց «սեպարատիստներ» (անջատողականներ)՝ փաստորեն հովանավորելով ադրբեջանցիներին: Մեր նամակ-խնդրանքը քաղբյուրոն մերժեց կտրականապես: Համարյա նույն տեքստով մերժում ստացանք նաև Բաքվից, և ոգևորված Մոսկվայի պաշտպանությունից՝ ՕՄՕՆ-ի մի մեծ դիվիզիա ուղարկվեց մեզ պատժելու համար:

Ասկերանի դեպքերից ընդամենը հինգ օր հետո կատարվեց սարսափելի եղեռնագործություն՝ Սումգայիթի հայ անմեղ բնակ-

ГАУ РК "Национальный архив им. Г.Сарыджалского"

չության զանգվածային կոտորածը: Ադրբեջանի և Մոսկվայի ՊԱԿ-ի գաղտնի գործակալների շնորհիվ՝ բանտերից իբրև փախած մի հոծ թափթփուկ բազմություն և նրանց միացած միլիցիայի աշխատակիցներ, զինված հրազենով, կացնով, երկաթյա՝ նախօրոք սրված բրերով, դանակներով, հարձակվեցին քաղաքի հայ բնակչության տների վրա, որոնց հասցեները նախապես ճշտված էին և գտնվում էին նրանց պարագլուխների ձեռքին: Երկու օր ու գիշեր խելահեղ ավազակախումբը հայ մարդ էր փնտրում մորթելու համար, ինչպես 1915-ին: Այդ օրերին զոհվեցին տասնյակ հայեր, շատ ավելի, քան կար կառավարական հայտարարություններում: Իսկ թե ինչքան է փաստացի զոհվածների թիվը, մինչև հիմա էլ հայտնի չէ: Լուրը տեղ հասավ շատ արագ, և մենք հասկացանք, որ մնացել ենք մեն-մենակ:

ՁԻՆԱԹԱՓՈՒՄ

Մոսվայից ուղարկված հատուկ նշանակության զորքերը լրիվ զինաթափեցին առանց այն էլ անզեն հայերին: Միակ զենքը, որ կար, որսորդական հրացաններն էին, որոնք հաշվառված էին, և հենց այդ ցուցակներով էլ շատ հեշտությամբ որսորդներից առգրավվեցին դրանք: Քաղաքում շուրջկալներ էին կազմակերպում՝ «Կռունկ»-ի անդամներին ձերբակալելու համար, բայց ժողովուրդը պաշտպան կանգնեց իր արի զավակներին փրկելու համար: Զինաթափեցին անգամ հայ միլիցիոներներին, իսկ ադրբեջանցիներից ոչ մեկին անգամ մատով չկպան: Ամեն օր բողոքի միտինգներ էին տեղի ունենում՝ սկզբում կենտրոնական հրապարակում, բայց շուտով այն փակվեց զինվորականների միջոցով, որոնք օգտագործում էին զանազան քիմիկատներ՝ ժողովրդի վրա նետելով արցունքաբեր և այլ գազերով նռնակներ: Ժողովուրդը ստիպված միտինգները տեղափոխեց քաղաքի մուտքի մոտ գտնվող հրապարակը և շարունակեց իր խաղաղ պայքարն ամեն օր, առանց դադարի, ամիսներ շարունակ:

ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԻԼԵՐԸ

Բայց ասենք, որ քանի դեռ կոմբինատն աշխատում էր, մենք ձեռքերս ծալած չէինք նստում: Ես լսել էի, որ տղաները քաղաքում ինքնաշեն ռումբեր են թաքուն պատրաստում: Շուտով իմացա

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гасприского"

պատրաստման գաղտնիքը և գնացի մեխանիկական արտադրամաս, որի պետը Երեմ Հայրապետյանն էր: Նա իր մոտ կանչեց խառատներ Հրայր Վանյանին, Աշոտ Սայիյանին, որոնք լավագույն ու վստահելի մարդիկ էին, ինչպես նաև ձուլող Ազատ Սարգսյանին, որը Հայաստանի ապագա նախագահ Սերժ Սարգսյանի հայրն է, և նրանց վստահեց այդ հույժ գաղտնի գործը: Ես նրանց տվեցի պատրաստման սխեմաները, և նրանք անցան գործի: Ճիշտ է, մենք համոզված էինք, որ ոչ մի հայ մարդ մեզ չի մատնի, բայց զգուշություն պետք էր: Այդ մասին շատ քչերը գիտեին, որովհետև, եթե իմացվեր, ապա պարզ էր, թե ինչ կլիներ մեզ հետ: Իհարկե, գիտեին տնօրեն Ռոբերտ Սևումյանը և կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը: Բայց այդ գործին մենք նրանց չէինք խառնում, քանի որ նրանք ավելի բարձր ու պատասխանատու գործեր էին կատարում՝ մարզի պաշտպանական ճակատ կազմակերպելով: Քաղաքի մյուս ձեռնարկություններում նույնպես քնած չէին. կահույքի ֆաբրիկայում, որտեղ Աքսենյան էր աշխատում, գաղտնի կերպով հրացանների խզակոթեր էին պատրաստում: Էլեկտրատեխնիկական գործարանում հմուտ վարպետները մեքենաների զանազան մասերը ձևափոխում՝ զենք էին պատրաստում: Մի խոսքով՝ ինքնապաշտպանական բնազդով, լավ իմանալով, թե ինչով կարող է վերջանալ մեզ զինաթափելը, մենք դարձել էինք մի բռունցք, ու եթե որևէ մեկը փորձում էր ընդդիմախոսել մեր շարժմանը, դավաճան էր համարվում:

Ադրբեջանցի բնակիչները Սումգայիթի դեպքերից հետո սկսեցին հեռանալ քաղաքից, բայց ոչ ոք նրանց որևէ վատ բան չարեց, ոչ մի ադրբեջանցու քիթն անգամ չարնոտվեց, ոչ մի տուն չայրվեց ու չթալանվեց, չնայած մարդկանց հոգում կուտակված ցավին: Մենք լավ էինք հասկանում, որ Ադրբեջանը հենց դրան էր սպասում՝ Բաքվում և մյուս քաղաքներում ապրող հայերի հետ իրենց հաշիվները մաքրելու համար: Բայց մենք սխալվում էինք՝ կարծելով, որ Սումգայիթից հետո երևի ուրիշ տեղ այդպիսի բան չի կրկնվի. Բաքվին հաջորդեցին Կիրովաբադը և մյուս հայաշատ քաղաքները: 1990 թվականի ապրիլին Կիրովաբադում տեղակայված խորհրդային զորքերը Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատների հետ համատեղ հարձակվեցին Շահումյանի շրջանի հայկական գյուղերի վրա՝ «Օղակ» կոդավորված անունը կրող տխրահռչակ օպերացիան իրագործելու: Հայկական փոքրաթիվ վատ զինված ջոկատները և երկրապահները, չնայած հերոսական դիմադրությանը, երկար

ГАУ РК "Национальный архив Крыма"

չկարողացան պահել իրենց հարազատ օջախները: Սկսվեց շրջանի հայ բնակչության բռնագաղթը: Նրանց մի մասը, ոտքով կտրելով հարյուրավոր կիլոմետրեր, Մարտակերտի շրջանով հասավ Ստեփանակերտ: Նրանք սարսափելի վիճակում էին, և Ստեփանակերտն էլ նրանց վերջին հանգրվանը չէր: Միառժամանակ մնալուց հետո՝ նրանք շարունակեցին ճանապարհը, ավելի ճիշտ՝ ուղղաթիռներով տեղափոխվեցին Երևան: Շահումյանից հետո օղակը սեղմվում էր արդեն Ղարաբաղի շուրջը՝ փակելով դեպի մարզ եկող բոլոր ճանապարհները: Հայաստանն էլ հայտնվեց շրջափակման մեջ: Փակվեց երկաթգիծը: Մեծ երկրաշարժից հետո հայ ժողովուրդը ստացավ ևս մի դաժան փորձություն: Բայց դա ուրիշ պատմություն է, որը պատմաբանները, երևի, կհամարեն հայ ժողովրդի ևս մի հերոսական էջ, սակայն դա իրականում էջ չէ, այլ բազմահատոր հերոսամարտ: Հենց այդ տարիներին էր, որ կայացավ հայի «մեծ հրաշքը»՝ միասնությունը, որը մի անգամ չէ, որ փրկել է մեր ազգը ստույգ ոչնչացումից:

Իսկ այժմ վերադառնանք Ստեփանակերտ և շարունակենք հիշել այդ օրերի մեր վիճակը:

Այն ժամանակ, երբ տեղի ունեցավ Սումգայիթի սպանդը, ավագ որդիս՝ Դավիթը սովորում էր Բաքվի ինժեներատեխնիկական ինստիտուտում: Մեր հորդորանքով նա կարողացավ գործերը տեղափոխել Սիմֆերոպոլի նույնանուն ինստիտուտ, և ընդամենը մի քանի օրից հետո սկսվեցին Բաքվի ջարդերը: Աշոտը՝ միջնեկ տղաս, բանակում էր, փոքրս՝ Արմենը, ոսկե մեդալով ավարտելով դպրոցը, պատրաստվում էր ընդունվել Երևանի բժշկական ինստիտուտ, իսկ Նարինեն՝ աղջիկս, ընդամենը վեց տարեկան էր: Այս բոլորը գրում եմ, որ պարզ լինի իմ ընտանեկան դրությունն այդ ժամանակ, երբ ինձ ամենաշատն էր հարկավոր խաղաղ կյանք, որ կարողանայի որդիներիս ուսումը շարունակելն ապահովել: Բայց հազարավոր մեզ նմանների պես՝ մեզ էլ պարտադրած պատերազմը գարնան հեղեղի պես ամեն ինչ քշեց տարավ դեպի անհայտություն:

Մեր օր օրի ուժգնացող համառությունից անհանգստացած՝ Մոսկվան նոր ուղիներ էր փնտրում դրությունն իր ձեռքում պահելու համար: Մեր աչքերին թոզ փչելու համար՝ մարզը ժամանակավոր առավ իր ենթակայության տակ՝ մեզ մոտ գործուղելով քաղբյուրոյի անդամ Արկադի Վոլսկուն: Քաղաքում ռազմական դրություն էր հայտարարված: Հատուկ նշանակության զորքերն ամեն քայլափոխի ստուգում էին անձը հաստատող փաստաթղթերը, քաղաք մտնող

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гасприского"

բոլոր ճանապարհների վրա զինվորական հսկիչ կետեր էին ամրացրել՝ ավազով լիքը պարկերով փակելով ճանապարհի մեծ մասը: Բոլորը զինված էին ավտոմատներով ու զրահազգեստ էին հագած, չնայած որ ոչ մի խորհրդային զինվորի ոչ ոք՝ խոսքով անգամ չի վիրավորել ողջ այդ ժամանակահատվածում, այլ՝ ընդհակառակը՝ ով ինչով կարող էր, օգնում էր նրանց:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայից հատուկ հետաքննչական բրիգադ ուղարկվեց, որն սկսեց «գործ բացել» «Կռունկ» հայապաշտպան միության անդամների դեմ: Նրանց հարցաքննում էին ամեն օր, բայց քանի որ Մոսկվան ի լուր աշխարհի հայտարարել էր, որ խոսքի ազատության համար ոչ ոք չի մեղադրվում, հատուկ քննչական խումբն աշխատում էր նրանց մեղադրել ուրիշ հանցագործության մեջ, դրա համար էլ փորփրում էին նրանց բոլոր գործերը՝ գտնելու համար գոնե աննշան մի բան՝ ժողովրդի աչքում սևացնելու համար: Դա կեղտոտ խաղ էր՝ մեզ միմյանց դեմ հանելու և մեր միասնությունը քայքայելու համար:

Անձամբ ինձ մի քանի անգամ կանչել են հարցաքննության՝ թե ինչո՞ւ եմ կարգադրել կանգնեցնել կաթսայատան աշխատանքը, որի պատճառով դադարեցվել է կոմբինատի աշխատանքը, և ո՞վ է ինձ հրամայել այդ անել: Ես, իհարկե, պատասխանեցի, որ ինձ ոչ ոք չի հրամայել, այլ աշխատանքը կանգնեցվել է վառելիքի՝ այսինքն գազի ցածր ճնշման պատճառով: Ես համոզված էի, որ նրանք կստուգեն ասածս, և նախօրոք հերթապահության գրքում ամեն ինչ գրանցել էի՝ ինչպես հարկն էր: Նրանք հարցուփորձ էին արել հնոցապաններին, և ոչ ոք չէր ասել իսկությունը: Մենք ունեինք ադրբեջանցի հնոցապաններ, բայց նրանք ինքնակամ թողել էին աշխատանքը և չէին կարող հակառակն ապացուցել: Մյուս անգամ հարցնում էին, թե ի՞նչ հասարակական աշխատանք եմ կատարում և ո՞ւմ եմ հանձնել հավաքված անդամավճարները, ո՞ւմ կարգադրությամբ, արդյոք կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը կապ ունի՞ դրա հետ և այլն: Ես, իհարկե, գլխի էի ընկնում, թե ուր են տանում այդ հարցերը, և կտրականապես հերքում էի՝ ասելով, որ դա ոչ մի կապ չունի կուսկազմակերպության հետ և կատարվում էր արհմիությունների կողմից: Նրանց ներկայացրի անդամության ցուցակներն ու անդամավճարների մուծման կտրոնները, որից հետո միայն նրանք հանգիստ թողեցին ինձ: Միայն ինձ չէ, որ կանչում

ГАУ РК "Национальный архив Республики Крым"

էին հարցաքննության: Կոմբինատի բոլոր պատասխանատու պոստերում գտնվողներին հարցաքննում էին, և քաղաքի մյուս ձեռնարկություններում էլ նույնն էր կատարվում:

Բայց դրանով ամեն ինչ չվերջացավ, այլ միայն սկսվեց: Կալանքի տակ վերցրին համարյա բոլոր ակտիվիստներին, բայց ժողովուրդն ամենօրյա ցույցերով ամեն ինչ անում էր նրանց ազատելու համար, և մեզ դա մասամբ հաջողվում էր: Վախենալով ավելի սրել դրությունը՝ մեզ միառժամանակ, կարծես, հանգիստ թողեցին, բայց ամեն օր՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ հայ անմեղ մարդիկ էին զոհվում, առանձնապես այն գյուղերում, որոնք սահմանակից էին ադրբեջանական բնակավայրերին: Օրինակ՝ մեր հարևան մի երիտասարդ մարդու՝ Լյովային, իրենց գյուղի մոտ անասուններ պահելու ժամանակ դարանակալել ու բռնել էին և հետո մորթել գետակի մոտ: Եվ դա միակ դեպքը չէր, այլ մեկը մյուսին հաջորդող անմարդկային դաժանությունների շարան:

Սկսվեցին անժամկետ գործադուլները: Ժողովուրդն աշխատանքի չէր ուզում դուրս գալ, մինչև իր արդար պահանջները չբավարարվեն՝ կարծելով, թե դրանով կստիպեն կառավարությանը՝ փոխելու իր ծրագրերը: Բայց դա միամտություն էր: Մոսկվային դա բոլորովին չէր անհանգստացնում: Մեզ հասնող տեղեկությունների համաձայն՝ Գորբաչովը ասել էր. «Չեն ուզում, թող սոված մնան, որ վերջապես հասկանան, որ այն, ինչ ուզում են, չի լինելու»: Աշխատանքի դուրս չգալու մյուս պատճառն այն էր, որ չգիտեին, թե իրենք աշխատավարձ կստանա՞ն, թե՞ ոչ, և ո՛վ պիտի իրենց վճարեր: Անհայտ էր նաև, թե ուր պիտի առաքեն արտադրանքը, երբ փակ էին բոլոր ճանապարհները, վաղուց երկաթգծի կայարանը չէր աշխատում՝ երկաթգիծը քանդելու պատճառով: Ավելի ճարպիկները կարողացել էին ժամանակին իրենց տնտեսած գումարները հանել խնայդրամարկղներից, մինչև դրանց փակվելը: Ոսկերչական խանութներում հերթ էր գոյացել. ում ձեռքին փող կար՝ փոխում էր ոսկյա ապրանքների հետ, մինչև որ ոսկերչական խանութներն էլ փակվեցին: Մեծամասնության, այդ թվում նաև իմ՝ տարիներով կաթիլ առ կաթիլ հավաքած գումարները, որոնք խնայդրամարկղում էին՝ մեր երեխաների և մեր անվամբ ձևակերպված հաշիվներին, կորան-գնացին անվերադարձ: Ամեն օր՝ բարձրախոսներով զինված զրահամեքենաները շրջում էին քաղաքի փողոցներում, հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղը եղել և մնալու է Ադրբեջանի կազմի մեջ, իզուր մի՛ սրեք իրադրությունը և վերադարձեք աշխատանքի, այլապես կկիրառվի սաբոտաժի

ГАУ "ГОСУДАРСТВЕННЫЙ АРХИВ Г. ТБИЛИСИ"

համար պատժելու օրենքը, և գործադուլի կազմակերպիչներին կձերբակալեն: Այսպիսի կամ մոտավորապես այսպիսի հայտարարություններով ցանկանում էին վախեցնել դարաբաղցուն՝ չիմանալով, որ սովորաբար հանգիստ ու համբերատար արցախցին երբ «կողի է ընկնում», մինչև իր ասածին չհասնի, հետ չի կանգնի իր նպատակից, և ոչ ոքի դարեր շարունակ չի հաջողվել ու չի էլ հաջողվի նրան հետ կանգնեցնել:

Մարզը՝ քանի գտնվում էր Մոսկվայի անմիջական ենթակայության տակ, պարենամթերքով շատ թե քիչ բավարարվում էր, բայց երբ շրջափակվեց ամեն կողմից, փորձելով վերջին անմարդկային ճիգերը գործադրել մեզ ճնշելու համար, ամեն ինչ փոխվեց: Երկաթուղու փակման հետ, ինչպես ասացինք, փակվեցին նաև դեպի շրջանները տանող հիմնական ճանապարհները, որովհետև դրանք անցնում էին ադրբեջանական բնակավայրերով, իսկ տեղի բնակիչներն ամեն անցնող մեքենա քարկոծում էին, և տեղ հասնողներն արյունլվա ու ծանր վիրավորված տեղափոխվում էին հիվանդանոց: Շրջանների հետ կապվելու համար ստիպված օգտագործում էին լեռներով անցնող վաղուց մոռացված՝ մեր հեռատես պապերի թողած խորդուբորդ ճանապարհները, որոնք համեմատաբար հեռու էին ադրբեջանցիների բնակավայրերից: Փակված էր նաև Լաչինի միակ ճանապարհը, որը կապում էր Հայաստանի հետ: Արտաքին աշխարհի հետ միակ կապը դեռևս գործող օդանավակայանն էր: Ի պատիվ մեր՝ հիրավի հերոս հայ օդաչուների, պիտի նշեմ, որ «ՅԱԿ»-երը մեկը մյուսի հետևից տեղափոխում էին պարենամթերք և մարդկանց, իսկ պատերազմի ժամանակ ուղղաթիռների հետ միասին, չնայած կորուստներին, տեղափոխում էին նաև զենք ու զինամթերք, վառելիք, վիրավորներին: Օդանավակայանից քիչ ներքև ադրբեջանական Խոջալու գյուղն էր, որը նախկինում հայկական է եղել: Բայց հետագայում՝ ադրբեջանցիները, որոնք գարնանը սարերն էին տանում իրենց անասունները և աշնանը վերադառնում, սկսեցին իրենց «յաթաղները» տեղադրել գյուղի մոտից անցնող մայրուղու մոտակայքում, հետո կամաց-կամաց հաստատվեցին այնտեղ, իսկ հայերը թողեցին ու հեռացան այդ գյուղից:

Հակամարտության հենց սկզբից ադրբեջանցիներն սկսեցին ուժեղ թափով զարգացնել այդ գյուղը: Շտապ կերպով այնտեղ տեղափոխեցին շինարարական բրիգադներ և շինանյութեր: Սկսեցին մի աննախադեպ շինարարություն՝ փոքրիկ գյուղը քաղաք

ГАУ РК "Институт им. М. Горького"

դարձնելու համար: Նպատակը մեկն էր՝ այն դարձնել մարզի կենտրոն, այնտեղ տեղավորել իրենց դրածոներին և անօրինական համարել Ստեփանակերտում գտնվող կառավարությունը: Բեռնատար գնացքներն օր ու գիշեր այնտեղ էին հասցնում շինանյութերով, վառելիքով, պարենամթերքով բեռնված վագոնները, այն դեպքում, երբ Ստեփանակերտում օրեցօր պակասում էր պահեստներում դեռ մնացած ամեն ինչ, ներառյալ՝ ալյուրն ու վառելիքը:

1991 թվականի աշնանը Ստեփանակերտ եկավ Բորիս Ելցինը՝ Ղազախստանի կոմկուսի առաջին քարտուղար Նուրսուլթան Նազարբաևի հետ միասին: Հանդիպում ունենալով բոլոր կողմերի հետ, նրանք փորձեցին ևս մեկ անգամ համոզել մեզ՝ հրաժարվել մեր նպատակներից: Նրանք նույնիսկ դուրս եկան հրապարակում հավաքված ցուցարարների մոտ, բայց համոզվելով, որ ոչինչ հնարավոր չէ անել, թողեցին ու հեռացան: Նրանց հեռանալուց անմիջապես հետո քաղաքում տարիներ շարունակ տեղակայված խորհրդային զորակայանը տեղահանվեց՝ իր հետ տանելով ռազմական տեխնիկան, զենքն ու զինամթեքը, իսկ այն, ինչ հնարավոր չէր տեղափոխել, ոչնչացրին: Ինչպես հետո պարզվեց, իրենց հետ տարած զինվորական տեխնիկան նրանք տվեցին ադրբեջանցիներին՝ մեզ թողնելով անզեն: Ահա թե գորբաչովյան քաղբյուրոն ինչով հատուցեց մեզ՝ հայերիս՝ կոմունիստների կառավարման կես դարից ավելի իրենց անձնուրացաբար նվիրված լինելու դիմաց:

ԱԳՐԵՍԻԱ

1991 թվականի վերջում Ադրբեջանը, օգտվելով ԽՍՀՄ փլուզումից, արագ կերպով զինաթափեց Ադրբեջանում գտնվող խորհրդային զորքերը՝ իր չորս դիվիզիաներով, և Կասպից ծովի համարյա ողջ ռազմանավերն ու ռազմական ինքնաթիռների մեծ մասը: Այդ բոլորն ունենալով իր ձեռքում՝ Ադրբեջանի կառավարությունը որոշեց լայն ճակատով հարձակվել Ղարաբաղի վրա:

Դրությունը դարձավ շատ վտանգավոր մեզ համար: Ղարաբաղում արագ կերպով կազմակերպվեցին կամավորական մանր ջոկատներ, որոնք, իհարկե, չէին կարող երկար դիմակայել ադրբեջանական՝ մինչև ատամները զինված կանոնավոր բանակին, սակայն մեր թիկունքում Մայր Հայաստանն էր կանգնած: Չնայած հետերկրաշարժյան ծանր պայմաններին, Հայաստանը միայնակ չթողեց ղարաբաղցիներին, օգնության հասավ ու, միավորելով փոքր ջոկատները, ստեղծեց միացյալ ճակատ:

ГАУ РК "Национальный архив Карабаха"

Սկսվեցին հարձակումները Հյուսիսային Արցախի՝ Շահումյանի հայկական գյուղերի վրա: Փոքրաթիվ հայկական ջոկատներին չհաջողվեց երկար դիմակայել, և հայաթափվեցին դարերի պատմություն ունեցող հայկական շեն գյուղերը:

Ստեփանակերտը լցվել էր Շահումյանի գյուղերից մազապուրծ եղած հայերով: Քաղաքի բնակիչները, ով ինչով կարող էր, օգնում էին նրանց, բայց քանի որ քաղաքում օր օրի ծանրանում էր դրությունը, նրանցից շատերը՝ ավելի ճիշտ այն, ինչ մնացել էր նրանցից, ուղղաթիռներով և ինքնաթիռներով տեղափոխվեցին Հայաստան:

Ստեփանակերտում մեր դրությունը կտրուկ վատացավ 1991 թվականի սեպտեմբերի երկուսից հետո, երբ Լեռնային Ղարաբաղում իշխող միակ օրինական՝ Մարզային խորհուրդը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ հանրապետություն՝ միանգամայն օրինավոր կերպով՝ համաձայն դեռևս գործող ԽՍՀՄ սահմանադրության երրորդ հոդվածի:

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Մենք գտնվում էինք լրիվ շրջափակման մեջ: Չկար ո՛չ ցամաքային և ո՛չ էլ կանոնավոր օդային կապ Հայաստանի հետ, եթե չհաշվենք մեր հայ օդաչուներին, որոնք կրակի տակ շարունակում էին «ՅԱԿ»-երով և ուղղաթիռներով մեզ հասցնել ամենաանհրաժեշտը, ինչ հնարավոր էր տեղափոխել: Չէր գործում հացի միակ գործարանը, չկար էլեկտրականություն, որի հետևանքով էլ քաղաքը չէր մատակարարվում ջրով: Միայն գերեզմանոց տանող ճանապարհի՝ ձորում հոսող հին աղբյուրն էր մնացել՝ Վարարակնը, որը փրկում էր մեզ ծարավից, բայց այնտեղ այնպիսի հերթեր էին գոյանում գիշեր ու ցերեկ, որ ժամերով պիտի կանգնեինք: Ջուրը տուն էին հասցնում ով ինչով և ինչպես կարող էր: Ես՝ արդեն չգործող կոմբինատից մի սայլակ էի գտել և, նրա վրա բեռնելով ամանեղենը, հրելով մոտ երկու-երեք կիլոմետր, հասնում էի աղբյուրին: Նույն կերպ էին վարվում շատերը, իսկ քաղաքի մի մասի բնակիչները, որոնք շատ էին հեռու աղբյուրից, իջնում էին քաղաքի ձախ կողմի ձորը, ուր գետի ափին մոտ կային փոքրիկ աղբյուրներ: Մեր միակ հույսը Մայր Հայաստանն էր:

Սկսվեց Ստեփանակերտի հրթիռակոծումը՝ Շուշի քաղաքում, ինչպես նաև Աղդամում ու շրջակա աղրբեջանական Ջանհասան

ГАУ РК "Национальная библиотека им. И.Гаспринского"

և Քյոսալար գյուղերում տեղադրված «Գրադ» և «Ալազան» մակնիշի հրթիռներով: Այդ բնակավայրերը տեղադրված էին քաղաքից բավականին բարձր դիրքերում, և ադրբեջանցիներն այնտեղից ինն ամիս շարունակ, գիշեր ու ցերեկ կրակի տակ էին պահում Ստեփանակերտը: Ժողովուրդն ստիպված իջել էր շենքերի նկուղները, որոնք բոլորովին նախատեսված չէին այդպիսի դեպքերում օգտագործելու համար: Դրանք կիսով չափ լցված էին հողով, և այնտեղով անցնում էին ջրամատակարարման ու ջեռուցման խողովակները: Մենք ստիպված՝ ընդամենը երկու մետրից էլ պակաս բարձրություն ունեցող նկուղներում տեղավորվում՝ էինք ամբողջ ընտանիքներով ու հարևաններով, իսկ երբեմն էլ՝ մի քանի շենքի բնակիչները միասին: Հրթիռները քարուքանդ էին անում մեր գեղեցիկ քաղաքի տները: Հենց առաջին օրերին էլ եղան առաջին զոհերը:

Անբացատրելի մի բան էր կատարվում քաղաքի բնակիչների հետ: Ռմբակոծության առաջին օրերի վախին ու հուսահատությանը հաջորդեց մի տեսակ անտարբերությունը, ասես մեզ վրա չէին կրակում, ու մենք սկսել էինք հարմարվել դրան: Ռմբակոծությունների տակ մենք գնում էինք ջրի, փայտի, այսինքն՝ ոչ թե անտառ, ուր հասնել հնարավոր չէր, այլ հատում էինք ճամփեզրի ծառերի ճյուղերը՝ կրակ վառելու, գոնե մի բան եփելու համար, բայց դրանք էլ օր օրի պակասում էին: Երիտասարդներից շատերը կամավոր միացել էին դիմադրության ջոկատներին, բայց կային նաև պարապ-սարապ իրենց համար թրև եկողներ, որոնց ոչ ոք չէր անհանգստացնում:

Սկզբում կազմավորված ջոկատներն այնքան էլ գրկաբաց չէին ընդունում իրենց միացողներին. պատճառն այն էր, որ զենք չկար և ոչ էլ պարենամթերք, որ կարողանային նրանց պահել ու բավարարել պահանջները: Բացի այդ, չկար ընդհանուր կազմակերպված ռազմական ղեկավարություն: Շատ հաճախ ջոկատների հրամանատարներն իրենք էին որոշում ջոկատի գործողությունները և, կարծում եմ, դա էր պատճառներից մեկը, որ պատերազմի սկզբում ադրբեջանցիները կարողացան արագ հասնել որոշակի հաջողությունների: Իսկ հասակն առած տղամարդիկ, նրանց հետ և ես, գիշեր ու ցերեկ հերթով հսկում էինք՝ ամեն մեկն իր թաղամասում, որպեսզի հակառակորդը հանկարծակիի չբերի մեզ, թեև ձեռքերիս մի կարգին զենք էլ չկար, բացի ինքնաշեն մի քանի հրացաններից ու նռնակներից:

ГАУ РК "ЦЕНТР ИМЕНИ К. ГАРЕГИНА ЭНДУТЕ"

ԸՆՏԱՆԻՔ

Ինչպես նշել էի, Բաքվում տեղի ունեցած դեպքերի նախօրեին, մեր հորդորանքով, մեծ տղաս՝ Դավիթն, իր ուսումը շարունակում էր Սիմֆերոպոլում, իսկ միջնեկ որդիս՝ Աշոտը, նոր էր վերադարձել բանակից և կռվում էր դիմադրության ջոկատներում՝ սկզբում Ասկերանի դիրքերում, հետո՝ Մարտակերտի: Այդ ջոկատի հրամանատարն էր Արցախի հերոս Վլադիմիր Բալայանը: Կրտսեր տղաս՝ Արմենը, Երևանի բժշկական ինստիտուտի երկրորդ կուրսում էր, բայց արձակուրդներին եկավ ու մնաց մեզ մոտ և աշխատում էր նոր կազմակերպված զինվորական հոսպիտալում, օգնում էր փորձված վիրաբույժներին՝ վիրավոր երկրապահների վերքերը բուժելու: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայրենի գյուղն ապրուստի տեսակետից մի փոքր ավելի բարվոք վիճակում էր, քաղաքի հետ համեմատած, մենք որոշեցինք, որ լավ կլիներ, եթե Աքսենյան աղջկաս հետ ժամանակավորապես գնար գյուղ, որտեղ ուտելու մի բան միշտ էլ կգտնվեր՝ քանի կոլխոզը գոյություն ուներ: Դաշտերում ու այգիներում հասունանում էր բերքը, իսկ կոլխոզի նախագահն էլ իմ մանկության ընկերն Սլավան էր, որը, ցավոք, հետագայում զոհվեց ռմբակոծության ժամանակ: Բացի դրանից, Մարտակերտի շրջանը հակամարտության սկզբում, կարծես, հուսալի պաշտպանված էր մեր ջոկատների կողմից և, վերջապես, այնտեղ իմ հայրական տունն էր, ուր մայրս էր ապրում: Իսկ ես մնացի քաղաքում և իմ ուժերի ներածի չափ օգնեցի քաղաքի պաշտպանությանը:

Այժմ, տարիներ անց, հիշելով այդ օրերն ու ամիսները, երբ գտնվում էինք մշտական ռմբակոծության տակ, զարմանում եմ մեր ժողովրդի տոկունության ու համառության վրա: Այդ տարիներին շատ քիչ էին վեճերն ու կռիվներն իրար մեջ, չեմ լսել ոչ մի գողության մասին, թեև բոլորն էլ ապրում էին ծայր աստիճան դժվար դրության մեջ: Նույնիսկ այն հարևանները, որոնք տարիներով իրար հետ չէին խոսում զանազան պատճառներով, հաշտվել էին՝ իրար ներելով: Հիշում եմ, թե ինչպես «Գրադ»-ի հրթիռների հարվածներից վառվեց «Ղարմետաքս» կոմբինատի ադմինիստրատիվ շենքը, և բռնկված հրդեհը տարածվեց կարժական արտադրամասերի վրա: Ոչ ոք չփորձեց անգամ այն մարել: Ինչպես արդեն ասել եմ՝ ոչ թե չէին ուզում, այլ միջոց չկար՝ ո՛չ ջուր, ո՛չ էլ վառելիք՝ հրշեջ մեքենաների համար: Նույն դրության մեջ էին նաև կահույքի ֆաբրիկան, գինու գործարանը և այլն: Լավ ծանոթ լինելով քաղաքին՝ հակառակորդն

ГАУ РК "Национальная библиотека Крыма"

ուղիղ նշանառությամբ քարուքանդ էր անում մեր գեղեցիկ, շատ տարիների ընթացքում արյուն-քրտինքով կառուցված բնակելի շենքերն ու արտադրությունները: Ամեն օր զոհեր էինք տալիս՝ անմեղ զոհեր:

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Վերջապես եկավ հատուցման ժամը: Մեր ինքնապաշտպանության ջոկատները միավորվեցին և սկսեցին քաղաքի շրջակա ադրբեջանական գյուղերում տեղադրված հրթիռակայանների ոչնչացումը՝ գրավելով Քյոսալար, Ջանհասան, Ջամիլու գյուղերը: Շատ դաժան մարտեր էին տեղի ունենում Ստեփանակերտին հարակից ադրբեջանական դարձած Կրկժան գյուղի ազատագրման համար: Հակառակորդը՝ Շուշիից մատակարարվող ռազմական տեխնիկայով և փորձառու զինվորականների մի մեծ զնդով դիրքավորվել էր այնտեղ և հարմար պահի էր սպասում՝ քաղաքի վրա հարձակվելու համար: Բայց այդ մտադրությունը չիրականացավ: Մեր հերոս տղաներն ազատագրեցին գյուղը: Հակառակորդը ճողոպրեց Շուշի՝ թողնելով բազմաթիվ զոհեր ու զինամթերք:

Ես լավ եմ հիշում այդ անմոռանալի ու բաղձալի մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը:

Հարևաններով հերթապահում էինք մեր թաղի մատույցներում: Այդ օրն էլ գիշերվա հերթապահությունից հետո պառկել էի հանգստանալու, երբ լսեցի «Գրադ»-ի հզոր պայթյունների ձայնը: Վեր թռա տեղիցս և սկզբում կարծեցի, թե նորից հակառակորդն է կրակում, բայց, դուրս գալով պատշգամբ, իսկույն նկատեցի, որ այս անգամ հրթիռները թռչում էին կոշիկի ֆաբրիկայի մոտակայքից դեպի Շուշի: Սրան հաջորդեց Շուշի քաղաքի դիմացի հայկական Շոշ գյուղի ու Կրկժանի մատույցներից արձակված հրթիռների զարկը, ապա դրանց հաջորդող պայթյուններն արդեն Շուշիում: Պարզ երևացին առաջին հրդեհված շենքերից բարձրացող ծուխն ու կրակի լեզուները: Դա անասելի ուրախության զգացում բերեց ոչ միայն ինձ, այլև քաղաքում ապրող մյուս բնակիչներին: Հակառակորդն սկզբում փորձեց պատասխան կրակ բացել, բայց, տեսնելով, որ մերոնք աստիճանաբար ճշգրտում են հարվածների ուղղությունը դեպի իրենց դիրքերը, դադարեցրեց կրակը: Մայիսի 8-ի առավոտ ծեգին սկսվեց Կոմանդոս Տեր-Թադևոսյանի գլխավորած՝ մեր միացյալ ջոկատների հարձակումը Շուշիի վրա՝ երեք ուղղություններով: Սկսվեց Շուշի հայկական քաղաքի ազատագրումը:

ГАУ "Институт истории НАН РА"

Ես, մեր մի քանի հարևանների հետ, շտապեցի քաղաքից Շուշի տանող ճանապարհի սկիզբը, և բոլորս սկսեցինք օգնել զինամթերք բեռնելուն՝ կռվող տղաներին հասցնելու համար: Օգնում էինք նաև այնտեղից բերվող վիրավորներին հիվանդանոց ուղեկցելուն: Մենք կատաղի մարտերից երկու-երեք կիլոմետրի վրա էինք, ու մեր գլխավերևում ականներ ու գնդակներ էին սուլում: Կեսօրին մոտ լեռների հետևից հանկարծ հայտնվեցին ադրբեջանցիների երեք «Կոբրա» տիպի ռազմական ուղղաթիռներ և սկսեցին հրթիռներ բաց թողնել մեր տղաների վրա: Այդ հրթիռներից մեկը կպավ մեր զրահամեքենաներից մեկին՝ ճանապարհի ոլորաններից մեկում, և, ցավոք, անձնակազմը զոհվեց: Մեր հակաօդային ների ճնշման տակ՝ թշնամու ուղղաթիռներն անհետացան լեռների հետևում: Կատաղի մարտերը շարունակվում էին արդեն Շուշի քաղաքի արվարձաններում՝ հենց բերդապարսպի ներսում: Այնտեղից վերադարձող վիրավորներից և զինամթերք տանողներից իմացանք, որ քաղաքի վրա հարձակումը հաջող է ընթանում, եթե չհաշվենք կորուստները, որոնք անխուսափելի են հարձակողական մարտի ժամանակ: Մութն ընկնելուց հետո հրաձգությունը նվազեց, միայն մեկ-մեկ ավտոմատների կրակահերթեր էին լսվում, իսկ հրետանային կրակը դադարել էր: Հավանաբար մերոնք վախենում էին վնասել մեր զինվորներին, որոնք արդեն մտել էին քաղաք, որտեղ կայուն ճակատային գիծ չկար:

Գիշերը մեր հրամանատարության մարդասիրական որոշումով՝ ադրբեջանցիներին հնարավորություն տրվեց հատուկ բացված չեզոք «միջանցքով» հեռանալ քաղաքից՝ ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար, որից էլ նրանք խելացիորեն օգտվեցին: Մայիսի 9-ի առավոտյան մեր զորքն արդեն քաղաքն առել էր իր հսկողության տակ:

Ես, շատերի պես, ոտքով բարձրացա դեռ ծխացող Շուշի՝ Արցախ աշխարհի հինավուրց մայրաքաղաքը, և առաջիններից մեկն էի, որ ազատագրումից հետո մտնելով քաղաք՝ ներկա եղա Հայոց եռագույն դրոշի ծածանմանը Ղազանչեցոնց եկեղեցու վրա: Երբ մյուսների հետ մտա եկեղեցի, զարմանքով տեսա, որ այնտեղ իրար վրա դարսված էին «Գրադ»-ի չօգտագործված հրթիռները: Թե ինչու նրանք չէին պայթեցրել դրանք, որի հետ եկեղեցին էլ հողին կհավասարվեր, շատերի համար մնաց առեղծված: Մնում է ենթադրել, որ նրանք

ГАУ РК "Издательский дом "Гасприндаго"

պարզապես խուճապի մատնվելով, բարեբախտաբար մոռացել էին այդ մասին, կամ էլ մերոնք առաջինը եկեղեցին էին գրավել, և դրա շնորհիվ այն փրկվել էր: Հավանաբար այդպես էլ կար: Ինչ որ է, փառք տանք Աստծուն, որ այդ հիասքանչ եկեղեցին մնացել էր կանգուն՝ թեև կիսավեր վիճակում:

Համարյա ամբողջ օրը շրջեցի Շուշիում, ուր դեռ մի քանի տներ ծխում էին՝ մարտերից մնացած հրդեհների պատճառով: Քաղաքը հսկող ջոկատի տղաները հետևում էին, որ Ստեփանակերտից եկած մարդիկ, վրեժխնդրությունից դրդված՝ վնաս չտան ադրբեջանցիների թողած տներին:

Շուշին գրավելուց հետո Ստեփանակերտը կարծես մի փոքր շունչ առավ ամիսների հրթիռակոծումներից: Բայց դրան հաջորդեցին հարձակումներն օդից: «Սու-27» ժամանակակից կործանիչներով ու Աղդամ քաղաքից հեռահար թնդանոթներով սկսեցին ռմբակոծել քաղաքի դեռևս անվնաս մնացած շենքերը: Մենք ստիպված էինք տեղափոխվել նորից նկուղները: Ադրբեջանցիներն ամեն ինչ անում էին՝ հետ վերադարձնելու այն, բայց՝ իզուր: Նրանք, մոբիլիզացնելով իրենց բարոյալքված ուժերը և ցանկանալով ռևանշի հասնել, նոր հարձակում սկսեցին նախ՝ Մարտունու, ապա՝ Մարտակերտի գյուղերի վրա: Կռիվներն ընթանում էին փոխնիփոխ հաջողությամբ, թվում էր, թե դրան վերջ չի լինելու: Դատարկվում էին երբեմնի շեն գյուղերը: Բնակիչները, թողնելով իրենց օջախները, համարյա առանց որևէ ունեցվածք վերցնելու, հեռանում էին կամ Հայաստան, կամ ավելի հեռու: Իսկ մնացողների վիճակը դառնում էր ավելի ու ավելի դժվար: Այդ ժամանակ Աքսենյան աղջկաս հետ գյուղում էր՝ իբրև թե ապահով տեղում, քանի որ այն գոնե չէր ռմբակոծվում, իսկ Աշոտն էլ Մարտակերտի մատույցներում գտնվող պաշտպանական ջոկատներից մեկում էր կռվում: Այդ օրհասական մարտերից մեկում քաջաբար զոհվեց պաշտպանական ջոկատների հրամանատար, իմ համագյուղացի Վլադիմիր Բալայանը, որը շատ հաղթանակներ էր տարել: Դրանից հետո թշնամիները մեկը մյուսի հետևից սկսեցին գրավել շրջանի գյուղերը՝ այդ թվում նաև իմ հայրենի Մոխրաթաղը, որտեղ ընտանիքս էր: Լսելով այդ սարսափելի լուրը՝ ես առանց ժամանակ կորցնելու շտապեցի հասնել այնտեղ: Բայց ոչ մի մեքենա կամ այլ փոխադրամիջոց չկար: Ստիպված ճանապարհ ընկա ոտքով՝ հույս ունենալով, որ ճանապարհին կհանդիպեմ համագյուղացիների և մի նորություն կիմանամ մերոնցից:

ГАУ РА "Издательство ЛИК" Министерства

ՍԱՐՍԱՓԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ոտքով գյուղ հասնելու համար պետք էր քայլել մոտ հարյուր կիլոմետր՝ անցնելով լեռնային ճանապարհներով: Մարտակերտի հետ կապող կարճ ճանապարհը վաղուց փակվել էր, և այնտեղ հասնելու համար պետք էր անցնել Կիչան-Դրմբոն՝ մեր խելացի պապերի ճանապարհը, որով նրանք անցնում էին շատ ու շատ տարիներ առաջ: Մի երեսուն կիլոմետր անցնելուց հետո՝ տեսա, որ մեքենաները, մարդկանցով ու իրերով բեռնված, իրար ետևից գալիս են դեպի Ստեփանակերտ: Քիչ հետո հանդիպեցի մարդկանց, որոնք, անասունները քարավանի նման առաջներն արած, փոշոտ, տխուր ու հուսահատ շտապում էին դեպի քաղաք: Դա 1992 թվականի հունիսի երկուսն էր: Վերջապես ճանապարհին հանդիպեցի մի քանի համագյուղացիների, որոնք ասացին, որ հակառակորդը դեռ գյուղ չի մտել, բայց Մարտակերտն արդեն նրանց ձեռքում է, և համարյա ոչինչ չի խանգարում նրանց՝ շուտով հասնելու գյուղ, որն ընդամենը մի քանի կիլոմետր է հեռու շրջկենտրոնից: Իսկ մերոնց մասին ասացին, որ նրանք նույնպես պատրաստվում էին ճանապարհվել, բայց փոխադրամիջոց չէին գտնում:

Ես շարունակեցի ընդառաջ գնալ եկողներին: Դա սարսափելի տեսարան էր: Հիմա, այսքան տարիներ հետո հիշելիս՝ անասելի ցավ եմ ապրում և դժվարանում եմ այդ բոլորը նկարագրել: Ինձ կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր տեսել ու իրենց մաշկի վրա զգացել են այդ դժոխային ժամանակները:

Մարդիկ, թողած հարազատ հող, տուն ու տեղ, մի խոսքով՝ ամեն ինչ, փախչում էին ստույգ մահից, լավ իմանալով, թե ինչ կլիներ, եթե մնային իրենց տներում: Եվ նրանք ճիշտ էին: Ով չէր հասցրել փախչել, գազանաբար տանջամահ էին արել: Միայն մեր գյուղում տանջամահ էին արել քսանհինգ կանանց ու երեխաների, որոնք չէին հասցրել հեռանալ գյուղից: Ծեր կանանց, տանկի ետևից կապելով, քարշ էին տվել գյուղի փողոցներով: Սա ենթադրություն չէ, այլ իրական փաստ՝ ականատեսի պատմածը, մի կնոջ, որը մնացել էր գյուղում և հրաշքով փրկվել մահից: Նա ցերեկները թաքնվելիս է եղել հավաբնում, իսկ գիշերները դուրս է եկել ուտելիք գտնելու: Եվ այդպես՝ մոտ մեկ ամիս, մինչև մեր տղաները նորից ազատագրեցին գյուղն ու փրկեցին քաջարի կնոջը:

ГАУ РА "Агентство по патентам и интеллектуальной собственности"

Այժմ վերադառնանք իմ պատմությանը: Ճանապարհին հարցուփորձ էի անում մարդկանց՝ մերոնց մասին որևէ լուր իմանալու հույսով, բայց ոչ ոք հստակ չէր պատասխանում: Մարդիկ, ասես, միանգամից փոխվել էին, դարձել լռակյաց ու դաժան դեմքով: Վերջապես մի բեռնատար մեքենա, որը «Գրադ»-ի արկերով էր բեռնված, իմ խնդրանքով կանգնեց, և վարորդն ու ուղեկցող երկրապահ տղան ինձ թողեցին, որ բարձրանամ թափքը և արկերի արկղների վրա նստեմ՝ նախապես զգուշացնելով, թե դա ինչքան վտանգավոր է: Բայց այդ մասին ես չէի էլ ուզում լսել, միայն թե կարողանայի շուտ հասնել մերոնց:

Ես ուշադիր հետևում էի մարդկանց ու մեքենաների հանդիպակաց հոսքին՝ այն հույսով, որ միգուցե բախտս բերի՝ հանդիպեմ մերոնց: Կարող էր պատահել այնպես, որ ես չնկատեմ նրանց, և իզուր լիներ իմ գնալը, մանավանդ որ մեքենան մինչև Դրմբոն էր գնում: Մնացած հիսուն կիլոմետրը պիտի անցնեի ոտքով, և անհայտ էր, թե մինչև ուր էր հասել հակառակորդը: Բայց Աստծո անքննելի կամքով, Դրմբոն չհասած՝ հանկարծ նկատեցի մերոնց: Աքսենյան, աղջկաս գրկած, նստած էր լրիվ բեռնված մի տրակտորի կցասայլակի վրա՝ բռնած կապկված պարաններից: Ես մի կերպ կանգնեցրի մեքենան ու մանավանդ՝ տրակտորը, որի վարորդը ոչ մի կերպ չէր ուզում կանգնել: Շատ խնդրելուց ու նրանց հետևից վազելուց հետո, վերջապես նա կանգնեցրեց տրակտորը՝ հասկանալով բանն ինչ է: Ես, անչափ ուրախացած մեր հանդիպումից՝ խնդրեցի տրակտորիստին, որ ինձ թույլ տա բարձրանալ կցասայլի վրա՝ մերոնց մոտ, բայց նայելով վերև, տեսա, որ իսկապես այնտեղ տեղ չկա: Անկողինների ու զանազան այլ իրերի վրա շատ մարդիկ էին նստած, ու ոչ մի տեղ չկար: Մի կերպ տրակտորիստին համոզելով՝ ես տեղավորվեցի տրակտորի ու կցասայլակի միացման տեղում՝ ոտքերով կանգնած, պատկերավոր ասած, «պարսատիկի» երկու ձողերի վրա՝ ձեռքերով կառչելով տրակտորի հետնամասից: Դա, իհարկե, անխոհեմություն էր, քանի որ ամեն մի կտրուկ արգելակումից կարող էի ճզմվել տրակտորի ու կցասայլակի արանքում, բայց այդ թոհուբոհում մերոնց չկորցնելու համար ուրիշ ելք չգտա:

«Բելոռուս»-ը դանդաղ առաջ էր գնում խորդուբորդ ճանապարհով, իսկ մենք, կառչած ով ինչից կարող էր, աշխատում էինք չընկնել: Բայց մեզ սպասում էր մի մեծ փորձանք:

Ճանապարհն անցնում էր անտառի միջով: Չհասած Կիչան գյուղին, այն խիստ զառիթափ ու լպրծուն դարձավ: Ճամփամիջով

ГАЗАРЯНЦЕВ ПО М. ГАЗАРЯНСКОГО"

ինչ-որ առու կամ անձրևաջուր էր հոսում: Տրակտորիստը հազիվ էր պահում ղեկն ու արգելակները: Հանկարծ օդում հայտնվեց մի ռազմական ինքնաթիռ և սկսեց պտույտներ գործել մեզ վրա: Մարդկանց մեջ սկսվեց մի անասելի խուճապ, և չնայած մենք անտառում էինք, բայց առաջին իսկ ռումբերն արդեն մոտ էին պայթում: Տրակտորիստը, երևի ցանկանալով կանգնեցնել մեքենան, որ ժողովուրդը կարողանա թաքնվել անտառում, կտրուկ արգելակեց, և հանկարծ ոտքերիս տակ ջարդված մետաղի ձայնը հասավ ականջիս: Զգացի, որ կցասայլակն անջատվեց տրակտորից. ջարդվել էր իրար միացնող կցամատը: Ես ինչ-որ մի հրաշքով խույս տվեցի իրար խփվող երկաթների արանքից ու ցատկեցի դեպի ճամփեզր, իսկ Աքսենյան՝ երեխան գրկին, մնացածների նման չհասցրեց ցատկել շրջվող կցասայլակից, և մայրն ու երեխան կորան իմ աչքից՝ ընկնելով արդեն շրջված կցասայլակի տակ: Դեռ ուշքի չեկած կատարվածից՝ ես սկսեցի փնտրել նրանց: Մի կերպ դես ու դեն քաշելով բեռները՝ նկատեցի կնոջս՝ արնաշաղախ դեմքով, մի կերպ նրան քաշեցի ճամփեզր և ուշքի բերեցի: Ճանապարհով հոսող պղտոր ջրով երեսը լվանալուց հետո, նա սկսեց ցավից լաց լինել: Նրան թողնելով այդտեղ՝ սկսեցի փնտրել Նարինեին: Մի կերպ, հուսահատ շարժումներով դես ու դեն քաշելով իրար խառնված զանազան իրերը՝ ես փնտրում էի նրան և, վերջապես, ինչ-որ մի կահույքի տակից հանեցի երեխային՝ ուրախանալով, որ ողջ է: Բայց իմ ուրախությունը երկար չտևեց, երբ սարսափած նկատեցի, որ նա արնաշաղախ դեմքով ինձ ժպտում էր, այնպես, ասես՝ ոչինչ չի եղել: Ես հասկացա, որ նա ցավ չի զգում և ինձ է նայում դատարկ ու անիմաստ հայացքով… Ես սարսռացի այն մտքից, որ առանց այդ էլ վատառողջ երեխան ուժեղ հարված է ստացել գլխին և կորցրել իրականության զգացողությունը: Նրան գրկելով՝ տարա մոր մոտ, որն ստացած ծանր վերքերից լալիս էր ու տանջվում: Տեսնելով երեխայի վիճակը՝ նրա դրությունն ավելի վատացավ: Ճանապարհը լցված էր փախչող մարդկանց ու անասունների հոսքով: Գոռգոռում էին, որ ճանապարհն ազատեն շրջված տրակտորից, որի մոտ կային նաև ուրիշ շատ վիրավորներ: Աքսենյայի ու դստերս դրությունը գնալով ավելի էր ծանրանում, իսկ ամեն մարդ իր գլխի ճարն էր տեսնում: Իմ օգնության խնդրանքները, որ մեքենա կանգնեցնեն՝ տուժածներին քաղաք հասցնելու համար, իզուր էին անցնում: Մարդիկ, ասես կորցրած բանականությունը, իրար ոտնատակ տալով, վարար գետի պես աջ ու ձախ չնայելով, առաջ էին գնում:

ГАУ РА "Национальная библиотека"

Վերջապես հայտնվեց մի ինքնաթափ մեքենա, որի մեջ մի քանի երկրապահ զինվորներ կային: Նրանք վարորդի խցիկում վիրավոր էին տանում քաղաք: Տեսնելով մեր անտանելի վիճակը՝ խղճացին և թույլ տվեցին բարձրանալ մեքենայի մետաղյա թափքը, քանի որ խցիկում տեղ չկար:

Ճանապարհը երկար էր ու խորդուբորդ: Ամեն մի փոսի հանդիպելուց՝ երկաթե թափքում սարսափելի ցավեր էին զգում վիրավորները, բայց ուրիշ ելք չկար, պիտի դիմանայինք: Վերջապես երեկոյան դեմ մտանք քաղաք, ու մեքենան մեզ հասցրեց հիվանդանոց: Այնտեղ ասեղ գցելու տեղ չկար: Հիվանդասենյակները, անգամ միջանցքները լիքն էին վիրավորներով, կային նաև զոհվածներ՝ ջահել տղաներ, որոնց փրկել չէին կարողացել: Բժիշկները խիստ զբաղված էին, և մենք, ստիպված, երկար սպասեցինք, մինչև մի ծանոթ բժիշկ գնեց Աքսենյային: Պարզվեց, որ նրա ձեռքն ու երեք կողոսկրներն էին կոտրվել, իսկ աղջկաս նայելով՝ մոայլվեց, կանչեց մի ուրիշ բժշկի, որն էլ ասաց, որ երեխան ուժեղ հարված է ստացել գլխին, և հնարավոր է՝ շատ լուրջ հետևանքներով: Խորհուրդ տվեց երեխային շտապ հասցնել Երևան, միգուցե այնտեղ մի բան կարողանան անել: Մենք մեծ վշտից կորցրել էինք մեզ և չգիտեինք՝ ինչ անել: Հիվանդանոցում տեղ չլինելու պատճառով՝ մենք գնացինք տուն:

ՆՈՐԻՑ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

Այդ օրերին ադրբեջանցիները նպատակ ունեին գրավել Մարտակերտը, բայց ստանալով ուժեղ հակահարված, շրջանցեցին շրջկենտրոնը, որոշեցին այն շրջապատել և հարձակվեցին Մաղավուզ, Մեծ շեն և Մոխրաթաղ գյուղերի վրա: Մեր պաշտպաններն ստիպված նահանջեցին, խուսափելով կորուստներից, և ադրբեջանցիները գրավեցին տասից ավելի գյուղեր՝ ավերելով նրանց շենքերի մեծ մասը: Միայն հունիսի կեսերին մեր զորքերը, ստանալով համալրում, կարողացան անցնել հակահարձակման և ազատագրեցին շրջանի շատ գյուղեր, այդ թվում՝ նաև մեր գյուղը:

Լսելով, որ մեր գյուղն ազատագրվել է՝ մեր համագյուղացիներից շատերը որոշեցին վերադառնալ այնտեղ՝ իմանալու, թե ինչ է մնացել իրենց տներից, թեև լուրերը մխիթարական չէին: Մեր համագյուղացիները, որոնց հաջողվել էր փախչել գյուղից, տեղավորվել էին սանէպիդկայանի շենքում, որը գտվում էր Ստեփանակերտի ծայրամասում: Ես իմանալով այդ մասին՝ գնացի այնտեղ: Նրանց

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

հետ էր նաև կոլխոզի նախագահ, իմ մանկության ընկեր Սլավան: Նրա հետ եկանք մեր տուն, կիսեցինք մեր ցավերը կորուստների համար: Նա իմացավ մեր գլխին եկած փորձանքի մասին: Իմանալով, որ նա մյուս գյուղացիների հետ գնալու է գյուղ՝ ես էլ ցանկացա գնալ, այն հույսով, որ տանը մնացած մի քիչ ցորենը բերեմ քաղաք. գոնե կարողանայինք սովին դիմանալ:

Ալյուր չկար, հաց չէր վաճառվում քաղաքում, Հայաստանից եկող օգնությունն օր օրի նվազում էր, քանի որ փակ էին բոլոր ճանապարհները, և դեռ չէր բացվել Լաչինի «միջանցքը», իսկ օդով, ճեղքելով հակառակորդի պատնեշը, միայն ուղղաթիռներն էին թռչում ու վայրէջք կատարում՝ մեկ քաղաքային ստադիոնում, մեկ քաղաքին մոտ գտնվող բացատներում ու հազիվ էին հասցնում ծանր վիրավորներին տեղափոխել Երևան, իսկ այնտեղից ռազմամթերք ու վառելիք էին հասցնում մեր ռազմիկներին:

Սլավայի հետ հանդիպելուց հետո հաջորդ օրը մեքենայով ճանապարհ ընկանք դեպի գյուղ: Ճանապարհին՝ Դրմբոն գյուղին չհասած՝ օդում հայտնվեց հակառակորդի ինքնաթիռը: Վարորդը կանգնեցրեց մեքենան, և մենք թաքնվեցինք ճամփեզրի փոսերի մեջ: Ինքնաթիռը պտույտներ գործելով՝ մեր մեքենայի ուղղությամբ սկսեց հրթիռներ բաց թողնել, որոնք պայթեցին մեքենայի աջ ու ձախ կողմերում, բարեբախտաբար, չվնասելով այն: Հանկարծ մեր երկրապահներն սկսեցին «Շիլկա»-ով գնդակոծել ինքնաթիռը, և մեր աչքի առաջ այն օդում սկսեց ծխալ: Շուտով տեսանք, թե ինչպես օդում բացվեց պարաշյուտը, որով օդաչուն դանդաղ իջնում էր անտառում, իսկ ինքնաթիռը, ծխալով, կորավ լեռների մեջ, ու լսեցինք միայն խուլ պայթյունը: Հետո պարզվեց, որ օդաչուին մերոնք գերի էին վերցրել: Նա ազգությամբ ուկրաինացի՝ վարձու օդաչու էր, և, ինչքան գիտեմ, հետագայում նրան ազատ էին արձակել ինչ-ինչ պատճառներով:

Մենք շարունակեցինք ճանապարհը և հասանք գյուղ: Բայց պարզվեց, որ շտապել էինք. մերոնք գյուղը նոր էին ազատագրել, և հարձակումը՝ ադրբեջանցիներից Մարտակերտն ազատագրելու համար, շարունակվում էր: Մարտն ընթանում էր Մարտակերտի Աղդրին սարի լանջերում: Մերոնք ցանկանում էին գրավել լեռան բարձունքները՝ հեշտացնելու համար շրջկենտրոնի ազատագրումը, իսկ հակառակորդի հրետանին հակառակ կողմում՝ Նոր խաչ կոչվող լեռանգագաթին էր և ուղիղ նշանառությամբ արգելակում էր մերոնց

ГАУ РА "Центр ОМК и СПОГАЛО"

առաջխաղացումը: Մի քանի արկեր էլ մեր գյուղի վրա սկսեցին արձակել՝ երևի նկատելով մեր գալը:

Այն, ինչ տեսա, սարսափելի էր: Մեր տունն այլևս չկար, հրդեհվել էր հակառակորդի կողմից, վերածվել փլատակների: Չեմ կարող բացատրել, թե այդ րոպեներին ես ինչ զգացի: Անբացատրելի մի խոր ցավ էր դա, որը նյութականի կորստի ցավը չէր, այլ շատ ավելին: Այդ տանն եմ ծնվել ու մեծացել, իմ լավ ու վատ օրերն անցկացրել՝ մինչև Ստեփանակերտ տեղափոխվելը: Մի խոսքով, դա իմ հայրական տունն էր, որի ամեն մի քարն ինձ հարազատ ու սուրբ էր, և այժմ այն իմ աչքի առաջ փլատակների մի կույտ էր: Վերևի հարկերի կաղնե հաստ գերաններն ու հատակը լրիվ այրվել էին, երկաթյա մահճակալների գլխամասերը դուրս էին ցցվել քարերի ու մոխրի միջից, պատերի մեծ մասը փլվել էր: Մնացել էին միայն քարե աստիճանները, որոնք տանում էին արդեն՝ դեպի գոյություն չունեցող երկրորդ հարկի դուռը: Վառվել էին շենքի մոտ գտնվող թթի ծառերի ճյուղերը, տեղ-տեղ չորացած ճյուղերի ծայրերից դեռ կախված էին մնացել թթի սևացած պտուղները: Արցունքներս չկարողացա զսպել: Մի կերպ նստեցի քարին, լաց եղա ու ողբացի պապերիս ձեռքերով կառուցված ու հակառակորդի ձեռքով ավերված մանկությանս օրրանի «շիրիմին»:

Տան կողքի մառանում՝ փլատակների մեջ, հողով կիսաթաղ մեծ տակառ ունեինք, որտեղ թուլթ էինք հավաքում՝ օղի թորելու համար, իսկ մնացած ժամանակ ցորեն էինք պահում: Նայեցի և տեսա, որ այնտեղ հրաշքով մի պարկի չափ ցորեն է մնացել: Ես պարկը հանեցի՝ ինձ հետ տանելու համար, չնայած որ ցորենն աղալու ոչ մի հնարավորություն չկար: Բայց գոնե, եթե տան եղած այլուրը, որը Աշոտի ընկերն էր մեզ բերել՝ նրա խնդրանքով, վերջանար (արդեն մի քանի հացի էր միայն բավական), ուրիշ ճար չգտնելով, կարող էինք եփել և ուտել չաղացած ցորենը:

Ինձ հետ եկածները նույնպես իրենց տներում մնացած՝ ուտելու ինչ-որ բան էին հավաքում: Բայց թշնամու արձակած արկերն ավելի ու ավելի մոտիկ էին պայթում, ու մենք ստիպված շտապեցինք հեռանալ կիսով չափ ավերված գյուղից:

Ճանապարհն անցնում էր Մեծ շեն՝ հարևան գյուղի միջով, որը նույնպես փլատակների էր վերածվել: Մարդիկ հազվադեպ էին պատահում, միայն ճամփեզրերին անտեր, կիսավայրենի անա-

ГАУ НКР "ЦЕНТР ИМЕНИ ГАРЕГИНА НЖДЕ"

սուններ, տնային թռչուններ էին վազվզում՝ խուսափելով մարդկանցից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆՏԱՌՈՒՄ

Հասանք անտառին: Դժվարանցանելի ճանապարհով առաջ էինք գնում, երբ մի քանի զինվորականների հանդիպեցինք: Հանկարծ նրանցից մեկը, ինձ ճանաչելով, կանչեց. «Միշա դայի՛, մի՛ գնա, Աշոտը մեզ հետ է, սպասի՛ր՝ կանչեմ»: Ես անսպասելիությունից ցնցվեցի: Ինչպես կարող է այսպիսի երջանկություն լինել: Գիտեինք, իհարկե, որ նա կռվում է Մարտակերտի ճակատում, բայց չէի կարող պատկերացնել, որ Աստված կարող է այնքան բարեգութ լինել, և անտառի մեջ, բոլորովին անսպասելի կերպով կհանդիպեմ որդուս: Ես իջա մեքենայից, մեր տղաներին բացատրելով եղածը, և գնացի փնտրելու Աշոտին: Նրան գտա անտառի խորքում՝ մի խումբ տղաների հետ, որոնք, կտրված ծառերի կոճղերի վրա նստած, ճաշում էին: Ես հազիվ ճանաչեցի իմ կենսուրախ, միշտ կոկիկ հագնված որդուն: Նա նիհարած, մազոտ դեմքով, կիսամաշ կոշիկներով, ավտոմատը ձեռքին՝ նստած էր մյուս տղաների հետ: Ինձ տեսնելով՝ հանկարծակիի եկած, վեր թռավ տեղից, և մենք գրկախառնվեցինք: Այնուհետև նա ինձ ծանոթացրեց իր ջոկատի տղաների և ջոկի հրամանատարի հետ: Մի քիչ նրանց հետ զրուցելուց հետո, մոտեցա հրամանատարին և, պատմելով, թե ինչ է պատահել մեր ընտանիքին, խնդրեցի գոնե մի օրով Աշոտին բաց թողնել, որ կարողանամ նրան տանել մոր մոտ: Նա ասաց, որ, իհարկե՛, թող գա քեզ հետ, մին նույն է՝ մեկ օրից իրենք գալու են Ստեփանակերտ՝ համալրում ու զինամթերք ստանալու: Ես ուրախացա, բայց Աշոտին չպատմեցի մեզ հետ պատահածի մասին, սպասելով, որ ինքը տեսնի եղածը: Ինչո՞ւ նախօրոք տխրեցնեի որդուս: Մենք նստեցինք մի զրահամեքենայի վրա, որը գնում էր վերանորոգման, և այդպես հասանք քաղաք:

Մայրը տեսնելով Աշոտին՝ անչափ ուրախացավ ու փառք տվեց Աստծուն՝ որդուն ողջ-առողջ տեսնելու համար: Մյուս օրը Աշոտը դուրս եկավ քաղաք՝ իմանալու, թե իր ջոկատի տղաները եկե՞լ են քաղաք, թե՞ ոչ: Նա երկար ժամանակ չէր վերադառնում, և մենք անհանգստացել էինք: Հազար ու մի բան էր մտքներովս անցնում: Վերջապես նա եկավ, բայց երեսին գույն չկար: Մեզ տեսնելով՝ փոքր

ГАУ РК "Национальная библиотека им. М. Горького"

երեխայի պես սկսեց լաց լինել: Բավականին ժամանակ անցավ, մինչև նրանից իմացանք սարսափելի լուրը… Պարզվեց, որ նախորդ օրվա գիշերը ջոկատն ընկել էր շրջապատման մեջ, և բոլոր տասնինը մարտիկներն էլ զոհվել էին: Մենք վշտից ու սարսափից քարացել էինք, երկար ժամանակ չէինք կարողանում ուշքի գալ: Ինչպե՞ս կարող էր այդպիսի անհավանական զուգադիպությամբ ես հանդիպեի Աշոտին հենց այդ օրը: Դեռ իմ աչքի առաջ էին ջոկի տղաները՝ ջահել ու կենսուրախ: Նրանք, նույնիսկ տեսնելով իմ ինքնաշեն հրացանը, կատակում էին՝ ասելով. «Միշա քեռի՛, արի՛ զենքներս փոխենք, քոնն ավելի թեթև է»: Անեկդոտներ էին պատմում ու ծիծաղում… Իսկ հիմա չկային նրանք, զոհվել էին հերոսաբար, ու ևս տասնինը տուն էր քանդվել անվերադարձ:

Այդ դեպքը շատ էր ազդել Աշոտի վրա, և մենք մի քանի օր չէինք կարողանում նրա հետ խոսել…

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Այդ դեպքից շատ չանցած՝ Աշոտը նորից գնաց կռվելու և, ճակատամարտերից մեկում կոնտուզիա ստանալով, ուղղաթիռով տեղափոխվեց Երևան: Նրան ուղեկցեց Արմենը՝ կրտսեր որդիս, որն, ինչպես նշել եմ, մեզ մոտ՝ հոսպիտալում էր աշխատում: Դրանից հետո ես Աքսենյային ու Նարինեին նույնպես տեղափոխեցի Երևան՝ բուժվելու համար, բայց ստացվեց այնպես, որ այնտեղ էլ մի այնպիսի դրություն էր, որ ոչ մի հիվանդանոցում հնարավոր չէր ընդունվել ու բուժվել: Հիվանդանոցները լիքն էին ամեն օր բերվող վիրավորներով, էլ չեմ ասում նյութական ծանր դրությունը, որում գտնվում էր Երևանը:

Մի քանի օր մնալով Երևանում՝ մենք կարողացանք հեռախոսով կապվել Սիմֆերոպոլում գտնվող ավագ որդուս՝ Դավիթի հետ, որը և մեզ առաջարկեց մեկնել Ղրիմ, որտեղ կարելի էր բուժել հիվանդներին: Մնացել էի անելանելի դրության մեջ: Մի կողմից՝ ընտանիքիս ծանր վիճակը, մյուս կողմից՝ անտեր-անտիրական մնացած մեր բնակարանը, որից, բացի երկու ճամպրուկներից, ոչինչ չէինք վերցրել՝ հույս ունենալով, որ շուտով կվերադառնանք: Մեզ դրել էին անելանելի դրության մեջ: Վերջապես որոշեցինք ժամանակավոր մեկնել Սիմֆերոպոլ ու բուժվելուց հետո վերադառնալ: Մենք մեկնել էինք, միայն շատ անհրաժեշտ իրեր մեզ հետ վերցնելով, թողնելով մեր չորս սենյականոց՝ ամեն հարմարություններով

ГАУ "ИГМ НАН РА им. И. Гаспрянского"

բնակարանը, քսանյոթ տարվա քրտնաջան աշխատանքով ստեղծած ունեցվածքը, ամեն, ամեն ինչ և, իհարկե, ամենաթանկ բանը՝ Հայրենիքը: Մեկնեցինք Սիմֆերոպոլ՝ այն հույսով, որ շուտով նորից կվերադառնանք մեր օջախը: Բայց ոչ մի կերպ չէինք կարող պատկերացնել, թե ի՛նչ դժվարությունների կհանդիպենք այնտեղ մնալով՝ առանց ապրելու տարրական միջոցների ու նույնիսկ առանց հետ վերադառնալու հնարավորության:

Թե ինչ եղավ հետո, չեմ ուզում շարունակել: Դրանից հետո մեզ հետ կատարվեց այն, ինչ հայրենիքից հեռացած հազարավորների հետ:

Հիմա շատ տարիներ են անցել այդ ժամանակներից, բայց միևնույն է՝ ես ցերեկն այստեղ եմ՝ Ղրիմում, իսկ գիշերն՝ այնտեղ՝ իմ Արցախում: Անցած օրերն ու տարիները կինոժապավենի պես գալիս են ու անցնում իմ աչքի առջև, ու աղոթում եմ, որ իմ հայրենիքն ապրի, բարգավաճի ու չհանդիպի այնպիսի փորձությունների, ինչպիսիք տեսանք մենք:

Մնացել է միայն իմ համեստ ստեղծագործությունները նվիրել թեկուզ հեռու, բայց միշտ իմ հոգու մեջ մնացած հայրենիքիս՝ այն հույսով, որ մի օր դրանք կընթերցեն իմ հարազատ Արցախում և կներեն, որ չկարողացա մնալ իրենց հետ ֆիզիկապես…

Գրքում որոշ մարդկանց անուններ փոխված են՝
հարգելի պատճառներով,
որի համար ներողություն եմ խնդրում ընթերցողից:
Հեղինակ

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Իմ Հայաստանին 8
Նվիրում 9
Հոգին 9
Արաքսից այն կողմ 10
Նոր տարի 10
Կարոտախտ 11
Ամեն անգամ 11
Իմ Ղարաբաղը 12
Երազանք 12
Ծննդավայր 13
Վերհուշ 14
Մատաղ լինեմ 14
Թարթառի ափին 15
Ոչ մի սահման 15
Ամպերը 16
Պատգամ 16
Գարուն 17
Ծաղիկը 17
Երկու հսկա 18
Հայոց եկեղեցին 18
Քամի 19
Վերադարձ 20
Հուշեր 20
Արցախ 21
Թթենին 22
Ողողանջե՛ք զանգեր 22
Հիմն այբուբենի 23
Մեր վանքերը 23
Դու իմ հայրենիք 24
Մեր հին տունը 25
Ճակատագիրը հայոց 25

ГАУК "Медиацентр им. И. Гасринского"

Իմ հայ ժողովուրդ 27
Օգնեցե՛ք 28
Ես մեր տարերքն եմ 29
Մտորում 29
Հետադարձ հաշվարկ 30
Արի՛ ապրենք հայավարի 30
Տարեգրություն 31
Կռվողն ու կռվեցնողը 33
Կարոտի գինը 33
Դա պարծանք չէ 35
Ձորերը 35
Թախիծ 36
Գաղտնիքներ 37
Քյահրիզ 38
Կեսօրից հետո 38
Ես ու Աստված 39
Ամանոր 41
Իմ աննման հայրենիք 42
Իմ պապի՛ տուն 43
Հեռանում են 44
Այն տարին 46

<u>ՍԻՐՈ ՔՆԱՐ</u>

Դու 48
Սիրելն այն է 49
Միայն քեզանից 49
Աստվածային է սերը 50
Աղբյուր էիր 50
Շատերի պես 51
Նվիրում 51
Գող աղջիկ 52
Հայի աղջիկ 52
Առաջին սերը 53
Սիրո պահը 53
Երգ սիրո մասին 54
Գուսանական 55
Աղոթք 55

ГАУ РК "Национальный центр им. И. Гаспринского"

Սերը 56
Երազում 57
Մի հեռանա 57
Ընկերոջս ցավը 58
Ի՞նչ է սերը 59
Լեզուն ու սիրտը 59
«Բեմից երգում է» 59
«Թե որ մեկին դու շա՛տ-շա՛տ ես սիրում» 59
Չի թոշնի առաջին սերը 60
Իսկական սերը 60
«Մեկին սիրեցի, իսկ նա ինձ մերժեց» 62
Սիրո վնասները 62

ՄԱՐԴԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աղբյուրը 63
Գարնան անձրև 64
Ձմեռը 64
Գարնանային կարոտ 65
Ես զլաքար եմ 66
Երազանք 67
Պարտքը 68
Հայոց լեզուն 69
Կաքավը երգեց 70
Ժայռը 71
Սարն ու գետը 72
Աշուն 73
Ի՞նչ եմ սիրում 73

ԿՅԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մայրս 74
Ընկերոջս 74
Մայրն ամեն ինչ է 75
Բարի՛ ճանապարհ 76
Ինքս ինձ 76
Բժշկի խորհուրդը 79
Կամրջից այն կողմ 80
Ծովափին 81

ГАУК "Медиацентр им. И. Гаспринского"

Ինչո՞ւ եմ սիրում 82
Մի աղբյուր կար 84
Գարնան զեփյուռ 85
Եվս մեկ էջ 85
Ձմեռային էտյուդ 86
Հերոս տղաներ 87
Ա՛խ, այդ սեռը 88
Աքսենյային 89
Աշունն է գալիս 90
Ծերություն 91
Չարն ու բարին 91
Հանցագործը 91
Արի՛, արի՛... 92
Գրիչը 92
Տարբեր մոտեցում 93
Ամպերին 94
Բակիս ծառերը 94
«Էլ ի՞նչ լեռներ, երբ լանջերին եղնիկ չկա» 95
Հանուն հավատի 96
Հայե՛ր, հայե՛ր... 96
Որոնում 97
Մոխրաթաղ 98
Հավատա 99
Անմահություն 99
Իմ Ղարաբաղը 101
Կեսօրից հետո 102
«Կատուն ու շունը կապրեին սիրով» 103
Քարը 103
Գարունը Ղրիմում 104
Ձմեռը եկավ 105
Անցյալն ու ներկան 106
Ջուրը 107
Վատ սովորություն 107
Բարդին 107
Սոնյա թոռնիկիս 108
Իմ երազ երկիր 109
Գազանանոցում 110

ГАУ РК "Национальный центр им. И. Гаспринского"

Հին Մոխրաթաղը 111
Նռան պես է հայրենիքս 113
Հայրենիքիս 113
Ես 114
Մանուշակներ 115

ԸՆՏԱՆԵԿԱՆ

Պատգամ 115
Մենք 116
Դավիթին 117
Աշոտին 118
Արմենին 118

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ

Պապի խորհուրդը 119
Գագիկը և ուլիկը 119
Պապն ու թոռը 120
Ճոճանակ 120
«Փոքրի՛կ շնիկ, ի՛մ Չալիկ» 120
«Թուխսը կանչեց ճտերին» 120
Գոռն ու ծիտը 121
Ցեխոտ խոզը 121
«Այծը եկավ՝ տոտիկ-տոտիկ» 121
«Արջը եկավ մոթմոթալով» 122
«Ծիտը եկավ ծվծվալով» 122
Շունն ու կատուն 122
Չկայացած հաշտություն 122
Էշի խրատը 123
Խեղճ գառը 123
Երկու մանչուկ 124
Ծառն ու մանուկը 124
Խնձորը 125

ՔԱՌՅԱԿՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մարդ կա՝ շատ քաջ է» 128
«Մարդ կա՝ սիրով լի» 128

ГАУК "Медиацентр им. И. Гаспринского"

«Մարդ կա՝ կարգին է» 128
«Մարդ կա՝ համեղ է» 128
«Մարդ կա՝ բերքով ծառ է» 128
«Մարդ կա՝ խելք ունի» 128
«Մարդ կա՝ շատ ուժեղ է» 129
«Մարդ կա՝ բերքատու է» 129
«Մարդ կա՝ եզ է» 129
«Մարդ կա՝ նախշուն է» 129
«Մարդ կա՝ դայաղ է» 129
«Մարդ կա՝ բանակ է» 129
«Մարդ կա՝ համբալ է» 129
«Մարդ կա՝ քաշող է» 130
«Մարդ կա՝ տուն է» 130
«Մարդ կա՝ հայելի է» 130
«Մարդ կա՝ անուշ է» 130
«Մարդ կա՝ գրող է» 130
«Մարդ կա՝ գայլ է» 130
«Մարդ կա՝ գեշ է» 131
«Մարդ կա՝ խելքը օվկիանոս է» 131
«Մարդ կա՝ բարեխոս» 131

ԿԱՏԱԿ ՔԱՌՅԱԿՆԵՐ

«Մատաղ լինեմ քո ջանին» 131
«Չէ» մի՛ ասա, «չէ» մի՛ ասա» 131
«Զոքանչ ունեմ՝ հանց փերի» 131
«Քարը հողից է ծնվում, ամրանում» 132
«Տարիներս թևին տվին ու թռան» 132
«Եթե մուրճ կա ձեռքիդ այսօր» 132
«Լողալ չգիտի, բայց ծովն է մտնում» 132
«Ա՛խ, թռչում են օրերս» 132
«Մատիդ մատանի տեսա» 132
«Մեկը տասը տղա ուներ» 133
«Սարի լանջին՝ աղբյուր մի պաղ» 133
«Հե՛յ, հե՛յ, կանչեմ սարերին» 133
«Ամեն մի վարդի ձեռքդ մի՛ մեկնիր» 133
«Մի կյանք կուզեմ ես ապրել» 133
«Ա՛խ, ինչքա՛ն լավ է, երբ գիտես՝ ճամփիդ» 133

ГАУ РК "Национальный центр им. И. Гаспринского"

«Մի՛ տրորիր կանաչը» 134
«Ի՞նչ կա քո սև աչերում» 134
«Աչքեր ունես գրավիչ» 134
«Աղջիկ ես դու քնքուշ նազով» 134
«Աղբյուր ես դու, ես՝ ծարավ» 134
«Ամենքին ժպիտ դու մի՛ նվիրիր» 134
«Դու մի՛ վախեցիր ոչ մի տանջանքից» 134
«Կբուժվի կյանքում ստացած վերքը» 135
«Եթե սիրեցիր խեղճ ու աղքատին» 135
«Հարևանս թող լավ ապրի» 135
«Հավքի նման օրս թռավ» 135
«Հնում բոբիկ էր քայլում քահանան» 135
«Մի թափեք աղբը բակում, փողոցում» 135
«Այդ ե՞րբ եկավ, ե՞րբ անցավ» 136
«Ես էլ կանցնեմ շատերի պես» 136
«Քանի՞ կյանք եմ ապրել ես» 136
«Կա՞ հանդերձյալ կյանք կամ, գուցե, չկա՞» 136
«Քաղցրն ու դառը, համեղն ու թթուն» 136
«Բարին ու չարը բոլորիս մեջ կան» 136
«Լավ ու վատ մարդիկ աշխարհում չկան» 136
«Դու գնա, մեռիր, որ քեզ շատ սիրեմ» 137
«Թե հետք ես թողել քո հայրենիքում» 137
«Ո՛չ ծնվելն է քո կամքով» 137
«Այո, տխուր է միշտ մայրամուտը» 137
«Գետը ձգտում է շուտ հասնել ծովին» 137
«Ես անցվոր շող եմ իմ ապրած դարում» 137
«Արդեն վաղուց է դադարել տեղալ» 138
«Վերին թաղից եկավ հովը» 138
«Գարուն եկավ մեր սարերում» 138
«Անձրև, մի գա այդպես վարար» 138
«Մեկը շուշան է փնտրում դաշտի մեջ» 138
«Աղբյուրի ջուրը խմեմ քո բռով» 138
«Սիրողին թվաց՝ ինքն է շատ սիրում» 138
«Ապրում եմ այժմ Ղրիմում» 139
«Շատ լավ բան է խմիչքը» 139
«Ասում են, թե կեղտ է փողը» 139
«Մի հայրենիք կա հեռվում» 139

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Տարիներս հավքի պես» 139
«Հաճախ նստում եմ, հաշվում» 139
«Ես՝ ծեր կաղնի անտառում» 140
«Սարի բարձունքից հպարտ գոռացի» 140
«Չասված մտքերս նետում եմ անփույթ» 140
«Գյուղից հարս բերին՝ իբրև անարատ» 140
«Ինչպես որ կասեր Օմար Խայամը» 140

ԴԱՌԸ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

«Կռիվն սկսվեց, շատ տներ քանդեց» 140
«Մենք թաքուն էինք մեր հողը հիշում» 141
«Մենք ամբողջ ուժով գոռում ենք, ճչում» 141
«Արդարությունը սրով էր լուծվում» 141
«Խելացին ու գործազուրկը գնում են երկրից» 141
«Գիտեմ՝ ասածիս էլ լսող չկա» 141
«Թե որ բարձրացավ աշխատավարձդ» 141
«Երբ ես փոքր էի, քիչ բան գիտեի» 142
«Այն ի՞նչն է, ասեք, որի սկիզբը» 142
«Ծովը ծարավ է քաղցր ջրերի» 142
«Արևը թեքվեց դեպի մայրամուտ» 142
«Փող է հարկավոր՝ գլխարկ գնելու» 142
«Վատ երազ է տեսել մուկը» 142
«Մեծ ժողով էր անտառում» 142
«Տանձը ուզեց» 143
«Ամրացնող է մեխի թափը» 143
«Երբ ջահել էի՝ երազում էի» 143
«Գետը միշտ կուզեր հոսել դաշտերով» 143

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԸ

«Այն, ինչ նախկինում աղքատն էր ուտում» 143
«Պատռված շորով ջահել տղային» 143
«Ծիսող կանանց վրա միշտ խեթ են նայել» 144
«Հնում տերտերը բորիկ էր քայլում» 144
«Հարուստը միշտ էլ ձիով է շրջել» 144
«Երբ դու քայլում ես կոկիկ ասֆալտով» 144
«Գյուղը դատարկվեց, քաղաքը լցվեց» 144
«Թե ծառ ես տնկում՝ բերքատու տնկիր» 144

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Հերոսներ պետք են ամեն ժամանակ»..... 145
«Մի բաժակ ջուրը կյանքը կփրկի»..... 145

ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հարբում է նա գիշեր-ցերեկ»..... 145
«Հարբեցողը միշտ «ութեր» է գրում»..... 145
«Որքան էլ ասես թունդ հարբեցողին»..... 145
«Խմելիս միշտ քո չափը ճանաչիր»..... 145
«Թե ընտանիքում»..... 146
«Սատանան եկավ»..... 146
«Օղին ասաց. «Ես ուժեղ եմ»..... 146
«Ես օղին եմ, օղին եմ»..... 146

ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ախր, շա՛տ ես գեղեցիկ»..... 146
«Շատ սիրեցի քաղցր մեկին»..... 146
«Բոյդ, բուսաթդ՝ ամեն ինչ տեղին»..... 147
«Ձմեռ լինի, թե ամառ»..... 147
«Եթե սիրում ես դու արդեն մեկին»..... 147
«Թե սիրեցիր, իսկ նա՝ ոչ»..... 147
«Ջա՛ն, ջա՛ն ասի քեզ մտքում»..... 147
«Հոգիս ասաց. «Սիրի՛ր, ինչքան կարող ես»..... 147
«Երբ ջահել էի՝ մի ջերմ համբույրից»..... 148
«Կռացար, որ ջուր խմես»..... 148
«Շորորում ես՝ հանց նավակը ծովում»..... 148
«Թուշդ՝ ինչպես շիկնած խնձոր»..... 148
«Թե քարացել է հողը՝ կմեռնի»..... 148
«Ջուրը քարին դում կդարձնի»..... 148
«Ազատությունը գազանի պես է»..... 149
«Փորձն ու խելքը միասին»..... 149
«Գազանն ինչքան էլ ձեռնասուն լինի»..... 149
«Բարեկամ է շունը մարդուն»..... 149
«Յուրաքանչյուր ցավ իր բուժումն ունի»..... 149
«Առյուծն ու արջը մի օր վիճեցին»..... 149
«Բութ մարդկանց հաճախ ենք ծաղրում»..... 149
«Աստված թող հեռու պահի վրեժից»..... 150
«Եթե կնոջդ հաշվին ես ապրում»..... 150

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Վատ լուրն արագ է թռչում գնդակից» 150
«Ինչ մտքիդ մեջ կա, դա է լոկ քոնը» 150
«Էշը միշտ էշ է՝ լինի դա բակում» 150
«Մարդ կա՝ իր տեսքով վագր է իսկական» 150

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

«Հայրենիքն իմ՝ Ղարաբաղ» 152
«Մի հարս բերինք՝ թազա, թազա» 152
«Մատաղ լինեմ խնձոր դոշիդ» 152
«Զոբանի կերը մածուն ա» 152
«Լոդրը քնեց ծառի տակեն» 152
«Քաղցր նոռնը՝ թոշը կարմուր» 152
«Զբումս պահեմ խնձորը» 152
«Մենակ եզով վար չի ինիլ» 153
«Ափսո՛ս, բաղը բար չտվեց» 153
«Փսակվելը ծանր լուծ ա» 153
«Իմացալ ըմ՝ իմս տու ըս» 153
«Ճղարանց ծորը հեռու ա» 153
«Մռավ սարը կանաչ ա» 153
«Ցեխուտ զոմշից տու հեռու կաց» 154
«Մե՞տըտ ա ախպուրեն ծորը» 154
«Նա մինչև մարթի քյինալ» 154
«Մութ քշերից տու մի վախիր» 154
«Ի՞նչ անեմ, թա մադար ըս» 154
«Սիրտը մի պարզ աղպուր ա» 154
«Մարդը տանց հայրենիք» 154
«Տու ինձ հետի թառլան դուշ ըս» 155
«Կաճ մի կեցեր քու էտ դերյան» 155
«Ես՝ շինացի, տու՝ քաղքեցի» 155
«Սրտես մեչին տու մեծ դաղ ըս» 155
«Խնձոր ըմ պահալ ջուբումս» 155
«Ես ուսանող, տու ուսանող» 155
«Քյնամ քաղեմ սարի խոռնը» 156
«Քու աշկերը՝ հունցը ճրաք» 156
«Հանդից քաղեմ մնեշակ» 156
«Ես քեզ տեսա՝ մետքս շաղվեց» 156
«Ճղուպուր, ճղուպուր» 156

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Մեր հանդերում հարյուր բաղ կա» 156
«Հրսանիք ա՝ տաշ ու տուշ» 156
«Թա վար վերթնը մեչան ա» 157
«Գայլին իզուր չասես՝ քուչի՛» 157
«Քաղաքում փեչը զազավ են վառում» 157
«Հարը հնձի, մարը փնջի» 157
«Ղարաբաղի բարբառը» 157
«Մեր բարբառի խոսքը բարդ ա» 157
«Ապան մատաղ քեզ, բալես» 158
«Տանս ծառեն թազա ճողնը» 158
«Ղարաբաղցին անմար պող ա» 158
«Ես քյնացող, տու մնացող» 158
Մեր շենը 158
Կատակ երգ 159

ԱՌԱԿՆԵՐ

Գայլի պարտքը 162
«Բարերար» գայլը 164
Ճնիկի խաղը 165
Սատանայի ուսմունքը 166
Մեղուների խռովությունը 167
Էշի մեղքը 169
Արջը գազանանոցում 171
Փրկարարը 176
Դրախտի մուտքի մոտ 179
Դավաճան շունը 182
Ընտրություններ անտառում 185
Ստուգողը 188
Ջրաղացպանը 188
Աղվեսի ֆերման 189

ԻՄԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<u>ՄԱՐԴՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ</u>

«Եթե մենք մեկին էշ ենք անվանում» 192
«Մարդ կա՝ թուշդ կպպչի» 192
«Մարդ կա՝ ջերմեռանդ խաչն է համբուրում» 192
«Եթե ասում ես. «Մարդ եմ մեծատառով» 192

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"

«Մարդ կա՝ կենացդ կխմի» 192
«Պատահում է՝ շանը մարդու չափ են սիրում» 192
«Ով ձեռք է մեկնում նեղն ընկած մարդուն» 192
«Նա, ով ապրում է ուրիշի հաշվին» 193
«Ով ուրանում է իր հոգու պարտքը» 193
«Թե մարդ իմանա՝ ինչ է սպասվում» 193
«Մարդ կա, որի ձեռքերն են ուժեղ, մարդ էլ կա» 193
«Ամեն մարդու հոգու մի անկյունում» 193
«Քաջարի մարդուն արծիվ են ասում, իսկ նրա» 193
«Գիտուն չէ, ավա՛ղ, կուզիկ պառավը» 193
«Գազանը քաղցած ժամանակ է» 194
«Ամեն մարդու կյանք՝ գիրք չկարդացված» 194
«Մարդու կյանքը ջրի պես է» 194
«Մարդու ճակատագիրը գրվում է» 194

ԽՐԱՏԱԲԱՐՈՅԱԿԱՆ

«Հին հարազատներն ու բարեկամները» 194
«Թերություններիդ վրա ինքդ ծիծաղիր» 194
«Թե թևեր չունես՝ նմանվես ղշին» 195
«Եթե պարտք վերցնես քո բարեկամից» 195
«Եթե չունես դու քո «ես»-ը» 195
«Թե չես հավաքել դեռ աշնան բերքը» 195
«Կատակը պիտ լինի տեղին» 195
«Եթե չլսես մեծի խորհուրդը» 195
«Սիրել կարող ես երկնքի ղշին» 195
«Լավ է թեթև բան ուտել ու քիչ» 195
«Պետք չէ ուրիշների հաջողությունները կրկնել» 195
«Հաջողությունը կիսով չափ կախված է մեզանից» 196
«Թե բնությունից է կախված բարիքդ» 196
«Սերը միակ հիվանդությունն է» 196
«Բարի գործերը թեթև կերակուրներ են» 196
«Եթե մուրճ կա քո ձեռքում» 196
«Ամեն աղբով մի լցրու ուղեղդ» 196
«Լավ է պլոկվի քո մեջքի կաշին» 196
«Թե հույսդ դնես ձմեռվա տաքին» 197
«Կյանքում ամենադժվար բանը» 197
«Շատ հերոսներ կան» 197
«Այն ամենը, ինչ գեղեցիկ է» 197
«Ասում են, թե գեղեցկությունն է փրկում աշխարհը» 197

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Մուրացկանին հաց տվեցին» 197
«Աղքատի որդին միշտ երազում է շատ փող աշխատել» 198
«Գիտելիքը հարստացնում է մարդու ուղեղը» 198
«Երբ երիտասարդ ես» 198
«Հարբեցողի գլխի պարունակությունն» 198
«Ճիշտ չէ, երբ ասում են» 198
«Վաճառողն իր օգուտն է հաշվում, իսկ գնողը՝ կորուստը» 198
«Շատ բան է հաճախ հակասում առողջությանը» 198
«Հարուստը աղջիկ տվեց աղքատին» 199
«Աղքատ էի, փող չունեի» 199
«Շատ իմաստուն մտքեր սկզբում» 199
«Ջուրը հոսելով է մաքրվում» 199
«Վիրավորանքը նման է խփած մեխի» 199

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

«Այն լեշն է ուտում արծիվը հաճախ» 199
«Արծիվների թռիչքը բարձր է լինում» 199
«Հաճախ արծիվն այնպիսի բան է ուտում» 200
«Արծիվները բարձր են թռչում» 200
«Վայ այն որսին, որին արծիվն է տեսել» 200
«Արծիվները ծառերի փչակներում բույն չեն դնում» 200
«Էշերին հարցրին» 200
«Ինչո՞ւ է էշը միշտ լինում համառ» 200
«Կատաղած ձիուն սանձելն ավելի հեշտ է» 200
«Էշերը միշտ էլ շատ բարձր են զռռում» 201
«Թե զռռոցն էշի քեզ դուր է գալիս» 201
«Ուրիշների կարծիքն էշերի մասին նույնն է» 201
«Էշը տիրոջից մարդկություն չի սովորում» 201
«Ինչքան էլ հզոր լինի առյուծը» 201
«Մժեղներն աղվեսի տեղը նեղեցին» 201
«Երբ առյուծը սոված է» 201
«Վագրի ու կատվի ձագերն իրարից» 201
«Կեղանիների շատ տեսակներ կան, որոնք մթության մեջ» 201

ՃԱՆԱՉԻՐ ԹՇՆԱՄՈՒԴ

«Թշնամիդ ասաց. «Քեզ շատ եմ սիրում» 202
«Թշնամիդ հանկարծ դարձավ սիրալիր» 202
«Եթե թշնամիդ քթի տակ ժպտաց» 202

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

«Երբ սպանում ես թշնամուն, ապա» 202
«Կապիկները ծառերի վրա են իրենց ապահով են զգում» 202
«Թե որ չունենաս ներքին թշնամի» 202

ՊՈԵՄՆԵՐ
Տիգրան մեծ 204
Անտառապահի աղջիկը 214

ԼԵԳԵՆԴՆԵՐ
Գարունը Մռավում 242
Նախաբան 242
Լեգենդ սիրո մասին 246

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ
Հեքիաթ Զաքար արքայի մասին 260

ԱՐՁԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՐԳԻՇԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ
Կուսակցական Վաղոն 290
Խնձորը 291
Իմ պապը 291
Մի ուրիշ անգամ 294

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԼԵՌՆԵՐԻՑ ԵՆ ՇՆՎՈՒՄ 295
Նախաբանի փոխարեն 296
Գլուխ Ա 297
Մոխրաթաղ 297
Դպրոց 300
Թե ինչպես էինք ապրում 304
Բամբակահավաք 306
Դժվար տարիներ 308
Արտելը 309
Մանկություն 310
Մեր ուտեստները 311
Դեպք 312
Մեր հանդերը 313
Ղարաբաղի թութը 315
Շերամի որդը 317
Անասնագողություն 318
Տանի քեռու ոտքը 319

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"

Գյուղի մարդիկ 321
Պատանի բնասերները 322
«Ոչ անմեղ» արշավներ 323
Գյուղի ղեկավարները 324
Գյուղացիների հումորը 325
Ձմեռը գյուղում 327
Հետադարձ հայացք 329
Պատանեկություն և սեր 330
Անխուսափելին 332
Առաջինը 334
Անմոռանալի հանդիպումներ 335
Ժայռը 339
Ամուսնություն 339
Փախուստ 340
Գլուխ Բ: Ստեփանակերտ 342
«Ղարմետաքս» կոմբինատ 342
Ստեփանակերտի առօրյան 347
Երևանի ճանապարհին 351
Մամիկոնի «մեղքը» 354
Իսկ կյանքը շարունակվում է 357
Մեր հոգևոր կյանքը 359
Թաքուն հավատք 360
Գլուխ Գ 363
Պատերազմ 363
Մի քիչ պատմությունից 363
Սկիզբը 367
Գործադուլ 368
Առաջին ընդհարումը 370
Զինաթափում 371
Դիմադրության ծիլերը 371
Հետաքննություն 374
Ագրեսիա 377
Շրջափակում 378
Ընտանիք 380
Հատուցում 381
Սարսափի ճանապարհը 384
Նորից դեպի գյուղ 387
Հանդիպում անտառում 390
Ճակատագիր 391

ГАУ Репозиторий центр им. И. Гаспринского"

Литературно-художественное издание

Петросян Михаил Арамович

СБОРНИК СОЧИНЕНИЙ

Стихи, поэмы, рассказы, басни, афоризмы

Редактор *Р. Пилосян*
Художник *Р. Ваапов*
Компьютерная вёрстка и дизайн *А. Веселов*

Подписано в печать 19.07.2022. Формат 60x84 1/16 .
Гарнитура «Times New Roman». Усл. печ. л. 23,72.
Объём 25,5 печ. л. Тираж 300 экз. Заказ № 2503-22.

ГАУ РК «Медиацентр им. И. Гаспринского»
295048, Республика Крым, г. Симферополь, ул. Трубаченко, 23-а.
E-mail: mediacenter2015@mail.ru
ОГРН 1159102113455

Отпечатано в соответствии с предоставленными материалами
в ООО «Амирит», 410004, г. Саратов, ул. Чернышевского, 88.
Тел.: 8-800-700-86-33 | (845-2) 24-86-33
E-mail: zakaz@amirit.ru
www.amirit.ru

ГАУ РК "Медиацентр им. И. Гаспринского"



ՄԻՔԱՅԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Միքայել Արամի Պետրոսյանը ծնվել է 1942 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում:

1964 թվականին ընդունվել է Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Ստեփանակերտի «Ղարմետաքս» կոմբինատում՝ որպես արտադրամասի պետ: Հեռակա ավարտել է Մինսկի թեթև արդյունաբերության ինստիտուտը:

Բանաստեղծություններ սկսել է գրել դպրոցական տարիներից: Նրա ստեղծագործությունները տպագրվել են «Սովետական Ղարաբաղ», «Կոմունիստ», «Ավանգարդ», «Մետաքսագործ» և այլ լրագրերում:

Մ. Պետրոսյանը 1992 թվականից ապրում է Սիմֆերոպոլում, ակտիվորեն մասնակցում է ղրիմահայության մշակութային կյանքին:

Տարբեր տարիներին լույս են տեսել վաստակաշատ գրողի «Արցախի կանչը», «Լեգենդ սիրո մասին», «Կարոտը հեռվում է ծնվում», «Կամրջից այն կողմ» բանաստեղծությունների ժողովածուները և «Աղբյուրները լեռներից են ծնվում» ինքնակենսագրական վիպակը: Նրա բազմաթիվ բանաստեղծություններն ու ֆորիզմները, լեգենդներն ու առակները, քառյակներն ու պոեմները հրատարակվել են Ղրիմահայ գրողների միության «Հայրենիքը սրտում» ալմանախում:

Միքայել Պետրոսյանը Ղրիմահայ գրողների միության անդամ է: Պարգևատրվել է Ղրիմահայոց ընկերության Հովհաննես Այվազովսկու անվան հուշամեդալով:

ISBN 978-5-6048170-6-3

ГАУ РК "Национальная библиотека им. И. Гаспринского"